



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

ԵՐԵՒԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԿԱՐԵՆ ԻԶՔԱՇԵԱՆ

ԱԲԱՐԱՅՐԻ ՃԱԿԱՏԱՍԱՐՏԻՑ
ԴԵՊԻ ՆՈՒԱՐՍԱԿԻ
ՊԱՅՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Երկրորդ՝ ուղղում չէ լրացում
հրատարակություն

ԵՐԵՒԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ

ԵՐԵՒԱՆ - 2005

ՀՏԴ 941(479.25)
ԳՄԴ 63.3(2Հ)
Ի - 671



**Գիրքը հրատարակում է
ԳԱԼՈՒՄՍ ԳԻՒԼԱԲԵՆԿԵԱՆ
հիմնարկությունն հովանավորությամբ**

Karen Yuzbachian

De la bataille d'Awarayr vers l'accord de Nouarsak.

Une étude sur la société arménienne aux IV-V ss., les révoltes contre la domination des Sassanides et la littérature arménienne du V s. - ce fut une période qu'on a nommée l'«Age d'or».

Le livre suit toutes les règles de recherches scientifiques, en même temps la manière de l'exposition du sujet le fait accessible au grand public aussi.

Կարեն Իզբաշեան,
Ի - 671 *Աւարայրի ճակատամարտից դէպի Նուարսակի պայմանադրութիւնը* - Երկրորդ, ուղղուած եւ լրացուած հրատարակութիւն՝ Կիմ եւ Պարոյր Մուրադեանների խմբագրութեամբ, Երևան, Եր. համալսարանի հրատ., 2005, 326 էջ:

Գրքում ներկայացուած է հայոց հասարակութիւնը Դ-Ե դարերում (գլ. Ա): Մանրամասն վերլուծուած են 450-451 եւ 482-484 թթ. ապստամբութիւնները՝ ուղղուած Սասանեան գերիշխանութեան դէմ (գլ. Բ-Գ): Ներկայացուած է Ե դարի հայոց գրականութիւնը՝ մի շրջանի, որը հետագայում ստացաւ «Ոսկէ դար» անուանումը (գլ. Դ): Աշխատութիւնը հետեւում է ակադեմիական ուսումնասիրութեան կանոններին, հիմնուած է սկզբնաղբիւրների անմիջական տուեալների վրայ, հաշուի է առնուած եղած գիտական գրականութիւնը: Միաժամանակ շարադրանքի ոճը գիրքը մատչելի է դարձնում լայն ընթերցողին եւ:

Ի 0503020913 2005
704(02)2005

ISBN 5-8084-0603-x

ԳՄԴ 63.3(2Հ)

© Կ. Իզբաշեան, 2005

Շուշուայ Ղազանչեցոց վանքի աագ քահանայ տեր Առաքել Իզբաշեանցի ծոռ, տոյն քաղաքի պատուաւոր քաղաքացի Եղոտենց Սովսեւ-բէկի թոռ, հոչակաւոր ռեալական աւարտած Սկրտիչ Իզբաշեանի որդի, Թիֆլիսում ախալցխացի մօրից ծնուած, Էրեւանում մեծացած ու ծեսաւորուած, կեանքիս մեծ մասը Ռուսաստանում անցկացրած՝ ես իմ ողջ էութեամբ մնում եմ դարաբաղցի ու սուիրում տոյն գիրքը Արցախի հպարտ ու խիզախ համերկրացիներին:

ՆԱԽԱԲԱՆ

Յետադարձ հայեացք ձգելով մեր պատմական անցեալին, մտովի ընդգրկելով հազարամեակների ծանր ու բարդ ուղին՝ մենք յատուկ կանգ ենք առնում Ե դարի անցքերի վրայ: Այդ դարում է ստեղծուել ազգային գիրը, որով հայերն առաջին անգամ կարողացան ընթերցել Սուրբ Գիրքը մայրենի լեզուով: Այդ դարում է ծնունդ առել հայոց գրականութիւնը՝ առաջացնելով հոգեւոր զարգացման աննախընթաց վերելք: Այդ դարում հայերը կորցրեցին իրենց պետականութիւնը, բայց եւ, բարձրացնելով երկու յուժկու ապստամբութիւն, դրսեւորեցին անկախութեան հասնելու իրենց կամքն ու ձգտումը: Անկախ անմիջական արդիւնքներից, այդ շարժումներն ամրացրին ինքնավարութեան հիմքերը, դրանց շնորհիւ հայերը կարողացան պահպանել ազգային կերպարը:

Ե դարի մասին գրել են տակաւին ժամանակակիցները՝ դրսեւորելով իրենց դարաշրջանի հասարակական ինքնագիտակցութիւնը: Հետագայում ամբողջ միջնադարն առաջնորդուել է այդ գաղափարներով, եւ անփոփոխ ծեով սրանք մտել են եռահատոր «Հայոց պատմութեան» մէջ, որը 1784-1786 թթ. լոյս է ընծայել Միքայէլ Չամչեանը (այդ հսկայից է սկսուել մեր նոր պատմագրութիւնը): Այնուհետեւ հատորներ են գրուել Ե դարի քաղաքական պատմութեան, Հայաստանի հասարակական կարգի եւ մշակոյթի մասին: Այդ շրջանի ձգողական ուժին ենթարկուել են լուրջ գիտնականներ ու սիրողներ, բանաստեղծներ ու վիպասաններ: Եւ Ե դարում ապրած իւրաքանչիւր հայ, որը յայտնի է մեզ թէկուզ միայն անու-

նով, արձանագրուել է մէկ ուրիշ հսկայի՝ Հրաչեայ Աճառեանի «Հայոց անձնանունների բառարանում»:

Գիտութիւնն այժմ մեծ նիւթ է հաւաքել Ե դարի պատմութեան եւ մշակոյթի մասին: Խնդիր չկայ, որն այսպէս թէ այնպէս շօշափուած չլինի բազմաթիւ մենագրութիւններում եւ յօդուածներում: Հինգերորդ կամ հետագայ դարերի ծնունդ գրաւոր յուշարձաններին, որոնք ինչ-որ չափով լուսաբանում են այդ շրջանը, նուիրուած է վիթխարի գրականութիւն: Այնուամենայնիւ, պրպտումները շարունակում են: Պատճառներից մէկն այն է, որ իւրաքանչիւր սերունդ իրովի է մեկնաբանում այդ դէպքերը, նոր շէշտեր դնում եւ նոր տեսանկիւնից մօտենում դրանց: *Պասական* համարուող դարաշրջանը *ղասական* վերլուծութեան չի ենթարկուում:

Հիւճ չունենք պնդելու, թէ հենց Ե դարն է կանխորոշել հայութեան շարունակուող զարգացումը. իրապէս, պատմական իւրաքանչիւր շրջանի համար նախապատմութիւն է լինում նախորդ ողջ ընթացքը: Սակայն ազգային գիտակցութեան ծեւտորման համար Ե դարը իրօք որ հսկայական դեր է կատարել:

Այս փոքրիկ գրքում փորձ է արուած կրկին անգամ կերտել Ե դարի Հայաստանի կերպարը, լուսաբանել քաղաքական վիճակը եւ հասարակական յարաբերութիւնները, ազատագրական շարժումները եւ դարաշրջանի անկրկնելի մշակոյթը: Հեղինակի նպատակից դուրս է եղել այդ հարցերն արծարծել ամբողջութեամբ, շատ դէպքերում ուրուագծում են միայն պատմական միտումները, բայց գրերի գիտը եւ 450-451 եւ 482-484 թթ. ապստամբութիւնները շարադրուած են հնարաւորին չափ մանրամասն:

Աշխատութեան վերնագիրը պարունակում է երկու տեղանուն. *Աւարայրը* յայտնի է ամենքին. այստեղ 451 թ. մայիսի 26-ին տեղի է ունեցել այն ճակատամարտը, որը յաւերժացրեց Վարդան Մամիկոնեանի եւ նրա զօրակիցների անունները: *Նուարսակ* գիւղը գտնուելիս է եղել Հայոց երկիրը Պարսկաստանից անջատող սահմանագծի մօտերքում: Նուարսակում 484 թ. ապստամբ սպարապետ Վահան Մամիկոնեանը հաշտութեան բանակցութիւններ սկսեց Պարսից զօրապետ Նիխորի հետ՝ թելադրելով հակառակորդին իր կամքը: Վերնագիրն ինչ-որ չափով փոխաբերական է: Ծանր հարուածներ ստանալով Աւարայրի դաշտում՝ հայերը ջնկծուեցին եւ, երկրորդ անգամ ապստամբելով, ապահովեցին երկրին

լայն չափերի հասնող ինքնավարութիւն: Աւարայրից դէպի Նուարսակ տանող ուղին խորհրդանշում է Հայոց ողջ պատմութիւնը: Այդ եւ նկատի ունեցել՝ վերնագրելով աշխատութիւնը «Աւարայրի ճակատամարտից դէպի Նուարսակի պայմանադրութիւնը»:

Այս գիրքը առաջին անգամ հրատարակուել է 1989 թ., իսկ 2001 թ. լոյս է տեսել նրա ռուսերէն տարբերակը: Նման աշխատութեան գաղափարը ներշնչել էր ինձ Պարոյր Սուրադեանը, իսկ գիրքը՝ խմբագրել *Կիւ Սուրադեանը*: Որպէս պատասխանատու խմբագիր՝ Կիւ Սուրադեանը մեծ աշխատանք է տարել՝ ուշադրութեանս առաջարկելով անխուսափելի թերութիւններ. նա է տուել գրքին վերջնական տեսք: Աշխատութիւնը հրատարակութեան էին երաշխաւորել Գագիկ Սարգսեանը եւ Պարոյր Սուրադեանը: Պարծենում եմ նրանով, որ իմ աշխատանքին ընթացք են տուել արդի հայագիտութեան այդպիսի կարկառուն ներկայացուցիչներ, որոնցից երկուսը, աւաղ, ընդմիշտ հեռացել են մեզից:

Գիրքը հասցեագրուած է ոչ միայն մասնագետներին, այլեւ ընթերցողների լայն շրջաններին, ուստի գիտական գրականութեանը վերաբերող յղումները սակաւաթիւ են, սարուածքը՝ թեթեւացուած: Բացի այդ, մեծ մասամբ խուսափել եմ բանավեճի մէջ մտնել այն դէպքերում, երբ իմ մօտեցումը տարբեր է եղել միւս հետազօտողների կարծիքից: Գրքի նիւթը (յամենայն դէպս, զուտ հայագիտական մասում) քաղուած է անմիջապէս սկզբնաղբիւրներից: Նիւթը շարադրելիս յաճախակի պահպանել եմ սկզբնաղբիւրի լեզուն, ոճը: Ըստ դէպքերում, բնականաբար, այդ հատուածները հարկաւոր է ընկալել ոչ թէ բառացի, այլ լոկ իբրեւ փոխաբերութիւն: Յուսով եմ, որ ժամանակակից ընթերցողը կը կարողանայ ճիշտ կողմնորոշուել եւ տարբերել իրականը երեւակայականից:

Ներկայ տարբերակի վրայ աշխատելիս մտցրել եմ մի շարք էական փոփոխութիւններ եւ լրացումներ: Պարոյր Սուրադեանը նայել է նաեւ նոր տարբերակը: Ընդհակալութեամբ հաշուի եմ առել նաեւ Բաբկէն Յարութիւնեանի՝ անտիպ մնացած գրախօսականի կարեւոր դիտողութիւնները՝ կատարելով համապատասխան ուղղումներ: Իսկ գիրքը վերջնականապէս ծեւտորուել է Հայաստանի ամերիկեան համալսարանի «Հայ դասա-

կան մատենագրութեան թուային զրադարանում», եւ ես անչափ պարտական եմ այս հիմնարկութեան իմ երիտասարդ բարեկամներին¹:

Ընծայականը, որով բացում է գիրքը, կցուած է եղել ևս եւ առաջին տարբերակի ձեռագրին, սակայն ինչ-ինչ պատճառներով համարուել է անընդունելի եւ, հեղինակի կամքին հակառակ՝ մնացել տպարանում:

Կ. Իզգայեան

Մանկոթ Գեոէրքուրգ-Երեւան
6-ը դեկտեմբերի, 2004 թ.

ԳԼՈՒԽ Ա

«ՉԻ ԹԵՊԵՏ ԵՒ ԵՍԵ ԱԾՈՒ ՓՈՔԸ...»

Ե դարում եթէ մէկը նպատակ դնէր անցնել Հայկական լեռնաշխարհը արեւմուտքից արեւելք, ապա նրա ճանապարհը ընկած էր լինելու մի քանի Հայաստանի վրայով: Ծանապարհորդութիւնը պիտի սկսուէր Փոքր Հայքից. այդ երկրին քաջ ծանօթ է եղել յոյն աշխարհագրագէտ Ստրաբոնը (Քա. 65 - Ք.յ. 25): Նա նշում է, որ Փոքր Հայքը գտնուում է Եփրատ գետից դէպի արեւմուտք: Ժամանակին այստեղ առանձին թագաւորութիւն է եղել, սակայն Ք.յ. Ա դարում Փոքր Հայքին տիրել են Հռոմի դրածոները, ապա երկիրը միացուել է Կապադովկիային, որն այդ շրջանում եղել է պետութեան նահանգներից (provincia) մէկը: Դիոկղետիանոս կայսեր օրօք (284-305) Փոքր Հայքը դարձել էր առանձին նահանգ՝ Համապատասխան վարչական կարգավիճակով, իսկ Թէոդոս կայսրը 378-386 թթ. արանքում բաժանել էր այն երկու հատուածի: Հիւսիսային մասը ստանում է Առաջին Հայք (Armenia Prima) անուանումը, եւ Սեբաստիան դառնում է նրա գլխաւոր քաղաքը, իսկ հարաւային Երկրորդ Հայքի (Armenia Secunda) վարչական կենտրոնն էր Մելիտինէն: Այդ բաժանման մասին հաղորդում է նաեւ է դարի հռչակաւոր «Աշխարհացոյցը»:

Կտրելով սահմանը՝ մեր ուղեւորը պիտի մտնէր Մեծ Հայքի տարածքը: Այդ անուանումը եւս շատ հին է. հայերից բացի, երկիրն այդպէս է կոչուել նաեւ յունարէն եւ լատիներէն, այդ անունն օգտագործում էին հարեւան պարսիկները, վրացիները (Դիդի Սոմխեթի), հետագայում նաեւ ուղանները (Арменъя Велукара)¹: Մեծ Հայքը ոչ միայն աշխարհագրական, այլեւ քաղաքական հասկացութիւն է: Այն եղել է Արշակունեաց պետու-

¹ Սոյն աշխատութիւնը արդէն ձեւատրուած էր, երբ լոյս տեսաւ «Մատենագիրք հայոց» (Ա-Բ, Անթիլիաս-Լիբանան, 2003) շարքը, որն ընդգրկում է Ե դարի սկզբնաղբիւրները: Առաջիկայում, բնականաբար, հին հրատարակութիւնները իրենց ողջ արժէքով հանդերձ զիջելու են իրենց տեղը նոր հրատարակումներին: Սոյն աշխատութեան մէջ հաշուի առնել այդ հրատարակութիւնները, ցաւօք, չի յաջողուել՝ մէկ բացատրութեամբ:

թեան (66-428) պաշտօնական անունը, որը, դարձեալ քաղաքական առումով, հետագայում իւրացրել էին Բագրատունիները: Այն պետութիւնը, որը 886 թ. հիմնել էր Աշոտ Ա թագաւորը, եւ որը 1045 թ. գրաւեցին բիւզանդացիները, պաշտօնապէս կրել է Մեծ Հայք անունը: Այդ անուանումն էր ժառանգել, վերջապէս, այն ռազմավարչական միաւորը՝ ռամակաթեմը, որն Անիի գրաւումից յետոյ կազմեցին բիւզանդացիները:

Ե դարի սկզբներին Մեծ Հայքի վարչական սահմանները զգալիորէն կրճատուած են եղել: 387 թ. Պարսկաստանի ու Հռոմէական կայսրութեան միջեւ պայմանագիր էր հաստատուել, որի համաձայն՝ Հայաստանը բաժանուել էր երկու մասի. Արեւմտեանը անցել էր հռոմէացիներին, իսկ Արեւելեանը՝ պարսիկներին: Զգուելով հիւսիսից հարաւ՝ սահմանագիծն անցնում էր Կարին (այժմ՝ էրզրում) քաղաքի կողքով, ընդ որում այդ քաղաքը մնում էր Հռոմէական բաժնում: Արշակ Գ Արշակունի թագաւորը որոշեց տեղափոխուել յունաց բաժինը, այնտեղ էլ վախճանուեց 390 թ.: Հայաստանի Հռոմէական բաժնում թագաւորական իշխանութիւնը վերացաւ ընդմիշտ:

Բիւզանդական կայսրութեան կազմի մէջ մտած Հայկական հողերը բաժանուել են տարբեր կարգերի: Հիւսիսային մասում, որի կենտրոնն էր Կարինը, կառավարում էին քաղաքացիական վարչապետները. «կացուցին Յոյնք կոմէսս իշխանս», - կ'արձանագրի հետագայում Մովսէս Խորենացին: Պատմիչի ասելով, «առաջնորդէր նախարարաց կողմանցն այնոցիկ» Գագաւոն Կամսարականը [Մով. Խոր., էջ 316. 6-7], սակայն Գագաւոնը շուտով հեռացաւ Յունահայաստանից, եւ տեղացի նախարարներն ամբողջութեամբ զրկուեցին արտօնութիւններից:

Հարաւային մասում, որը կազմուած էր հինգ թէ վեց նախարարական տիրոյթից, վիճակն այլ էր. անցնելով կայսրութեան հովանաւորութեան ներքոյ՝ երկրի այդ ծայրամասը, արդէն 299

թ. սկսած (տե՛ս ստորեւ), լրիւ չէր ենթարկուում Հայոց թագաւորին: Սակայն կայսրից էլ կախումը, կարելի է ասել, ձեւական էր: Տեղացի սատրապները, ինչպէս անուանում էին նախարարներին յոյները (այդ բառը խորթ չէր նաեւ հին հայերէնին), շարունակում էին օգտուել ինքնավարութեան իրաւունքներից, չնայած տուրք էին վճարում կայսրին եւ ճանաչում, անշուշտ, նրա գերագոյն իշխանութիւնը: Այդպիսի պայմաններում նրանք մնացին մինչեւ Զ դարի 30-ական թուականները:

Մեր ճանապարհորդը անցնում է վերջին սահմանագիծը, այն է՝ Մեծ Հայք թագաւորութեան ու Բիւզանդական կայսրութեան պետական սահմանը, որի մասին խօսուեց քիչ առաջ: Ե դարում Մեծ Հայքի տարածքը կրճատուած է եղել արդէն ոչ միայն Արեւմուտքում. մի շարք ծայրամասային հողեր միացուել էին Վիրքին (Արեւելեան Վրաստանին) եւ Աղուանքին: Խօսելով 387 թ. բաժանման մասին՝ Փաւստոս Բուզանդ պատմիչը նշում է. «Բագում գաւառք կրծեալք հատեալք այսր-անդր». Արշակ Գ եւ Խոսրով Դ թագաւորներին (որոնք տիրում էին իւրաքանչիւրն իր հատուածում) մնացել էր «սակաւ մասն յաշխարհաց» [Փաւ. Բուզ., էջ 266]: Տեսակէտ կայ, սակայն, որ հողերը յօգուտ Աղուանքի (Ուտիք եւ Արցախ նահանգները) կտրուել էին 428 կամ անգամ 451 թ.²: Հայաստանի մայրաքաղաքը դեռեւս Արտաշատն էր:

Այստեղ մեր երեւակայական ճանապարհորդը կարող էր տեսած լինել Մեծ Հայքի թագաւոր Վռամշապուհ Արշակունուն: Յիշենք, որ մեր խօսքը Ե դարի սկզբի մասին է, իսկ Վռամշապուհը գահակալել է 388-414 թթ.: Սակայն թագաւորական իշխանութեան տարիները հաշուած էին. երկիրը խոշոր փոփոխութիւնների առջեւ էր կանգնած: 428 թ. Արտաշէս Արշակունին հեռացուեց գահից, եւ Մեծ Հայքի պարսիկներին պատկանող մասը դարձաւ մարզպանութիւն, այն է՝ բուն Պարսկաստանից

դուրս գտնուող վարչական միաւոր, որը ենթակայ էր անմիջապէս Սասանեաններին:

Հայերի բախտը բազմիցս կախուած է եղել հարեւան զօրեղ պետութիւններից: Հայաստանի աշխարհագրական դիրքն այնպիսին էր, որ հակադիր ուժերի համար երկիրը դառնում էր ինչ-որ կռուականոր: Այդպիսի վիճակ ստեղծուեց յատկապէս Ա դարի կէսերին, երբ Հայոց երկրի համար կատաղի պատերազմ էին վարում Պարթեւստանն ու Հռոմը: Երկուսն էլ աշխարհակալական ձգտումներ ունէին, երկուսն էլ շահագրգռուած էին ամուր հաստատուել Հայաստանում: Այդ երկիրը, ուրիշ առաւելութիւններից բացի, հնարաւորութիւն էր տալիս գերագոյն տիրոջը իր իշխանութիւնը տարածել նաեւ այլ հողերի վրայ: Ղազար Փարպեցու ասելով՝ Պարսից Հազարապետ Միհրնեսեհը համոզում էր արքայից արքայ Յազկերտ Բ-ին (438-457)՝ «յորժամ Հայք սերտիւ մեր լինին՝ Վիրք եւ Աղուանք այնուհետեւ մեր իսկ են» [Ղազ. Փարպ., էջ 43. 8-9]: Նման գաղափար կարող էին յուշած լինել Պարթեւների Վաղարշ Ա թագաւորին (51-75), որը Հայաստանին տիրանալու համար երկարատեւ պատերազմ էր մղում հռոմէացիների դէմ (Հայերն իրենք էլ կտրուկ հակահռոմէական դիրք էին ընդունել եւ, որպէս դաշնակիցներ, մասնակցում էին այդ կռիւններին): 54 թ. Վաղարշը իր եղբայր Տրդատին հռչակեց Հայոց թագաւոր: Սկզբնապէս Հռոմի դիմադրութիւնը թոյլ չէր տալիս նոր արքային լրիւ իրագործել իշխանութիւնը: Բայց երբ հռոմէական զօրքերը մի շարք պարտութիւններ կրեցին, կայսրութիւնը աւելի զիջող գտնուեց: Երկու պետութիւնները՝ Հռոմէական կայսրութիւնը եւ Պարթեւստանը, եկան համաձայնութեան, որ Տրդատը մնալու է Հայոց թագաւոր, բայց այն պայմանով, որ իշխանութեան նշանակները ստանայ կայսրից: Եւ ահա Տրդատը, իր պսակը դնելով Ներոն կայսեր անդրիի առջեւ, 9-ամսեայ ճանապարհորդութիւն է ձեռնարկում դէպի Հռոմ: Լի-

նելով միաժամանակ քրմապետ՝ ջուրը չպղծելու համար Տրդատը չէր կարող ճամփորդել ծովով: Յամաքով նա հասնում է Հռոմ, ուր կայսրը նրա գլխին դնում է այն պսակը, որը Հայոց թագաւորը հանել էր վերջինիս պատկերի առջեւ: Մայրաքաղաքում եւ արուարձաններում կազմակերպւում են խնջոյքներ, այնուհետեւ Տրդատը վերադառնում է իր երկիրը: Այսպէս 66 թ. Հայաստանում հիմք է դրւում Արշակունեաց հարստութեան հայկական ճիւղին³. Արշակունիները հանդէս եկան որպէս Արտաշեսեանների, մասամբ՝ ուշ շրջանի Երուանդունիների ժառանգորդ:

Թագաւորական Հարստութիւնը (դինաստիա), որի գոյութեան պայմաններում իշխանութիւնը անցնում էր սերնդէսերունդ նոյն ազգատոհմի շրջանակներում, Հայոց երկրում սկզբնապէս չձեւաւորուեց: Նման աւանդոյթի մասին հաստատապէս կարող ենք խօսել միայն Բ դարի վերջերից, երբ Վաղարշ Բ Արշակունուց (186-198) գահն անցաւ իր խորով Ա որդուն (198-215): Հետագայում եւս եղել են այդ սկզբունքի խախտումներ, այնուամենայնիւ, ընդհանուր առմամբ, գաղափարը յաղթական գտնուեց: Արշակունեաց երկու ճիւղերը (Պարսից եւ Հայոց) զգում էին իրենց հարազատութիւնը: Ազգաբանագիտս պատմիչի ասելով՝ երբ Սասանեանները Պարսկաստանում վերջ տուին այդ հարստութեանը, Հայոց թագաւոր խորովը, քաջ յիշելով, որ նա Արշակունի է եւ սպանուած Արտաւան թագաւորին ազգական, վրէժխնդիր գտնուեց, ցոյց տալով, որ ինչպէս պարթեւ, այնպէս եւ հայկական ճիւղը մի արմատից են սերում: Մինչդեռ Հայաստանի Արշակունիները վաղուց հայացել էին, ասել է՝ հանդէս էին գալիս որպէս տեղական՝ հայկական շահերի ներկայացուցիչներ ու պաշտպաններ:

Պարթեւստանի եւ Հռոմի համաձայնութիւնը Հայոց աշխարհի վերաբերեալ, որի մասին ասացինք քիչ առաջ, փոխզիջման ծնունդ էր եւ չէր կարող ապահովել կայուն հաւասարակշռու-

թիւն: Պարթեւները, ինչպէս նաեւ իրենք հայերը երբեմն փորձում էին անտեսել Հռոմի իրաւունքները, իսկ կայսրութիւնը, այդպիսի վարմունքից դրդուած, դիմում էր զէնքի: Վիճակը մնաց նոյնը եւ անգամ սրուեց, երբ 224 (կամ 227) թ. իշխանութիւնն անցաւ Սասանեաններին: Եթէ անցեալում ինչպէս քաղաքական, այնպէս էլ մշակութային ոլորտում հայերը կապուած են եղել Արշակունեաց Պարթեւստանի հետ, ապա փոխուած պայմաններում Սասանեանները հանդէս էին գալիս որպէս թշնամի, ձգտում էին տիրանալ Հայոց երկրին, ստրկացնել ժողովրդին՝ խախտելով նրա պատմամշակութային աւանդոյթը:

Միաժամանակ Հռոմի աչքում Հայաստանը ձեւականօրէն մտնում էր «բարեկամ ու դաշնակից», եւ Գ դարի վերջերին այդ բանաձեւը կարծես իրական բովանդակութիւն ստացաւ:

296 թ., նպատակ ունենալով ետ վերցնել 288 թ. կորցրած Միջագետքը, արքայից արքայ Ներսէզը ռազմական գործողութիւններ սկսեց Հռոմի դէմ: Գալերիոս կայսրը պարտութիւն կրեց, իսկ պարսիկները մտան Միջագետք: Բայց յաջորդ՝ 297 թ. Գալերիոսին յաջողուեց (այս անգամ՝ Հայաստանի տարածքում) ջախջախել թշնամուն: Շահանշահի կանանոցն ու գանձարանը ընկան Հռոմէացիների ձեռքը: 299 թ. Մծբին քաղաքում պարսիկները ստիպուած եղան ստորագրել հաշտութեան պայմանագիր, որի համաձայն՝ Միջագետքը, ինչպէս նաեւ Հայաստանի մի շարք հարաւային գաւառներ անցան կայսրութեանը: Պարսիկները ճանաչեցին նաեւ Հռոմէացիների գերագոյն իշխանութիւնը Հայաստանի եւ Վիրքի նկատմամբ: Հայոց գահը գրաւեց Խոսրով Բ-ի որդի Տրդատ Գ Մեծը: Հօր սպանութիւնից յետոյ Տրդատին փախցրել էին Հռոմ. նա այնտեղ էր մեծացել, ապա ժամանել Հայաստան, որպէսզի, տիրանալով իր նախնիների գահին, միաժամանակ ապահովի իր երկրում Հռոմէական քաղաքականութեան նուաճումները⁴: Այդ շրջանում Հայոց թագաւորի

իշխանութիւնը տարածոււմ էր նաեւ Ատրպատականի ու որոշ չափով անդրտիգրիսեան այն մարզերի վրայ, որոնք ձեւականօրէն անցել էին կայսրութեանը:

Մինչեւ Դ դարի 70-ական թուականները թագաւորական իշխանութիւնը Հայաստանում կողմնորոշուած էր, անշուշտ, դէպի կայսրութիւնը: Քրիստոնէութեան ճանաչումը երկրում որպէս պետական կրօն եւս նպաստեց այդ մերձեցմանը: Կոստանդինոս Ա կայսրը դաշնագիր էր կնքել Տրդատ Գ (299-330) թագաւորի հետ: Երբ հիւսիսում բնակուող Մասքութների թագաւոր Սանեսանը ներխուժեց Հայաստան, նրա դէմ հայերի հետ դուրս եկան նաեւ Հռոմէացիները: Մի ժամանակ Հայոց Տիրան թագաւորը (338-350) ապաստան էր գտել կայսրութեան սահմաններում: Կոստանդինոս Բ կայսեր (337-361) եւ Արշակ Բ թագաւորի բանակցութիւններն աւարտուեցին նրանով, որ շուրջ 358 թ. Հայաստան ժամանեց ու, Արշակի հետ ամուսնանալով, Հայոց թագուհի դարձաւ Ողոմպին (Օլիմպիա)՝ վախճանուած Կոստաս կայսեր նախկին հարսնացուն:

359 թ. Պարսկաստանի եւ կայսրութեան միջեւ սկսուեցին ռազմական գործողութիւններ: 360 թ. Կոստանդինոս Բ-ը ժամանեց Արեւելք եւ Կեսարիա քաղաքում իր մօտ հրաւիրեց Արշակին: Դէպքերին ժամանակակից պատմիչ Ամիանոս Մարկելինոսն ասում է, որ կայսրը ընդունեց նրան սիրալիր. նա համոզում էր Հայոց թագաւորին մնալ Հռոմէացիների «բարեկամն ու դաշնակիցը»:

Երբ իշխանութեան գլուխ անցաւ Յուլիանոս կայսրը (նա, որ մի անյոյս փորձ կատարելով, ջանաց թօթափել քրիստոնէութիւնը եւ վերականգնել հին հեթանոս հաւատը, ինչի համար եւ անուանուեց Ուրացող), ապա պարսիկների հետ ծրագրուած պատերազմում շատ ժողովուրդներ նրան օգնութիւն առաջարկեցին, սակայն կայսրը հրաժարուեց՝ պատճառաբանելով, որ Հռո-

մէական տիրակալութեանը վայել չէ դրսից օժանդակութիւն ստանալ, նա ինքը կարող է պաշտպանել իր բարեկամներին ու դաշնակիցներին: Միայն Արշակին յանձնարարուեց զօրք գումարել ու սպասել հետագայ կարգադրութիւններին: Մի առ ժամանակ անց Արշակի ջոկատները անցան ռազմական գործողութիւնների:

Յուլիանոսի պարսկական ռազմարշաւը աւարտուեց պարտութեամբ. 363 թ. յունիսի 26-ին թագաւորը ընկաւ պատերազմի դաշտում: Ասենք, պարսիկների վիճակն էլ գրեթէ նոյնն էր, այնուամենայնիւ, երբ արքայից արքայ Շապուհ Բ-ը խաղաղութեան բանակցութիւններ սկսեց, Յովիանոս կայսրը (363-364) շտապեց ընդունել Պարսից բոլոր առաջարկները: Պարսիկները տիրացան այն երկրներին, որոնք երբեւէ նրանց էին պատկանում, նաեւ մի շարք բուն հայկական հողերի: Պատմիչը նշում է, որ պայմանագիրը ունէր մի յաւելուած, որը հռոմէացիների համար «կորստաբեր էր եւ ամօթալի», այն է՝ «համաձայնութիւնից յետոյ, եթէ մեր մշտական եւ հաւատարիմ Արշակ բարեկամը օգնութիւն խնդրի պարսիկների դէմ մաքառելիս, ապա նրան մերժել»: Այսպիսով, Հայոց թագաւորը, շարունակելով մնալ Կայսրութեան «բարեկամ ու դաշնակից», Պարսկաստանի դէմ կռուելիս կարող էր յենուել միայն սեփական ուժի վրայ: Բայց այդ ուժն էլ էր կրճատուել: 363 թ. դաշնագիրը աշխուժացրեց երկրում կենտրոնախոյս ձգտումները: Մայրամասային մի շարք դաւառներ հրաժարուեցին ենթարկուել իրենց թագաւորին: Արշակ Բ-ի պայքարը Սասանեանների դէմ աւարտուեց նրանով, որ թագաւորը պարտութիւն կրեց եւ իր կեանքն աւարտեց Անյուշ բերդի զնդանում: Ե դարում այդ դէպքերի մասին գրել էր Փաւստոս Բուզանդը, ժի՞ դարում՝ վերակենդանացրեց Բաֆֆին:

368-369 թթ. Շապուհ Բ-ը մի շարք արշաւանքներ ձեռնարկեց դէպի Հայաստան: Այդ տարիներին էր, որ ուրացող նա-

խարարներ Մեհրուժան Արծրունին եւ Վահան Մամիկոնեանը ասպատակում էին Հայոց երկիրը: Պարսից գերակշռութիւնը դառնում էր աւելի ակնառու: Կայսրութեան քաղաքականութիւնն իր հերթին զգուշաւոր երանգ էր ստանում: Երբ 369 թ. Վաղէս կայսրը Հայոց դահի վրայ հաստատեց Արշակ Բ-ի որդի երիտասարդ Պապին, սիրտ չարեց իսկոյն եւեթ նրան թագաւորական պատիւ պարգեւել: Միայն մէկ տարուց յետոյ, երբ Հայաստան մտան Արինթէոս կոմէսի զօրքերը, Պապը դարձաւ լիիրաւ արքայ: Նա պետութեան գլուխ մնաց մինչեւ 374 թ., երբ զոհ գնաց բիւզանդական զօրավարների կազմակերպած դաւադրութեանը:

Պապը Մեծ Հայքի այն վերջին թագաւորն էր, որը ձգտում էր ինչ-որ չափով ապահովել երկրի իրական անկախութիւնը: Նրա ժառանգները անզօր գտնուեցին թէ՛ Սասանեանների եւ թէ՛ Կայսրութեան առջեւ: Արդէն 375-377 թթ., պարսկա-բիւզանդական բանակցութիւնների ժամանակ, խօսք էր բացուել Հայոց երկրի բաժանման մասին: Իսկ շուրջ 387 թ. տեղի ունեցաւ բաժանումը:

Ինչպէս ասացինք վերեւում, երեւակայական մեր ճամփորդը ծանօթանում էր արդէն բաժանուած Մեծ Հայքին:

Հայերը մուտք գործեցին Ե դար՝ անցած լինելով հասարակական զարգացման երկար ուղի: Հայոց հողի վրայ էր առաջացել, հասել հզօրութեան եւ այնուհետեւ վերացել Բիաինելի-Ուրարտու պետութիւնը: Եթէ մենք չենք կարող նշել հայ ազգի (ինչպէս նաեւ այլ ազգերի) ձեւաւորման սկիզբը, ապա վստահ գիտենք, որ առնուազն Չ դարում Ք.ա. հայերը ճանաչուել են որպէս առանձին, միւսներից տարբերուող ժողովուրդ, ունեցել են տեղացի թագաւորներ: Մօտ երեք հարիւրամեակ հայերը մնացին

Աքեմենեան պարսից աշխարհակալութեան կազմում՝ կամայ-կամայ հաղորդակից լինելով հին պետականութեան հաստատութիւններին:

Անկախ իրենց նպատակից, Ալեքսանդր Մակեդոնացու նուաճումները հող պատրաստեցին հելլենիստական քաղաքակրթութեան տարածման համար: Ալեքսանդրի յաջորդներին (դիադոքսներին) անցած երկրներում հիմք է դրուում բազմաթիւ նոր քաղաքների, աշխուժանում է միջազգային առեւտուրը, վերելք են ապրում գրականութիւնը, գիտութիւնը, արուեստը: Հայաստանը մի կողմ չմնաց այդ ընթացքից. հայ հասարակութիւնը որդեգրեց հելլենիստական դարաշրջանի մի շարք էական գծեր: Բ-Ա դարերում Ք.ա. զօրեղանում է պետականութիւնը, թագաւորական իշխանութիւնը երկրում կրկին դառնում է իրականութիւն: Տիգրան Բ-ին (Ք.ա. 95-55) որոշ ժամանակով յաջողուեց իր պետութեանը միացնել մի քանի հարեւան երկրներ: Հասարակական զարգացումը շարունակուում է, եւ Արշակունիների օրօք ձեւաւորում է իւրայատուկ համակարգ, որը մենք անուանում ենք (զուտ պայմանականօրէն) աւատատիրական:

Փորձենք պատկերացնել Արշակունեաց շրջանի հայ հասարակութեան ընդհանրացուած պատկերը եւ նշել այն փոփոխութիւնները, որոնք տեղի ունեցան նոր կարգավիճակի, այն է՝ մարգպանութեան պայմաններում:

Թագաւորական իշխանութիւն

Պետութեան գլուխ, հասարակական սանդուղքի ամէնից բարձր աստիճանի վրայ կանգնած է թագաւորը կամ արքան (տարբերութիւնը հիմնականում ոճական է): Արամէական գրութիւններում նա հանդէս է գալիս իբրեւ մալիք, պարսիկների համար նա շահ էր, յոյները անուանում էին նրան βασιλεύς, ինքը

կարող էր հռչակել իրեն անգամ βασιλεύς τῶν βασιλέων (արքայից արքայ): Արդէն նշել ենք, որ թագաւորական իշխանութեան հաստատութիւնը վաղուց է գալիս: Իբրեւ օրէնք՝ թագաւորը Արշակունեաց տոհմից էր, չնայած դինաստիական սկզբունքը յաղթեց միայն Բ դարի վերջերին: Իշխանութիւնը պիտի անցնի հօրից որդուն: Տեսականօրէն թագաւորը վայելում է անսահմանափակ իշխանութիւն. ժամանակակից լեզուով ասած՝ պետական ոչ մի մարմին իրաւունք չունի սահմանադրական կարգով քննադատել նրան կամ ուղղում մտցնել նրա գործունէութեան մէջ: Պայ թագաւորին ամբաստանելիս ներսէս Մեծ կաթողիկոսը հանդէս էր գալիս իբրեւ հոգեւոր տէր եւ ոչ թէ պետական պաշտօնեայ: Թագաւորը, սակայն, յաճախակի լինում է նախարարների կամակատարը եւ երբեմն զոհ գնում նրանց ոտնձգութիւններին, ինչպէս դա եղաւ Արշակունի վերջին թագաւորի դէպքում (տե՛ս յաջորդ գլխում):

Մովսէս Խորենացու «Հայոց պատմութեան» գլուխներից մէկը կրում է հետեւեալ վերնագիրը՝ «Յօրինուած թագաւորութեանն, եւ թէ ուստի՝ զնախարարութիւնսն կարգեաց, ո՛րպէս կամ զիա՛րդ կենցաղավարել հրամայեաց» [Մով. Խոր., Բ, 7]: Կարգերը եւ յօրհնուածները տարածում են տների (տուեալ դէպքում՝ առանձին աւատական տիրոյթների), տոհմերի, քաղաքների, շէնների, դաստակերտների վրայ. դրանք ընդհանուր օրէնքներ են, որոնք վերաբերում են թագաւորական իշխանութեանը եւ նրան առնչուող զօրքերին, զօրապետերին, կողմնակալներին եւ նրանց նմաններին:

Այդ նորամուծութիւնները հեղինակը վերագրում է Վաղարշակ թագաւորին՝ Պարսից Արշակ թագաւորի եղբօրը, որը եւ Հայոց գահի վրայ էր բազմեցրել Վաղարշակին: Խորենացու ասելով՝ քաջ եւ խոհեմ Վաղարշակը «ընդարձակ տիրեաց ի վերայ սահմանաց իւրոց, եւ կարգս կենցաղականս, որչափ մարթէր, 2-62

սահմանեաց աշխարհիս» [Մով. Խոր., էջ 104. 12-13]: Գիտութիւնը վաղուց պարզել է, որ Վաղարշակի կերպարը հաւաքական բնոյթի է, առաւել չափով նմանուում է Տրդատ Ա Արշակունուն: Նոր հարստութեան հիմնադրի հետ է առնչուում նաեւ բարենորոգչական գործունէութիւնը, չնայած շատ առանձնա-յատկութիւններ, որոնք Խորենացին վերագրում է Վաղարշակ-Տրդատին, իրականում մուտք էին գործել աւելի վաղ:

Մեր պատմիչի ասելով, նախ եւ առաջ «օրինադրէ թագա-ւորն զինքն եւ գտուն իւր, սկիզբն առնելով ի գլխոյ իւրմէ եւ թագէ» [II է]: Պարզուում է, որ թագաւորի գլխին թագ դնելը յանձնարարուած է եղել Բագարատին, որն այնուհետեւ կոչուում է թագադիր. Խորենացին այդ Բագարատից է սերում Բագրատունի նախարարական տոհմը: Այդպիսի մի պաշտօն վկայուած է նաեւ Արտաշէս Ա (Ք.ա. 189-160) թագաւորի օրօք փորագրուած արամէական արձանագրութիւններից մէկում: Արշակունեաց Պարթեւստանում եւս գոյութիւն է ունեցել նման պաշտօն. այնտեղ թագադիր են եղել Սուրէն տոհմի ներկայացուցիչները: Լինելով թագադիր՝ Բագրատունիները կրել են նաեւ պատուաւոր ասպետ մականունը կամ տիտղոսը:

Հայոց թագաւորը ունեցել է բնականաբար, թիկնապահների առանձին ջոկատ, որի պետը կոչուել է մաղխագ: Մաղխագութեան գործակալութիւնը յանձնուած է եղել Խորխոռունիներին: Սասանեան Պարսկաստանի համապատասխան պաշտօնը կոչուել է փուշտիպանան սաղար [Ղազ. Փարպ., էջ 128. 21]:

Մովսէս Խորենացին շարունակում է. թագաւորը նշանակում է «զգեցուցանողս իւր զձեռէս ի զաւակէ Քանանացոց» [Մով. Խոր., էջ 110. 9]: Ձեռք (հայց. ձեռէս) հին Հայերէնում նշանակել է ձեռնոց, եւ շատ գիտնականներ կարծում են, որ յիշատակուած գործակալը (ժառանգաբար Գնթունիների տոհմից) թագաւորին ձեռնոց էր հագցնում: Գոյութիւն ունի, սակայն, նաեւ

այլ կարծիք. այս նախադասութեան մէջ Խորենացին յիշել է պարզապէս Ձեռէս անձնանունը, որը, դժբախտաբար, այլուր չի վկայուած, միւս պատմիչները կրկնում են Խորենացուն՝ այս կամ այն չափով խմբագրելով տուեալ նախադասութիւնը, եւ հարցը մնում է առկախ:

Արծրունիները թագաւորի առջեւ կրում էին արծուանշան դրօշներ (թէ՛ պարզապէս արծիւներ), Գնունիները հոգում էին նրա ըմպելիքների մասին, եւ Խորենացին ստուգաբանում է այդ տոհմանունները՝ կապելով առաջինը արծուի, իսկ երկրորդը՝ գիւնի բառերի հետ [Մով. Խոր., էջ 111. 1-10]: Գեղամի ցեղից Գառնիկի որդի Դատին Վաղարշակը կարգում է «ի վերայ կուտից արքունականաց», իսկ ոմն Գաբաղին (ըստ Հեղինակի՝ նրանից էր սերում Գաբեղեան նախարարական ընտանիքը) նշանակում է «ի վերայ կուտից», այսինքն՝ վստահում է ցորենի մատակարարումը արքունիքին [Մով. Խոր., էջ 111. 11-15]:

Ինչպէս տեսնում ենք, Խորենացին մի շարք դէպքերում ձգտում է կապ գտնել տոհմանունան ու գործակալութեան միջեւ, այսինքն՝ իւրովի մեկնաբանել տոհմանունները, ուստի նրա տեղեկութիւնները այս մասում կարող են լինել ոչ վաւերական: Սակայն ընդհանուր պատկերը ճիշտ է ներկայացուած, նման գործակալութիւններ եղել են ինչպէս Արեւելքի, այնպէս էլ Արեւմուտքի արքունիքներում:

Արքունի դռան պաշտպանութեան համար Վաղարշակը 4 գունդ է սահմանում, իւրաքանչիւրի անձնակազմը՝ 10.000 հոգի: Խորենացին դրանց անուանում է բուն ուստան [Մով. Խոր., էջ 111. 16-18]: Պաշտպանների թիւը ահռելի է՝ 40.000, եւ եթէ այդ թիւը իրական է, ապա արքունիքի պաշտպանութիւնը պէտք է, հաւանաբար, ընդլայնուած իմաստով հասկանալ եւ այդ ստորաբաժանումները կապել ամբողջ երկրի, այսպէս ասած, ներքին անվտանգութեան հետ:

Արքունիքի կեանքում (նաեւ նրանից դուրս) մեծ դեր էր կատարում Հայր-մարդպետը՝ աւագ սենեկապետը: Մարդպետի հսկողութեան ներքոյ էին թագաւորական դանձերն ու թանկարժէք զգեստները, բայց թագաւորը կարող էր յանձնարարել նրան որեւէ արտակարգ ծառայութիւն: Պապ թագաւորը նշանակում է Գլակ մարդպետին սահմանակալ կամ սահմանապահ: Գլակը դաւաճանում է իր տիրոջը, եւ թագաւորը դատապարտում է նրան մահուան: Որպէսզի առաւել խայտառակեն Գլակին, նրան սպանում են թագաց կամ պատմունականաց տանը՝ այն առարկաների առջեւ, որոնց մասին եւ պիտի հոգար մարդպետը:

Տարածուած է այն կարծիքը, որ մարդպետները եղել են Մարդպետական գաւառի ժառանգական տէրերը, այսինքն՝ կազմել են նախարարական տոհմերից մէկը: Այդ տեսակէտը կասկած է առաջացնում. չէ՞ որ մարդպետները իսկական Բայրեր երբեք չեն եղել: Կ. Թումանովի տեսակէտի համաձայն՝ մարդպետները, հետեւելով կայուն սովորոյթի, պարզապէս դառնում էին Մարդպետական գաւառի անձնական սեպհականատէրեր՝ իւրացնելով ժառանգական տէրերի ե՛ւ իրաւունքները, ե՛ւ տոհմանունը: Նման պաշտօնեաներ եղել են նաեւ Պարսից արքունիքում:

Արքունական գործակալների շարքում Խորենացին վերջապէս յիշում է Աբէլին, որը եղել է սպասարար եւ գահարար. պատմիչը այդ Աբէլից է սերում Աբեղեան տոհմը [Մով. Խոր., էջ 110. 17-19]: Սպասարար բառը տուեալ հատուածում անորոշ է. արդեօ՞ք նշանակել է արքունական սպասաւորների պետ եւ եղել է սպասկապետի հոմանիշը (յիշատակուած է իշխանն սպասկապետութեանը՝ [Ագաթ., էջ 460. 5-6]): Ինչ վերաբերում է գահարարին, ապա դա արարողապետն է՝ այն պաշտօնեան, որը հետեւում էր, որպէսզի ընդունելութիւնների ժամանակ հրաւիրուած-

ները ճիշտ գրաւեն տեղերը եւ առհասարակ վարուեն ըստ հաստատուած կարգի: Բուն կարգի մասին կը խօսենք ստորեւ:

Չօրք

Պետութեան սահմանների անվտանգութիւնը ամէնից կարեւոր խնդիրներից մէկն է. այդ առումով Հայաստանը ոչնչով չէր տարբերում միւս երկրներից: Ըստ երեւոյթին՝ սոյն պարտականութիւնը դրուած էր առաջին հերթին բռնշխնդի վրայ: Բռնշխները (թուով չորս) սահմանամերձ մարզերի տիրակալ-վարչապետներ էին, որոնք, ըստ Մեծ Հայքի պետական կարգի, դալիս էին թագաւորից անմիջապէս յետոյ: Պարսկերէնում այդ բառը նշանակում էր յատուկ պաշտօնեայ, իսկ Հայերէնում դրա հոմանիշներն էին սահմանապահ, սահմանակալ, կողմնապահ, կողմնակալ անուանումները: Հնուց ի վեր բռնշխները սովորական նախարարների շարքից դուրս են եղել: Աւանդութիւնն ասում է, թէ երբ Տրդատ Գ-ը տեղեկանում է, որ հոռոմացիների կայսր Կոստանդինոսը քրիստոնէութիւն է ընդունել, Գրիգոր Լուսաւորչի հետ միասին ուղեւորում է նրա մօտ: Ագաթանգեղոսը, որից քաղում ենք այդ տեղեկութիւնը, ասում է, որ թագաւորի շքախմբում առաջինները եղել են չորս բռնշխները [Ագաթ., ձիՉ 873]: Այստեղ խօսքը նոր Շիրականի, Ասորեստանի, Արուստանի եւ Մասքթաց կողմերի սահմանակալների մասին է: Ծանապարհորդութեան փաստը կասկած է առաջացնում, սակայն այն դերը, որը պատմիչը վերագրել է բռնշխներին, համապատասխանում է իրականութեանը:

Այդ բռնշխութիւնները աստիճանաբար անջատուեցին Մեծ Հայքից: Վերջինը Գուգարքն էր, որը Մեծ Հայքի կազմից դուրս բերուեց 363-387 թթ. արանքում եւ հետագայում մտցուեց Վրաց մարզպանութեան մէջ: Այնուամենայնիւ, Գուգարքի կա-

պը Հայերի Հետ մնացել էր ամուր: Գուգարքի բղեչխութիւնն իր դերն է կատարել ինչպէս 450-451, այնպէս էլ 482-484 թթ. շարժումների ժամանակ:

Բղեչխներից յետոյ գալիս էին Ասխարարները: Իւրաքանչիւր նախարար ունի իր իշխանագործը: Մեզ է հասել մի կարեւոր վաւերագիր, որը կոչուած է Զօրանամակ: Այստեղ թուարկուած է 86 տոհմանուն, ընդ որում իւրաքանչիւրի դիմաց նշուած է իշխանագործի մեծութիւնը: Պարզուած է, որ Մեծ Հայքը բաժանուած է եղել 4 դռների՝ Արեւմտեան, Արեւելեան, Հիւսիսային, Հարաւային: Ըստ այդ վաւերագրի՝ զօրքը ընդգրկել է 120.000 հոգի: Սիւնեաց իշխանի տրամադրութեան տակ եղել է 19.400 զօրական, Կարմէացիների՝ 13.200⁶, Գուգարքի բղեչխի՝ 4.500, Աղձնիքի բղեչխի եւ Ընծային տոհմի՝ 4.000, Անգեղ տան զօրքի թիւը եղել է 3.400, Կասպեցիք եւ Բզնունիները ներկայացրել են 3.000 հազար հոգի: 16 նախարար գալիս էին պատերազմի՝ ունենալով 1000 հոգի, 2-ը՝ 600, 5-ը՝ 500, 20-ը՝ 300, 4-ը՝ 200, 16-ը՝ 100 եւ 14-ը՝ 50:

Զօրանամակը մեզ է հասել ուշ շրջանի ընդօրինակութեամբ, այն չի պահուել իր նախնական ձեւով: Այնուամենայնիւ, այդ վաւերագիրն ընդհանուր առմամբ ճիշտ է պատկերում գինուորական ուժերի բաշխումը առանձին նախարարական տոհմերի միջեւ: Այդ ուժերի կորիզը կազմում էին Հեծեալ ազատները, այսինքն՝ նախարարական տոհմի ստորին շերտը: Բայց զօրքն, անշուշտ, չէր կարող կազմուած լինել զուտ ազնուականներից. զինուորական ծառայութիւնից ազատ չի եղել նաեւ հասարակ ժողովուրդը, ուստի շինականները:

Զօրքի գլխաւոր հրամանատարը կոչուել է սպարապետ, զօրավար, ստրատիլատ (վերջին բառը փոխառութիւն է յունարէնից): Պետական գործակալութիւնների շարքում սպարապետութիւնը կարեւորագոյններից մէկն էր, եթէ ոչ ամէնից կարեւորը:

Սպարապետութիւնը սովորաբար վստահուած էր լինում Մամիկոնեաններին: Դ-ն դարերի սկզբին սպարապետ են եղել Արտաւազդ Մամիկոնեանը, նրա որդի Վաչէն, Վաչէի որդի Արտաւազդը, Արտաւազդի որդի Վասակը, նրա որդի Մուշեղը, ապա Արտաշէսի որդի Մանուէլը, Մանուէլի որդիներ Արտաշէսը եւ Համազասպը՝ ընդամէնը 8 հոգի: Յիշենք, որ Ե դարի ապստամբութիւնների հերոսները՝ Վարդանը եւ Վահանը, երկուսն էլ Մամիկոնեան տոհմից էին, երկուսն էլ եղել են սպարապետ:

Պարսկաստանում եւս եղել են սպարապետներ, կոչուել են սպահապատ:

Տնտեսութիւն, ֆինանսներ

Երկրի տնտեսական բարեկեցութիւնը հոգում էր Ռազարապետը: Նրա իրաւասութեան ոլորտը այնքան էլ պարզ չէ, սակայն աղբիւրների կցկտուր տեղեկութիւններից երեւում է, որ նա էր ապահովում պետական տուրքերի գանձումը: Տուրքերը կազմում էին պետութեան տնտեսական հիմքը, դրանով էր որոշուած այդ գործակալութեան կարեւորութիւնը: Հարկատու շինականները ենթարկուած էին անմիջապէս այդ նոյն հազարապետին: Գնունի ազգի մասին խօսելիս, որին յանձնարարուած է եղել հազարապետութիւնը, Փաւստոս Բուզանդը նշում է՝ հազարապետը, ցուցաբերելով աշխարհատես խնամակալութիւն, հանդէս էր գալիս որպէս շինակառուած [տե՛ս Փաւ. Բուզ., էջ 76]: Հազարապետութիւնը ամէնից բարձր պաշտօններից մէկն էր. Եղիշէ պատմիչի աչքում հազարապետը եղել է ինչ-որ իմաստով ազգի Հայր վերակացուն [Եղ., էջ 23.8-9]: Տիրան թագաւորի օրօք հազարապետի պաշտօնը ստանձնել էր Անձիտի իշխան Վաղարշակը, Արշակ Երկրորդը հազարապետութիւնը յանձնեց Գնունի տոհմին: Մաշտոցի երիտասարդութեան տարիներին հազարապետ էր

Առաւանը, իսկ Ե դարի 40-ական թուականներին պարսիկները Հեռացրին այդ պաշտօնից Վահան Ամատունուն (որը շուտով դարձաւ 450-451 թթ. ապստամբութեան ամէնից ակնառու մասնակիցներից մէկը):

Հազարապետի պաշտօն եղել է նաեւ Պարսկաստանում, բայց այնտեղ այդ ծառայութիւնը աւելի լայն բնոյթ է կրել: Աշխարհիկ վարչութեան ոլորտում Պարսից Հազարապետը եղել է, ըստ երեւոյթին, թագաւորից յետոյ առաջին դէմքը:

Արդարադատութիւն

Խորենացին պնդում է, որ Վաղարշակ թագաւորը Հաստատած է եղել «իրաւարարս ի տանն արքունի, իրաւարարս ի քաղաքս եւ յաւանս» [Մով. Խոր., էջ 117. 18-19]: Շահապիվանի եկեղեցական կանոններում, որոնք ընդունուել էին Ե դարի 40-ական թուականներին, յիշատակուած են «ազատ ոք ի դատաւորաց» եւ աւագ դատաւորներ [Կան., Ա, էջ 453. 10]: Լինելով նշանակուած դատաւորներ՝ սրանք էին, որ պիտի ապահովէին արդարադատութիւնը: Բացի այդ, դատական պարտաւորութիւններ են ստանձնել նախարարները եւ ինքը թագաւորը: Մովսէս Խորենացու վկայութեամբ, Վաղարշակը պահանջում էր, որ թագաւորը ունենայ երկու յիշեցնող՝ մէկը պիտի բարի լուրեր յուշէր, միւսը՝ դատապարտող, ընդ որում առաջինը պարտաւոր էր կանխել արքային, եթէ նա բարկութեան պահին անարդար վճիռ կայացնէր [Մով. Խոր., էջ 117]: Դժուար է ասել, որչափ Հաստատի է Պատմաձօր այդ հաղորդումը:

Դատաւարական պարտականութիւններ ունէին նաեւ հոգեւորականները, հեթանոս շրջանում՝ քուրմերը, այնուհետեւ՝ քրիստոնեայ Եկեղեցու մշակները: Գլխաւոր դէմքը այդ պարագային եպիսկոպոսն էր կամ նրան փոխարինող ցածրաստիճան հոգեւորականը,

րականը, իսկ յոյժ կարեւոր դէպքերում դիմում էին անգամ կաթողիկոսին: Այնուամենայնիւ, հիմնական դերը վիճակուած էր եպիսկոպոսին, որը եւ պիտի ընդհանուր առմամբ ապահովէր օրինապահութիւնը: Այդպիսին է եղել Դ դարի առաջին կէսին ապրած Դանիէլ եպիսկոպոսը, որին վստահուած էր մեծ դատաւարութեան գործակալութիւնը Տարօնում [Փաւ. Բուգ., էջ 46-47]:

Շատ դէպքերում վճիռը կայացնում էին քաղաքային կամ գիւղական Համայնքի ներկայացուցիչները՝ հիմնուելով, այսպէս կոչուած, սովորութային իրաւունքի վրայ. արդարադատութեան այդ Համայնքի ձեւը ճանաչուած ու տարածուած է եղել նաեւ Հայկական միջավայրում:

Ահա այդպիսին է եղել պետական կառուցուածքը Արշակունիների օրօք: Յիշենք մէկ անգամ եւս, որ տեղեկութիւնները քաղում ենք, որպէս կանոն, պատմողական բնոյթի աղբիւրներից, որոնք արտայայտում են հեղինակի աշխարհընկալումը, միտումը, վերջապէս գիտելիքի սահմանը: Փաստացի նիւթը Հասնում էր նրան բանաւոր աւանդոյթի ձեւով, երբ մանրամասնութիւնները եւ անգամ բուն էութիւնը կարող էին խեղաթիւրուած լինել: Սակայն, ընդհանուր առմամբ, մեր գիտելիքները դարաշրջանի պետական Հաստատութիւնների վերաբերեալ Հարազատ են իրականութեանը:

Հասարակութիւնը

Մինչ այժմ մենք խօսեցինք Արշակունեաց Հայաստանի գլխաւորապէս պետական կառուցուածքի մասին՝ թուարկելով այն Հաստատութիւնները (թագաւորական իշխանութիւն, սպարապետութիւն, Հազարապետութիւն եւ այլն), որոնք գոյութիւն են ունեցել եւ գործել այդ շրջանում: Անբարդառնանք այժմ

Հասարակական բնութագրին՝ այն յարաբերութիւններին, որոնք բխում էին Հասարակութեան բուն էութիւնից:

Դ-ն դարերում Հայ Հասարակութիւնը վաղուց ի վեր բաժանուած է եղել երկու հիմնական շերտի՝ ազատների եւ անազատների (հոգեւորականութիւնն իր էութեամբ այդ բաժանումից դուրս էր. այդ մասին ստորեւ): Մեզ հետաքրքրող շրջանում ազատ բառը Հանդէս է գալիս իր երկու հիմնական նշանակութեամբ՝ ա) ազնուական, տոհմիկ. բ) որպէս մէկը, ով չի ենթարկուում ուրիշին, կարող է շարժուել ու գործել ըստ իր կամքի (ազատ է բառիս այսօրուայ իմաստով)⁷: Ազատը, որպէս ազնուական, հակադրուում է ուսմիկ, շինական, գեղջուկ, մշակ, ծառայ, ստրուկ եւ նման հասկացութիւններին: Հայ ազատանին՝ նախարարները, Հանդէս են գալիս, ինչպէս ասացինք, իբրեւ գործակալներ, իբրեւ իշխանագործի պարագլուխներ՝ լինելով միաժամանակ հողի սեփականատէրեր: Արշակունեաց Հայաստանում, ճիշտ այնպէս, ինչպէս հելլենիստական աշխարհում եւ նրա միւս ժառանգորդների մօտ, հողերը եղել են գանձագին, պարգեւական, հայրենիք: Վերջին տեսակը ամէնից տարածուածն ու սովորականն էր. դա այն հողն էր, որը ժառանգում էր նախարարի սերունդը, իբրեւ օրէնք՝ աւագ որդին՝ սեպուհը: Ինչպէս ամէնուրեք, ազնուական սեփականատէրերը ձգտում էին, որպէսզի հողային տիրոջթիւնը չլլատուեն, մնան նոյն տոհմի սեփականութիւն:

Նախարարական կազմը միասնական չէր, վկայուած են աւագ եւ կրտսեր նախարարներ: Իշխանի շուրջ եղած նախարարները Հասարակական առումով աւելի ցածր աստիճանի վրայ են գտնուել, ենթարկուել են այդ իշխանին, մտել իշխանագործի կազմի մէջ եւ կրել ազատ (տուեալ դէպքում՝ առանձին իմաստ ունեցող) անունը: Այսպիսով, ազատ բառը տարածուել է ինչպէս ազնուականութեան վրայ առհասարակ, այնպէս եւ նրա ա-

ռանձին դասի. ընդ որում յաճախակի դժուար է լինում կռահել, թէ որն է սկզբնաղբիւրում օգտագործուած ազատ բառի ճիշտ իմաստը: Իւրայատուկ եզր (տերմին) է եղել այդ բառը Կիլիկեան Հայոց իշխանութեան, ապա թագաւորութեան պայմաններում (ԺԱ-ԺԴ դարեր): Այնտեղ ազատ (ինչպէս նաեւ ճորտ) անուանումները կարող էին նշանակել վասալներին (ստորականներին):

Նախարարները սկզբնապէս եղել են առանձին վարչական միաւորների կառավարիչներ, ապա դարձել են այդ հողերի սեփականատէրերը՝ ձեռք բերելով լայն իրաւունքներ նաեւ ստորին դասը կազմող բնակչութեան նկատմամբ: Նախարար բառի հետ մէկտեղ օգտագործուել են նաեւ Ասիական, իշխան, տանուտէր, տէր, ազգապետ եզրերը: Առաջին Հայեացքից կարող է թուալ, թէ այդ բառերը արտայայտում են նախարարական կազմակերպութեան տարբեր կողմերը. նախարարները Հանդէս են գալիս մե՛րթ որպէս վարչապետեր, մե՛րթ սեփականատէրեր, մե՛րթ տոհմապետեր: Թուում է, որ դրանք նպատակ ունեն ընդգծելու, թէ տուեալ դէպքում որպէս ինչ է Հանդէս գալիս նախարարական դասի ներկայացուցիչը: Մինչդեռ տպաւորութիւնը խաբուսիկ է, թէպէտ այդ բառերը իրօք որ արտայայտում են նախարար հասկացութեան տարբեր կողմերը: Իրապէս այդ բոլոր դարձուածքները ներկայացնում են նախարարին ընդհանրացուած եզանակով: Որպէս ինչ է Հանդէս գալիս նախարարը, նրա ընդհանուր կերպարի որ կողմն է ակնարկում սկզբնաղբիւրը. Հնարաւոր է լինում (եթէ առհասարակ Հնարաւոր է) որոշել՝ ելնելով միայն լայն կոնտեքստից:

Ինչպէս արդէն ասուեց, նախարարները վարել են պետական պաշտօններ, մասնակցել արքունական բարդ կեանքին՝ ստանձնելով պարտականութիւններ, որոնք կոչւում էին գործակալութիւն:

Նախարարի կարգավիճակը ենթադրել է այդ ազնուական դասի ստորադասութիւնը թագաւորական իշխանութեան նկատմամբ, սակայն դա չի նշանակում, որ նախարարները հանդէս են եկել որպէս դիմազուրկ միասնութիւն: Բոլոր դէպքերում, նախարարը ներկայանում էր որպէս տուեալ տոհմի գլուխ՝ հասարակական սանդղակի վրայ գրաւելով իր համար սահմանուած աստիճանը:

ԺԹ դարի կէսերին թիֆլիսեցի բժիշկ-բանասէր Գէորգ Հախվերդեանը, որին մենք պարտական ենք Սայեաթ-Նովայի ժառանգութիւնը կորստից փրկելու համար, յայտնաբերել էր մագաղաթեայ մի թերթիկ՝ անունների ինչ-որ ցուցակով: Թերթիկի ծալքի վրայ եղած անցքերը ապացոյց էին, որ այն ծառայել էր ձեռագիր մատենանի պահպանակ, գրչագիրը պահպանելու համար: Կռահելով այդ թերթիկի կարեւորութիւնը՝ Գ. Հախվերդեանը այն տրամադրել էր Մոսկուայի Լազարեան ճեմարանի ականաւոր ուսուցչապետ Մկրտիչ Էմինին, որը եւ 1858 թ. հրատարակել էր այդ թերթիկը: Հետագայում այդ մագաղաթը (թէ նրա լուսանկարը) ընկնում է Ղեւոնդ Ալիշանի ձեռքը, եւ նա իր «Այրարատ» յայտնի աշխատութիւնում հրապարակում է պահպանակի վերարտադրութիւնը: Գ. Հախվերդեանի գտածը բովանդակում էր Արշակունեաց Հայաստանի Գաճնամակը՝ թէպէտ եւ փոփոխուած ձեւով:

Պալատական ընդունելութիւնների ժամանակ հրաւիրուած ընտրեալները բազմում էին պատուաւոր գահերի վրայ (նոյն կարգը ընդունուած է եղել նաեւ Սասանեան արքունիքում): Բայց գահն ու նրա վրայ եղած բարձր եղել են ոչ միայն կահոյքի առարկայ, այլեւ խորհրդանշան, որով որոշուած էր նախարարի տեղը հասարակութիւնում: Գահնամակի մեզ հասած օրինակում թուարկուած է 70 անուն: Առաջինը Սիւնեաց տէրն է, երկրորդը՝ Բագրատունին, երրորդը՝ Արծրունին եւ այլն: Ընդու-

նելութեան ժամերին նախարարները պիտի գրաւէին իրենց տեղերը (եւ ցուցաբերէին միաժամանակ իրենց հասարակական դիրքը)՝ հետեւելով հէնց Գահնամակին: Այդ հերթականութիւնն էր, որ որոշում էր ազնուականի պատիւը: Պատիւ գոյականը առնչուած է պատիմ բայի հետ. հնում այդպէս է կոչուել այն կապը, որը լինում էր ազնուականի ճակատին՝ գահի եւ բարձի նմանութեամբ՝ խորհրդանշելով նախարարի տեղը հասարակական ոլորտում⁸:

Ընդունելութիւնների կարգն ապահովողը պիտի լինէր վերետում յիշատակուած գահարար-արարողապետը:

Ասացինք, որ Գահնամակն էր որոշում նախարարի տեղը հասարակական սանդղղքի վրայ, իսկ այդ տեղը ժամանակ առ ժամանակ վէճի առարկայ էր լինում: Յայտնի են դէպքեր, երբ տեղերը փոփոխուած էին վերից վար ու հակառակը, բայց դա լինում էր արտակարգ պայմաններում: Սկզբունքն ինքնին պահանջում էր կայունութիւն, համակարգը, ըստ էութեան, պիտի մնար անշարժ: Գահնամակի եւ Զօրանամակի միջեւ նմանութիւն կայ՝ երկուսն էլ ընդգրկում են նախարարական տոհմերի նոյն կազմը: Կայ նաեւ էական տարբերութիւն: Զօրանամակում նախարարները ներկայացուած են մեծ մասամբ ըստ առանձին դասերի՝ 1000 զինուոր ունեցողների, 300, 200, 100 եւ այլն: Իսկ Գահնամակը բացառում է որեւէ դաս. ամէն մի նախարար գրաւում է առանձին, միայն իր տոհմին յատկացուած տեղը:

Նախարարական կառուցուածքին, որի հիմքը կազմել է աւատական հողատիրութիւնը, յատուկ է եղել որոշ կայունութիւն, դա նպաստել է նաեւ ամբողջ երկրի հաստատութեանը: Սակայն յաճախակի արթնանում էին առանձին նախարարական տոհմերի հակասութիւններ, ինչպէս նաեւ՝ հակասութիւններ թագաւորական իշխանութեան եւ նախարարների միջեւ: Նման երեւոյթներ քաջ ծանօթ են ոչ միայն Հայոց, այլեւ ընդհանուր պատմու-

թիւնից: Այդ դէպքերում վտանգն սպառնում էր արդէն ողջ Հասարակութեանը:

Արշակունեաց շրջանում եւ նրան յաջորդող 2-3 հարիւրամեակների ընթացքում նախարարական կազմը բաւականին կայուն էր մնացել: Արաբական տիրապետութեան պայմաններում նախարարութիւնները սկսում են քայքայուել, առանձին ազնուական տոհմեր աստիճանաբար չքանում են պատմաբանից: Բագրատունեաց շրջանում (Թ-ԺԱ դարեր) որոշիչ դեր են կատարում ընդամէնը մի քանի մեծատոհմիկ գերդաստաններ: Այսպէս, եթէ Արշակունեաց Մեծ Հայքի նախարարութիւնների թիւը պտտւում էր 50-ի շուրջ, ապա Բագրատունեաց Մեծ Հայքում (որի սահմանները, ճիշտ է, անցեալի Համեմատութեամբ շատ էին կրճատուել) տնօրինում են միայն իրենք՝ Բագրատունիները, Պահլաւունիները եւ Հայկազեանները (յանձին, օրինակ, վեստ Սարգսի):

Թէ՛ Հին եւ թէ՛ միջնադարեան Հայաստանում Հասարակական մարմնի կորիզը կազմել է գիւղացիութիւնը: Յովհաննէս Թումանեանի երգած գիւղացին ունեցել է բազմադարեան պատմութիւն, բայց չափազանց մութ է այդ պատմութիւնը: Կտրելով երկիրը հարաւից դէպի հիւսիս՝ Ք.ա. 401-400 թթ. մեր Հին Հայրենիքով է անցել յոյն գրող Քսենոփոն Աթենացին, որը ճակատագրի բերմամբ դարձել էր զօրավար, բայց գրիչը վայր չէր դրել: Յունական զօրամասի գլուխ կանգնած՝ Քսենոփոնը Հանգրուան էր գտել մի շարք հայկական գիւղերում եւ գրի առել իր տպաւորութիւններն ու դիտարկումները: Նա խօսում է գիւղական տան կերակրի մասին, կերտում գիւղապետի տպաւորիչ պատկերը, բայց Համարեայ ոչինչ չի ասում գիւղացու Հասարակական դիրքի մասին: Քսենոփոնից յետոյ սկզբնաղբիւրները գիւղացիութեան վերաբերեալ մեռեալ լռութիւն են պահպանում գրեթէ մէկ հազարամեակ: Այդ լռութիւնը խախտում է միայն

Ե դարում, երբ Հայ գիւղացու մասին սկսում են խօսել գրողներն ու օրէնսդիրները: Արտաշէս-Տրգրանի եւ առաջին Արշակունիների օրօք Հայաստանի Հասարակական-տնտեսական զարգացման խնդրի շուրջ եղած վէճերը դեռ կը շարունակուեն: Բոլորն էլ ընդունում են, որ Համատեղուել է մի քանի կացութեամբ, որ եղել է ազատ եւ կախեալ գիւղացիութիւն, վերջինս շահագործուել է առանձին տէրերի եւ պետութեան կողմից, դրանց կողքին եղել են նաեւ ստրուկներ: Բայց ինչպէ՞ս են յարաբերակցուել այդ ձեւերը, ո՞րն է եղել որոշիչը՝ ահա այդ հարցերի շուրջ է ընթանում վէճը, որը ժառանգել է այսօրուայ պատմագիտութիւնը ոչ հեռաւոր անցեալից:

Անցնենք Դ-Ե դարերում Հայ գեղջուկին վերաբերող տեղեկութիւններին, որոնք, այնքան էլ առատ չլինելով Հանդերձ, այնուամենայնիւ հնարաւորութիւն են տալիս կազմել հաւաքական մի տիպար, որը լրացւում է անուղղակի տուեալներով:

Դ-Ե դարերում Հասարակութեան բոլոր ստորին խաւերը կոչուել են ուսմիկ: Ռամիկ կամ անարգ են եղել նաեւ շինականները, այսինքն՝ գիւղացիութեան հիմնական տարրերը: Շինականները բնակւում էին գիւղերում, նրանք մանր սեփականատէրեր էին, ունէին իրենց տունը, տնտեսութիւնը: Վճարելով պետական հարկեր՝ Ռարկ արքունի, նրանք ընդհանրապէս ազատ էին, ունեցել են անձնական իրաւունքներ, կարող էին Հայց ներկայացնել եւ դատուել եկեղեցական դատարանում: Շինականները կարող էին նոր գոյք ձեռք բերել կամ կտակագրել եղածը:

Շինականներն ունէին իրենց յատուկ կազմակերպութիւնը՝ գիւղական Համայնքը: Պետութեան Համար դա մի Հաստատութիւն էր, որն ապահովում էր հարկերի գանձումը, մինչդեռ գիւղացու Համար դա շահագործման եւ ոտնձգութիւնների դէմ պայքարելու ինչ-որ միջոց էր: Համայնքներն ունէին իրենց պետերը. Փաւստոս Բուզանդը նրանց անուանում է դասապետք շի-

անկանաց, Մովսէս Դասխուրանցին (Ժ դար)՝ գիւղապետ, իսկ Պարտաւի եկեղեցական կանոններում՝ գեղջաւագ: Հետաքրքիր է, ինչ կապակցութեամբ է յիշատակուում գեղջաւագը այս վերջին դէպքում: Պարզուում է, որ արարողութեան ժամին նա կարող էր եկեղեցու դուռը փակել տալ բոնատրիմ, որպէսզի ապահովի հարկերի դանձումը: Բայց կանոնի համաձայն՝ այդպիսի յանցանքի համար նա ենթարկուում էր նզովքի «ի կեանս եւ ի մահ» [Կան., Բ, էջ 16. 6-8]:

Լինելով համայնքի անդամներ՝ գիւղացիները մնում են մանր սեփականատէրեր, իրենց տնտեսութեան հետ կազմում են մի ամբողջութիւն՝ երդումարդ: Մարդուն, ըստ երեւոյթին, չէին կարող բաժանել իր երդից (որը տուեալ դէպքում նշանակուում է գիւղացուն պատկանող հողի կտորը), բայց երդումարդի ճակատագիրը կարող էր որոշել թէ՛ թագաւորը, թէ՛ հարեւան ազատը:

Շինականները խորն են զգում իրենց ազգային պատկանելութիւնը, նրանք գործնական մասնակցութիւն են ցուցաբերել Ե դարի հակասասանեան ե՛ւ առաջին, ե՛ւ երկրորդ ապստամբութեանը: Դա բացատրելի է. որոշ առումով նրանք հասարակութեան նոյնպիսի անդամներ են, ինչ որ եւ ազնուականները, վերջինների պէս նրանք ձգտում են մասնակցել ազգային հարցերի լուծմանը: Երբ պարսիկները Տիրան արքային կուրացրին եւ գերի տարան, հայերը որոշեցին օգնութիւն խնդրել յոյներից: Ժողով հրաւիրուեց, որին մասնակցեցին «նախարարք մեծամեծք, աւագք, կուսակալք, աշխարհակալք, ազատք, զօրագլուխք, դատաւորք, պետք, իշխանք, բաց ի զօրավարացն, այլ եւ ի շինականաց անգամ ուսմիկ մարդկան» [Փաւ. Բուզ., Գ, 21]:

Գիւղական համայնքի անդամները կարող են շահագործուել թէ՛ պետութեան, թէ՛ առանձին նախարարների կողմից: Ենթադրուում է, որ հնում ազարակների եւ դաստակերտների աշխա-

տաւորները եղել են ստրուկներ, այժմ նրանց տեղը գրաւուում են գեղջուկ-շինականները: Շինականի հասարակական դիրքը ինչ-որ առումով համեմատաբար բարձր է: Դա իր արտայայտութիւնն է գտել եկեղեցական օրէնսդրութեան մէջ: Եթէ մէկը առանց որեւէ պատճառի թողնում է իր կնոջը, ապա եթէ ազատ է՝ տուգանքը կազմում է 300 դրամ, եթէ շինական է՝ 600: Գեղջուկը, այսպիսով, տուգանք է վճարում ընդամէնը 2 անգամ աւելի, քան ազատը: Բայց շինականի վիճակը առհասարակ ծանր է, եւ Եղիշէն փափկացեալ ազատին հակադրուում է վշտացեալ գեղջուկին [Եղ., էջ 67]: Իր յայտնի դրուագում զոհուածների եւ աքսորուածների կանանց մասին Եղիշէն ասում է, որ այդ փափկասուն տիկիները «ամենեւին չյիշեցին մայրենի ազատութեան փափկութեան անունը, այլ իբրեւ այնպիսի մարդիկ, որոնք հէնց նեղութիւնների են համբերել շինական սովորութիւնների օրինակով եւ տանջուելով են անցկացրել իրենց կեանքը, նրանից էլ աւելի մեծ վշտերի համբերել յանձն առան» [Եղ., էջ 200. 5-9]:

Որոշ դէպքերում, երբ յանցաւոր է գտնուում ազատը, նա տուգանք է վճարում, իսկ նոյն օրէնքը խախտող անազատը մարմնական պատժի է ենթարկուում («եւ ապա, եթէ շինական է, դան յովով արբցէ» [Կան., Ա, էջ 433. Հմմտ. 438, 441. 2, 442]): Բայց ամէնից սոսկալի դէպքն այն էր, որ երբ ազատը մի ուրիշ յանցանքի համար դարձեալ տուգանքով էր գլուխը փրկում, շինականին իբրեւ պատիժ ուղարկում էին գողեանոց (ուրկանոց), որպէսզի նա՝ այնտեղ ցորեն աղայ [Կան., Ա, էջ 437, 442, 461, 462]¹⁰:

Շինականները, բնականաբար, տարբերուել են ազատներից իրենց մտաւոր պաշարով: Ուսումը եղել է ոչ միայն եկեղեցականների, այլեւ աշխարհիկ նախարարների մենաշնորհը, իսկ շինականները մեծ մասամբ մնում էին անուս: Եղիշէն պատմում

է, որ Պարսկաստան տարուած հոգեւորականները մէկ օր սեղան նստելիս կասկածեցին իրենց բախտակից մի երէցի վրայ. երէցը իր կեանքը անց էր կացրել շինականների մէջ, հետեւաբար անտեղեակ պիտի լինէր Սուրբ Գրքի մխիթարանքներին [Եղ., էջ 153. 10-12]:

Շինականների կողքին աշխատում էին նաեւ ստրուկներ, բայց նրանց մասին դատել շատ դժուար է: Գիտենք, որ նրանք կոչուել են ծառայ, ստրուկ, հաւանաբար մշակ, հաստատապէս գիտենք նաեւ, որ նրանք տարբեր են եղել աշխատաւոր դասի միւս հատուածներից:

Կասկած չկայ, որ Հայաստանում, ճիշտ այնպէս, ինչպէս նաեւ Հարեւան երկրներում, կիրառուել է ստրուկի աշխատանք (թէկուզ տեղեկութիւններն այդ մասին հազուադէպ են): Ստրուկներն իրենց էութեամբ միւս արտադրողներից տարբերուել են ե՛ւ իրաւական, ե՛ւ իրական առումով: Բայց երբ փորձում ենք պատկերացում կազմել ստրուկների յատկանշական կողմերի մասին, երբ ձգտում ենք կռահել, թէ յատկանիշերի ինչ համալիր է եղել ստրուկ կոչուածը, ապա հանդիպում ենք սկզբնադրելիների կատարեալ լուութեանը:

Ստրկատիրական կարգերի մասին մեզանում հանգամանօրէն խօսել են մի շարք գիտնականներ, յատկապէս՝ Յ. Մանանդեանը, Ս. Երեմեանը, Գ. Սարգսեանը¹¹: Վերջինս իրաւամբ պնդում է, որպէսզի Հայաստանում ստրկատիրական կարգերի հետազօտողը նախ եւ առաջ վերացարկուի այն պատկերացումներից, որոնք գոյութիւն ունեն անտիկ Յունաստանի եւ Հռոմի ստրկութեան մասին: Բայց զուգահեռները արեւելեան երկրների հետ նոյնպէս քիչ բան են տալիս, քանզի համեմատուելիք առարկան, այն է՝ Հայաստանում շահագործուող ստրուկը մեզ յայտնի է (այն էլ ոչ միշտ) միայն իր կոչական անունով: Մասնագիտական գրականութեան մէջ սովորաբար նոյն օրինակն է վկա-

յաբերուում: Իշխան Ներսէզ Կամսարականը, պատերազմելով բազլուճների դէմ, շատ գերիններ է վերցնում, ապա նրանց բաժանում Պարսից թագաւորի, արքայորդու, դարիկպետի, սպարապետի միջեւ: Վերադառնալով հայրենիք՝ գերինների մնացած մասը տալիս է Հրահատ եւ Սահակ եղբայրներին, հայ ազատներին, Վաղարշապատի Մայր եկեղեցուն, միւսներին՝ պահում իր մօտ¹²: Օրինակը որքան պատկերաւոր է, նոյնքան եւ անորոշ. ինչպէ՞ս են օգտագործուել այս գերի վերցուած եւ ստրկացուած բազլուճները, ինչպիսի՞ն էր նրանց հասարակական վիճակը: Կրկնենք, որ Հայաստանում եւս շահագործուել է ստրուկի աշխատանքը, բայց դա չի եղել որոշիչը: Հասարակութեան տնտեսական հիմքը ապահովել է նախ եւ առաջ ազատութեան տարբեր աստիճանի վրայ գտնուող գիւղացու աշխատանքը¹³:

Սօսելով բուն արտադրողների մասին՝ մենք մինչեւ հիմա փորձել ենք պարզել նրանց իրաւական վիճակը, մօտենալ նրանց արտադրողական յարաբերութիւնների տեսանկիւնից: Իսկ ի՞նչ են արել նրանք իրապէս, ինչո՞վ են զբաղուել՝ ապահովելով ե՛ւ իրենց, ե՛ւ ողջ հասարակութեան գոյութիւնը:

Հայաստանը երկրագործների եւ անասնապահների երկիր էր: Չկար մի գաւառ, որտեղ զբաղուէին գիւղատնտեսութեան միայն առաջին կամ միայն երկրորդ ճիւղով, չնայած բնական պայմանների թելադրանքով առաջնութիւնը տրուում էր կա՛մ երկրագործութեանը, կա՛մ անասուն պահելուն: Երկու դէպքում էլ հայ գիւղացին հետեւել էր անյիշելի ժամանակներից եկած փորձին: Ամէնուրեք ցորեն են աճեցրել, իսկ լեռնային վայրերում՝ նաեւ աշորայ: Կարմիր Բլուրի պեղումներից պարզուեց, որ դեռեւս ուրարտական շրջանում այստեղ աճեցրել են տարբեր տեսակի ցորեն, գարի, կորեկ: Ուռգումը արհեստական է եղել, եւ մինչեւ այժմ էլ կան ջրանցքներ, որոնք մնացել ու գործում են հնագոյն ժամանակներից: Հողը եւ ջուրը դիտուել են համատեղ

(տե՛ս, օրինակ, Կան., Բ, էջ 207. 3, 11, 209. 9 եւ այլն), մէկն առանց միւսի արժէզրկուում է: Հողը հերկել են գութանով: Յորենը աղացել են երկանքով, ջրաղաց դեռուս չի եղել: Յորենի ալիւրից լաւաշ են թխել նոյն՝ այսօրուայ թոնրում:

Այգիներում աճել է տանձ, խնձոր, սալոր, ծիրան, կեռաս, նուռ, ընկոյզ, նուշ, սերկելի, թուզ: Այդ պտուղները մեծ մասամբ յիշատակուած են «Աշխարհացոյցում»¹⁴: Վանայ լճի շրջակայքը յայտնի էր իր սեխով, ձմերուկի սերմ է գտնուել Կարմիր Բլուրում:

Մեծ տեղ է գրաւել խաղողագործութիւնը (այգի բառը նշանակել է գերազանցապէս խաղողի այգի). «Աշխարհացոյցից» գիտենք, որ իր այգիներով հռչակուած է եղել Գողթնը: Գինեգործութիւնը եւս շատ հին պատմութիւն ունի. Կարմիր Բլուրի բերդում, որը պատկանում է ուրարտական շրջանին, պեղել են մի քանի պահոց՝ տասնեակ կիսաթաղ կարասներով: Գինին վայելում էին հեթանոսական տօնակատարութիւնների ժամանակ, այն անփոխարինելի է եղել նաեւ քրիստոնեայ եկեղեցիներում հաղորդութեան խորհրդին: Գեղումներից կարելի է եզրակացնել, որ խմիչքների շարքում պատուաւոր տեղ էր գրաւել գարեջուրը:

Գետերի հովիտներում, նաեւ սարահարթերում բանջարեղէն են աճեցրել՝ դրանք ճաշակելով թարմ վիճակում եւ պաշար պահելով ձմռան համար: Սակայն այսօրուայ համեմատութեամբ տեսակների ցուցակը համեստ է, բացակայում են լոլիկը, բադրիջանը, պղպեղը, կարտոֆիլը. սրանք սկսել են տարածուել միայն նոր շրջանում: Իսկ համեմուկները եղել է թերեւս աւելի տարածուած, քան այսօր:

Հնագոյն ժամանակներից ի վեր ուտելիքների շարքում մեծ տեղ է գրաւել ձէթը: Զիթհանների միջոցով քննութից քամած

ձէթը մնում էր մարդկանց, իսկ քուսպը տալիս էին անասուններին:

Խոշոր եղջերաւոր անասունները՝ եզներ եւ գոմեշներ, նաեւ ձի, էջ, ոչխար, այծ, խոզ պահել են ստորին հնեոլիթեան շրջանից. դրանց ոսկորները յայտնաբերուել են Գառնիի պեղումներից¹⁵: Անասուն են պահել մսի, կաթի, բրդի, կաշուի համար, իսկ քակորից աթար են պատրաստել (անտառասակաւութեան պայմաններում վառելիքի հարցը միշտ բարդ է եղել): Գերակշռում էր մանր եղջերաւոր անասունը. ամռանը ոչխարը քշում էին ալպեան մարգագետինները (դրանք մենք այժմ, օգտագործելով փոխառեալ բառ, եայլայ կամ եայլաղ, օրայ ենք կոչում): Հէնց այստեղ էլ խնոցիներում կոզի (կարագ) էին հարում, պանիր պատրաստում: Տեսնում ենք, որ այսօրուայ հովուի կեանքը ձեւաւորուել է դեռուս հին Հայաստանում: Քսենոփոնի ասելով, հայկական սեղանի վրայ (դեռուս Ք.ա. 401-400 թթ. ձմռանը) եղել է ոչխարի, այծի, խոզի, երնջի միս, իսկ հացը թխել են ցորենի ու գարու ալիւրից:

Հայաստանում առանձին ճիւղ է կազմել ձիաբուծութիւնը: Դրա պատմութիւնը եւս հին է: Հայերը ձի էին ուղարկում ե՛ւ Մարաստան, ե՛ւ Աքեմենեան Պարսկաստանի տիրակալներին: Արաբական շրջանում ձիաբուծութեան կենտրոնը գտնուել է Ուրմիա լճի մօտերքում, Հէնց այստեղ էլ վարժեցնում էին ձիերին: Սեպագիր արձանագրութիւններից գիտենք, որ Ուրարտուի Մենուա թագաւորը Արծիբի (Հմմտ. հին Հայերէն արծուի, ժամանակակից արծիւ բառի հետ) անուն կրող ձիով 11,4 մ երկարութեամբ թռիչք է կատարել: Զիաբուծութիւնը մեծ դեր է կատարել հասարակութեան կեանքում: Հայոց զօրքը եղել է գերազանցապէս հեծելագոր: Պարսկաստանի արեւելքում կամ հարեւան Աղուանքում այդ հեծեալները մասնակցում էին Սասանեան թագաւորների ռազմարշաւներին, եւ նոյն հեծեալները, երբ ժա-

մանակը Հնարաւորութիւն էր տալիս, փորձում էին տապալել այդ Սասանեանների տիրապետութիւնը Հայրենի երկրում:

Եթէ մեր պատմութիւնը վերաբերէր Արտաշէս Ա-ի (Ք.ա. 189-160) կամ Տիգրան Բ-ի (Ք.ա. 95-55) ժամանակներին, մենք շարադրանքի մեծ մասը կը նուիրէինք, հաւանաբար, ոչ թէ գիւղական, այլ քաղաքային կեանքին: Իրօք, դա մի շրջան էր, երբ քաղաքաշինութիւնը դարձել էր պատմական զարգացման ամէնից էական դրսեւորումներից մէկը: Հայաստանի շուրջ 10 քաղաքները բուռն կեանքով էին ապրում: Գտնուելով միջագային տարանցիկ առեւտրի ճանապարհների վրայ՝ դրանք կապուած էին թէ՛ Արեւելքի, թէ՛ Արեւմուտքի հետ: Արհեստագործների թիւը այդ քաղաքներում հասնում էր տասնեակ հազարների, այստեղ ձեւաւորւում էր քաղաքին բնորոշ տարատեսակ մշակոյթ: Քաղաքային համայնքը իր մի շարք գծերով մօտենում էր հելլենիստական պոլիսի կազմակերպութեանը: Գիւղը ենթարկւում էր քաղաքին, քաղաքացիք աւելի բարձր էին դասուած, քան շինականները: Այդ կարգը արտայայտուել է Վաղարշակ Թագաւորին վերագրուած մի հրովարտակում: Ըստ Վաղարշակի հրամանի՝ քաղաքացիների յարգանքն ու պատիւը պիտի աւելի բարձր լինէին, քան գեղջուկներինը: Գեղջուկները պիտի քաղաքացիներին պատուէին իշխանների պէս, իսկ վերջիններս պարտաւոր էին եղբայրաբար վերաբերուել շինականներին ու չպարծենալ նրանց մօտ [Մով. Խոր., էջ 117. 19-118. 4]: Կարելի է նախանձել յարգալից բանաձեւին, որն ընդունել էր Թագաւորը՝ քաղաքացիների բացայայտ գերադասութիւնը հուշակելու համար...

Բայց Դ-ե դարերում վիճակն արդէն այլ էր: Դ դարի 60-ական թուականների պատերազմները, բացասական միւս հետեւանքներով հանդերձ, կործանիչ հարուած հասցրին քաղաքային կեանքին: Դեռեւս Տիգրան Բ-ը Հայաստան էր գաղթեցրել բազ-

մաթիւ հրէայ արհեստաւորների, որոնք զգալի դեր խաղացին քաղաքների զարգացման համար. Պարսից ասպատակները պատճառ եղան, որպէսզի նրանց համայնքներն ընդմիշտ լքեն Հայաստանը: Միւս կողմից՝ մեր երկիրը աւելի ու աւելի աւատաւորակացնում էր ստանում, տնտեսութեան մէջ հողագործութիւնը եւ առհասարակ գիւղատնտեսութիւնն էր գերակշռում: Քաղաքները պահպանել էին իրենց վարչական դերը, բայց դրանք այլեւս առեւտրի ու արհեստների կենտրոններ չէին, ինչպէս դա եղել էր նախորդ՝ հելլենիստական շրջանում: Տիգրանակերտի ու Արտաշատի փայլը մարել էր, իսկ Անին դեռ նոր պիտի մտնէր իր փառքի ճամփան:

Հայոց եկեղեցին

Քրիստոնեայ քարոզը Հայաստանում սկսուել էր շատ աւելի վաղ, քան նոր ուսմունքը կը ճանաչուէր իբրեւ պետական կրօն: Աւանդոյթը հաղորդում է, որ Հայոց Թագաւոր Արգաթը, լսելով Յիսուսի հրաշագործութիւնների մասին, թուղթ էր ուղարկել նրան՝ հրաւիրելով Փրկչին ժամանել իր մայրաքաղաք Եղեսիս եւ բուժել Թագաւորի հիւանդութիւնը: Պատասխան նամակում Քրիստոսը հաղորդում է, որ, աւարտելով իր անելիքը այս աշխարհում, սպասում է համբարձմանը, սակայն աշակերտներից մէկին կողարկի Թագաւորի մօտ, եւ նա կազատի Թագաւորին տառապանքներից: Հայաստան է ժամանում Թադէոս առաքեալը, բուժում Արգաթին, այնուհետեւ մկրտում նրան ու ողջ ընտանիքին, անցնում նոր ուսմունքի քարոզին: Արտաշատի բլրի վրայ նա հանդիպում է Բարդուղիմէոս առաքեալին, որը ժամանել էր Հայաստան Պարսկաստանում եւ Հնդկաստանում քարոզելուց յետոյ: Առաքեալները աւարտում են իրենց կեանքը Հայաստանում՝ որպէս նահատակներ:

Թաղէսին վերաբերող աւանդոյթը գալիս է օտար աղբիւրներից: Ասորական պատումը Հաղորդում է Թաղէսի առաքելութեան մասին Օսրոյնէ երկրում. նա եկել էր ասորի (եւ ոչ թէ Հայ) Աբգար Թագաւորի հրաւերով, մնացել Օսրոյնէի Եդեսիա (այժմ Ուրֆա) մայրաքաղաքում եւ այնտեղ վախճանուել: Ուրպէս Քրիստոսի ժամանակակից Հանդէս եկող Աբգարը Աբգար Են է (Ք.ա. 4 - Ք.յ. 7, 13-50), սակայն գիտութիւնը եկել է այն եզրակացութեան, որ իրապէս պատումը ակնարկում է Աբգար Ը-ին (177-212): Հայոց հողի վրայ այդ աւանդոյթը Հայացել է, Ասորիքի Թագաւորը՝ դարձել Հայոց Թագաւոր, իսկ առաքեալները՝ առաջին լուսաւորիչներ: Չխորանալով աղբիւրների քննադատութեան մէջ՝ նշենք, որ այսօրուայ Հայոց (կամ Հայաստանեայց) Առաքելական Եկեղեցի պաշտօնական անուանումը նկատի ունի Թաղէսու եւ Բարդուղիմէոս առաքեալներին եւ յենում է ազգային ճոխ աւանդոյթի վրայ:

Արդէն Ա դարում քրիստոնէութիւնը Հասել էր Կապադովկիա եւ Պոնտոս հռոմէական նահանգները, որոնք անմիջապէս Հարեւան էին Հայաստանին: Բ դարում քրիստոնեաներ յայտնի են Եդեսիայում եւ Մելիտինէում (այժմեան Մալաթիա): Իսկ շուրջ 200 թ. հռչակաւոր Նատագով Տերտուղիանոսը (որին թիւրիմացութեամբ վերագրել են՝ «Հաւատում եմ, որովհետեւ անհեթեթ է», թեւաւոր արտայայտութիւնը) այն երկրների շարքում, որտեղ, նրա կարծիքով, եղել են քրիստոնեաներ, յիշում է նաեւ Հայաստանը¹⁶: Գ դարի 50-ական թուականների վերջերին Աղեքսանդրիա քաղաքի եպիսկոպոսը նամակագրութեան մէջ էր Հայ Մեհրուժան եպիսկոպոսի Հետ: Ենթադրւում է, որ այդ Մեհրուժանը պատկանելիս է եղել Արծրունեաց տոհմին, իսկ նրա նստավայրը տեղադրւում են Մոփբում՝ Եփրատ գետի ափերին: 312 թ. քրիստոնեայ Հայերը զոհ են դառնում Մաքսիմիոս Դայա կայսեր ձեռնարկած Հալաձանքներին: Կայսրը

նրանց մղում է Հեթանոսական ծիսակատարութիւնների՝ բարեկամներին դարձնելով թշնամի, իսկ դաշնակիցներին՝ Հակառակորդ¹⁷: Անգամ այդ կցկտուր փաստերը ցոյց են տալիս, որ նոր ուսմունքը լայն տարածում էր գտել:

Ե՞րբ է յաղթանակել այդ ուսմունքը եւ հռչակուել որպէս պետական կրօն. բազմաթիւ կարծիքներ են արտայայտուել այդ հարցի վերաբերեալ: Ժամանակագրական որոշ հաշիւների համաձայն՝ դա տեղի է ունեցել 301 թ., այդ տարեթիւը ճանաչում է Հայոց եկեղեցին եւ 2001 թ. Հանդիսաւոր եղանակով նշել է այդ խոշորագոյն երեւոյթի 1700-ամեակը: Միաժամանակ քննադատ գիտնականների մի զգալի մասը հակուած են աւելի դէպի 314 թ.՝ նկատի ունենալով մասնաւորապէս, որ այդ շրջանում քրիստոնէութիւնը արդէն լրիւ ճանաչուած է եղել նաեւ Կայսրութեան կողմից:

Ինչպէս էլ որ լինի, մեզանում քրիստոնեայ Հաւատի առաջին դէմքն է եղել Գրիգոր Լուսաւորիչը, որի յիշատակը նշում են քրիստոնեայ բոլոր եկեղեցիները: Տապալուած Հեթանոսական սրբարանների վրայ Հաստատուում է քրիստոնէական եկեղեցու կառուցուածքը: Եկեղեցին ձեռք է բերում հսկայական քաղաքական ու տնտեսական ուժ: Նրա բարոյական ազդեցութիւնը աւելի ու աւելի է մեծանում:

Քրիստոնէութիւնը թափանցում էր Հայաստան երկու հիմնական օջախներից: Առաջինը Կապադովկիայի մայրաքաղաք Կեսարիան էր: Նուիրապետական տեսանկիւնից Հայոց եկեղեցին նրան էր ենթարկւում: Միւսը՝ Եդեսիան էր: Ի տարբերութիւն յունախօս Կեսարիայի, Եդեսիան արամէախօս էր. այնտեղ տարածուած ասորերէն լեզուն արամերէնի տարբերակներից մէկն էր: Արամերէնով ստեղծուել էր ճոխ գրականութիւն, դրա նմուշներից շատերը թարգմանուել են Հայերէն:

Հայոց եկեղեցին իւրացրել է բազմաթիւ կարեւոր բառեր թէ՛ արամերէնից, թէ՛ յունարէնից: Քաֆանայ, արեղայ, ծոմ, քարոզ, խոյր բառերը մուտք են գործել Հայերէնի մէջ ասորերէնից, մինչդեռ բեմ, եպիսկոպոս, մետրոպօլիտ, պատրիարք, կաթողիկոս, Ռեւետիկոս ձեւերը թէպէտ եւ պատկանում են յունարէնին, բայց Հայերէնի մէջ կարող էին թափանցել Հաւասար չափով նաեւ ասորերէնից, քանի որ այդ լեզուն եւս իւրացրել էր դրանք նոյն հարազատ ձեւով¹⁸:

Յունաց եւ Ասորւոց եկեղեցիները մրցակցում էին Հայաստանում, ընդ որում այդ մրցակցութիւնը աճում էր ոչ միայն մշակութային, այլև քաղաքական հողի վրայ այն պահին, երբ Հայաստանը պիտի որոշէր իր դիրքը Պարսկաստանի եւ Կայսրութեան նկատմամբ:

Քրիստոնէական եկեղեցին իր ծագման շրջանից գտնուել է անընդհատ խմորման մէջ: Տասնեակ ու հարիւրաւոր առանձին հոսանքներ (աղանդներ) ձգտում էին հաստատուել ու միաժամանակ խեղդել մրցակիցներին: Տեղական բազմաթիւ ժողովներից բացի, Բիւզանդիայում գումարուել են Տիեզերական հուշակուած ժողովներ (325, 381, 431, 451 թթ., այնուհետեւ՝ 553, 680-681, 787 թթ.): Այդ ժողովները կոչուած էին լուծելու քրիստոնէութեան ընդհանուր, առաւել կարեւորութիւն ունեցող դաւանական եւ կազմակերպական խնդիրները. նրանց մասնակցել են այն եկեղեցիները, որոնք ճանաչում էին տիեզերական (իմա՝ Կոստանդնուպոլսի) եկեղեցին: Հայոց եկեղեցին ընդունել է առաջին 3 ժողովների որոշումները, ընդ որում Փոքր Ասիայի Նիկիա (այժմ՝ Իզնիկ) քաղաքում տեղի ունեցած առաջին ժողովի մասնակիցների թւում եղել է նաեւ Մեծ Հայքի ներկայացուցիչը՝ Գրիգոր Լուսաւորչի Արիստակէս որդին, որը ժառանգել էր իր հօր աթոռը: Մինչեւ Ե դարի կէսերը եկեղեցին որոշ առումով յարել է Կեսարիայի Աթոռին կամ առնուազն հաշուի է նստել

նրա կամքին: Գրիգոր Լուսաւորչից սկսած մինչեւ Ներսէս Մեծը՝ Հայոց եկեղեցու պետերը ձեռնադրուել են Կապադովկիայի մայրաքաղաք Կեսարիայում¹⁹:

Միաժամանակ Հայոց եկեղեցին եւս Արեւելեան միւս եկեղեցիների նման ձգտում էր ինքնուրոյնութեան: Հետագայում դրան նպաստել է նաեւ այն հանգամանքը, որ Հայերը մեծամասնութեամբ գտնուել են Պարսկաստանի գերիշխանութեան տակ, ուստի սերտ կապերը Կոստանդնուպոլսի եկեղեցու հետ պիտի ինքնին կասկած առաջացնէին Սասանեանների արքունիքում: Բայց արտաքենապէս պառակտումը դրսեւորուել է, անշուշտ, որպէս զուտ դաւանական հողի վրայ առաջացած անհամաձայնութիւն: Դ դարի վերջերին Հայոց եկեղեցին խզեց աւանդոյթը, որի համաձայն՝ Հայ կաթողիկոսները օծում էին ընդունում Կեսարիայում: Յունաց եկեղեցին պատասխանեց նրանով, որ հրաժարուեց դիտել կաթողիկոսին որպէս նուիրապետութեան ամէնից բարձր աստիճանի վրայ գտնուող դէմք. նրանց աչքում նա լոկ դուռն եպիսկոպոս էր, որի իրաւասութիւնը սահմանափակում էր միայն թագաւորական պալատով: Այնուամենայնիւ, կապերը դեռեւս մնում էին բարեկամական:

451 թ. Փոքր Ասիայի Քաղկեդոն քաղաքում գումարուեց չորրորդ Տիեզերական ժողովը: Այստեղ մէկ անգամ եւս արծարծուեց քրիստոնեայ դաւանանքի ամէնից կարեւոր հարցերից մէկը, այն է՝ Քրիստոսի բնութեան հարցը: Քանի՞ բնութիւն է ունեցել մարմին առած Բանը՝ մէ՞կ, թէ՞ երկու, միայն աստուածայի՞ն, թէ՞ ե՛ւ աստուածային, ե՛ւ մարդկային: Յաղթանակեց երկրորդ տեսակէտը, եւ որոշումը ցնցում առաջացրեց ողջ Արեւելքում: Արեւելեան եկեղեցիները կտրականապէս մերժեցին Քաղկեդոնի բանաձեւը, որը նրանց աչքում հակառակ է եղել դաւանաբանական աւանդոյթին: Յայտնի է, ստացե՞լ էր արդեօք Հայոց եկեղեցին ժողովին մասնակցելու հրաւէր, թէ՞ ոչ:

Ստացած էլ լինէր, չէր կարողանայ արձագանքել. հայերը այդ պահին զբաղուած էին իրենց ներքին հարցերով. Վարդանանց ապստամբութիւնը շարունակուում էր: Յամենայն դէպս, Հայոց եկեղեցին Քաղկեդոնի վերաբերեալ առժամանակ լուռութիւն էր պահպանում: 482 թ. Ջէնոն կայսրը փորձեց վերացնել պառակտումը՝ հրապարակելով իր շենտոսիկոն (Միասնական) կոչուած հրովարտակը, խաղաղութիւն մտցնել քաղկեդոնականների եւ հակաքաղկեդոնականների միջեւ, ընդ որում նախաձեռնողը խօսում էր միաբնակութեան դիրքերից: Այդ գրութիւնը ճանաչեցին նաեւ հայերը եւ դրա ոգով արտայայտուեցին Քաղկեդոնի դէմ 505 կամ 506 թ. տեղի ունեցած Դուիւնի եկեղեցական ժողովում: Իսկ վճռական մերժումը տեղի է ունեցել 555 թ. Դուիւնում գումարուած երկրորդ ժողովում²⁰:

Վերադառնալով Ե դարի սկզբներին՝ նշենք, որ այդ շրջանում Հայ եկեղեցին դեռեւս հաւատարիմ էր տիեզերական (այն է՝ կայսերական) եկեղեցուն, եւ նրա հոգսերը բոլորովին այլ բնոյթի էին: Քրիստոնէութեան պաշտօնական ճանաչումից ընդամէնը մէկ դար էր անցել, երկրում կային բազմաթիւ հեթանոսներ. նրանց հարկաւոր էր, ինչ գնով էլ լինի, ճշմարիտ հաւատի բերել: Հերձուածները տարածուել էին Արեւելքով մէկ, հերձուածողական գաղափարները արմատ էին ձգել նաեւ Հայաստանում: Բայց անգամ նրանք, ովքեր հակուած էին ընդունել նոր ուսմունքը կամ արդէն ընդունել էին, նրա խորքը չէին թափանցել, որովհետեւ գիրն ու գրականութիւնը միայն նոր էր ստեղծուել, եւ գրականութեան սահմանները աւելի քան նեղ էին, իսկ առանց գրի ու գրականութեան դժուար էր իսկապէս տարածել Քրիստոսի վարդապետութիւնը (անհրաժեշտ էր գոնէ Նոր կտակարանի թարգմանութիւն): Այնուամենայնիւ, Հայոց եկեղեցին իրեն մատչելի բոլոր միջոցներով ձգտում էր հաստատել քրիստոնեայ ուսմունքը:

Հայաստանում վաղուց ի վեր ձեւաւորուել էր քահանայապետութիւն, աճում էր թեմերի՝ եպիսկոպոսական վիճակների թիւը: Եպիսկոպոսները նստած էին լինում խոշոր վարչական կենտրոններում, իսկ գիւղում գործերը տնօրինում էին գիղական եպիսկոպոսները՝ քորեպիսկոպոսները: Հոգեւոր տէրերի ձեռքն էր, ինչպէս ասացինք, արդարադատութիւնը: Եկեղեցին խոշոր կալուածատէր էր, աշխարհականներից յօգուտ եկեղեցու գանձուող տուրքերը (տասաւորոյ, պտուղ եւ այլն) իրենց հերթին նպաստում էին եկեղեցու տնտեսական զօրեղացմանը:

Եկեղեցին ունէր քաղաքական հակայական կշիռ, բայց նրա ու արքունիքի միջեւ խաղաղութիւնն ու համերաշխութիւնը երբեք էր: Մրցակցութիւնը առաջացնում էր բախումներ, որոնք յանգեցնում էին ողբերգական արդիւնքների:

Ե դարում ազատագրական շարժումներին Եկեղեցին մասնակցում էր առաւել գործնական եղանակով. հոգեւորականները հերոսութեան օրինակներ էին ցուցաբերում: Ի տարբերութիւն նախարարների, որոնք, ինչպէս միշտ, հեռու էին միասնական լինելուց, Հայոց եկեղեցին, որպէս կազմակերպութիւն, հաւատարիմ մնաց ուխտին եւ իր օրինակով ոգեկոչում էր տասանուողներին:

Արդ, մենք փորձեցինք ուրուագծել Հայաստանի վիճակը Արշակունեաց թագաւորութեան վերացման նախօրէին՝ էքսկուրսներ կատարելով նաեւ դէպի աւելի խոր անցեալը: Այդ անցեալը շատ հարուստ է եղել բոլոր առումներով: Հայերը թեւակոխել էին Ե դար՝ թիկունքում ունենալով պատմական զարգացման բարդ, մերթ ողբերգական, բայց եւ միաժամանակ փառաւոր ուղի, ձեռք բերած լինելով վիթխարի պատմական փորձ: Մովսէս Խորենացուն է պատկանում թեւաւոր դարձած խօսքը՝ «Ձի թէ-

պէտ եւ եմք ածու փոքր, եւ թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ, եւ զօրութեամբ տկար, եւ ընդ այլով յոյժ անգամ նուանեալ թագաւորութեամբ, սակայն բազում գործք արութեան գտանից գործեալ եւ ի մերում աշխարհիս, եւ արժանի գրոյ յիշատակի...» [Մով. Խոր., էջ 10. 15-19]:

Հայ ազգը մի ածու է (մարգ, տնկարան կամ հող), բայց որքան հարուստ է ու բովանդակալից նրա պատմութիւնը: Պատմահայրը մի նախադասութեամբ կարողացել է բնութագրել ժողովրդի պատմական ողջ ուղին: Եւրոպացիները իր միտքը՝ Մովսէս Խորենացին կշտամբում է Հայոց առաջին թագաւորներին, որովհետեւ նրանցից ոչ մէկը «պէտ յանձին կալաւ» (այսինքն՝ հող չտարաւ) մատենագրել անցեալում տեղի ունեցած արիութեան գործերը: Ե դարին, որի պատմութեանն է նուիրուած այս գիրքը, այդ նախատինքը, բարեբախտաբար, չի վերաբերում: Այդ շրջանի հերոսական անցքերն արձանագրուել են մի շարք ճշմարտապատում երկերում: Հետեւելով նրանց՝ յաջորդ գլուխներում պիտի փորձենք ներկայացնել պատմութիւնը այսօրուայ գիտութեան լեզուով:

ԳԼՈՒԽ Բ

«ՄԱՅ ԻՄԱՅԵԱԼ՝ ԱՆՄԱՅՈՒԹԻՒՆ Է...»

Նախորդ գլխում խօսեցինք արդէն Հայաստանի՝ շուրջ 387 թ. տեղի ունեցած բաժանման մասին Բիւզանդական կայսրութեան եւ Սասանեանների միջեւ: Թագաւորական իշխանութիւնը կայացած համաձայնութեամբ իսկոյն չվերացաւ: Արեւելեան գահի վրայ էր Խոսրով Դ-ն, Արեւմուտքում՝ Արշակ Գ-ը՝ երկուսն էլ Արշակունի: Սակայն վերջինիս տարիները հաշուած էին. նրա մահուամբ 390 թ. Հայաստանի այդ մասը ենթարկուց անմիջապէս կայսերական վարչութեանը՝ ճիշտ է, պահպանելով որոշ արտօնութիւններ:

Արեւելեան բաժնում աւանդական իշխանութիւնը աւելի կայուն գտնուեց: Գահն անցաւ Խոսրով Գ Արշակունուն (387-389), սակայն շուտով նախարարների ոտնձգութիւնների հետեւանքով նա զրկուեց իշխանութիւնից՝ գիջելով գահը իր Վուամշապուհ եղբորը: Այդ թագաւորի գահակալութեան շրջանը (389-414) բաւականին խաղաղ է եղել. նրա օրօք է ստեղծուել Հայոց գիրը, սկիզբ առել գրականութիւնը: Վուամշապուհի մահուանից յետոյ գահը կրկին անցաւ նրա եղբայր նոյն Խոսրովին, բայց Խոսրովը մնաց իշխանութեան գլուխ ընդամէնը 8 ամիս եւ վախճանուեց: Նրանից յետոյ Հայոց թագաւոր է դառնում Յակոբքան Ա արքայից արքայի որդի Ծապուհը, որի ներկայութիւնը Հայաստանում բնակչութիւնը պարսկացնելու առաջին աչքի ընկնող փորձն էր: Հասարակական կարծիքը վիրաւորուած էր անշուշտ. Աստծոյ օծեալի տեղում բազմել էր զրադաշտական, ժամանակի գիտակցութեամբ՝ մոգ, հեթանոս եւ այլն: Մովսէս Խորենացու մօտ պահպանուած առասպելախառն աւանդոյթից կարելի է եզրակացնել, որ Ծապուհը լեզու չգտաւ իր հայ հպա-

տակները հետ, եւ նրան պարզապէս վանեցին երկրից (իսկ Յագ-կերտի մահուան օրը սպանեցին հէնց Պարսից արքունիքում):

Պարսկաստանում իշխանութեան գլուխ անցած Վռամը (Վահրամ Ե Գոռ) Հայոց գահին նստեցրեց Վռամշապուհի որդի Արտաշէս Արշակունուն (422-428): Նախարարները նրան էլ չհանդուրժեցին եւ բողոք ներկայացրին Պարսից արքունիքին: Սահակ կաթողիկոսը փորձեց պաշտպանել Արտաշէսին («ըստ աւագանի ծննդեան թէպէտ մեղաւոր է, սակայն եղբայր եւ մարմին մեր է»), բայց նրա ջերմագին կոչը ունկնդիր չգտաւ: Արտաշէսին եւ Սահակին կանչեցին արքունիք, եւ այնտեղ որոշուեց երկուսի ճակատագիրը. թագաւորը գահընկէց արուեց, կաթողիկոսը հեռացուեց իր պաշտօնից: Ղազար Փարպեցու ասելով, նախարարներն իրենք պահանջեցին, որպէսզի Հայաստանն այնուհետեւ ենթարկուի որեւէ պարսիկ իշխանի [Ղազ. Փարպ., էջ 24. 35-36]: Աղբիւրները պնդում են, որ Արտաշէսի անառակ կեանքն էր դժգոհութիւն առաջացնում, բայց դժուար թէ բուն պատճառը եղած լինի թագաւորի կենցաղը: Նախարարները հերթական անգամ ուզեցին ազատուել թագաւորական իշխանութեան զսպող ուժից եւ ձեռք բերել ազատութիւն: Այդպէս էլ ստացուեց. նրանց Տիգրոն գնացած ներկայացուցիչները վերադարձան հայրենիք պարսիկ Վեհմիհրշապուհ մարզպանի հետ միասին [Մով. Խոր., էջ 349. 8-9]: Ղազար Փարպեցու շարադրանքը մի փոքր տարբեր է: Երբ Սահակ կաթողիկոսը հեռացուեց, նրա տեղը գրաւեց Սուրմակ անունով մի երէց: Սրա դէմ բողոք բարձրացաւ, Սուրմակին վանեցին, եւ այդ կապակցութեամբ արքայից արքայ Վռամը Հայաստան ուղարկեց մի պարսիկ մարզպան (հեղինակը անունը չի տալիս): Ահա թէ ինչպէս հայերն ընկան «անօրէն Պարսից ազգի ծառայութեան լծի տակ»,— ասում է հեղինակը [Ղազ. Փարպ., էջ 25. 11-18]: Այսպէս թէ այնպէս, Հայաստանը դարձաւ մարզպանութիւն՝

Պարսկաստանին ենթակայ սահմանամերձ առանձին միաւոր, որը վարում էր շահանշահի կողմից նշանակուած մարզպանը:

Փոփոխութիւնները ազդել էին անշուշտ նաեւ եկեղեցական կեանքի վրայ: 387 թ. կաթողիկոս էր ընտրուել Սահակ Պարթեւը՝ Գրիգոր Լուսաւորչի ցեղից, Ներսէս Ա կաթողիկոսի որդին, Բիւզանդիայում կրթութիւն ստացած, իր ժամանակի ամէնից դիտուն մարդկանցից մէկը: Սահակը շուտով գոհ գնաց ամբաստանութեան եւ հեռացուեց: Նրա իրաւունքները վերականգնուեցին Վռամշապուհ թագաւորի միջնորդութեամբ, սակայն 428 թ., երբ նա, ինչպէս ասացինք, բացայայտ եղանակով պաշտպանել էր Արտաշէս թագաւորին, կրկին հեռացուեց: Նրա յաջորդը՝ Սուրմակը, տեղում մնաց ընդամէնը մէկ տարի: Նրան փոխարինեց Բրքիշոն՝ ազգութեամբ ասորի, որին Հայաստան էր ուղարկել Վռամ թագաւորը: Բրքիշոն ժամանեց իր հայրենակիցներին մի խմբով: Նորեկներն իրենց բարքերով տարբերում էին տեղացիներից: Նրանք բերել էին իրենց հետ տանտիկիներ, որոնք պիտի վարէին տան գործերը: Եկեղեցական օրէնքները արգելում էին այդ կանանց ներկայութիւնը հոգեւորականների տներում¹, Ղազար Փարպեցու համար կարգի խախտումը եղել է «զեղիս եւ անարժան»: Դժուար թէ բուն պատճառը տանտիկիները լինէին, բայց հայերը վանեցին Բրքիշոյին, բողոքեցին Վռամին, եւ արքայից արքան Հայաստան ուղարկեց մէկ ուրիշ ասորու՝ Շմուէլ անունով: Սա եւս ընտել չեղաւ տեղացիներին. դժգոհում էին, որ եկուորներն ընչասէր են, կողոպտում են եկեղեցու ունեցուածքը: Շմուէլի մահից յետոյ տեղը կրկին անցաւ Սուրմակին:

Պէտք է ենթադրել, որ ուղարկուածները չէին ընկալում որպէս լիիրաւ կաթողիկոսներ, մինչդեռ Սահակը պահպանել էր իր ողջ հեղինակութիւնը: Եթէ Գահնամակի մեզ հասած առաջաբանը վաւերական է, ապա հայ նախարարների գահերը հաս-

տատելու համար հենց Սահակն է գնացած եղել Վուամ Թագա-
ւորի մօտ եւ վերադարձել հաստատուած գրուածքները:

Սահակը վախճանուեց 439 թ., նրան փոխարինեց (Մաշտո-
ցի ընտրութեամբ) Յովսէփը: Յովսէփը Վայոց ձորի Հոգոցիմք
գիւղից էր: Ձեռնադրուած լինելով երէց, համարուելով Հայրա-
պետական աթոռի լոկ տեղապահ՝ նա այնուամենայնիւ հանդէս
եկաւ որպէս երկրի իսկական հոգեւոր տէր: Յովսէփի օրօք եկե-
ղեցին կարողացաւ համախմբել իր ուժերը, վերականգնել ազգա-
յին կերպարը: Շուրջ 444 թ. Յովսէփը գումարեց Շահապիվանի
եկեղեցական ժողովը, որն, ի թիւս այլ հարցերի, նզովեց տարա-
ձում ստացած մծղնէական աղանդը²: Ժողովի որոշումների նա-
խաբանում ասուած է, որ հաւաքը տեղի է ունեցել Պարսից
Յազկերտ արքայի հինգերորդ տարում, երբ Հայաստանի մարգ-
պանն էր Վասակ Սիւնին, հազարապետը՝ Վահան Ամատունին,
իսկ մաղխազը՝ Վրիւ Նորիսուունին: Նախաբանը մեզ է հասել
վերախմբագրուած վիճակում, բայց այդ հատուածը հարազատ է
թւում: Հայոց եկեղեցին ենթարկուած է Պարսից թագաւորին,
բայց միաժամանակ գտնուում է մարգպանի, հազարապետի եւ
մաղխազի (երեքն էլ՝ տեղացի իշխաններ) պաշտպանութեան
տակ: Անկայունութիւնը վերացուել էր, եկեղեցին լրիւ վերա-
կանգնել իր դիրքը եւ, ինչպէս ցոյց տուեցին հետագայ անցքե-
րը, պատրաստ էր դիմակայելու Պարսկաստանից սպառնացող
վտանգին:

Սասանեան վարչակարգը եղել է բռնապետական: Բռնապե-
տութիւնն ինքնին միասնութիւն է ենթադրում, ձգտում է
միանմանութեան թէ՛ երկրի կառավարման, թէ՛ տնտեսութեան,
թէ՛ վերջապէս, գաղափարախօսութեան բնագաւառում: Այդ մի-
տումը առկայ էր ինչպէս պարսիկ, այնպէս եւ բազմաթիւ օտար
հպատակների նկատմամբ: Սասանեաններին չէր յաջողում ա-
մէնուրեք տարածել բռնապետական սկզբունքները, բայց նրանք

շարունակ ձգտում էին դրան: Պարսից արքունիքը հանդուրժո-
ղականութիւն է ցուցաբերել միայն այն դէպքերում, երբ ի վի-
ճակի չի եղել զսպելու եւ ճնշելու հակադրուող ուժին:

Մեր ասածը ամբողջութեամբ վերաբերում է յատկապէս
կրօնին: Զրադաշտականութեան այն հոսանքը, որը Գ դարի
վերջերին հռչակաւոր քուրմ Կարտիրի գործունէութեամբ պալա-
տական ճանաչում գտաւ, կոչուած էր համախմբելու Սասա-
նեան բռնապետութեան բոլոր հպատակներին եւ ապահովելու
նրանց միասնութիւնը գաղափարական ոլորտում:

Մինչդեռ Սասանեան պետութեան սահմաններում բնակուած
էին նաեւ այլադաւաններ, որոնց մի մասը քրիստոնեայ էր: 313
թ. քրիստոնէութիւնը Հռոմէական կայսրութեան սահմաններում
ճանաչուեց հանդուրժելի, իսկ 318 թ.՝ պաշտօնական կրօն: Այդ
կապակցութեամբ քրիստոնեաների վիճակը Պարսկաստանում ա-
ռաւել բարդացաւ. Սասանեանների աչքում նրանք դարձել էին
Հռոմէական կայսրութեանը ծառայող իւրատեսակ հիւճարտող գօ-
րաւիւն: 339/340 թ. սկսած՝ քրիստոնեայ փոքրամասնութիւննե-
րից մէկը (ազգով՝ ասորի) պարբերաբար հալածանքների է են-
թարկուած: Միայն Պերոզ արքայից արքայի օրօք (457/459-
484), երբ ասորի քրիստոնեաների մի մասը կազմեց Անտորական
կոչուող յատուկ եկեղեցի եւ դրանով հակադրեց իրեն Արեւմուտ-
քի տիեզերական եկեղեցուն, այդ փոքրամասնութեան վիճակը
աւելի ապահով դարձաւ:

Անընդհատ վտանգի տակ են եղել նաեւ նուաճուած պե-
տութիւնների քրիստոնեայ համայնքները: Բաւական էր, որ
Պարսից իշխանութիւնը Հայաստանում քիչ թէ շատ ամրանար,
որպէսզի սկսուէին կրօնական հալածանքներ, բռնի դաւանափո-
խութեան փորձեր եւ այլն: Այն պայմաններում, երբ գաղափա-
րախօսութիւնն արտայայտուած էր կրօնական եղանակով, իսկ
կրօնը ընդգրկում էր հասարակութեան գաղափարախօսութիւնը

Թէկուզ իր էական մասով, դաւանափոխութիւնը նշանակում էր մարդու հոգեկան աշխարհի կատարեալ այլակերպում: Խօսքն, իհարկէ, ոչ թէ առանձին անհատներին, այլ զանգուածի մասին է: Վերափոխութիւնները կարող էին լինել տեւական, բայց ամէն պարագայի դրանք անխուսափելի էին: Հայ հասարակութեան մի զգալի մասը, գիտակցաբար թէ անգիտակցաբար, մերժում էր մոգութիւնը: Հայերը պաշտպանում էին քրիստոնեայ հաւատը, որովհետեւ իրենցն էր (յամենայն դէպս վաղուց ի վեր իրենցն էր դարձել կամ այդպէս էր ընկալուում), եւ մերժում զրադաշտութիւնը՝ որպէս օտար մի երեւոյթ:

Կրօնը զգալի չափով կանխորոշում է մարդու կենցաղը, մասնաւորապէս՝ ընտանեկան յարաբերութիւնները: Մոգութիւնն ընդունած Գուգարքի բռեշխ Վազգէնի (նրա մասին՝ Գ գլխում) տիկինը՝ Վարդան Մամիկոնեանի դուստր Շուշանիկը, երբ տեղեկանում է, որ ամուսինը Պարսկաստանից եւս մի կին է բերելու, քրիստոնեայ բարոյագիտութեան տեսանկիւնից նման վարմունքը դիտում է զազրելի եւ մերժում ամուսնուն:

Ժամանակակից ոճով արտայայտուած մեր այս մտքերը ամենեւին էլ պատմափիլիսոփայական, վերացական մտորումներ չեն: Նոյնպէս է մեկնաբանել իրականութիւնը Ե դարում ապրած Ղազար Փարպեցին: Նրա ասելով՝ Պարսից շահանշահ Յագկերտ Ա-ը, մտադրուելով թագաւորեցնել Հայաստանում իր Շապուհ որդուն, խորհում է Հայոց երկրի մասին, եւ ահա թէ ինչպէս է ներկայացնում մեր հեղինակը արքայից արքայի խորհրդածութիւնները (դրսեւորելով, անշուշտ, հասարակական տեսակետը). «Հայոց աշխարհը, — մտածում է Յագկերտը, — մեծ է եւ օգտակար, նա սահմանակից եւ դրկից է Յունաց պետութեանը: Շատ հնարաւոր է, որ յոյների եւ պարսիկներին ենթարկուած Արշակունիների մօտ փոխադարձ սէր առաջանայ, եւ նրանք կը խօսեն խաղաղութեան մասին Յունաց թագաւորի հետ: Նախ-

ընտրելով վերջինին եւ հնազանդուելով նրան՝ Արշակունիները մեր դէմ կ'ապստամբեն, կը սկսեն մեզ նեղել պատերազմներով: Նրանք՝ Հայերը, օտար են մեր օրէնքներին, ատում են դրանք, բայց լիովին ընդունում են յոյների պաշտամունքը եւ յունաց օրէնքները: Արդ, եթէ Հայաստանում թագաւոր լինի մերոնցից մէկը, ապա Պարսից թագաւորութիւնը կ'ազատուի իր հոգսերից: Հայերը մինչեւ վերջ երկիւղով կը ծառայեն մեզ, նրանց մօտ օտար գաղափարներ չեն առաջանայ: Նրանք կ'ընտելանան մեր օրէնքներին, դրան նպաստելու են փոխադարձ խօսքերը եւ բարեկամութիւնը, որը ծնունդ կ'առնի մեր եւ նրանց ընդհանուր որսորդութեան եւ խաղերի միջոցին: Պարսիկները եւ Հայերը կը մերձենան խառն ամուսնութիւնների շնորհիւ, եւ, որպէս արդիւնք, Հայոց երկրի բնակչութիւնը կը հեռանայ իր հին սիրուց եւ օրէնքներից» [Ղազ. Փարպ., էջ 18.26-19.5]: Այստեղ օրէնք բառը հարկաւոր է մեկնաբանել ամենալայն իմաստով (նաեւ հաւատք), իսկ արքայից արքայի արտայայտած մտքերը ոչ այլ ինչ են, եթէ ոչ՝ Հայերին առնմանեցնելու մի մշակուած ծրագիր:

Այդ ծրագիրը տապալուեց, տապալուեց բացարձակ եւ յամառ դիմադրութեան շնորհիւ, սակայն ընդհանուր դրութիւնը այնքան էլ միանշանակ չէր:

Ե դարի որոշ պատմիչների աչքում 387 թ. բաժանումը եղել է կատարեալ ողբերգութիւն: Իւրացնելով ժողովրդական վերագութեանը յատուկ ոճ՝ Փաւստոս Բուզանդը հետեւեալ կերպ է նկարագրում եղելութիւնը: Համաձայնութեան գալով Հայոց է երկրի վերաբերեալ՝ Պարսից թագաւորը եւ կայսրը նշում էին. «Ի միջի մերոց բնակեալ է այս հզօր եւ հարուստ [այսինքն՝ զօրեղ] թագաւորութիւնը, լաւ կը լինի եթէ ընդունուած որոշման շնորհիւ կարողանանք այդ թագաւորութիւնը քանդել եւ խորտակել: Արշակունի երկու թագաւորներին պիտի փորձենք կրծել, աղքատացնել, արկանել ի ծառայութիւն, — շարունակում էին նրանք, — որ-

պէսզի գլուխ բարձրացնել չկարողանան»։ Այնուհետեւ շատ գաւառներ կոծեցին Հայոց երկրից, թագաւորներին մնաց փոքր մասը [Փաւ. Բուզ., 2, 1]։ Ղազար Փարպեցու ասելով՝ Հայաստանի արեւելեան հատուածը ենթարկուեց Պարսից արքայի «դառը եւ բռնաւոր ծառայութեանը»։ Որոշելով տեղափոխուել կայսեր կողմերը՝ Արշակ Գ-ը ողբում էր, որ հայրենիքը բաժին է հասել «ամբարհաւած եւ անաստուած ազգին Պարսկաց» [Ղազ. Փարպ., էջ 9. 2-3]։ Ասենք, Արշակի բողոքը առաջացել էր մասամբ անձնական հողի վրայ. չէ՞ որ Խոսրովի համեմատութեամբ նրա բաժինը շատ փոքր է եղել³։

Բայց այդ դէպքերին ժամանակով համեմատաբար մօտ կանգնած պատմիչները, կարծես, աւելի սառնարիւն էին ընկալում տեղի ունեցած փոփոխութիւնները եւ նրանց անմիջական հետեւանքները։ Մաշտոցի կենսագիր Կորիւնը, որի օրօք վերջին Արշակունի թագաւորը զրկուեց գահից, հարկ չի համարում արձանագրել այդ փաստը։ Ծիշտ է, «Վարքի» կառուցուածքը այդ չէր էլ պահանջում, բայց ահա պատմութեան այն պարբերացումը, որն առաջարկում է Եղիշէն. վերջ տալով Արշակունիներին՝ Սասան պարսկի ազգը իշխանութիւնը վարում է մոգութեան օրէնքներով, պատերազմում նրանց դէմ, ովքեր չեն ենթարկուում այդ օրէնքներին՝ սկսելով Տիրանի որդի Արշակից (Արշակ Բ) եւ պայքարը շարունակելով մինչեւ Վառամշապուհի որդի Արտաշէսը։ Իսկ երբ Արտաշէսին էլ են զրկում թագաւորութիւնից, ապա թագաւորական գործառութիւններն անցնում են նախարարներին («ի նախարարսն Հայոց անկանէր թագաւորութիւնն»)։ Տուրքերը, շարունակում է Եղիշէն, գանձում էր Պարսից արքունիքը, բայց այրուծին մնացել էր նախարարների ձեռքում. պատերազմի ժամանակ նախարարներն էին առաջնորդում զօրքին [Եղ., էջ 6]։

Հայաստանի բաժանումը եւ Արշակունեաց իշխանութեան վերացումը Եղիշէն չի դիտում որպէս երկու դարաշրջանի բացարձակ սահմանագիծ։ Իշխանութիւնը նախարարների ձեռքն է անցել, եւ դրա շնորհիւ աստուածպաշտութիւնը Հայոց երկրում շարունակում է մնալ երեւելի։ Այդ վիճակը տեւում է արքայից արքայ Շապուհից (Շապուհ Գ՝ 383-388 թթ.) մինչեւ արքայից արքայ Յազկերտը (Յազկերտ Բ՝ 439-457 թթ.)։ Սա էր, որ գահակալութեան երկրորդ տարուց սկսեց պատերազմել Կայսրութեան դէմ, հալածանքի ենթարկել քրիստոնեաներին։ Այսպէս է տեսնում Եղիշէն Հայոց պատմութեան առանձին մի շրջանի սկիզբը։

Հեղինակի ասածը նշանակալից է։ Թէեւ երկիրը զրկուել է սեփական թագաւորից, հայ հասարակութիւնն, այնուամենայնիւ, չի կորցրել իր դէմքը, շարունակում է գործել որպէս ինքնուրոյն համակարգ, իսկ նախարարներն իրենց զօրքով ապահովում են այդ հասարակութեան կենսագործելիութիւնը։ Մեր Հեղինակի իւրովի արտայայտուած լաւատեսութիւնը ունեցել է, ըստ երեւոյթին, ինչ-որ հիմքեր։ Եւ իրօք, նախարարական զօրքը՝ ազատագունդը, մեծ կշիռ է ունեցել պարսիկների աչքում։ Նոյն Եղիշէն է պատկանում հետեւեալ հատուածը, որը բերում ենք (ինչպէս եւ նման միւս դէպքերում) Երուանդ Տէր-Մինասեանի թարգմանութեամբ. «Առաջուան ժամանակներում կարգն այն էր, որ երբ Հայաստանից որեւէ պատուաւոր զօրավարի առաջնորդութեամբ հեծելազօր էր գնում Դուռը⁴, [թագաւորը] մարդ էր ուղարկում ընդառաջ եւ հարցնում Հայոց աշխարհի ողջութիւնն ու խղաղութիւնը եւ երկու-երեք անգամ նոյնն էր անում. զօրահանդէսն էլ [թագաւորը] ինքն էր անում եւ պատերազմ սկսելուց առաջ նրանց իրեն մօտ գալ հասնելն անգամ մեծ շնորհակալութեան արժանի էր համարում եւ իր աթոռակիցների ու բոլոր մեծամեծների առաջ գովասանք էր տալիս ամենքին,

յիշում էր նրանց նախնիների ծառայութիւնները եւ պատմում նրանցից իւրաքանչիւրի քաջութիւնը» [Եղ., էջ 44. 5-12]:

Զինեալ ուժերի գլուխ կանգնած է եղել սպարապետը, եւ այդ գործակալութիւնը, ինչպէս ասացինք Ա գլխում, մնացել էր Մամիկոնեան տոհմի առանձնաշնորհը: Այդ առումով Արշակունեաց տոհմի վերացումը զինուորական բնագաւառում որեւէ փոփոխութիւն չառաջացրեց: Աւելին՝ թագաւորական իշխանութեան վերացումից յետոյ էր, որ նախարարները Հանդէս եկան որպէս երկրի Հիմնական Հասարակական ուժ: Յիշենք, թէ ինչպիսի դեր կատարեցին նրանք Արտաշէս Արշակունու տապալման դէպքում: Վարչական Հաստատութիւններից որոշ ժամանակ անփոփոխ էր մնացել նաեւ Հազարապետութիւնը: Աւանդական եղանակը (երբ Հազարապետ էր լինում տեղացի իշխաններից մէկը) խախտուեց միայն Վարդանանց պատերազմի նախօրէին: Վահան Ամատունին զրկուեց Հազարապետութիւնից, պաշտօնը յանձնուեց եկուոր պարսկի, եւ այդ երեւոյթն իր Հերթին նպաստեց Հասարակական կրքերի բորբոքմանը:

Հին Հաստատութիւններից փոփոխման չէր ենթարկուել մաղխազութիւնը՝ այդ պաշտօնը շարունակում էին վարել խորխոռունիները: Բայց եթէ առաջներում նրանք պարտաւոր էին ապահովել ներքին կարգը յօգուտ Հայոց արքայի, ապա այժմ նրանց տէրն էր Պարսից արքայից արքան:

Նոյնը կարելի է ասել նաեւ մարդպետութեան վերաբերեալ՝ Աւարայրի ճակատամարտում միջին գնդի հրամանատարը եղել է մարդպետ Միհրջապուհ (Ներշապուհ) Արծրունին⁵ [Ղազ. Փարպ., էջ 39-40]:

Որեւէ կերպ չէր խախտուել, վերջապէս, եկեղեցական Հաստատութիւնը: Նոր պայմաններում Պարսից արքունիքը կարող էր հեռացնել կաթողիկոսին՝ տեղ ապահովելով իր դրածոյի

Համար, բայց Հաստատութիւնը, որպէս այդպիսին, մնացել էր նոյնը, իսկ Հասարակական կշիռը անգամ աճել էր:

Սակայն Արշակունիների օրօք վաղուց վերջնական ձեւ ստացած այդ Հաստատութիւնների կողքին առաջացել էր նորը՝ մարզպանութիւնը: Մարզպանը եղել է երկրի գլխաւոր վարչապետը, ներկայացրել արքայից արքայի գերագոյն իշխանութիւնը⁶: Հայոց երկիրը դարձել էր Սասանեան աշխարհակալ պետութեան մարզերից մէկը: Բայց Պարսից վարչական մտքի այդ ծնունդը ինչ-որ չափով Հայանում է. մարզպան են դառնում նաեւ տեղացի Հայ իշխանները՝ արքայից արքայի առջեւ պաշտպանելով նախարարութեան եւ ողջ երկրի շահերը: Վարդանանց ապստամբութեան ժամանակ Վասակ Սիւնին իրեն դրսեւորել էր որպէս դաւաճան, բայց նրան մարզպան նշանակելը ընդհանուր առմամբ մի կարեւոր նշան էր, որ Պարսից Դուռը Հաշուի է առնում մարզպանութեան վերածուած Հայոց երկրի սեփական շահերը:

Այսպիսով, տեսնում ենք, որ սեփական պետականութիւնը կորցնելով՝ Հայ ժողովուրդը այդուհանդերձ պահպանել էր իր ազգային ինքնուրոյն դէմքը, որոշ չափով պահպանել Հասարակական առաւել կարեւոր Հաստատութիւնները եւ, ինչպէս ցոյց տուեց մօտ ապագան, պատրաստ էր եւ կարող էր զէնքը ձեռքին պաշտպանել պատմական երկարատեւ զարգացման այդ նուաճումները: Յանուն ինքնավարութեան մղուող պայքարը կազմելու էր Ե-Թ դարերում Հայոց պատմութեան առանցքը, իսկ Բագրատունեաց թագաւորութիւնը ծնունդ էր առնելու՝ որպէս նախորդ շրջանի ինքնավարութեան Հաստատութիւնների օրինական ժառանգ⁷:

Բայց այդպիսի պատկեր է առաջանում այն դէպքում, երբ իրականութիւնը դիտում ենք երկու-երեք Հարիւրամեակի սահ-

մաններում, այն էլ՝ այսօրուայ տեսանկիւնից. ժամանակակից-ներն անշուշտ այլ աչքով էին դիտում վիճակը:

Հետագայ շարադրանքի մէջ մենք խօսելու ենք գլխաւորապէս 450-451 եւ 482-484 թթ. ապստամբութիւնների մասին, որոնք ծաւալուել էին մարզպանական Հայաստանում: Բիւզանդական կայսրութեան մաս կազմող Հայոց երկրի դերը եղել է անուղղակի եւ աննշան, հետեւաբար ապստամբական շարժումների կապակցութեամբ այդ հատուածի վրայ մենք կանգ չենք առնելու: Ինչ վերաբերում է Արեւելքին, ապա այստեղ մթնոլորտը գնալով շիկանում էր:

Վարդանանց ապստամբութիւնը բռնկուել էր՝ որպէս Հայ հասարակութեան եւ պարսից բռնապետութեան բախման հետեւանք, ընդ որում այդ հակադիր ուժերից երկրորդը առաջինի համար եղել է արտաքին: Ճգնաժամային վիճակ է ստեղծուել այն պահից, երբ նուաճուած ժողովուրդների, ինչպէս նաեւ Բիւզանդական կայսրութեան նկատմամբ Պարսից պետութեան քաղաքականութիւնը յանկարծակի փոխուեց բացայայտ թշնամութեան: Եղիշէն (որի երկը լինելու է մեր շարադրութեան գլխաւոր սկզբնաղբիւրը) այդ բեկումը թուագրում է Յազկերտ Բ արքայի (439-457) երկրորդ տարով:

Յազկերտը ասպատակում է Բիւզանդական կայսրութեան արեւելեան գաւառները, հրի մատնում եկեղեցիները, կողոպտում եւ գերի վերցնում բնակչութեանը: Բիւզանդական զօրքը ահաբեկուած էր. Թէոդոս Բ կայսրը (408-450) թշնամուն դիմադրելու ուժ չուներ: Յազկերտին մեղմացնելու համար նրա մօտ ուղարկեց Արեւելքի սպարապետ Անատոլիոսին: Արքայից արքայի բարկութիւնը զսպելու համար կայսրը նրան թանկարժէք նուէրներ ուղարկեց, ետ վերադարձրեց Կոստանդնուպոլիս փախած քրիստոնեայ պարսիկներին: Նրա կամքը կոտորուել էր. նա ամէն ինչում ենթարկուում էր իր հզօր ախոյեանին: Հետագայում իր հպատակ

ժողովուրդներին հաղորդելով նոր պատերազմի մասին՝ Յազկերտը առանձնապէս չէր շեղուելու իրականութիւնից՝ կայսեր դէմ ձեռնարկուած արշաւանքը ներկայացնելով հետեւեալ խօսքերով՝ «Առանց ձեզ որեւէ նեղութիւն տալու, եկանք-գնացինք Յոյների երկիրը եւ, առանց պատերազմի, սիրով եւ մարդասիրութեամբ (!) նուաճեցինք ամբողջ երկիրը մեզ ծառայելու» [Եղ., էջ 9.18-20]: Թէոդոսը բաւարարեց Յազկերտի բոլոր պահանջները, եւ արքայից արքան վերադարձաւ իր Տիզբոն մայրաքաղաքը⁸:

Այդ դէպքերը տեղի են ունեցել 440 թ., նոյն թուականին պարսիկները սկսեցին պատերազմական գործողութիւններ արեւելեան թշնամու՝ քուշանների դէմ: Պարսկաստանին ենթակայ շատ երկրներում զօրահաւաք էր յայտարարուած. կազմուած ահռելի բանակը մեկնեց Ապար աշխարհը (այժմեան Խորասանում): Պարսիկներին ոչ մի կերպ չէր յաջողում կոտրել քուշանների դիմադրութիւնը: Երկամեայ ապարդիւն կռիւներից յետոյ Յազկերտը ետ ուղարկեց յոգնած զօրամասերը՝ փոխարէնը կանչելով թարմ ուժեր: Այնուհետեւ 442 թ. հիմք դրեց մի նոր նստոց քաղաքի՝ շարունակելով պատերազմել նոյն ձեւով մինչեւ 449 թ.: Պատերազմական գործողութիւնները յաջողութեամբ պսակուեցին միայն Յազկերտի տասներորդ տարում՝ 450 թ., երբ, հաւաքելով մի նոր բանակ, արքայից արքան զրոհեց Տաղական քաղաքը: Քուշանների թագաւորը նահանջեց եւ դիմեց փախուստի, իսկ Յազկերտը սկսեց աւերել նրա երկիրը՝ գերիներին եւ աւարը ուղարկելով Պարսկաստան: Քուշանները ստիպուած էին իրենց հողերի մի մասը զիջել պարսիկներին:

Այսպիսով, 440 թ. Յազկերտ Բ-ը անցաւ իր արտաքին քաղաքականութեան լայն ծրագրի իրագործմանը, այն է՝ ապահովել Սասանեան պետութեան եղած սահմանները, իսկ Արեւելքում՝ նրա կազմի մէջ ներգրաւել նոր տարածութիւններ: Ծրագիրը յաջողուեց: Հռոմէացիները հաւատարիմ մնացին դաշինքին.

երբ Յազկերտը ամբողջութեամբ տարուած էր քուշանների դէմ մղուող պատերազմով, Բիւզանդական կայսրութիւնը փորձ չարեց օգտուել Հանգամանքից եւ պահպանեց իր չէզոքութիւնը: Բիւզանդացիք չէզոք մնացին նաեւ Հետագայում եւ Հայերին օգնութեան չեկան ո՛չ 450-451, ո՛չ էլ 482-484 թթ.:

Ապահով էր պարսիկների նաեւ Հիւսիսային սահմանը. Յազկերտն աւերեց Հոններին ենթակայ մի շարք վայրեր, այնտեղ բնակուող խայլանդուրները (Հոնների առանձին մի ճիւղ, ըստ բիւզանդական աղբիւրների՝ օնոգուրներ) այլեւս չէին մտնում Սասանեան պետութեան տարածքը: Այժմեան Դերբենդի մօտերքը՝ Կասպից ծովի ափին գտնուող Ճորայ Պահակը, նրանց Համար մնացել էր փակ:

Արեւելեան պատերազմին մասնակցում էին նաեւ Հայերը, վրացիները, աղուանները, այսրկովկասեան մի շարք այլ ժողովուրդներ: Նրանց մասնակցութիւնը եղել է սովորոյթի խախտում. առաջներում ազատ էին այդ վայրերում պատերազմելու պարտականութիւնից, յայտնում է Եղիշէն [Եղ., էջ 10.10-11]: Մեր պատմիչի ասելով՝ նրանք Հաւատարիմ կատարում էին իրենց պարտականութիւնները, բայց կարգի խախտումը չէր կարող դժգոհութիւն չառաջացնել:

Ռազմական ծրագիրն իրագործելով՝ Յազկերտ Բ-ը եւ նրա շրջապատը նպատակ են ունեցել ամրացնելու Իրանի դիրքը միջազգային յարաբերութիւնների ոլորտում: Եւ միաժամանակ ձգտում կար ամրապնդել Սասանեան իշխանութիւնը նուաճուած կամ ենթակայ երկրներում, իսկ դրան պիտի նպաստէր դաւանական միասնութիւնը (որը քրիստոնեաների Համար նշանակում էր դաւանափոխութիւն): Մոգերը պնդում էին, որ Յազկերտին ենթարկուող բոլոր ժողովուրդները միակրօն դարձնելով՝ արքայից արքան կամրապնդի իր դիրքը նաեւ արտաքին աշխարհում:

Հաւատարմութիւնը դէպի Սասանեանների գերագոյն իշխանութիւնը Յազկերտը եւ նրա շրջապատը սկսել էին բացայայտ կերպով կապել դաւանանքի հետ: Ստորեւ ցոյց կը տանք, որ ընդարձակ գրութիւն է ուղարկում Հայաստան, ուր շարադրուած են եղել մազդեզանց ուսմունքի հիմունքները: Հայերին առաջարկում էր հրաժարուել իրենց Հայրերի դաւանանքից եւ ընդունել պարսից կրօնը: Հայոց եկեղեցին մերժեց, բնականաբար, այդ առաջարկը, բայց տուեալ դէպքում Հետաքրքիր է թէ Յազկերտը ինչպէս ընկալեց պատասխան թուղթը: Արքայից արքան, պատմում է Ղազար Փարպեցին, իսկոյն նկատեց, որ որոշ Հարցերում Հայերը լիովին ենթարկում են նրա կամքին, բայց կայ մի բնագաւառ, որտեղ նրանք բոլորովին անկախ են՝ «է ինչ, որ ոչ քեզ պարտ է ասել եւ ոչ մեզ Հնար է Հնազանդել եւ յանձն առնուլ»: Մերժումը, ինչպէս ասացինք, նկատի է ունեցել դաւանանքը, բայց Հէնց այդ Հարցում Յազկերտը չէր ուզում զիջել: Թագաւորը եւ բոլոր արիք նախ եւ առաջ սպասում են, որ Հայերը կ'ընդունեն մոգութիւնը, դրանով կը ճանաչուեն Պարսից տէրութիւնը եւ կ'ապահովուեն Հայերի արդար ծառայութիւնն ու Հնազանդութիւնը [Ղազ. Փարպ., էջ 48.24-30]: Անշուշտ, Փարպեցին է այդ խօսքերը Յազկերտի բերանը դրել, բայց մեզ Համար կարեւոր է գաղափարը, որն այստեղ արտայայտուած է զարմանալի յստակութեամբ:

Վերադառնանք, սակայն, ապստամբութեանը նախորդող շրջանին: Պարսկաստանում սկսուեցին կրօնական Հալածանքներ: Արտաքին յաջողութիւններից ոգեւորուելով՝ Յազկերտը հրամայեց, որպէսզի Պարսկաստանում բնակուող քրիստոնեաների գոյքը բռնազրաւուի. մարդկանց սկսեցին ենթարկել մարմնական պատիժների: Զոհ էին դառնում քուշանների դէմ պատերազմի գնացած քրիստոնեայ զօրականները: Նրանց պահում էին Պահ Դուան ներսում եւ ենթարկում չարչարանքների: Իսկ երբեմն, որ-

Պարսից մի մեծ բանակ՝ իր հետ բերելով 300 մոզ: Պարսիկները նեղում են աղուաններին, թագաւորի անուկից ասում՝ եթէ մոզութիւն ընդունէք, ապա նրանից պարգեւներ ու պատիւներ կը ստանաք, իսկ ձեր հարկերը արքունիքը կը ների [Եղ., էջ 70. 20-22]: Նոյնը, վերջապէս, կը կրկնուի 482-484 թթ. ապստամբութեան նախօրէին, երբ Պերոզ արքան կը հետեւի իր նախորդի՝ Յազկերտ Բ-ի քաղաքականութեանը, եւ արդիւնքը կը լինի նոյնը (աւելի մանրամասն՝ Գ գլխում):

Ինչպէս տեսնում ենք, արդէն Վարդան Մամիկոնեանի օրօք ոչ միայն վկայութիւնն ու խոստովանութիւնը, այլեւ ուրացութիւնը դարձել էր դարաշրջանի յատկանիշերից մէկը:

Իր «Պատմութեան» առաջին էջերում Եղիշէն ներկայացնում է այն ընդհանուր պատկերը, որն առաջացել էր Յազկերտ Բ-ի նորամուծութիւնների հետեւանքով: Նա միաժամանակ նշում է, որ արքայից արքայի անկարգութիւններն առաւել չափով վնասեցին Հայոց երկրին եւ աստիճանաբար ծանրացրեցին յատկապէս Հայերի վիճակը: 449 թ. Հայաստան է ժամանում Յազկերտի վստահելի ծառայ, բարձր պաշտօնեայ Դենշապուհը: Նա եկել էր իբր հարկերը վերացնելու եւ այրուծին պահելու համար գանձուող տուրքերը կրճատելու նպատակով: Իրականում նրա քայլերը ճիշտ հակառակ ուղղութեամբ ընկնեցան: Երկրի հարկը նա աւելի ծանրացրեց, ասում է Եղիշէն: Յայտնի է, որ քրիստոնեայ երկրում Եկեղեցին օգտուում է հարկային իմունիտետի (ապահարկութեան) իրաւունքից, իսկ Դենշապուհը եկեղեցու ազատութիւնը ծառայութեան տակ դրեց, այսինքն՝ այն դարձրեց հարկատու: Աշխարհազրի տակ ընկան նաեւ վանականները, ուստի նրանք եւս պիտի հարկ վճարէին: Հարկերը ծանր էին, շարունակում է մեր պատմիչը, «որովհետեւ որտեղից պէտք էր հարկեր դահեկան առնել, կրկնապատիկն էին առնում. այսպէս էլ [հարկի տակ] դրին եպիսկոպոսներին եւ երէցներին, ոչ միայն

շէն, այլեւ աւերակ տեղերը: Մանաւանդ, ո՞վ կարող է պատմել, թէ ինչպիսի ծանր տուրքեր ու սակեր, բաժեր ու հասեր էին նշանակուած լեռների, դաշտերի ու անտառների վրայ⁹: Առնում էին ոչ թէ ինչպէս վայել է պետական արժանապատուութեանը, այլ աւազակաբար յափշտակելով՝ այն աստիճան, որ իրենք էլ մեծապէս զարմանում էին՝ թէ մի տեղից որ այսքան գանձ է դուրս գալիս, էլ ինչպէ՞ս է շէն մնում այդ աշխարհը» [Եղ., էջ 22-23]:

Որպէս չորրորդ կէտ՝ Եղիշէն նշում է, որ Դենշապուհը նախարարներին բանսարկութեամբ թշնամացրեց միմեանց հետ եւ ամէն տան մէջ խռովութիւն գցեց: Պատմիչն, անշուշտ, ակնարկում է, որ նախարարական կարգը շարունակում էր խախտուել, եւ դա ընական է, Դենշապուհը Հայաստան էր ժամանել որպէս արքայից արքայի կամակատար: «Եւ այս ամէնն անում էր, որպէսզի գուցէ քանդի միաբանութիւնը, եւ եկեղեցու ուխտը ցրուի, եւ միայնակեացներին փախցնի եւ շինականներին տկարացնի, եւ չափազանց աղքատութեան պատճառով ակամայ ընդունեն մոգական կրօնը»:

Բայց ամէնից վատթարը հինգերորդն է եղել, «որովհետեւ նա, որ երկրի հազարապետն էր, համարում էր քրիստոնեայ աշխարհականների վերակացու հայրը, սրա դէմ գրգռելով՝ ամբաստանութիւն յարուցեց եւ, նրան գործից հանելով, նրա փոխարէն մի պարսիկ բերեց [մեր] աշխարհը եւ մի մոգպետի էլ աշխարհին դատաւոր [կարգեց], որպէսզի Եկեղեցու փառքը նսեմացնեն»: Հազարապետը մեզ յայտնի Վահան Ամատունին է եղել: Այն, ինչ գիտենք նրա մասին, հիմք է տալիս մտածելու, որ նա պիտի դիմադրէր Դենշապուհի միջոցառումներին: Այդ կողակում էր նաեւ Յազկերտը, որի պահանջով, անշուշտ, Վահան Ամատունին հեռացուեց իր բարձր պաշտօնից: Վահանի հրաժարեցումով հազարապետութիւնը, թւում է, վերջնականա-

պէս գնաց տեղացիների ձեռքից: Ճիշտ է, Տեկորի տաճարի յայտնի արձանագրութեան մէջ¹⁰ յիշատակուում է ոմն Մանան Հազարապետ: Սակայն արձանագրութեան ծագումը անորոշ է, տարբեր կարծիքներ կան փորագրութեան ժամանակի վերաբերեալ (Ե-Ժ դարեր), այդ Մանանն էլ այլուր չի յիշատակուում, ուստի հեռու գնացող հետեւութիւններից առայժմ ձեռնպահ պիտի մնայ:

Եղիշէից գիտենք, որ Դենշապուհը իր հետ բերել էր նաեւ նոր դատաւոր: Վերջինիս ներկայութիւնը Հայաստանում սահմանափակուում էր թէ՛ եպիսկոպոսի, թէ՛ տեղացի աշխարհիկ դատաւորի իրաւասութիւնը, հարուած հասցնում տեղական ինքնավարութեանը: Յիշենք, որ նորեկը եղել է ոչ թէ սովորական զրադաշտական, այլ մոզպետ, որը յատուկ պիտի նպաստէր Պարսից արքունիքի կրօնական քաղաքականութեանը Հայոց երկրում:

Թուարկելով Դենշապուհի միջոցառումները, նշելով, որ նրա գործերը դժնդակ էին՝ Եղիշէն այնուամենայնիւ ամփոփում է, որ «գեռ ոչ ոք յայտնի կերպով ձեռք չէր տուել Եկեղեցուն, այդ պատճառով էլ ոչ ոք նրան չընդդիմացաւ», թէպէտ հարկերը ծանր էին, եւ այլն: Եւ իրօք, պոռթկումն առաջացաւ միայն այն պահին, երբ պարսիկները բացայայտ կերպով խախտեցին Եկեղեցու՝ որպէս կրօնական հաստատութեան իրաւունքները: Սակայն շարունակենք հետեւել մեր պատմիչի շարադրանքին:

Տեսնելով, որ մասնակի միջոցառումները մեծ արդիւնք չեն տալիս՝ Պարսից քաղաքագէտները դիմեցին աւելի լայն ծրագրի: Միհրնբրսեհ վզուրկ հրամանատարի (տե՛ս ստորեւ) ստորագրութեամբ Հայաստան է ուղարկուում մի գրութիւն, որով քրիստոնեայ ուսմունքը մոլորութիւն է յայտարարուում, իսկ, որպէս ճիշտը, նրան հակադրուում է զրադաշտական կրօնը: Այդ թուղթը եղել է բանավէճի իւրատեսակ մի կոչ. «Երկու բան կայ ձեր ա-

ռաջ՝ կա՛մ կէտ առ կէտ պատասխա՛ն տուէք այս նամակին, կա՛մ վեր կացէք Դո՛ւռն եկէք եւ ներկայացէ՛ք մեծ ատեանին»: Այսպիսի խօսքերով էր վերջանում գրութիւնը: Մովպետան մովպետից, այսինքն՝ գերագոյն քրմապետից յետոյ վզուրկ հրամանատարը եղել է ամէնից բարձր պաշտօնեան: Միհրնբրսեհը յատկապէս մեծ կշիռ է ունեցել արքունիքում: Եղիշէն գրում է, որ «սա ամբողջ Պարսից պետութեան իշխանն ու հրամանատարն էր, ... եւ ամենեւին ոչ մէկը չկար, որ համարձակուէր նրա խօսքից դուրս գալ: Եւ ոչ միայն մեծամեծներն ու փոքրերը, այլեւ թագաւորն ինքը լսում էր նրա խօսքին» [Եղ., էջ 88. 21-24]: Միհրնբրսեհի մասին նոյնն են ասում նաեւ օտար աղբիւրները: Միհրնբրսեհի ստորագրութիւնը թղթի մեծ կարեւորութեան վկայութիւնն է եղել: Ստանալով այդպիսի գրութիւն՝ Հայոց եկեղեցին ոչ մի դէպքում չէր կարող այն անուշադրութեան մատնել: Պատասխան նամակը գրուել է Այրարատի եպիսկոպոս, Հայոց կաթողիկոսի տեղապահ Յովսէփի եւ 17 այլ եպիսկոպոսների անունից: Թուղթը նախապէս ընթերցուեց Արտաշատում գումարուած մեծ ժողովում: Ստորագրողներից բացի, այստեղ ներկայ են եղել բազմաթիւ քորեպիսկոպոսներ եւ պատուական երէցներ, մեծամեծ նախարարներ [Եղ., էջ 27-28, Ղազ. Փարպ., էջ 44-45]:

Դժուար չէ կռահել, որ պատասխան նամակը բովանդակել է զրադաշտութեան հերքում եւ քրիստոնեայ ուսմունքի ջատագովութիւն: Նամակից միանգամայն պարզ է, որ հայերը կտրականապէս մերժում են օտար կրօնը, հաւատարիմ են մնում իրենց դաւանանքին: Բայց իր ծրագրից յետ չէր կանգնում նաեւ Յազկերտը: Առաւել զայրանալով ստացուած պատասխանից՝ նա, պատմում է Եղիշէն, իր մօտ կանչեց 10 նախարարի: Նրանց թուում էին մարգպան Վասակ Սիւնին, սպարապետ Վարդան Մամիկոնեանը, նախկին հազարապետ Վահան Ամատունին,

Գաղիշոյ Խորխոռունին (նրա տոհմից էին լինում մաղխազները): Նոյն ցուցակը բերում է նաև Ղազար Փարպեցին՝ աւելացնելով միայն Գուգարքի բղբշխ Աշուշային: Այսպիսով, նախարարների խումբը կազմուած է եղել իրապէս ոչ թէ 10, այլ 11 հոգուց [Եղ., էջ 42-43, Ղազ. Փարպ., էջ 47]: Նախարարների մի մասը ժամանել էր Հայոց երկրից, ոմանք ստիպուած էին թողնել իրենց ծառայութիւնը Ճորայ Պահակում (ուր ապահովում էին սահմանը հոնների ասպատակումներից), իսկ ոմանք առանց այն էլ գտնուում էին արքունի բանակում: 450 թ. Զատիկի Աւագ շաբաթ օրը, ապրիլի 15-ին, նրանք ներկայացան արքայից արքային:

Արդէն Տիգրան ժամանելու հրովարտակը արտասովոր խիստ ձեւով էր կազմուած: Յագկերտը զայրագին խօսքեր էր նետում նախարարներին, որոնք դարձել էին նրա համար «ատելի եւ անպիտան». արքայից արքան մոռացութեան էր տուել նրանց նախկին ծառայութիւնները: Փոխուել էր նաև ընդունելութիւնների կարգը: Հնում, դեռևս բանակ չհասած, նրանց ողջունում էին պատուաւոր ձեւով, իսկ այժմ Պարսից թագաւորը դիմաւորեց նրանց սպառնալիքով՝ եթէ վաղը ծունր չդնէք Արեւի առաջ, ապա մեծ պատիժների կ'ենթարկուէք:

Մթնոլորտը գնալով աւելի ու աւելի էր շիկանում: Յագկերտը այն մարդը չէր, որ բաւարարուէր սոսկ սպառնալիքներով: Ծանր տանջանքներ էին սպասում թէ՛ նախարարներին, թէ՛ նրանց հարազատներին: Արդէն զօրք էին հաւաքում, որպէսզի նրանց աքսոր քշեն (այդպէս վարուել էին վրացի բազմաթիւ ազնուականների հետ): Ճիշտ է, հէնց այդ ժամանակ քուշաններն ասպատակեցին Պարսից մի շարք գաւառներ. Յագկերտը շտապեց իր զօրականների յետեւից եւ «խափանեց իր առաջին հաստատուն երդումը» [Եղ., էջ 49]: Պարզ էր, սակայն, որ փրկութիւնը ժամանակաւոր էր:

Եղիշէն եւ յատկապէս՝ Ղազար Փարպեցին պատկերաւոր են նկարագրում նախարարների ապրումները վճռական քայլից առաջ, վերաշարադրում նրանց աղօթքներն ու երդումները՝ հաւատարիմ մնալ իսկական Աստծուն եւ այլն: Բայց միակ միջոցը, որը կ'ապահովէր նրանց կեանքը, կրօնափոխութիւնն էր, եւ նրանք ստիպուած եղան ենթարկուել Յագկերտի կամքին: Սրտի խորքում, պնդում են պատմիչները, նրանք մնացին քրիստոնեայ, այսինքն՝ մոգութիւնն (ինչպէս շեշտուած է սովորաբար պատմագիտական ուսումնասիրութիւններում եւ ձեռնարկներում) ընդունեցին առնրես: Բայց տուեալ դէպքում Յագկերտը հանդէս էր եկել ոչ թէ որպէս հոգեբան, այլ արքայից արքայ. Տիգրան եկած նախարարների հոգեկան աշխարհը նրան դժուար թէ մտահոգէր: Վասակը, Վարդանը եւ միւսները հրապարակաւ հրաժարուեցին իրենց Աստծուց եւ երկրպագեցին Արեւին. տուեալ պայմաններում քաղաքական խաղի օրէնքը աւելին չէր պահանջում:

Նախարարների ընտրած վարքագիծը իսկոյն վարձատրուեց: Ետ ստացան իրենց պատիւն ու գահը, Յագկերտը նրանց ագարակներ ու աւաններ շնորհեց, սիրելի ու բարեկամ անուանեց: Բայց դրա հետ մէկտեղ Աշուշա բղբշխին եւ Վասակի երկու որդիներին պատանդ պահեց [Ղազ. Փարպ., էջ 55. 28-32]: Դաւանափոխ իշխանները պատկանել են Հայոց նախարարութեան սերուցքին. արքունիքը սպասում էր, որ նրանց օրինակին կը հետեւեն նաև հայրենակիցները: Կռապաշտութիւնը Հայաստանում տարածելու եւ հաստատելու համար այրուծի է գումարում, ազնուական մի մոգպետի գլխաւորութեամբ հաւաքուած է 700 մոգերից կազմուած խումբ: Հայաստանից բացի, նրանք պիտի քարոզէին Վիրքում, Աղուանքում, Լփնաց, Աղձնեաց, Կորդուաց, Ծաւղէից, Դասն աշխարհներում: Արդէն վիճակ էին գցում, թէ որ ժողովուրդը որ խմբին է աշակերտելու:

Արքայից արքայի հրովարտակը Եղիշէն մէջբերում է վերախմբագրուած ձեւով. քրիստոնեայ հեղինակին յատուկ բանաձեւեր են հանդիպում ամէն քայլափոխում, սակայն, ըստ երեւոյթին, այն ճիշտ է արձանագրում բովանդակութիւնը: Հրովարտակից կարելի է պարզ պատկերացում կազմել Պարսից արքունիքի ծրագրի վերաբերեալ:

«Նաւասարդից մինչեւ նաւասարդ (այսինքն՝ ողջ տարին – Կ. Իւզ.), – ասում է [հրովարտակը], – մեծ թագաւորի իշխանութեան տակ գտնուած բոլոր վայրերում պէտք է վերանան եկեղեցու արարողութիւնները, պէտք է փակուեն եւ կնքուեն սուրբ տաճարների դռները, նուիրական անօթները պէտք է գրով ու համարով յարքունիս գրաւուեն, լռեն սաղմոսերգութեան ձայները, եւ դադարեն անսուտ մարգարէների ընթերցուածները: Քահանաները չփստահանան իրենց տներում ուսուցանել ժողովրդին, եւ Քրիստոսին հաւատացող այն տղամարդիկ ու կանայք, որոնք բնակուած են մենանոցներում, փոխեն իրենց հագուստը՝ աշխարհական կարգի համաձայն»: Ինչպէս տեսնում ենք, հրովարտակի առաջին տողերը նուիրուած են Պարսից ծրագրի, այսպէս ասած, ժխտողական մասին: Բայց ինչպիսի՞ն է լինելու նոր կարգը, որը կը գրաւի աւանդականի տեղը. հետեւենք հրովարտակին՝ «Նոյնպէս եւ նախարարների կանայք պէտք է ընդունեն մոգերի ուսմունքն ու վարդապետութիւնը: Ազատների եւ շինականների տղաներն ու աղջիկները պէտք է կրթուեն նոյն մոգերի հրահանգների համաձայն: Պէտք է կարճուի եւ արգելուի սուրբ ամուսնութեան օրէնքը, որ ունէին նախնիքներից՝ քրիստոնէութեան սովորութեան համաձայն. մէկ կնոջ փոխարէն թող շատ կանայք առնեն, որպէսզի Հայոց ազգն աճի-բազմանայ: Աղջիկներն ամուսնանան [իրենց] հայրերի հետ, եւ քոյրերը՝ եղբայրների հետ. մայրերը չխորշեն [իրենց] որդիներից, այլ եւ թոռները մտնեն [իրենց] պապերի անկողինը»:

Վերեւում առիթ ունեցանք նշելու, թէ քրիստոնեայ ազգերի աչքում որչափ խորթ եւ անսովոր, զազրելի պիտի երեւային զրադաշտական ամուսնութեան այդ սովորոյթները: Այնուհետեւ հրովարտակը խօսում է մուծուելիք նոր ծէսերի մասին՝ «Ջոհելու կենդանիները չմորթուեն առանց [աստուածներին] նուիրուելու, թէ՛ ոչխար լինի, թէ՛ այծ, թէ՛ արջառ, թէ՛ թռչուն եւ թէ՛ խոզ: Խմորն առանց փանդամի² չհուսնցուի, ծիրտն ու քակորը կրակի մէջ չպցուեն, ձեռքերն առանց գումիզի³ չլուացուեն, ջրշուններն, աղուէսներն ու նապաստակները չսպանուեն: Օձերն ու մողէսները, գորտերն ու մրջիւնները եւ էլի ինչ որ խառնափնթոր ճճիներ կան՝ ոչնչացուեն եւ թուով ու համարով մէջ բերուեն արքունի չափի համեմատ: Եւ էլի ինչ որ ծառայութիւններ կան զոհելու կամ մորթելու վերաբերեալ՝ ըստ տարեկան տօների եւ կապճաթիւ մոխրաչափ կարգով [պէտք է] կատարուեն»¹ [Եղ., էջ 52-53]:

Նշուած է եղել կատարման ժամկէտը՝ տարուայ վերջը¹²:

Ունենալով այդպիսի հրահանգ՝ մոգերը գիշեր ու ցերեկ շտապում էին հասնել Հայոց երկիրը. նրանք իրենց ժամկէտն են ունեցել՝ վեցերորդ ամիսը¹³:

Արդ, մի փոքր կանգ առնենք մեր սկզբնաղբիւրների որոշ առանձնայատկութիւնների վրայ, որոնք պատմութեան իրական ընթացքը վերականգնելիս դժուարութիւններ են առաջացնում: Ներկայացնելով ապստամբութեան եւ յարակից երեւոյթների նկարագրութիւնը՝ ե՛ւ Եղիշէն, ե՛ւ Ղազար Փարպեցին (նաեւ այն դրուագներում, որտեղ վերջինս շեղւում է Եղիշէից) ունեցել

² Փամդամ – ճերմակ լաթից քող, որով մոգերը կրակիմ մօտեցալիս ծածկում էին իրեանց դէմքերը, որպէսզի արտաշնչմամբ չպղծեն հուրը:

³ Գումէզ – կովի մէզ. գործածում էին ձեռքերի պղծութիւնը վերացնելու համար:

են արժանահաւատ փաստեր: Բայց այդ փաստերը բաւական չեն եղել, որպէսզի ընթերցողին հրամցուի ողջ պատմութիւնը հեղինակի ցանկացած եւ ծրագրուած սահմաններում: Եւ ահա, շատ դէպքերում պատմիչը բացը լրացնում է իր երեւակայութեամբ: Այդպիսի հատուածները բխում են դարաշրջանի, իրադրութեան ընդհանուր հասկացութիւնից, բայց դրանք չպիտի դիտուեն որպէս իրականութեան հարազատ պատճէն:

Անցքերը շարադրելիս միջնադարեան պատմիչը խոստափում է առարկայութիւնից, ստեղծում ընհանրացուած պատկեր: Եղիշէն, օրինակ, ասում է, որ նախարարների ուրացութեան բօթը հասաւ Հայաստան, «երեւեցան ամենեքեան զինեալք եւ սաղաւարտեալք, սուր ընդ մէջ եւ վահան ի ձեռին» [Եղ., էջ 57. 24-53.1]: Կենդանի թուացող այդ պատկերն իրականում ներշնչուած է Պօղոս առաքեալի խօսքով՝ «Եւ ի վերայ ամենայնի առէք զվահանն հաւատոց. որով կարող լինիջիք զամենայն նետս մուխս չարին շիջուցանել: Եւ առէք զսաղաւարտն փրկութեան եւ զսուսեր հոգւոյն...» [Եփես. Զ 16-17]: Երկու դէպքում էլ վահանը, սաղաւարտը, սուրը՝ բառեր են, որոնք արտայայտում են զէնքի լոկ գաղափարը, ստեղծում ընդհանրացուած, խորհրդանշային պատկեր: Այն էլ ասենք, որ նման դէպքերում եւս յաճախակի առաջանում է գեղարուեստական յուզիչ կերպար, եւ անգամ փորձուած աղբիւրագէտի համար հեշտ չի լինում կուահել, որ պատկերաւոր նկարագրութիւնը բխում է պատմիչի երեւակայութիւնից: Այդպիսի նկարագրութիւնները յատուկ մօտեցում են պահանջում, բայց, ենթարկուելով համապատասխան վերլուծութեան, իրենց հերթին կարող են նպաստել իրականութեան ճիշտ ըմբռնմանը:

Վերջապէս, մէկ առանձնայատկութիւն եւս: Միջնադարեան գրողի աչքում պատմութիւնը զարգանում է սովորաբար ուղիղ գծով, առանց շեղումների, դա մէկը միւսին փոխարինող անցքե-

րի շարան է: Զուգահեռականութեան գաղափարն ընդհանուր առմամբ նրան խորթ է, տուեալ պահի հետ նա կապում է միայն մէկ երեւոյթ: Դէպքերը կարող են տեղի ունենալ տարբեր վայրերում՝ Հայոց երկրում, Վիրքում, Աղուանքում, Արեաց աշխարհում, Յունաց կողմերում, բայց պատմիչի համար դրանք չեն կարող կատարուել միաժամանակ: Սովորաբար նա ետ ու առաջ չի վազում, այլ շարադրում է երեւոյթները յաջորդաբար եւ դրանով իսկ դրսեւորում պատճառ-հետեւանքային կապերի իր հասկացութիւնը: Բայց պատմական այդ մոդելը, որի հիմքում ընկած է երեւոյթների գծային զարգացման գաղափարը, յաճախ չի համընկնում իրականութեան հետ, եւ ժամանակակից հետազօտողը նրա մէջ մտցնում է իր ուղղումները:

Վերադառնանք, սակայն, բուն անցքերի մեր ընդհատուած շարադրութեանը: Պարսից բանակում կային տարբեր երկրներից եկած քրիստոնեաներ: Իմանալով հայ նախարարների ուրացութեան մասին՝ նրանք ծանր վշտի մէջ ընկան, յանդիմանեցին նրանց, պախարակեցին նաեւ նախարարների հետ եղած քահանաներին (այն խօսքերը, որոնք Եղիշէն դնում է նրանց բերաններին (այն խօսքերը, որոնք Եղիշէն դնում է նրանց բերանը, ճարտասանութեան ընտիր օրինակներ են): Հոգեւորականները, պատմում է հեղինակը, չդիմացան այդ մեղադրանքներին, հեռացան նախարարներից եւ, անհնարին համարելով թաքցնել լուրը, սուրհանդակ ուղարկեցին Հայաստան: Հայերի արձագանքների մասին խօսելիս Եղիշէն, թւում է, պիտի յատկապէս ընդգծէր առաջացած անխոստափելի յուսահատութիւնը: Մինչդեռ նա պատմում է միայն այն գործնական քայլերի մասին, որոնց դիմեցին բացայայտ դիմադրութեան պատրաստուող մարդիկ: Եպիսկոպոսները ցրուեցին ամէն մէկը իր իշխանութիւնը, հաղորդում է պատմիչը, քորեպիսկոպոսները սկսեցին շրջել գիւղերը, ազարակները, լեռնային գաւառների ամրոցները: «Դրդեցին, հաւաքեցին մեծ բազմութեամբ այր եւ կին, շինական եւ ազատ,

քահանայ եւ միայնակեաց, խրատեցին, ամրապնդեցին եւ բոլորին Քրիստոսի զինուոր դարձրին»: Այդ որոշումը ընդունուած է եղել եպիսկոպոսների ժողովի կողմից (որին եւ անտեղ էր ուրացութեան ծանր լուրը Պարսկաստանից եկած գուժկանը). նոյն ժողովը դիմեց հետեւեալ կոչով. «Հարազատ եղբօր ձեռքը թող բարձրանայ այն մերձաւորի դէմ, որ դուրս է եկել Աստոյ պատուիրանի ուխտից. հայրը չի նայի որդուն, եւ որդին չակնածի հօր պատուից: Կինը կուռի իր ամուսնու դէմ, եւ ծառան դիմադրի իր տիրոջը: Աստուածային օրէնքը թագաւորի ամէն բանում, եւ նոյն օրէնքից յանցաւորները ստանան իրենց դատապարտութիւնն ու պատիժը»: Արձագանքելով այդ կոչին, ասում է պատմիչը, զինուեցին ոչ միայն տղամարդիկ, այլեւ կանայք [Եղ., էջ 57]:

Ինչպէս պատմութեան բազմաթիւ այլ հատուածներում, այնպէս եւ այստեղ Եղիշէի շարադրանքը չի կարելի բառացի հասկանալ: Նկարագրութիւնները շատ անգամ ճարտասանական բնոյթ ունեն: Բայց էականի վերաբերեալ կասկածելու հիմք չունենք: Իմանալով նախարարների ուրացութեան մասին, անմիջապէս կռահելով դրա հետեւանքները՝ հայերը պատրաստուեցին դիմադրութեան: Նրանք, ասես, վաղուց էին ընտելացել ապստամբութեան գաղափարին:

Այդպիսին է եղել հայրենի երկիրը ըստ Եղիշէի, երբ նախարարները վերադարձան Պարսից մայրաքաղաքից, վերադարձան «ողջք եւ ոչ ողջք» [Ղազ. Փարպ., էջ 55. 34-35]: Հաղորդելով այդ մասին՝ Ղազար Փարպեցին սպարապետի կեանքից մի դէպք է պատմում, որի մասին Եղիշէն ոչինչ չի ասում: Ղազարի ասելով՝ Հայաստանում իբր նոր պիտի իմանային ուրացութեան մասին: Նորեկներին դիմաւորում են հոգեւոր երգերով, բայց երբ պարզւում է նրանց ուրացութիւնը, ողբ ու ճիչ է լսւում, հարազատները հեռանում են նրանցից եւ այլն: Նախարարները, ո-

րոնք դիմել էին այդ քայլին «պատճառանօք եւ ոչ ճշմարտութեամբ», ուզում են տեղնուտեղը ինքնասպան լինել:

Մինչդեռ մոգերը կրակ էին վառում եկեղեցիներում եւ նոր ատրուշաններ հիմնում: Տեսնելով այդ՝ Վարդան Մամիկոնեանը հաւաքում է իր ողջ գերդաստանը, խոստովանում, որ իրապէս չի հրաժարուել իր Աստուց, ուրացել է պատճառանօք, այսինքն՝ առերես: Այժմ այդ քայլի դիմաց նա ուզում է թողնել ամէն ինչ եւ գնալ յօտարութիւն (դեռեւ Տիգրանում «յօտարութիւն» գնալը նախարարները դիտում էին որպէս վրկութեան ճանապարհներից մէկը [Ղազ. Փարպ., էջ 50. 12-13]: Ով որ ցանկանում է, շարունակում է իր խօսքը Մամիկոնեան տէրը, թող միանայ նրան: Մերձաւորները համաձայնութիւն են յայտնում. սպարապետը ամբողջ գերդաստանով անցնում է Բագրեւանդ գաւառի Արաման գիւղը, որպէսզի այնտեղից շարժուեն Յունաց աշխարհ: Այդ մասին իմանում են մարզպան Վասակը եւ միւս նախարարները: Առանց ազգի առաջնորդի (!), մտածում են նրանք, մեր Հայոց աշխարհին ոչ մի գործ չի յաջողուի: Սպարապետին անհրաժեշտ է վերադարձնել: Նամակներ են գրում, Աւետարանի վրայ երդւում եւ մի պատշաճ պատուիրակութիւն ուղարկում Արաման գիւղը: Վարդանին համոզում են ոչ միայն մնալ երկրում եւ միանալ ընկերներին, այլեւ «վաղվաղակի յայտնել զիրս ապստամբութեան»: Վարդանը տատանման մէջ է, չի կարող մոռանալ Մամիկոնեանների նկատմամբ հնում ցուցաբերած անարդարութիւնը, անհանգիստ է ընկերների, յատկապէս՝ պատանդ մնացած Աշուշայի եւ Վասակի երկու որդիների համար: Բայց նահատակութեան ցանկութիւնը վեր է ամէն ինչից, եւ սպարապետը որոշում է մնալ: Գարնան վերջին օրերին նա տեղափոխւում է Ծաղկուտն (Ծաղկոտն) գաւառի Անգղ ամրոցը եւ ամբողջ ամառը անցկացնում այնտեղ [Ղազ. Փարպ. Իթ-Ա.]:

Ղազարի շարադրանքը (որի վաւերականութիւնը դժուար թէ կասկածի առիթ տայ) կարեւոր մի բաց է լրացնում ապստամբութեան պատմութեան մէջ. Եղիշէի լուսթիւնը այդ հարցի շուրջ պատճառաբանուած է պարզապէս պատմիչի անտեղեակութեամբ. Մամիկոնեանների պատմութեանը նրանց ջատագով Ղազարն աւելի լաւ է ծանօթ: Մամիկոնեաններից մէկը՝ Վասակը, Բիւզանդական Հայաստանում սպարապետ է եղել: Մամիկոնեաններն, այսպիսով, յենարան են ունեցել նաեւ Արեւմուտքում: Հետագայ դարերում եւս նրանք սերտօրէն կապուած են եղել Բիւզանդիային, ծառայել նրան, իսկ Մամիկոնեան կանանցից մէկը դարձել էր անգամ կայսրուհի: Ջարմանալի չէ, որ ողբերգական ապրումներից յետոյ հայրենիքում չտեսնելով որեւէ հեռանկար՝ Վարդանն իր ամբողջ գերդաստանով որոշել էր քաշուել Յունաց կողմերը:

Ասացինք, որ նախարարների ուրացութիւնից յետոյ Յագկերտը մի մեծ բանակ ուղարկեց Հայաստան, որի հետ եղել են աւելի քան 700 մոգեր՝ իրենց մոգպետներով: Այդ զօրքը Հայաստան մտաւ նախարարների գլխաւորութեամբ: Հէնց այդ բանակը, աւելի ճիշտ՝ նրա մի մասը նկատի ունի Եղիշէն՝ պատմելով Անգղում տեղի ունեցած դէպքերի մասին: Հայոց գունդը, ասում է պատմիչը, չորրորդ ամսում հասաւ Անգղ գիւղաքաղաքը, նրանց հետ են եղել նաեւ մոգերը: 25 օրից ժամանեց մոգպետը, որպէսզի քանդի եկեղեցու դռները (աւելացնենք՝ ներսը կրակ վառի, տաճարը պղծի): «Իսկ սուրբ Ղեւոնդ երէցը առաջին խորհրդակիցների եւ բազմաթիւ ուխտակիցների հետ միաբան այնտեղ պատրաստ գտնուեց: Թէպէտեւ լաւ տեղեակ չէր բոլոր նախարարների մտադրութիւններին եւ ոչ էլ մոգպետի ուժին ու զօրութեանը, ամենեւին չսպասեց բոլոր եպիսկոպոսներին եւ նոյնիսկ մի քիչ էլ չհամբերեց ու չներեց անօրէն իշխանին, այլ մեծ աղմուկ ու տագնապ առաջացրեց զօրքերի եւ մոգերի մէջ:

Որովհետեւ դազանակները ձեռքներն առած՝ մոգերի եւ մոգպետի գլուխները ջարդեցին, բոլորին փախցրին իրենց կացարանները, իսկ իրենք, պաշտամունքը վերսկսելով եկեղեցում, կիրակնօրեայ կարգն էին կատարում՝ շարունակելով այն ամբողջ նոյն կիրակի օրը» [Եղ., էջ 58]:

Թւում է, թէ Ղազար Փարպեցու՝ մոգերի կոտորածի մասին պատմածը վերաբերում է նոյն դէպքերին: Հեղինակը հաղորդում է, որ Վարդան Մամիկոնեանը ժամանում է Մաղկոտն դաւառը եւ բանակ դնում Անգղ բերդի մօտերքում: Այնուհետեւ նրա եւ միւս նախարարների միջեւ համաձայնութիւն է հաստատում՝ ապստամբել: Յատուկ գրութիւն են կազմում, դաշինքը կնքում իրենց մատանիներով, դնում Աւետարանի մէջ, եպիսկոպոսներին եւ միւս հոգեւորականներին ի պահ յանձնում: Մտնում են եկեղեցի աղօթելու, այդ ժամանակ ուամիկ զօրականները, չսպասելով աւազների հրամաններին, վազում են դէպի մոխրանոց (կրակի տաճար կամ բազին, ատրուշան), կրակը ջուրը պցում, մոգերին մէկ օր պահում, իսկ առաւօտեան տանում Ջարեհաւան գիւղը եւ սպանում [Ղազ. Փարպ., էջ 62-63]:

Շարադրութիւնից երեւում է, որ Անգղը եւ Ջարեհաւանը իրար մօտ են եղել: Ս. Երեմեանի կազմած քարտէզի վրայ դրանք նշուած են կողք-կողքի¹⁴: Տեսանք, որ ըստ Եղիշէի՝ մոգերի ջարդը տեղի է ունեցել Անգղում, իսկ Վասակի դատավարութիւնը նկարագրելիս (տե՛ս ստորեւ) պատմիչը պնդում է, որ մարզպանը Ջարեհաւանում մոգերի սպանութեան մասնակից է եղել: Այլուր նա ոչ Ջարեհաւան է յիշում, ոչ էլ մոգերի սպանութիւն:

Եթէ նոյնացումը ճիշտ է, եթէ պատմիչները միեւնոյն դէպքերի մասին են հաղորդում, ապա հասկանալի է դառնում, թէ ինչն է նկատի ունեցել Եղիշէն՝ նշելով Հայոց գնդի գալուստը:

Դա եղել է Հայոց այն գործը, որը Անգղ էր ժամանել Վարդան Մամիկոնեանի գլխաւորութեամբ:

Մոգերը Հայերի աչքում եղել են սուտ վարդապետներ, նրանք են մարմնաւորել այն նոր քաղաքականութիւնը, որին ձեռնամուխ էր եղել պարսից արքունիքը: Մոգերից խորշում էին. կանայք թոյլ չէին տալիս, որպէսզի երեխաները դրանցից դասեր առնեն: Անգամ առերես զրադաշտութիւն ընդունած, բայց սրտի խորքում քրիստոնեայ մնացածները («պատճառանօք կարծեցուցանէին զինքեանս ուրացողս») թոյլ չէին տալիս, որ մոգերը իրենց ներկայութեամբ Հաց ուտեն: Մոգերը չէին կարող թողնել երկիրը եւ փախչել, իսկ մնալը նրանց Համար դարձել էր անտանելի եւ կորուստ էր գուշակում: Այդ վիճակում մնում էր մի ելք՝ գաղտնի Հաղորդել Հայերի ապստամբութեան մասին [Ղազ. Փարպ., էջ 60. 24-34]:

Մեր պատմիչների բովանդակալից շարադրանքը Հնարաւորութիւն է տալիս պատկերացում կազմելու ապստամբութեան ընթացքի, նրա հիմնական դէպքերի, առանձին երեւոյթների կապի մասին: Սակայն ժամանակագրական ատաղձը այնքան էլ պարզ չէ:

Եղիշէի ժամանակագրական տուեալների վրայ անհրաժեշտ է առանձին կանգ առնել: Հեղինակը մի շարք երեւոյթներ թուագրել է Յազկերտ Բ-ի թագաւորութեան տարիներով: Յայտնի է, որ երկրի պտոյտը Արեւի շուրջ տեւում է 365 օր, 5 ժամ, 48 րոպէ եւ գրեթէ 46 վայրկեան: Պարսից տարին ունեցել է 12 ամիս (իւրաքանչիւրը 30 օր) եւ 5 օր, ընդամէնը ուղիղ 365 օր: Լինելով իրական տարուց կարճ՝ այն ամէն տարի յետ է նահանջել մօտաւորապէս 6 ժամով. 4 տարուայ ընթացքում նահանջը կազմել է 1 օր, 120 տարին մէկ տարբերութիւնը պիտի գառնար մէկ ամիս, իսկ մեր 1660 տարիներին կը Համապատասխանէր պարսից 1661 տարուայ ժամանակամիջոցը:

Իսկական եւ շարժական տարիների անհամաձայնութիւնը վերացնելու Համար ժամանակ առ ժամանակ յաւելեալ ամիս էին մտցնում, որից յետոյ տարբերութիւնը, բնականաբար, սկսում էր կրկին աճել: Պէտք է ասել, որ այդ յաւելեալ ամիսների գործառնութիւնը մեզ քիչ է ծանօթ, գիտելիքները յենում են բաւական անորոշ տուեալների վրայ: Արաբական տեղեկութիւններից յայտնի է, որ Սասանեանների իշխանութեան շրջանում վերջին ուղղումը իբր տեղի է ունեցել Յազկերտ Ա-ի (399-421) օրօք:

Շարժական է եղել նաեւ Հայոց տարին. պարսկականի պէս ունեցել է 12 ամիս եւ 5 աւելեաց օր՝ ընդամէնը 365 օր: Միակ տարբերութիւնն այն է եղել, որ սկսուել է պարսկականից 5 օրով ուշ:

Գիտութիւնը վաղուց ի վեր պարզել է այդ շարժական եւ մեր անշարժ տոմարների յարաբերութիւնը, ճշտուած են նաեւ սասանեան թագաւորների գահակալութեան տարիները (գահակալութեան տարին տոմարական հասկացութիւն է. այն կարող է չհամընկնել գահը գրաւելու իրական ժամկէտի հետ): Եղիշէի երկում եղած տուեալների շնորհիւ մենք Հաստատ գիտենք, որ նախարարները Տիգրոն են կանչուել 450 թ: Գիտենք նաեւ, որ նրանք տեղ են Հասել Զատիկի շաբաթ օրը, որը ճշտուում է առանց դժուարութեան. 450 թ. Զատիկը եղել է ապրիլի 16-ին՝ կիրակի, ուստի շաբաթն ընկել է ապրիլի 15-ին:

Թագաւորական Հրովարտակում ասուած է եղել, որ «Նաւասարդից Նաւասարդ տեւող ժամանակամիջոցում քրիստոնէութիւնը պիտի տեղի տայ կրակապաշտութեանը»: Նաւասարդը՝ Հայոց տարուայ առաջին ամիսն է. 450 թ. սկսուել է օգոստոսի 6-ին: Գիտութեան մէջ այն կարծիքն է իշխում, որ Հայերին մէկ տարուայ ժամկէտ է տրուած եղել: Սակայն աւելի Հաւանական է, որ այդ բանաձեւը էպիկական երանգ ունի.

Հայերը ողջ տարին, այսինքն՝ մշտապես պիտի հետեւեն կրակապաշտութեան օրէնքներին: Հակառակ դէպքում անհասկանալի է՝ ինչու պիտի յիշուէր դաւանափոխութեան սկիզբը. բաւական էր կարգադրութիւն անել աւարտման ժամկէտի վերաբերեալ: Այն էլ ասեմք, որ հրովարտակը մէջ է բերուած ոչ թէ իր իսկական ձեւով, այլ աչքի ընկնող գիտակցած փոփոխութեամբ: Զրահաշտական կողմից ստորագրուած թղթում անհնարին կը լինէին այնպիսի դարձուածքներ, ինչպէս սուրբ տաճարներ, Առիւրեալ սպասներ, անսուտ մարգարէներ եւ այլն (բոլորը վերաբերում են քրիստոնէական հաւատին):

Հայաստան առաքուած մոզերին ժամկէտ է տրուած եղել վեցերորդ ամիսը: Համարենք, որ դա պարսկական շահրեար ամիսն է, որը սկսուել է 450 թ. դեկտեմբերի 29-ին եւ աւարտուել յունուարի 27-ին:

Այնուհետեւ Եղիշէի մօտ կը տեսնենք, որ ամբողջ քաղոց ամիսը Հայերը պիտի անցկացնեն պահքով եւ աղօթքով, իսկ յաղթութեան տօնը¹⁵ խառնեն Քրիստոսի Յայտնութեան տօնին: Եկեղեցու տօները լինում են շարժական եւ անշարժ: Զատիկի տօնը շարժական է. ամէն տարի այն որոշուում է յատուկ հաշուամներով (ե դարում Հայերը հաշիւը կատարել են, ըստ էութեան, համաձայն յուլեան հիմ տոմարի). իսկ Յայտնութիւնը անշարժ է, նշուել է յունուարի 6-ին: Քաղոցը Հայոց տարուայ հինգերորդ ամիսն է. սկսուել է 450 թ. դեկտեմբերի 4-ին, աւարտուել 451 թ. յունուարի 2-ին: Այսպիսով, քաղոց ամսուայ եւ Յայտնութեան տօնի նշումները իրար լաւ են համընկնում: Եղիշէի եւ Ղազար Փարպեցու մի շարք տուեալներից երեւում է, որ պատերազմական գործողութիւններն Աղուանքում իսկապէս ձմռանն աւարտուեցին:

Բայց դրանից առաջ Եղիշէի «Պատմութեան» մէջ գտնում ենք եւս մի ժամանակագրական վկայութիւն: Հայոց գունդը

բոլոր օգնականներով եւ բազմաթիւ մոզերով Անգղ մտաւ չորրորդ ամսում: Վերեւում պարզեցինք, որ խօսքն այն գնդի մասին է, որը Հայաստան ժամանեց ուրացող նախարարների հետ, եւ այն մոզերի, որոնք Յազկերտի հրովարտակի համաձայն պիտի զրահաշտութիւն հաստատէին Հայոց երկրում: Անցաւ 25 օր, եւ Անգղ գիւղաքաղաք ժամանեց ինքը մոզպետը: Մոզպետի գալստեան օրը տեղի ունեցաւ Ղեւոնդ երէցի եւ զայրացած ամբոխի ելոյթը, որն աւարտուեց մոզերի կոտորածով:

Եթէ չորրորդ ամիս ասելով՝ Եղիշէն նկատի է ունեցել Հայոց տրե ամիսը, ապա 450 թ. այն սկսուել է նոյեմբերի 4-ին, աւարտուել դեկտեմբերի 3-ին: Եթէ դա Պարսից տիր ամիսն է եղել, ապա սկսուել ու աւարտուել է 5 օր առաջ: Ինչպէս էլ հաշուելու լինենք, ստացուում է, որ Անգղի ելոյթը տեղի է ունեցել ոչ շուտ քան նոյեմբերի վերջերին, սակայն նոյն հաւանականութեամբ այդ ժամկէտը հնարաւոր է տեղափոխել դեկտեմբերի մէջ: Իսկ յունուարի 6-ին Հայերը արդէն նշում էին Վարդան Մամիկոնեանի յաղթանակը Աղուանքում: Ստորեւ կը վարդան Մամիկոնեանի յաղթանակը Աղուանքում: Ստորեւ կը տեսնենք, որ այդ երկու ժամկէտների միջեւ այնքան դէպքեր են եղել, որ անգամ մէկ ամսուայ տեւողութիւնը բաւական չէր լինի դրանք ընդգրկելու: Աւելին՝ ըստ Եղիշէի՝ Անգղի դէպքերից յետոյ Հայերը մի հրովարտակ են ուղարկում բիւզանդական թէոդոս կայսրին: Դեսպանները ընդունուում են կայսեր կողմից եւ ինչ-որ ժամանակ հետը բանակցութիւններ վարում: Ինչպէ՞ս համաձայնեցնել այդ փաստը եւ չորրորդ ամսուայ յիշատակութիւնը: Եղիշէն սխալուել չէր կարող. այդ դէպքերը նկարագրելիս նա օրերով է հաշուում ժամանակը [Եղ., էջ 70. նկարագրելիս նա օրերով է հաշուում ժամանակը [Եղ., էջ 70. 13, 80. 8], մինչդեռ հակասութիւնը ակնյայտ է: Մնում է ենթադրել, որ սոյն տեղում բնագիրը աղճատուած է. չորրորդի փոխարէն մի ուրիշ բառ է եղել, ասենք, հայկական որեւէ այլ ամսուայ անուն: Այսպէս թէ այնպէս պարզ է, որ Անգղի

դէպքերը նոյնմբեր-հոկտեմբերով թուագրել անհնարին է. դրանք պիտի տեղի ունեցած լինէին ամիսներ առաջ: Ղազար Փարպեցու տուեալները հաստատում են այդ միտքը: Նրա ասելով, մոզերի գործունէութիւնը Հայաստանում սկսուել էր արդէն ամուսնը, գարնանն էր վերադարձել նաեւ Վարդան Մամիկոնեանը, իսկ Անգղի ընդհարումը եղել է շոգ ամիսներին («հասեալ ամիսք տօթոյն ջերմութեան»): Հէնց այդ ժամանակ է Անգղին մօտեցել սպարապետը: Ամուսնը նա մնացել է նոյն Անգղում («դադարէին անդէն գաւուրս տօթոյն»), ապա մասնակցել Աղուանքի պատերազմական գործողութիւններին [Ղազ. Փարպ., էջ 60. 18-19, 63. 8)]¹⁶:

Անգղում հայերն առաջին անգամ բացայայտ կերպով դիմադրեցին պարսից իշխանութեանը: Ապստամբութեան գաղտնի ծրագրերն իրականացուած էին առանց հեղինակների անմիջական մասնակցութեան: Այդ առաջին, տարերային բնոյթ կրող ելոյթը կարծես սարսափեցրեց հայերին: «Հայոց աշխարհի բոլոր կողմերից տղամարդկանց ու կանանց մեծ բազմութիւն հասաւ նոյն տեղը: Պէտք էր տեսնել, թէ ինչպիսի աղէտալի իրարանցում ընկաւ. ոմանք աղբիւրի պէս հորդ արտասուք էին թափում իրենց աչքերից. ուրիշները բարձր ճչալով կարծես թէ երկինք էին դողացնում, իսկ կէսն էլ, խիզախելով ու դէպի գէնքը վազելով, նախընտրում էր մեռնել, քան թէ ապրել...» [Եղ., էջ 58. 21-59. 4]: Բայց պոռթկումը կայացել էր. նահանջելու ուղի այլեւս չկար:

Մինչդեռ կրակապաշտութեան բռնի տարածումը շարունակուած էր, մոզերի ջարդը Անգղում եւ Զարեհաւանում միջադէպ էր եղել: Ճիշտ է, մոզպետին տագնապ էր պատել. ուզեցել էր իբր յայտնել արքունիքին, որ մոզութեան հաստատումը Հայաստանում անյոյս բան է, այդ երկրում հասնել ինչ-որ նպատակի կարելի է միայն քաղցր խօսքով¹⁷:

Եւ միաժամանակ մարզպանը «սկսեց մոզեր բաժանել նախարարների տները եւ մեծամեծ ոռճիկներ նշանակել, կենդանիներ գոհել եւ բռնութեամբ ստիպել կնքուած մարդկանց, որ գոհուած միա ուտեն եւ արեգակին երկրպագութիւն տան»: Մէկ օր էլ փշտիպանների¹⁸ կանայք հանգցրին եկեղեցու ճրագները եւ յարձակուեցին կոյսերի վրայ [Եղ., էջ 64. 23-65. 4]: Ատրուշաններ կանգնեցրին Արտաշատում եւ Հայոց երկրի այլ տեղերում: Հետագայում, երբ երկիրն արդէն խաղաղուել էր, մի շարք անուանի եկեղեցականներ խիստ տուժեցին այդ ատրուշանները քանդելու եւ կրակի պաշտօնեաներին հալածելու համար [Եղ., էջ 129-130]: Մոզերը ապաւինել էին այն զօրագնդին, որը եկել էր Պարսկաստանից. հարկաւոր էր այդ ուժը ապստամբների կողմը քաշել կամ առնուազն չէզոքացնել: «Եպիսկոպոսները,– ասում է Եղիշէն,– աղաչում էին Վարդան Մամիկոնեանին (որն, ըստ երեւոյթին, գնդի հետ էր) դիմել կտրուկ միջոցներին»: Այդ կոչին արձագանքեցին նաեւ միւս նախարարները՝ «ոչնչի տեղ դրին արքունի պարգեւները եւ ոտնատակ տուին ահուելի հրամանները»: Իրենց զօրամասերով շրջապատեցին բանակը, «շատերին կոտորեցին, էլ աւելի շատերին երեւելի մարդկանցից կապեցին եւ ամուր բերդերում բանտարկեցին իրենց իշխանութեան տակ: Եւ բանակի կողոպուտը, թալանն ու աւարը մի տեղ ժողոված պահուած պահանջում էին իբր թագաւորի հրամանով [Եղ., էջ 65-66]: Ձերբակալեցին նաեւ մարզպանին,– շարունակում է Եղիշէն,– Վասակն ապաշխարեց, երդումներ տուեց եւ այսպիսով միաբանեց նրանց, որոնք հրաժարուել էին ճանաչել պարսից իշխանութիւնը եւ դուրս էին եկել նրա դէմ»:

Ղազար Փարպեցին այլ կերպ է ներկայացնում իրավիճակը. նա ոչինչ չգիտէ մոզերի յենարան բանակի դէմ գրոհելու մասին, իսկ միաբանութիւնը Վասակի հետ ներկայացնում է

որպէս խաղաղ մի գործողութիւն [Ղազ. Փարպ., գլ. ԼԳ]: Այնուամենայնիւ, երկու հեղինակների ասածը էականում համընկնում է՝ Վարդան Մամիկոնեանը ապստամբների շարքերում է, նրան է միացել (կամայ թէ ակամայ) նաեւ Վասակ Սիւնին: Ըստ երեւոյթին, հէնց այդ շրջանում Վարդանին ճանաչեցին գլխաւոր ղեկավար: Աւարայրի նախօրեակին նա կը յիշեցնէ իր մարտակիցներին՝ դուք ձեր կամքով եւ յօժարութեամբ կարգեցիք ինձ առաջնորդ եւ ղեկավար [Եղ., էջ 101. 19-20]:

Շարժումն աւելի ու աւելի էր ծաւալւում: Դուրս շարժուելով պարսիկներին՝ ապստամբները գրաւեցին Արտաշատը, Գառնին, Անին⁴, Արտազերսը եւ մի շարք ավաններ՝ նրանց շրջապատող գիւղերով եւ ավաններով: Զայրոյթն ուղղուած է եղել ոչ միայն եկուորների դէմ: Եղիշէն ասում է, որ «տղամարդկանց ու կանանց գերի տարան իրենց գոյքերով ու ստացուածքներով, թանկագին գանձերով ու կահ-կարասիով: Տապալում-քանդում էին նրանց շէնքերը եւ հրկիզում էին կրակի պաշտամունքի տեղերը»: Խօսքն, անշուշտ, կռապաշտութիւն ընդունած տեղացիների մասին է: Ապստամբական շարժումը գնալով դրսեւորում էր նաեւ քաղաքացիական պատերազմին յատուկ գծեր. ո՞վ պիտի առաջնորդէր ապստամբ հայրենակիցներին:

Հայաստանի քաղաքական հորիզոնում երկու անձնաւորութիւն էին երեւում, որոնք կը կարողանային ղեկավարել տարբերային ձեւով սկսուած շարժումը՝ դա սպարապետ Վարդան Մամիկոնեանն էր եւ մարզպան Վասակ Սիւնին: Ասացինք, որ Վարդանը, ապաշխարելով, կրկին ճանաչուեց քրիստոնեայ, հրաժարուեց գաղթելու մտքից եւ մնաց երկրում: Սպարապետը,

⁴ Ապագայ հռչակատր մայրաքաղաքի առաջին յիշատակութիւնն է հայ գրականութեան մէջ:

կարծես, պիտի մասնակցած լինէր վերեւում նշուած երեւոյթներին, բայց առայժմ նա մնում է ստուերի մէջ:

Մինչդեռ մարզպանը գործունեայ է եւ շատ բարդ խաղ է վարում: Համոզում է, որպէսզի սպարապետը չլքի երկիրը, մասնակցում է գաղտնի ծրագրերին, կամաւոր կերպով թէ ճնշման տակ ապաշխարում, եւ եկեղեցին, հանելով իր բանադրանքը, նրան կրկին քրիստոնեայ է ճանաչում: «Մարզպանն,– ասում է Եղիշէն,– խառն էր մոգերի կոտորածին Զարեհաւանում», բայց դա կը պարզուի միայն հետագայում, երբ Վասակը կ'երեւայ դատական ատեանի առջեւ: Այդ օրը, որպէս վկայ, ներկայ էին հէնց կապանքներից ազատուած մոգերն ու փշտիպանները: Նրանք հաստատեցին «այն բոլոր անցքերն ու չարչարանքները, որոնք անցան մեր գլխով, եւ այն բազմաթիւ հարուածները, որ թափուեցին արքունի զօրքի վրայ, եւ Հայոց աշխարհի աւերն ու գերութիւնը, այլեւ արքունի հարկերի կորուստը. այդ բոլոր չարիքների սկզբնապատճառն ու առաջնորդն այդ մարդը եղաւ» [Եղ., էջ 132-133]: Վասակին մեղադրում էին, որ գող դուրս եկաւ, իւրացրեց այն հարկերը, որոնք պիտի տարուէին Պարսկաստան: Սակայն այդ բոլորը պարզուեց հետագայում, առայժմ մարզպանը (գոնէ արտաքննապէս) մնում է արքունիքի հաւատարիմ ծառայ: Ինքն է համոզում մոգպետին (Անգղից յետոյ) դիմել կտրուկ միջոցների: Ասացինք, որ մոգերին բաժանեց նախարարների տները, իր դիրքն ապահովելու համար Սիւնիքից կանչեց իրեն ենթակայ զօրականներին. պահանջեց, որպէսզի Աղուանքում եղած 10.000-ոց այրուծին ձմեռն անցկացնի Հայաստանում: Սեփական ուժերի եւ Աղուանքից սպասելի զօրքի օգնութեամբ մտադիր էր ապահովել մոգութեան տարածումը:

Մարզպանի հաւատարմութիւնը արքունիքին ինչ-որ չափով ապահովագրուած էր. նրա երկու որդիները պատանդ էին

մնացել Տիզբոնում (սրանց ապագայ ճակատագիրն անյայտ է): Բայց Սիւնեաց իշխանը մերժում է անձայն ստրուկի դերը, հակառակ սպասածին. ինքն է թելադրում մոզպետին, թէ ինչ է հարկաւոր անել ներկայ պայմաններում: Վասակը լի է եռանդով: Ասացինք, որ բանակցութիւնները Վարդանի հետ նրա նախաձեռնութեամբ են եղել: Նա ջանք չի խնայում հայրենակիցներին քաշելու իր կողմը, ոմանց խաբում է գոյքով, ոմանց՝ յորդորական խօսքերով, իսկ ուամիկներին սպառնում-վախեցնում է [Եղ., էջ 63. 23-24]: Արքունիքից շատ դրամ է բերել եւ սրան-նրան կաշառում էր, իբր թէ պարզեւ ու պատիւ է տալիս: Նախարարութեան մի զգալի մասը ենթարկւում է Վասակին. մարզպանը փորձեց իրեն կապել նաեւ սպարապետին, կարծես թէ այստեղ էլ յաջողակ գտնուեց:

Եղիշէն պնդում է, որ Վասակը «սրտանց էր ընդունել պարսկական կրօնը», իսկ եպիսկոպոսները խորշում էին նրանից [Եղ., էջ 62. 14-15, 63. 21-28, 64. 12-13, 20-21]: Այնուամենայնիւ, մինչեւ ձմեռ մարզպանն էր մնում Հայոց երկրի քաղաքական առաջին դէմքը: Նա պահպանեց իր դիրքն ինչպէս այն շրջանում, երբ բացայայտ չէր միացել ապստամբութեանը (եւ ամէն ինչ անում էր, որպէսզի ցրի արքունիքի հնարաւոր կասկածները), այնպէս էլ հետագայ մի քանի ամիսների ընթացքում, երբ այդ կասկածները արդէն լիովին արդարացան:

Մինչ հետագայ դէպքերին անդրադառնալը, մէկ անգամ եւս ընդձեռնք Ե դարում ապստամբական շարժումների էական մի կողմը: Արդէն մի քանի անգամ առիթ ենք ունեցել ցոյց տալու, որ Սասանեան լծի տակ էին ընկել մի շարք ժողովուրդներ, որոնք ունեցել են սեփական դէմք, սեփական մշակոյթ, ուստի եւ դիմադրել են արքունիքի համահարթող ուժին: Այդ տեսակէտից հայերը, վրացիները, աղուանները նոյն դիրքն էին գրաւել, չնայած դիմադրութիւնը տարբեր թափ էր ստացել,

տարբեր եղանակով արտայայտուել: Դրացի ժողովուրդների ընդհանուր ճակատագրի գաղափարը առկայ է Եղիշէի ստեղծագործութեան մէջ, բայց առաւել ցայտուն այն դրսեւորուել է Ղազար Փարպեցու մօտ, որն ականատես է եղել նաեւ երկրորդ մեծ ապստամբութեանը եւ ընդհանրացնելու առատ նիւթ ունեցել: Նրա հեղինակած պատմութեան մէջ Հայք, Վիրք, Աղուանք երրորդութիւնը հանդիպում է ամէն քայլափոխում: Պարսից արքունիքը լաւ էր ըմբռնել այդ միասնութիւնը, հասկացել էր նաեւ, որ, թուլացնելով օղակներից մէկը, կը թուլանայ ամբողջ շղթան: Ուրուագծելով Արեաց աշխարհի նուաճումների ծրագիրը՝ Միհրնեստէս մեծ հազարապետը իբր ասել է Յազկերտ արքային. «Երբ Հայքը հաստատապէս կը լինի մերը, Վիրքն ու Աղուանքը մերն են ու մերը» [Ղազ. Փարպ., էջ 43. 8-9]: Պարսից ծրագրի տապալումը Հայաստանում ուղղակի թէ անուղղակի թուլացրեց արքունիքի դիրքը նաեւ հարեւան երկրներում: Բայց դրան նախորդել է լարուած դիմադրութիւն, եւ այդ դիմադրութեան դրուագներից մէկը եղել է Վարդան Մամիկոնեանի պատերազմը Աղուանքում:

Հայերը շարունակում էին կործանել ատրուշանները եւ պատերազմել կրակապաշտութիւն ընդունած հայրենակիցների դէմ, երբ Հայաստան ժամանեցին Աղուանից երկրի հազարապետը եւ գլխաւոր եպիսկոպոսը: Նրանք պատմեցին, թէ հոնների դէմ ուղարկուած Պարսից զօրքը մտաւ Աղուանք, նրան միացաւ նաեւ արքունիքից եկած այրուձին: Աղուանից երկրում երեւացին թուով 300 մոզեր եւ սկսեցին այն, ինչ որ առժամանակ առաջ փորձեցին անել Հայաստանում, այսինքն՝ կրակատներ հիմնել, պարսից կրօնը տարածել: Թագաւորի հրամանով անհնազանդները ենթակայ էին մահուան պատժի, իսկ նրանց կանայք ու որդիները պիտի աքսորուէին եւ ստրկական աշխատանք կատարէին արքունի կալուածքներում:

Ստանալով այդ լուրը՝ Հայերը իրենց ուժերը բաժանեցին 3 գնդի: Առաջին գունդը յանձնուեց Ներշապուհ Ռմբոսեանին: Այդ գունդը շարժուեց դէպի Ատրպատականի սահմանները: Երկրորդ գունդը տուեցին Վարդան Մամիկոնեանին, որը Վրաց աշխարհով՝ Գուգարքով պիտի անցնէր Աղուանք¹⁹: Երրորդ գունդը մնաց Վասակ Սիւնուն: Մարզպանը մտադիր էր իր Հայրենի Սիւնիքից նեղել Աղուանք մտած պարսիկներին:

Վարդանը սկսեց շարժուել դէպի Աղուանք, սակայն մինչ այդ նա մասնակցեց կարեւոր (չնայած եւ ապարդիւն) քաղաքական մի քայլի: Եղիշէն պատմում է, որ հէնց այն ժամանակ, երբ Հայերը ելք էին որոնում դրացիներին օգնելու Համար, նրանք Արեւմուտք ուղարկեցին մեծ նախարարներից մէկին՝ Ատոմ Գնունուն: Ատոմը պիտի ներկայանար Թէոդոս կայսրին, Հաղորդէր արքայից արքայի չար մտադրութիւնների մասին, Հաւաստէր պարսիկներին դիմադրելու Հայերի պատրաստակամութիւնը եւ, վերջապէս, օգնութիւն եւ օժանդակութիւն խնդրէր: Պատուիրակը լիազօրուած էր կայսրին յայտնելու նրա ծառայութեան տակ մտնելու Հայերի յօժարութեան մասին:

Ատոմը Հրովարտակը յանձնեց կայսերը: Գրութիւնը կազմուած է եղել Յովսէփ եպիսկոպոսի (եւ բազմաթիւ եպիսկոպոսների), մարզպան Վասակի, Ներշապուհ Ռմբոսեանի, սպարապետի եւ բոլոր մեծամեծ նախարարների անունից: Նրանք փառաբանում էին կայսեր նախնիներին, ակնարկում Հռոմէական կայսրութեան գերագոյն իշխանութիւնը Հայաստանի վրայ, յիշեցնում, որ Հայոց Տրդատիոսը, փրկուելով իր հօրեղբայրների ձեռքից, ապաստան էր գտել Յունաց երկրում եւ յոյների օգնութեամբ տիրացել իր աշխարհին: Քրիստոսի Հաւատն ընդունած է եղել Հռոմի եպիսկոպոսապետից, լուսաւորել Հիւսիսի խաւար կողմերը, իսկ այժմ Արեւելքի խաւարաւէր որդիներն ուզում են այդ երկիրը խլել: Հայերը դիմադրում են՝ ապաւինելով յոյների պաշտ-

պանութեանը, զգուշացնում, որ եթէ օգնութիւնն ուշանայ, «գուցէ այս կրակի բոցը ուրիշ շատ աշխարհների էլ հասնի» (վերջին խօսքերով ակնարկում էին, որ նոյն վտանգը կարող է սպառնալ նաեւ Յունաց երկրին)²⁰:

Ատոմ Գնունուն դեսպանութիւնը որեւէ արդիւնք չունեցաւ: Թէոդոս կայսրը տատանումների մէջ էր, փորձում էր, ասում է Հեղինակը, խաղաղ միջոցներով ապահովել Արեւելքի եկեղեցիները: Բայց շուտով նա մեռաւ, եւ օգնութիւնը խափանուեց:

Թէոդոսին յաջորդեց Մարկիանոսը. սա դիմեց մեզ արդէն ծանօթ Անատոլիոսին եւ Եղիարիոս (կամ, ինչպէս Փարպեցին է ասում, Փլորենտիոս) ասորուն եւ այդ աճարգԱերի եւ վաստարԱերի խորհրդով ետ կանգնեց Հայերի գործից, աւելին՝ դաշինք կնքեց պարսիկների հետ՝ խոստանալով չօգնել Հայերին ոչ իսկ զէնքով [Եղ., էջ 72-73]:

Այդ նոյն դէպքերը Ղազար Փարպեցին ներկայացնում է մի փոքր այլ ձեւով: Երբ յայտնի դարձաւ, որ պարսիկները մտել են Աղուանք, մարզպան Վասակը նրանց դէմ ուղարկեց Վարդան Մամիկոնեանին, իսկ ինքը սկսեց նամակներ յղել կայսերը եւ Յունաց ողջ աւագանուն, ապա Բիւզանդական Հայաստանի իշխաններին եւ կողմնակալներին, Անտիոքի մեծ սպարապետին (այսինքն՝ Անատոլիոսին): Նամակները տարան Վահան Ամատունին, Վարդան Մամիկոնեանի եղբայր Հմայեակը եւ մի շարք այլ ազնուականներ (Ատոմ Գնունին այդ ցուցակում չկայ) [Ղազ. Փարպ., գլ. ԼԳ]:

Աւարայրի ճակատամարտից յետոյ ապստամբներից շատերը հաւաքուել էին Տայքում եւ Հմայեակ Մամիկոնեանի ղեկավարութեամբ շարունակում էին դիմադրել պարսիկներին: Հեղինակը խօսում է 451 թ. երկրորդ կիսի անցքերի մասին: Նա յիշեցնում է, որ Հմայեակը կայսեր մօտ գնացած է եղել զօրք խնդրելու,

երկար ժամանակ մնացել Յուդայաց երկրում («ինչպէս այդ մասին գրուած է իր տեղում»,– աւելացնում է Հեղինակը՝ վկայակոչելով անշուշտ իր աշխատութեան ԼԳ գլուխը): Այնուհետեւ նա մօտաւորապէս նոյն բանն է ասում, ինչ որ եւ Եղիշէն. Թէոդոսը ուզում է օգնել, բայց վախճանւում է. Անատոլիոսը եւ Փլորենտիոսը Համոզեցին նրա յաջորդ Մարկիանոսին հրաժարուել որեւէ օգնութիւնից, հաւատարիմ մնալ պարսիկների հետ կնքած դաշինքին եւ այլն: Պատասխանն այնքան ուշացաւ, որ պարսիկների եւ հայերի պատերազմն արդէն աւարտուեց: Յուդայաց աշխարհ գնացած տանուտէրերը եւ նախարարները ոչ մի օգուտ չքաղեցին եւ վերադարձան, որպէսզի իրենց ընկերների հետ ըմպեն մարտիրոսութեան բաժակը [Ղազ. Փարպ., գլ. ԽԱ]:

Նամակի բովանդակութիւնից եւ պատմիչների հաղորդումներից կարելի է անել ժամանակագրական կարեւոր հետեւութիւններ: Յայտնի է, որ Թէոդոսը վախճանուել է 450 թ. յուլիսի 28-ին, իսկ նրա յաջորդը կայսր է հռչակուել օգոստոսի 24-ին: Ժամանելով Բիւզանդիա՝ պատուիրակութիւնը ինչ-որ ժամանակ անց է կացրել մայրաքաղաքում դեռեւս Թէոդոսի օրօք, բացի այդ, Այրարատից դէպի Կոստանդնուպոլիս ճանապարհորդութիւնը ժամանակ է պահանջել: Սխալուած չենք լինի, եթէ ենթադրենք, որ խնդրոյ առարկայ հրովարտակը ստորագրուած է Թէոդոսի մահուան օրուանից շաբաթներ առաջ՝ յունիսին կամ յուլիսի սկզբներին: Հէնց այն ժամանակ էլ լուր էր եկել Աղուանքի ծանր կացութեան մասին, եւ Հայոց զօրագունը Վարդան Մամիկոնեանի գլխաւորութեամբ սկսել էր արշաւը դէպի հարեւան երկիրը:

Հետագայում, երբ Վասակը ներկայացաւ դատական ատեանի առջեւ ի թիւս միւսների, յիշեցին նաեւ այդ յանցանքը: Դուրս գալով առաջ՝ Ատոմ Գնունին մարզպանին մեղադրեց

«Հէնց այն հրովարտակով, որ նա տուել էր՝ կնքած իր մատանիով» [Եղ. էջ 133. 4-7]:

Ինչ վերաբերում է Ղազար Փարպեցու տարբերակին, ապա պատմիչը շփոթել է Թէոդոս կայսեր անունով գրուած հրովարտակը Բիւզանդիա ուղարկուած մի ուրիշ թղթի հետ, որը ստորագրել էր մարզպանն անձամբ: Այդ մասին մենք դեռ կը խօսենք, իսկ այժմ վերադառնանք Աղուանք աշխարհ՝ Վարդան Մամիկոնեանի գործերին:

Նրա հակառակորդը եղել է Սեբուխտ Նիխորական մարզպանը: Կանխելով Հայոց զօրքի շարժումը՝ նա թողեց Ճորայ Պահակը, անցաւ Կուր գետը եւ մօտեցաւ Աղուանից թագաւորների ձմեռոց Խաղխաղին²¹: Պարսից ուժերը գերազանցում էին Հայոց գնդին թէ՛ քանակով, թէ՛ սպառազինութեամբ: Այնուամենայնիւ, յաղթանակ տարան հայերը, եւ դա առիթ եղաւ, որպէսզի Եղիշէն, խիստ հետեւելով վիպական կանոններին, փառաբանի հայ զօրականների խիզախութիւնը [Եղ., էջ 75-77]:

Հայերը գրոհում էին Աղուանքի բերդերն ու քաղաքները, ուր փորձել էին ամրանալ պարսիկները, ջարդ տալիս մոգերին: Վերադարձան Կովկասեան լեռները փախած աղուանները՝ «նրանց հետ միաբան եւ հաւասար մասնակցեցին քաջութեան գործին»,– գրում է պատմիչը: Յարձակում կատարեցին Հոնաց կամ Ճորայ Պահակի վրայ, որը եղել է պարսիկների յենարաններից մէկը, գրաւելով այն՝ այնտեղ նստեցրին Վահանին (պատկանել է Աղուանից թագաւորների տոհմին) [Եղ., էջ 78. 5]:

Վահանը բանակցութիւններ սկսեց հոների հետ: Նրանք պարսիկների համար մեծ վտանգ էին ներկայացնում, վտանգաւոր էին նաեւ Բիւզանդական կայսրութեան համար: Բիւզանդացիք յատուկ գումար էին վճարում Պարսից թագաւորին, որպէսզի սահմանը ապահովի քոչուորների ներխուժումներից: Մինչդեռ

նրանք շարունակ խախտում էին սահմանը: Եղիշէն ասում է, որ Հէնց այն ժամանակ, երբ Հայերը հալածում էին իրենց հայրենիքում բուն դրած մոգերին, «աշխարհի արեւելեան կողմից ոմանք յարձակուեցին Ատրպատական աշխարհի վրայ եւ զանազան տեղերում մեծ վնասներ տուին՝ բազմաթիւ ատրուշաններ առնելով, աւերելով ու կործանելով» [Եղ., 69. 18-21]: Արդեօ՞ք այդ ոմանք հոներից էին: Այսպէս թէ այնպէս, Վահանի դեսպանութիւնն աւարտուեց կատարեալ յաջողութեամբ: Կողմերը դաշինք կնքեցին, ապստամբները (հայերը եւ աղուանները) հիւսիսից իրենց ապահովուած զգացին: Եւ այդ ժամանակ պարզուեց, որ վտանգը բուն է դրել Հէնց Հայոց երկրում:

Վարդանն իր զօրքով դեռեւս Աղուանքում էր, երբ լուր հասաւ, որ Վասակն անջատուել է, գրաւել Հայոց երկրի միջնաշխարհը: Ստանալով այդ լուրը՝ սպարապետը շտապեց հայրենիք՝ 30 օրում կտրելով Աղուանքից Հայաստան տանող ճանապարհը: Իմանալով այդ մասին՝ Վասակը դիմեց փախուստի, ամրացաւ Սիւնիքում: Չմեռ էր. թշնամին իր հետ տարել էր կամ ոչնչացրել պաշարը: Վարդանն իր զինուորներին տեղաւորեց տարբեր գաւառներում, իսկ ինքը մի քանի աւագ նախարարների հետ մնաց թագաւորամիտ տեղերում՝ ոստանում: Զօրավարն ու բանակը սպասում էին գարնան օրերին, որպէսզի շարունակէին պայքարը դրսի թշնամու դէմ: Իսկ մարզպանի հետ ծագած ընդհարումը վերածուեց կատարեալ պատերազմի:

Ինչպէս 450-451, այնպէս էլ 482-484 թթ. ապստամբութիւնները եղել են խոշոր շարժումներ, ընդգրկել մասնակիցների լայն զանգուածներ: Ապստամբների միասնութիւնն անհնարին էր. անհամաձայնութեանը նպաստել էին ե՛ւ տեղային առանձնայատկութիւնները, ե՛ւ դասային բարդ կազմը, ե՛ւ նախարարական տոհմերի միջեւ եղած մրցակցութիւնն ու թշնամանքը:

Զարմանալի չէ, որ հերոսական պայքարի հետ մէկտեղ տեղի է ունեցել դաւաճանութիւն, դասալքութիւն եւ այլն: Որչափ խոշոր է լինում պատմական երեւոյթը, նոյնչափ սուր՝ նրան կից հակասութիւնները:

Բայց հակասութիւնների այդ հանգոյցում նշմարուում է, այնուամենայնիւ, քաղաքական երկու հիմնական ուղղութիւն, որոնցից մէկը մարմնաւորում է Վարդան Մամիկոնեանը, միւսը՝ Վասակ Սիւնին: Պատմիչները նրանց կերպարները կերտել են այն շրջանում, երբ Վարդանանքն աւարտուել էր, նրա հետեւանքները պարզուել, անցեալի վերաբերեալ հասարակական կարծիքը ձեւաւորուել: Եւ յետագարձ հայեացք ձգելով դէպի անցեալը՝ պատմիչները դիտել են պատճառները՝ ինչ-որ չափով ելնելով դրանց հետեւանքներից:

Վարդանի կերպարը պարզ է, յստակ: Մանուկ հասակից իւրացնելով Սուրբ Գիրքը՝ նա մէկ անգամ է միայն շեղուել նրա պատուիրանից՝ Տիգրանում առերես ուրանալով իր հաւատը: Վերադառնալով Հայոց երկիրը, զգալով իր յանցանքի ծանրութիւնը՝ որոշել էր հեռանալ Յունաց կողմերը, բայց մնացել էր հայրենիքում եւ ապա հետեւողականօրէն պայքարել Պարսից իշխանութեան դէմ ինչպէս Հայաստանում, այնպէս էլ Աղուանից աշխարհում: Նահատակուեց Աւարայրի ճակատամարտում, ճանաչուեց սուրբ եւ Հէնց այդ պսակով մուտք գործեց Հայոց հին գրականութիւն:

Սպարապետի համեմատութեամբ, մարզպանի կերպարը շատ աւելի բարդ է: Սիւնեաց քաջ իշխանի երբեմնի բնութագիրը «այր խորհրդական եւ հանճարեղ եւ առաջիմաց, շնորհատուր իմաստութեամբն Աստուծոյ» [Կոր., էջ 62. 2-4], մոռացուած է իհարկէ ընդմիջաւ: Տիգրանում Վասակի ուրացութիւնը եղել է սրտանց, Վարդանին միացել է իր կամքին հակառակ, Անգղի դէպքերից յետոյ չար մտքեր ներշնչել մոգպետին, ապա դաղտ-

նի բանակցութիւններ վարել պարսիկների հետ, ապստամբել Վարդանի դէմ, Աւարայրի ճակատարմարտին մասնակցել հակառակորդի կողմից, այնուհետեւ արքունի դատի տրուել ու կեանքն աւարտել զնդանում: Սեւ զոյները խտացնելով՝ պատմիչները հաւանաբար ձգտել են կերտել Վարդանի հակապատկերը, բայց դա նրանց չի յաջողուել: Նրանք կը հասնէին իրենց նպատակին, եթէ Վասակին ներկայացնէին որպէս թագաւորի դրածոյ, արքունիքի հլու կամակատար: Մինչդեռ Վասակն իր սեփական գիծն է բռնել, եւ այդ կարեւոր հանգամանքն արձանագրել են պատմիչները՝ նրանք, որոնց համար այդ գիծը եղել է միանգամայն մերժելի: Վարդանանց ապստամբութեան եւ սկիզբ առած քաղաքացիական պատերազմի անցքերը հասկանալու համար առաւել կարեւոր է ճիշտ մեկնաբանել Վասակ Սիւնու բռնած դիրքը:

Մենք տեսանք, որ Վասակը սկսեց գործունէութիւն ծաւալել Տիզբոնից անմիջապէս յետոյ. Վարդանին պահեց երկրում: Ամենայն հաւանականութեամբ, նա անհրաժեշտ էր համարել արքունիքին ցուցադրել Հայոց երկրի ռազմական ուժը. առանց Մամիկոնեան սպարապետի այն, անշուշտ, թերի կը լինէր: Վարդանն, ըստ երեւոյթին, թերահաւատ է եղել Վասակի նկատմամբ: Պատմիչներից իւրաքանչիւրը իւրովի է ներկայացնում, թէ սպարապետն ինչպէս ապստամբութեան որոշում ընդունեց, բայց երկուսի պատմածից էլ պարզ է, որ նա չէր շտապում այդ մասին յայտնել մարզպանին:

Կ'անցնի մէկ թէ երկու տարի, եւ դատավարութեան ընթացքում կը պարզուի Վասակի մասնակցութիւնը Անգղի-Ջարեհաւանի դէպքերին: Իսկ առայժմ մոգպետն ու մարզպանը միասին ելք են որոնում առաջացած ճգնաժամից դուրս գալու համար: Վասակը միջոցառումների ծրագիր է ներկայացնում՝ խոստանալով միաժամանակ երկփեղկել Եկեղեցու ուխտը [Եղ., էջ 63. 9-

10]: Իսկ երբ Վարդանը զօրքով մեկնում է Աղուանք, Վասակն այդ մասին անմիջապէս յայտնում է Սեբուխտ մարզպանին՝ նշելով, որ սպարապետի զօրքը փոքրաթիւ է, նրան դժուար չի լինի ջարդել: Եւ, վերջապէս, բանակցութիւններ է վարում մեծ հազարապետ Միհրնեբսեհի հետ, որը ժամանել էր Փայտակարան քաղաքը եւ այնտեղից էր հետեւում ապստամբութեան ընթացքին: Միհրնեբսեհի անձնաւորութեան, նրա մեծ ուժի մասին ասուեց վերեւում: Այժմ, Պարսից իշխանութեան համակարգում այդպիսի դիրք զբաւող պաշտօնեան հաւանութիւն է տալիս Վասակի գործունէութեանը, խրախուսում նրան, անգամ ակնարկում, որ Վասակին վայել է թագաւորական վիճակի հասնել: Եւ ահա, մարզպանն ու թագաւորը դառնում են դաշնակիցներ: Մարզպանը պիտի չէզոքացնի սպարապետին, իրացնի Պարսից քաղաքականութիւնը Հայաստանում:

Եթէ մենք մնանք թուարկուած փաստերի սահմաններում, այսինքն՝ հետեւենք Եղիշէի սխեմային, ապա Վասակի բռնած նոր դիրքը պիտի բացատրենք վերջինիս ներքին յատկութիւններով, հրաժարուենք նրան որպէս քաղաքագէտի դիտելու մտքից: Մինչդեռ նա խորամանկ եւ ճկուն քաղաքագէտ էր, եւ նրա էությունից համար հարկաւոր է հաշուի առնել մի կարեւոր հանգամանք, այն է՝ Պարսից կառավարութեան ինչ-որ չափով փոխուած քաղաքականութիւնը:

Իմանալով Հայաստանում եւ Աղուանքում տեղի ունեցած դէպքերի մասին՝ Յազկերտն իբր զղջացել էր, ամբողջ մեղքը դրել խորհրդատուների վրայ եւ յայտարարել, որ ամէն մէկը կարող է հետեւել իր նախընտրած դաւանանքին, երբեմնի իրաւունքներն ու արտօնութիւնները վերականգնուած են: «Ամենեւին մտքովս չեմ անցկացնի վրէժխնդիր լինել: Ինչպէս առաջները ճշմարտութեամբ պահում էիք ձեր կրօնը, այսուհետեւ աւելի պահեցէք. միայն թէ մեր ծառայութիւնից դուրս մի գաք» [Եղ.,

էջ 82-86]: Բայց Յազկերտը շուտով իմացաւ, որ հոռոմները ոչնչով չեն օգնելու քրիստոնեաներին, եւ վերադարձաւ իր նախկին ծրագրերին:

Այսպիսով, ինչ-որ ժամանակ Յազկերտը յետ էր կանգնել իր հին նպատակից. թւում է, որ մարզպանը հէնց այդ ալիքի վրայ բարձրացաւ: Ծիշտ է, Եղիշէն ասում է, որ Վասակը (ո՛րերորդ անգամ) ուրացաւ քրիստոնեայ հաւատի սկզբունքները, դարձաւ սատանայի գործիք եւ այլն: Բայց ուշադրութիւն դարձրէք նոյն Եղիշէի հետեւեալ հատուածների վրայ. «Եւ իր ամբողջ երկիրը լիովին ապստամբեցրեց եւ ուրանալ տուեց ոչ միայն բազմաթիւ աշխարհականների, այլեւ շատերին Եկեղեցու սուրբ ուխտից, մանաւանդ սուտ երէցների միջոցով, որոնց ձեռքով գործում էր այն չարիքները... Սրանց ուղարկում էր անմեղ մարդկանց մօտ, խաբում էր ու մոլորեցնում. երգւում էին սուրբ Աւետարանով եւ ասում, թէ՛ «Թագաւորի կողմից ամենքին պէտք է շնորհուի քրիստոնէութիւնը»: Եւ այսպէս խաբէութեամբ շատերին անջատում էին սուրբ միաբանութիւնից, տանում ու խառնում էին ուրացողների խմբերին» [Եղ., էջ 92. 14-22]: Ազատների եւ շինականների հետ միասին Վասակը իր յետեւից էր տանում նաեւ նրանց, ովքեր միայն անունով էին քահանայ [Եղ., 91. 24-25]: Այդպիսի սուտ քահանաների օգնութեամբ «խաբում ու մոլորեցնում էր, ինչպէս ճշմարիտ մարդկանցով. Աւետարանն էր ուղարկում խաչի հետ միասին, եւ իր ամբողջ սատանայական ստութիւնը ծածկում էր նրանցով: Իրեն եւ բոլոր ուրացողներին աստուածապաշտների կարգն էր դասում. իրեն աւելի հաստատուն էր ցոյց տալիս, քան ամբողջ Հայոց զօրքը. երգւում էր ու հաստատում եւ ցոյց էր տալիս արքունիքից ստացած թողութեան բոլոր հրամանները» [Եղ., էջ 93. 18-22, 94. 1-2]: Վկայաբերուած բոլոր օրինակներում մարդիկ ու-

րանում են, յետ կանգնում քրիստոնէութիւնից, բայց այդ բոլորը քահանայի միջնորդութեամբ, Աւետարանի ու խաչի միջոցով:

Նոյնն է հաղորդում նաեւ Ղազար Փարպեցին: Վասակ Սիւնին նամակներ է գրում հայ իշխաններին, շինականներին եւ քահանաներին՝ ասելով, որ արքայից արքան քրիստոնէութիւն է շնորհել աշխարհին, իսկ մոգերի կոտորածի համար վրէժխնդիր չի լինելու, ապստամբութիւնը մոռանալու է, միայն թէ դուք յետ կանգնէք Վարդանի խրատներից ու խօսքերից, որ նրա հետ միասին չկորչէք: Վասակը որոշում է նաեւ իր դերը՝ «Ես այս բոլորի միջնորդն եմ եւ անվնաս կը պահեմ իմ Հայոց աշխարհը»: Սուտ քահանաների (չքահանաների) միջոցով, Վարդանից գաղտնի, տարածում է նամակներ, ընդ որում նրանք, ովքեր թուլացել էին հաւատով եւ կորցրել յոյսերը, միանում էին նրան, իսկ պինդերը եւ մարտիրոսութեան սպասողները թղթերը մերժելով՝ աւելի զօրանում [Ղազ. Փարպ., էջ 67. 38, 68.14]:

Մեզ վիճակուած չէ կռահել Յազկերտ Բ-ի, Միհրնբերսեհի, նրանց շրջապատի գաղտնի մտքերը: Պէտք է մտածել, որ զիջումը եղել է հարկադրուած: Հպատակ ժողովուրդների ապստամբութիւնը խիստ անհանգստութիւն էր պատճառել արքունիքին, ստիպել նրան վերադառնալ (թէկուզ ժամանակաւորապէս) դաւանական ազատութեանը: Հանդուրժողականութիւնը դարձել էր հասարակական կեանքի փաստ: Եւ այդ քաղաքականութիւնն իրացւում էր մարզպան Վասակ Սիւնու եւ իւրայինների ձեռքով: Թւում է, որ քաղաքական կուրսի այդ փոփոխութիւնն է ստիպել Վասակին փոխել դիրքը եւ, լքելով Վարդանին, դառնալ նրա բռնած գծի կատաղի թշնամին:

Աղբիւրները պնդում են, որ Վասակը եղել է ընչասէր, փառամոլ, թագաւորական գահի ցնորքն է նրան խելահաս արել: Բայց նոյն յատկութիւններն է ունեցել նա, երբ իրեն յայտարարել է ապստամբ: Կողմնորոշումը փոխելու համար հարկաւոր էր, 7-62

որպէսզի փոխուեն պայմանները, տուեալ դէպքում՝ փոխուի Պարսից իշխանութեան քաղաքականութիւնը: Վասակը դրա հետ է կապել թէ՛ իր անձնական բարեբախտութիւնը, թէ՛ իր ժողովրդի բարօրութիւնը: Այլ հարց է՝ ճիշտ է նա կշռադատել հանգամանքները, թէ՞ ոչ:

Ի ցոյց հանելով նոր քաղաքականութեան նուաճումները («իբր թէ ամբողջ Հայաստանը միաբանուել է իր հետ»)՝ Վասակը մի թուղթ է յղում կայսրին, որը տեղ է հասցնում Բիւզանդական Հայաստանի սպարապետ Վասակ Մամիկոնեանը: Հասցէատէրերին տրամադրելով իրեն հակառակորդ նախարարների դէմ՝ Վասակ Սիւնին նոյնպիսի նամակներ է ուղարկում Տմորիք, Կորդուք, Արցախ, Աղուանք, Վիրք եւ Խաղտիք: Մարզպանի դատավարութեան ընթացքում կը պարզուի, որ մէկ նամակ էլ ուղարկած է եղել Անտիոքի մեծ սպարապետին, այսինքն՝ մեզ ծանօթ Անատոլիոսին²²:

Այսպիսով, ինչպէս էլ որ մօտենալու լինենք հարցին, Վասակին եւ նրա համախոհներին չի կարելի դիտել իբրեւ մի բուռ խռովարարների, որոնք խառը պայմաններում ուզեցել են միայն ինչ-որ օգուտ քաղել: Ո՛չ, նրանք փոփոխուած պայմաններում մի նոր ուղղութիւն են ներկայացրել: Յագկերտի խոստումները տեղ հասան. Հայոց երկրի մի զգալի մասը հաւատաց նրան եւ հրաժարուեց ձեռք բարձրացնել օտար իշխանութեան դէմ: Դրան նպաստեցին նաեւ այլ հանգամանքներ: Հոռոմները հրաժարուեցին օգնել հայերին. Մարկիանոս կայսրը այդ մասին յատուկ դաշինք կնքեց Յագկերտի հետ [Եղ., էջ 73. 5-15]: Հայերն, ասում է Եղիշէն, ո՛չ թագաւոր ունէին իրենց առաջնորդ, ո՛չ էլ դրսից որեւէ օգնական, յոյներից բացի: Յուսահատութեան համար կային բոլոր նախադրեալները:

Սկզբնաղբիւրներից երեւում է, որ մարզպանի կողմնակիցները եղել են բազմաթիւ: Ասուեց, որ նրանք հրաժարուեցին գէնք

բարձրացնել օտարների դէմ: Բայց պատմութեան դաժան տրամաբանութիւնը ստիպեց նրանց այդ գէնքով դուրս գալ իրենց հայրենակիցների դէմ: Կիսուելով երկուսի՝ մարզպանական Հայաստանը ապրեց քաղաքացիական պատերազմի սարսափներ: Ահա թէ Վասակի մասին ինչ պատմեց Հայաստանից եկած գուժակը Աղուանքում գտնուող Վարդանին. «Հեռացել է քրիստոնէութեան ուխտից եւ աւերել Հայոց աշխարհի շատ տեղերը, մանաւանդ արքունի ձմեռոցները, որոնք զօրքի կայաններն էին, Գառնին եւ Դրասխանակերտը՝ մեծ դաստակերտը, Վարդանաշատը եւ Օշական ամրոցը, Փառախտը, Սարդեանքը, Չողակերտ աւանը եւ Արմաւիրի բերդը, Կուաշ աւանը, Արուճը, Աշնակը եւ ամբողջ Արագածոտնը, Արտաշատի նահանգը եւ նոյնիսկ Արտաշատն ամբողջովին, ինչպէս եւ նրա շուրջը գտնուած բոլոր գիւղերն ու աւանները՝ առել, աւերել եւ կրակ է տուել եւ ձեր ընտանիքները փախցրել-հեռացրել է իրենց բնակութիւնից: Ձեռք է տուել նաեւ սուրբ եկեղեցիներին: Տարել է նաեւ եկեղեցու սեղանի սուրբ անօթները. գերել է քահանաների ընտանիքներին, իսկ նրանց կապել ու բանտ է դրել. եւ ինքը, ասպատակ սփռելով ու տարածելով ամէն կողմ, ամբողջ երկիրն աւերում է...» [Եղ., էջ 78-79]: «Մամիկոնեան, Կամսարական, տանուտէրական միւս տոհմերի գաւակներին պոկելով իւրաքանչիւրին դայեակից՝ տեղափոխեց Սիւնեաց իշխանութեան բերդերը, հրամայեց որպէսզի այդ բերդերը լաւ հսկեն: Այնուհետեւ նենգաւոր Վասակը ուղարկեց այդ տղաներին Պարսից թագաւորի մօտ» [Ղազ. Փարպ., էջ 67. 6-10]:

Իսկ Վարդանը՝ «գունդ-գունդ զօրք էր ուղարկում Սիւնեաց երկիրը, առնում ու աւերում էր շատ գաւառներ եւ այնպէս նեղը լծեց [Վասակին] եւ նրա հետ եղած ամբողջ զօրքին, որ սովի վտանգից անխտիր սատկած էշերի եւ ձիերի միս էին ուտում: Եւ շատ հարուածներ էր հասցնում ուրացեալին, այնպէս

որ սուրբ եպիսկոպոսների ժողովն ու քահանայութեան ամբողջ ուխտը դառն արտասուք էին թափում չարաչար տանջուածների վրայ, որովհետեւ բոքիկ ու ոտքով էին քշում տղամարդկանց ու փափկասուն կանանց եւ, շատ տղաներ քարերին խփելով սպանեցին գցեցին ճանապարհների վրայ» [Եղ., էջ 81. 1-8]:

Ապստամբութեան հէնց սկզբում եպիսկոպոսները, պատմիչի ասելով, խրատում էին իրենց հօտին. «Հարազատ եղբօր ձեռքը բարձրանայ այն մերձաւորի դէմ, որ դուրս է եկել Աստծոյ պատուիրանի ուխտից. հայրը չխնայի որդուն, եւ որդին չակնածի հօր պատուից: Կինը կռուի իր ամուսնու դէմ, եւ ծառան դիմադրի իր տիրողը» [Եղ., 57. 17-21]: Եղիշէի ճարտասանութեան ծնունդ են այդ խօսքերը, բայց այնուհանդերձ լիովին համապատասխանում են իրականութեանը. քաղաքացիական պատերազմը հարազատներին դարձրել էր թշնամի:

Մեզ յայտնի է, թէ ազնուականներից ովքեր են յարել Վասակ Սիւնուն. բերենք նրանց ցուցակը՝

Արտակ Ռշտունի

Գաղիշոյ Խորխոռունի

Գիւտ Վահեւունի

Տիրոց Բազրատունի

Մանէճ Ապահունի

Արտէն Գաբեղեան

Ընջուղ իշխան Ակէոյ

Ներսէճ Ուրծայ իշխան

Վարազշապուհ Պալունի

Մանէն Ամատունի²³:

Բայց նոյն այդ տոհմանունները յիշուում են նաեւ այլ կապակցութեամբ:

Անտեսելով հօր տանուտէրի իշխանութիւնը՝ Բաբգէն եւ Բակուր Սիւնիները միացան Վարդան Մամիկոնեանին, Աւարայրից յետոյ աքսորուեցին: Բաբգէն Սիւնի մասնակցեց նաեւ 482-484 թթ. ապստամբութեանը: Խորէն Խորխոռունին, Արտակ Պալունին, Վահան Ամատունին, Խոսրով Գաբեղեանը մայիսի 26-ին գտնուում էին Աւարայրի դաշտում. կորովի Խորէնը այնտեղ էլ նահատակուեց: Առանց անունները տալու, միւս մասնակիցների կողքին եղիշէն նշում է նաեւ Ակէացիների եւ Ռշտունիների զօրքը: Իսկ Գիւտ Վահեւունին լքեց Վասակին եւ Աւարայրի ճակատամարտին մասնակցեց որպէս Վարդանի կողմնակից:

Քաղաքացիական պատերազմը քանդում էր նաեւ ընտանեկան բնական կապերը: Պատրաստուելով վճռական ճակատամարտին՝ Վարդանն իր զօրքը հաւաքեց Արտաշատում, նրանց փոխարէն, ովքեր յետ էին կացել միաբանութիւնից ու քաշուել Սիւնիք, կարգեց նրանց եղբայրներին, որդիներին կամ եղբորորդիներին [Եղ. էջ 99. 11-13]: Եղիշէի ասածը գեղեցիկ արտայայտութիւն չէ, այլ իրական նկարագիր:

Ներքին հակասութիւններն իրենց դադաթնակէտին հասան Աւարայրի ճակատամարտում, երբ Վարդանը ստիպուած էր կռուել ոչ միայն եկուոր պարսիկների, այլեւ իր հայրենակիցների՝ Վասակի ու նրա կողմնակիցների դէմ:

Յետարշակունեաց Հայաստանում տեղի ունեցած ճակատամարտերից (որոնց հայերը մասնակցել էին որպէս կռուող ինքնուրոյն կողմ) Աւարայրը հաւանաբար եղել է խոշորագոյնը: Ուժերի այդպիսի բախում չի եղել ո՛չ 482-484 թթ., ո՛չ հետագայում՝ Սասանեանների օրօք, ո՛չ էլ արաբական իշխանութեան շրջանում, երբ հայերը մի քանի անգամ ապստամբեցին խալիֆ-

Ֆայտերի ղեկավարը: Հայոց թէ՛ ռազմական, թէ՛ ընդհանուր պատմութեան մէջ Աւարայրը յատուկ տեղ է գրաւում:

Բայց լինելով իրական կեանքի խոշոր երեւոյթ՝ Աւարայրը Հանդէս է գալիս նաեւ որպէս ազգային պատմութեան իւրատեսակ խորհրդանշան: Անցեալի եւ ներկայի ողբերգական ընկալումը, որը մասամբ յատուկ է Հայոց պատմափիլիսոփայութեանը, փաստօրէն սկսւում է Եղիշէից: Հայոց պատերազմը՝ նա ներկայացնում է որպէս հերոսական ողբերգութիւն՝ փառաբանելով հերոսների յամառութիւնն ու խիզախութիւնը, ողբում է նրանց դառը ճակատագիրը: Հին հայերէնում Առաւելու բառը նշանակել է առաջամարտիկ, քաջ ախոյեան, բայց հետագայում վերափոխւում է՝ ստանալով նաեւ մարտիրոսի, վկայի նշանակութիւն: Եղիշէն Վարդանին եւ նրա ընկերներին ներկայացնում է որպէս նահատակների այդ երկու իմաստով: «Չերկնչենք ու չվախենանք հեթանոսների բազմութիւնից, — կոչ է անում Վարդանը, — ոչ էլ մահկանացու մարդու ահուկի սրի դէմ թիկունքներս դարձնենք, որպէսզի եթէ Տէրը յաղթութիւնը մեր ձեռքը տայ, ոչնչացնենք նրանց զօրութիւնը, որպէսզի բարձրանայ ճշմարտութեան կողմը: Բայց եթէ մեզ մահ է վիճակուած, — շարունակում է սպարապետը, — ապա ընդունենք ուրախ սրտով, միայն թէ արիութեան ու քաջութեան մէջ վախկոտութիւն չխառնենք» [Եղ., էջ 101. 21-102. 3]: Իսկ զինուորների խօսքը այլ շեշտ է կրում՝ «Թող մեր մահը արդարների մահուան հետ հաւասարուի եւ մեր արեան թափուելը՝ սուրբ մարտիրոսների արեան հետ. թող Աստուծոն հաճելի լինի մեր կամաւոր զոհաբերութիւնը» եւ այլն [Եղ., էջ 114. 8-11]:

⁵ Եղիշէի աշխատութեան բուն վերնագիրն է՝ «Բան վասն Հայոց պատերազմի», իսկ պատերազմ բառը Առաւելում է եւ առանձին ճակատամարտ, եւ պատերազմ այսօրուայ իմաստով:

Աւարայրի խորհրդանշային դերը հասկանալի է միայն Հայոց միջնադարեան մտայնութեան կոնտեքստում:

Վերադառնանք, սակայն, հերոսական ողբերգութեան իրական գործողութիւններին: Փայտակարանը ընտրելով որպէս նստոց՝ մեծ հազարապետ Միհրնեսեհը շարունակում էր մնալ այնտեղ եւ բանակցութիւններ վարել Վասակի հետ, հարցուփորձ էր անում Հայոց զօրքի, նրա կազմի, սպառազինութեան, զօրավարների մասին: Նրան յատկապէս հետաքրքրում էր զօրքի մարտական ոգին՝ «Նրանցից որը պէտք է տատանման մէջ մնայ, եւ կամ նրանցից որը ջանք թափի՝ իր անձը մահուան ենթարկելով» [Եղ., էջ 95-96]: Վասակը նշանակուեց իւրօրինակ գլխաւոր խորհրդարար՝ բոլորը պիտի հետեւէին նրա խրատներին: Իսկ Պարսից զօրքի գլխաւոր հրամանատար դարձաւ Մուշկան Նիւսալաւուրը: Գարնանը նա սկսեց շարժուել դէպի Հայաստան:

Չատիկի տօնից, որը 451 թ. ընկել էր ապրիլի 8-ին, անցաւ մի քանի օր եւ յայտնի դարձաւ, որ թշնամին մտել է Հեր եւ Ջարեւանդ գաւառը: Դարեր շարունակ, հաւաքուելով Ատրպատականում, թշնամու բանակներն այդ ճանապարհով էին մուտք գործում Հայաստան: Վարդանը դիմեց ուխտապահ իր կողմնակիցներին, որոնք գնացել էին տները՝ Չատիկը տօնելու իրենց ընտանիքներում, յայտնեց նրանց Մուշկանի գալստեան մասին, կոչեց վերջին մարտի: Ուժերը կենտրոնացրեց Արտաշատում, ապա շարժուեց դէպի Արտաղ՝ Հեր եւ Ջարեւանդին յարող գաւառը:

Վարդանը շտապում էր, ուզում էր Մուշկանի վրայ գրոհել Հեր եւ Ջարեւանդ գաւառում, թոյլ չտալ, որ նա սպանութեամբ ու գերելով յարձակուի ու վնաս հասցնի բուն երկրին: Հոգ տանելով զօրքի պատրաստութեան մասին՝ իր սեփական միջոցներով օգնութեան էր գալիս ամենքին, զէնք հայթայթում, զգեստ ա-

պահովում, ձի նուիրում, պարէն հասցնում: Հակառակորդի մասին լաւ գիտէր. Առանձար Ամատունի սեպուհը 300 հեծեալով յարձակուել էր Մուշկանի վերջապահ թեւի վրայ՝ շատերին սպանել, միւսներին՝ փախուստի մատնել, իսկ վերադառնալով՝ անհրաժեշտ տեղեկութիւնները հաղորդել սպարապետին [Ղազ. Փարպ., էջ 69. 1-11]: Նոյն այդ միջադէպի մասին հաղորդում է նաեւ Եղիշէն այն էական տարբերութեամբ, որ հայ զինուորների թիւը հասցնում է 2000 հոգու:

Ինչ է մեզ յայտնի պատերազմող կողմերի ուժերի մասին:

Դեռեւս Վասակի հետ զրուցելիս, Միհրնբրսեհը ցանկացաւ իմանալ Հայոց զօրքի թիւը. մարզպանն ասաց, որ 60000-ից աւել է. մէկ ուրիշ տեղ Եղիշէն նշում է, որ Արտագում հաւաքուեց 66000 հեծեալ եւ հետեւակ [Եղ., էջ 96. 2, 100. 16-17]: Հայոց զօրքի իւրաքանչիւր պարագլխի դէմ Միհրնբրսեհը մտադիր էր դնել երեքին [Եղ., էջ 96. 8-9], այսինքն՝ Պարսից ուժը պիտի երիցս գերազանցէր հայկականին: Հայկական կողմը Աւարայրում կորցրեց 1036 հոգի, պարսկականը՝ 3544. ճակատամարտից յետոյ Մուշկանը ողբում էր, որ իր զօրքի կորուստը հայկականից երեք անգամ աւելի մեծ է [Եղ., էջ 1204 Ղազ. Փարպ., 72-73]: Պարսից զօրքում գտնւում էր ուղղակի փղերի երամակ՝ ոմն Արտաշիւրի գլխաւորութեամբ. զրոհի ժամանակ նրանք պիտի տրորէին Հակառակորդին: Իւրաքանչիւր 3000-անոց խմբին տրւում էր մէկ փիղ [Եղ., էջ 115. 19-20]: Ահա այն թուային տուեալները, որոնք ունենք մեր ձեռքի տակ:

Յիշենք, որ Մուշկանի զօրքում էր գտնւում նաեւ Վասակն իր բազմաթիւ կողմնակիցներով: Մինչեւ վերջին օրերը մարզպանը ձգտում էր իր կողմը քաշել հայրենակիցներին, շրջում էր սուտ երէցների հետ, նրանց միջոցով յայտնում քրիստոնէութիւնը դաւանելու արքայի թոյլտուութիւնը: Բայց բաժանումն ար-

դէն կատարուել էր, եւ նա նոր հետեւորդներ չունեցաւ: Այդ մտքի հետ հաշտուեց նաեւ Մուշկան Նիւսալաւուրտը:

Մինչդեռ վճռական օրը մօտենում էր, Հայոց եւ Պարսից զօրքերը դէմ-դիմաց կանգնեցին Հիր եւ Զարեանդի եւ Արտագի միջեւ ընկած Աւարայրի կամ Արտագի դաշտում, որի միջով հոսում էր Տղմուտ գետը: Մուշկան Նիւսալաւուրտը «բանակ դրեց, փոս փորեց, պատնէշ շինեց, ցցապատերով փակեց, եւ ամէն պատրաստութեամբ ամրացրեց ինչպէս քաղաք» [Եղ., էջ 105. 18-20]: Այդպիսի բանակը կոչուել է դակիշ, հին արտասանութեամբ՝ լակիշ: Ծակատամարտից անմիջապէս առաջ Մուշկանը դասաւորեց իր զօրքերը՝ ճակատը ձգելով դաշտի երկարութեամբ: Կենտրոնական (Մատեան) գունդը ամրացրեց իբրեւ հզօր աշտարակ կամ անմատոյց բերդ: Զօրքում կային յատուկ ջոկատներ՝ կազմուած Կասպից ծովի հարաւային եւ հարաւարեւմտեան ափերին բնակուող ապարհացիներից, կատիշներից, գեղերից, նաեւ յոյներից: Նրանց տեղը եղել է աջից: Մուշկանը բաժանեց զինուորական նշանները, հրամայեց արձակել դրօշները եւ սպասել մեծ փողի ձայնին: Պատրաստութիւնն աւարտեց միայն գիշերը՝ ճակատամարտի նախօրեակին, ասում է Ղազար Փարպեցին, հայերը կարող էին մեծ վնաս հասցնել Հակառակորդին, բայց առիթը բաց թողցին [Ղազ. Փարպ., էջ 69. 29-36]:

Մարտին պատրաստ էր նաեւ սպարապետը: Նա իր զօրքը բաժանել էր 4 գնդի, նշանակել զօրագլուխներ, օգնական զինակիցներ եւ համահարգներ: Չորրորդ գունդը իրեն էր թողել՝ որպէս նիզակակից ընտրելով Արշաւիր Արշարունուն եւ իր հարազատ եղբայր Համազասպեանին: «Այսպէս կարգաւորեց ու ճակատ կազմեց՝ սփռելով դաշտի ամբողջ երեսին, Արեաց զօրքի դէմոդէմ, Տղմուտ գետի ափին» [Եղ., էջ 116]: Ղազար Փարպեցու նկարագրութիւնը մի քիչ այլ է: Վարդանը զօրքը բաժանում է 3 առաջի («բաժանեալ զիւր գունդն յերիս առաջս»): Համազաս-

պեանին թողնում է վերջապահ եւ կարգադրում, որպէսզի ոչ ոքի չբռնադատի, այլ խօսքերով միայն յորդորի, նրանց իսկ փրկութեան համար [Ղազ. Փարպ., էջ 71. 36-40-72. 1-10]:

Վերջին դիտողութիւնը նկատի ունի բանակի մարտական ուժին, որն ինչ-որ չափով պիտի կանխորոշէր ճակատամարտի աւարտը: Ըստ Եղիշէի՝ Վասակի հետ զրուցելիս Միհրնբրսեհը հարցուփորձ էր անում ոչ միայն Հայոց զօրքի, նրա կազմի, սպառազինութեան, զօրավարների մասին, այլ յատկապէս հետաքրքրւում էր, թէ «նրանցից որը պէտք է տատանման մէջ մնայ, եւ կամ նրանցից որը ջանք թափի՝ իր անձը մահուան ենթարկելով» [Եղ., էջ 95-96]: Այդ հարցը մտահոգում էր նաեւ սպարապետին: Խրախուսում էր զօրականներին, օրինակներ բերում Սուրբ Գրքից, որին ծանօթ էր մանկուց: Զինուորներին քաջալերում էին նաեւ բանակում գտնուող եկեղեցականները, յատկապէս՝ Ղեւոնդ երէցը՝ այն գրասէրը, որի անունը յայտնի դարձաւ Անգղի նշանաւոր դէպքերից յետոյ:

Գիշեր էր, երբ Ղեւոնդն աւարտեց իր խօսքը. եկեղեցականները սեղանի շուրջ կատարեցին ամենատարբար խորհուրդը, այսինքն՝ պատարագը, ապա պատրաստեցին մի աւազան եւ մկրտեցին նրանց, ովքեր դեռեւս մկրտուած չէին: Հաղորդութիւն ընդունելով՝ զօրականները սպասում էին լուսաբացին:

Ճակատամարտը սկսուեց: Նկարագրելով նրա ընթացքը՝ Եղիշէն մեծ մասամբ առաջնորդւում է Աստուածաշնչով, յատկապէս՝ Մակարայեցուց գրքից քաղուած օրինակներով, հետեւում զրական տարածուած նորմերին: Ահա մի հատուած. «Բազմաթիւ սաղաւարտներն ու զրահապատուած զօրականների զէնքերը փայլում էին ինչպէս արեւի ճառագայթների շողալուց եւ բազմախուռն նիզակների ճոճուելուց, կարծես ահազին կրակ էր թափւում երկնքից...»: Գեղազիտական բոլոր արժանիքներով հանդերձ, այդպիսի նկարագրութիւնները ոչինչ չեն ասում մար-

տի բուն ընթացքի մասին: Ի տարբերութիւն Եղիշէի, Ղազար Փարպեցու պատմածը շատ աւելի համառօտ է, ընդամէնը տպագիր 19 տող: Այնուամենայնիւ, պատմիչների ներկայացուած պատկերները պահպանել են իրական կարեւոր գծեր: Եղիշէի ասելով՝ պարսիկները մնացին տեղում, իսկ հայերը ձիերով անցան գետը, եւ կողմերն իրար զարկուեցին: Սպարապետը գտնուում էր ձախ թեւում, որովհետեւ, նկատում է Ղազար Փարպեցին, այդ կողմից լաւ էին երեւում Սիւնեաց զօրքի դիրքերը [Ղազ. Փարպ., էջ 72. 6-8]: Յիշենք, որ Պարսից աջ թեւում (այսինքն՝ Հայոց ձախ թեւի դիմաց) Մուշկանը դրել էր իր ընտիր զօրականներին, կարգադրել, որպէսզի պատրաստ լինեն կռուելու հէնց սպարապետի դէմ:

Արեաց զօրքերն այդ ձախ թեւը մի պահ ընկճեցին, բայց Վարդանը վրայ հասաւ եւ հակառակորդին սեղմեց դէպի իր իսկ փղերը: Անգամ Մատեան գունդը դիմեց փախուստի: Իսկ Հայոց զօրքից ոմանք բաժանուել ու յետ էին ընկել լեռների հովիտներում: Տեսնելով այդ՝ Մուշկանը աղաղակեց, քաջալերեց իր զինուորներին, որոնք գտնուում էին Վարդանի գնդի հանդէպ: Բախումից յետոյ երկու կողմերն էլ իրենց պարտուած էին համարում, նրանց շուրջը գետինը ծածկուած էր դիակներով: Մուշկանը սպասում էր, որպէսզի մօտենան փղերը: Նրանց հետեւող զօրամասերի առաջնորդը՝ Արտաշիրը, նստած էր փղերից մէկի վրայ՝ դիտանոցում, որը նմանում էր քաղաքի միջնաբերդի: Գալարափողերի ձայնով շտապեցրեց իր ջոկատներին, առաջամարտիկ զօրքերը շրջապատեցին Մուշկանին: «Իսկ կորովի Վարդանն իր քաջ նիզակակիցներով մեծ կոտորած արեց այնտեղ, ուր եւ հէնց ինքն էլ արժանի եղաւ ստանալու կատարեալ նահատակութեան պսակը» [Եղ., էջ 117-118]:

Հաւանաբար, բեկում առաջացրեց հէնց սպարապետի մահը: Հայոց զօրքի մի մասը հերոսաբար էր կռուում, բայց քիչ չէին

այնպիսիները, որոնք մարտի էին եկել Հարկադրուած եւ ոչ իրենց կամքով [Ղազ. Փարպ., էջ 72. 16-17]: Նրանք դիմեցին փախուստի՝ խուճապ առաջացնելով նաեւ միւսների շարքերում: Զինուորական բախտը երես թեքեց հայերից: Պարսիկները հետապնդում էին փախստականներին եւ անխնայ կոտորում: Նրանք փորձում էին ապաստան գտնել ամուր ձորերում եւ լեռնադաշտերում, ասում է Եղիշէն, իսկ հանդիպելով հակառակորդների հետ՝ դարձեալ սպանում մէկմէկու [Եղ., էջ 118. 19-21]:

Հայոց զօրքի մի մասը գերի էր ընկել, բայց նրանք կարողացան ոչնչացնել պահապաններին եւ հեռանալ: Այնուամենայնիւ, յաջորդ օրուայ լուսաբացին կրկին բռնուեցին, նրանց տարան Պարսից բանակը եւ կոտորեցին՝ սրի քաշելով կամ շարտելով փղերի ոտների տակ [Ղազ. Փարպ., էջ 72. 23-29]:

Աւարայրի ճակատամարտը տեւեց ընդամէնը մէկ օր եւ ավարտուեց գիշերը: Ըստ Եղիշէի՝ կռուի դաշտում ընկան 9 աւագ նախարար՝ քաջ Վարդան Մամիկոնեանը, կորուսի խորէն խորխուռներն, արի Արտակ Պալունին, զարմանալի Տաճատ Գնթունին, իմաստուն Հմայեակ Դիմաքսեանը, հրաշակերտ Ներսէհ Քաջբերունին, մանուկ Վահան Գնունին, արդար Արսէն Ընծայինը, յառաջադէմ Գարեգին Սրուանձտեանը (պատկերաւոր մակդիրները Եղիշէի ստեղծագործական գրչի ծնունդ են): Նրանց հետ դաշտում մնացին 287 հոգի: Միւս զոհուածներին (թագաւորական տնից, Արծրունիներից եւ նախարարական միւս տոհմերից) պատմիչը հաշուում է 740 հոգի: Այսպիսով, ընդհանուրը $9+287+740=1036$ մարդ: Ղազար Փարպեցու հաշիւը մի փոքր այլ է: Նախարարների ցուցակը լրիւ համընկնում է, սակայն նրանց հետ կեանքն ավարտեցին 276 հոգի, իսկ մնացածների թիւն է՝ 750: Ընդհանուրը պիտի լինէր $9+276+750=1035$, սակայն Ղազարի մօտ նշուած է ճիշտ այնպէս, ինչպէս եւ Եղիշէի

մօտ՝ 1036: Ուրացողներից եւ հեթանոսներից այդ օրն ընկան 3544 հոգի, այս կէտում եւս մեր պատմիչները միաձայն են [Եղ., էջ 119-120. Ղազ. Փարպ., 72-73]²⁴:

Աւարայրում զոհուած 1036-ը դասուեցին Հայոց Եկեղեցու սրբերի կարգում Վարդանանք՝ վարդաւանկաւանդ անուան տակ: Ինչպէս ասացինք, նրանց տօնը շարունակում է նշուել մինչեւ օրս: Իսկ Վարդաւանք բառը այժմ վերաիմաստաւորուել է եւ նկատի ունի Վարդան Մամիկոնեանի ապստամբութիւնն առհասարակ:

Ե՞րբ է տեղի ունեցել Աւարայրի ճակատամարտը: Եղիշէից (այն էլ շատ ընդհանուր եւ անորոշ ձեւով) կարելի է իմանալ, որ մարտը եղել է դարնանը: Ղազար Փարպեցու տուեալները ակնի որոշ են: Նրա շարադրանքից երեւում է, որ ճակատամարտի նախօրեակը եղել է Պննտնկոստէ մեծ տօնի ուրբաթ օրը: Պննտնկոստէն կամ Հոգեգալուստը նշուում է Զատիկի կիրակիից հաշուած 50-րդ օրը՝ դարձեալ կիրակի²⁵: 451 թ. Զատիկը եղել է ապրիլի 8-ին, ուստի Հոգեգալուստը ընկել է մայիսի 27-ին: Ինչպէ՞ս է առնչուում այդ ամսաթուին Աւարայրի շաբաթ օրը: Դեռեւս Միքայէլ Զամչեանը, կատարելով պարզ հաշիւներ, եկել էր այն եզրակացութեան, որ Աւարայրի ճակատամարտը տեղի է ունեցել յունիսի 2-ին, այսինքն՝ Պննտնկոստէին կամ Հոգեգալուստին յաջորդող շաբաթ օրը²⁶: Այդ ամսաթիւը մինչեւ օրս ճանաչում ունի գրականութեան մէջ: Մինչդեռ Մ. Օրմանեանը գտնում է, որ դա թիւրիմացութիւն է, մարտն իրապէս տեղի է ունեցել Պննտնկոստէին նախորդող օրը, այսինքն՝ մայիսի 26-ին²⁷: Այդ ամսաթիւը եւս տարածուած է գրականութեան մէջ, ընդ որում Մ. Օրմանեանի նուրբ դիտողութիւնները համոզում են, որ Աւարայրի ճակատամարտը եղել է իրօք 451 թ. մայիսի 26-ին:

Ապստամբական շարժումը Աւարայրում գտաւ իր ծայրայեղ արտայայտութիւնը, բայց ազատագրական պայքարը դրանով չաւարտուեց: Տարածուելով երկրով մէկ՝ Հայերը շարունակում էին դիմադրութիւնը: Հայկական մի գունդ ամրացել էր ինչ-որ բերդում: Մուշկանի զինուորները շրջապատեցին այդ բերդը, գրոհեցին, բայց չկարողացան վերցնել: Բերդում էին նաեւ Յովսէփ կաթողիկոսը, Ղեւոնդ երէցը եւ միւս քահանաները: Սրանք եղել են Աւարայրի դաշտում, բայց փրկուել են կոտորածից: Զօրականների մի մեծ խմբի (700 հոգի Բակի գլխաւորութեամբ) յաջողուեց փախչել ամրոցից: Մինչդեռ պարէնի պակասութեան պատճառով 213 զինուոր իջան ներքեւ, եւ նրանց անմիջապէս սպանեցին: Յանձնուեցին նաեւ եկեղեցականները: Եղիշէի ասելով՝ Յովսէփին եւ Ղեւոնդին գանահարեցին եւ խիստ հսկողութեամբ ուղարկեցին Տիգրոն: Միւսներին ազատ արձակեցին, որպէսզի երկիրը շէնացնեն Եւ խաղաղեցնեն:

Երկար դիմադրեցին Միջնաշխարհի Կապոյտ լեռան մօտ ամրացածները: Այնուամենայնիւ, Վասակին յաջողուեց խաբէութեամբ իջեցնել նրանց եւ գերի վերցնել, իսկ ամրութիւնները կրակի մատնել:

Նախարարներից շատերն ապաստան էին որոնում երկրի հեռաւոր վայրերում կամ նրա սահմաններից դուրս՝ Արցախում, Տմորիքում, Խաղտիքում: Տմորիք փախածները նոյնիսկ յարձակուեցին հարեւան Պարսից գաւառների վրայ, բնակչութեան մի մասին կոտորեցին, միւսին գերեվարեցին, իսկ երկիրը հրի մատնեցին: Խաղտիք փախածները մտան Տայք, որտեղ գտնուում էին Կոստանդնուպոլսից վերադարձած սպարապետի եղբայրը՝ Հմայեակը, եւ նրա շուրջ եղած ապստամբները: Ընդհանուր ուժերով յաջողուեց ջարդել թշնամուն, բայց Հմայեակը ընկաւ մարտում:

Իսկ Արցախի անտառներում ապաստան գտածները յորդորում էին հոներին՝ ի կատարումն Հայերի հետ ունեցած դաշին-

քի, դուրս գալ պարսիկների դէմ: Ապստամբութեան թեժ պահին, դրժելով եղած ուխտը, հոները օգնութեան չեկան, բայց այս անգամ նրանք ներխուժեցին Պարսից երկիրը եւ վերադարձան մեծ աւարով [Եղ., էջ 122-128. Ղազ. Փարպ., գլ. ԽԱ]:

Հայոց աշխարհը խաղաղուեց միայն ձմռանը:

Խոռովութիւնն աւարտուեց, իսկ դատաստանը նոր էր սկսուում: Սակայն նախապէս տեսնենք, թէ ինչ հետեւանքներ է ունեցել ապստամբութիւնը, յատկապէս՝ Աւարայրի ճակատամարտը Հայոց ներքին կեանքում: Ռազմական առումով Հայերն Աւարայրում պարտութիւն կրեցին: Կորուստն այնքան էլ մեծ չի եղել: Եթէ ընդունենք, որ Վարդանն իր հետ բերել էր 66000 մարդ, իսկ Աւարայրի դաշտում մնաց 1036 հոգի, ապա տոկոսային յարաբերութեամբ դա կը լինի մօտաւորապէս 1,5%: Բայց 66000-ը (եւ յատկապէս՝ Պարսից զօրքի 200000-ը) կասկածելի են, իրապէս բուն ճակատամարտին պիտի մասնակցէին աւելի փոքրաթիւ ուժեր: Սպարապետը, հրամանատարութեան մի զգալի մասը սպանուեց, իսկ մարտադաշտը մնաց թշնամուն: Տարուայ վերջին ապստամբութիւնն արդէն ճնշուած էր:

Բայց Արեաց (իմա՝ Պարսից) կողմն էլ իրեն յաղթող չէր համարում: Մուշկանն անհանգիստ էր՝ չէ՞ որ պատերազմում ընկան թագաւորին անձամբ յայտնի անուանի մարդիկ: Հայերի համեմատութեամբ պարսիկների կորուստը եղել է եռակի: Պէտք է ասել, որ Հայոց զօրքի կորուստներն իրենց հերթին պիտի ցաւ պատճառէին արքունիքին, որովհետեւ դրանով թուլանում էր Պարսից պետութեան ընդհանուր ռազմական զօրութիւնը: Եղիշէն գրում է. «Ոչ թէ մէկ կողմը յաղթեց, եւ միւս կողմը պարտուեց, այլ քաջերը քաջերի դէմ դուրս գալով՝ երկու կողմն էլ պարտութիւն կրեցին» [Եղ., էջ 119. 7-9]: Այդ նախադասութիւնը կարելի է մեկնել նաեւ ընդլայնուած իմաստով՝ որպէս բախման ընդհանուր արդիւնք:

Հայոց դիմադրութիւնը մեծ անհանգստութիւն էր պատճառել արքունիքին, իսկ Աւարայրի աւարտը միայն ուժեղացրեց այդ տրամադրութիւնը: Ծակատամարտից անմիջապէս յետոյ Վասակը գործունէութիւն ծաւալեց երկիրը խաղաղեցնելու համար: «Երզումներ էր կնքում թագաւորի հրամանով եւ իր անձի վկայութեամբ եւ այն խաբեբայ երէցների միջոցով, որոնք նրա հետ էին. պատգամաւոր էր ուղարկում նրանց եւ այնպէս էր ցոյց տալիս, թէ ապստամբութիւնը ներուած է, եւ կրկին իրաւունք է շնորհուած եկեղեցիները շինելու, եւ բոլոր կարգերը դարձեալ նորոգելու առաջուայ սովորութեան համաձայն»: Թագաւորի հրամանն իսկութեամբ էր տրուած, շարունակուած է հեղինակը, սակայն Հայոց զօրքը մնում էր թերահաւատ [Եղ., էջ 121]:

Սակայն Վասակի մարզպանութեան օրերը հաշուած էին: Նրան շուտով կանչեցին Տիգրոն, իսկ իշխանութիւնը յանձնեցին Ատրորմիզդ Արշականին: Ատրորմիզդը անձամբ մասնակցել էր Աւարայրի ճակատամարտին: Նրա իշխանութիւնը, գրում է Եղիշէն, սահմանակից էր Հայոց աշխարհին, իսկ Ղազար Փարպեցին յայտնում է, որ նա պարզապէս Հայոց աշխարհից է եղել [Եղ., էջ 128. 22-23, Ղազ. Փարպ., էջ 73. 18]: Մտնելով Հայաստան սիրով եւ խաղաղութեամբ՝ նոր մարզպանը հաստատեց, որ աստուածաշտուութիւնը (այսինքն՝ քրիստոնէական հաւատը) ամբողջութեամբ վերականգնուած է. իրենց նախկին հաւատն են ընդունում նրանք, ովքեր բռնութեամբ մոգութիւն էին ճանաչել: «Եւ եթէ մէկը որեւէ հեռու աշխարհ է գնացել, արքունիքից իրաւունք եմ ստացել, — հաղորդում էր մարզպանը, — որ ազատ լինեն նրանք՝ թէ՛ շինական, թէ՛ եկեղեցական, ինչ կայք էլ թողած լինեն՝ թող գան, եւ իւրաքանչիւրն իր ունեցածին տէր կանգնի»: Մարդիկ սկսել էին նրան հաւատալ եւ վերադառնալ հայրենիք: Երկիրն աւերուած էր. մարզպանը որոշում

ընդունեց երկրի հարկերը ներել, իսկ արքունիք ուղարկուող այրուծին միառժամանակ կրճատել [Եղ., էջ 128-131. հմտ. Ղազ. Փարպ., գլ. 18]: Պարսից զօրքը Հայաստանից գնացել էր հիւսիսային այն երկրները, որոնք աւերել էին հոները:

Ահա այսպիսի պայմաններում Ատրորմիզդին յաջողուեց մի քանի ամսուայ ընթացքում հաշտութեան բերել Հայոց երկիրը:

Բայց հաշտարար քայլերի հետ մէկտեղ Ատրորմիզդը պիտի ապահովէր նաեւ ապստամբութեան մեղաւորների դատաստանը: Դեռեւս Աւարայրից առաջ թագաւորն իբր երդուել էր՝ «եթէ այն անօրէնը (Վասակ Սիւնին) ողջ ազատուի մեծ պատերազմից, մեծ անարգանքով նրան պէտք է խմեցնեմ մահուան դառն բաժակը» [Եղ., էջ 79. 5-7]: Պաշտօնանկ մարզպանին այժմ սպասում էին Տիգրոնում: Տեսնելով, որ երկիրը ամոքւում է, իսկ եկեղեցին ապահով է, նախարարների մի մեծ խումբ յանձնուեց մարզպանին. նրան թողեցին ընտանիքները, իրենց ունեցած գոյքը եւ շարժուեցին դէպի արքունի ձմեռոցը: Նոյն ճանապարհով ուղեւորուեցին նաեւ եկեղեցականները: Վերջիններիս թւում էին Յովսէփ կաթողիկոսը, Ղեւոնդ երէցը (նրանց մասին խօսուեց վերելում), Ռշտունեաց եպիսկոպոս Սահակը, Արծրունեաց երկրի առաջնորդ Մուշէ երէցը, Սամուէլը, Աբրահամը, Արշէնը, Քաջաջը: Եկեղեցականներին կապանքներով էին քշում, նրանք տեղ հասան երկու ամիս քսան օրուայ ընթացքում: Եղիշէի գրքի երկրորդ կէսը, ինչպէս նաեւ Ղազարի պատմութեան Բ դրուագի յաջորդ գլուխները նուիրուած են գլխաւորապէս նրանց ճակատագրին:

Բաց թողնելով մանրամասնութիւնները (պատմիչների շարադրանքն այս մասում շատ գուցեղ է)՝ նշենք, որ Վասակը մեղաւոր ճանաչուեց, նրա դէմ խօսեցին բոլորը, եւ Սիւնեաց իշխանն իր կեանքն աւարտեց զնդանում: Եկեղեցականները մարտիրոսական մահ ընդունեցին՝ 3 հոգի՝ 454 թ. յուլիսի 7-ին, 6 8-62

Հողի՝ նոյն տարուայ յուլիսի 25-ին: Երկու երէց՝ Խորէն Որկովեցին եւ Աբրահամ Զենակացին, նոյնպէս Հրաժարուելով ուրանալ Հաւատը, ծանր տառապանքներ կրեցին, սակայն մահապատժի չենթարկուեցին, այլ ստրկական աշխատանք էին անում արքունի կալուածքներում: Խորէնը վախճանուեց Ասորեստանում, իսկ Աբրահամը 12 տարի աքսորում անցկացնելուց յետոյ վերադարձաւ Հայրենիք:

Դատապարտուեցին նաեւ Տիգրանի ատեանին ներկայացած նախարարները՝ 37 Հողի: Մինչեւ 457 թ. նրանք մնացին կապանքներում, ապա անցան զինուորական ծառայութեան եւ միայն 464 թ. վերադարձան Հայրենիք: Աւարայրի ճակատամարտից անցել էր 13 տարի:

Մինչեւ ժԹ դարը ներառեալ գիտութիւնը ընկալել էր Վարդանանքը եւ յատկապէս՝ Վարդանի ու Վասակի վարքագիծը ճիշտ այնպէս, ինչպէս եւ անցքերի ժամանակակից Եղիշէն: Վարդանը սուրբ է, առերես ընդունելով մոգութիւն, նա ապաշխարել է եւ, Հետեւողական պայքար մղելով Հեթանոսների դէմ, նահատակի վախճան ունեցել: Վասակը սրտանց է դարձել կրակապաշտ, դաւաճանել իր բուն Հաւատը, դաւաճանել իր ժողովրդին, վերջապէս ըստ արժանւոյն պատժուել: Ի դարը վերանայել է այդ ըմբռնումը, ցոյց տուել, որ բախումը տեղի է ունեցել ոչ թէ բարոյական, այլ քաղաքական Հողի վրայ: Իրականում մարզպանն իբր ձգտել է փրկել իր Հայրենակիցներին, եթէ յաղթանակէր նրա բռնած դիժը, ապա ձեռք բերուած ազատութիւնը այդքան թանկ չէր նստի Հայերի Համար²⁸: Փորձենք մէկ անգամ եւս անդրադառնալ այդ Հարցին:

Ապստամբութեան ընթացքը շարադրելիս մենք նշեցինք, որ ենթակայ ժողովուրդների նկատմամբ շահանշահի քաղաքակա-

նութիւնը ինչ-որ պահի փոխուեց: Յազկերտը խոստացաւ կրօնական ազատութիւն, միաժամանակ նաեւ ապստամբութեան մեղքի թողութիւն: Փոխուեց նաեւ Վասակ Սիւնու դիրքը, ըմբոստ մարզպանի փոխարէն Հանդէս եկաւ արքունիքի կամակատար մէկը, որը ջանք չխնայեց, որպէսզի Հայերնակիցներին Հաշտեցնի գերագոյն իշխանութեան Հետ: Պառակտումը Վարդանի եւ Վասակի միջեւ անցքերի զարգացման տրամաբանական Հետեւանք է եղել: Կարեւորութիւն չտալով Յազկերտի խոստումներին՝ սպարապետը շարունակեց պայքարը, իսկ մայիսի 26-ին նա եւ մարզպանը գտնուեցին Տղմուտ գետի Հակառակ ափերին:

Այսպիսով, Վարդանի եւ Վասակի բախումը, որը վերածուեց քաղաքացիական պատերազմի, առաջացել է նախ եւ առաջ քաղաքական Հողի վրայ, եղել է քաղաքական տարբեր ըմբռնումների Հետեւանք: Այդ առումով միջնադարեան տեսակէտը, որի Համաձայն պատերազմը ծագել է բարոյական Հողի վրայ, աստուածապաշտների եւ ուրացողների միջեւ, անշուշտ ենթակայ է վերանայման: Բայց ո՞ր գիծն է եղել աւելի իմաստուն, ի՞նչ կը լինէր Հայաստանի վիճակը, եթէ Հայերն իսկոյն գէնքը վար դնէին՝ այդ մենք չենք կարող ասել, եղած սկզբնաղբիւրները քիչ թէ շատ Հաւանական պատասխանի Համար անբաւարար են: Աւա՛ղ, պատմութիւնը պայմանական եղանակ չի ճանաչում:

Վերելում թուարկեցինք Աւարայրի անմիջական Հետեւանքները: Պարսից արքունիքը քրիստոնէութիւն շնորհեց Հայերին, թեթեւացրեց նրանց պարտականութիւնները գերագոյն իշխանութեան նկատմամբ: Անշուշտ, դա դիտուել է որպէս խոշոր նուաճում: Բայց դրա Հետ մէկտեղ Հայաստանի ինքնավարութիւնը սահմանափակուեց կարեւոր մի կէտում՝ վարչական իշխանութիւնը տեղացի մարզպանից անցաւ եկուորին: Ճիշտ է, այդ ե-

կուորի տիրոջթնեքը գտնուել են սահմանամերձ վայրում (ուստի նա ինչ-որ չափով ծանօթ է եղել հայերի վարք ու բարքին), իսկ տոհմանուներ եղել է Արշական (Արշակունի): Բացառուած չէ, որ, Հայոց մարգպան նշանակելով հէնց Ատրորմիզդ Արշականին, Պարսից Դուռը մտածել է, թէ նրա, այսպէս ասած, կենսագրական տուեալները կարող են սփոփել նուաճուած ժողովրդի ազգային վիրաւորուած զգացմունքը: Բայց եթէ անգամ դա իրօք այդպէս է եղել, Ատրորմիզդի նշանակումը մի այլ սկզբունքի յաղթանակ է արտայայտել: Եկուոր մարգպանը չէր կարող (թէկուզ խորհրդանշային եղանակով) ներկայացնել հայերի շահերը արքունիքի առջեւ, ինչպէս դա կ'անէր տեղացի որեւէ իշխան, ինչպէս դա եղել է Վասակ Սիւնու ղէպքում:

Այնուամենայնիւ, բոլոր սահմանափակումներով հանդերձ, ճանաչուած ազատութիւնները կարեւոր են եղել, որպէսզի հայ ժողովուրդը ընթանայ իր զարգացման բնական ուղիով, որպէսզի բունի կերպով չվերացուեն պատմական դարաւոր աւանդոյթները: Եւ եթէ մեզ յայտնի չեն երկրնտրանքային վճռի հնարաւոր արդիւնքները, ապա կարող ենք հաստատ ասել, որ Վարդան Մամիկոնեանի գիծն է ապահովել թուարկուած նուաճումները, ապահովել է Վարդանանց պատերազմը:

Իր աշխատութեան երկրորդ գլխի սկզբում, մէջբերում անելով մի հին աշխատութիւնից, Եղիշէն գրում է. «Մահ ոչ իմացեալ՝ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն է» [Եղ., էջ 14. 5-6]: Մեր հեղինակը քրիստոնեայ բովանդակութիւն է դնում դրա մէջ, սակայն այդ ասոյթն առաջացել է հեթանոսական կամ կիսահեթանոսական փիլիսոփայական հողի վրայ, իսկ այժմ ընկալւում է զուտ աշխարհիկ առումով: Վարդանանքը համաշխարհային պատմութեան այն անցքերից է, երբ ժողովուրդն իր ազատութիւնը պաշտպանելու համար մահու պայքարի է ելնում ոսոխի դէմ: Տուեալ դարաշրջանում ազատութիւնը հնարաւոր էր

միայն արեան գնով, դա լաւ են հասկացել Վարդանն ու իր զօրականները: Սոյն գլխի վերնագիրն ակնարկում է Վարդանանքի այդ էական կողմը:

ԳԼՈՒԽ 9

«ՊԱՐՍՎԻ ԱՌՆ ԵՐԿԻՐ ՈՉ ՊԱԳՑՈՒՔ»

Խաղաղուել էր փոթորիկ ապրած Հայաստանը, բայց խաղաղութիւնը սգալից էր: Իր աշխատութեան վերջին էջերում Եղիշէն սրտաճմլիկ մի պատմութիւն է անում այն կանանց մասին, որոնց ամուսիններն ընկել էին պատերազմի դաշտում կամ քշուել աքսոր: Խօսքը վերաբերում է ազնուականներին. դժբախտացած ընտանիքների փափկասուն կանայք են ողբում դառը ճակատագիրը: Եղիշէն պատկերում է այն, ինչ տեղի էր ունեցել Հայոց երկրում ապստամբութեան ճնշումից յետոյ, այն, ինչ որ տեսած պիտի լինէր իր իսկ աչքով: Բայց մեծ վարպետի գրիչը միաժամանակ կերտում է ընդհանրացած մի պատկեր, տեսարանը զուգորդութիւններ է առաջացնում, որոնք ընթացողի միտքը կապում են սպանութեան ու աքսորի հետ, անկախ տեղից ու ժամանակից:

Յազկերտ Բ-ի 17-րդ տարում, այն է՝ 455 թ., Վրաց բռնի Աշուշային յաջողում է ազատագրել Հմայեակ Մամիկոնեանի որդիներին, որոնց Վասակը տարել էր Տիգրան, «որպէսզի այնտեղ մեռնեն»: Բռնիչը, որ նրանց մօրաքրոջ ամուսինն էր, 451 թ. սպանուած ապստամբ իշխանի զաւակներին կարողացաւ տեղափոխել իր մօտ՝ Գուգարք: Փրկագիրը շատ խոշոր է եղել՝ Աշուշան ազատեց տղաներին՝ «բազում եւ անհամար կարասի ծախեալ» [Ղազ. Փարպ., գլ. ԾԹ]⁶:

457 թ. Յազկերտ Բ-ը վախճանուեց: Նրա Որմիզդ եւ Պերոզ որդիները իսկոյն սկսեցին կռուել դահին տիրանալու հա-

մար: Յաղթանակեց կրտսեր՝ Պերոզը, աւելի շուտ՝ նրա Ռահամ դայեակը, Միհրան հօր տոհմից: Ռահամը ջարդեց Որմիզդի զօրքը, սպանեց թէ՛ նրան, թէ՛ Յազկերտի միւս որդիներին՝ արքայից արքայ հռչակելով Պերոզին: Երկպառակութիւնը տեւեց 2 տարի. Պերոզը դահի վրայ հաստատուեց միայն 459 թ.: Կատարելով իր խոստումը՝ նա 464 թ. ազատեց Աւարայրից յետոյ գերի տարած նախարարներին, հաստատեց նրանց իշխանութիւնը եւ ճանաչեց սեփականութեան իրաւունքները: Նրանք վերադարձան հայրենիք՝ պահպանելով քրիստոնէութիւնը:

Նախորդ գլխում ասուեց, որ Վասակ Սիւնու փոխարէն Հայոց երկրում մարզպան էր նշանակուել Ատորմիզդ Արշականը: Յայտնի է նաեւ, որ 482 թ. Հայոց մարզպան է եղել Ատրվշ-նասպ Յոզմանդեանը՝ դարձեալ պարսիկ: Մենք չգիտենք, երբ է աւարտել ծառայութիւնն առաջինը, եւ երբ է ստանձնել իր պաշտօնը երկրորդը: Ամենայն հաւանականութեամբ, երեսուն տարուայ ընթացքում եղել են նաեւ այլ մարզպաններ, սակայն դրանց մասին աղբիւրները կատարեալ լռութիւն են պահպանում: Այսպէս թէ այնպէս, աքսորեալ նախարարները վերադարձան պարսիկ մարզպանի վարչական իշխանութեան ներքոյ գտնուող Հայաստան:

Անորոշ է նաեւ սպարապետութեան հարցը: ԺԺԱ դարերի հեղինակ Ասողիկը պնդում է, որ Վարդան Մամիկոնեանից յետոյ Պերոզի օրօք Հայոց սպարապետ է դառնում Վարդանի որդի Մանգնոսը՝ այդ գործակալութիւնը վարելով 20 տարի [Աս., էջ 79]: Մանգնոս անունը, որն ուղղակի կամ միջնորդաբար ծագում է լատ. Magnus, մեծ անունից, խորթ է Հայոց անուանակազմին: Մեր Մանգնոսից բացի, Հ. Աճառեանը յիշում է միայն մէկ ուրիշ Մանգնոսի, 627/628 թ.¹: Ասողիկից առաջ ոչ մի հեղինակ այդ Մանգնոսին չի ճանաչում, ուստի Վարդան Մամիկոնեանի ծառանգորդին վերաբերող այդ տեղեկութիւնը տարա-

⁶ Ստորեւ նշուած անանուն յղումները (գլուխ կամ էջ) անտի ունեն Ղազար Փարպեցու Պատմութիւնը:

կուսանք է առաջացնում: Հաստատ գիտենք, սակայն, որ 482 թ. առաջ (Հաւանաբար տարիներ առաջ) սպարապետ է եղել Վարդանի եղբորորդի Վահանը, որը եւ գլխաւորեց 482-484 թթ. ապստամբութիւնը:

Վահան Ամատունուց յետոյ Հայաստանում տեղացի Հազարապետ չի եղել, բացառութեամբ թերեւս այն առեղծուածային Մանանի, որի մասին ասուեց Բ գլխում: Բայց մաղխազութիւնը դեռեւս Հայերի ձեռքն էր, Խորխոռունի մաղխազներ յայտնի են նաեւ Արշակունեաց թագաւորութեան վերացումից յետոյ: Այսպիսով, կտրելով մարզպանական Հայաստանի սահմանագիծը՝ Հայրենադարձ նախարարները մտան մի երկիր, որը լրիւ չէր կորցրել ինքնավարութեան Հաստատութիւնները:

Ինչպէս ասացինք, 451 թ. աշնանը մի շարք անուանի եկեղեցականների հետ Յովսէփ կաթողիկոսին տարան Պարսկաստան: 454 թ. նրանք իրենց կեանքն աւարտեցին՝ որպէս մարտիրոսներ: Հովուապետի Աթոռը յաջորդաբար գրաւեցին Մելիտէ եւ Մովսէս Մանազկերտցիները: Մելիտէն մասնակցել է Շահապիվանի եկեղեցական ժողովին, ապա իր ստորագրութիւնն է դրել այն գրութեան տակ, որը կազմել էին Հայերը՝ ի պատասխան Միհրնբեսէ մեծ Հազարապետի նամակի: Երկուսն էլ պատկանել են Ադրիանոսի տոհմին, յամենայն դէպս, բռնել էին աւանդական դարձած նրա պարսկամէտ դիրքը: Այդ առումով Յովսէփի յաջորդները կրկնել էին նրա նախորդների՝ Սուրմակի, Բրքիշոյի, Շմուէլի գիծը: Մ. Օրմանեանի Հաշուամների Համաձայն՝ Մելիտէն կաթողիկոս է եղել 452-456, իսկ Մովսէսը՝ 456-462 թթ.²: Թուագրումը պայմանական է, բայց ներկայ դէպքում դա էական չէ:

Գիւտ կաթողիկոսի Հովուապետութեամբ սկսուեց նոր շրջան: Եզնիկ երէցը Գիւտին յիշում է տէր Գադ անուան տակ: Կաթողիկոսն, այսպիսով, նոյն անձնաւորութիւնն է, ինչ եւ Շահապի-

վանի ժողովի Գադ եպիսկոպոսը, իսկ Միհրնբեսէին ուղղուած թղթում առկայ է Վանանդի եպիսկոպոս Գադի ստորագրութիւնը: Գիւտն ուսում էր առել Հոռոմոց աշխարհում: Ղազար Փարպեցին ասում է, որ կաթողիկոսը լի էր «գիտութեամբ Հայովս եւ առաւելեալ յունիւն» [էջ 110. 22]: Այդ բառերից դժուար չէ կռահել, որ Գիւտը պատկանել է Մաշտոցի եւ Սահակի գլխաւորած լուսաւորչական Հոսանքին: Բայց յատկապէս կարեւոր է, որ Գիւտի կաթողիկոսութեան տարիներին եկեղեցին Հնարաւորութիւն էր ստացել վերականգնել իր անկախութիւնը, Հանդէս գալ որպէս ազգային քաղաքական ձգտումների կողմնակից ու պաշտպան:

Աքսորից վերադարձած նախարարները զայրոյթով պիտի դիտէին, թէ ուրացութիւնը ինչպիսի տարածում էր ստացել Հայրենիքում: Ասացինք, որ, իբրեւ երեւոյթ, այն ծագել էր դեռեւս Արշակունեաց շրջանում, երբ Սասանեան գերիշխանութիւնը սկսել էր իրեն աւելի ու աւելի զգացնել: Ուրացութիւնը տարածուել էր երկրի բաժանումից եւ յատկապէս՝ մարզպանութեան կազմակերպումից յետոյ: 450-451 թթ. այն արտայայտուել էր լայնօրէն, իսկ Աւարայրի ճակատամարտում Հայ քրիստոնեաները դէմ են դուրս եկել նաեւ Հայ ուրացողներին:

Վարդանանց ապստամբութիւնից յետոյ ուրացութիւնը դարձել էր աչքի ընկնող Հասարակական երեւոյթ: Եթէ մինչ այդ խօսք էր լինում մեծ մասամբ անյայտների մասին, ապա ապստամբութիւնից յետոյ ուրացութիւնը զանգուածային բնոյթ էր ստացել: Խօսելով ուրացողների մասին՝ Ղազար Փարպեցին օգտագործում է դասք, ջոկք, փաղանգ բառերը [էջ 116. 23, 120. 83, 126. 4, 164. 4, 169. 33]: Ապստամբութեան թեժ պահին ուխտանենդների դասը դաւաճանեց Վրաց Վախթանգ թագաւորին [էջ 146. 20]: Ուրացողներն իրօք որ կազմել են մի յատուկ Հասարակական շերտ:

եղել են դէպքեր, երբ կրօնափոխութիւնը ակամայ մի զիջում էր, սեփական քաղաքական գիծը ապահովելու հնարաւորութիւն: Այսպիսին է եղել Վարդան Մամիկոնեանի եւ նրա ընկերների առերես ուրացութիւնը 450 թ. ապրիլին: Այդպիսին է եղել նաեւ սպարապետ Վահան Մամիկոնեանի ուրացութիւնը (այդ մասին՝ ստորեւ): Բայց հասարակական կարծիքը հրաժարում էր զանազանել ուրացութեան երանգները: Եղիշէն նկարագրում է այն զայրոյթը, որն առաջացաւ Հայաստանում Վարդանի եւ միւսների ուրացութեան կապակցութեամբ, չնայած նա նշում է, որ հայ նախարարները Յագկերտի կամքը կատարել են իբր թէ [եղ., էջ 50. 9]: Իսկ Վահանի ուրացութեան դէպքում Ղազար Փարպեցին չի բաւարարում հասարակական բողոքի նկարագրութեամբ եւ հէնց իր անունից մեղադրանքի խօսքեր է ուղղում իր բարեկամի եւ հովանաւորի հասցէին:

Եղիշէի օրօք ուրացութիւնը դեռեւս արտասովոր երեւոյթ էր: Հեղինակն ասես քաշում է այդ քայլի մասին պարզորոշ կերպով հաղորդել: Տիգրան կանչուած նախարարների մասին նա գրում է. «Եւ ամէնքն այս անքակտելի ուխտը դնելով Աստուծոյ հետ, որ հաստատ մնան իրենց նախկին մտադրութեան վրայ՝ իրենց միեւնոյն խրատատուին պատգամաւոր ուղարկեցին ներս, իբր թէ կատարուելու է նրա (Յագկերտի) անօրէն կամքը» [եղ., էջ 50. 7-10]: Իսկ Ղազար Փարպեցին նոյն դէպքը նկարագրելիս պարզ կերպով ցոյց է տալիս, թէ ինչ արին նախարարները՝ աւելացնելով, որ այդ քայլին դիմեցին խաբէութեամբ, զպատճառանօք եւ ոչ ճշմարտութեամբ [էջ 53. 33-40 եւ այլն]: Եւ ամենայն մանրամասնութեամբ, առանց որեւէ բան թաքցնելու, ներկայացնում է այն տեսարանը, երբ Վահան Մամիկոնեանը տկարանայր ի հաւատն [Ղազ. Փարպ., էջ 116. 39]: Ժամանակները փոխուել էին, ուրացութիւնը դարձել էր սովորական:

Վարդանանց պատերազմի շրջանում պարսիկները քրիստոնեաներին յաճախ բռնի կերպով ենթարկում էին կրօնափոխութեան: Յաջորդ շրջանում աղբիւրները նման քայլերի մասին համարեայ չեն խօսում: Ուրացութիւնը, որ թափ է ստանում հէնց այդ շրջանում, լինում է կամաւոր, առանց բացարձակ ճնշման: Այն արտօնութիւնները, որ ակնկալում էին ուրացողները, բաւական են եղել, որպէսզի դրդեն նրանց դիմելու այդ քայլին:

Նախորդ գլխում ասացինք, որ մարգպանութեան շրջանում նախարարական կազմը ենթարկուել էր որոշ փոփոխութեան. տոհմիկները յետ էին մղում, իսկ նրանց տեղերը զբաւում էին անտոհմիկները, որոնք ուրացութեան շնորհիւ նոր դիրք են գրաւում, նեղում բուն ազնուականներին [տե՛ս էջ 118. 25-28]: 483 թ. զինադադարի ժամանակ Վահան Մամիկոնեանը համոզում էր Պարսից Միհրան զօրավարին. Հայաստանը մեծ եւ պիտանի երկիր է, բայց ո՞վ է այնտեղ ստացել տանուտէրութիւն արժանաւորապէս, թագաւորի օգնութեամբ: Իշխանութիւնը պատկանում է աւագաններին եւ անպիտաններին, հացկատակներին եւ վատատոհմիկներին: Անտոհմիկները ետ են մղում տոհմիկներին, զբաւում նրանց տեղերը: Պարզում է, որ վատատոհմիկները եւ անպիտանները միաժամանակ ուրացողներ են՝ փառքն ու տէրութիւնը կրակն աստուած ճանաչելու դիմաց են գնում [էջ 136. 38-39]: Ուրացողները «ունեն գահ ու պատիւ, ամէն մէկն իր գաւառում իշխան է, ձիու, գէնքի, գնդի տէր է, մինչդեռ ուխտապահներին չի մնացել ոչ տուն, ոչ ծառայ, ոչ գունդ, ոչ էլ տանուտէրութիւն» [էջ 168. 24-28]: Ինչպէս տեսնում ենք, հակասութիւններն աճում էին նաեւ գուտ նիւթական հողի վրայ:

Աւելացնենք նաեւ, որ բաժանումը տոհմիկների եւ անտոհմիկների բացարձակ բնոյթ չի կրել: Ղազար Փարպեցու անտոհ-

միկներն ու անպիտանները կարող էին իրապէս պատկանել Հին ազնուականութեանը, բայց, դառնալով ուրացող, ուխտապահների աչքում զրկուում էին ազնուական համարուելու պատուից:

Պարսիկները նման քաղաքականութիւն էին վարում նաեւ Վրաստանում: 484 թ. գարնանը Վիրք է ներխուժում զօրապետ Ջարմիհր Հագարաուխտը: Նրան յաջողում է իր շուրջը ժողովել վրաց ուրացողներին: Ինչպիսի՞ միջոցներով. մէկին թագաւորութիւն էր խոստանում, երկրորդին՝ գահ, պատիւ, մեծ պարգև, միւսներին՝ այն, ինչի պէտքն էին զգում [էջ 146. 23-24]:

Դաւանանքն ապրանքի էր վերածուել: Զարմանալի չէ, որ կրակապաշտութիւնն ընդունած ուրացողների համար սրբութիւն չի եղել նաեւ նոր տարերքում: Դիմելով պարսիկ զօրավարին՝ Վահանն ասում է. «Երբ ուրացողները ձեզնից մի քիչ Հեռու են լինում, ապա միգում են կրակի մէջ, իսկ մոխրի մէջ իրենց աղբն են թափում» [էջ 136. 39-40]: Ոմանք կատակով աստուածներ էին գնում, բայց միաժամանակ թշնամանում թէ՛ աստուածների, թէ՛ անմիտ վաճառականների դէմ [էջ 111. 15-16]: Ուրացողները ոչ այնքան նոր կրօն, որքան նոր դիրք էին ընդունում: Իսկ երբ պայմանները փոխուում էին, ապա այդ նորաթուխ կրակապաշտները հեշտութեամբ վերադառնում էին իրենց նախնիների հաւատին: 482 թ. հայերը ապստամբութեան որոշում են ընդունում: Աւետարանի վրայ երդում են միաբանութեամբ թէ՛ քրիստոնեաները, թէ՛ ուրացողները, մանկական պարզութեամբ արձանագրում է Ղազար Փարպեցին [էջ 120. 12-13]:

Ուրացութիւնը քրիստոնէութեանը հարուածում էր ներսից, Հայ եկեղեցին, բնականաբար, չէր կարող անտարբեր մնալ դրան: Հին ուժն ու հմայքը բաւական չէին: Թուում է, թէ հիմքն ամրապնդելու համար եկեղեցին հէնց այդ պահին էր նպաստել Գրիգոր Լուսաւորչի պաշտամունքի առաջացմանն ու տարածմանը (աւելի մանրամասն՝ Դ գլխում): Բայց ուրացու-

թիւնը ոչ միայն եկեղեցուն էր վտանգում, այն քայքայիչ դեր էր կատարում նաեւ հասարակական հիմունքների նկատմամբ: Ուրացութիւնը սպառնում էր նախարարութեանը, նրա աւանդական կարգին եւ այդ իմաստով էլ հակազդեցութիւն առաջացնում: 484 թ. Վահան Մամիկոնեանը թուարկում է Նուարսակում զինադադարի եւ նրան յաջորդող խաղաղութեան պայմանները: Առաջին պայմանն էր՝ «թողէ՛ք մեզ մեր հայրենի եւ բնիկ օրէնքը, որեւէ հայի մոգ չդարձնէ՛ք, իսկ մոգութեան համար ոչ ոքի գահ եւ պատիւ չընորհէ՛ք» [էջ 161. 11-18]:

Նուարսակի պայմանադրութեան մէջ ճշտիւ արձանագրուել են այն հանգամանքները, որոնք մշտական բողոք են առաջացրել եւ ենթակայ էին վերացման: Համաձայնութեան երկրորդ կետում Վահանը պահանջ էր դրել, որպէսզի մարդուն գնահատելիս պարսիկները չառաջնորդուեն կամայականութեամբ (ոչ իշխանաբար ճանաչէք), այլ արդար կերպով ճանաչեն թէ՛ լաւին, թէ՛ վատթարին, զանազան են պիտանին անպիտանից, հասկանան՝ որն է տոհմիկ, որն՝ անտոհմիկ, թող բարձրացնեն պատուականներին, քաջերին եւ օգտակարներին, իսկ վատերին եւ անպիտաններին լրիւ արհամարհեն: Ամէն պարագայի, հարկաւոր է սիրել վաստակաւորին, ատել անվաստակին, մօտեցնել իմաստունին եւ նրան դիտել որպէս խորհրդատու, իսկ անմիտին հալածելով հեռացնել ասպարէզից [էջ 161. 19-25]: Պայմանադրութեան այդ երկու կետերն առնչւում են մէկը միւսի հետ, չէ՞ որ ուրացողները դուրս են մղում տոհմիկներին եւ լաւերին՝ իրենք պատկանելով վատերի եւ անտոհմիկների դասին:

Շահանշահի գերագոյն իշխանութիւնը իրացուել է նախ եւ առաջ մարզպանական վարչակազմի առկայութեամբ: Դժուար չէ պատկերացնել, թէ մարզպաններն ինչպիսի ազատութիւն էին ապահովել իրենց համար, յատկապէս այն դէպքում, երբ լինում էին ոչ թէ տեղացի, այլ եկուոր: Նուարսակի երրորդ պայմանը

եղել է այն, որ արքայից արքան անձամբ խորամուխ լինի Հայաստանի գործերին, ամէն ինչ իր աչքով տեսնի, լսի իր ականջով եւ խօսի իր բերանով: Թող նա չնայի ուրիշի աչքով, չլսի ուրիշի ականջով, ուրիշի միջնորդութեամբ թող չճանաչի՝ որ մարդն է լաւ, որը՝ վատ, միւսի բերանով չարտասանի պէտքերը: Միայն անձնական մօտեցումը կարող է ապահովել իր Հպատակների բարեխիղճ ծառայութիւնը եւ այլն [էջ 161. 29-162. 3]: Հոստորական ոճով արտայայտուած պահանջը մի պարզ նշում է, թէ ինչպիսի խախտումներ են եղել, երբ վարչութիւնն ամբողջութեամբ վստահուում էր մարզպանին: Եւ եթէ այդ պահանջը մտել է համաձայնութեան առանձին՝ երրորդ դրոյթի մէջ, ապա հեշտութեամբ կարելի է պատկերացում կազմել մարզպանական վարչութեան դէմ աճող բողոքի մասին:

Ի մի բերելով այդ փաստերը՝ հնարաւոր է պատկերացնել, թէ ինչն է ստիպել Հայերին Ե դարի 80-ական թուականներին կրկին դիմելու զէնքի: Հաւանաբար կային նաեւ այլ հանգամանքներ (կարեւոր հանգամանքներ), որոնց մասին ոչինչ չգիտենք կամ կարող ենք միայն կուսակ: Բայց դրանց մասին խօսքը վաղաժամ է, այդ հարցին կ'անդրադառնանք ապստամբութեան արդիւնքներն ամփոփելիս: Իսկ այժմ տեսնենք, ինչպիսի ձեւ եւ ընթացք էր ստացել Ե դարում օտարակալութեան դէմ ուղղուած երկրորդ յուժկու ըմբոստութիւնը:

Այն քաղաքականութիւնը, որը վարել էր Յազկերտ Բ Աւարայրին նախորդող ամիսներին եւ յատկապէս ճակատամարտից յետոյ, եղել է զիջում, որը հետեւանք էր համընդհանուր խմորումի: Հարցերի լուծումը կիսատ էր, Տիգրանին ենթակայ ժողովուրդները լիովին չէին բաւարարուել: Բաւական էր ճնշումը թեթեւանար, կառավարութեան ուշադրութիւնը շեղուէր, որպէսզի Հարկատու երկրները գլուխ բարձրացնէին:

Յազկերտի օրօք, երբ Աղուանքը վեր էր ածուել մարզպանութեան, այնտեղ շարունակուում էր, այնուամենայնիւ, տիրել տեղացի Վաչէ թագաւորը: Վաչէն ամուսնացած էր Յազկերտի թոռան (նրա դստեր աղջկայ) հետ³: Աղուանից թագաւորը ծնուել էր քրիստոնեայ, սակայն Յազկերտը նրան բռնի կերպով մոգ էր դարձրել: Ասացինք, որ Յազկերտի մահից յետոյ խռովութիւն առաջացաւ, շահանշահի Որմիզդ եւ Պերոզ որդիները գահին տիրանալու համար մահու կռիւ էին սկսել: Հէնց այդ ժամանակ Վաչէն «աւելի լաւ համարեց պատերազմում մեռնել, քան թէ ուրացութեամբ թագաւոր լինել»: Մերժեց ծառայել Արեաց աշխարհին, ներս թողեց կովկասեան լեռնցիներին, միաբանեց 11 հարեւան թագաւորների հետ եւ սկսեց ջարդել արքունի բանակը: Պատերազմը տեւեց մէկ տարի: Պարսիկները օգնութեան կանչեցին կովկասեան կիսավայրենի այլ ցեղերի՝ խայլանդուրներին եւ հոններին, Վաչէի զօրքը լքեց իր թագաւորին, սակայն ապստամբ արքան շարունակուում էր դիմադրել եւ հաւուածներ հասցնել հակառակորդին:

Պերոզը, որն արդէն յաղթել էր իր եղբօրը, համաձայն էր, որպէսզի Վաչէն մնայ քրիստոնեայ, շարունակի տիրել իր երկրում, միայն թէ յետ ուղարկի Պարսից արքայի քրոջն ու քեռորդուն: Վերջին պահանջը Վաչէն կատարեց, սակայն իշխանութիւնից հեռացաւ եւ դարձաւ միայնակեաց [Եղ., էջ 197-199, Մով. Դասիս. Ա, 10]:

Եղիշէն պատմում է, որ Վաչէն Հայոց երկիրն աւերելու համար գրով եւ պատգամներով յանդիմանում էր պարսիկներին, յիշեցնում նախարարների սպանութիւնը եւ չարչարանքները: «Այնչափ սիրոյ եւ վաստակների համար փոխանակ կեանք շնորհելու, — պնդում էր Աղուանից թագաւորը, — նրանց արեւը խաւարեցրիք». քրիստոնէութիւնը պաշտպանելու համար նա յանձն էր առել նրանց չարչարանքները: Պատմիչը նաեւ ասում

է, որ Աղուանքի ապստամբութեան պատճառով Հայ գերեալ նախարարները վերադարձը հայրենիք հետաձգուեց: Պերոզն, ըստ երեւոյթին, լաւ էր հասկացել, որ պայքարն օտարակալութեան դէմ ողջ Այսրկովկասի համար ընդհանուր է եղել, ուստի ձգտում էր կանխել հնարաւոր միութիւնը:

Հայոց երկիրն այդ շրջանում արտաքինապէս խաղաղ էր, բայց ներքին հակասութիւններն աւելի ու աւելի էին աճում: Լարուել էին յարաբերութիւնները քրիստոնեայ ազնուականների եւ ուրացողների միջեւ: Քրիստոնեայ իշխանները համախմբուում էին Գիւտ կաթողիկոսի շուրջ, միասին ծրագրեր էին մշակում, թէ ինչպիսի ելք գտնեն ստեղծուած վիճակից: Ծրագրում էին թողնել երկիրը, գնալ օտարութիւն կամ էլ օգնութիւն խնդրել կայսրութիւնից եւ ապստամբել: Ապաւինում էին բիւզանդական կայսր Լեոն Ա-ին (457-474): Գաղտնի կերպով նրա մօտ ուղարկեցին երկու պատգամաւորութիւն: Լեոնը իբր ուզում էր օգնել, բայց այդպէս էլ ոչինչ չարեց, եւ եղած ծրագրերը խփանուեցին:

Ուրացողների զօրագլուխն ու քաջալերիչը մաղխազ Գադիշոյ Խորխոռունին էր (ինչպէս գիտենք, Վարդանանքի ժամանակ նա Վասակի կողմնակիցներից էր, իսկ այժմ խիստ թշնամական դիրք էր բռնել ուխտապահների նկատմամբ): Կաթողիկոսը, յայտնում էր Գադիշոն Պերոզ արքային, - կանչում է նրանց, ովքեր պատրաստ են ծառայել պարսիկներին, եւ նրանց մտքերը հիմնովին փոխում: Ամենայն հաւանականութեամբ, Բիւզանդիայի հետ կապուած գաղտնի ծրագրերը թաքցնել չէր յաջողում: Գադիշոն յայտնում էր նաեւ, որ կաթողիկոսը բանակցութիւններ էր վարում կայսեր հետ, նրան, ինչպէս նաեւ Դուան մեծամեծներին իր կողմը քաշում:

Ամբաստանութիւնը հասաւ նպատակին: Կաթողիկոսը ստիպուած եղաւ ներկայանալ Պարսից Դուռ եւ պատասխան տալ

մաղխազի ասածի կապակցութեամբ: Ղազար Փարպեցու ասելով՝ կաթողիկոսն իբր արդարացաւ արքայի առջեւ: Ասաց, որ քրիստոնէութիւնը մանկուց է ընտրել եւ մնում է նրան հաւատարիմ: Գադիշոն այս կէտում իրաւացի է: Ինչ վերաբերում է Հոռոմների մօտ գնալուն, ապա այստեղ մաղխազը ստում է: Կաթողիկոսն իր ողջ գիտելիքները Հոռոմներից է ստացել, այստեղ բազմաթիւ ծանօթներ եւ ուսումնակիցներ ունի: Բացի այդ, եկեղեցական հագուստը այնտեղ են գնում, ուրիշ տեղ այդպիսի ապրանք չեն արտադրում: Ամփոփելով ասաց, որ քրիստոնեայ օրէնքը պահանջում է հնազանդուել եւ ծառայել աշխարհիկ տէրերին: Վկայակոչելով, անշուշտ, Աւետարանի խօսքերը՝ կաթողիկոսը, սակայն, իր կողմից աւելացրեց՝ երբ այդ տէրերը լինում են իսկական եւ արժանի (գոյիպողսն եւ զարժանաւորսն):

Մեր պատմիչն ասում է, որ ծանօթանալով Գիւտի ստոյգ եւ մտացաբեր խօսքերին՝ Պերոզն այլեւս չխորացաւ հարցի էութեան մէջ, այլ պարզապէս կաթողիկոսին առաջարկեց ընդունել կրակապաշտութիւն. այն ժամանակ, աւելացրեց արքայից արքան, նա կ'արժանանայ չտեսնուած պատուի եւ շքեղութեան: Հակառակ դէպքում նա կը զրկուի հովուապետութիւնից եւ հայրենիք կը վերադառնայ անարգանքով: Գիւտը հրաժարուեց եւ ստիպուած եղաւ լքել կաթողիկոսարանը [գլ. ԿԴ]:

Դիմադրութիւնը պարսկամէտ ուրացողներին Գիւտի տապալումով չդադարեց: Այս նոր շրջանում քրիստոնեայ նախարարութիւնը համախմբուել էր Վահան Մամիկոնեանի շուրջը, որը դարձել էր Հայոց երկրի քաղաքական առաջին դէմքը:

Վահանը Վարդան Մամիկոնեանի հարազատ եղբայր Հմայեակի որդին էր: Ասուեց, որ Հմայեակը սպանուեց 451 թ. աշնանը Տայքում, որդիներին՝ Վահանին, Վասակին, Արտաշէսին որպէս պատանդ տարան Տիգրոն (նրանց մանկահասակ Վարդ եղբայրը դայեակների հետ մնաց, թոււմ է, թէ Տայքում. հետա-

գայում, սակայն, նա եւս տարուեց Պարսից մայրաքաղաք): 455 թ. Աշուշայ բղեշխին յաջողուեց ազատագրել երիտասարդներին եւ տեղափոխել իր մօտ՝ Գուգարք: Այնտեղ նրանք միացան իրենց մօրը՝ Զուհիին, որը բղեշխի քենին էր: Եւ ահա Վահանին տեսնում ենք Հայաստանում՝ սպարապետի բարձր պաշտօնով: Ուրացողները երկիւղ են կրում նրանից եւ դիմում փորձուած միջոցի՝ Պերոզ արքայի առջեւ ամբաստանում են Վահանին:

Մամիկոնեանների տիրոյթ Տայք նահանգում, Փառանգիոն եւ Բողբերդ վայրերում ոսկու յայտնի հանքեր կային: Ամենայն հաւանականութեամբ հէնց այդ հանքերն էին Վահանի տնօրինութեան ներքոյ: Այդ հանքերի վրայ նշանակուած էր գործակից, պարզապէս՝ Հսկիչ, որը, թւում է, պիտի ապահովէր հաշուետուութիւնը եւ հանուող ոսկուց Դուան եկամուտը: Հսկիչը Վրիւ անունով մի ասորի էր: Վահանը նրան թոյլ չէր տալիս մօտենալ հանքերին եւ դրանով տապալում Վրիւի արքունի գործը: Դժգոհելով ստեղծուած վիճակից՝ Վրիւը արքայից արքային յայտնում էր, որ Վահանը իր մօտ է հաւաքել աշխարհի ոսկին, մտադիր է գնալ կայսեր կամ յոյների մօտ՝ ոսկու օգնութեամբ զօրք խնդրելու եւ ապստամբելու:

Ղազար Փարպեցին [գլ. ԿԴ] պատկերաւոր եղանակով է շարադրում Վահանի յաջորդ քայլերը: Նա հաւաքում է իր մօտ եղած ոսկին եւ ուղեւորւում դէպի արքունիք: Պերոզը զարմանում է. Վահանը ոչ միայն շտապում է ներկայանալ արքայից արքային, այլեւ հետը ինչ-որ բան է բերել. այդպիսի վարմունքն ամենեւին չի համապատասխանում Վրիւի ասածին: Իմանալով այդ ինչ-որ բանի, այսինքն՝ ոսկու չափերը՝ Պերոզն ուրախանում է, իսկ Վահանը փորձում է արդարանալ: Վահանը լաւ գիտէ Արեւաց ուժը ապստամբելով. հնում շատ ազգեր են ենթարկուել սաստիկ երկիւղի եւ հնազանդուել: Վրիւը պնդում է, որ Վահանը մտադիր է ապստամբել, բայց Վահանը ծառայ

անգամ չունի, որպէսզի տիրոջը կերակուր պատրաստի: Ամբողջ գնդում կայ 2-3 պատանի, եւ նրանք էլ չեն ենթարկուած հրամանատարին: Եւ վերջապէս, եթէ նա՝ Վահանը, օտարութիւն գնալու ծրագրեր մշակէր, ինչո՞ւ պիտի հետը այսքան ոսկի բերէր:

Պատմիչն ասում է, որ Պերոզն ու աւագանին հաւատացին Վահանի իմաստուն խօսքերին, ամաչեցրին եւ արհամարհեցին Վրիւին, Վահանը վերագարձաւ մեծարանքով եւ շքեղութեամբ: Բայց այդ բոլորի հետ մէկտեղ սպարապետ Վահան Մամիկոնեանը, ներկայանալով արքունիք, «տկարանայր ի հաւատն», այսինքն՝ ստիպուած եղաւ ընդունել մոգութիւն: Վերցնելով բերած ոսկին՝ Պերոզը շարունակում էր, այնուամենայնիւ, կասկածել Հայոց սպարապետի հաւատարմութեան վրայ: Հետագայ անցքերը ցոյց տուեցին, որ արքայից արքայի կասկածամտութիւնն անհիմն չէր:

Ե դարում ապագայ միասնական Վրաստանը բաժանուած էր Բիւզանդիայի եւ Սասանեանների միջեւ: Վերջիններիս իշխանութիւնը տարածուած էր արեւելեան հատուածի վրայ, որը վրացերէն կոչւում էր Քարթլի, հայերէն՝ Վիրք: Ի տարբերութիւն Հայաստանի, թագաւորական իշխանութիւնն այստեղ վերացուած չէր. Ե դարի երկրորդ կէսին Քարթլիում տիրում էր հզօր Վախթանգ Գորգասալ արքան (446-502): Վախթանգ Գորգասալը ձգտում էր իրեն ենթարկել նաեւ արեւմտեան հատուածի առանձին մասեր: Նրա օրօք Թբիլիսին (Տփղիսը) դառնում է պետութեան մայրաքաղաք, թագաւորի հրամանով քաղաքը շրջապատում են ամուր պարսպով: Աշխարհիկ եւ եկեղեցական շինարարութիւնը մեծ թափ է ստանում:

Դրա հետ մէկտեղ՝ Վախթանգը ստիպուած է հաշտուել իրանի գերագոյն իշխանութեան հետ, որն այստեղ մօտաւորապէս նոյն քաղաքականութիւնն էր վարում, ինչ որ Հայաստանի իրենն ենթակայ հատուածում եւ Աղուանքում: Վրաց ժողովուրդը նոյն սպառնալիքի առաջ է գտնուել, ինչ որ նրա քրիստոնեայ հարեւանները: Սասանեանների իշխանութիւնը կոչուած էին ապահովելու Գուգարքում նստած բղեշխները:

Առնուազն Հայոց թագաւոր Արտաշէս Ա-ի (Ք.ա. 189-160) ժամանակներից սկսած՝ Գուգարքը եղել է Մեծ Հայքի կազմում: Լինելով երկրի 4 բղեշխութիւններից մէկը՝ այն կարեւոր դեր էր կատարում երկիրը թշնամիներից պաշտպանելու գործում: Գուգարքը տարածուած էր Կուր գետի վերին հոսանքով, իր աշխարհագրական դիրքով յարելով ե՛լ Հայաստանին, ե՛լ Վրաստանին: 387 թ. բղեշխութիւնն անջատուում է Հայոց թագաւորութիւնից եւ, որպէս առանձին միաւոր, մտցուում Վրաց մարզպանութեան մէջ⁵: Բղեշխների իշխանութիւնն այստեղ ժառանգական է: Ե դարի կէսերին Գուգարքի տէրն էր մեզ արդէն ծանօթ Աշուշայ բղեշխը, Հմայեակ Մամիկոնեանի քենակալը: Լաւ յարաբերութիւններ պահպանելով Պարսից Դուան հետ՝ նա միաժամանակ ապաստան է տալիս այդ Դուան դէմ ապստամբածների ընտանիքներին, պայմաններ է ստեղծում, որպէսզի Գուգարքում եկեղեցին ծաղկի: Բոլորովին այլ դիրք էր բռնել Աշուշայի որդի Վազգէնը (վրաց աղբիւրները նրան Վարսիլէն են անուանում):

Վազգէնը, ինչպէս ասացինք, ամուսնացած էր Վարդան Մամիկոնեանի դուստր, Սահակ Պարթևի թոռ Շուշանիկի հետ: Նա ուղեւորուում է Տիգրոն, ընդունում մոգութիւն եւ, թագաւորից մէկ ուրիշ կին առնելով, վերադառնում Վիրք (այդ երկրորդ կինը եղել է իբրեւ թէ թագաւորի գոքանչը): Մանրամասնութիւնները գիտենք Շուշանիկի վկայաբանութիւնից, որը պահպանուել է Հայերէն եւ վրացերէն տարբերակներով⁶: Վկայաբանու-

թիւնը կազմուած է՝ հետեւելով կանոններին, ուստի շատ կէտերում հեղինակը պարզապէս ենթարկուում է գրական այդ տեսակի պահանջներին: Այնուամենայնիւ, վկայաբանութիւնը հարուստ է իրական տարրերով, եւ դրանց շնորհիւ կարելի է ընդհանուր պատկեր կազմել Վազգէնի մասին: Ընդունելով մոգութիւն ոչ թէ հարկադրաբար, այլ կամովին՝ Վազգէնը նոյնն է պահանջում նաեւ կնոջից, որը կտրականապէս հրաժարուում է եւ, չդիմանալով ամուսնու պատճառած բազմամեայ տանջանքներին, վախճանուում է (հետագայում սուրբ է ճանաչուում ինչպէս Հայոց, այնպէս եւ Վրաց եկեղեցիների համար): Վազգէնն, այսպիսով, ուրացող է, մոլեռանդ կրակապաշտ, քրիստոնէութեան հալածիչ: Եւ ահա Պերոզի 25-րդ տարում, այն է՝ 482 թ.⁷, Վախթանգ թագաւորը սպանում է բղեշխին: Այդ սպանութիւնը պարզ, աներկբայելի նշան էր, որ Վիրքի տիրակալը հրաժարուել է ճանաչել շահանշահի իշխանութիւնը եւ ապստամբել:

Հայոց զօրքն այդ տարի գնացել էր Աղուանք՝ սահմանապահ բերդերի կայազօրի ապստամբութիւնը ճնշելու: Նրանց հետ էին Զարմիհր Հազարաւուխտը եւ Հայոց աշխարհի մարզպան Ատրվշնասպ Յոզմանդեանը: Հայերը ցնծութեամբ ընդունեցին Վիրքում սկսուած ապստամբութեան լուրը: Ոգեւորում էր նաեւ Վախթանգի խոստումը. «Ձեմ թողնի որպէսզի որեւէ մէկը պատերազմ տեսնի, այլ այնչափ հոն կը հանեմ, որ Պարսից զօրքը նրան չի կարողանայ դիմադրել»: Հայ զօրականները մի պահ մտածեցին, որ նրանց կարող են Տիգրոն քշել, բայց նրանց ուղարկեցին Հայաստան: Զօրքը մտաւ Շիրակի դաշտ, որտեղ եւ բնակուել էր Ատրվշնասպ մարզպանը եւ նրան միացած Հայոց հազարապետ Վեհվեհնամը: Հէնց այստեղ էլ որոշում ընդունեցին կապ հաստատել Վահան Մամիկոնեանի հետ, համոզել, որ նա միանայ ապստամբներին: Նրանց յայտնի էր Վահանի տրտմութիւնն իր մոգութեան պատճառով: Ժամը պատեհ էր՝

ե՛լ Վահանը, ե՛լ նրանք կ'ազատուեն, առաջինը՝ իրեն տանջող մտքերից, միևնրերը՝ հնազանդ վիճակից: «Այդ Վրաց արքայ Վախթանգը իսկական տղամարդ է, թերեւս, Աստուած կը տեսնի մեզ սպառնացող վտանգը եւ կը գայ օգնութեան, իսկ վրացիները հետ միասին մի փոքր կը նեղենք պարսիկներին»:

Եւ մի գիշեր գաղտնի կերպով այդ բոլորը յայտնեցին սպարապետին: Վահանը սկզբնապէս տատանուում էր: Ճիշտ է, նա գիշեր-ցերեկ մտածմունքի մէջ է՝ ինչպէ՞ս վերացնել ուրացութեան կնիքը, բայց ապստամբութեան գաղափարը մերժում է: Պարսիկները զօրեղ են, հռոմները թոյլ են եւ խաբեբայ, դուք իմ փորձից գիտէք, թէ ինչպէս մեր հայրերին երդուեցին պահել ուխտը եւ ստեցին: Վիրքը մեծ ուժ չունի, նրա այրուձին սակաւաթիւ է, յոյներին չի կարելի վստահել: Բայց ամէնից շատ վախեցէք հէնց ձեզնից, — ասում է սպարապետը, — դուք սուտ եւ անվստահ մարդիկ էք. հրաժարուէք ձեր մտքերից եւ ապաւինէք միայն Աստծոյ օգնութեանը: Նախարարները լիովին համաձայնեցին Վահանի հետ, յայտնեցին, որ յոյսը կապում են ո՛չ Հռոմներին, ո՛չ էլ Յոյներին, այլ միայն Աստծոյ հետ: Շարունակելով խօսքը նոյն ոճով՝ յիշեցրին նախնիների նահատակութիւնը, ապա իրենց պատրաստակամութիւնը յայտնեցին աւելի շուտ մեռնել, քան տեսնել, թէ թշնամիները ինչպէս են ամէն օր հարուած հասցնում քրիստոնէութեանը: Վահանը յիշեցրեց նաեւ, որ իր Վարդ եղբայրը Պարսիկների ձեռքում է, եթէ իմանան բանակցութիւնների մասին, նրան կը կապեն եւ կը տանջեն: Այնուամենայնիւ, ինչպէս եւ սպասելի էր, նա տուեց իր համաձայնութիւնը, եւ ահա թէ՛ քրիստոնեաները, թէ՛ ուրացողները (!) երդուեցին իրենց գաղափարից չհեռանալ [Ղազ. Փարպ., գլ. ԿԶ]: Հաւանաբար հէնց այդ ժամանակ դաշինք հաստատեցին Վախթանգի հետ [տե՛ս էջ 132. 29-30, 133. 12] եւ մինչեւ վերջ հաւատարիմ մնացին իրենց ուխտին:

Համընդհանուր ապստամբութիւնը դարձել էր իրականութիւն:

Ղազար Փարպեցու աշխատութիւնը մեր միակ գրաւոր սկզբնաղբիւրն է ապստամբութեան ընթացքի եւ առհասարակ շարժման հետ կապուած գլխաւոր հարցերի ուսումնասիրութեան համար: Ուստի շատ դէպքերում մենք աւելի նպատակայարմար ենք դիտում պարզապէս վերաշարադրել մեր հեղինակի ասածը: Ընթերցողն, անշուշտ, կուահուում է, որ պատմիչը ոչ միայն փաստերն արձանագրում է իրենց իրական հերթականութեամբ, այլեւ այդ փաստերին տալիս է գրական կերպարանք: Շատ դէպքերում նա ցոյց է տալիս ոչ միայն ինչպէ՛ս էր, այլ ինչպէ՛ս պիտի լինէր: Կարելի է հաստատ ասել, որ նախարարների եւ Վահանի միջեւ եղած բանակցութիւնները մեծ մասամբ երեւակայութեամբ են նկարագրուած: Բայց դրանք ժամանակակցի, իրազեկ մարդու, վերջապէս, իմաստուն պատմիչի երեւակայութեան ծնունդ են: Ղազարի խօսքերը չի կարելի անվերապահօրէն ընդունել, բայց կարելի է վստահ լինել, որ ժամանակի ոգին նա արտայայտում է ճշտութեամբ: Իսկ դա յաճախ աւելի կարեւոր է դարաշրջանը հասկանալու համար, քան առանձին փաստերի չոր ու ցամաք արձանագրումը:

Ապստամբութիւնը սկզբից եւեթ եղել է կազմակերպուած: Ապստամբները Վահանին ճանաչեցին Մամիկոնեան տոհմի տանուտէր, ընտրեցին նրան սպարապետ, իսկ Սահակ Բագրատունուն՝ մարզպան: Այդ փաստերը նշանակալից են. ապստամբները պահպանում են եղած վարչական համակարգը, պահպանում են մարզպանի պաշտօնը, այսինքն՝ այն կառուցուածքը, որը իմաստ է ստանում հէնց Պարսից գերագոյն իշխանութեան պայմաններում: Նրանք ընդհանուր առմամբ պատրաստ են ճանաչելու Սասանեաններին, միայն թէ դրա հետ մէկտեղ ճանաչուեն նաեւ Հայերի պահանջները: Արտասանելով այն ճառերը, որոնք

ներա բերանն է դնում Ղազար Փարպեցին՝ Վահան Մամիկոնեանը Հէնց այդ ոգով է արտայայտուում: Կատարեալ անկախութիւնը եղել է անհնարին, ապստամբները ձգտել են ինքնավարութեան եւ, վերջ ի վերջոյ, հասել իրենց նպատակին:

Գաղտնի խորհրդակցութեան արդիւնքները պարսիկներին անշուշտ յայտնի են դառնում: Ատրվշնասպ մարզպանը եւ Վեհվեհնամ հազարապետը փոխում են արիւնբից եւ հայ ուրացողներից կազմուած իրենց ենթակայ ջոկատների դիրքը, նրանց կենտրոնացնում Անի ամրոցի մօտերքում, իսկ իրենք փախչում Արտաշատ: Ապստամբները հետապնդում են նրանց, սակայն ապարդիւն: Յաջողում է հակառակորդի միայն գումակը բռնել եւ ձերբակալել մաղխազ Գաղիշոյ խորխոռունուն:

Հայոց ջոկատները հասնում են Դուին, այնուհետեւ պաշարում Արտաշատը: Մարզպանին ու հազարապետին յաջողում է այս անգամ էլ ազատուել՝ օգտուելով գիշերուայ մութից. նրանք փախչում են Ատրպատական: Մարզպանին համոզում են, որ Վահանի ուժերը սակաւաթիւ են. ո՛չ հոներից, ո՛չ էլ կայսրից նա օգնութիւն չի ստանալու, մնում է եռանդուն կերպով գործն առաջ տանել եւ դրանով թէ՛ իր, թէ՛ հայ ուրացողների համար պատիւներ եւ պարգեւներ վաստակել: Միտ առնելով՝ մարզպանը հաւաքում է իր զօրականներին, օգնութիւն ստանում հարեւան մարզերից եւ, առաջնորդելով նրանց, մօտենում Երասխ գետին: Ատրպատական երկրից թշնամին մէկ անգամ եւս արշաւեց Հայաստան [գլ. Կէ]:

Հայկական ուժերի անբաւարարութիւնը զգում էր նաեւ Վահանը, նա նոյնիսկ մտածում էր ժամանակաւորապէս ամրանալ Տայքում: Յաղթանակեց, սակայն, հակառակ կարծիքը. սպարապետը եւ մարզպան Սահակ Բագրատունին մնում են ուտանում⁸ եւ նեղում թշնամուն: Վահանի հետ էր Բաբիկ Սիւնին, որին ապստամբները ճանաչեցին Սիւնիքի տէր, սպարապե-

տի եղբայր Վասակը, մաղխազ Գարջոյլ խորխոռունին, Կամսարական եղբայրները (Շիրակի տէր Ներսեհը եւ Հրահատը), Գնունի եղբայրները՝ Ատոմն ու Առաստամը: Բանակում էր նաեւ Գիւտի յաջորդը՝ կաթողիկոս Յովհան Մանդակունին: Բայց փայլուն հրամանատարների տրամադրութեան տակ կար ընդամէնը 400 զինուոր:

Արեաց զօրքը որոշել էր Նախճաւանի մօտ անցնել Երասխը: Ղազար Փարպեցու կարծիքով նրանց ընդհանուր թիւը 7000 զօրական էր: Սպարապետին եւ մարզպանին թողնելով ուտանում՝ նախարարները շարժուցին դէպի գետը: Պայմանաւորուել էին մի գաղտնի տեղում սպասել, մինչեւ Արեաց զօրքի կէսը անցնի Երասխի այս ափը եւ ապա գրոհել: Բայց երբ մտան Վարազկերտ գիւղը, յայտնի դարձաւ, որ թշնամին արդէն անցել է գետը:

Առաջապահ ջոկատի հետ միասին Վասակ Մամիկոնեանը մտաւ Կոռուակք գիւղը՝ նպատակ ունենալով հետախուզել հակառակորդի ուժերը: Բայց լուսաբացին նոյն գիւղը մտաւ նաեւ Ատրվշնասպ մարզպանը: Վասակն իրեն չկորցրեց, հրամայեց իր մարդկանց փոքրիկ (2-3 հոգի) խմբերով աննկատ հեռանալ գիւղից: Ինքը ձեւացնում էր, թէ իբր եկել է բանակցութիւնների: Իմանալով, որ ջոկատն ամբողջութեամբ դուրս է եկել գիւղից եւ Վարազկերտում միացել գլխաւոր ուժերին՝ Վասակն ինքն էլ անվնաս հեռացաւ:

Միանալով եղբօրը՝ Վասակ Մամիկոնեանը յայտնեց, որ Պարսից բանակը մեծ է, սակայն նրանցից շատերը «անպիտանք են եւ քերթաքաղ իշաւարեան»⁹: Զգուշաւոր Վահանը հրաման տուեց ամրանալ լեռնակողմում: Հայերը բանակ դրին Մասիս ստորոտում՝ Ակոռի գիւղի մօտ: Հէնց այստեղ տեղի ունեցաւ առաջին մեծ ճակատամարտը:

Ինչպէս ասացինք, Հայոց զօրքը եղել է փոքրաթիւ՝ 400 հոգի պարսիկների 7000-ի դիմաց: Այդ 400-ը բաժանուեցին 4 առաջի (ճակատի), ընդ որում պայման կար, որ եթէ մի կողմը թուլանայ, ապա միւսն անմիջապէս օգնութեան գայ: Ինչպէս Հայերը, այնպէս եւ պարսիկները կուռում էին կատաղութեամբ: Ճակատամարտի թեժ պահին Գարջոյլ Խորխոռունի մաղխազը իր 100 զինուորների հետ անցաւ թշնամու կողմը: Այնուհետեւ նա իր ուժերին միացրեց կատիշներից⁷ կազմուած ջոկատը, ապա Հայ ուրացողներին եւ ձորի կողմից մտաւ Հայերի թիկունքը: Զօրականներից մէկը, տեսնելով, որ կատիշները կոտորում են Հայերին, այդ մասին յայտնեց Կամսարականներին: Նրանք զայրացան լրաբերի դէմ, թէ՛ դա մեր գունդն է, դու խաբէութեամբ ուզում ես մեծ գործը տապալել. քիչ էր մնում, որ նրան սպանէին: Շուտով, սակայն, Համոզուեցին, որ պիտի ընկնէին ծուղակը, եւ իրենք յարձակուեցին դաւաճանի վրայ:

Այդ ընթացքում Վասակ Մամիկոնեանի եւ Բարգէն Սիւնուհատուածում սպանուել էր Պարսից մարզպան Ատրվշնասպը: Գարջոյլի դէմ գործողութիւններն աւարտուեցին փառաւոր յաջողութեամբ: Մեր հեղինակը շարունակում է. կատարելով սատանայի կամքը՝ երկու նախարար լուր տարան սպարապետին, մարզպանին, կաթողիկոսին (որոնք Դուին ուստանում էին), իբր պարսիկները յաղթանակ են տարել, Վասակ Մամիկոնեանը, Բարգէն Սիւնին, Կամսարականները, Գնունիները՝ սպանուել, իսկ լանջակողմը, որտեղ գտնուում է Ակոռի գիւղը, ծածկուել է Հայերի դիակներով: Բայց այդ լուրը դեռ չտարածուած՝ երեւաց Առաստամ Գնունին եւ յայտնեց. «Սուրբ Խաչի զօրութիւնը յաղթեց եւ մի՛շտ կը յաղթի»: Շուտով մօտեցան եւ յաղթութիւն նուաճած զօրամասերը:

Ջախջախելով Պարսից բանակը՝ Հայ մարտիկները հնարաւորութիւն ստացան հանգիստ անցկացնել ձմեռը: Կռահելով, որ քարնանը կռիւը պիտի վերսկսուի՝ համապատասխան պատրաստութիւն տեսան [գլ. ԿԸ-ԿԹ]:

Եւ իրօք, 483 թ. սկզբին պարսիկները նոր արշաւանք ձեռնարկեցին: Ինչպէս եւ նախորդ տարուամ, նրանք դուրս եկան Ատրպատականից՝ փուշտիպանան սաղար Ատրներսեհի գլխաւորութեամբ¹⁰: Վահան Մամիկոնեանը Դուինից անմիջապէս դուրս եկաւ նրանց ընդառաջ եւ բանակեց Ներսէհապատ գիւղի մօտ՝ Արտազ գաւառում: Բանակում էր գտնուում Յովհան Մանդակունի կաթողիկոսը: Հայերը պիտի մենակ դիմադրէին պարսիկներին: Դեռեւս ձմռանը դեսպան էին ուղարկել Վախթանգ թագաւորին, որպէսզի օգնութեան ուղարկի հոների խոստացած զօրմասը: Երկար բանակցութիւններից յետոյ Վրաց թագաւորը ուղարկեց 300 հոգ զինուոր, բայց մէկ ամիս չանցած՝ ետ պահանջեց նրանց... [էջ 126. 24-30]:

Զօրականներն ամբողջ գիշերը աղօթքով անցկացրին, իսկ առաւօտեան Յովհան կաթողիկոսը դիմեց նրանց քաջալերիչ խօսքով. այդպիսին է եղել դարաշրջանի սովորութիւնը: Այնուհետեւ Վահան Մամիկոնեանը ճակատը բաժանեց 3 կողմերի (Ղազար Փարպեցու մէկ ուրիշ նկարագրութիւնից գիտենք, որ կողմ յատուկ տեղմինը, որպէս հոմանիշ, ունեցել է առաջ բառը): Ինքը սպարապետը իր այրուձիով կանգնեց ձախ կողմի շրջ: Վրէն Վանանդացին իր հրամանատարութեան ներքոյ գտնուող այրուձիով առանձին տեղ գրաւեց: Պատրաստ էին նաեւ կողմերը: Վահան Մամիկոնեանը զգուշացրեց այդ կողմերի աւագներին՝ մեր առջեւ են գտնուում պարսիկների, կատիշների եւ Սիւնեաց գնդի ընտիր զօրականները¹¹, պէտք չէ շտապել, եթէ սպարապետին յաջողուեց փախուստի մատնել այն ուժերը, ո-

⁷ Կատիշներ - իրանական ցեղ

րոնք անմիջապէս իր առաջ են գտնուում, ապա կը նահանջեն նաեւ միւս կողմերը:

Ճակատամարտը կատարի էր, Բարշղ Վահեւուհու զինուորները չդիմացան եւ լքեցին մարտի դաշտը: Սահակ Բագրատունին եւ փուշտիպանների պետ Ատրնեբրսեհը մենամարտի բռնուեցին նիզակներով, վրիպեցին, ապա մարտը շարունակեցին ձեռնակուով: Վահանը Վրէնին հրամայեց շարժուել առաջ, բայց Վրէնը հրաժարուեց. «Ձեռն կարող. այս պահին դու ինձ վրայ յոյս չդնես»: Եւ ահա սպարապետը Կամսարական եղբայրների հետ միասին վճռական յարձակում կատարեց: Հայ զօրականները կործանում էին թշնամուն, Ներսեհ Կամսարականը մահացու հարուած հասցրեց Պարսից առաջնորդներից մէկին՝ Ատրվշնասպ Տապեանին: Տեսնելով այդ յաջողութիւնները՝ ոգի էին առնում փախստականները, վերականգնում շարքերը եւ անցնում յարձակման:

Յաղթանակը կատարեալ էր. ջարդելով թշնամուն՝ հայերը բանակ վերադարձան «բարի անուամբ եւ բազում փառօք, լաւ աւարաւ եւ սաստիկ ընչիւք»,— ասում է պատմիչը [գլ. ՀԱ]:

Ներսեհապատի ճակատամարտը տեղի է ունեցել 483 թ. գարնանը: Նոյն գարնան երկրորդ մեծ յաջողութիւնը Վահանի եղբայր Վարդ Մամիկոնեանի ազատութիւնն էր: Վարդը մնացել էր պարսիկների հսկողութեան տակ: Վահանը միացաւ ապստամբներին՝ քաջ գիտակցելով, թէ ինչպիսի վտանգի է ենթարկում իր եղբոր կեանքը: Եւ ահա Վարդին յաջողում է փախչել, այն էլ՝ ոչ մենակ, այլ իր հետ տանելով ծառաներին, շքախումբը, ամբողջ ունեցուածքը: Հասնելով Հայոց երկիրը՝ Վարդը միացաւ ապստամբներին: Օգնութիւնը ժամանակին էր, առաջիկայում պատերազմը պիտի աւելի սաստկանար [գլ. ՀԲ]:

Հայոց զօրքը տեղաւորուել էր Մաղկոտն գաւառում՝ Այրաբատ աշխարհի հարաւում: Ճակատամարտից յետոյ Վարչակի կոչուող ջերմուկի մօտ մտադիր էին հանգիստ առնել: Հէնց այստեղ սուրհանդակը նամակ է բերում Վախթանգից: Վրաց թագաւորը յայտնում էր. «Իմ Վրաց երկիրը մի մեծ գունդ է մտել. տեսնելով որ չեմ կարող դիմադրել՝ դիմել եմ փախուստի դէպի Հայոց լեռները եւ այստեղ, Վիրքի սահմանների մօտ ձեզ եմ սպասում»: Միաժամանակ Վախթանգը յայտնում էր, որ հոններին հրաման է տուել՝ գալ եւ միանալ ապստամբներին: Հոնները դեռեւս չեն երեւացել, բայց նախքան հայերի գալուստը անշուշտ տեղ կը հասնեն: Հայերը, վրացիները, հոնները միանալով կը ջախջախեն պարսիկներին: Աւելին՝ եզրակացնում էր Վրաց թագաւորը, երբ հոնները գան, մեզ անելիք չի լինի. նրանք իրենք կը կատարեն գործը, մանաւանդ որ Վախթանգը կոչ էր արել հոնների անչափ բազմութեանը:

Մինչդեռ հոնները յապաղում էին, եւ Վախթանգը ճիգ էր անում այս կամ այն կերպ բացատրել նրանց ուշացումը: Մէկ ձգձգում էր լեռնականների գալուստը, մէկ էլ ասում, որ հոնները միայն այն դէպքում կ'իջնեն լեռներից, եթէ համոզուեն, որ հայերն արդէն պատերազմի դաշտում են գտնուում: Յայտնում էր նաեւ, որ իբր Միհրանը թողել է Վիրքը եւ Աղուանից կողմերն անցել: Ղազար Փարպեցին այդ բոլորը գիտակցուած խաբեբայութիւն է համարում, բայց ի՞նչ էր մնում անել նեղն ընկած Վրաց թագաւորին, հայերի օգնութիւնն ապահովելու համար:

Հոններն այդպէս էլ չերեւացին, իսկ հայ զօրականները, հաւատարիմ լինելով Վախթանգի հետ կնքած դաշինքին («վասն զի երդումն էր Աւետարանաւ եւ խաչիւ ընդ թագաւորին Վրաց Վախթանգայ»), շտապեցին օգնութեան եւ մտան Գուգարքի Կանգարք գաւառը: Այստեղից նրանք իջան Ճարմանայնի դաշ-

տը՝ Կուր գետի հովիտը. հենց այստեղ տեղի ունեցաւ երրորդ մեծ ճակատամարտը:

483 թ. ամառն էր կամ վաղ աշունը՝ սաստիկ շոգ էր, նկատում է պատմիչը: Հայ իշխաններից ոմանք շարժումը դէպի Վիրք սխալ էին համարում, բայց փոքրամասնութիւն կազմելով՝ վերջ ի վերջոյ, ստիպուած եղան համաձայնել: 3 թէ 4 օրից երեւաց Միհրանը: Պարսիկները բանակ դրեցին Կուրի միւս ափին՝ հայ զօրքի դէմ-յանդիման: Հայերը թողեցին իրենց տեղը եւ ամրացան մի այլ վայրում, հակառակորդից աւելի հեռու:

Մինչդեռ կատարուեց այն, ինչ նման դէպքերում սովորական էր: Հայոց զօրքի մի մասը գաղտնի բանակցութիւններ սկսեց Միհրանի հետ: Վահանն իբր բռնի կերպով էր ստիպել նրանց զէնք բարձրացնել արիների դէմ: Եթէ դուք, — ասում էին նրանք՝ դիմելով պարսիկներին, — մեզ թողութիւն շնորհէք, ապա մենք կը վերադառնանք նախկին ծառայութեանը: Իսկ վաղը, երբ ճակատամարտը սկսուի, մենք կը փախչենք գնդից, մեզ հետ էլ կը տանենք շատ շատերին [գլ. 29]:

Դաւաճանների այդ քայլը քայքայեց Հայոց զօրքը. Վահանը գիտէր, որ իր բանակը կորցրել է երբեմնի կամքն ու պատերազմելու ցանկութիւնը: Այնուամենայնիւ, նա դասաւորեց իր ուժերը այնպէս, ինչպէս դա թելադրում էր պատերազմ վարելու այն ժամանակուայ գիտութիւնը: Հայերը եւ վրացիները կռուելու էին կողք-կողքի: Նրանք գտնւում էին ըստ երեւոյթին Կուրի աջ՝ հարաւային ափին, իսկ պարսիկները, ժամանելով Աղուանքից, ամրացել էին հիւսիսային ափին: Ծակատամարտը սկսուեց, Մամիկոնեանները եւ Կամսարականները կռուում էին հերոսաբար, սակայն հայկական ջոկատները ստիպուած եղան յետ նահանջել. տագնապ պատեց նաեւ վրացիներին: Այդ ճակատամարտում սպանուեցին Վասակ Մամիկոնեանը եւ մարգպան Սահակ Բագրատունին:

Վահանը հեռացաւ դէպի Տայոց կողմերը, ապաստան որոնելով Մամիկոնեանների ժառանգական տիրոյթում (նախորդ գլխում ասացինք, որ 451 թ. աշնանը Տայքում էր ամրացել Վահանի հայր Հմայեակ Մամիկոնեանը): Նրան միացան Ճարմանայնի փախստականները: Սպարապետի հետ անբաժան էին երկու Կամսարական եղբայրները՝ Ներսէզը եւ Սահակը: Այստեղ եկաւ Միհրանն իր գնդով եւ բանակեց սահմանամերձ Դու գիւղում: Դուն գտնւում էր Պարսից Հայաստանի հատուածում, մինչդեռ Վահանն ամրացել էր հոռոմոց մասում: Միհրանի նպատակն էր կամ Վահանին ջարդել պատերազմում, կամ խորամանկութեամբ գերի վերցնել, կամ էլ համոզել, որ կամովին ենթարկուի պարսիկներին:

Վահանը բանակել էր Մկնառինջ գիւղում, Դուից 2 հրասախ (այսինքն՝ մօտաւորապէս 12 կմ) հեռաւորութեան վրայ: Եւ ահա սկսեցին գիւղից գիւղ անցնել սուրհանդակներ, Միհրանը ապստամբ սպարապետի հետ ձեռնամուխ եղաւ բանակցութիւնների: Պարսից զօրապետը համոզում էր Վահանին՝ «Մի՛ կորչիր, արքայից արքայի ծառայութիւնից դուրս մի՛ եկ. Հայոց աշխարհը դէպի կործանում մի՛ տանի: Հնազանդուի՛ր թագաւորին, իսկ ես [ձեր երկուսի միջեւ] կը լինեմ միջնորդ: Բարի հոգու տէր լինելով՝ նա սիրում է ինձ, ականջ դնում իմ ասածին: Ես կը դիմեմ թագաւորին, կը հաշտեցնեմ ձեզ եւ կ'աշխատեմ, որպէսզի նա տայ քեզ այն, ինչին որ արժանի ես»: Բայց Վահանը թուարկում էր պարսիկների կատարած այն ոտնաձգութիւնները, որոնք եւ առաջացրին ապստամբութեան վերածուած բողոքը [էջ 136-139]: Ծառերն, ինչպէս եւ այլուր, Ղազար Փարպեցու ստեղծագործութիւնն են, դրանց իսկական կորիզը մենք բերեցինք շարժման պատճառների մասին խօսելիս: Այդ ճառերի հիման վրայ կարելի է պատկերացում կազմել հայկա-

կան հասարակական հոգեբանութեան մի շարք առանձնայատկութիւնների մասին:

Բանակցութիւնների ընթացքում շօշափուեց մի հարց եւս: Տասնեակ տարիներ էին անցել այն պահից, երբ հայերը դարձել էին արքայից արքայի հպատակներ: Վահան Մամիկոնեանի ժամանակակիցները դրանից չեն տրտնջում (եթէ առհասարակ տրտնջացել են): Բայց ահա Պերոզը հրապարակաւ վատաբանում է հայերին. «Ասորին վատ մարդ է եւ անպէտք զօրական, բայց ասորուց վատթարն ու անպիտանը հայն է»: Այդ յայտարարութիւնն ընկալուում է ոչ միայն որպէս ազգային ինքնասիրութեան վիրաւորանք: Արքայից արքան կասկածի տակ է դրել հայ ազգի (միաժամանակ նաեւ զօրքի) բարձր դիրքը, որը վաստակած են եղել հայաստանցի հպատակները: Միւս խախտումների հետ մէկտեղ, այդպիսի վերաբերմունքը անպայման պիտի բողոք առաջացնէր [գլ. 26]:

Բանակցութիւնները չաւարտած՝ Միհրանին անսպասելիօրէն յետ կանչեցին Պարսկաստան: Ծանապարհ ընկնելով, նա իր հետ տարաւ Հրահատ Կամսարականին եւ Յազդ Սիւնուն: Կամսարականին յաջողուեց փախչել, իսկ Յազդ Սիւնին պիտի ընտրութիւն կատարէր մահուան եւ ուրացութեան միջեւ: Սիւնին յետ չկանգնեց իր հաւատից եւ 483 թ. սեպտեմբերի 12-ին իր կեանքն աւարտեց որպէս վկայ:

Միհրանի գնալը Վահանին հնարաւորութիւն տուեց շունչ քաշել: Սպարապետը տեղափոխուեց Այրարատ եւ ձմեռեց Դուինում: Փաստը նշանակալից է՝ 483-484 թթ. ոչ թէ պարսիկները, այլ ապստամբներն են տիրում Հայոց երկրի բուն սրտում՝ ոստանում:

Զմուռը Վիրքից դեսպաններ եկան, բերելով բոլորովին աներեւակայելի մի լուր: Նրանց ասելով՝ Սահակ Բագրատունի

մարգպանը եւ սպարապետի եղբայր Վասակ Մամիկոնեանը ծարմանայնի մարտից յետոյ կենդանի են մնացել: Ծանր վէրքերով, մեծ փորձութիւններից յետոյ նրանք վերջապէս ապաստան են գտել ինչ-որ բերդայի մօտ, իսկ այժմ սպասում են, որ նրանց օգնութեան կը գան, եւ նրանք կրկին կը մասնակցեն ընդհանուր պայքարին: Այդ լուրը Ղազար Փարպեցին անուանում է անմիտ մարդկանց սատանայական խօսքեր: Սպարապետը մեծ կասկածով ընկալեց դեսպանների պատմածը: Լուրը դալիս է չարամիտ մարդկանցից, բացատրում էր նա ընկերներին՝ իմանալով, որ գարնանը Պարսից բանակը մտնելու է Հայաստան, մտածում են, որ կարող են ոստանում գտնուող Հայոց զօրքը քայքայել, պառակտում մտցնել, ցրել այն [էջ 142. 36-143. 3]:

Այնուամենայնիւ, զիջելով աճխորհուրդ եւ թեթեւամիտ մարդկանց, մի ջոկատ են կազմում եւ Մուշէղ Մամիկոնեանի գլխաւորութեամբ ուղարկում Վիրք: Հայ զօրականները տեղ հասնելով, անշուշտ, ոչ ոքի չեն գտնում¹²:

Աւարտուեց պատերազմական նաեւ երկրորդ ձմեռը, երբ 484 թ. իր զօրքով Հայաստան ներխուժեց Զարմիհր Հազարաւուխտը (482 թ. նա ամրականների ըմբոստութիւնը ճնշելու համար եղել էր Աղուանքում): Հայ ուրացողները հասցրին հաղորդել նրան, որ Հայոց զօրքի գրեթէ կէսը գտնուում է Վիրքում, ոստանում եղած Վահանի ուժերը փոքրաթիւ են: Հազարաւուխտը որոշում է գրոհել Վահանի վրայ Դուինի մօտ, այն մայրի անտառի կողմից, որը տնկել էր Խոսրով Բ Կոտակ (330-338) Հայոց թագաւորը: Վահանը եւ իր մարտիկները կուռում էին քաջաբար, սակայն ստիպուած եղան նահանջել: «Հզօր մարդու քաջաբար կատարուած փախուստը յաջորդ գործի վերաբերմամբ, սաստիկ ահ է ներշնչում թշնամու գնդին», այդ կապակցութեամբ նկատում է պատմիչը [էջ 144. 30-31], սակայն 10-62

չի թաքցնում, որ դրուժիւնը շատ ծանր էր: Պարսիկները Դուհից դուրս մղեցին ապստամբներին, ճանապարհին վիրաւորուեց եւ քիչ էր մնում գերի ընկնէր կաթողիկոսը: Նոյն օրը Վիրքից յետ եկաւ Մուշեղ Մամիկոնեանը, բայց նրան մնում էր միանալ նահանջողներին [գլ. 2Ը]:

Վահանը լաւ էր պատկերացնում իրավիճակը: Նա որոշեց քաշուել ինքուրիք, որը գտնուում էր Բիւզանդական հատուածում: Սպարապետն իր զօրքով կանգ առաւ Վարայրվարում (ի Հոռոմ տաւ, այսինքն՝ Հայաստանի բիւզանդական բաժնում), Շաղագոմք գաւառում: Հազարաւուխտը յոյս ունէր, որ իրեն անվտանգութեան մէջ գտնելով, Վահանը կը կորցնի զգօնութիւնը: Նա գրոհեց, անակնկալի եկած սպարապետը չկարողացաւ դիմադրել: Ղազարն ասում է, որ պարսիկները «զբազումս ի ռամիկ մարդկանէն Հայոց սպանանէին» [էջ 145. 33-34]: Տեղացի էին դրանք, թէ՞ փախստականներ: Վահանին յաջողուեց, այնուամենայնիւ, իր հիմնական ուժերով փախչել, ուստի Հազարաւուխտի այդ արշաւանքը ամէնից կարեւոր կէտում նպատակին չհասաւ: Զարմիհր Հազարաւուխտը տեղաւորուեց Դու գիւղում, որտեղից անցեալ՝ 483 թ. բանակցութիւններ էր սկսել Վահան Մամիկոնեանի հետ: Միհրան զօրավարը, սակայն, արդէն յաջորդ օրը հրաման ստացաւ ուղեւորուել Վիրք: Հրամանն ասում էր՝ կամ բռնել, կամ սպանել, կամ էլ իր երկրից հալածել Վախթանգ թագաւորին [էջ 146. 13-14]: Հայաստանի նոր մարզպան էր նշանակուել Շապուհը՝ Միհրան տոհմից, իր յատուկ գնդով [գլ. 2Թ]:

Վախթանգ թագաւորը նոյնպիսի ծանր վիճակում էր գտնուում, ինչ որ եւ Վահանը: Երբ Հազարաւուխտն իր զօրքով մտաւ Արեւելեան Վրաստանի սահմանները, ազատանու մի մասը, ուրանալով, միացաւ նրան: Պարսից զօրավարին շրջապատում էին նաեւ նրանք, ովքեր նախկինում «միաբանութեան

մէջ էին արքայից արքայի հետ» [էջ 146. 22-23]: Խոստումներ տալով՝ Հազարաւուխտը կարողացաւ ի մի բերել այդ բազմութիւնը («միաբանեցուցեալ զշատս յաշխարհէն Վրաց»), կազմելով մի յատուկ գունդ: Սեփական հպատակների դաւաճանութիւնը Վախթանգին ստիպեց ապաստան որոնել Եգեր աշխարհում, այն է՝ Էգրիսի, Արեւմտեան Վրաստան:

Հայաստանում բախումներ են տեղի ունենում, սակայն մեծ ճակատամարտեր չեն լինում: Ղազար Փարպեցին միշտ նշում է ապստամբների յաջողութիւնները, մինչդեռ նրա շարադրանքից եւս պարզ է, որ Վահան Մամիկոնեանի վիճակը արտակարգ ծանր է եղել: Սպարապետը իր ուժերը կենտրոնացրել էր պարսկաբիւզանդական սահմանագծի մօտերքում, բայց սահմանն անգամ ապահովութիւն չէր տալիս պարսիկների յարձակումներից:

Պէտք է ասել, որ հակառակորդի յաջողութիւններն էլ էին տարակուսելի: Ապստամբութիւնը շարունակուում էր, չէր յաջողուում ո՛չ ջարդել Վահան Մամիկոնեանին եւ Վախթանգին, ո՛չ էլ գերի վերցնել: Պարսիկները վախ են ունեցել, որ հայերը կը դիմեն Բիւզանդական հատուածում բնակուող իրենց հայրենակիցներին: Խօսքը Անձիտի, Մոփքի, Հաշտեանքի մասին է՝ այն տիրոյթների, որոնք Դ դարի վերջերից գտնուում էին Կայսրութեան հովանաւորութեան ներքոյ եւ վայելում էին ինքնավարութեան լայն իրաւունքներ: Մարզպանական Հայաստանի բնակչութեան համար նրանք եղել են ազգակիցներ՝ ազգակաւմեր: Ղազար Փարպեցու վկայութեամբ՝ Շապուհը գտնում էր, որ Պերոզը պէտք է վերադառնայ տուն եւ անձամբ ղեկավարի ռազմական գործողութիւնները Հայաստանում: Եւ ահա պարսիկների համար այդ ծանր պահին յայտնի է դառնում, որ հեփթաղների պատերազմում իր մահն է գտել արքայից արքայ Պե-

րոզը: Դա տեղի է ունեցել 484 թ. գարնանը կամ ամռանը¹³ [Գլ. 27-28]:

Պարսիկների պարտութիւնն Արեւելքում բացայայտեց Իրանի արտաքին քաղաքականութեան ողջ ճգնաժամը: Ամենայն հաւանականութեամբ, իր դերը կատարէց նաեւ հայ-վրացական ապստամբութիւնը, հայերի ու վրացիների յամառ դիմադրութիւնը: Երբ Պերոզի սպանութեան բռնը հասաւ Այսրկովկաս, Շապուհն ու Հազարաւուխտը անմիջապէս դուրս հանեցին իրենց զօրքերը: Իսկ Վահան Մամիկոնեանը յաղթական մուտք գործեց Դուին: Բայց սպարապետը նախապէս «ողջախորհուրդ եւ աննենգ նախարարների հետ միասին» անցաւ Վաղարշապատ: Այժմեան մայր տաճարը դեռեւս չկար, չկար անգամ նրա հիմքը կազմող հին կառոյցը: Նրա տեղում գտնուում էր մի հին եկեղեցի, որը հիմնարկել էին Վահանի նախնիները: Վահանն առատ նուիրատուութեամբ ապահովեց այդ եկեղեցու նորոգումը մեծապայծառ շքեղութեամբ: Շինարարութիւնը գալիք խաղաղ շրջանի առաջին նշանն էր:

Չէնքը վայր չդնելով հանդերձ՝ հայերը դադարեցրել էին ռազմական գործողութիւնները: Պարսից արքունիքն իր հերթին երազում էր խաղաղութեան մասին: Մօտակայ ամիսների բովանդակութիւնը կարելի է որակաւորել որպէս Իրանի, Հայոց եւ Վրաց երկրների միջեւ եղած յարաբերութիւնների կարգաւորման շրջան:

Սպանուած Պերոզի թափուր գահը գրաւեց նրա եղբայրը Վաղարշը (484-488): Փարպեցու «Պատմութեան» մէջ նա հանդէս է գալիս որպէս միանգամայն դրական կերպար: Անցեալի անյաջողութիւնները վերագրուել էին Պերոզի բռնատր կամաւորութեանը, ապստամբութիւնը յայտարարուել էր Պերոզի անմիտ քաղաքականութեան հետեւանք, մինչդեռ նոր արքան շրջապատի աչքում թուում է «այր քաղցր եւ աշխարհաշէն»: Ուրուա-

գծելով արքայի հետագայ քայլերը՝ Վրաստանից վերադարձած Զարմիհր Հազարաւուխտը կոչ է անում, ի միջի այլոց, որ նա իւրաքանչիւրին ճանաչի ըստ իսկական արժանիքների՝ լինի դա արի կամ անարի: Պէտք է տարբերել պիտանուն եւ անպիտանին, խորհրդակցել իմաստունների հետ, ապա ըստ արժանույն վարձատրել վաստակաւորներին: Այդ՝ իրականում երբեք չարտասանուած ճառը արտայայտում է ապստամբ հայերի պատկերացումը արդար շահանշահի մասին: Չէ՞ որ ապստամբութեան պատճառներից մէկը Հէնց այն էր, որ Վաղարշի նախորդները, խախտելով նախարարական համակարգը, չէին զանազանում պիտանիին եւ անպիտանին: Այսպէս թէ այնպէս, Հայոց երկիրը հարկաւոր էր նուաճել խաղաղ եղանակով՝ այս հարցում Վաղարշի խորհրդատուները միաձայն էին: Իսկ նրանցից մէկը՝ Հայոց մարզպան Շապուհ Միհրանը, ընդգծում էր նաեւ, որ քանի հայերը մեզ էին ենթարկուում, ո՛չ Վիրքը, ո՛չ էլ Աղուանքը չէին համարձակուում հակառակ լինել:

Հետեւելով ընդհանուր կարծիքին՝ Վաղարշը Հայոց երկիր է ուղարկում Նիխոր Վշնասպդատին՝ «այր հեզ եւ մտացի եւ աշխարհաշէն»: Շահանշահը կարգադրում է. «Գնա՛ Հայաստան եւ ամենայն քաղցրութեամբ եւ սիրով, Վահանի եւ նրա ընկերների կամքին համաձայն, համոզի՛ր նախարարներին եւ բե՛ր նրանց Արիներին ի ծառայութիւն»: Բայց խաղաղ պատուիրակութեան գործունէութիւնը ապահովելու համար Նիխորին տրուել էր մի մեծ զօրաբանակ: Այն կազմուած էր Ատրպատականի, Հեր եւ Զարեւանդ գաւառում գտնուող այրուձիուց [Գլ. 28-29]:

Նիխոր Վշնասպդատը փորձ չարեց մտնել Հայաստանի խորքը, այլ կանգ առաւ Նուարսակ գիւղում, Ատրպատականի եւ Հայոց աշխարհի սահմանագծի մօտ: Հէնց այստեղ էլ սկսուեցին բանակցութիւնները նրա եւ սպարապետի միջեւ: Ղազար Փարպեցին մանրամասն նկարագրում է բանակցութիւնների հեր-

Թափանցելուն ու կարգը, վերարտադրում (աւելի շուտ՝ յօրինում) մասնակիցների ճառերը եւ այլն: Այստեղ շատ բան պայմանաւորուած է «Պատմութեան» ժանրային պատկանելութեամբ, սակայն հիմք չունենք մտածելու, որ բանակցութիւնների էութիւնը հաղորդելիս հեղինակը շեղուած է ճշմարտութիւնից:

Նիխորն իր հետ բերել էր Վաղարշ Թագաւորի հրովարտակը, ուր ասուած էր՝ նուաճել հայերին խաղաղութեամբ: Կողմերը, սակայն, չէին վստահում միմեանց, ուստի բանակցութիւնները սկզբնապէս կատարուած էին միջնորդների մասնակցութեամբ: Նիխորը ընտրել էր 2 հոգի՝ Շապուհ դպրին եւ Միհրվազնասպ ձուարշացուն, եւ նրանց ուղարկել Վահանի մօտ, Նուարսակ գիւղը: Իմանալով նրանց գալստեան մասին՝ սպարապետը իր մօտ հրաւիրեց ուխտապահների գումղը՝ նախարարներին եւ ազատներին, ողջ այրուծին, եւ հրամայեց նորեկներին հրապարակաւ յայտնել Վաղարշի եւ աւագանու տեսակէտը: Երբ ասելիքն աւարտելով՝ պատգամաւորները լռեցին, Վահանն ասաց, որ պատասխան կստանան վաղը:

Յաջորդ օրը դահլիճում ներկայ էին ինչպէս հայ ազնուականները, այնպէս էլ Նիխորի պատգամաւորները: Դիմելով վերջիններիս՝ Վահանն (ըստ Ղազար Փարպեցու խմբագրութեան) ասաց հետեւեալը. շատ եւ կարեւոր խօսքեր ունենք ասելու ապստամբութեան պարագաների մասին, նաեւ այն մասին, ինչն է ստիպել մեզ մասնակից դառնալ այսպիսի խոշոր եւ մահաբեր գործի: Անհնարին է գրի առնել այդ խօսքերը կամ հաղորդել դեսպանի միջնորդութեամբ: Կարող եմ դրանք հասցնել անմիջապէս Արեաց Թագաւորին, նրա հետ միասին նաեւ ձեզ, որ պատկանում էք Պարսից Դուան աւագանուն: Բայց 3 գաղափար պիտի յայտնեմ ձեզ: Եթէ այս երեք մտքերին արքան պատասխանի այնպէս, ինչպէս կամենում եմ ես եւ այստեղ գտնուողները, եթէ պատասխանը լինի գրաւոր, վաւերացուած արքայական

կնիքով, ապա ընդունելի կը լինեն ձեր ասածները, կը լսենք ձեզ մեր նախնիների օրինակով: Դուք լսում եք այժմ ոչ միայն իմ, այլեւ այստեղ գտնուողների խօսքերը: Այն երեք պահանջները, որ պիտի ներկայացնեմ ձեզ, այսօր չէ, որ առաջացել են. դրանց մասին մտածել ենք այն պահից, երբ մեզ յանձնել ենք մահաբեր գործի: «Եթէ պարսիկները բաւարարեն մեզ այս երեք հարցում՝ կը ծառայենք նրանց՝ իբրեւ բնիկ եւ հաւատարիմ ծառաներ: Եթէ չհամաձայնեն եւ խստանան՝ կը ցրուենք աշխարհով մէկ, կը կործանուենք, ուրախութեամբ կը հրաժարուենք կեանքից, բայց պարսկի առջեւ չենք խոնարհուիլ»⁸:

Տեսնում ենք, որ բանակցութիւնների հէնց սկզբից Վահանը իրեն պահեց եթէ ոչ որպէս յաղթող, ապա ոչ էլ որպէս պարտուած: Խօսում է կտրուկ՝ մշտապէս յիշելով արժանապատուութեան մասին: Հաշտութեան եւ խաղաղութեան երեք պայմաններն են՝

1. «Մեր հայրենի եւ բնիկ օրէնքը (հաւատը) մեզ էք թողնում, որեւէ հայ մարդու մոգ չէք դարձնում, մոգութեան դիմաց որեւէ մէկին դահ եւ պատիւ չէք շնորհում, կրակարանը հեռացնում էք մեր Հայոց աշխարհից, մենք այլեւս չենք տեսնելու աղտեղի եւ անպիտան մարդկանց թշնամանքը եկեղեցու նկատմամբ, ինչպէս դա եղել է մինչ այժմ: Թոյլ էք տալիս, որպէսզի աշխարհիկ քրիստոնեաները եւ հոգեւորականները համարձակ եւ աներկիւղ հետեւեն քրիստոնեայ կարգին եւ պաշտամունքին՝ այնտեղ որտեղ եւ կը կամենան»:

2. Անկարելի է մարդկանց ճանաչել իշխանաբար, հարկաւոր է իրաւաբար զանազանել լաւերից՝ վատթարներից, տոհմիկներից՝ անտոհմիկներից եւ այլն: Երբ դա այդպէս լինի, Արեաց աշխար-

⁸ Պարսկի առն երկիր ո՛չ պագցուք: - Վահան Մամիկոնեանի ճառի այդ պատկերաւոր արտայայտութիւնն ընտրել ենք որպէս սոյն գլխի վերնագիր:

հի գործերը կ'ընթանան յաջող եւ անսխալ: «Ապա եթէ նախընտրէք ինչպէս ցայժմ հակառակը եւ ոչ ճիշտը՝ հակառակ կը լինեն նաեւ գործերը, այնպէս, ինչպէս որ եղել են (հնում) եւ ինչպէս դուք ինքներդ այդ տեսաք»:

3. Թագաւորը պիտի տեսնի իր աչքով, լսի իր ականջով, ինքը ճանաչի (լաւն ու վատը), խօսի իր բերանով, այլ ոչ թէ դիմի իր ծառաների միջնորդութեանը: Հակառակ դէպքում վատակները կ'ոչնչացուեն ծառաների ձեռքով, իսկ աշխարհը եւ նրա բնակիչները այլեւս չեն մնայ անսասան եւ հաստատուն: Հարցին ճիշտ մօտեցումն է ապահովում աշխարհի շէնութիւնը եւ նրա տիրոջ պայծառ վիճակը:

Ինչպէս ասուեց վերեւում, առաջին հերթին՝ թուարկուած հանգամանքները պատճառ եղան, որ հայերը դիմեցին գէնքի, դրանց վերացումը պիտի խաղաղութիւն բերէր: Եւ Վահանը եզրափակեց. «Արդ, եթէ դուք այսպէս խոստանաք, խոստացածն էլ գրով ու կնիքով հաստատէք եւ մեզ տաք, ապա կոչէք մեզ, եւ մենք կը գանք եւ կը լսենք ձեր խօսքերին, հաւանութիւն կը տանք թագաւորի ասածին, ինչ եւ որ ասելու լինի: Ապա եթէ այս երեք պահանջները չապահովէք, գտնէք, որ անհնարին է՝ դրանով մեզ մահուան առջեւ կը կանգնեցնէք. մենք պատրաստ ենք մեռնել, բայց Արեաց տիրոջը չենք ծառայի: Եւ եթէ ես գամ, ապա այլ հարցերի մասին ինքս կը խօսեմ նրա (թագաւորի) հետ, իսկ եթէ այդպիսի պատեհութիւն չլինի, թող ասելիքս ինձ հետ մնայ» [գլ. 2Թ]:

Աւարտելով իր խօսքը՝ Վահանը պատգամաւորներին յետ է ուղարկում Նիխորի մօտ: Նրանց ուղեկցում են մի քանի անուանի հայ նախարարներ: Առաջիկայում բանակցութիւնները վարելու են անմիջապէս Վահանն ու Նիխորը: Ստանալով սպարապետի գրութիւնը՝ Նիխորը մի պատասխան նամակ է ուղարկում նրան եւ Վահանին հրաւիրում իր մօտ: Նամակից

պարզ էր, որ Նուարասակի պայմաններն ընդունուած են՝ Արեաց տէրը եւ աւագանին յանձն են առնում ամբողջութեամբ հետեւել նրանց:

Բաւարարուած լինելով բանակցութիւնների այդ շրջանի արդիւնքներով՝ Վահանը շարժուած է դէպի Արտագ գաւառը (Նիխորը սպասում էր նրան Հեր գաւառում): Զօրավարն իր գնդի հետ կանգ է առնում Արտագի Եղինդ գիւղում: Պարսիկների ոտնձգութիւններից իրեն ապահովելու համար, պահանջում է, որ Նիխորն իր մօտ ուղարկի անուանի մարդկանց, որոնք Վահանի բացակայութեան ժամանակ կը մնան հայ նախարարների հսկողութեան տակ: Նիխորին մնում է կատարել Վահանի պահանջը, 8 պարսիկ, որոնց թւում՝ Ատրպատականի կառավարիչ (շահապ) Բագէն, Հայոց երկրի նախկին հազարապետ Վեհվեհնամը եւ Միհրանի եղբայր Ներսշապուհը անցնում են Հայոց բանակը: Արժանաւորապէս պատուելով նրանց, հայերը միաժամանակ աչք չպէտք է հեռացնէին նրանցից:

Վահան Մամիկոնեանը առիթը բաց չէր թողնում ցոյց տալու, որ նա հաւասարի պէս է վարելու բանակցութիւնները, շարունակ հաստատում էր Հայոց կողմի արժանապատուութիւնը: Ուղեւորուելով այն գիւղը, ուր նրան սպասում էր Նիխորը՝ նա հրաման է տալիս, որպէսզի զինուորները դուրս գան կատարելապէս զինուած, այնպէս, ինչպէս ռազմական գիտութիւնն է պահանջում ճակատամարտի պատրաստուելիս: Զօրականներն, անշուշտ, կատարում են սպարապետի կամքը: Այնուհետեւ Վահանը նշան է անում, որպէսզի հնչեցնեն պատերազմական փողերը, եւ նրանց ձայնից թնդում էր երկիրը, նկատում է պատմիչը: Նիխորի բանակում տագնապ է առաջանում. կայ-չկայ Վահանը եկել է ոչ թէ խաղաղութիւն հաստատելու, այլ վնաս հասցնելու, բացականչում են ահաբեկուած պարսիկները:

Նիխորը պատուիրում է Վահանին զգուշացնել, որ նա խախտում է Արեաց կարգը, որովհետև փող հնչեցնելով իբր միայն Պարսից սպարապետը կարող է մտնել բանակ: Վահանը հեզնանքով պատասխանում է. «Նախ դարձրո՛ւ ինձ Արեաց տիրոջ ծառայ եւ յետոյ միայն կարգադրութիւններ արա»: Ինչ վերաբերում է Արեաց աշխարհի կարգին, ապա Նիխորից ուսանելու կարիքը չունի, յիշողութիւնը տեղն է, մանաւանդ որ շատ ժամանակ չի անցել այն պահից, երբ նա հեռացել է Պարսկաստանից: Պատմիչն, անշուշտ, ճոխացրել է միջադէպը, սակայն բանակցութիւնների մթնոլորտը ճիշտ է արտայայտուած:

Վերջապէս տեղի ունեցաւ Նիխորի եւ Վահան Մամիկոնեանի հանդիպումը: Պէտք է ասել, որ յատկապէս բանակցութիւնները նկարագրելիս Ղազար Փարպեցին ազատութիւն է տալիս իր գրչին, շարադրանքը լցնում երկար մենախօսութիւններով: Վահան Մամիկոնեանը եւ Նիխորը, երկուսն էլ պատերազմի մարդիկ, ասես մրցակցում են հռետորաբանութեան մէջ, դժուար է ասել, թէ նրանցից ով ում է գերազանցում: Անհնարին է այս էջերը դիտել որպէս իրականութեան անմիջական արտացոլում: Սակայն ընդհանուր առմամբ այդ էջերը չեն հակասում առաջացած իրավիճակին եւ հնարաւորութիւն են տալիս բացայայտելու մի շարք կարեւոր հանգամանքներ:

Պարսից կողմը դատապարտել էր սպանուած Պերոզին, նրա վրայ դրել կրած անյաջողութիւնների պատասխանատուութիւնը: Նիխորի ասելով՝ Պերոզը կործանեց իրեն, կործանեց Արեաց աշխարհի ուժն ու զօրութիւնը, մեծ եւ ազատ թագաւորութիւնը ենթարկեց հեփթաղներին [էջ 166. 23-25]: Ապստամբութեան պատճառը եղել է Պերոզը, Վահանը կտրուկ քայլերի է դիմել ի պատասխան Պերոզի բռնի չարութեան եւ ոչ թէ իր կամքով, ապստամբների գոհերը Պերոզի ամբարտաւանութիւնից են, իսկ նրանք, ովքեր կենդանի մնացին, բոլորովին անմեղ են [էջ 162.

38-39, 166. 17-19]: Այսպիսով, ապստամբներին ապահովուած էր կատարեալ թողութիւն: Պերոզի նկատմամբ եղած բացասական վերաբերմունքը նոր երանգ էր մտցնում Հասարակական-քաղաքական մտքի մէջ, որն իր հերթին հնարաւորութիւններ էր բացում կարգաւորել յարաբերութիւնները Սասանեան Հարեւանների հետ: Այսրկովկասեան ժողովուրդները դրանից անշուշտ շահեցին:

Բանակցութիւնների ընթացքում պարզուեց մէկ հանգամանք եւս՝ ուրացողներն այլեւս չէին դիտուում իբրեւ քաղաքական ուժ, որի վրայ կարող էր յենուել Արեաց պետութիւնը: Նիխորը արհամարհում է նրանց, թոյլ չի տալիս, որ մասնակցեն Վահանի պատուին կազմակերպուած ընդունելութեանը: Բանն այնտեղ էր հասել, որ ուրացողները ցանկացած գնով ուզում էին ստանձնել ապստամբութեան անունը, բայց ոչ ոք չէր համաձայնում նրանց շնորհել այդ պատիւը [էջ 170. 10-11]: Վահանն իր հերթին մերկացնում էր ուրացողների դերը, ցոյց տալիս այն վնասները, որ հասցրել էին նրանք ոչ միայն իրենց ազգակիցներին, այլեւ հէնց պարսիկներին: Սպարապետը նրանց անուանում է «արք անպիտանք, ատեցեալք յամենայն սրբասէր մարդկանէ, փախստականք յաշխարհէն ըստ աղտեղի գործոց իւրեանց, լեռնախոյսք (այսինքն՝ մարդկանցից հեռացող՝ լեռներ փախչողներ), աւազակապետք, արիւնապարտք, հացկատակք, բանորսողք, խաբեբայք, շաղակրատք, անյարուչք⁹, վատատոհմիկք» եւ այլն, եւ այլն [էջ 167. 16 եւ այլն]: Ուրացութիւնից գալիք վտանգը ընդհանուր առմամբ վերացուած էր:

Նիխորի եւ Վահանի բանակցութիւնները Նուարսակի անմիջական շարունակութիւնն են եղել: Սպարապետը զարգացնում էր այն գաղափարները, որոնք առաջ էր քաշել Նուարսակի պայմանադրութեան մէջ, եւ յատկապէս պահանջում, որպէսզի

⁹ անյարուչք - կոուարարներ

Հաշտութեան պայմանները հաստատուեն Վաղարշ Թագաւորի գրով եւ կնիքով. միայն դրանով հնարաւոր կը լինի ապահովել հայերի հաւատարմութիւնը՝ ծառայութիւնը [գլ. ՂԱ-ՂԳ]:

Նիխորը պատրաստ էր ընդառաջել Վահան Մամիկոնեանի պահանջին, բայց իր կողմից մի ուրիշ պայման դրեց: Ապստամբել էր Պերոզի որդի Զարեհը, Նիխորը ցանկանում էր, որպէսզի խռովութիւնը ճնշի Հայոց այրուծին: Վերադառնալով Դուին՝ Վահանը առանձին գունդ կազմեց, հրամանատար նշանակելով Վրէն Վանանդացուն եւ իր Վասակ եղբօր որդուն՝ Գրիգորին: Զարեհը պարտութիւն կրեց ու սպանուեց, իսկ Վրէնն ու Գրիգորը փառքով վերադարձան տուն: Նրանց քաջութեան համբաւը հասել էր անգամ Վաղարշ Թագաւորին: Ռազմական ծառայութիւնից բացի այդ քայլը դիտուել էր, ըստ երեւոյթին, որպէս հայերի հաւատարմութեան իւրատեսակ ապացոյց [գլ. ՂԴ]:

Մի քանի օր անց սկսուեց բանակցութիւնների երրորդ՝ եզրափակիչ փուլը: Շրջապատուած ուխտակից նախարաներով՝ Վահանը հասաւ Պարսից Դուռը, ներկայացաւ Վաղարշ Թագաւորին: Ըստ Ղազար Փարպեցու՝ առաջին օրը Թագաւորը, նկատի ունենալով ճանապարհի դժուարութիւնները, բաւարարուեց նրանով, որ տեղեկացաւ Վահանի ողջութեան մասին: Յաջորդ օրը ատենանը լցուած էր Դուռն աւագներով, անուանի մարդկանցով, պատմիչի արտայայտութեամբ՝ սաւտիկ որերով: Պերճախօսութեան մրցումը այս անգամ շարունակուում էր Թագաւորի եւ սպարապետի միջեւ: Բանակցութիւնները պտտուում էին հին թեմաների շուրջ: Վաղարշն ասաց, որ ապստամբութեան պատճառները Պերոզի գործած սխալներն են: Վահանն իր հերթին դատապարտեց սպանուած արքայից արքային, շեշտեց, որ եթէ նրա բռնապետութեան միւս գոհերը նիւթապէս էին տուժում, ապա հայերը ունենում էին հոգեկան կորուստներ՝ «իսկ զմեզ՝ հոգևովք հարկանէին» [էջ 173. 14]: Սպարապետը կրկին ու

կրկին անդրադարձաւ լաւերին ու անպիտաններին շփոթելու վտանգին (հայ նախարարների համար դա դարձել էր հիւանդագին մի հարց): Այժմ, եզրափակեց սպարապետը, եթէ պարսիկները ճիշտ դիրք ընդունեն, ապա հայերը կը լինեն նրանց վստահելի հպատակները:

Վաղարշը համաձայնեց ճանաչել հայերի բոլոր պահանջները, քանի որ ապստամբութեան պատճառը Պերոզի բռնութիւնն էր. հայերն, ասաց նոր արքան, ընդմիշտ թողութիւն են ստանում: Միաժամանակ առիթը բաց չթողեց շեշտելու, որ իրենց տէրերի նկատմամբ նրանք պիտի լինեն հաւատարիմ ծառաներ [գլ. ՂԵ]:

Վահանը ճանաչուեց Մամիկոնեանների տաճարէն, հաստատուեց, ըստ իր նախնիների օրինակի, Հայոց սպարապետ (հետաքրքիր է, որ նոր շահանշահը նորոգում էր իր նախորդի որոշումները, որոնք ապստամբութեան պատճառով հաւանաբար չեղեալ էին համարուել): Ծանաչուեցին նաեւ Վահանի զինակիցների իրաւունքները: Որոշուեց Կամսարական տոհմի տանուտէրը. դա, ըստ երեւոյթին, եղել է Սահակը¹⁴: Ինչ վերաբերում է Արծրունիներին, ապա արքայից արքան հետաձգեց հարցի լուծումը, մինչեւ որ այդ տոհմը իր վստակներով արժանանայ արքայական շնորհին [գլ. ՂԶ]:

Հրաժեշտ տալով արքայից արքային՝ Վահանը վերադառնում է հայրենիք: Նրան ընդառաջ է գալիս կաթողիկոս Յովհան Մանդակունին, նրանք միասին մտնում են Վաղարշապատ: Վահանը նուէրներ է տալիս Կաթողիկէ եկեղեցուն եւ սուրբ կոյսերի մատուռներին, այդ օրերը եկեղեցիներում ճոխ արարողութիւններ են լինում, որից յետոյ Վահանը հանդիսաւոր կերպով մուտք է գործում Հայոց աշխարհի բուն ուսումը (տուեալ դէպքում մայրաքաղաքը՝ Դուին) [գլ. ՂԷ]:

Ահա թէ ինչպէս աւարտուեց հայերի համար 482-484 թթ. ապստամբութիւնը: Վահան Մամիկոնեանը կարող էր գոհ լինել՝ նրա բոլոր պահանջները բաւարարուած էին, քաղաքական ուժն անցել էր նրա եւ նրա կողմնակիցների ձեռքը: Շատ ժամանակ չանցած, պարսիկները աւելի լայնացրին Հայոց ինքնավարութեան սահմանները:

Հայոց երկրի Անդեկան անունով պարսիկ մարզպանը նստած էր Դուինում: Պատմիչը նրան համարում է «այր խելացի, մտադիր, իմաստահայեաց, որ գիտէր ճանաչողութեամբ որոշել գիմաստունն յանմտէն եւ զլաւն ի վատթարէն»: Անդեկանի եւ Վահանի միջեւ հաստատուեցին բարեկամական յարաբերութիւններ: Անդեկանն ինքն առաջարկեց, որ Հայոց մարզպան լինի Վահան Մամիկոնեանը: Հետաքրքիր է պատճառաբանութիւնը. քչերը կարող են համեմատուել Վահանի հետ իրենց իմաստութեամբ, բացատրում էր Անդեկանը թագաւորին: Բացի այդ, շարունակում էր նա, Հայոց աշխարհը մեծ է, մարդ 2-3 տարում հագիւ կարողանայ ճանաչել այն, զանազանել լաւը վատթարից, պիտանուն՝ ապիրատից (պատմիչն է, թերեւս, Անդեկանի բերանով կրկին ու կրկին վերադառնում այդ հարցին): Պարսիկ մարզպանը գալիս է իր ընտանիքով, ծառաներով, աղախիններով: Ծախսի տակ են ընկնում թէ՛ Արեաց թագաւորը, եւ թէ՛ հաւատարմագրուած երկիրը: Եթէ մարզպան լինի Վահանը, իր տան պաշարով կապրի, օգուտ բերելով արքունի գանձատանը: Դժուար է ասել, իրօք Դուռը նկատի է ունեցել այդ հանգամանքը, թէ՞ Անդեկանի յանձնարարութեան եղանակը պատկանում է Փարպեցու ստեղծագործական մտքին: Փաստն այն է, որ, մնալով Հայոց սպարապետ, Վահան Մամիկոնեանը ստանձնեց նաեւ մարզպանի պաշտօնը: «Վաղվաղակի հրամայէր թագաւորն Վաղարշ, միաբանութեամբ ամենայն աւազանուոյ դրանն եւ Արեաց՝ հրովարտակ առնել ի Հայս, եւ գտէրն Մամի-

կոնէից եւ զգօրավարն Հայոց Վահան՝ մարզպան ի վերայ աշխարհին կարգել» [էջ 178. 11-14]: Հաղորդելով սա՝ Ղազար Փարպեցին անսպասելի մի նշում է անում՝ իմանալով հայերի նախանձի («գիւսանտածութիւն Հայ մարդկան») մասին Վահանը տատանուում է, սակայն չի համարձակուում թագաւորական հրամանին ընդդիմանալ... Ինչեւէ, այսուհետեւ ինչպէս ռազմական, այնպէս էլ վարչական իրաւունքը նրան է պատկանում: Հայոց ինքնավարութիւնը մի մեծ քայլ է անում դէպի առաջ: Աւելացնենք, որ Վահանին, որպէս մարզպան, յաջորդեց նրա Վարդ եղբայրը՝ դարձեալ ապստամբութեան մասնակից¹⁵:

Կասկած չկայ, որ ապստամբութեան յաղթական աւարտը Վրաստանում եւս ամրապնդեց ինքնավարութիւնը, այն էլ՝ սեփական թագաւորութեան ձեւով: Նոյնը եւ Աղուանքում, ուր շուրջ երեսնամեայ ընդմիջումից յետոյ թագաւոր ճանաչուեց Վաչէ Բ Արշակունու եղբօր՝ Յազկերտի որդին՝ Վաչագան Բարեպաշտը:

Ե դարի հակասասանեան առաջին եւ երկրորդ ապստամբութիւնները, իրենց էութեամբ շատ մօտ լինելով, ունեցել են տարբեր ընթացք: Առաջինը տեւել է ընդամէնը մէկ տարի՝ 450 թ. ամառուայ ամիսներից մինչեւ 451 թ. մայիսը: Երկրորդի տեւողութիւնն է մօտ երկու տարի, այն սկսուել է 482 թ. եւ աւարտուել 484 թ. կէսին¹⁶: Առաջին ապստամբութեան համեմատ, երկրորդը եղել է աւելի զանգուածային, տարածուել երկրով մէկ: Ճիշտ է, երկու դէպքում էլ ապստամբութիւնն ընդգրկել էր միայն մարզպանական Հայաստանը: Մի քանի անգամ Վահանն ապաստան է որոնել Բիւզանդական հատուածում, սակայն այդ հատուածի հայութիւնն ընդհանուր առմամբ անտարբեր մնաց արեւելցիների ճակատագրի նկատմամբ: Պարսիկներն, այնուամենայնիւ, չէին բացառում, որ կայսեր հայ հպատակները

կարող են միանալ իրենց ազգակիցներին եւ, բնականաբար, երկրից էին կրում այդ հնարաւորութիւնից: Եթէ Վարդանանց պատերազմը գլխաւորապէս Աւարայրի ճակատամարտն է, ապա Վահանի ապստամբութեան ընթացքում, չհաշուած բազմաթիւ փոքր բախումները, տեղի է ունեցել 3 մեծ ճակատամարտ՝ Ակոռիում, Ներսէհապատում, Ճարմանայնի դաշտում: Առաջին ապստամբութիւնը գերազանցապէս Հայկական էր, երկրորդին մասնակցել են թէ՛ հայեր, թէ՛ վրացիներ:

Ղազար Փարպեցու մանրամասն շարադրանքի հիման վրայ հնարաւոր է պարզել շարժման որոշ առանձնայատկութիւններ: Երկու կողմերի բախումը ունեցել է զուտ ռազմական բնոյթ, նրան մասնակցել են միայն զինուորական ստորաբաժանումներ: Տեղացի բնակչութեան նկատմամբ գործադրած ճնշման մասին մենք ոչինչ չգիտենք, բացառութեամբ մէկ-երկու միջադէպի: Այսպէս, 484 թ. գարնանը, երբ ապստամբներն առաւել ծանր վիճակում էին գտնուում, պարսից ջոկատները «զբազումս ի ռամիկ մարդկանէ Հայոց սպանանէին» (էջ 145. 33-34): Դէպքը տեղի է ունեցել Շաղագոմք գաւառում, Հայոց աշխարհի բիւզանդական հատուածում: Խօսուում է նաեւ այն մասին, որ Պարսից զինուորները յարձակուեցին Կարինի մօտերքում հունձ անող մշակների վրայ, բայց նախարարներին յաջողուեց պաշտպանել գիւղացիներին [էջ 148-149]: Այսպիսով, ընդհանուր առմամբ՝ ապստամբութեան յաջողութիւնը կախուած էր ռազմական գործողութիւնների արդիւնքներից, ընդ որում այդ գործողութիւնները երկու կողմն էլ վարում էր հետեւելով ժամանակի կանոններին: Ճարմանայնի ճակատամարտի նախօրէին Վահանը կազմեց իր գունդը «ըստ օրինի ճակատուն պատրաստութեան» [էջ 134. 4]: Փարպեցու շարադրանքի մէջ կան մի շարք նման դիտողութիւններ: Վահանի զօրքը եղել է շարժունակ, սպարապետը այն հեշտութեամբ տեղափոխուում էր Այրարատից դէպի Տայք, անց-

նում պարսկա-բիւզանդական սահմանը, իսկ երբ իրադրութիւնը փոխուում էր՝ անմիջապէս վերադառնում Դուին:

Ե՛ւ հայերի, մասամբ ե՛ւ վրացիների մօտ գլխաւոր դերը կատարում էր այրուձին, որը կազմուած էր գերազանցապէս ազատներից ու նախարարներից, այդ իսկ պատճառով Ղազարի շարադրանքը լի է ազնուական անունների յիշատակութեամբ: Բայց ռամիկները եւս մտել են այրուձիի կազմի մեղ [տե՛ս էջ 144. 21-23]: Որոշ ակնարկներից կարելի է եզրակացնել, որ թէ՛ առաջին, թէ՛ երկրորդ ապստամբութեան շրջանում յատուկ հասարակական դեր են կատարել նաեւ ռամիկ-շինականները: Ներսէհապատի ճակատամարտում, հաղորդում է պատմիչը, նախարարների եւ ազատների կողքին կռուել են նաեւ ռամիկներ [էջ 128. 27-28]: Ռամիկների դերի մասին անուղղակի կերպով վկայում է նաեւ հետեւեալ միջադէպը. երբ Վահան Մամիկոնեանը ներկայանում է Նիխոր Վշնասպազատին, վերջինս դուստրակ զրոյցից յետոյ հրաման է տալիս «ամենայն եկելոցն ընդ Մամիկոնենին Վահանայ՝ նախարարաց եւ ռամկաց, մտանել յատեանն առ նոսա» (էջ 169. 23-24): Իր դերն է կատարել նաեւ հոգեւորականութիւնը, հայ մարտիկների հետ է եղել ինքը կաթողիկոսը:

Շարժումն, անշուշտ, միաձոյլ չի եղել, ընդ որում ուրացութիւնը չէ միայն, որ վնասել է միասնութեանը: Երբեմն, ի վնաս ընդհանուր շահերի, յաղթանակել են տեղական շահերը: 484 թ. ապրիլի 9-ին Վահան Մամիկոնեանի կողմնակիցների եւ հակառակորդների միջեւ իսկական պատերազմ է սկսուել (յաղթանակ են տարել սպարապետի մարդիկ): Բնականաբար, կատարեալ համաձայնութիւն չի եղել նաեւ հայերի եւ վրացիների միջեւ: Ըստ Ղազար Փարպեցու՝ Վրաց թագաւորը շարունակ խորամանկութեան է դիմել, դրանով երբեմն վնաս հասցնելով իր դաշնակիցներին: Սակայն մասնակի հակասութիւնների կողքին, այդ

շրջանում դեռևս միադաճական հայերին ու վրացիներին ամուր կապել է ընդհանուր նպատակը եւ դրացիական յարաբերութիւնների բազմադարեան աւանդոյթը:

Թուական գերակշռութիւնը մշտապէս պարսիկների կողմն է եղել: Ակոռիի ճակատամարտում 7000 պարսիկ զինուորների դէմ դուրս են եկել 400, հետագայում, մաղխազ Գարջոյի դաւաճանութիւնից յետոյ՝ 300 հայ: 483 թ. Դու գիւղի մօտ եղած մարտում պարսիկների թիւը հասել է հազարների, իսկ հայերինը՝ ընդամէնը հարիւրների [էջ 137. 15-16]: Ղազար Փարպեցին բազմաթիւ օրինակներ է բերում, երբ Վահանի տասնեակները դուրս են եկել հակառակորդի հարիւրների եւ հազարների դէմ [էջ 136. 7-8, 156. 22, 158. 36-37, 159. 4-5 եւ այլն]: Նման տուեալների ստուգութեանը կարելի է կասկածել, բայց, ինչպէս էլ որ դատելու լինենք, փոքրաթիւ ապստամբները դուրս էին եկել բազմաքանակ Պարսից զօրքի դէմ:

482-484 թթ. ապստամբութիւնը վերացրեց այն տագնապալից երեւոյթները, որոնք առկայ էին Հայաստանում շարժման նախօրէին: Չէր վերացել, անշուշտ, Պարսից գերագոյն իշխանութեան լուծը, մնում էին այն հակասութիւնները, որոնք յատուկ են միջնադարեան հասարակութեանը: Այնուհանդերձ, պայքարի յաղթական աւարտը լիցքաւորեց, բարոյական նոր ուժ տուեց հայերին: Նոյնը կարելի է ասել նաեւ հարեւան վրացիների մասին: Ինքնավարութեան վերականգնումը ե՛լ հայերի, ե՛լ վրացիների համար ապահովեց պատմական զարգացման բուն ընթացքը: Այդ էր 482-484 թթ. ապստամբութեան ամէնից կարեւոր արդիւնքը:

Դա միաժամանակ եղել է Ե դարի հասարակական զարգացման եւ ազատագրական պայքարի բուն ելակէտը:

ԳԼՈՒԽ Դ

«ՃԱՆԱԶԵԼ ՉԻՍԱՍՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՉԻՐԱՏ...»

Առաջին գլխում մենք խօսեցինք Հին Հայաստանի հասարակարգի, պետական կառուցուածքի, տնտեսութեան մասին, փորձեցինք ցոյց տալ, թէ ինչ աստիճանի էր հասել հայկական քաղաքակրթութիւնը: Չարգանում ու հարստանում էին մարդու պատկերացումները աշխարհի մասին, աճում հոգեկան պահանջները, առաջացել էին իւրատեսակ հասարակական տրամադրութիւններ: Դժուար չէ կռահել, թէ ինչ տեղ էր գրաւում այդ ոլորտում ազատագրական պայքարի ընթացքում առաջացած հոգեբանութիւնը: Այդ բոլորը մարմին է ստանում հոգեւոր մշակոյթի բնագաւառում:

Հնում հոգեւոր կեանքի ընթացքը բնորոշում ու պայմանաւորում էին ամէնից առաջ հաւատալիքները, պաշտամունքը: Երբ քննութեան ենք առնում Հայոց հին դիցարանը, այստեղ գերազանցապէս գտնում ենք նոյն անուններն, ինչ եւ պարսիկների, ասորեստանցիների, բաբելացիների մօտ: Առաջին Հայեացքից կարող է թուալ, որ Հայերը երկրպագել են նոյն աստուածներին, ինչ աստուածների որ երկրպագել են նրանց հարեւան ժողովուրդները: Իրական պատկերը, սակայն, այլ է: Հակառակ անունների նոյնութեանը, Հայոց աստուածների էական յատկանիշերը չեն համընկնում, ասենք, պարսից աստուածների ատրիբուտներին: Յայտնի է, որ Պարսկաստանում իշխող զրադաշտութեան հիմքը կազմում էր չար ու բարի սկզբունքների պայքարը: Չարի աստուած Ահրիմանը մշտնջենական կռուի մէջ է եղել

բարի Ահուրամազդայի դէմ: Մինչդեռ Հայոց դիցարանում չի եղել որեւէ Ահրիման¹⁰:

Արամազդը եղել է Հայոց գլխաւոր աստուածը: Նա երկնքի ու երկրի մեծ եւ արի արարիչն է: Նրանից են գալիս լիութիւնն ու պարարտութիւնը: Արամազդի տաճարը եղել է Անի-Կամախում (Արեւմտեան Հայաստան), այստեղ էին գտնուում Հայոց թագաւորների դամբարանները:

Արամազդի դուստրն է Անահիտը: Ե դարի պատմիչ Ագաթանգեղոսը գրում է, որ Անահիտը եղել է «մեր ազգի փառքն ու կեցուցիչը... ամենայն առաքինութիւնների մայրը, մարդկային ողջ բնութեան բարբերը», «նրանով է մնում ու կենդանութիւն առնում մեր Հայոց երկիրը» [Ագաթ., էջ 31, 38], իսկ յոյն աշխարհագիր Ստրաբոնից տեղեկանում ենք, որ դիցուհու պաշտամունքը (յամենայն դէպս Հայաստանի արեւմուտքում) ստացած է եղել սրբազան պոռնկութեան ձեւ: Ստրաբոնը գտնում է, որ մարերը եւ հայերը պաշտել են նոյն աստուածներին, ինչ որ պարսիկները: «Անահիտի պաշտամունքը Հայոց մէջ գերազանցում է բոլորին. զանազան տեղեր նրա անուան տաճարներ են կանգնեցրած եւ յատկապէս՝ Եկեղիքում: Նշանակել են այդ տեղերում ստրուկներ եւ ստրկուհիներ: Այս բոլորը զարմանալի չէ, այլ այն, որ ժողովրդի ամենանշանաւոր մարդիկ իրենց կոյս աղջիկներին նուիրաբերում են աստուածուհուն եւ նրանք ըստ օրինի երկար ժամանակ պոռնկում են աստուածուհու համար, որից յետոյ ամուսնանում են, եւ ոչ ոք անվայել չի համարում կենակցել նրանց հետ: Գրեթէ նոյնը պատմում է Հերոդոտոսը Լիւդիացոց մասին»¹:

Սրբազան պոռնկութիւնը յատուկ է մի շարք կրօնների, Անահիտի պաշտման այդ եղանակը բացառութիւն չի եղել: Անա-

հիտի տաճարները ցրուած են եղել երկրով մէկ, գլխաւորները՝ Եկեղեցաց գաւառի Երէզ անունում (այժմ Երզնկայ), ապա՝ Արտաշատում եւ Տարօնի Աշտիշատում:

Պարսկական դիցարանում ծնունդ առած Միհրը մի շարք ժողովուրդների մօտ ընդունուած է եղել որպէս աստուածութիւն: Նրան պաշտել են անգամ հին Հռոմում (հռոմէական Միհրը, սակայն, շատ էր հեռացել իր պարսկական նախատիպից): Արամազդի որդի Միհրը եղել է կրակի աստուած: Ատրուշաններում յանուն Միհրի անշէջ կրակ էին վառում: Միհրի հետ կապուած է Արեւի եւ Լուսնի պաշտամունքը:

Հայերը պաշտել են Արամազդի դուստր Նանէին, ապա՝ Տիր կամ Տիւր աստծուն: Տիրը առնչութիւն է ունեցել գիտելիքների հետ, մարդկանց երազներ ներշնչել: Երազամոյն կոչուած վայրում քրմերը մեկնել են այդ երազները: Հայոց դիցարանում յատուկ տեղ է գրաւել Նոր տարուայ աստուածը: Ագաթանգեղոսը նրա կողքին յիշում է նաեւ օթեւան տուող եւ առհասարակ օգնութեան հասնող Վանատուր աստծուն: Ամանորին եւ Վանատուրին յաճախ նոյնացնում են, բայց դա սխալ է:

Անմահ աստուածների եւ մահկանացու մարդկանց միջեւ տեղադրուել են դիւցազունները, սրանց մէջ աչքի է ընկնում յատկապէս Վահագնը: Վահագնը պայքարում էր չար վիշապների դէմ, այստեղից է նրա Վիշապաքաղ մականունը: Վահագնը հանդէս է գալիս որպէս հնդիկների Ինդրա, պարսիկների Վրրէթրազնա աստուածութիւնների հայկական տարբերակը: Բայց շատ է հեռացել նա իր նախատիպերից:

Աստուածներին առատ նուիրաբերութիւններ են անում: Ագաթանգեղոսը պատմում է, որ Սասանեան արքայից արքայ Արտաշիր Պապականին յաղթելուց յետոյ Հայոց թագաւոր Խոսրովը դեսպաններ է ուղարկում, որպէսզի 7 մեհեաններում յատուկ

¹⁰ Ըիշտ Է, Բայերը եւս ճանաչել են Ահրիմանի ծառաներ դեւերին:

երկրպագեն տեղի աստուածների պատկերներին: Խոսրովը աստուածներին մեծարում է սպիտակ ցուլերով ու սպիտակ նոխազներով, սպիտակ ձիերով ու սպիտակ ջորիներով, ոսկե պսակներով ու արծաթե զոհարաններով, թանկարժեք զարդերով, մետաքսներով, հագուստներով [Ագաթ., էջ 18-19]: Խոսրովը նուիրատուութիւններով մեծարում էր միաժամանակ իր նախնիներին. վերջիններիս պաշտամունքը եւս տարածուած է եղել Հայաստանում:

Պաշտամունքից, հաւատալիքներից անանջատ է առասպելաբանութիւնը: Հայոց առասպելաբանաստեղծական մարգարիտներից է Վահագնի ծննդեանը նուիրուած երգը, որը դեռեւս Մովսէս Խորենացու օրօք ասում էին Գողթն գաւառում:

«Երկնում էր երկինքը, երկնում էր երկիրը,
Երկնում էր եւ ծովը ծիրանի,
Երկունքը բռնել էր ծովում
Նաեւ կարմրիկ եղեգնիկիմ:
Եղեգնի փողով ծուխ էր ելնում,
Եղեգնի փողով բոց էր ելնում
Եւ բոցից դուրս էր վազում
Մի խարտեաշ պատանեկիկ:
Նա հուր մազեր ունէր,
Բոց-մորուք ունէր,
Եւ աշիկներն էին արեգակներ»²:

Գիտնականները կրկին ու կրկին դիմում են մեզ հասած տողերին, ձգտում են վերականգնել այն գծերը, որոնք կապում են «Վահագնի ծնունդը» ընդհանուր հնդեւրոպական պոեզիային³:

Երբ հարցին մօտենում ենք այսօրուայ տեսանկիւնից, նկատում ենք, որ առասպելը հեքիաթային բնոյթ ունի: Բայց հնում մարդիկ տարբերել են հեքիաթն ու առասպելը. հեքիաթը միշտ հնարովի է, իսկ առասպելն իբր արտայայտում է իրակա-

նութիւնը: Առասպելաբանելով փորձում էին բացատրել, մեկնել պատմական անցեալը: Այդպիսի առասպելներ ստեղծել են նաեւ մեր նախնիները: Խօսքը ամէնից առաջ Հայկ Նահապետի ու Բելի առասպելին է վերաբերում: Երբ Բելը փորձում է տիրանալ Բաբելացոց ողջ աշխարհին, Հայկը ըմբոստանում է Բելի դէմ եւ իր ամբողջ գերդաստանով (որդիներ, դուստրեր, թոռներ, զօրավար մարդիկ, ընտանիքում ծնուած ծառաներ եւ եկուորներ՝ ընդամէնը 300 հոգի) հեռանում է Հայաստան: Այստեղ է գալիս նաեւ Բելը. երկու հսկաների միջեւ մենամարտ է տեղի ունենում: Յաղթում է Հայկը եւ ապահովում Հայոց երկրի անկախութիւնը: «Իսկ աշխարհս մեր կոչի յանուն նախնւոյն մերոյ Հայկայ՝ Հայք», - գրում է Մովսէս Խորենացին [Մով. Խոր., էջ 37. 10]: Աւելի մանրամասն՝ ստորեւ:

Հայ մշակոյթն իր զարգացման ընթացքում կրել է տարբեր ազդեցութիւններ, շփուել է հարեւան ժողովուրդների մշակոյթների հետ, բաղադրիչ հատուած դարձել աւելի ծաւալուն մշակոյթի, սակայն միաժամանակ մնացել բնածին ու ինքնատիպ: Աստուածային եւ դիւցազնական այն կերպարները, որոնց մասին խօսք եղաւ վերեւում, ամբողջութեամբ պատկանում են Արեւելքին, կազմում են Արեւելքում առաջացած բարդ ու բազմազան դիցարանի մասը: Բայց ահա Փոքր Ասիա են ներխուժում Ալեքսանդր Մակեդոնացու զօրքերը: Կարճ ժամանակում կիսաշխարհի քաղաքական քարտէզը հիմնովին փոխում է՝ Արեւելքը ենթարկվում է երիտասարդ զօրավարին, իսկ Ալեքսանդրի մահուանից յետոյ՝ հնազանդում նրա ժառանգորդներին, դիպրոքոսներին: Գոյանում է մի բոլորովին նոր քաղաքակրթութիւն՝ հելլենիստական, որը ոչ արեւելեան էր, ո՛չ էլ արեւմտեան, այլ այդ երկուսի օրգանական խառնուրդը: Այդ յուժկու ալիքը հասնում է նաեւ Հայոց երկիրը, որը ժառանգում է հելլենիստական պետականութեան եւ մշակոյթի էական յատկանիշերը: Այստեղ կա-

առուցում են նոր տիպի քաղաքներ թատրոններով, Հայ թագաւորները յունալեզու արձանագրութիւններ են թողնում ու դրամներ կտրում: Գառնիում կառուցուած փոքրիկ սիւնազարդ տաճարը յար եւ նման է այն տաճարներին, որոնք տարածուած են եղել Փոքր Ասիայով մէկ: Հայոց թագաւոր Արտաւազդը (Ք.ա. 55-34) յունարէն ողբերգութիւններ, ճառեր ու պատմութիւններ էր գրում: Այդ շրջանում Հայաստան են մուտք գործում յունական աստուածութիւնները, ձուլւում տեղականների հետ, եւ ահա Արամազդը նոյնացում է Դիոսի (Չեւսի) հետ, Անահիտը՝ Արտեմիսի, Միհրը եւ Բարշամիւնը՝ Հեփեստոսի, Վահագնը՝ Հերակլէսի, Աստղիկը՝ Ափրոդիտէի, Նանէն՝ Աթենասի, Տիրը՝ Ապոլոնի հետ: Դրսից այդ աստուածութիւնների արձաններ են բերւում ու դրւում մեհաններում (եւ ոչնչացւում, երբ քրիստոնէութիւնը պետական կրօն է հռչակւում): Դժուար է կռահել, որ այդ արձանները կերտուած են եղել հելլենիստական արուեստի ոճով:

Ինչ խօսք, Հայաստան թափանցած յունական մշակոյթի մի զգալի մասը մատչելի է եղել միայն ընտրեալներին: Արտաւազդ թագաւորի ստեղծագործութիւններն ընթերցել են ոչ այնքան նրա Հայրենիքում, որքան դրսաշխարհում: Հայաստանին վերաբերող այն տեղեկութիւնները, որոնք աստիճանաբար կուտակուել են յունահռոմէական պատմիչների մօտ, բաւարարել են օտարի հետաքրքրասիրութիւնը: Սակայն պաշտամունքի հետ կապուածը սեփականացուել էր բոլորի կողմից: Արեւելեան աստուածները ողջ հասարակութեանն են ներկայացել իրենց յունական կերպարներով: Ընդհանուր առմամբ, հելլենիստական մշակոյթի աւանդոյթները վերապրել են իրենց դարաշրջանը եւ ինչոր չափով հիմք հանդիսացել բոլորովին այլ՝ քրիստոնէական մշակոյթի համար, միտքը նախապատրաստել նոր գաղափարների ընկալմանը:

Հելլենիզմի դարաշրջանում Հայերը մշակոյթի զարգացման նոր շրջան են թեւակոխում: Քաղաքակրթութիւնը ապրում է աննախընթաց վերելք: Եւ, այնուհանդերձ, Հայոց երկիրը շարունակում է գուրկ լինել սեփական գրից: Քաղաքակրթութեան շրջանակում մշակոյթի ամէնից կարեւոր գործօններից մէկը գիրն է: Գիրը աստիճանաբար թափանցում է մարդկային գործունէութեան բոլոր ոլորտները՝ գործավարութիւնից մինչեւ աստուածպաշտութիւն եւ մտերմիկ յարաբերութիւններ: Ինֆորմացիան, բառիս լայն իմաստով, աւելի ու աւելի է արձանագրւում գրի միջոցով: Լինելով խոհականութեան ծնունդ՝ գիրն իր հերթին նպաստում է բանականութեան զարգացմանը:

Ինչպէ՞ս էին բաւարարում գրի պահանջները Հայերը, վրացիները, աղուանները, բազմաթիւ այլ ժողովուրդներ, որոնք գտնւում էին Առաջաւոր Ասիայի տնտեսական ու քաղաքական ոլորտում, բայց գուրկ էին սեփական գրից: Պարզապէս դիմում էին օտար լեզուին ու նրան համապատասխանող գրութեանը: Յատկապէս մեծ դեր է կատարել սէմական լեզուախմբին պատկանող արամերէնը: Աքեմենեանների օրօք այն դարձել էր Պարսից պետութեան պաշտօնական գործավարութեան, նամակագրութեան լեզու: Եգիպտոսից ու Փոքր Ասիայից մինչեւ Հնդկաստան արամերէնը եղել է առեւտրական հիմնական լեզուն: Ազգային սահմաններ չճանաչող այդ ազատ (lingua franca) լեզուն իրար էր կապում տասնեակ ժողովուրդների: Հայոց աշխարհը բացառութիւն էր կազմում. մեզանում եւս տարածուած է եղել արամերէնը: Դրա վկայութիւնն են արամէական (յամենայն դէպս՝ արամէատառ) արձանագրութիւնները, որոնք Հայաստանում սկսուել են յայտնաբերուել 1940-ական թուականներից: Այդ գրութիւնների մի զգալի մասը կապուած է Արտաշէս Ա (Ք.ա. 189-160) թագաւորի կողմից կատարուած հողային ռեֆորմի

Հետ: 1940 թ. երկու արամէատառ արձանագրութիւնն է գտնուել նաեւ Վրաստանի Արմազի վայրում:

Օտար գրերի կիրառութեան մասին որոշ տուեալներ ենք քաղում մեր պատմիչներից: Ղազար Փարպեցին ասում է, որ Մաշտոցից առաջ արքունի դպիրները ասորի եւ յոյն գրով էին կատարում գործավարութիւնը, այդ լեզուներով էին կազմում թագաւորական վճիռներն ու հրովարտականքը [Ղազ. Փարպ., էջ 13. 8-12]: Իսկ Մովսէս Խորենացու մի շարք վկայութիւններից պարզուում է, որ գործավարութիւնը ընթացել է պարսկերէն [Մով. Խոր., էջ 325. 11-12]: Նոյն պատմիչի ասելով՝ յայտնի են բազմաթիւ պարսկերէն ու յունարէն մատեաններ, որտեղ թուարկուած են գիւղեր, գաւառներ, առածին տներ (տոհմեր), արձանագրուած են ընդհանուր վէճերն ու դաշինքները, յատկապէս նրանք, որոնք առնչուում են ազնուական տոհմերի սեփականութեան իրաւունքին [Մով. Խոր., էջ 11. 6-11]: Արարողութիւնը եկեղեցում կատարուել է յունարէն [Մով. Խոր., էջ 301. 22-23]:

Ասորերէնը նոյն արամերէնի Եգիսիա (Ոււհա) քաղաքի եւ նրա շրջակայքի գրական ձեւ ստացած բարբառն է՝ նոր արամերէն: Ասորերէնը յատկապէս մեծ դեր է կատարել քրիստոնէութեան տարածման շրջանում՝ քարոզիչների մի զգալի մասը եղել են ասորիներ: Ասորերէնից ունենք բազմաթիւ թարգմանութիւններ: Խօսելով ասորերէնի ուսման Հետ կապուած դժուարութիւնների մասին (տե՛ս ստորեւ), Ղազար Փարպեցին նշում է, որ եկեղեցական արարողութիւնը կատարուում էր ասորերէն. Սուրբ Գիրքն այդ լեզուով էր ընթերցուում եկեղեցում («պաշտօն եկեղեցւոյ եւ կարդացմունք Գրոց ասորի ուսմամբ վարէին ի վանորայս եւ յեկեղեցիս Հայաստան ժողովրդոցս» [Ղազ. Փարպ., էջ 13. 34-36]):

Սասանեան շրջանի պարսկերէնը գիտութեան մէջ կոչուում է միջին պարսկերէն, փեհլւի (տարբերուել է Արշակունեաց շրջանի

պետական լեզուից՝ պահլաւերէնից, որից, սակայն, առաջացել է փեհլւի բառը): Այդ շրջանի պարսկերէն գիրն ունեցել է մի շատ կարեւոր, աչքի ընկնող առանձնայատկութիւն: Այն շատ յաճախ օգտագործել է արամերէն բառեր ու բառակապակցութիւններ իրենց հարազատ գրութեամբ (ընդ որում պարսից գիրն իր հերթին արամէականի տարբերակներից մէկն է եղել): Այդ արամէական հատուածները եղել են արամէատառ, այսինքն՝ գրուել են արամերէն, սակայն ընթերցուել պարսկերէն: Այդ երեւոյթը կոչուում է այլագրութիւն (ռուսերէնում՝ *зетерографна*): Այլագրութեան օրինակներ կարելի է բերել նաեւ արդի Հայերէնից: Արաբական կոչուած թուանշանները փոխառութիւն են, բոլոր գրութիւններում ունեն նոյն ձեւը, սակայն արտասանուում են տուեալ լեզուով: Նոյնը կարելի է ասել այնպիսի նշանների մասին, ինչպիսիք են՝ N, § եւ այլն (Հայերէնում դրանց համապատասխանում են Հայերէն բառեր, ռուսերէնում՝ ռուսերէն եւ այլն): Բերենք մի օրինակ նաեւ միջին պարսկերէնից: Արքայից արքայ հասկացութիւնը արտայայտելու համար օգտուում էին *MLK'n MLK'* գաղափարագրից, որոնք արամէերէն պիտի արտասանուէին *malkān malkā*, մինչդեռ պարսկերէն հնչում էին *šāhān šāh*:

Մեզ չի հասել ասորերէն, պարսկերէն որեւէ արձանագրութիւն կամ վաւերագիր, որը կապուած լինէր Հայերի գրային պրակտիկայի հետ: Ինչ վերաբերում է յունարէնին, ապա այդպիսի օրինակները յայտնի են վաղուց: Յիշեցինք, որ Հելլենիստական շրջանում դրամների արձանագրութիւնները եղել են յունարէն: Հին Հայերը յունարէն գրութեան Հետ շփուել են առաջին հերթին այդ դրամների միջոցով: Թանգարաններում պահուում են Հելլենիստական շրջանի Հայ թագաւորների յունարէն արձանագրութիւններով բազմաթիւ դրամներ: Բացի այդ, մեզ են հասել նաեւ շուրջ երկու տասնեակ յունարէն վիմագրեր, որոնցից

յատկապէս յայտնի է Գառնիի արձանագրութիւնը: Դա մի հրովարտակ է՝ փորագրուած Տրդատ Ա թագաւորի անունից: Տիրանակերտի քաղաքային համայնքի հայ բնակիչներին յունալեզու արձանագրութեան միջոցով է դիմել մէկ ուրիշ Հայոց թագաւոր: Վերնախաւի գոնէ մի մասը խօսել է յունարէն, այս կամ այն չափով եղել է, անշուշտ, գրագէտ¹¹:

Մշակութային ընդհանուր վերելքը եւ սեփական գրի բացակայութիւնը ահռելի հակասութիւն են կազմում: Արդեօ՞ք նոյն կերպ են ընկալել այդ վիճակը նաեւ մեր նախնիները: Սակայն Հաստատ գիտենք, որ սեփական գրի ու գրականութեան բացակայութիւնը խոչընդոտել է քրիստոնէութեան տարածմանը (անգամ այն շրջանում, երբ նոր ուսմունքը ճանաչուած է եղել որպէս պետական կրօն) եւ հէնց այդ իրողութիւնն է ստիպել Մաշտոցին ձեռնամուխ լինելու հայոց նշանագրերի ստեղծմանը: Մաշտոցի գործունէութեան փաստական հետեւանքները քրիստոնէական քարոզի սահմաններից շատ են դուրս եկել: Ազգային գրի շնորհիւ հայերի հոգեւոր զարգացումը միանգամից հսկայական թռիչք կատարեց, հասաւ սկզբունքօրէն այլ՝ մինչ այդ անհասանելի աստիճանի: Բոլորովին այլ որակ ստացաւ նաեւ ազգային ինքնագիտակցութիւնը: Սակայն անմիջական դրդապատճառը կապուած է եղել զուտ հոգեւոր խնդրի՝ քրիստոնէական քարոզի հետագայ տարածման հետ:

¹¹ Գտնուել են նաեւ մի շարք լատիներէն արձանագրութիւններ, սակայն բոլորը եկուորների անունից են: Հայերի շփումը Հռոմէական պետութեան (ուստի եւ լատինական մշակոյթի) հետ տեսել է մի քանի հարիրամեակ, բայց մշակութային առումով եղել է բոլորովին անպտուղ՝ այդ շրջանում եւս Հայաստանի համար արեւմուտք է եղել հելլենիստական, ապա քրիստոնէայ Արեւելքը: Լատինական մշակոյթը հայկականի մէջ սկսել է թափանցել գլխաւորապէս ԺԳ-ԺԴ դարերում. այս երեսոյթը կապուած է եղել կաթոլիկութեան տարածման հետ:

Քրիստոնէական քարոզը, պաշտամունքը, դաւանաբանութիւնը անբաժան են գրից: Քրիստոնեայ ուսմունքի հիմնական սկզբնաղբիւրը կոչուում է Գիրք (յուն. Βίβλια, յոգնակի): Գիրքը ընթերցուում է եկեղեցում, Գիրքը պիտի կարդայ իւրաքանչիւր հաւատացեալ: Հոգեւորականները պիտի հետեւեն դաւանաբանական գրականութեանը, կարդան սրբերի վարքերը, ծանօթանան եկեղեցական ժողովների կանոններին, ուսումնասիրեն աստուածապաշտութեանը վերաբերող ձեռնարկները: Եկեղեցին ի սկզբանէ պայքարել է այլախոհների դէմ, այդ պայքարը տարուել է նաեւ գրաւոր խօսքի միջոցով:

Ընդհանուր առմամբ եկեղեցին Հաստատում է իր դիրքը՝ օգտուելով նաեւ գրաւոր խօսքից: Այս կամ այն ժողովրդին հաղորդակից դարձնելով քրիստոնէութեանը, եկեղեցին շահագրգռուած էր, որպէսզի հաղորդակցութիւնը կատարուի նաեւ գրի միջոցով: Եւ երբ տուեալ ժողովուրդը զուրկ է եղել ազգային գրից, եկեղեցին նպաստել է դրա ստեղծմանն ու տարածմանը: Այսպէս է եղել գոթերի, հայերի, վրացիների, աղուանների, հետագայում՝ սլաւոնների դէպքում¹²: Ճիշտ է, այդ գաղափարը կարող էր իրացուել, երբ դրա համար մշակուած հող էր լինում: Այսօր կովկասում այդպիսի պայմաններ աւաջացան միայն Ե դարի սկզբներին:

¹² Գրի տարածման կապակցութեամբ եկեղեցու դերը քննելիս պիտի հաշուի անձեք հետեւեալ կարեւոր հանգամանքը: Աստուածաշունչը մնում է սուրբ գիրք, անկախ նրանից, թէ ինչ լեզուով է այն շրջանառութեան մէջ մտել: Յունարէն, հայերէն կամ դպտի տարբերակները այդ տեսակետից հաւասար են: Այդ գաղափարը մի լատեւալ գործօն էր, որպէսզի եկեղեցին նպաստի ազգային գրի առաջացմանը: Աստուածաշունչի նկատմամբ ունեցած վերաբերմունքով քրիստոնէութիւնը էապէս տարբերում է, ասեմք, իսլամից, որը Ղուրանը ճանաչում է միայն իր սկզբնական՝ արաբալեզու խմբագրութեամբ:

Ասուեց, շուրջ 314 թ. քրիստոնէութիւնը ճանաչուել էր պետական կրօն: Տիրանալով մեհեանների հողերին ու հարստութեանը՝ եկեղեցին վերածուեց տնտեսական եւ քաղաքական մեծ ուժի: Յաղթանակը, սակայն, վերջնական չէր: Դրանք կրօնը միաձայն չէր ընդունուում: Հեթանոսական աւանդոյթները չէին կորցրել իրենց կենսունակութիւնը, եւ որոշ դէպքերում եկեղեցին ստիպուած էր յարմարուել նրանց: Քարոզին չենթարկուող հեթանոսները տարածուած էին երկրով մէկ: Եկեղեցու եւ պետութեան համար վտանգը կրկնապատկուում էր նրանով, որ հեթանոսները այս կամ այն չափով նոյն զրադաշտականներն էին, իսկ զրադաշտութիւնը Սասանեանների օրօք չափազանց մարտնչող դիրք էր գրաւել: Այդ պայմաններում քրիստոնէութիւնը հանդէս էր գալիս որպէս ազգային կրօն, այն վերածուել էր ոչ միայն վերացական, դաւանական սկզբունքների համակարգի, այլ դարձել էր ազգային ինքնագիտակցութեան խորհրդանիշ: Մաշտոցի օրօք դաւանական հարցը ստացել էր վառ արտայայտուած քաղաքական երանգ:

Ընդհանուր առմամբ, հայոց, ինչպէս նաեւ վրաց եւ աղուանից գրերի գիւտը պատճառաբանուած է եղել պատմամշակութային զարգացման յատուկ պայմաններով, սակայն, մօտենալով հարցին աւելի անմիջականօրէն, հաշուի առնելով կոնկրետ պարագաները, տեսնում ենք, որ գրերը եղել են մէկ մարդու՝ Մաշտոցի ստեղծագործական մտքի եւ հասարակական գործունէութեան պտուղ: Մաշտոցի կենսագրութիւնը գրել է նրա աշակերտ Կորիւնը, մնացած հայերէն գրաւոր աղբիւրները կախում ունեն այդ երկից⁴: Կորիւնի աշխատութեան նախնական խորագիրը յայտնի չէ, Մանուկ Աբեղեանի հրատարակութիւնը հետեւեալ կերպ է վերնագրուած՝ «Պատմութիւն վարուց եւ մահուան առն երանելոյ սրբոյն Մաշթոցի վարդապետի մերոյ թարգմանչի՝ ի Կորիւն վարդապետէ յաշակերտէ նորին» [Կոր., էջ

22. 1-6]: Այդ աշխատութիւնն, անշուշտ, վարք է, այսինքն՝ սրբի կենսագրութիւն:

Արդէն Դ դարում գրական այդ տեսակի կանոնները լրիւ ձեւաւորուել էին, յունական եւ ասորական գրականութեան մէջ առաջացել էր կայուն աւանդոյթ: «Վարքը» պիտի ունենայ վերնագիր, հերոսի մակդիր, առաջաբան, այստեղ պիտի խօսուի սրբի ծնօղների, նրա ծննդեան, նրա մահուան, ձեռնադրութեան, հարստութեան, դաստիարակութեան, ճգնութեան, հետագայ կեանքի, մահուան նախանշանների եւ հանգամանքների, վերջապէս նրա հետ կապուած հրաշքների մասին: «Վարքն» ունենում է վերջաբան, ուր հերոսը համեմատուում է Հին եւ Նոր կտակարանների անձնաւորութիւնների հետ: Այսպիսով, վարքագրութեան օրէնքները կանխորոշում են ոչ միայն «Վարքի» կառուցուածքը, այլեւ ինչ-որ չափով բովանդակութիւնը, թելադրում այն հանգամանքները, որոնք պիտի արձագանք գտնեն այդ իւրատեսակ պատմուածքի մէջ: Եւ ամէն պարագայի, վարքը ներկայացնում է հերոսի իդեալականացուած դիմանկարը, որին պիտի հետեւեն ընթերցողները՝ ընդունելով այն որպէս օրինակ: Մօտենալով վարքին՝ իբրեւ պատմական սկզբնաղբիւրի՝ նրա մէջ եղած փաստերը պիտի վերլուծենք յատուկ եղանակով՝ հաշուի առնելով վարքի ժանրային առանձնայատկութիւնները:

Աղբիւրագիտութեան մէջ ընդունուած է տարբերել այն վարքերը, որոնք գրուած են սրբի վախճանից քիչ յետոյ, եւ նրանք, որոնք ստեղծուել են՝ որպէս գրական վարժութիւններ, ճարտասանութեան փորձեր: Հակառակ կաշկանդող բոլոր հանգամանքներին, առաջին տիպի վարքերը յաճախակի առատ նիւթ են տրամադրում ոչ միայն սրբի կենսագրութեան, այլեւ նրա ժամանակակից պատմական անցքերի մասին⁵: Ահա այդ տիպի վարք է եղել Կորիւնի աշխատութիւնը, որն, ի դէպ, ար-

տաքնապէս ամբողջութեամբ համապատասխանում է վերեւում բերուած ուրուագծին:

Ժամանակին Կարապետ Մելիք-Օհանջանեանը կարծիք է յայտնել, որ իր աշխատութիւնը գրելիս Կորիւնը հետեւել է «Յաղագս պիտոյից» աշխատութեան ցուցումներին: Յունարէնից թարգմանուած «Յաղագս պիտոյից» գիրքը ճարտասանութեան իւրատեսակ ձեւնարկ է, եւ բնական է, որ «Վարքը» որոշ կողմերով համապատասխանում է նրա յանձնարարութիւններին: Աւելի հաւանական է, սակայն, որ Կորիւնը հաշուի է առել իր ժամանակի գրական պրակտիկան, իր աշխատութիւնը նմանեցրել է վարքագրական եղանակով գրուած որեւէ այլ աշխատութեան: Վերջին կարծիքն առաջին անգամ յայտնել է Կիմ Մուրադեանը, ենթադրելով, որ Կորիւնին որպէս նախագաղափար օրինակ ծառայել է Գրիգոր Նազիանզացու (Դ դար) «Ի Բասիլիոս Կեսարացի» երկի հայերէն թարգմանութիւնը⁶: Հարցադրումը միանգամայն ճիշտ է, սակայն, երկու յուշարձանների միջեւ եղած աղերսը այնքան էլ բացայայտ չէ, որքան դա թուացել է հետազօտողին:

Կորիւնին վիճակուած է եղել աշակերտել Մաշտոցին. նա իր երկը գրել է ի պատասխան Յովսէփ Հողոցմեցու խնդրանքի ու յորդորի: Ինքը հեղինակը Մաշտոցի եւ Սահակ Պարթեւի յանձնարարութեամբ գնացած է եղել արտասահման՝ թարգմանութիւններ կատարելու: Կորիւնն, այսպիսով, պատկանել է վարդապետի նեղ շրջապատին՝ նախ եւ առաջ դրանով է բացատրուում նրա լաւատեղեակութիւնը:

«Վարքը» գրուել է վարդապետի մահից մի քանի տարի անց՝ 443-449 թթ. միջեւ: Այդ թուագրութիւնն ընդունուած է բոլոր գիտնականների կողմից եւ, իրօք որ, վստահելի է: Հեղինակն ասում է, որ Մաշտոցի մահուանից անցաւ 3 տարի եւ նրա գերեզմանի վրայ Վահան Ամատունին տաճար կառուցեց⁷:

Մաշտոցը վախճանուել է 440 թ. սեպտեմբերի 17-ին: Կորիւնին ծանօթ է մի դէպք, որը կատարուել է $440+3=443$ թ., ուստի նա իր աշխատութիւնը գրել է այդ թուականից յետոյ: Միւս կողմից՝ հեղինակը ճանաչում է Վահան Ամատունուն որպէս հազարապետ Հայոց Մեծաց, իսկ եղիշէից գիտեմք, որ 449 թ. Վահանը զրկուել էր իր բարձր պաշտոնից: Այսպիսով, Կորիւնն իր երկը պիտի աւարտէր ոչ ուշ, քան 449 թ.:

Մի հանգամանք էլ վկայում է, որ «Վարքը» գրուել է Վարդանանքից առաջ: Ապստամբութեան պահին իր գրաւած դիրքի համար Վասակ Սիւնի մարզպանը ճանաչուեց դաւաճան, այդպիսին է նա հանդէս գալիս միւս հեղինակների մօտ: Իսկ Կորիւնը անուանում է նրան «քաջն Սիսականն Վասակ, այր խորհրդական եւ հանճարեղ եւ յառաջիմաց, շնորհատուր իմաստութեամբն Աստուծոյ» [Կոր., էջ 62. 2-3]: Հասկանալի է, որ Վարդանանքից յետոյ այդպիսի մակդիրներն անհնարին կը լինէին:

Կորիւնը գրեթէ չի շեղուում դէպքերի իրական հերթականութիւնից: «Վարքը», թէեւ գրուած է մասամբ ճոռոմ լեզուով, սակայն կոնկրետ բնոյթ է կրում, ընդհանուր առմամբ ներկայացնում է գրերի ստեղծման եւ Մաշտոցի ողջ կենսական ուղու իրական պարագաները: Հեղինակն, անշուշտ, ենթարկուած է գրական իր ընտրած տեսակի պահանջներին եւ շատ բան լռութեան է մատնում, պատմութիւնը թերի է: Բայց այն, ինչ որ ասուած է, իր էական կողմերով համապատասխանում է իրականութեանը:

«Վարքի» հերոսը՝ Մաշտոցը, ծնուել է Տարօսի Հացեկաց գիւղում. հօր անունը Վարդան է: Գրականութեան մէջ տարածում է գտել Մեսրոպ Մաշտոց արհեստական կապակցութիւնը: Մինչդեռ թէ՛ Կորիւնը, թէ՛ Ղազար Փարպեցին վարդապետին անուանում են միայն Մաշտոց: Մովսէս Խորենացին է, որ մի

տեղ յիշում է նրան որպէս Մաշտոց (Մաշդոց), իսկ միւս տեղերում՝ միայն Մեսրոպ (Մեսրոբ, Մեսրոպբ, Մեսրոպա): Յայտնի է, թէ դրա համար ի՞նչ հիմք է ունեցել մեր Պատմահայրը: Նիկողայոս Ադոնցը գտնում է, որ մինչև խնդրի պարզելը գերադասելի է անպայման Մաշթոց ձեւը⁸:

Տարօնը գտնուում է Վանայ լճից դէպի արեւմուտք. Մաշտոցի օրօք եղել է Մամիկոնեանների ժառանգական տիրոյթը: Փաւստոս Բուզանդը Տարօնում գիտէ կարճագատների Հացեաց գիւղ (Փաւ. Բուզ., Գ, 20): Կարճագատները հաւանաբար կազմել են ազատների դասի ինչ-որ ստորին շերտը: Ամէն պարագայի Մաշտոցը ազնուական ընտանիքից է, հակառակ դէպքում նշուած կը լինէր (եթէ Մաշտոցը վանական անունն է) նրա Վարդան հօր տոհմանունը:

Ապագայ վարդապետը մանուկ հասակում ընտելանում է հելլենական դպրութեանը, ապա Արշակունիների դռանը ծառայութեան անցնում արքայական դիւանում՝ Առաւան հազարապետի հսկողութեան ներքոյ: Արքունիքում նա կատարում է զինուորական քարտուղարի պարտականութիւններ, հմտանում է աշխարհական կարգերի մէջ, զինուորական արուեստով սիրելի դառնում զինուոր ընկերներին, եւ, միաժամանակ ծառայելով իշխաններին, ընթերցում աստուածային գրքեր [Կոր. Գ]:

Միառժամանակ յետոյ Մաշտոցը թողնում է աշխարհիկ հոգսերը եւ մտնում միայնակեացների կարգը. ինչպէս հարկն է, հոգին վարժելու եւ ամրապնդելու համար տարբեր վշտակեցութիւններ է կրում, այն է՝ միանձնութիւն, լեռնակեցութիւն, քաղց ու ծարաւ, բանջարածարակութիւն, մնում է անլոյս արգելաբաններում, խարազանազգեստ քնում գետնատարած անկողնում, իսկ շատ անգամ էլ, հրաժարուելով քնից, գիշերը ոտքի վրայ լուսացնում: Այդ կամ նման վարժութիւնները պարտադիր էին դարձել միայնակեացի համար: Մաշտոցի համբաւը աստիճանա-

բար տարածում է, նա աշակերտներ է ունենում եւ ահա իր հետեւորդների ուղեկցութեամբ իջնում Գողթնի անկարգ ու անխնամ մնացած տեղերը՝ նպատակ ունենալով քրիստոնեայ դարձնել հեթանոս մնացածներին: Գողթնի Շաբիթ իշխանը օգնութեան է գալիս Մաշտոցին, վարդապետը յաջողութեամբ է սերմանում գրագն կնաց՝ կենսատու խօսքը: Սակայն նրա գլխաւոր նպատակն է՝ նոյն արդիւնքին հասնել ողջ հայութեան նկատմամբ (նոյնպէս առաւել հոգ ի մտի արկանէր գհամաշխարհական սփոփելոյ [Կոր. Ե]): Եւ անընդհատ տրամուլթեան մէջ էր՝ ինչպիսի ելք գտնի այդ բանի համար:

Գողթն գաւառը ընդգրկում էր այժմեան Ապրակունիսի եւ Օրդուբադի շրջանները (Նախիջեւանի նախկին ինքնավար հանրապետութեան սահմաններում): Այդ ծայրամասը հեթանոսութեան յենարաններից մէկն էր: Այդ մասին է վկայում նաեւ Մովսէս Խորենացին, նշելով բնակիչների սէրը հին հեթանոսական առասպելների ու երգերի նկատմամբ: Սակայն հեթանոսութիւնն իր դիրքերը էէր զիջել նաեւ միւս վայրերում: Հեթանոսական հաւատը, մրցելով քրիստոնէութեան հետ, տարածուած էր դեռեւս ինչպէս Հայոց աշխարհում, այնպէս էլ հարեւան Վիրքում ու յատկապէս Աղուանքում: Փաւստոս Բուզանդը այսպէս է նկարագրում վիճակը, նկատի ունենալով Տիրան թագաւորի (338-350) ժամանակակիցներին, բայց հիմքեր կան այդ պատկերը տարածելու նաեւ Մաշտոցի դարաշրջանի վրայ: Քրիստոնէութիւնը, ասում է պատմիչը, ինչպէս պէտք է, էէր առնչուում ո՛չ գիտութեան, ո՛չ յոյսի, ո՛չ էլ հաւատի հետ: Նրանք, ովքեր ինչ-որ չափով իւրացրել էին հելլեն կամ ասորի դպրութիւնը, հասու էին նոր (քրիստոնէական) ուսմունքին: Իսկ գիտութիւնից հեռու կանգնած մարդկանց վիճակը, լինէին դրանք նախարարներ, թէ շինականներ, այլ էր: Եթէ վարդապետների ասածը հորդահեղ անձրեւի պէս օր ու գիշեր հոսէր դրանց վրայ՝

չէին հասկանայ ու մտքում չէին պահի «եւ ոչ մի բան, եւ ո՛չ կէս բանի, եւ ո՛չ դոյզն յիշատակ ինչ, եւ ո՛չ նշմարանս ինչ»: Զէ՞ որ նրանք մանկուց անտեսել են պիտանին ու կարեւորը, նրանց միտքը սխալ ուղղութեամբ է ընթացել՝ «ի հնութիւն հեթանոսութեանց սովորութեանց»: Նրանք սիրել են վիպասանների երգեր-առասպելները, հաւատացել նրանց [Փաւ. Բուգ., Գ, 13]:

Ասորերէնը իւրացնում էին դժուարութեամբ: Ճիշտ է, այդ տեղեկութիւնները հաղորդում է այնպիսի մի բացարձակ հելլենասէր, ինչպիսին էր Ղազար Փարպեցին, ուստի դրանք մասամբ արտայայտում են հեղինակի անձնական ճաշակն ու վերաբերմունքը հայերէնից այնքան հեռու ասորերէնի նկատմամբ: Այնուամենայնիւ, այդ վերապահումով եւս կարող ենք պատկերացում կազմել իրական դժուարութիւնների մասին: Երբ Մաշտոցը տեսնում էր, թէ ինչպիսի ջանքեր էին թափում հայ մանուկները ասորերէնը սերտելիս, ինչպիսի ծախսերի հետ էր կապուած դա, տրտմութեան մէջ էր ընկնում (խօսքն, ըստ երեւոյթին, ժամանակ վատնելու մասին է): Ասորի դպրոցներում ուսումը պահանջում էր մեծ օրապահիկ եւ երկար ժամանակ, քանի որ ընթանում էր հեռու վայրերում:

Եկեղեցական արարողութիւնը եւ Սուրբ Գրքի ընթերցումը կատարւում էին ասորերէն, եւ Հայաստանի նման մեծ երկրում մարդիկ դրանից ոչ մի օգուտ չէին ստանում. «եւ լինէր պաշտօնէիցն աշխատութիւն եւ ժողովրդոցն անշահութիւն յանլրութենէ լեզուին ասորւոյ» [Ղազ. Փարպ., էջ 13. 30-38]:

Այսպիսով, միայն հելլեն կամ ասորի դպրութեանը հաղորդակից անձինք են ըմբռնել քրիստոնէութեան էութիւնը: Նկատի ունենելով Հին եւ Նոր կատակարաններում արձագանք գտած երկրները, Կորիւնը գրում է, որ Հայոց աշխարհը «անուսն անգամ չէր լսել այդ կողմերի» [Կոր., էջ 56. 17-18], ասել է՝ գա-

դափար չունէր Աստուածաշնչի բովանդակութեան մասին: Ընդհանուր առմամբ հեթանոս տարերքը դեռեւս իրեն զգացնել էր տալիս ամէնուրեք: Փաւստոս Բուզանդի նկարագրութիւնից կարելի է գալ այն եզրակացութեան, որ ո՛չ յունական, ո՛չ ասորական դպրութիւնը տարածուած չի եղել: Միւս կողմից՝ օտար դպրութեամբ հարցն առհասարակ չէր լուծուի: Հակառակ նրան, որ ըստ Կորիւնի, Գողթնում ծաւալուած գործունէութիւնը պսակուեց յաջորդութեամբ, հէնց այնտեղ Մաշտոց-քարոզիչը գտաւ ճիշտ ուղին, այն է՝ սեփական գրի մշակումը:

«Վարքի» յաջորդ գլուխները նուիրուած են Հայոց նշանագրերի գիւտի հետ կապուած անցքերին: Սակայն այստեղ մենք պիտի միառժամանակ հեռանանք Կորիւնի շարադրանքից:

Մաշտոցի գործունէութեան արդիւնքները համոզում են, որ նա եղել է շատ խոշոր գիտնական: Բնածին տաղանդը նրա մէջ համատեղուել է բազմազան գիտելիքների հետ: Այդ արտասովոր մարդը որտե՞ղ է ստացել իր կրթութիւնը: «Ի մանկութեան տիսն վարժեալ հելլենական դպրութեամբն», - գրում է նրա մասին Կորիւնը [Կոր., էջ 36. 8]: «Ի տիս մանկութեան իւրոյ ուսեալ զդպրութիւն զյոյն», - կրկնում է Ղազար Փարպեցին [Ղազ. Փարպ., էջ 13. 8-9]: Քարտուղարի պաշտօնը ենթադրել է տալիս, որ նա իմացել է պարսկերէն: Մովսէս Խորենացին (որը գրերի պատմութիւնը շարադրելիս որոշ կէտերում շեղուած է Կորիւնից) ասում է, որ Պարսից Վուամ թագաւորը իբր իր մօտ է կանչում Հայոց Վուամշապուհ թագաւորին եւ վերջինս նեղութիւն է կրում քարտուղար չունենալով: Մեսրոպը (Մաշտոցը) լքել էր արքունիքը, իսկ մնացած դպիրների մէջ մի ճարտար մարդ չկար՝ մինչդեռ «պարսկականաւն վարէին գրով» [Մով. Խոր., էջ 325. 9-12]: Անկախ նրանից, թէ նկարագրուած միջագրէպը որչափ է համապատասխանում իրականութեանը, երե-

և ոյթն ինքնին ճիշտ է վերարտադրուած: Մաշտոցը իրօք պիտի ծանօթ լինէր պարսկերէն գրին:

Ինչպէս ցոյց կը տանք ստորեւ, Հայոց նշանագրերը, ամենայն Հաւանականութեամբ, ծագումով կապուած են եղել արամէական գրերի Հետ: Դժուար չէ Հետեւեցնել, որ Մաշտոցը ծանօթ է եղել արամերէնին, Հաւանաբար նրան մօտեցել ասորերէն տարբերակի միջոցով: Մաշտոցի անուան Հետ է կապուած վրաց եւ աղուանից գրերի գիւտը: Նշանակում է՝ նա գոնէ ընդհանուր պատկերացում է ունեցել վրացերէնի եւ աղուանից այն լեզուի մասին, որն ընտրուել է որպէս աղուանից գրերի Հիմք:

Յունարէնի եւ ասորերէնի գիտելիքները Մաշտոցը կարող էր ստանալ Հայրենիքում: Փաւստոս Բուզանդը վկայում է՝ Ներսէս Մեծ կաթողիկոսը «կարգէր ի տեղիս դպրոցս յունարէն եւ ասորերէն յամենայն գաւառս Հայոց» [Փաւ. Բուզ., Դ, 4]: Դրանք եղել են անշուշտ վանքերին կից դպրոցներ, որոնք չէին կարող շատ բան տալ աշակերտին: Նման դպրոցներում ուսումը սահմանափակուում էր սաղմոսների, Աւետարանի, առաքեալների թղթերի ընթերցանութեամբ: Աւարտելով այդ դպրոցներից մէկը՝ Մաշտոցը դրանով միայն նախնական կրթութիւն պիտի ստանար:

Նա պարսկերէն կարող էր սովորել նաեւ գործնական եղանակով, արքունի դպիր դառնալու կապակցութեամբ: Դպրոցից ստացած գիտելիքները նա, ամենայն Հաւանականութեամբ, ընդլայնել էր ինքնուրոյն ընթերցանութեամբ: Բաւակա՞ն էր դա, արդեօք, որպէսզի մարդ Հասնի գիտութեան բարձունքներին: Չէ՞ որ Մաշտոցը եղել է իր ժամանակի ամէնից գիտուն մարդկանցից մէկը:

1925 թ. մեծանուն պատմաբան եւ բանասէր Նիկողայոս Ադոնցը (1871-1942) ուշադրութիւն հրակիրից յունարէն մի աղ-

բիւրի վրայ, որը Հայագիտութեան մէջ չէր օգտագործուել: Թ - դարում բիւզանդական պատիրարք Փոտը սովորութիւն է ունեցել կազմել իր կարդացած գրքերի ամփոփումը: Այդ եղանակով է առջացել նրա Հռչակաւոր «Գրադարան» աշխատութիւնը: «Գրադարանի» շնորհիւ մենք ծանօթանում ենք մի շարք երկերի Հետ, որոնք մեզ չեն Հասել: Բայց նրա արժէքը միայն դրանով չի սահմանափակուում: Հետաքրքիր է Փոտի ընտրութիւնը, նրա դիտողութիւններն այս կամ այն գրուածքի մասին: Արդ՝ այդ «Գրադարանի» բաժիններից մէկը վերնագրուած է՝ «Թէոդորոս երիցո՛ւ՝ Յաղագս որ ի Պարսս մոգութեան, ի ճառս երիս»⁹: Փոտը նշում է. «Կարդացել եմ Թէոդորոսի գիրքը՝ Յաղագս որ ի Պարսս մոգութեան եւ զինչ է բարեպաշտ Հաւատոյ զանազանութիւն յերիս ճառս»:

Նա ուղղում է դրանք (այսինքն՝ այդ երեք ճառերը - Կ. Իւզ.) Մաստուրիոսին՝ «ծագումով Հայաստանից, որը քորեպիսկոպոս է եղել»: Այնուհետեւ Փոտը Համառօտակի շարադրում է աշխատութեան բովանդակութիւնը եւ աւելացնում. «Այս Թէոդորոսը թւում է, որ Մոպսուեստացին է, որովհետեւ Նեստորի աղանդի մասին մանաւանդ երրորդ ճառում Հաստատապէս նախաքարոզ է լինում, այլեւ մեղաւորների վերականգնման մասին է բանդագուշում»¹⁰:

Մաշտոցի ժամանակակից, Անտիոքի երէց, ապա Կիլիկիայի Մոպսուեստիա (կամ Մամուեստիա) քաղաքի եպիսկոպոս Թէոդորոսը (վախճանուել է 428 թ.) իր բազմաթիւ աշխատութիւններով նախապատրաստել է այն ուսմունքը, որը, կապուած լինելով նրա աշակերտ Նեստորիոսի Հետ, կոչուեց նեստորականութիւն եւ տարածուեց քրիստոնեայ Արեւելքով մէկ: 431 թ. նեստորականութիւնը բանադրանքի ենթարկուեց Եփեսոս քաղաքում գումարուած Տիեզերական III ժողովի կողմից, սակայն շարունակեց տարածուել յատկապէս պարսկահայատակ քրիստոնեաների

մէջ: Ստուեր ընկաւ նաեւ Թէոդորոսի գրութիւնների վրայ: Ահա թէ ինչպէս ընկաւեց այդ փոփոխութիւնները Հայոց եկեղեցին: «Այդ ժամանակ բերուեցին, երեւացին Հայաստան աշխարհում Թէոդորոս անուևով մի հոռոմ մարդու սուտապատում գրքերը, դատարկաբան աւելորդութիւնները: Սուրբ եկեղեցիների սինհոդոսական հայրապետները¹¹, այդ մասին գրելով, իմաց տուին ճշմարտահաւատ փառաբանիչներին՝ Սահակին եւ Մաշտոցին: Եւ նրանք ճշմարտասէր ջանքով մէջտեղից վերացրին այն, աշխարհից հալածելով՝ իրենց սահմաններից դուրս վանեցին, որպէսզի ոչ մի սատանայական ծուխ չխառնուի լուսաւոր ուսմանը» [Կոր. ԻԳ]¹²:

Ն. Ադոնցը գտնում էր, որ Մաստուրիոսը Մաշտոց անուան աղճատուած ձեւն է: Թէոդորոսը Անտիոքում երէց է եղել 383-392 թթ., հէնց այդ շրջանում էլ Մաշտոցին է ձօնել իր աշխատութիւնը: Այդ քայլը անձնական ծանօթութեան հետեւանք է, որը տեղի է ունեցել հէնց Անտիոքում:

Արդ, եթէ Ն. Ադոնցի առաջարկած Մաստուրիոս եւ Մաշտոց անուաների նոյնացումը ճիշտ է, եթէ երկուսն էլ վերաբերում են նոյն անձնաւորութեանը, ապա այդ փաստը լոյս է սփռում գրերը ստեղծած գիտնականի կենսագրութեան մի բոլորովին անյայտ էջի վրայ: Անմիջապէս պատասխան է ստանում նրա կրթութեան հարցը: Բայց իրօք Մաշտոցին է վերաբերում այդ հատուածը:

Ընդունելով այդ տեսակէտը՝ Ներսէս Ակինեանը եկաւ այն եզրակացութեան, որ Մաշտոցը Թէոդորոս Մոպսուեստացու հետ միասին ուսանել է Անտիոքում եւ եղել հռչակաւոր հռետոր Լիբանիոսի աշակերտը¹³: Շարունակելով զարգացնել այդ գաղափարը՝ Յակոբ Մանանդեանը կարծիք յայտնեց, որ գրերի գիւտը տեղի է ունեցել 391-392 կամ 392-393 թթ.¹⁴: Մինչդեռ «Վարքի» գերմաներէն հրատարակութեան հեղինակ Գաբրիէլ Վինկլե-

րը ընդգծում է, որ Փոսի գրութեան մէջ Թէոդորոսը յիշատակուում է միայն իր անուևով, առանց երէց տիտղոսի¹⁵: Ն. Ադոնցի դրոյթը առարկութեան առիթներ տուեց նաեւ Ե. Տէր-Մինասեանին: Բացի այդ, ծնուած լինելով 350 թ., Թէոդորոսը եղել է Լիբանիոսի աշակերտը 60-ական թուականների երկրորդ կէսին: Եւ վերջապէս, քորեպիսկոպոս եւ վարդապետ եզրերի բովանդակութիւնը այնքան տարբեր է, որ դժուար թէ Բիւզանդիայի պատրիարքը, այդ շրջանի կայսրութեան ամէնից գիտուն մարդը, շփոթէր դրանք¹⁶:

1069 թ. արտագրուած մի ձեռագրի յիշատակարան ասում է, որ մայր օրինակը գրուած է եղել «ձեռամբ Սրբոյն Մաստուրիայ վարդապետի եւ թարգմանչի» Յիշատակարանի հրատարակիչ Ա. Մաթեոսեանը, ինչպէս նաեւ նրանից առաջ Հ. Բարթիկեանը կապում են Մաստուրի անունը յուն. ΜΑΣΤΟΥΡΙΟΣ-ի հետ¹⁷: Մինչդեռ Մաշտոցի անունը հանդիպում է տարբեր ձեւերով: Ունենք Մաշթոց, Մաժոց, Մաշոց, իսկ Մեսրոպի կողքին՝ Մեսրովր, Մեսրովա, Մեսրոբ, Մասրովա, Մասրուպ, թւում է, որ այդ շարքին է պատկանում նաեւ յիշատակարանի Մաստուրի գրութիւնը, իսկ աղճատումը տեղի է ունեցել յունարէնից միանգամայն անկախ եղանակով:

Այսպէս թէ այնպէս, Մաստուրիոսի եւ Մաշտոցի նոյնութիւնը թէպէտ եւ չի կարելի լրիւ բացառել, դրա հաւանականութիւնը չնչին է:

Վերադառնանք, սակայն, Կորիւնի ընդհատուած շարադրանքին: Ըստ մեր հեղինակի՝ Մաշտոցի գործունէութիւնը Գողթնում յաջողութիւն ունեցաւ: Քարոզիչը, սակայն, մտածում էր ողջ հայութեան մասին: Անցնում է օրերի մի երկար շարան: Մնալով նոյն մտածմունքի մէջ՝ Մաշտոցը դիմում է Մեծ Հայքի կաթողիկոս Սահակ Պարթեւին: Սահակը եւս տարւում է նոյն հոգսով: Աղօթում են երկուսով, որպէսզի քրիստոսաբեր փրկու-

թիւնը հասնի բոլոր մարդկանց, ապա հայոց նշանագրերի հարցը լուծելու նպատակով եկեղեցական խորհուրդ են հրաւիրում («եղանէր նոցա պարգեւական յամենաբարին Աստուծոյ ժողովել զաշխարհահոգ խորհուրդն երանելի միաբանելոցն, եւ ի գիւտ նշանագրաց Հայաստան ազգին հասանել»): Երկար հարցուփորձից ու որոնումներից յետոյ, հանդիպելով մեծ դժուարութիւնների, որոշում են դիմել Հայոց թագաւոր Վռամշապուհին: Իսկ արքան նրանց պատմում է մի ազնուական ասորի եպիսկոպոսի մասին, Դանիէլ անունով, որն իր համար անսպասելի կերպով գտել է հայերէն նշանագրեր: Թագաւորը ոմն Վահրիճի հրովարտակով ուղարկում է Դանիէլի մերձաւորներից մէկի՝ Յաբէլ երէցի մօտ: Յաբէլը շտապում է եպիսկոպոսի մօտ, ծանօթանում գրերին եւ ապա ուղարկում արքային: Վռամշապուհը, Սահակ կաթողիկոսը, Մաշտոցը ուրախանում են այդ նշանագրերով: Միջադէպը տեղի է ունեցել Վռամշապուհի հինգերորդ տարում:

Անսպասելի կերպով ձեռք բերելով այդ տառերը՝ Սահակն ու Մաշտոցը աշակերտներ են հաւաքում եւ ընտելացնում նրանց Դանիէլի նշանագրերին: Երբ այդ երիտասարդներից շատերը իւրացնում են գրերը, թագաւորը կարգադրում է, որպէսզի ամէնուրեք կրթեն նոյն նշանագրերով: Այդ պարագաներում, հասնելով վարդապետի աստիճանի, Մաշտոցը եղած տառերով ուսուցչութիւն էր անում: «Իսկ երբ հասկացան, որ այդ նշանագրերը բաւական չեն հայերէն լեզուի սիղոբաները՝ կապերն, ամբողջութեամբ արտայայտելու համար, մանաւանդ որ նշանագրերն էլ իսկապէս ուրիշ դպրութիւններից թաղուած եւ յարութիւն առած հանդիպեցին, ապա դարձեալ երկրորդ անգամ նոյն հոգսի մէջ ընկան եւ մի քանի ժամանակ մի ելք էին փնտրում դրան» [Կոր. 2]:

Ի՞նչն է յատկապէս կարեւորը այս՝ «Վարքի» 2 գլխում: Գոյութիւն ունեն հայոց նշանագրեր, որոնք տարածում չեն

գտել. Դանիէլը յայտնաբերել է դրանք պատահամբ («որոյ յանկարծ ուրեմն գտեալ նշանագիրս աղփաբետաց հայերէն լեզուի»), իսկ շահագրգռուած անձնաւորութիւններից միայն արքան է տեղեակ դրանց մասին, այն էլ յիշել է յատուկ պայմաններում: Մաշտոցն ու Սահակը որոշ ժամանակ իրենց աշակերտներին ընտելացրել են այդ գրերին (այսինքն՝ փորձել են գրել ու կարդալ հայերէն): Փորձը ցոյց է տուել, որ գրերն անյարմար են, չեն կարող ամբողջութեամբ վերարտադրել հայերէն վանկերը («չեն բաւական նշանագիրքն՝ ողջ ածել զսիւղոբայս զկապս հայերէն լեզուոյն»), ուստի եւ մերժելի են:

Նախքան առաջ անցնելը, պիտի ուշադրութիւն դարձնենք սէմական լեզուների (մասնաւորապէս՝ արամերէնի) գրային համակարգերին համապատասխանող մի առանձնայատկութեան վրայ: Եթէ այստեղ բաղաձայն հնչիւններն արտայայտուած են լինում լրիւ, իրենց սեփական նշաններով, ապա ձայնաւորների նշանները մեծ մասամբ բացակայում են: Այդ երեւոյթը կապուած է սէմական լեզուների իւրօրինակութեան հետ. բառի ընդհանուր իմաստը, գաղափարը արտայայտուած է լինում բաղաձայնների միջոցով, իսկ ձայնաւորները նշում են նրա քերականական պարագաները՝ խօսքի ինչ մաս լինելը, բայի սեռը, ժամանակը եւ այն: Այսպէս, արաբերէն 3 բաղաձայն *kitb* արտայայտում են գրելու միտքը, իսկ ձայնաւորները այդ ընդհանուր մտքին հաղորդում են քերականական կոնկրետութիւն. այսպէս՝ *kataba* – Գա գրեց, *kātib* – գիրքը, *kutub* – գրքեր¹⁸:

Հնդեւրոպական լեզուները (յունարէն, հայերէն, ռուսերէն եւ այն) այդ առումով էապէս տարբերում են սէմականներից: Իմաստազատիչ դեր են կատարում հաւասարապէս թէ՛ ձայնաւորները, թէ՛ բաղաձայնները: Եթէ վերցնենք երկու հնչիւն [s] եւ [r], ապա նրանց պարզ կապակցութիւնն առանց ձայնաւորի ոչ մի իմաստ չունի: Իսկ ձայնաւորների հետ այդ նոյն հնչիւն-

ները իսկոյն իմաստաւորւում են՝ սար, սէր, սէր¹³, սուր: Ինչպէս տեսնում ենք, բառերի նշանակութիւնները միանգամայն տարբեր են: Տարբեր իմաստներ են ունենում բառերը նաեւ այն դէպքում, երբ նոյն ձայնաւորը փոխում է իր տեղը (Հմմտ. սար, ասր, սրա): Երբ հնդեւրոպական որեւէ լեզու արտայայտւում է սէմական գրութեան միջոցով (ասենք միջին պարսկերէնը), առաջանում են յատուկ դժուարութիւններ, իսկ գրագիտութիւնը կապուած է լինում երկար եւ բարդ պատրաստութեան հետ:

Պէտք է մտածել, որ Դանիէլեան կոչուած նշանագրերը սէմական որեւէ այբուբենին պատկանող տառանշաններ էին՝ յարմարեցուած հայերէնի հնչիւնական համակարգին: Այդ այբուբենը հայերէնի համար եղել է թերի, անկարող վերարտադրելու վանկերը, այսինքն՝ վանկերի ձայնաւորները: Փորձը համոզեց Մաշտոցին, որ Դանիէլեան նշանագրերը հայերէնի համար կիրառելի չեն: Արդիւնքը եղել էր ոչ գոհացուցիչ, ուստի հարկաւոր էր այլ ելք փնտրել:

Բայց այդ բոլորը հասկանալու համար մի՞թէ անհրաժեշտ էր սպասել երկու տարի: Եւ ինչպէ՞ս է, որ Մաշտոցը դարձաւ վարդապետ ըստ էութեան բացասական փորձի շնորհիւ: Այդ հակասութեան վրայ ուշադրութիւն էր դարձրել դեռեւս Ներսէս Ակինեանը եւ «Վարքի» իր հրատարակութեան մէջ տեղափոխել խնդրոյ առարկայ հատուածը, կապել այն Մաշտոցի ուսուցչական գործունէութեան հետ արդէն իր ստեղծած գրերի հիման վրայ¹⁹: Այդ ուղղումը կայ նաեւ «Վարքի»՝ Ա. Մաթեոսեանի կողմից հրատարակուած տարբերակում: Ա. Մաթեոսեանը միաժամանակ մի քայլ է արել դէպի առաջ, բացատրելով, թէ ինչ-

պէս է աղճատուել ձեռագիրը: Պարզուում է, որ կազմելու ընթացքում թերթերը փոխել էին իրենց տեղերը եւ խախտել Կորիւնի շարադրանքի տրամաբանութիւնը. տեղահան է եղել մէկ այլ հատուած եւս²⁰:

Իսկոյն կռահելով Դանիէլեան գրերի թերութիւնը՝ Վռամշապուհի հինգերորդ տարում Մաշտոցը աշակերտների հետ ուղեւորւում է Ասորիք՝ նախ Եդեսիա, ապա Ամիդ: Ներկայանում է հոգեւոր բարձրագոյն մարմիններին, ապա իր խումբը բաժանում երկու մասի: Մի մասը մնում է Եդեսիայում եւ զբաղւում ասորի դպրութեամբ, իսկ միւս խումբն անցնում է Սամոսատ եւ իրեն նուիրում յունարէնին: Այդպիսի բաժանումը ունէր գործնական հիմքեր՝ Եդեսիայում իշխում էր ասորերէնը, իսկ Սամոսատում՝ յունարէնը:

Կենսագիրը յայտնում է, որ Մաշտոցը, անհանգիստ վիճակում լինելով, անընդհատ աղօթում էր՝ «չատ նեղութիւններ քաշեց իր ազգին մի բարի օգնութիւն գտնելու համար»: Ամենաշնորհ Աստուածը եկաւ օգնութեան, եւ Մաշտոցը «իր սուրբ աջով հայրաբար ծնեց նոր եւ սքանչելի ծնունդներ-հայերէն լեզուի նշանագրեր»: Նոյն Եդեսիայում այդ գրերը «չուտով նշանակեց, անուանեց ու դասաւորեց, յօրինեց սիղոբաներով՝ կապերով»:

Եդեսիայում գտնուեց Հռոփանոս անունով «հելլենական դպրութեան մի գրագիր»: Նա վերջնական ձեւ տուեց նշանագրերին՝ բարակիմ ու Բաստիմ, կարճիմ ու երկայնիմ, առանձիմիմ ու կրկնատրիմ, եւ Մաշտոցը անցաւ թարգմանութեան: Վարդապետի հետ էին նաեւ նրա երկու աշակերտները՝ Յովհանն Եկեղեաց գաւառից եւ Յովսէփը Պաղնատնից: Սկսեցին Աստուածաշնչի այն գրքից, որը կոչւում է «Առակք Սողոմոնի որդւոյ Դաւթի թագաւորի Իսրայէլի»: Կորիւնի ասելով՝ այդ գիրքը սկզբից կոչ է անում Հաղորդակից լինել իմաստութեանը՝ «ճա-

¹³ Գրաբարում սէր նշանակում է սերունդ, ցեղ, զաւակ. սէր բառն ունի նոյն նշանակութիւնը, ինչ որ աշխարհաբարում:

նաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս Հանճարոյ» [Կոր. Է-Ը]:

Այդ պահին ծնունդ է առնում Հայ դպրութիւնը:

Մաշտոցը ստեղծել է այն այբուբենը, որից մենք օգտուում ենք այսօր: Նկատի ունենք, անշուշտ, ոչ տառերի ձևերը: Զեռագրերում եղած ամենահին տառաձևերն անգամ Հեռացած են իրենց նախատիպերից: Դարերի ընթացքում առաջացել են նոր գրատեսակներ՝ երկաթագիրն իր դիրքերը մասամբ զիջել է բողոքորին, վերջինիս հետ ժամանակի ընթացքում գործածութեան մէջ է մտել նոտագիրը, ապա շղագիրը, որը հիմք է ծառայել նաեւ ժամանակակից ձեռագրին: Պնդելով, որ այբուբենը մնացել է անփոփոխ՝ նկատի ունենք նրա կորիզը, հիմնական կազմը: Մաշտոցը ստեղծել է 36 տառ, այդ տառերով են գրուած մեզ Հասած գրի Հնագոյն օրինակները (ԺԱ-ԺԳ դարերում մուտք է գործել երկու տառ եւս՝ Ֆ եւ Օ): Այսպիսով, մենք սպառնիչ նիւթ ունենք դատելու նրա գործունէութեան արդիւնքների մասին: Կորինի եւ միւս Հեղինակների ասածից կարող ենք պատկերացում կազմել, թէ ինչպիսի ուղի է անցել գիտնականի ստեղծագործական միտքը:

Ինչպէս գիտենք, Դանիէլեան նշանագրերը չէին կարող «ողջ ածել զսիւղորայս զկապս Հայերէն լեզուոյն» [Կոր., էջ 46. 2]: Միւս կողմից՝ Եղեսիայում Մաշտոցը «նշանակեալ, անուանեալ եւ կարգեալ, յօրինէր սիւղորայիւք կապօք» [Կոր., էջ 48. 10-11]: Գրաբարի սիւղորայը (կան նաեւ այլ գրութիւններ) յուն. συλλαβή բառի տառադարձումն է: Ինչպէս յունարէնում, այնպէս եւ Հայերէնում այն նշանակում է հնչիւնակապակցութիւն, վանկ: Կապք բառը, որը օգտագործում են Կորինը եւ նրան հետեւող Հեղինակները, յունարէն բառի Հայերէն զուգահեռն է: Կենսագիրն ընդգծում է, որ, ի տարբերութիւն Դանիէլեան նշանագրերի, Մաշտոցն այնպէս է կազմում իր գիրը, որ Հնարաւոր

լինէր արտայայտել Հայերէնի վանկերը, այսինքն՝ նաեւ ձայնաւորները: Գիտնականը ձգտել է վերարտադրել Հայերէնի Հնչիւնական ողջ Հարստութիւնը, եւ այդ նրան լրիւ յաջողուել է: Մաշտոցը ստեղծել է իսկական այբուբեն:

Իհարկէ, ոչ մի այբուբեն ի վիճակի չէ արտայայտել տուեալ լեզուի Հնչիւնական ողջ կազմը: Դա ոչ միայն անհնարին է, այլեւ անիմաստ: Լեզուն վերարտադրելու համար բաւական է նախատեսել գրային մի համակարգ, որը համապատասխանի լեզուի Հնչութեան կազմին: Ի՞նչ է նշանակում հնչիւնից: Ահա այդ լեզուաբանական տերմինի բացատրութիւնը. «լեզուի արտայայտութեան պլանի նուազագոյն միաւոր, որը ներկայացնում է որոշակի տարբերակիչ յատկանիշերի ամբողջութիւնը, կարող է կատարել իմաստազատիչ դեր եւ իրացում է համապատասխան յատկանիշերով բնորոշուող Հնչիւններով»²¹: Իւրաքանչիւր լեզու կարող է ունենալ հարիւրաւոր առանձին Հնչիւններ կամ դրանց տարբերակներ: Սակայն իմաստազատիչ դեր են կատարում դրանցից մի քանի տասնեակը: Հայերէնում առանձին խուլ բաղաձայններ կարող են Հակադրուել ձայնեղներին (օրինակ՝ տող/դող): Հնչիւնները կարող են տարբերուել շնչեղացման առկայութեամբ կամ բացակայութեամբ (օրինակ՝ քար/կար): Հայերէնը, ի տարբերութիւն ռուսերէնի եւ բազմաթիւ այլ լեզուների, ունի կոշտ ու եւ հասարակ ու, որոնք Հանդէս են գալիս որպէս զանազան Հնչոյթներ. օրինակ՝ սառ (գրաբարում՝ սառնամանիք, սառոյց) եւ սար: Զայնաւորների իմաստազատիչ յատկութիւնների մասին պատկերացում են տալիս այն օրինակները, որոնք բերեցին Հնդեւրոպական եւ սէմական լեզուների տարբերութիւնը բացատրելիս: Վերելում բերուած բոլոր օրինակներն այնպէս են ընտրուած, որպէսզի տարբերուեն միայն խնդրոյ առարկայ Հնչիւն-Հնչոյթները: Դանիէլեան նշանագրերը թերի են եղել

ձայնաւորների իմաստով, ուստի չեն արտայայտել հայերէնի իմաստագատիչ բոլոր հնչիւնները: Մաշտոց-բանասէրի առջեւ մի մեծ ինդիր էր ծառայել՝ գտնել հայերէնի հնչութային համակարգը, որոշել այն հնչիւնները, որոնք անպայման պիտի ունենան իրենց գրաւոր զուգահեռները: Իհարկէ, նա առաջնորդուել էր մեծ մասամբ իր ներըմբռնումով (հնչութային տեսութիւնը սկիզբ է առնում ժԹ դարից), բայց ամէն պարագայի նրա ստեղծածը եղել է կայուն եւ, ինչպէս ցոյց տուեց մէկուկէս հազարամեակի փորձը, վերին աստիճանի յաջող այբուբեն:

Այդ տիպի հնագոյն այբուբենը յունարէնն է: Կասկած չկայ, որ Մաշտոցը առաջնորդուել է յունարէնի օրինակով: Նա նախատիպից իւրացրել է ամէնից կարեւորը՝ հնչիւնային (իսկ եթէ օգտագործենք ժամանակակից տերմինը՝ հնչութային) սկզբունքը: Հայոց այբուբենը, ինչպէս եւ յունարէնը, խտրութիւն չի դնում ձայնաւորների եւ բաղաձայնների կարեւորութեան միջեւ, ձգտում է արձանագրել բոլոր իմաստագատիչ հնչիւնները: Նմանութիւնը յունականին արտայայտուել է նաեւ որոշ ոչ էական յատկութիւններով: Հայոց տառերը դասաւորուած են յունարէնի կարգին զուգահեռ, յունարէնի համեմատութեամբ յաւելեալները միջանկեալ տեղեր են գրաւում: Յունարէնում [ւ] հնչիւնը եղել է երկբարբառ, ըստ այնմ էլ արտայայտուել է օ եւ ս տառերի կապակցութեամբ՝ օս: Հայերէնում ու-ն պարզ հնչիւն է, սակայն կազմուած է դարձեալ երկու տառանիշից, ընդ որում առաջինը համապատասխանել է յուն. օ, իսկ երկրորդը՝ յուն. ս-ին (նոյն սկզբունքն է կիրառուած եւ հին վրացերէնում): Կորիւնի ասելով՝ Հռոփանոսը աշխատել է բարակ ու հաստ, կարճ ու երկայն եւ այլ տառերի վրայ: Յունարէն հնչիւն-տառերի բաժանման սկզբունքը այստեղ տարածուած է հայկականի վրայ:

Յունարէնի օրինակով առաջնորդուել են մի շարք ժողովուրդներ: Այդպէս են վարուել ղպտիները (քրիստոնեայ եգիպտացիները): Նրանք առհասարակ իւրացրել են յունարէն այբուբենը՝ աւելացնելով պակասող 7 տառ: Դ դարի երկրորդ կէսին գոթերի եպիսկոպոս Վուլֆիլան ձեռնամուխ է եղել Աստուածաշնչի թարգմանութեանը՝ ստեղծելով յատուկ գոթական նշանագրեր: Վուլֆիլան եւս հետեւել է յունարէնի սկզբունքին: Մաշտոցը այդ ուղիով է ընթացել ոչ միայն հայերէն, այլեւ վրացերէն եւ աղուաներէն գրերը ստեղծելիս: Վերջապէս, Թ դարում, երբ Կիւրեղ-Կոստանդինը եւ Մեթոդիոսը ստեղծեցին սլաւոնական այբուբենը, նրանք իրենց հերթին հաւատարիմ մնացին յունական սկզբունքին: Մաշտոցի հանճարեղութիւնը ոչ թէ գրերը նոր մօտեցմամբ ձեւելու մէջ է, այլ նախ եւ առաջ նրանում, որ նա լիովին ըմբռնել է, հետեւողականօրէն կիրառել ժամանակի ամէնից առաջադէմ միտումը:

Հռոփանոսի դերը պարզ է, նա ոճաւորել է հայ նշանագրերը՝ դրանք միաժամանակ նմանեցնելով յունարէն գլխագրին: Բայց նա ի՞նչ նիւթ է ունեցել ձեռքի տակ: Ի՞նչ ձեւ են ունեցել Մաշտոցի աջով նկարուած տառերը: Տասնեակ գիտնականներ փորձել են պատասխան տալ այդ հարցերին՝ բերելով բազմաթիւ օրինակներ, որոնց իբր հետեւել է Մաշտոցը: Այստեղ, դժբախտաբար, մեր հիմքերը խախտու են, մանաւանդ որ գործ ունենք տառերի որոշ չափով արդէն վերափոխուած եւ կայունացած ձեւերի հետ: Ինքնագործ ծագումը հարկաւոր է բացառել: Հնում տառերի բոլոր համակարգերը այս կամ այն չափով իւրացուած են եղել հարեւաններից: Պէտք է մտածել, որ այս դէպքում եւս իւրացումը կատարուել է հարեւան ժողովուրդներից: Մաշտոցն օգտուել է այն գրերից, որոնց նա ծանօթ է եղել գործնականօրէն: Տեսականօրէն հնարաւոր էր օգտագործել յոյնների, ասորիների, պարսիկների փորձը, օգտուել բուն արամերէն

գրութիւնից, որի աւանդոյթը դեռեւս ողջ էր: Հէնց այդպիսի լուծում է առաջարկում Ա. Փերիխանեանը: Ելնելով թէ՛ պատմամշակութային պարագաներից, թէ՛ հնագրութեան տուեալներից նա գտնում է, որ հայոց նշանագրերը ձեւելիս Մաշտոցը իբրեւ հիմք ընդունել է Հիւսիսային Միջագետքի մեզ չհասած արամէական մի համակարգ²²: Խօսք կարող է լինել օգտագործման մասին ընդհանուր ձեւով, առանձին տառեր Մաշտոցը կարող էր վերցնել միւս աղբիւրներից, կամ ինքը ստեղծել: Վաղուց արդէն ուշագրութիւն են դարձրել, որ հայերէն Գ-ն յար եւ նման է դպտի՝ հնչեղութեամբ մօտ ջ-ին՝ նոյն հնչիւնն արտայայտող Գ-ին: Հայերէն կոշտ Ռ-ն դիտում են որպէս երկու փափուկ ր-երի կապակցութիւն րր, իսկ Վ-ն առաջացնում են երկու փոքրատառ ռ-երից՝ Վ²³: Սրամիտ առաջարկների ցուցակը կարելի է երկարացնել, սակայն դրանք մեծ մասամբ կուսումնասիր են, որոնք շատ դժուար է ինչպէս ապացուցել, այնպէս էլ հերքել: Պէտք է ասենք, որ որքան էլ հետաքրքիր լինի այդ հարցը, այնուամենայնիւ այն երկրորդական նշանակութիւն ունի: Ինչպէս ասացինք, Մաշտոցի իսկական ներդրումը եղել է համակարգի ընտրութիւնը եւ յետոյ միայն՝ նրան համապատասխանող նշանների ձեւաւորումը:

Հայոց նորաստեղծ գրերն արժանացան Ասորիքի հոգեւորականների գովասանքին: Մաշտոցն իր աշակերտների հետ վերադարձաւ Հայաստան: Կորիւնի ասելով՝ դա եղել է Վռամշապուհի վեցերորդ տարում: Մաշտոցը մօտենում է Նոր քաղաքին՝ Վաղարշապատին: Յայտնում են թագաւորին ու կաթողիկոսին եւ, «նրանք նախարարագունդ աւագանու բոլոր բազմութիւնն առնելով՝ քաղաքից դուրս եկան, Ռահ գետի ափին դիմաւորեցին երանելիին» (Ռահ գետը, հաւանաբար, Երասխ-Արաքսն է): «Եւ ցանկալի ողջոյնը միմեանց տալուց յետոյ այնտեղից ցնծութեան ձայներով եւ հոգեւոր երգերով ու բարձրածայն օրհնութիւննե-

րով ետ դարձան քաղաքը եւ տօնական ուրախութեամբ անցկացրին օրերը» [Կոր. Թ]: «Վարքի» շտկուած բնագիրը հնարաւոր է դարձնում որոշելու, որ հէնց այդ շրջանում Մաշտոցն անցաւ ուսուցչութեանը եւ արժանացաւ վարդապետ կոչումի:

Ե՞րբ են ստեղծուել հայոց նշանագրերը՝ ահա մի հարց, որի վրայ տքնել է գիտնականների 2-3 սերունդ: Առկայ տուեալները հակասական են: Բերենք երկու օրինակ: Դանիէլեան նշանագրերը Մաշտոցի ձեռքն են ընկնում Վռամշապուհ արքայի 5-րդ տարում. այսպէս է ասուած «Վարքի» գիտական շրջանառութեան մէջ մտած բնագրում: «Վարքի» վերջին՝ ԻԹ գլուխը ամբողջութեամբ կազմուած է ժամանակագրական հաշիւներից: Այդ հասուածի՝ Կորիւնի գրչին պատկանել-չպատկանելուց անկախ, այն շատ կարեւոր է եւ ցոյց է տալիս հեղինակի լաւատեղեակութիւնը անցքերի հերթականութեանն ու ժամանակագրութեանը: Այստեղ ասուած է, որ հայոց դպրութիւնից մինչեւ սրբի վախճանն անցել է 35 տարի: Մաշտոցն իր մահկանացուն կնքել է 440 թ. փետրուարի 17-ին՝ շաբաթ օրը¹⁴: Այսպիսով, գրերի գիւտը տեղի է ունեցել 405-406 թթ.: Իսկ Ղազար Փարպեցին յայտնում է, որ Վռամշապուհը գահի վրայ է հաստատուել Պարսից Շապուհ Գ-ի օրօք (383-388), ուստի Կորիւնի հաղորդած հինգերորդ տարին (երբ ստեղծուել են գրերը) 393 թ. այս կողմ չի անցնում: Նման հակասութիւնների թուարկումը կարելի է շարունակել:

Դէպքերի ժամանակագրութիւնը որոշելու ուղղութեամբ կատարուած մեծ աշխատանքը հնարաւորութիւն է տուել անջատել առաւել վստահելի տուեալները սխալներից եւ յանգել քիչ թէ շատ վստահելի արդիւնքների, այն է՝ հայոց նշանագրերի

¹⁴ Տարեթիւը ինչ-որ չափով պայմանական է. Գա կարող էր վախճանուած լինել մէկ տարի առաջ՝ 439 թ.:

ծննդեան թուականն է՝ 405-406 թթ.: Ներկայ գրքում դժուար թէ անհրաժեշտութիւն լինի աւելի մանրամասն կանգ առնել այդ՝ ինքնին թէ՛ կարելոր եւ թէ՛ հետաքրքիր հարցի վրայ²⁴:

Վերադառնալով հայրենիք՝ Մաշտոցն ու իր աշակերտները զբաղուում են թարգմանութեամբ, գրչագրեր եւ ընդօրինակում, դասաւանդում: Հայոց գրերի գաղափարը սկզբից եւեթ մօտ է եղել Սահակ կաթողիկոսին: Այժմ նա Մաշտոցին հաւասար հովանաւորում, խրախուսում ու ճիշտ ընթացք է տալիս այդ գործունէութեանը: Ինքը վարդապետը շրջում է երկրով մէկ, դուրս գալիս նաեւ հայրենիքի սահմաններից: Նրա ճանապարհորդութիւնների երեք երթուղու վրայ պիտի կանգ առնենք առանձին:

Հայաստան վերադառնալուց եւ Սիւնիք այցելելուց միաժամանակ յետոյ, — ասում է վարժագիրը, — Մաշտոցը հոգ տարաւ նաեւ քարաքրտակաւ կողմի համար՝ վրացերէն լեզուի նշանագրեր յօրինեց: Գրեց, դասաւորեց, յարդարեց, ինչպէս ընդունուած էր: Իր հետ վերցնելով մի շարք լաւագոյն աշակերտների՝ իջաւ Վրաց աշխարհը: Ներկայացաւ Բակուր թագաւորին եւ աշխարհի Մովսէս եպիսկոպոսին: Թագաւորը, ազնուականները, ողջ երկիրը խոնարհուեցին նրա առջեւ [Կոր. ԺԵ]:

Այդ շրջանում Վիրքի (Արեւելեան Վրաստան, Բարթի) թէ՛ քաղաքական վիճակը, թէ՛ մշակութային զարգացումը էապէս չէր տարբերւում Հայաստանից: Հայոց երկրի արեւելեան մասի նման, Վիրքը գտնուում էր Պարսից ճնշման տակ (ճիշտ է, թագաւորական իշխանութիւնն այստեղ յարատեւեց, մինչդեռ Հայաստանում այն տապալուեց դեռ Մաշտոցի օրօք): Պետական կրօն ճանաչուած քրիստոնէութիւնը խոր արմատներ դեռեւս չէր ձգել, հեթանոսական տարերքը (ինչպէս եւ Հայաստանում) եղել է զօրէղ: Եւ ճիշտ այնպէս, ինչպէս եւ Հայոց երկիրը մի քանի տարի առաջ, Վիրքը գուրկ էր սեփական գրերից (այդ նկատի

ուսի Կորիւնը՝ երկիրն անուանելով քարաքրտակաւ կողմ): Տիպաբանական նմանութիւններն ակներեւ են:

Քրիստոնեայ Վիրքը, ինչպէս նաեւ քրիստոնեայ Աղուանքը Հայաստանի բնական դաշնակիցներն են եղել: Նախորդ գլուխներում ցոյց տրուեց, որ Պարսից ճնշման դէմ ըմբոստութիւնը միասնական է եղել՝ իր հերթին դրացիներին կապելով միմեանց: Հայ գրականութեան մէջ տարածուած Հայք, Վիրք, Աղուանք երրորդութեան բանաձեւը (սկիզբ է առնում արդէն Կորիւնի մօտ, էջ 78. 13, յաճախակի է Ղազար Փարպեցու «Պատմութեան» մէջ) արտայայտում է ճակատագրի միասնութեան գաղափարը: Զարմանալի չէ, որ Մաշտոցի նման լայնախոհ գործիչը ձգտել է գիր ստեղծել նաեւ հարեւան ազգերի համար:

Մաշտոցը Վիրքում վրացերէնի Զաղայ անունով թարգման է գտնում՝ «այր գրասէր եւ ճշմարտահաւատ»: Բակուր արքան հրաման է արձակում մանուկներ ժողովել եւ յանձնել Մաշտոցին: Վարդապետը նրանց անց է կացնում ուսման բովով, ազատում հին հաւատի մնացորդներից: «Նրանց, — ասում է Կորիւնը, — որ այնքան առանձին եւ բաժանուած լեզուներից ժողովուեցին, մէկ աստուածային պատգամներով կապեց, դարձրեց մէկ ազգ, մէկ Աստուած փառաբանիչներ» [Կոր. ԺԵ]:

Այս հատուածում, ինչպէս եւ ամէնուրեք, վարժագիրը ձգտում է կերտել իր հերոսի ընդհանրացուած դիմանկարը: Մանրամասնութիւնների, առանձնայատկութիւնների մէջ չի մտնում, ընդգծում է էականը՝ Մաշտոցը հոգ է տանում Վիրքի համար, մշակում վրաց այբուբեն, աշակերտներ հաւաքում, վանում հեթանոսութեան հետքերը: Դիմանկարը ամբողջութեամբ կառուցուած է տիպային մանրութիւններից, եւ, արժէքաւորելով հաղորդածի իսկութիւնը, մենք պարտաւոր ենք ելնել վարժագրի հաղորդած ընդհանուր գաղափարի հաւաստիութիւնից: Մաշտոցի ոչ մի քայլը չի հակասում պատմամշակութային այն իրադրու-

Թեանը, որը ստեղծուել էր Վիրքում Ե դարի սկզբներին: Վրաց գրերը առաջացել են նոյն պայմաններում, նոյն գործոնների ազդեցութեամբ, ինչ որ հայկականները: Եւ նրանք կապուած են նոյն անձնաւորութեան՝ եկեղեցական գործիչ եւ քաղաքականագէտ Մաշտոցի անուան հետ: Մաշտոցն այստեղ հանդէս է գաիս ոչ թէ որպէս մի հայ, որը ժամանել է Վիրք, նպատակ ունենալով լուծել վրացիներին յուզող առանձնայատուկ խնդիրներ, այլ որպէս համընդհանուր հոսանքի պարագլուխ:

Գնահատելով Մաշտոց-գիտնականի ներդրումը՝ ուշադրութիւն ենք դարձնում նախ եւ առաջ, որ վրաց այբուբենը յենուում է ճիշտ այն սկզբունքների վրայ, ինչ որ եւ հայկականը: 38 միաւորից բաղկացած՝ այն կատարեալ հնչիւնային այբուբեն է: Ինչպէս եւ հայկականը՝ մեզ է հասել առանց էական փոփոխութիւնների եւ փայլուն կերպով ծառայում է իր նպատակին: Հայերէնի պէս վրաց այբուբենը եւս պատկանում է այն շղթային, որի առաջին օղակը յունարէն նշանագրերն են: Վրաց գրերի առաջացման պարագաներն ու ժամանակը որոշելիս պիտի ելնել ընդհանուր պատմամշակութային իրադրութիւնից:

Ասացինք, որ վրաց նշանագրերը կազմում են տիպիկ հնչիւնային այբուբեն, այստեղ եւս նրա հեղինակին յաջողուել է որոշել լեզուի հնչութային կազմը: Որչա՞փ գիտէր Մաշտոցը վրացերէն, տիրապետե՞լ է այդեօք այդ լեզուին՝ ահա հարցեր, որոնց պատասխանը կարող է միայն մտահայեցողական, ենթադրական լինել: Մաշտոցն ունեցել է վրացի կամ վրացագէտ խորհրդատուներ՝ այդ առումով Զաղայ թարգմանչի կերպարը ինչ-որ չափով խորհրդանշական է դառնում: Վրաց այբուբենում իրացուել է հնչիւնային համակարգի սկզբունքը, իսկ այդ սկզբունքը տուեալ պայմաններում պատկանել է Մաշտոցին: Մաշտոցը ներշնչել է իր հիմնական գաղափարը օգնականներին

եւ մտել պատմութեան մէջ որպէս վրաց նշանագրերի հեղինակ նախ եւ առաջ հէնց այդ առումով:

Մենք կանգ չենք առնում վրաց նշանագրերի ձեւի հետ կապուած հարցերի վրայ: Հայկականի եւ վրացականի նմանութիւնները բացայայտ են, սակայն սխալ կը լինէր մէկը անմիջապէս բխեցնել միւսից: Գրային ստեղծագործութիւնը ունեցել է աւելի բարդ ուղի. ինչպէս եւ հայերէնի դէպքում, այդ հարցը ենթակայ է նոր ուսումնասիրութեան:

Վերագառնալով Հայաստան՝ Մաշտոցը շարունակում է իր սովորական աշխատանքը՝ նպատակ ունենալով «զօրացնել, նորոգել եւ հաստատել» երկրի այն գաւառները, որոնք նրան արդէն ճանաչել էին որպէս ուսուցիչ: Միաժամանակ նա հոգում է նաեւ «վասն կէս ազգին Հայոց, որ էր ընդ իշխանութեամբ թագաւորին Հոռոմոց»: Կորիւնի շարադրանքից կարելի է կուահել, որ կէս ազգ ասելով՝ Մաշտոցը նկատի է ունեցել ոչ միայն 387 թ. բաժանումից յետոյ Բիւզանդիային անցած Մեծ Հայքի բնակչութիւնը, այլ նաեւ Փոքր Հայքի հայերին՝ այն երկրի, որն արդէն Ք.յ. Ա դարում դարձել էր Կայսրութեան գաւառներից մէկը: Որքան եւ տարբեր լինեն այդ հատուածները իրենց քաղաքական, սոցիալ-տնտեսական, նաեւ մշակութային զարգացման տեսանկիւնից, միասնութիւնը չէր խզուել (ասածս վերաբերում է յատկապէս Մեծ Հայքի արեւմտեան հողերին): Թէ՛ Պարսից շահանշահի, թէ՛ բիւզանդական կայսեր հայ հպատակները խօսում էին նոյն լեզուով, հաւատարիմ էին նոյն աւանդոյթներին, պաշտում էին նոյն Աստծուն:

Մաշտոցն ուղեւորում է Յունաց կողմերը: Բիւզանդական ռազմական կառավարիչ Անատոլիոսը Թէոդոս կայսրին հրովարտակով հաղորդում է հայ վարդապետի գալստեան մասին: Մինչդեռ Մաշտոցն անցնում է Երկրորդ Հայքի գլխաւոր քաղաք Մելիտինէն, ներկայանում տեղի եպիսկոպոս Ակակիոսին:

Այստեղ թողնելով իր աշակերտներից Ղեւոնդին՝ նա շարունակում է ուղին դէպի Կոստանդնուպոլիս: Ըստ Կորինի՝ մայրաքաղաքում նրան փառահեղ ընդունում են կայսրը, կայսրուհին, Ատտիկոս պատրիարքը: Հրովարտակ առնելով կայսրից՝ Մաշտոցը վերադառնում է Անատոլիոսի մօտ: Ի կատարումն կայսեր կամքի՝ նա «պատգամաւորներ ուղարկեց կայսրի իշխանութեան մէջ եղած Հայոց կէս ազգի գաւառները՝ բազմաթիւ մանուկներ ժողովելու եւ նրանց թոշակ նշանակելու յարմարաւոր տեղերում, ուր եւ երանելին իր ուսուցչութիւնը գործադրում եւ քաղցրացնում էր ժողովուածների համար» [Կոր. ԿԶ]:

Միայն գրերի տարածման հարցը չէր, որ ստիպել էր Մաշտոցին կտրել Վաղարշապատից Կոստանդնուպոլիս տանող երկար ուղին: Արեւմտեան Հայաստանում տարածուել էր բարբարիանոսների (միւս հեղինակների մօտ՝ բորբորիտների) աղանդը, որոնք սպառնում էին քակտել կրօնական միասնութիւնը, ուստի եկեղեցին անողոք պիտի գտնուէր: Այս դէպքում եւս հերձուածողներին տանջում էին բանտերում, իսկ երբ տեսան, որ նրանք չեն հրաժարուում իրենց ուսմունքից՝ սկսեցին ենթարկել սաստիկ ծեծի, խաչեցին, մրեցին, խայտառակեցին ու աշխարհից դուրս քշեցին [Կոր. ԺԶ]:

Թոււմ է, որ հերձուածը պիտի անհանգստութիւն պատճառէր ամէնից առաջ Կոստանդնուպոլսի եկեղեցուն, մինչդեռ աղանդաւորների հալածման տհաճ գործն իր վրայ է վերցնում Մաշտոցը: Արդեօք դա մի վկայութիւն չէ՞, որ Բիւզանդական Հայաստանի գոնէ նոր ձեռք բերուած հողերը դեռեւս գտնուում էին Հայ եկեղեցու իրաւասութեան ներքոյ:

Ղեւոնդից բացի, Արեւմուտքում մնացին 2 աշակերտ եւ՝ Ենովքն ու Դանան: Ինքը Մաշտոցը իր հիմնական խմբով վերադարձաւ Նոր քաղաք, ներկայացաւ Սահակ կաթողիկոսին եւ Արտաշէս թագաւորին: Ատտիկոսը պատրիարք է եղել 405-425

թթ., Արտաշէսը գահակալել է 422-428 թթ.: Այդ տուեալների շնորհիւ կարելի է պարզել, որ Մաշտոցը Արեւմուտք է մեկնել ոչ ուշ, քան 425 թ. եւ Հայաստան վերադարձել դեռեւս Արտաշէսի օրօք:

Տակաւին արտասահմանում եղած ժամանակ Մաշտոցի մօտ էր եկել Բենիամին անուկով մի աղուան քահանայ: Մաշտոցը «Հարցրեց ու քննեց աղուաներէն լեզուի բարբարոս խօսքերը, ապա վերուստ պարգեւած իր սովորական կորովամտութեամբ նշանադրեր յօրինեց եւ Քրիստոսի շնորհքի աջողութեամբ, կշռադատեց, կարգաւորեց, հաստատեց» [Կոր., էջ 69. 24-28]: Այնուհետեւ նա Հայաստանից ուղեւորուեց Աղուանք: Ներկայացաւ Երեմիա եպիսկոպոսին, Արսուաղ թագաւորին, նրա շրջապատի ազնուականներին, բացատրեց իր գալու նպատակը (այն է՝ տարածել իր ստեղծած աղուանից գրերը): Եպիսկոպոսն ու թագաւորը «յանձն առան ընդունել դպրութիւնը եւ հրամայեցին իրենց իշխանութեան գաւառներից ու տեղերից դպրութեան արուեստի համար բազմաթիւ մանուկներ բերել, ժողովել, արժանաւոր ու յարմարաւէտ տեղերում դասատներ-դպրոցներ [կազմել] եւ [նրանց] ապրուստի համար թոշակ նշանակել» [Կոր. Ժէ]:

Երեմիա եպիսկոպոսը անցաւ աստուածային գրքերի թարգմանութեան, «որով իսկոյն մի ակնթարթում Աղուանքի վայրենամիտ եւ դատարկասուն եւ անասնաբարոյ մարդիկ մարգարէագէտ եւ առաքելածանօթ եւ Աւետարանի ժառանգներ դարձան»: Արսուաղ թագաւորը հրամայեց իր «սատանայակիր եւ դիւամոլ ժողովրդին՝ ձեռք քաշել, ազատուել հնացած դատարկ բաներից եւ հնազանդուել Քրիստոսի ամենահեշտ լծին»: Յիշենք, որ այդ բոլորը կատարուում էր մի երկրում, ուր քրիստոնէութեան քարոզը սկսուել էր միայն Դ դարի առաջին կէսին:

Աղուանքից (Բուն Աղուանքի թագաւորութիւնից) անցնելով Բաղասական երկիրը՝ Մաշտոցը, որպէս վերակացու, թողնում է

իր սաներից մի քանիսին. նրանց միանում է արքունական դռան քահանայ Յովնաթանը, որը «մեծ յօժարութիւն էր ցոյց տուել նրա վարդապետութեան համար» [Կոր. Ժէ]:

Այն հանգամանքները, որոնք ստիպել էին Մաշտոցին հոգ տանել հայոց եւ վրաց նշանագրերի համար, առկայ են եղել նաեւ Աղուանքում: Աւելին՝ իր աշխարհագրական դիրքի պատճառով Աղուանքը հեռու էր քրիստոնեայ Արեւելքի նշանաւոր կենտրոններից, ուստի Աւետարանի քարոզը այստեղ հանդիպում էր յատուկ բարդութիւնների: Աղուանքը չէր հասել համախմբման այն մակարդակին, որը արդէն յատուկ էր Հայաստանին եւ (աւելի նուազ չափով) Վրաստանին: Եթէ հայերի ու վրացիների մօտ քրիստոնէական քարոզը, նոր ուսմունքի տարածումը հեռու էր իր աւարտից, ապա դա առաւել չափով աչքի էր ընկնում Աղուանքի դէպքում: Սակայն երկրի պատմամշակութային գարգացման միտումը եղել է նոյնը, ինչ որ հարեւանների մօտ, նոյնն է եղել նաեւ հետեւանքը: Եւ ոչ այլ ոք, քան սեփական դպրութեան գաղափարակիր Մաշտոցը կերտում է նաեւ աղուանից նշանագրեր:

Աղուանքում ծաւալած Մաշտոցի գործունէութիւնը Կորիւնը շարադրում է գրեթէ այնպէս, ինչպէս Վիրքում եւ Արեւմտեան Հայաստանում: Մաշտոցը գտնւում է իշխանութեան հովանաւորութեան ներքոյ, ներկայացնում է իր ստեղծած գրերը: Այնուհետեւ աշակերտներ են հաւաքում, դպրոցներ բացում, Մաշտոցը ընտրում է իր աշակերտներին կամ գաղափարակիցներին, եւ նրանք անցնում են թարգմանութեան: Շարագրանքի տիպաբանական նմանութիւնը ստիպում է ընդունել Կորիւնի հաղորդածի միայն էութիւնը եւ չտարուել մանրամասնութիւններով: Սակայն էութեան վերաբերեալ կասկածի տեղիք չկայ, Մաշտոցի կազմած նշանագրերով սկսեցին թարգմանել Աստուածաշունչը՝ «Երեմիայի եպիսկոպոսի ի ձեռն առեալ՝ վաղվաղակի գԱստուա-

ծային գրոց թարգմանութիւնս ի գործ արկանէր» [Կոր., էջ 70. 25-26]: Բայց աղուանից գրերի ճակատագիրը այլ էր:

Մեզ է հասել 52 տառանիշ պարունակող աղուանից այբուբենը. այստեղ կիրառուած է Հնչիւնային նոյն սկզբունքը: Յայտնաբերուել են մի քանի արձանագրութիւններ, սակայն դրանց վերծանութիւնը բաւարար արդիւնքներ չի տուել: Յայտնի է, որ դեռեւս Ձ դարում այսրկովկասեան երեք եկեղեցիների գրագրութիւնը ընթացել է համապատասխան լեզուներով՝ հայերէն, վրացերէն, աղուաներէն, բայց Աղուանքի գրութիւններից ոչ մի նմուշ չի պահպանուել:

Մինչեւ վերջին ժամանակները յայտնի չի եղել որեւէ աղուանից գրչագիր, բայց ահա 1975 թ., երբ հրդեհից յետոյ կարգի էին բերում հռչակաւոր Սուրբ Կաթարինէ վանքը (Սինայի թերակղզի), յայտնուեցին բազմաթիւ հին ձեռագրեր տարբեր լեզուներով: Երկու վրացերէն մատեաններ կրկնագիր են, այսինքն՝ որպէս գրանիւթ օգտագործուել է Հնացած ձեռագրերի մագաղաթը, ընդ որում հին գրութիւնը չէր յաջողուել լրիւ լուանալ կամ քերել: Վերին շերտը վրացերէն է, իսկ ստորինը՝ աղուաներէն եւ կամ հայերէն: Ձեռագրերը Ժ դարից են, լաւ ընթեռնելի, մինչդեռ գրութեան ստորին շերտը տեխնիկական միջոցների կիրառումով է դառնում ճանաչելի: Այնուամենայնիւ Ջազա Ալեքսիձէի 2003 թ. կատարած հրապարակումից յետոյ որոշ պատկերացում այդ ստորին շերտի վերաբերեալ ունենք. այն պատառիկ է աղուանական շաշոցից: Աղուաներէն բնագիրը գլխատառ է, նոյնչափ վարժ ու գեղեցիկ, ինչպէս որ եւ վրացերէնն ու հայերէնը, ենթադրաբար Ձ-է դարերի: Գրութիւնը՝ ձախից աջ: Բովանդակութեան մասին կարելի է ասել, թէ մի քանի դրուագներ արդէն վերծանուել են. քաղուածքներ են Նոր կտակարանից (Բ Կոր. ԺԱ 23-27, ԺԲ 28-29. Եփես. Ե 25-28. Եբր. Գ 1-5, ԺԱ 17-19)²⁵:

Ամենայն հաւանականութեամբ, որպէս Հասարակութեան կողմից ճանաչուած երեւոյթ, աղուանից դպրութիւնը չի հասել այն մակարդակին, ինչ հայկականը եւ վրացականը: Ե դարից Աղուանքի կազմի մէջ էին մտնում հայկական շրջաններ, եւ բուն աղուանական գրաւոր մշակոյթը հայկականի հետ մրցակցելիս «պարտութիւն» է կրում (հետագայում նմանատիպ դեր կատարեց Բուն Աղուանքի արեւմտեան շրջանների քաղկեդոնականացումը, որին արագ հետեւեց վրացիացումը): Հաւանաբար այդ է պատճառը, որ աղուանից դպրութեան նմուշները մեզ են հասել չնչին քանակութեամբ: Աւելացնենք, որ աղուանից լեզու արտայայտութիւնը պայմանական է: Մաշտոցը գրեր է ստեղծել Աղուանքում տարածուած երկու տասնեակից աւելի լեզուներից մէկի համար, որը եւ պիտի ճանաչուէր համընդհանուր (հաւանաբար պետական) եւ, անտարակոյս, եկեղեցական լեզու: Բազմալեզուութիւնն էլ, հաւանաբար, իր հերթին է խոչնդոտել գրական միակ լեզուի ամրապնդմանը:

Ինչպէս ասացինք վերեւում, Մաշտոցը վախճանուեց 440 թ. փետրուարի 17-ին: Նրանից 6 ամիս առաջ կեանքից հեռացել էր Սահակ կաթողիկոսը: Երկուսն էլ տեսան, թէ ազգային դպրութիւն ստեղծելու ուղղութեամբ ինչպիսի արդիւնքներ ունեցաւ նրանց գործունէութիւնը: Ի՞նչ բնոյթ է ունեցել այդ դպրութիւնը:

Ասուեց, որ հայ գրականութիւնը սկսուել է Սողոմոնի առակների թարգմանութիւնից (որպէս սոյն գլխի վերնագիրը ընտրուել են այն բառերը, որոնք առաջին անգամ գրուել են հայերէն նշանագրերի միջոցով): Ելնելով Կորիւնի մի շարք ակնարկներից՝ կարելի է հետեւեցնել, որ Մաշտոցի եւ Սահակի ձեռքով թարգմանուել են Աստուածաշնչի Մենդոց գիրքը, Մարգարէական գրքերը, Աւետարանները, Պօղոսի եւ միւս առաքելների թղթերը, Յովհաննու Յայտնութիւնը, իսկ եթէ ամենայն աստուա-

ծատուր աւանդութեանցն արտայայտութիւնը հասկանանք բառացի, ապա՝ ամբողջ Աստուածաշունչը²⁶: 431 թ. յետոյ արտասահմանից Հայաստան վերադարձան Եզնիկ Կողբացին, Ղեւոնդը, Կորիւնը: Նրանք իրենց հետ բերեցին Աստուածաշնչի ստոյգ օրինակները: Հին թարգմանութեան մէջ մոծուեցին անհրաժեշտ ուղղումներ: Նոյն Սահակը հայերէնի էր փոխադրել զնկեղեցական գրոց գումարութիւնն, այսինքն՝ այն գրքերը, որոնք անհրաժեշտ են արարողութեան համար: Թարգմանուել են Աստուածաշնչի մեկնութիւններ, Հայրաբանական գրականութեան առանձին կոթողներ²⁷: Ահա այդ երկերն են կազմել մեր միջնադարեան գրականութեան կորիզը, մի գրականութիւն, որը հարստացել ու ճոխացել է ընդհուպ մինչեւ ժԹ դարը: Այդ գրականութիւնը բաժանուել է զանազան տեսակների: Հին եւ Նոր կտակարան (դրա կողքին՝ Նոր կտակարանի մէջ մտած չորս աւետարաններից բացի, նաեւ պաշտօնական ճանաչում չգտած պարականոն աւետարաններ), դաւանաբանութիւն, մեկնութիւններ, շատագովութիւններ, քարոզներ, աստուածպաշտութեան գրքեր, պատմութիւն, փիլիսոփայութիւն, վարքագրութիւն, նամականի, եկեղեցական կանոններ, իրաւաբանութիւն, քերականութիւն, հոգեւոր բանաստեղծութիւններ, տարբեր տեսակի բառարաններ, տոմար, մաթեմատիկա, քիմիա, բժշկութիւն եւ գրական այլ տեսակներ են ներկայացուած հայերէն գրչագրերում: Նոյն ժանրերը մենք կը գտնենք յունական եւ ասորական, վրացական եւ հաբեշական գրականութիւններում: Այդ դպրութեան հիմնական շերտը թարգմանական է: «Պատմամշակութային տեսակէտից, — իրաւամբ պնդում է ժամանակակից գրականագէտը, — թարգմանական եւ ինքնուրոյն երկերի զանազանումը սոսկ պայմանական նշանակութիւն ունի, քանի որ թէ՛ բովանդակութեան, թէ՛ ձեւի առումով դրանք ներկայացնում են միասնական գրական իրողութեան հաւասարարժէք կողմերը: Միջնադարում, ըստ էութեան»

թեան, նրանց տարբերութիւնը բոլորովին չի գիտակցուել, եւ Հայ ընթերցողի կողմից միեւնոյն պատուին են արժանացել ինչպէս ազգային այնպէս եւ օտար Հեղինակները: Դրա վկայութիւնն են Հայկական բազմաՀազար ձեռագրեր, որոնցում ինքնուրոյն եւ թարգմանական գործերը Հանդէս են գալիս կողք-կողքի, առանց տարանջատման, եւ Հազուադէպ կարելի է Հանդիպել ձեռագիր ժողովածուների, որոնք կազմուած լինեն միայն Հայ Հեղինակների երկերից»²⁸:

Աշխատութիւնները, թարգմանուելով ու խմբագրուելով, անցնում էին մի դպրութիւնից միւսը եւ ամէնուրեք որդեգրուած, ամէնուրեք դիտուում որպէս մայրենի Հողի Հարազատ պտուղներ: Գրական ժանրերի նոյնութիւնը եւ թարգմանական յուժկու շերտը հիմք են տալիս արեւելաքրիստոնէական գրականութիւնը դիտելու ոչ միայն որպէս ազգային դպրութիւնների մի Հաւաքածու, այլ նաեւ որպէս միասնական գրականութիւն, որը իրեն դրսևորում է լեզուային գանազան տարբերակներով: Պէտք է ասել, որ Հայերէն տարբերակը առանց բացառութեան արտայայտում է այդ գրականութեան ողջ Հարստութիւնը: Այդ գրականութեան բոլոր ժանրերը այս կամ այն չափով ներկայացուած են Հայերէն:

Եթէ ոչ Սահակի ու Մաշտոցի օրօք, ապա գոնէ նրանց ապրած դարում այդ գրականութիւնը մեծ մասամբ ձեւաւորուել էր, յամենայն դէպս, որոշուել էին նրա հիմնական միտումները: Իւրացնելով, սեփականելով յունալեզու եւ ասորալեզու յուշարձանները՝ Հայերը ի վիճակի էին ստեղծել նաեւ սեփական աշխատութիւններ: Մենք կանգ կ'առնենք միայն պատմագրութեան վրայ, գրական մի տեսակի, որտեղ դրսևորուում է ոչ միայն այս կամ այն Հեղինակի, այլեւ ողջ Հասարակութեան անկրկնելի դիմանկարը: Պատմագրութիւնը ինքնատիպ է թէկուզ

այն պատճառով, որ ինքնատիպ ու անկրկնելի են իւրաքանչիւր ժողովրդի պատմական անցեալն ու ներկան:

Պատմութիւն ասելով՝ նկատի ունենք ոչ այնքան տուեալ գործի ժանրային յատկութիւնները, որքան այդ ճիւղին պատկանող երկերի գործառական, ֆունկցիոնալ դերը: «Մաշտոցի վարքը», Ագաթանգեղոսի աշխատութիւնը, Ղազար Փարպեցու «Հայոց պատմութիւնը»՝ բոլորը պատկանում են վաղ միջնադարեան պատմագրութեանը, բայց որքա՞ն տարբեր են դրանք գրականագիտական առումով: Պատմական երկի Հերոս են լինում թէ՛ անհատները, թէ՛ Հասարակութիւնը (բաժանումն, անշուշտ, պայմանական է), բայց բոլոր դէպքերում նրանք դիտուում են ընթացքի մէջ: Պատմութիւնը միշտ անցեալ է, սակայն այդ անցեալը կարող է լինել ե՛ւ Հեռաւոր, ե՛ւ անմիջական: Բոլոր դէպքերում, այդ անցալը դիտուում է պատմագրի տեսանկիւնից, ուստի եւ արտայայտում իր ժամանակակից վերաբերմունքը: Բայց որքան էլ անձնական լինի պատմագրի տեսակէտը, այն միաժամանակ նաեւ Հասարակական Հայեցակէտ է, Հասարակական կարծիք: Անցեալին գնահատական են տալիս՝ ելնելով ժամանակակից չափանիշերից:

Եթէ պատմագրութեան սահմանները որոշենք՝ այդ ճիւղին պատկանող երկերի ֆունկցիոնալ նշանակութիւնից ելնելով, ապա ինքնուրոյն առաջին գործը Կորիւնի «Մաշտոցի վարքն» է: Նախորդ էջերում առիթ ունեցանք ինչ-որ չափով վերլուծելու այդ հոյակապ երկը, որը թէ՛ Մաշտոցի, թէ՛ նրա դարաշրջանի պատմութիւնն է: «Վարքը» տիպիկ միջնադարեան գործ է: Կորիւնը գրել է այն ոչ թէ սեփական նախաձեռնութեամբ, այլ՝ ենթարկուելով Յովսէփ Հողոցմեցու եւ Մաշտոցի միւս աշակերտների յորդորներին [Կոր., էջ 22. 15-17]: Հետագայում ճիշտ նոյն կերպ Դաւիթ Մամիկոնեանի կոչին կ'արձագանքի Եղիշէն, Վահան Մամիկոնեանի առաջարկին՝ Ղազար Փարպեցին, Սահակ

Բազրատունու պատուէրին՝ Մովսէս Խորենացին: Չեռնարկած գործը իհարկէ եղել է «առաւել քան զկար մեր» [Կոր., էջ 22. 18] (ինքնանուաստացումը միջնադարեան քրիստոնեայ մտայնութեան բնորոշ կողմերից մէկն է): Սակայն ամէնից բնորոշը, ամէնից յատկանշականը թաքնուած է (եթէ այն ճիշտ ենք ընկալում) հետեւեալ նախադասութեան մէջ. Կորիւնը հարց է տալիս՝ թոյլատրելի՞ է արդեօք կատարեալ մարդկանց վարքը շարադրել ոչ թէ արուեստախօսելով, ոչ թէ ելնելով սեփական կարծիքից, այլ քո առջեւ կանգնածին բարձրացնել տրուած օրինակների օգնութեամբ: Արուեստախօսելու բայն, անշուշտ, յուն. τεχνολογέω-ի բառապատճէնն է: Յունարէնի գլխաւոր նշանակութիւններից մէկն է՝ կանոններ հաստատել, նոյն իմաստով է օգտագործուած նաեւ հայերէն բառը: Կորիւնը մերժում է այն եղանակը, երբ մարդ կերպար ստեղծելիս իր սեփական մօտեցումն է հաստատում, այսինքն՝ երբ նա ելնում է իրեն յատուկ չափանիշներից: Սեփական կարծիքը դարձեալ մերժելի է: Բայց ի՞նչ է նշանակում կարծիք: Տուեալ դէպքում դա սխալ կարծիքն է: Նոր հայկազեան բառարանը (Հտ. Ա, էջ 1070) օրինակներ է բերում, երբ կարծիքը բնորոշ կերպով հակադրուում է ճշմարտութեանը՝ «ճշմարտապէս, ո՛չ կարծեօք», «զկարծիս քան զճշմարտութիւն կարծեցին պատուական»: Ճիշտ կերպարը կարելի է կերտել տուեալ օրինակների օգնութեամբ, իսկ օրինակները, որոնց դիմում է Կորիւնը յաջորդ գլուխներում, ամբողջութեամբ վերցուած են Հին եւ Նոր կտակարաններից: Թուարկուում են նրանք, ովքեր գովքի են արժանացել իրենց կենդանութեան օրօք: Այսպիսով, գովաբանելով ընդդիմակացին (տուեալ դէպքում՝ Մաշտոցին), հարկաւոր է շարադրանքը համակերպել Աստուածաշնչի պատկերներին, հրաժարուել իրական կեանքի անմիջական ընկալումից: Այսպէս մեկնելու դէպքում այդ նախադասութիւնը հանդէս է գալիս որպէս ոչ միայն Կորիւնի, այլեւ

առհասարակ միջնադարեան աշխարհընկալման դասական բանաձեւ²⁹:

Մաշտոցի իրական կերպարը հնարաւոր է կերտել ժամանակակից գիտական եղանակով: Ինքը Կորիւնը ձգտում է ներկայացնել հաւաքական բնոյթի դիմանկար, այստեղ շատ բան ծայրահեղ ձեւով ընդհանրացուած է: Այդ հանգամանքը ընդգծում է հէնց հեղինակը: Իհարկէ նա (իր իսկ տեսակէտից) հաւատարիմ է ճշմարտութեանը: Լինելով Մաշտոցի ու Սահակի աշակերտը, գործակիցը, գաղափարակիցը, պատկանելով նրանց շատ մօտ կանգնած մարդկանց շրջանակին՝ նա հնարաւորութիւն է ունեցել մանրամասն պատկերացում կազմել իր հերոսների մասին: «...Ոչ թէ Հին գրոյցներից տեղեկանալով եւ մատենագրելով կարգեցինք, - գրում է նա, - այլ մենք հէնց ականատես եղանք նրանց կերպարանքներին, եւ ընթերակայ՝ [նրանց] հոգեւոր գործերին եւ լսող՝ նրանց շնորհապատում ուսման, եւ նրանց արբանեակն՝ ըստ աւետարանական հրամաններին»: Բայց միաժամանակ «... շատը թողնելով, (իսկ ճիշտը) նշանաւոր գիտակներից քաղելով՝ այս համառօտը գրեցինք», - շարունակում է նա: Անհնարին է ներկայացնել Մաշտոցի ու Սահակի ողջ կեանքը՝ «ուստի պատասպարուեցինք այս աւելի հեշտ ու դիւրինով-առաքելականով: Սրբերի բազմախուռն վաստակները թաղեցինք, որպէսզի մանրամասնօրէն պատմենք կարեւորագոյն հանգամանքները» [Կոր. ԻԸ]: Սրբի կեանքը պիտի օրինակ ծառայի նրա աշակերտներին, հոգեւոր գաւակներին, ապագայ սերունդներին՝ այդ հանգամանքն է պայմանաւորում այն ձեւն ու եղանակը, որոնցով պիտի կրճատուի ու փոփոխուի՝ խմբագրուի իրական կենսագրութիւնը:

Մենք մանրամասն կանգ առանք Կորիւնի ստեղծագործութեան ելակէտերի վրայ, որովհետեւ դրանք այս կամ այն չափով յատուկ են ողջ միջնադարեան գրականութեանը: Նրա

ընդհանուր սկզբունքներն առկայ են հայ դպրութեան արդէն անդրանիկ գործերում:

Ստեղծման հերթականութեան կարգով «Վարքից» յետոյ գալիս է Եղիշէի հուշակաւոր երկը³⁰: Այդ կոթողի բուն վերնագիրն է՝ «Բան վասն Հայոց պատերազմին»: Բան նշանակում է խօսք, աւելի նեղ իմաստով՝ Պատմութիւն³¹: Պատերազմ բառը օգտագործուած է, ըստ երեւոյթին, երկու իմաստով. այսօրուայ հասկացողութեամբ նշանակում է թէ՛ պատերազմ, թէ՛ ճակատամարտ, ընդ որում հեղինակը նկատի ունի Աւարայրի ճակատամարտը՝ 450-451 թթ. ապստամբութեան գագաթնակէտը:

«Բան վասն Հայոց պատերազմին» վերնագրուած աշխատութիւնը բազմապլանային է, հեղինակը իրեն շրջապատող իրականութեանը մօտենում է մի շարք տեսանկիւններից: Այստեղ բուն պատմական շարդանքը զուգակցում է վկայաբանութեանը, ներբողը՝ ողբին, բանակուիւր՝ ջատագովութեանը: Եղիշէն քարոզիչ է, նրա աշխատութեան խրատական եղանակը բացայայտում է ամենայն պարզութեամբ: Հայերի եւ Սասանեան իշխանութեան միջեւ եղած բախումը Եղիշէն նկարագրում է մանրամասնօրէն՝ հարցին մօտենալով որպէս լայնախոհ պատմաբան:

Գործը շարագրելիս Եղիշէն աչքի առաջ է ունեցել մի քանի գրական օրինակներ, նախ եւ առաջ Աստուածաշնչի առանձին գրքեր եւ «Վկայք արեւելից» ասորական վարքագրական ժողովածոյի Հայերէն թարգմանութիւնը: Շատ դէպքերի մասին նա խօսում է այդ աղբիւրներից քաղուած առանձին բառերով, նախադասութիւններով եւ պարբերութիւններով: Այդ գիծը, սակայն, յատուկ է ողջ միջնադարեան գրականութեանը, եւ ժամանակակից պատմաբանը միջնադարեան երկերը վերլուծելիս եւ գնահատելիս միշտ հաշուի է առնում այդ հանգամանքը:

Ե՞րբ է գրուել երկը, ո՞ր դարում է ապրել հեղինակը: Պատասխանը, կարծես, միանշանակ է՝ Ե դարում: «Ահա մեր կամքի հակառակ ողբերով շարադրում ենք այն բազմաթիւ հարուածները, որոնց մէջ հէնց մենք էլ ընկանք՝ ականատես լինելով»,— կարդում ենք խօսքի առաջաբանում [էջ 5. 18-20]: Նկարագրելով այն հարուածները, որոնք Յազկերտ Բ հասցրել էր Հայաստանին՝ հեղինակը նշում է՝ «Ո՛չ կարծիքներով եմ վերթուել, ո՛չ էլ լուրերից արթնացել, այլ ե՛ս ինքս անձամբ նոյն տեղում պատահեցի եւ տեսայ ու լսեցի յանդգնբար խօսելու (նրա՝ Յազկերտի) ձայնը» [էջ 15. 11-13]: Հեղինակը մի քանի անգամ ակնարկում է, որ առնչութիւն է ունեցել դէպքերին: Այնուամենայնիւ, ԺԹ դարի վերջերից կարծիքներ են յայտնուել, որ Եղիշէն ապրել է աւելի ուշ շրջանում: Հմուտ հայագէտ Բարգէն Կիւլէսէրեանը գտնում էր, որ մեր հեղինակը իր երկը կազմել է հետեւելով Ե դարի վերջերին կամ Զ դարի սկզբներին գրուած Ղազար Փարպեցու «Պատմութեան» համապատասխան գլուխներին, ապրել է Զ դարում, ուստի իր նկարագրուած անցքերին ոչ ժամանակակից է եղել, ոչ էլ ականատես: Անգլերէն թարգմանութեան հեղինակ հայագէտ Ռ. Թոմսոնի տեսակէտն այն է, որ երկը լոյս է տեսել Զ դարի վերջին: Իսկ Վիեննայի անուանի գիտնական Ներսէս Ակինեանի համոզմամբ, 450-451 թթ. ապստամբութիւնը նկարագրելիս Եղիշէն ազդուել է 571-572 թթ. դէպքերից, երբ մէկ ուրիշ Վարդան Մամիկոնեան ապստամբել էր պարսիկների գերիշխանութեան դէմ:

Ինչի՞ վրայ են հիմնուած նման կասկածները: Վաղուց ուշադրութիւն են դարձրել, որ Եղիշէի «Պատմութեան» մէջ հանդիպում են հատուածներ Փիլոն Աղեքսադրացու եւ այլ հեղինակների երկերից, որոնք ըստ շատ շատերի կողմից արտայայտուած տեսակէտի՝ Ե դարում յունարէնից դուռեւ թարգմանուած չեն եղել: Թարգմանութիւնների խնդրին կ'անդրադառնանք քիչ

յետոյ, իսկ այժմ փորձենք պարզել մի սկզբունքային հարց: Ինչով բացատրել, որ Հայ եկեղեցու հաւատարիմ գաւակը, նկարագրելով մի շարժում, որի կարգախօսն է եղել քրիստոնեայ հաւատի պաշտպանութիւնը, որեւէ կերպ չի յիշում Հայոց եկեղեցու հիմնադիր Գրիգոր Լուսաւորչի անունը: Աչքի է ընկնում յատկապէս հետեւեալ միջադէպը: 450 թ. հայ աւագանին մի մեծ նամակ է ուղարկում բիւզանդական կայսր Թէոդոս Բ-ին: Նամակում ասուած է եղել. «Մեր նախնին՝ Տրդատիոսը, յիշելով ձեր առաջին սէրը, որ մանկութեան ժամանակ իր հօրն սպանող մարդախողխող հօրեղբայրների ձեռքից փախցրած՝ փրկուել ու սնուել էր Յոյների երկրում եւ Ձեր օգնութեամբ թագաւորելով տիրեց իր հայրենի աշխարհին, սոյնպէս եւ Քրիստոսի հաւատն ընդունելով Հռոմի սուրբ եպիսկոպոսապետից՝ լուսաւորեց Հիւսիսի խաւար կողմերը, որ եւ ահա Արեւելքի խաւարասէր որդիներն ուզում են խլել, կորզել մեր ձեռքից» [Եղ., էջ 72. 6-12]: Խօսքը Տրդատ Մեծի մասին է, որին՝ նրա հայր Խոսրով թագաւորի սպանութիւնից յետոյ փախցրին Յունաց կողմերը եւ դրանով փրկեցին նրա կեանքը: Նման միջադէպ գտնում ենք նաեւ Ագաթանգեղոսի համապատասխան տեղում, բայց կողքին որպէս գուգահեռ՝ Անակի որդի Գրիգորի, ապագայ Լուսաւորչի, Յունաց կողմերը փախցնելու պատմութիւնը (աւելի մանրամասն՝ ստորեւ): Կարեւոր չէ, համապատասխանում է Տրդատի մասին պատմածը իրականութեանը, թէ՞ ոչ: Էականն այն է, որ Գրիգոր Լուսաւորչի պաշտամունքի հաստատումով նրա կենսագրութիւնը, թէպէտ եւ առանձին տարբերակներով, կանոնացւում է եւ մարդու գիտակցութեան մէջ այդ երկու միջադէպերն ասես ձուլւում են: Եւ եթէ այնուամենայնիւ Եղիշէն խօսում է միայն Տրդատի փախուստի մասին առանց Գրիգորին յիշելու, դա պարզ վկայութիւն է, որ Լուսաւորչի պաշտամունքը դեռեւս չի ճանաչուել: Հակառակ դէպքում անհնարին է պատկերացնել, թէ ինչն

է ստիպել Եղիշէի պէս բարեպաշտ հեղինակին բացայայտ կերպով անտեսել Գրիգոր Լուսաւորչի յիշատակումը:

Ուշադրութիւն դարձնենք մէկ ուրիշ հանգամանքի վրայ: Նամակում ասուած է, որ Տրդատը ընդունել էր Քրիստոսի հաւատը Հռոմի եպիսկոպոսապետից: Այս տեղեկութիւնը դիտում են որպէս ակնարկ Տրդատի ճանապարհորդութեան դէպի Հռոմ, ինչի մասին պատմում է Ագաթանգեղոսը: Բայց ըստ այդ հեղինակի՝ Հայոց թագաւորը Հռոմ էր գնացել Գրիգորի հետ, արդէն մկրտութիւն ընդունուած լինելով, այն էլ՝ ոչ թէ Հռոմի եպիսկոպոսապետից, այլ հէնց Գրիգոր Լուսաւորչից [Ագաթ., գլ. ՊԼԲ]:

Այս բոլորը ստիպում է ճանաչել Եղիշէի գործը որպէս Ե դարի ստեղծագործութիւն՝ մի շրջանի, երբ Լուսաւորչի անունը պաշտօնապէս դեռեւս չէր սրբացուել, իսկ Ագաթանգեղոսի աշխատութիւնը իր կանոնացուած տեսքով չէր հրատարակուել³²: Ըստ ընդհանուր տեսակէտի՝ նրա «Հայոց պատմութիւնը» երեւան է եկել Ե դարի 60-ական թուականների վերջերին: Եղիշէն գրել է Ագաթանգեղոսից առաջ: Դրանից անկախ, հաշուամների համաձայն՝ նրա «Պատմութիւնը» աւարտուել է 458 թ., լրացուել՝ 464-ին: Այդ հաշուամները միանգամայն համընկնում են իրար:

Պէտք է ասել, որ Լուսաւորչի անունն բացակայութիւնը երբեմն անհանգստութիւն է պատճառել ընթերցողին: Ասացինք, որ «Մաշտոցի վարքը» լոյս է տեսել 443-449 թթ. ընթացքում: Կորիւնը չի յիշատակում Գրիգորին, հարկ չի համարում արձանագրել, որ իր երկու գլխաւոր հերոսներից մէկը՝ կաթողիկոս Սահակ Պարթեւը պատկանել է Լուսաւորչի տոհմին, լինելով նրա վերջին ներկայացուցիչը արական գծով: Մինչդեռ Ղազար Փարպեցին, առաջին իսկ անգամ յիշելով Վարդան Մամիկոնեանի անունը, շեշտում է, որ մայրական գծով նա եղել է Սահակ կա-

թողիկոսի թոռը, իսկ Սահակին ներկայացնում է որպէս Գրիգոր Լուսաւորչի ժառանգ:

Գրիգոր Լուսաւորչի կերպարը այնքան էր հաստատուել հայ գիտակցութեան մէջ, որ երբեմն նրա անուան բացակայութիւնը լրացնում էին արհեստական եղանակով: 444 թ. կայացաւ Շահապիվանի եկեղեցական ժողովը: Առաջաբանի տարբերակներում գտնում ենք Սահակի եւ Մաշտոցի (Մեսրոպայ) անունները, յիշատակուած է նաեւ սուրբն Գրիգորիոս: Սակայն աղբիւրագիտական քննութիւնը [Ն. Ակինեան] ցոյց է տուել, որ Գրիգոր Լուսաւորչի անունը հետագայ շրջանի յաւելում է³³: Գրիգոր Լուսաւորչի անուան բացակայութիւնը Մաշտոցի բուն «Վարքում» լրացուել է երկի ուշ խմբագրութիւններում³⁴:

Բայց եթէ եղիշէն Ե դարի հեղինակ է, ինչպէ՞ս բացատրել բնագրում մի շարք բնագրական քաղովմների առկայութիւնը, որոնք գալիս են Փիլոն Աղեքսանդրացու եւ այլ հեղինակների երկերից: Փիլոնը յունագիր հրէայ գրող է, որի գաղափարները ինչ-որ իմաստով հարագատ էին քրիստոնեայ մտքին: Փիլոնի գործերից մի քանիսը թարգմանուել էին հայերէն, բայց ե՞րբ է դա տեղի ունեցել: Նախքան պատասխանելը նշենք, որ թարգմանութիւնները կատարուած են այսպէս կոչուած յունարան լեզուով: Յունարան աշխատութիւնները կազմում են հայոց վաղ միջնադարեան դպրութեան մի առանձին շերտ: Այստեղ պատճէնուած են յունարէնի շարահիւսութիւնը, օգտագործուած յատկապէս այդ լեզուի կառուցուածքը կրկնող բառեր: Այնպիսի բառեր, ինչպիսիք են, օրինակ, ապացոյց, տրամաբանութիւն, ստուգաբանել հարագատօրէն վերարտադրում են համապատասխան յունարէնները:

Յունարանութիւնը մուտք է գործել մի շրջանում, երբ գրաւոր հայերէնը արդէն լրիւ ձեւաւորուած է եղել, սակայն դրա ներթափանցման ժամանակի վերաբերեալ կան տարակար-

ծութիւններ: Հայագիտութեան դասականները (Ն. Ադոնց, Ե. Մանանդեան, Ե. Տէր-Մինասեան եւ ուրիշներ) գտնում էին, որ յունարանութիւնը տարածուել էր ոչ շուտ քան Զ դարում: Սակայն տեսակէտ կայ (եւ ամէնից կտրուկ ձեւով այն ներկայացուած է Ս. Արեւշատեանի աշխատութիւններում), որ արդէն Ե դարի երկրորդ կէսից յունարան լեզուն լայն տարածում էր գտել Հայաստանում³⁵: Այսպէս, երկարմատ բազմաթիւ բառեր առկայ են դասական հայերէնում (հետագայում բառակազմութեան այդ եղանակը լրիւ իւրացրել էր նաեւ աշխարհագրորդ): Օրինակներ կարելի է գտնել արդէն Աստուածաշնչում: Այդպիսի կառուցուածքներ յայտարարուած են Ղազար Փարպեցու մօտ: Սակայն որպէս գրական լեզուամշակութային երեւոյթ յունարան գրականութիւնը առաջանում է ոչ շուտ քան Զ դարում: Ինչպէս էլ մօտենալու լինենք հարցին, անհնարին է պատկերացնել, որ նոր-նոր գրական ձեւ ստացած, դասական դարձած հայերէնը անմիջապէս իւրացրած լինի նրան այնքան խորթ յունարան շարահիւսութիւնը (խորթ է մնացել նաեւ բառացանկի մի զգալի մասը): Չի կարելի անտեսել, որ առաջին մեզ յայտնի թուակիր յունարան բնագիրը՝ Տիմոթէոս Կուզի Հակաճառութիւնների թարգմանութիւնը կատարուել է Զ դարի կէսերին³⁶: Այս բոլորը հաշուի առնելով՝ պէտք է մտածել, որ Փիլոնից եւ մի շարք այլ հեղինակներից կատարուած քաղովմները մուտք են գործել հետագայում: Ճանաչելով «Բան վասն Հայոց պատերազմին» երկը որպէս Ե դարի ստեղծագործութիւն՝ այդ տեսակէտին է եղել եղիշէի թարգմանիչ, այնուհետեւ նաեւ գիտական բնագրի հրատարակիչ Ե. Տէր-Մինասեանը:

Մնալով այսօրուայ գիտելիքների սահմաններում՝ դժուար է առաջարկել ուրիշ բացատրութիւն: Սակայն մի կարեւոր վերապահում պէտք է անել. բանն այն է, որ մէջբերումները այնքան են պատուաստուել բնագրին, որ դրանք դժուար է դիտել

իբրև լոկ յաւելումներ: Արդեօ՞ք մեզ հասած բնագիրը վերամշակուած խմբագրութիւնն չէ: Է դարի պատմիչ Սեբէոսի նկարագրութեան համաձայն՝ չարագործ թագաւոր Յագկերտը ցանկացել էր խախտել Հայաստանի աստուածային կարգերը. նրան դիմադրեցին Հայոց նախարարները, ունենալով որպէս ղեկավար «նահապետն Մամիկոնէից տանն, Կարմիրն կոչեցեալ Վարդան, հանդերձ միագունդ սպառազէն նիզակակից ընկերաւք եւ զաւրաւք իւրեանց»: Շարադրանքը նոյն հերթականութեամբ է, ինչ որ Եղիշէի մօտ, արտացոլում է անգամ եղած բաժանումը առանձին գլուխներէ³⁷: Մինչդեռ Եղիշէի մօտ Վարդանի անունը Կարմիր ածականով երբեք չի յիշատակուած: Գուցէ սրանից կարելի է եզրակացնել, որ Սեբէոսը ծանօթ չի եղել Եղիշէի «Բան վասն Հայոց պատերազմին» երկին իր այսօրուայ վիճակով, եւ ենթադրել, որ գոյութիւն է ունեցել մէկ ուրիշ, նախնական տարբերակ, որտեղ գլխաւոր հերոսը հանդէս է եկել որպէս Կարմիր Վարդան. հետագայում այդ տարբերակը վերամշակուել է եւ մեզ հասել հէնց ներկայ ձեւով: Այս դէպքում ընդմիջարկութիւնների առկայութիւնը կը լինի միանգամայն բացատրելի³⁸:

Վարդանանց պատերազմին վերաբերող մեր գիտելիքները բխում են նախեւառաջ Եղիշէից: Եղիշէի երկը եղել է այն անդրանիկ կոթողներից, որոնք հայերին ընտելացնում էին քրիստոնեայ բարոյագիտութեան դեռեւս նոր արժէքներին, ծանօթացնում երկու նոր կերպարի հետ: Մէկը վկան է (տուեալ դէպքում վկայ բառն ունի յատուկ իմաստ): Վկան նա է, որին թշնամիները հարկադրում են յետ կանգնել քրիստոնէութիւնից, սակայն կեանքի գնով նա հաւատարիմ է մնում իր կրօնին: Երկրորդ կերպարը խոստովանողն է: Անմարդկային պայմաններում խոստովանողը եւս մերժում է ուրացութիւնը, սակայն, խոստովանելով իր հաւատը, ողջ է մնում: Սովորաբար այդ երկուսը սուրբ են հռչակուած:

Ուրացողը վկայի եւ խոստովանողի հակապատկերն է. հրապուրուելով նիւթականով (հարստութիւն, պաշտօն, պատիւ եւ այլն) նա ընդմիշտ կործանում է իր հոգին:

Վկայաբանութեան, խոստովանութեան, նաեւ ուրացութեան թեման բազմիցս մշակուել է Հայ հեղինակների կողմից: Հակառակ նրան, որ այդ կերպարներն առհասարակ ստեղծուել են՝ գրական կայուն օրինակներին ու ընդունուած կաղապարներին հետեւելով, այդ ոլորտում եւս կան բարձր գեղարուեստականութեան հասած շատ նմուշներ:

Հիմնական գաղափարը, որը կազմում է Եղիշէի աշխատութեան առանցքը՝ երկու աշխարհների՝ քրիստոնեայի եւ զրադաշտականի պայքարն է: Ընդ որում յարձակուողը երկրորդն է, իսկ առաջինը իրեն պաշտպանելու համար պատրաստ է ցանկացած կորուստների: Այդ յետնախորքի վրայ են դրսեւորում Քրիստոսի հաւատարիմները (կամ նրանք, ովքեր արտակարգ պայմաններում դաւաճանել էին, սակայն շուտով զղջացել ու ներում ստացել) եւ ուրացողները: Առաջիններն, անշուշտ, հանդէս են գալիս որպէս արդարներ, իսկ միւսները՝ չարագործներ: Այդ տրամադրութիւնը բացայայտ է ներկայացուած Եղիշէի մօտ, մինչդեռ Ղազար Փարպեցին, ասելով նոյնը, մնում է աւելի զուսպ:

Միաժամանակ կենդանի դիմագծեր են ստանում նաեւ շարժման ղեկավարները: Անշուշտ, նրանք ստեղծուել են ժամանակի գրական կանոններին համաձայն, բազմաթիւ չափազանութիւններով եւ յաճախակի՝ գիտակցուած լուրթեամբ: Կերպարներն առաջացել էին, երբ ապստամբութիւնն արդէն աւարտուել էր, հետեւանքները՝ բացայատուել, հասարակական կարծիքը եղածի եւ անցած դէպքերի վերաբերեալ՝ ձեւաւորուել: Անդրադառնալով անցեալին, մեր հեղինակները չէին կարող անտեսել կարծիքներն ու գնահատականները, որոնք ծնունդ էին առել ի-

րադրութիւնից որոշ ժամանակ անց: Այնուամենայնիւ, պատկերը, որը խոյանում է աչքի առջեւ, թւում է, թէ համապատասխանում է իրականութեանը:

Մասնակիցների երկար շարանից աչքի է ընկնում յատկապէս երկու կերպար, սպարապետը եւ մարզպանը: Սպարապետի անձնաւորութիւնը պարզ ու յստակ է: Մանուկ հասակից Վարդան Մամիկոնեանը ընտելացել էր Սուրբ Գրքի ընթերցանութեանը, մէկ անգամ միայն (Տիգրանում) թուրութիւն ցուցաբերել, ապա վերադառնալով Հայաստան ապաշխարել եւ որոշում ընդունել՝ լքել իր երկիրը: Շատ շուտ միտքը փոխելով, լծուել էր պայքարի: Աւարայրի նախօրէին նա կասի իր կողմնակիցներին՝ դուք ինքներդ էք ինձ դրել որպէս ձեր առաջնորդ ու ռազմավար: Խիզախօրէն կռուել էր թշնամու դէմ եւ մնացել ռազմադաշտում:

Վասակն անհամեմատ աւելի բարդ ու հակասական անձնաւորութիւն է: Կորիւնի «Մաշտոցի վարքում» նա դեռեւս հանդէս է գալիս իբրեւ միանգամայն դրական անձնաւորութիւն: Պատուաւոր հիւրերի կազմում մասնակցել է Շահապիվանի եկեղեցական ժողովին (444 թ.): Նշանակում է, պատմական բեմ է բարձրացել, լինելով Հայրենակիցների աչքում միանգամայն դրական անձնաւորութիւն:

Մինչդեռ այն գրողները, որոնք խօսում են ապստամբութեան մասին, ներկայացնում են մարզպանին իբրեւ վերին աստիճանի բացասական դէմք, եւ այստեղ հեշտ չէ գատել ճշմարտութիւնը երեւակայականից: Երբ Վասակը Տիգրանից հասաւ Հայոց երկիր, նա միւսների հետ խոստովանեց ուրացութեան մեղքը, եւ եկեղեցին նրան ճանաչեց քրիստոնեայ: Միաժամանակ Եղիշէն պնդում է, որ Պարսից մայրաքաղաքում Վասակն անկեղծօրէն էր ընդունել արեւապաշտութիւնը, եւ եպիսկոպոսները թերահաւատ էին նրա նկատմամբ: Վասակն այն նախարար-

ների շարքում էր, որոնք համոզում էին Վարդանին չլքել երկիրը, մասնակից էր հայերի ռազմական թաքուն ծրագրերի մշակմանը, (ապստամբութիւնից յետոյ, Տիգրանում կայացած դատավարութեան ժամանակ, նրան կը մեղադրեն նաեւ մոգերի սպանութեան համար Անգղում եւ Զարեհաւանում):

Եւ միաժամանակ (ըստ Եղիշէի) Վասակն էր բաժանում մոգերին տուն առ տուն. Միւնիքից կանչել էր իր զօրքերը նրանց պաշտպանելու համար: Համոզում էր մոգպետին կտրուկ դիրք ընդունել հայերի նկատմամբ, փառաբանում Պարսից արքային, հանդէս գալիս վերջինիս հաւատարիմ ծառայի դերում եւ այլն: Տպաւորութիւնն այն է, որ ապստամբութեան առաջին ամիսներին նա է եղել Հայաստանում գլխաւոր դէմքը: Լի եռանդով, բարդ խաղ էր վարում: Զգտում էր քաշել հայրենակիցներին իր կողմը, ոմանց խօսքով, ոմանց նիւթական բարիքների խոստումով, հասարակ ժողովրդին՝ սպառնալիքով: Նախարարութեան մի զգալի մասը գնաց նրա ետեւից: Իսկ 450 թ. աշնանը նա հրաժարուեց բախումից եւ հանդէս եկաւ որպէս արքայից արքայի հաւատարիմ ծառայ: Այդ պահին նրա անձնական յատկութիւնները դարձրին նրան առաւել վտանգաւոր:

Վարպետօրէն ներկայացնելով Վասակի կերպարը՝ Եղիշէն աւարտում է առաւել պատկերաւոր տեսարանով: Բոլորը ամբաստանում էին մարզպանին: Մի օր հայ ազնուականների հետ միասին Վասակին եւս կանչեցին թագաւորի մօտ ընթրիքի: Արքունի նախկին կարգերի համաձայն՝ նա հազաւ թագաւորից ստացած պատուական հագուստը, կապեց վարսակալը, գլխին դրեց ոսկեղէն խոյրը, մէջքին կապեց մարգարտով ու թանկագին ակներով հիւսուած կունակուռ ոսկեծոյլ կամարը, գինդերը կապեց ականջներից եւ մանեակը՝ պարանոցից, սամոյրի մուշտակը գցեց ուսերին եւ, թագաւորից ստացած բոլոր շրջագգեստները վրան

առնելով, գնաց արքունիք: «Նա բոլորից աւելի շքեղ ու ներկայանալի էր երեւում բազմութեան աչքին»:

Վասակը տեղաւորուեց ներսի դահլիճում, եւ սենեկապետը սկսեց թուարկել մարզպանի մեղքերը: Մեղադրեալը պատասխանի խօսք չգտաւ, եւ ահա դուրս եկաւ դահճապետը, Հանեց նրա շրջագոստները եւ մահապարտի զգեստ հագրեց: Ոտքերն ու ձեռքերը կապեցին, կնոջ նման մատակ ձի նստեցրին, տարան դրեցին այն զնդանը, որտեղ բոլոր մահապարտներն էին գտնուում:

Վասակին մեղադրում էին նաեւ Հայաստանից բերուած նախարարներն ու հոգեւորականները: Ծանր տառապանքներ կրելով (վարձագրական աւանդութեան համաձայն՝ Եղիշէն ներկայացնում է դրանք ամենայն մանրամասութեամբ)՝ Վասակը մեռաւ բանտում: «Եւ նա, որ յանցագործութեամբ ուզում էր Հայոց աշխարհի վրայ թագաւոր լինել, նրա գերեզմանի տեղն էլ չգտնուեց. որովհետեւ մեռաւ ինչպէս շուն եւ քարը տրուեց ինչպէս էջ» [Եղ., էջ 136-140]:

Միջնադարեան գրողի գեղարուեստական տաղանդը շատ դէպքերում հասնում է նաեւ ժամանակակից ընթերցողի սրտին:

Ընդգծելով Եղիշէի գրչի բարձր առանձնայատկութիւնները՝ նշենք այնուհանդերձ, որ մեր հեղինակի գրաւիչ ուժը պայմանաւորուած է նախեւառաջ երկի առանցքը կազմող այն հիմնական գաղափարներով, որոնք իրենց դերն են կատարել ազգային ինքնագիտակցութեան ձեւաւորման ընթացքում: Եղիշէից է սկսւում ազգային ճակատագրի ողբերգական ընկալումը: Այսօր եւս մենք գտնուում ենք ընտիր ոճով շարադրուած այդ երկի ազդեցութեան տակ (օտարելով Եղիշէի աֆորիզմները հարազատ մշակութային կոնտեքստից, երբեմն ընկալում ենք դրանք այլ կերպ՝ նրանցում դնելով հեղինակային բնագրին ոչ յատուկ բո-

վանդակութիւն): Եղիշէն մեր ամէնից դասական հեղինակներից մէկն է:

Կորիւնի, Եզնիկ Կողբացու, Եղիշէի երկերից յետոյ Հայ գրականութիւնը հարստանում է եւս մէկ կոթողով, որի հեղինակը Եղի է «Ագաթանգեղոսը»: Ինչո՞ւ ենք վերցնում այդ անունը չակերտների մէջ: Գրողը յայտնում է, թէ ինքը եղել է Տրդատ թագաւորի քարտուղարը, այսինքն՝ ապրել է Դ դարի սկզբներին: Այնինչ նրա հեղինակութեամբ յայտնի գործը իրականում գրուել է Ե դարի երկրորդ կէսին: Այդ հանգամանքը բաւական է, որպէսզի Ագաթանգեղոսը դիտենք իբրեւ շինծու անուն, որը մեզ անյայտ, անանուն Հայ հեղինակի գրչի ծնունդ է: Չենք խորանում այն հարցի մէջ, թէ ինչ հողի վրայ է առաջացել Հէնց այդ անունը (յունարէն Ἀγαθάγγελος նշանակում է բարի հրեշտակ): Բաւարարուենք՝ ընդգծելով, որ Ագաթանգեղոսի՝ մեզ յայտնի Հայերէն տարբերակը Հայ գրողի ստեղծագործութիւն է, չնայած նա օգտագործել է Լուսաւորչի դարաշրջանին վերաբերող (գուցէ եւ պատկանող) մի շարք յունալեզու աշխատութիւններ:

Ագաթանգեղոսի մեզ հասած բնագիրը³⁹ ինքնուրոյն բնոյթ է կրում, թարգմանութիւն չէ ո՛չ յունարէնից, ո՛չ էլ ասորերէնից: Ընդհակառակը, այդ բուն Հայերէն Ագաթանգեղոսից են բխում (անմիջապէս կամ անուղղակի կերպով) մի շարք փոխադրութիւններ՝ յունարէն, արաբերէն, վրացերէն, դպտիբերէն, եթովպերէն, լատիներէն, սլաւոներէն: Իր աշխատութիւնը գրելիս հեղինակն օգտագործել է անշուշտ Հայերէն (օրինակ՝ Կորիւնի երկը) եւ օտարալեզու գրաւոր աղբիւրներ, սակայն շարադրութեան ոճից երեւում է, որ նա դրանց հետեւել է շատ ազատ եղանակով:

«Պատմութիւնից» բացի, գոյութիւն ունի նրանից տարբերող «Գրիգոր Լուսաւորչի վարքը», որի հայերէն խմբագրու-

թիւնը դեռեւս չի յայտնաբերուել, սակայն նրա երբեմնի գոյութեան մասին վկայում են օտար տարբերակները՝ յունարէն, արաբերէն, հաւաստում է նաեւ ասորերէն տարբերակի գոյութիւնը:

Վերջին տասնամեակների ընթացքում գտնուել են Ագաթանգեղոսի՝ թէ՛ «Պատմութեան» եւ թէ՛ «Վարքի» օտար նոր խմբագրութիւններ: Դրանց ուսուսնասիրութեամբ զբաղուել են յատկապէս Արամ Տէր-Ղեւոնդեանը եւ Պարոյր Մուրադեանը՝ մեզանում, Ժերար Գարիտը, Միշել Վան-Էսբրուկը եւ Ռոբերտ Թոմսոնը՝ արտասահմանում. Ագաթանգեղոսի գրական պատմութիւնը դարձել է գիտական հետազոտութեան հարց⁴⁰:

Ընդհանուր առմամբ Ագաթանգեղոսի երկը նուիրուած է հեթանոս Հայաստանի քրիստոնէութեան դարձին. գլխաւոր հերոսը Գրիգոր Լուսաւորիչն է: Նրա կապակցութեամբ հեղինակն անդրադառնում է պատմական մի շարք անցքերի, ընդ որում վէպն ու հաւաստի, արժանահաւատ պատմութիւնը միմեանց են հիւսուել, այնպէս որ շատ դէպքերում հեշտ չէ դրանք տարանջատել:

Արդ, ի՞նչ է ասում Ագաթանգեղոսը, որը եղել է «ի քաղաքէ ի մեծն Հռովմայ, եւ վարժեալ հայրէնի արուեստիւ, Հռոմայերէն եւ Յունարէն ուսեալ դպրութիւն, եւ ոչ կարի ինչ անտեղեակ լեալ ձեռնարկութեան նշանագրաց» [Ագաթ., էջ 9]: Ի՞նչ է բովանդակում այն գիրքը, որը նա գրել է իբր թէ Մեծ Հայքի թագաւոր, Բաջ Տրդատի հրամանով:

Սասանի որդի Արտաշիրը սպանում է Պարսից արքայ Արտաւանին ու հաստատում սեփական իշխանութիւնը: Հայոց թագաւոր Խոսրովը, ինչպէս եւ Արտաւանը, Արշակունի է. նա ուզում է իր ազգականի վրէժը լուծել եւ 10 տարի, առանց դաշնակիցների, յաղթական կռիւներ է վարում Արտաշիրի դէմ: Ար-

տաշիրը տեսնում է, որ ի վիճակի չէ դիմադրել Խոսրովին, պատիւներ, պարգեւներ, վարձատրութիւն է խոստանում նրան, ով կը կարողանայ Խոսրովին մէջտեղից վերացնել: Արտաշիրի նախարարներից Անակ անուկով մէկը՝ Պարթեւ տոհմից, յանձն է առնում սպանել Խոսրովին: Անցնում է Հայոց երկիրը, յարմար առիթ գտնում եւ կործանիչ հարուած հասցնում Խոսրովին: Մահամերձ Խոսրովը հրաման է տալիս Անակի ողջ տոհմը սրի քաշել: Յաջողում է փրկել միայն Անակի երկու որդիներին, որոնցից մէկին փախցնում են Պարսկաստան, միւսին՝ Յունաց կողմերը: Արտաշիրն ասպատակում է Հայաստանը, գերի տանում բնակիչներին: Ինչ-որ մէկը թշնամու ձեռքից ազատում է Խոսրովի մանկահասակ Տրդատ զաւակին, դայեակների հետ նա ապաստան է գտնում Յունաց կայսեր դռանը: Մինչդեռ Տրդատը ուսում է առնում ոմն Լիկիանոս կոմսից, Անակի որդի Գրիգորը քրիստոնեայի դաստիարակութիւն է ստանում Կապադովկիայի Կեսարիա քաղաքում:

Դայեակներից իմանալով իր ծագումը՝ Գրիգորը ներկայանում է Տրդատին եւ իր ծառայութիւնն առաջարկում: Այն ժամանակ Յունաց թագաւորը սկսում է հալածել քրիստոնեաներին, նոյն կերպ է վարում նաեւ Տրդատը Գրիգորի նկատմամբ: Իր մարտական կարողութիւնները գործի դնելով, Տրդատը վերադառնում է հայրենիք, վանում պարսիկներին: Երէզ գիւղում զոհեր է մատուցում Անահիտ դիցուհու տաճարում, պահանջում է, որ Գրիգորը եւս պսակներ եւ թարմ շիւեր դնի Անահիտի պատկերի առջեւ: Գրիգորը հրաժարում է, անցնում քրիստոնէական ուսմունքի ջատագովութեանը: Երկխօսութիւնը գնալով աւելի ու աւելի է լարւում, Տրդատը Գրիգորին ենթարկում է նախ 2, ապա 10 տանջանքի, սակայն նա շարունակում է աղօթել եւ ետ չի կանգնում իր հաւատից: Տրդատին հաղորդում են Գրիգորի ով լինելը՝ նրա հայրը սպանել է թագաւորի հօրը, երկիրը մատ-

նելով կորստի եւ խաւարի: Տրդատի հրամանով շղթայակապ Գրիգորին ուղարկում են Արտաշատի բերդը եւ իջեցնում տեղի խոր վիրապի մէջ: Այդ փոսում Գրիգորը անց է կացնում 13 տարի: Այնուհետեւ Տրդատը երկու հրովարտակ է հրապարակում, մէկով՝ արգելում քրիստոնէութիւնը, միւսով՝ կոչ անում երկրպագել հեթանոս աստուածներին:

Հէնց այդ ժամանակ հռոմէացիների Դիոկղետիանոս կայսրը նկարիչներ է ուղարկում ամէնուրեք, որպէսզի նրանց բերած դիմանկարներով իր համար հարսնացու ընտրի: Հռոմում մի վանք է լինում՝ Գայիանէ կոյսի գլխաւորութեամբ: Կայսրը ցանկանում է ամուսնանալ այդ վանքի միանձնուհի գեղեցկուհի Հոփսիմէի հետ: Նա միաժամանակ հալածանքներ է ձեռնարկում կայսրութեան մէջ բնակուող քրիստոնեաների դէմ: Մինչդեռ Հոփսիմէն կտրականապէս մերժում է Դիոկղետիանոսին, կոյսերը փախչում են Հայոց երկիրը, հաստատուում Վաղարշապատում: Կոյսերից մէկը ապակեգործութեամբ է զբաղում, ուլունք պատրաստելով պահում իրեն եւ ընկերուհիներին:

Դիոկղետիանոսը թուղթ է յղում Տրդատին՝ խնդրելով վրէժ լուծել, իսկ Հոփսիմէին ուղարկել կայսրին: Մինչդեռ Տրդատը ինքն է սիրահարում Հոփսիմէին, բայց վերջինս նրան էլ է մերժում: Թագաւորին ոչ մի կերպ չի յաջողում կոտրել Հոփսիմէի դիմադրութիւնը: Ի վերջոյ, կոյսերը եղերական ձեւով աւարտում են իրենց կեանքը: Տխրութեան ու տրտմութեան մէջ ընկած Տրդատը 6 օր սուգ է անում, ապա սթափւում, գնում որսի, սակայն կատարած ոճրի համար խոզի կերպարանք է ստանում: Դիւահարութեամբ պատժւում են նաեւ կոյսերի տանջանքների համար մեղաւոր քաղաքի բնակիչները:

Եւ Հէնց այդ ժամանակ Տրդատի խորովիրուխտ քրոջը տեսիլ է յայտնւում՝ միայն Գրիգորը կարող է ապաքինել թագաւորին եւ միւսներին: Ի զարմանս բոլորի, պարզում է, որ Գրիգո-

րը վիրապում ողջ է մնացել, նրան բերում են Վաղարշապատ, որտեղ նա առաջին հերթին պատառոտած հագուստներով ծածկում է կոյսերի անվնաս եւ անապական մնացած մարմինները: Սկսում է աղօթել, ապա երկար (գրքի մօտ երրորդ մասը կազմող) վարդապետական խօսքով է հանդէս գալիս: Խոզի կերպարանք ընդունած Տրդատը եւ ողջ ժողովուրդը շարունակ Գրիգորի կողքին են, աղաչում են փրկել իրենց: Գրիգորին տեսիլ է յայտնւում, նա պահանջում է, որպէսզի կոյսերի համար երեք վկայարան կառուցեն եւ մարմինները յանձնեն հողին: Ամէն մի վկայարանի վրայ մէկական սիւն (միաժամանակ նաեւ խաչ) է կանգնեցնում, իսկ չորրորդ սիւնը՝ հրեղէն է: Նա բոլորին ցոյց է տալիս այդ հրեղէն սեան տեղը, որը եւ շրջապատում են բարձր որմով եւ մի խաչ կանգնեցնում⁴¹:

Թագաւորն ու ժողովուրդը Գրիգորի աղօթքով բուժւում են: Սկսում է քրիստոնէութեան քարոզը, ապա Գրիգորն ու Տրդատը մէկը միւսի յետեւից կործանում են մեհեանները, իսկ հին աստուածներին չաստուածներ հռչակում: Տաճարային հողերն անցնում են եկեղեցուն, իսկ սպասաւորները եւ քրմերը՝ դառնում ստրուկ: Կեսարիա քաղաքում Գրիգորը ձեռնադրւում է քահանայապետ⁴²:

Հայաստան են ժամանում Գրիգորի որդիները, ապա Գրիգորն ու թագաւորը մեծ շքախմբով ուղեւորւում են դէպի Հռոմ, այնտեղ փառահեղ ընդունելութեան արժանանում Կոստանդին կայսեր կողմից: Կոստանդինի օրօք Նիկիայում գումարւում է եկեղեցական ժողով. որպէս Հայաստանի պատուիրակ՝ այդ ժողովին մասնակցում է Գրիգորի որդի Արիստակէսը: Մինչեւ կեանքի վերջը Գրիգորը ճառեր, առակներ ու նման գրութիւններ է յօրինում, աղօթում, Աստուծոյ պատուիրանները տարածում մարդկանց մէջ:

Անգամ չոր, ակամայից համառօտ վերապատմումից իսկ դժուար չէ նկատել, որ Ագաթանգեղոսի խօսքը պտտուում է մի քանի թեմայի շուրջ: Դա ե՛լ հայերի պատերազմն է Սասանեանների դէմ, ե՛լ կոյսերի վկայաբանութիւնը, ե՛լ Տրդատի խոզ դառնալը, ե՛լ ամէնից գլխաւորը՝ Գրիգորի վարքը: Եթէ անգամ հիմնովին հանէք գերբնականը, մնացածն էլ կը լինի ոչ այնքան պատմութիւն, որքան վէպ: Իրականութիւնը, բացառութեամբ մի շարք միջադէպերի, այստեղ արտայայտուել է ամէնից ընդհանրացուած ձեւով: Իւրաքանչիւր քիչ թէ շատ մեծ հատուածի համար կարելի է գտնել բազմաթիւ գրական գուգահեռներ: Որպէս պատմական սկզբնաղբիւր, Ագաթանգեղոսը պահանջում է յատուկ գիտական քննադատութիւն: Սակայն, երբ այդ քննադատութիւնը ճիշտ է կատարուում՝ Ագաթանգեղոսի աշխատութիւնը բացուում է իր բոլոր արժանիքներով եւ շատ հարուստ նիւթ տրամադրում բուն, իրական պատմութիւնը վերականգնելու համար:

Ագաթանգեղոսի «Պատմութիւնը» առաջին երկն է, ուր ամփոփ ձեւով շարադրուում են Հայաստանի քրիստոնէացման դրուագները, հայոց դարձը: Այնուհետեւ նոյն ձեւով այն կ'իւրացուի միջնադարեան հայ գրողների կողմից եւ նոյն ձեւով էլ կը հասնի նոր ժամանակուայ գիտութեանը, երբ այդ կոթողը կը դառնայ լուրջ (եւ շատ դժուարին) գիտական վերլուծութեան առարկայ: Փորձենք ինչ-որ չափով մեկնաբանել Ագաթանգեղոսը որպէս հասարակական մտքի յուշարձան:

Ասացինք, որ Ագաթանգեղոսի «Պատմութիւնը» տարածուել է Ե դարի երկրորդ կէսին, ամէն պարագայի, Եղիշէից յետոյ: Դժուար է ասել, երբ է ծագել Գրիգոր Լուսաւորչի վարքը, որը եւ կազմում է, ամենայն հաւանականութեամբ, «Պատմութեան» կորիզը: Սկզբունքային նշանակութիւն ունի այն հարցը, թէ ե՞րբ է պաշտօնական լայն ճանաչում գտել Գրիգոր Լուսաւորչի

պաշտամունքը: Մնալով առկայ սկզբնաղբիւրների սահմաններում՝ այն կապում ենք Ագաթանգեղոսի աշխատութեան հետ: Այսպիսով, ոչ շուտ քան Ե դարի 60-ական թուականներին Հայաստանում տարածում է գտնում մեզ յայտնի բնագիրը: Ե եւ Ջ դարերի սահմանագծին Ղազար Փարպեցին կը բնութագրի այն իբրեւ Հայոց առաջին պատմութիւն: Առաջին ածականը թերեւ երկիմաստ է, նշանակում է, թէ՛ կարգով առաջին, թէ՛ հին, սկզբնական: Վարդանանց ապստամբութիւնից յետոյ, չնայած ձեռք բերուած որոշ ազատութեանը, տարած լինելով բարոյական մեծ յաղթանակ՝ հայերն ապրում էին, այնուամենայնիւ, ծանր մթնոլորտում: Գրերի գիւտը մեծ չափով նպաստել էր քրիստոնէութեան ամրապնդմանը (կրկնում ենք, որ քրիստոնեայ վարդապետութիւնը հայերի, ինչպէս նաեւ վրացիների, աղուանների եւ մի շարք այլ ժողովուրդների համար միաժամանակ եղել է ազգային ինքնագիտակցութեան, քաղաքական կողմնորոշման խորհրդանիշ): Սակայն դարաշրջանի ծանր պայմաններում հաւատարմութիւնը այդ ուսմունքին ենթարկուել է մշտական փորձութեան: Նախորդ գլուխներում մենք ցոյց տուեցինք, թէ ինչքան վտանգաւոր է եղել ուրացութիւնը գուտ քաղաքական առումով: Անհրաժեշտութիւն էր առաջացել կրկին նոր հռչակ, նոր փայլ տալ եկեղեցուն: Հարկաւոր էր մարդկանց հոգիները ընտելացնել ոչ միայն տիեզերական եկեղեցու ինչ-որ չափով վերացական գաղափարին, այլեւ ամրացնել սեփական եկեղեցունկատմամբ եղած զգացմունքը: Անհրաժեշտ էր ցոյց տալ, որ այն հայ պատմական անցեալի ծնունդ է, ունի տեղական աւանդոյթ, հանդէս է գալիս որպէս հայկական հաստատութիւն: Ամենայն հաւանականութեամբ, այդ է եղել Լուսաւորչի պաշտամունքի առաջացման ընդհանուր պատճառը, հասարակական մի երեւոյթ, որը եւ արձագանքուել է Ագաթանգեղոսի «Պատմութեան» մէջ:

Ազաթանգեղոսին բնորոշ է դրա հետ կապուած մի իւրօրինակ յատկութիւն. գրքի երրորդ մասում, որը նուիրուած է Հայաստանում Գրիգորի գործունէութեանը՝ որպէս ճանաչուած քարոզչի, կան բազմաթիւ մէջբերումներ «Մաշտոցի վարքից»։ Հեղինակը քաղում է ոչ միայն առանձին նախադասութիւններ, այլեւ պարբերութիւններ եւ էջեր՝ վարպետօրէն կապելով դրանք Գրիգորին նուիրուած իր շարադրանքի հետ։ Նշանագրերի ստեղծման կապակցութեամբ Կորիւնը Մաշտոցի մասին գրում է. «Եւ այսպէս նա շատ նեղութիւններ քաշեց իր ազգին մի բարի օգնութիւն գտնելու համար։ Ամէն բան շնորհող Աստուծոց իսկապէս պարգեւուեց նրան (այդ) բախտը. նա իր սուրբ աջով Հայրաբար ծնեց նոր եւ սքանչելի ծնունդներ՝ Հայերէն լեզուի նշանագրեր» [Կոր., էջ 49. 6-9]։ Աննշան տարբերութեամբ նոյն հատուածը գտնում ենք նաեւ Ազաթանգեղոսի մօտ, սակայն այն կապուած է Գրիգորի գործունէութեան հետ, նրա նպատակի՝ «մկրտութեամբ միւսանգամ վերստին ծնանել, առնել, կատարել, սրբել, դրոշմել մի ժողովուրդ Տեառն» [Ազաթ., էջ 433. 3-4]։ Մաշտոցի՝ Աղուանքում եղած ժամանակ Արսուաղ թագաւորն ու Երեմիա եպիսկոպոսը հրաման են տալիս, որպէսզի «ի գաւառաց եւ ի տեղեաց իշխանութեանն իւրեանց բազմութիւն մանկանց յարուեստ դպրութեանն ածել եւ գումարել...» [Կոր., էջ 70. 21-22]։ Իսկ Ազաթանգեղոսի մօտ ասուած է. «Եւ ի տեղեաց տեղեաց սահմանացն Հայոց՝ տայր հրաման թագաւորն Տրդատ՝ իւրոյ իշխանութեանն յաշխարհաց եւ ի գաւառաց բազմութիւն մատաղ մանկուոյ ածել յարուեստ դպրութեան...» [Ազաթ., էջ 437. 14 եւ այլն]։ Եւ վերջին օրինակը. Կորիւնը նկարագրում է Մաշտոցի գրական գործունէութիւնը՝ «ապա յետ այնորիկ դարձեալ՝ այնպիսի առաւել եւ բարձրագոյն վարդապետութեամբն՝ սկսեալ երանելոյն Մաշթոցի ճառս յաճախագոյնս, դիւրապատումս, շնորհագիրս, բազմադիմիս ի լուսաւորութէնէ եւ ի հիւ-

թոյ Գրոց մարգարէականաց կարգել եւ յօրինել, լի ամենայն ճաշակօք աւետարանական հաւատոցն ճշմարտութեան» [Կոր., էջ 78. 1-6]։ Գրեթէ նոյնն է ասում Ազաթանգեղոսը Գրիգորի մասին՝ «Ապա յետ այսպիսի գործոց դարձեալ առաւել բարձրագոյն վարդապետութեամբ սկսեալ երանելոյն Գրիգորի ճառս յաճախագոյնս դժուարապատումս, առակս խորիմացս, դիւրալուրս, բազմադիմիս, շնորհագիրս, յարդարեալս ի զօրութենէ եւ ի հիւթոյ Գրոց մարգարէականաց լի ամենայն ճաշակօք կարգեալս եւ յօրինեալս աւետարանական հաւատոցն ճշմարտութեան» [Ազաթ., էջ 466. 5-10]։

Գրական աղբիւրների այդպիսի օրինակներ կան ամէն քայլափոխում։ Ամէնից տարածուած են եղել, անշուշտ, փոխառութիւնները Սուրբ Գրքից։ Քաղելով առանձին բառեր ու նախադասութիւններ՝ հեղինակը կերտում էր բոլորովին այլ կերպար, որն Աստուածաշնչի հերոսին կարող է եւ չնմանուել։ Փոխառութիւններ էին անում տարբեր դարաշրջաններին պատկանող գանազան երկերից։ Դա երբեք զրազողութիւն չի դիտուել, հեղինակային իրաւունքի գաղափարը խորթ է եղել միջնադարին։ Քերթողական արուեստի⁴³ սկզբունքներից մէկը եղել է նմանողութիւնը։ Նմանուելով նախագաղափար օրինակին՝ հեղինակը դրսեւորում էր իր գիտելիքներն ու ճաշակը՝ նկատի ունենալով, անշուշտ, որ ընթերցողին եւս ծանօթ է այդ օրինակը, եւ նա կը գնահատի ընթերցուելիք երկի արժանիքները։ Տուեալ դէպքում, սակայն, Ազաթանգեղոսը գնում է աւելի հեռու։ Քաղուածքներ անելով «Մաշտոցի վարքից», ի մի ձուլելով այդ հատուածները Գրիգոր Լուսաւորչին վերաբերող իր շարադրութեան հետ՝ նա ձգտել է ինչ-որ չափով իրար մերձեցնել այդ երկու կերպարները։ Ազաթանգեղոսի ընթերցողի մօտ ակամայից զուգորդութիւններ են առաջանում Մաշտոցի հետ, եւ հէնց այդ է եղել հեղինակի նպատակը։ Չէ՞ որ Մաշտոցն իսկական լուսաւորիչ է ե-

դել, տարածել քրիստոնեայ քարոզը. չէ՞ որ Գրիգորի պէս անընդհատ պայքարել է խաւարի՝ հեթանոսութեան դէմ: Գրիգորին նմանեցնելով Մաշտոցի կայունացած, ընդհանուր ճանաչում ստացած կերպարին, Ագաթանգեղոսը ճանապարհ էր հարթում նաեւ գրական նոր հերոսի համար, յայտնի օրինակի օգնութեամբ ներկայացնում մէկին, որը պիտի դիտուի որպէս առաջին լուսաւորիչ:

Հէնց այդպէս էլ ստացուեց: Յիշատակելով ճառս յաճախագոյնս՝ Կորինը նկատի է ունեցել մեզ հասած «Յաճախապատում ճառք» վերնագրով ժողովածուն: Դրանց իրական հեղինակը հաւանաբար Մաշտոցն է, սակայն հետագայում այդ երկը վերագրուեց Գրիգոր Լուսաւորչին: Մեզ հասած ձեռագրերը կրում են ոչ թէ Մաշտոցի, այլ Գրիգորի անունը: Հակառակ նրան, որ Գրիգորի կերպարը ստեղծուել է ինչ-որ չափով Մաշտոցի օրինակով, տարիների ընթացքում առաջնութիւնը հէնց նրան է անցնում, եւ Մաշտոցին սկսում են անուանել երկրորդ Լուսաւորիչ:

Մենք արդէն նշեցինք, որ Ղազար Փարպեցու պատկերացմամբ Ագաթանգեղոսի աշխատութիւնը կազմում է Հայոց պատմութեան առաջին գիրքը: Երկրորդը շարադրել է «Փոստոս⁴⁴ ոմն Բուզանդացի»՝ պատմելով «գիրս բազմափոփոխ աշխարհիս Հայոց, զբարեաց եւ զչարեաց, զվարս եւ զգործս զարանց սրբոց եւ զպղծոց, զժամանակի պատերազմաց եւ զխաղաղութեան»⁴⁵ [Ղազ. Փարպ., էջ 1. 9-12]: Եթէ Ագաթանգեղոսի գրիքը «անուանեալ կոչեն Գրիգորիսի», ապա Փաւստոսինը, ըստ Փարպեցու, կրել է «Հայոց պատմութիւն» վերտառութիւնը:

Աշխատութեան ընդհանուր վերնագիրը, որտեղ կարող էր եղած լինել հեղինակի անունը, մեզ չի հասել, սակայն առաջին մասի վերջում հետագայ խմբագրի ձեռքով մի նշում է արուած՝ «Կատարեցաւ երրորդ դարգ (մաս, դրուագ) Փաւստեայ Բիւզան-

դեայ մեծ ժամանակագրի, որ է ժամանակագիր Յունաց»: Գրչագրերում մականունը հանդէս է գալիս որպէս Բիւզանդ կամ Բուզանդ, այսինքն՝ կապուում է Կայսրութեան մայրաքաղաք Կոստանդնուպոլիսի հին անուան՝ Բիւզանդիոնի հետ: Բացի այդ, պահպանուել է մի ուշ յիշատակարան, որտեղ գտնում ենք Բուզանդարան պատմութիւնը կապակցութիւնը:

Ղազար Փարպեցին, որը եղել է Փաւստոսի ժամանակակիցը կամ կրտսեր ժամանակակիցը, ճանաչում է նրա անուան կապը Կոստանդնուպոլիսի հետ, միաժամանակ պնդում է, որ պատմիչը իսկական Բիւզանդացի չէ: Նա բաժանում է այն տեսակէտը, որ ճշգրտաբան Ագաթանգեղոսի համեմատութեամբ, Փաւստոսի խօսքերը յարմարք եւ դիպողք չեն, իսկ շարադրանքն՝ անպատշաճ: Հնարաւոր է արդեօք, որ նման մի գործ դուրս գայ ուսեալ Բիւզանդացու գրչի տակից: Չէ՞ որ Բիւզանդիոնի թէ՛ անցեալը, թէ՛ ներկան փառաւոր են, գիտութեան վտակները թագաւորական քաղաքից հոսում են զանազան ուղղութեամբ: Արդ, գիտուններով լցուած այդպիսի քաղաքում կարո՞ղ էր Փաւստոսը (եթէ նա իրօք գիտութեան տէր է) գրել այդպիսի մի անշնորհք «Պատմութիւն». երբեք: Մնում է ենթադրել, որ դա մէկ ուրիշի գործ է, հեղինակի ոճը գոեհիկ է, գրել է ինչ որ պատահել է: Ինչ խելքին եկել, այն էլ գրել է: Հնարաւոր է նաեւ, որ ինչ-որ անկար հեղինակ, վնաս հասցնելով իր ալլաբանութեամբ, սխալները ծածկել է Փաւստոսի անուամբ: Ահա այսպիսին է եղել Փարպեցու կարծիքը Փաւստոսի մասին [Ղազ. Փարպ., էջ 3-4]:

Ղազարի ճաշակը ձեւաւորուել է իր դարաշրջանում՝ դասական համարուող գրականութեան ընթերցմամբ: Դասական է եղել նրա ոճը՝ հարթ, սահուն: Ոչ միայն որպէս գրասէր, այլեւ որպէս գրող՝ նա չէր կարող ընդունել Փաւստոսին, որը շարադրում էր «յանդուգն եւ անհրահանգ բանիւ»: Եւ նրա մտքովն իսկ չէր անցնի, որ մեր օրերում հէնց շարադրութեան (լայն ի-

մաստով) եղանակի շնորհիւ Փաւստոսի «Պատմութիւնն» ընկալուում է որպէս անզուգական մի գործ: Փաւստոսն իր հոլթեամբ իրօք որ բիզանդացի չէ: Իր ոճով եւս նա հայ է՝ աւելի հայ, քան նրա ժամանակակից գրողներից որեւէ մէկը:

Երբ փորձում ես շօշափելի զուգահեռ գտնել դասական նոր գրականութեան մէջ, ապա յիշում ես առաջին հերթին Յովհաննէս Թումանեանի արձակը:

Մինչդեռ Բիզանդացի մականունն եւ «Երկրորդ Պատմութեան» ոճի հակասութիւնը իրօք որ աչքի է ընկնում, եւ ահա 1947 թ. յետմահու լոյս տեսած Ստեփանոս Մալխասեանցի ձեռքով կատարուած Փաւստոսի աշխարհաբար թարգմանութեան ճոխ առաջաբանում կարդում ենք. «Բուզանդ բառը ոչ թէ անձի յատուկ անունն է, այլ աշուղական կոչում, ինչպէս Հնուց ի վեր սովորութիւն է եղել, որ մեր աշուղները ընտրել են իրենց համար կոչումներ պարսկական եւ տաճկական բառերից (Սայաթ-Նովա, Սէյադ, Զիւանի եւ այլն). նոյնպէս վարուել է եւ անծանօթ Փաւստոս հեղինակը, պարսկական բուզանդ բառը ընտրելով իբրեւ աշուղական կոչում: Սրանով պարզուում է եւ բուզանդարան բառի նշանակութիւնը, իբրեւ բուզանդների ժողովածոյ, նմանութեամբ երգարան, տաղարան եւ այլն բառերի եւ նշանակում է ժողովածոյ գրոյցների, մեկնութեան կամ ազատ թարգմանութեան բանաստեղծութեան...»⁴⁶: Գիտնականի դիտողութիւնները վերաբերում են մասնաւորապէս Բուզանդարան պատմութիւնը խորագրին, որը Վենետիկի հրատարակութիւններում ծառայում է որպէս իւրաքանչիւր չորս դպրութեան վերնագիր:

Բոլորովին նոր մօտեցում էր դա, կարելի է միայն գարմանալ, որ Հայաստանի գիտական մամուլում այն որեւէ արձագանք չգտաւ: Եթէ չեմ սխալւում, միայն «Հայկական Հանրագիտարանն» է գրանցել Ստ. Մալխասեանցի կարծիքը անանուն մի յօդուածում⁴⁷:

Բայց ահա 1986 թ. Ա. Փերիխանեանը ելոյթ է ունենում Հայ միջնադարեան գրականութեանը նուիրուած միջազգային գիտաժողովում (Երեւան, սեպտեմբերի 15-19, 1986) եւ նոյն թուականին հրապարակում ամբողջութեամբ իր տեսակետը՝ խնդրոյ առարկայ հարցի վերաբերեալ⁴⁸: Կրկնելով Ստ. Մալխասեանցի թեզը Փաւստոսի մականունն մասին եւ վերականգնելով բուզանդ բառի պարթեւական նախատիպը՝ որպէս *bōzand՝ նա գալիս է այն եզրակացութեան, որ այդ բառը նշանակում է երգիչ եւ դրանով Փաւստոսի աշխատութեան սկզբնական խորագիրը, որ է՝ «Բուզանդարան պատմութիւնը», դառնում է յստակ բուզանդարան կարող է նշանակել միայն պատումներ/երգերի ժողովածոյ, վէպ, եւ ամբողջը թարգմանուում է «Վիպական պատմութիւններ»: Այդ մօտեցումն իսկոյն գտաւ ընդհանուր ճանաչում (Ն. Գարսոյեան, Ռ. Թոմսոն, Ժ.-Պ. Մահէ, Շ. Ռընու, կարծես նաեւ՝ Լ. Ավդոյեան): Տուրք է տուել այդ գայթակղիչ տեսակետին նաեւ տողերիս հեղինակը սոյն գրքի առաջին հրատարակութիւնում:

Տեսակետի տարածմանը նպաստել է, անշուշտ, այն Հանգամանքը, որ Փաւստոսի ոճը ունի բացայայտ վիպական երանգ (թէպէտ եւ միջնադարեան մատենագիտական ցանկերում նա իր տեղն է գտել միւս պատմիչների կողքին. նրա երկը մեզ է հասել պատմական աշխատութիւնների ձեռագիր ժողովածոների կազմում, իսկ վերելում վկայակոչուած յիշատակարանում նա դիտուում է իբրեւ ժամանակագիր մեծ պատմագիր): Սակայն քննական մօտեցումը ստիպում է, այնուամենայնիւ, վերադառնալ հին տեսակետին: Եթէ ընդունենք Ստ. Մալխասեանցի եւ Ա. Փերիխանեանի տեսութիւնը, ապա Ղազար Փարպեցին, աչքի առաջ ունենալով Երկրորդ պատմութեան տիտղոսաթերթը, կա՛մ չի հասկացել բուզանդ բառի նշանակութիւնը, կա՛մ դիտաւորեալ աղաւաղել է այն: Թէ՛ առաջին եւ թէ՛ երկրորդ վարկածները

թևում են անհեթեթ: Յունահուստիական Փալատոս անունը հայերի համար միշտ եղել է օտար եւ բնական եղանակով այն առնչում է աւելի շատ ինչ-որ բիւզանդացու, քան հայ աշուղի հետ:

Խնդրոյ առարկայ մականուան յիշատակումը գրական այլ երկերում, ինչպէս նաեւ ձեռագրական աւանդոյթը, միանգամայն բաւարար եղանակով լուսաբանում են Բուզանդ ձեւի առաջացումը, Բիւզանդացի>Բուզանդ անցումը: Մի կողմից Բիւզանդացի կառուցուածքը կորցնում է վերջաւորութիւնը, եւ ահա Թովմայ Արծրունին, Ասողիկը եւ Կիրակոս Գանձակեցին յիշում են պատմիչին Բիւզանդ անունով: Զուգահեռաբար փոփոխութիւն է ապրում իւ երկրորդը՝ Սամուէլ Անեցին եւ Զաքարիայ Սարկաւազը ճանաչում են պատմիչին արդէն որպէս Բուզանդ: Երկրորդը այդպիսի փոփոխութիւնը բնականոն է հայերէնում: Է դարի 30-40 թթ. արձանագրութեան մէջ հանդիպում ենք ԱՆՆՈՅ բառին. Պ. Մուրադեանը համոզիչ կերպով ցոյց է տալիս, որ դա արուն (կամ արին) ձեւի յոգնակի սեռականն է՝ նախնական ձեւը լինելով արուն⁴⁹: Բարբառներում հիւսել բայը դառնում է հուսել, դիւրիւն>դուրիւն, իրեանք>ուրանք, ձիւթել>ձութել, ձիւն>ձուն, ալիւր>ալուր եւ այլն⁵⁰: Օգտուելով առիթից՝ յիշենք, որ Նար-Դոսի հերոսներից մէկը Աիւթ բառը արտասանում է Աութ, իսկ Երեւանի Բուժանիա քաղաքամասի անունը ծագում է Բիւթանիա (Գործ. ԺԶ 7) տեղանունից: Նոյն այդ միտումը դարձրել է Բիւզանդացի մականունը Բուզանդացի, ինչպէս այն յիշատակում է Ղազար Փարպեցու ամբողջական հնագոյն ձեռագրում:

Նոր վարկածի հեղինակները ազդուել էին անշուշտ Բուզանդարան պատմութիւնը կապակցութիւնից, որը Վենետիկի հրատարակութիւններում ծառայում է որպէս իւրաքանչիւր դպրութեան վերնագիր: Բայց ձեռագրերից որեւէ մէկը այդպիսի վերնագիր չունի: Դրա միակ աղբիւրը վերելում վկայակոչուած յիշատակա-

րանն է, որը կազմել էր մատեանի խմբագիրը՝ որոշելով Փալատոսի չորս դպրութիւնների տեղը միւս երկերի. շարքում: Ինչ խօսք, բուզանդարան կառուցուածքը տպաւորիչ է, հայերէնում նա ունի այնպիսի զուգահեռներ, ինչպիսիք են տաղարան կամ սաղմոսարան բառերը, սակայն այն առաջացել է շնորհիւ միայն խմբագրի բառաստեղծական տաղանդի⁵¹:

Այսպիսով, վերիմաստաւորման միակ կռուանը վերանում է, աշխատութեան հեղինակը ներկայանում է ընթերցողին որպէս բիւզանդացի (կոստանդնուպոլսեցի): Բայց ի՞նչն է ստիպել այդքան հայ, այդքան հայալեզու պատմիչին ընդունել իր էութեանը հակասող անուն, ո՞վ է եղել նա իրապէս՝ այսօրուայ վիճակով հարցը մնում է անպատասխան:

Անցնենք, սակայն, Փալատոս Բուզանդի երկի բովանդակութեանը⁵²: Փալատոսը սկսել է այնտեղից, որտեղ կանգ է առել Ագաթանգեղոսը՝ Տրդատի յաջորդ Խոսրով Կոտակ թագաւորի տարիներէից: Նրա պատմութեան վերջին դրուագն է՝ Հայաստանի բաժանումը երկու մասի՝ Պարսկաստանի եւ Կայսրութեան միջեւ: Որպէս քաղաքական պատմութեան սկզբնաղբիւր՝ Փալատոսի աշխատութիւնը այնքան էլ վստահելի չէ. հեղինակը յաճախ շփոթում է դէպքերը, ժամանակագրական տուեալները իրապատում չեն: Սակայն Դ դարի համար Փալատոս Բուզանդը մնում է գլխաւոր սկզբնաղբիւր. հետագայ պատմիչները կրկնել կամ վերաշարադրել են նրան: Ժամանակակից գիտութեանը յաջողուել է շատ դէպքերում պարզութիւն մտցնել հեղինակի շարադրանքի մէջ: Սակայն եթէ պատմական անցքերը միշտ չէ, որ ճիշտ են ներկայացուած, ապա հայ հասարակութեան պատկերն ուսումնասիրելու համար Փալատոսը մի գանձարան է: Արշակունեաց շրջանի պետական, հասարակական կառուցուածքն այստեղ արտացոլուել է մանրամասնութեամբ: Այդ առումով Փալատոսի

երկը մեր ամէնից կարեւոր սկզբնաղբերներէից մէկն է, յիշեալ իմաստով նրան դնում ենք Մովսէս Խորենացու կողքին:

Աննման են Փաւստոսի կերտած գրական դիմանկարները: Իհարկէ, այստեղ եւս շատ բան ընդհանրացուած է. կենսագրական նիւթեր տրամադրելով՝ հեղինակը ձգտում է, որպէսզի ստացուած նկարագիրը լինի նախ եւ առաջ ուսանելի: Բայց նա իր հերոսներին ներկայացնում է ոչ թէ իբրեւ խցում փակուած, իրական կեանքից կտրուած գիտնական, այլ որպէս ժողովրդական փորձը մարմնաւորող մէկը: Փաւստոսի աղբերներն, ըստ երեւոյթին, բանաւոր են, արձանագրում է այն, ինչ որ Ե դարը պահել էր Դ դարի անցքերի մասին: Այդ պատճառով պէտք է թերագնահատել նրա ճշտութիւնը: Հնում մարդկանց յիշողութիւնը ի վիճակի է եղել պահելու անցեալի չնչին մանրամասնութիւններ՝ հետեւելով բացարձակապէս բանաւոր աւանդութեանը: Աւելացնենք նաեւ, որ այդ աւանդոյթը Փաւստոս Բուզանդին հասել էր վիպական շարքի ձեւով. պատմիչը գործ է ունեցել գեղարուեստական վերամշակուած նիւթի հետ, որը եւ շատ դէպքերում առանց փոփոխութեան գետեղել է իր շարադրանքի մէջ:

Հետեւելով գերազանցապէս Բուզանդի տուեալներին՝ նախարարական Հայաստանում տիրող վարք ու բարքի ընդհանուր պատկերը ներկայացրել է Մանուկ Աբեղեանը⁵³: Փաւստոս գրող-պատմիչի մասին յստակ պատկերացում կազմելու համար մենք կը բաւարարուենք երեք օրինակով:

Արշակ Բ թագաւորի հաւատարմութիւնը փորձելու համար Պարսից Շապուհ թագաւորը հրաման է տալիս, որպէսզի խորանում (սրահում) յատակի կէսը ծածկեն Հայաստանից բերուած հողով եւ հայաստանեան ջուր ցանեն, իսկ միւս կէսը մնայ ինչպէս որ է, այսինքն՝ լինի պարսկական գետնի մաս: Բռնելով

Արշակի ձեռքից՝ Շապուհը զբօսնում է խորանում՝ հարցնելով իր հիւրին.

«Ընդէր եղեր իմ թշնամի, Արշակ արքայ Հայոց,
Ջի ես որպէս գորդի սիրեցի զքեզ,
Եւ կամեցայ տալ քեզ գողուտը իմ ի կնութիւն
Եւ որդի ինձ առնել զքեզ.
Իսկ դու խոտացար ընդ իս,
Եւ քովք կամաւք՝ առանց իմոց կամաց՝
Եղեր ընդ իս թշնամի.
Եւ այս յի երեսուն ամ է,
Ջի պատերազմեցար ընդ իս»:

Արշակը խոստովանում է, որ, իրօք, ճանաչում չգտնելով իր սիրանքների համար, որոնք ցուցաբերել է Շապուհի թշնամիների նկատմամբ, լքել է Պարսից թագաւորին: Իսկ այժմ զղջում է.

«Եւ աւասիկ ծառայ քո ձեռս քո կամ,
Ջիմչ եւ պէտք է քեզ
Արա զիս, զիմչ եւ կամ իցէ.
Սպան զիս,
Ջի ես, ծառայ քո՝ առ քեզ
Կարի յանցատր եմ, մահապարտ եմ»:

Բայց ահա Արշակը հայկական հողին է կանգնում եւ իսկոյն ըմբոստանում.

«Ի բաց կաց յինէն¹⁵,
Ծառայ չարագործ տիրացեալ տերանցն քոց.
Այլ ոչ թողից¹⁶ զքեզ եւ որդոց քոց
Զվրէժ նախնեաց իմոց

¹⁵ Թիմէն - ես դերանուան բացառական յոլովն է՝ ինձնից:

¹⁶ Թողնել բայի բուն ապառնի, եզակի, առաջին դէմքն է:

Եւ զմահն Արտեւանայ⁵⁴ արքայի,
 Զի այժմիկ ձեր ծառայից
 Զմեր տերանց ձերոց զբարձ կալեալ է.
 Բայց ոչ թողից,
 Եթէ ոչ տեղիդ մեր առ մեզ եկեացէ»:

Տարօրինակ պտոյտը տեւում է մի ամբողջ օր: Ամէն անգամ, երբ Արշակը Պարսից հողի վրայ է լինում, խոնարհւում է Շապուհի առաջ, զղջում արածի համար: Բաւական է, սակայն, որ ոտքը Հայկական հողին կալչի՝ «եւ խստագոյն քան զառաջինսն բարբառէր»:

Շապուհը երեկոյեան խնջոյքի է կանչում Արշակին. «Օրէնք էին, - ասում է պատմիչը, - զի թագաւորն Պարսից եւ թագաւորն Հայոց ի միում տախտի բազմէին, ի միում գահոյս»: Իսկ այս անգամ Արշակին տրամադրել էին վերջին տեղը: Բայց այդ տեղի տակ Հայաստանից բերուած հողն է եղել, եւ Արշակը համարձակ խօսքեր է նետում Շապուհին.

«Ի՛մ այդ տեղի, ուր դո՛ւդ ես բազմեալ.
 Թո՛ւն կաց այդի, թող ես այդ բազմեցայց,
 Զի տեղի ազգի մերոյ՝ այդ լեալ է.
 Ապա եթէ յաշխարհն իմ հասից,
 Մեծամեծ վրէ՛ծս խնդրեցից¹⁷ ի քե՛զ»:

Այդ խօսքերից յետոյ Արշակին շղթայակապ են անում եւ մինչեւ կեանքի վերջը պահում Անյուշ կոչեցեալ բերդում [Փաւսիլ, Դ, 54]:

Հողը մարդուն ուժ է հաղորդում՝ այդ միտքն արտայայտուած է եղել արդէն Անթեյի՝ հին յունական առասպելում: Այդ կուահելով՝ մենամարտի ժամանակ Հերակլէսը պոկում է նրան

գետնից եւ միայն այդ եղանակով է կարողանում յաղթել: Փաւստոսի մօտ այդ գաղափարը իւրայատուկ ձեւով է մեկնաբանում՝ ուժ է ապահովում ոչ թէ հողն առհասարակ, այլ մայրենի հողն ու ջուրը: Վիպական շարքի այդ հոյակապ կտորը Փաւստոս Բուզանդի գրչի տակից դուրս է գալիս իրբեւ մեր հին գրականութեան թանկարժէք գոհարներից մէկը:

Արշակը ունեցել է Դրաստամատ անունով մի հաւատարիմ ուտիկան: Անգեղ տուն գաւառում նա հսկում էր թագաւորական բերդերը (բերդերից մէկում պահում էին Արշակունիների գանձերը): Քուշանների դէմ վարած պատերազմում այդ Դրաստամատ ներքինին Շապուհին փրկում է մահից եւ փոխարէնը Արշակին Անյուշ բերդում այցելելու թոյլտուութիւն խնդրում: «Խիստ է պահանջը, - պատասխանում է Շապուհը: - Պարսից թագաւորութեան հաստատման օրուանից, երբ բերդը Անյուշ է կոչուել, մէկը չի եղել, որ համարձակուի յիշեցնել թագաւորին՝ բերդում կալանքի տակ թագաւոր է գտնուում, որ այնտեղ է գտնուում առհասարակ որեւէ մէկը: Խնդայով կեանքի հետ՝ դու խախտեցիր օրէնքը, սակայն մեծ վաստակների համար թող շնորհուի քեզ այդ արտօնութիւնը»:

Փուշտիպանը Դրաստամատին ուղեկցում է դէպի Անյուշ բերդը: Մօտենալով իր բուն տիրոջը՝ Դրաստամատը «արձակեաց զԱրշակ ի կապանացն երկաթեաց ի ձեռակապացն եւ յոտիցն երկաթոց եւ յանրոց¹⁸ պարանոցէն շղթայիցն սարեացն¹⁹. եւ լուաց զգլուխ նորա, եւ լոգացոյց զանձն նորա: Եւ ագոյց նմա պատմուածան ազնիւ. եւ էարկ նմա բազմականս, եւ բազմեցոյց զնա. եւ եդ առաջին նորա ընթրիս ըստ օրինաց թագաւորաց, եւ եդ առաջի նորա գինի որպէս օրէն էր թագաւորացն.

¹⁸ Անոր - պարանոցին հազցուած օղակ

¹⁹ Սարիք - կապ, շղթայ

¹⁷ Խնդրել (որոնել, ջանալ) բայի բուն ապառնի, եզակի, առաջին դեմքն է:

սթափեաց զնա, եւ մխիթարեաց, եւ ուրախ առնէր զնա գուսասօք:

Եւ ի ժամ աղանդեր մատուցանելոյ՝ եղին առաջի նորա միրգ, ինձոր եւ վարունգ եւ ամիճ, զի կերիցէ, եւ եղին դանակ նմա, որպէս զի Հատցէ եւ կերիցէ զիարդ եւ կամեսցի: Եւ Դրաստամատ մեծապէս ուրախ առնէր զնա. կայր յոտն եւ մխիթարէր զնա»: Գինին բռնեց Արշակի զլուսը, նա վայ տուեց իր դժբախտ վիճակին: «Եւ զայս ասացեալ, զդանակն՝ զոր ունէր ի ձեռինն, որով զմիրգն կամ զամիճն կամէր ուտել, եհար ի սրտի իւրում. եւ անդէն սատակեցաւ, եւ մեռաւ անդէն ի նմին ժամուն մինչ դեռ կայր ի բազմականին»: Տեսնելով այդ՝ Դրաստամատը ցատկում է տեղից, Հանում Արշակի մարմնից նոյն դանակը, եւ ինքն իրեն մահաբեր Հարուած Հասցնում [Փաւ. Բուգ., Ե, 7]⁵⁵:

Փաւստոսը գովերգում է ծառայի Հաւատարմութիւնն իր տիրոջ նկատմամբ: Իսկ ժամանակակից ընթերցողն այդ էջերն ընկալում է որպէս Համամարդկային արժէքների փառաբանութիւն:

Ողբերգականը մեծ տեղ է գրաւում Բուզանդի շարադրութեան մէջ, բայց նոյն գրքում նա Հանդէս է գալիս երբեմն իբրեւ երգիծաբան: Երգիծանքի առարկան Փառննի որդի Յոհան եպիսկոպոսն է: Նրան նուիրուած էջերը եզակի են վաղ միջնադարեան Հայ գրականութեան մէջ:

Մէկ անգամ այդ Յոհանը անցնում է ինչ-որ մէկի խաղողի այգու մօտով: Այգետէրը ձայն է տալիս նրան. «Տէ՛ր եպիսկոպոս, օրհնի՛ր մեզ եւ մեր այգիները»: Եպիսկոպոսը պատասխանում է՝ թող փուշ եւ տատասկ բուսնի⁵⁶, եւ անմիջապէս պատասխան ստանում. «Մեզ իզուր անիծելու դիմաց թող քո մարմնի վրայ փուշ եւ տատասկ բուսնի»: Այգետիրոջ անէծքը

տեղ է Հասնում. եպիսկոպոսի մարմինը ծածկուում է փշերով: Յոհանը երկար տառապելուց յետոյ իր մօտ է կանչում այգեպանին, աղաչում նրան, որպէսզի աղօթքով փրկի նրան՝ եպիսկոպոսին: Մարդը Հակառակում է. «Ո՞վ եմ ես, որպէսզի կարողանամ մէկին օրհնել կամ անիծել, այն էլ՝ եպիսկոպոսին»: Յոհանը բռնադատում է նրան (այլեւս ոչ թէ աղաչում, այլ ստիպում)²⁰, եւ այգեպանը սկսում է իր աղօթքը. «Տէ՛ր Աստուած, Դու գիտես՝ զի ես այր մեղաւոր եմ եւ անարժան, ոչ գիտեմ աղմուկս՝ յորում ըմբռնեցայս. Դու փրկեա՛ զիս յայս ի Հարէս, զի ասեն՝ թէ զայր եպիսկոպոս դու անիծեր, եւ ասեն՝ քո բանիւ եղեւ: Զի լաւ էր ինձ մահ. քանզի չգիտեմ զայս՝ զոր ինչ զինէն ասեն»:

Այդ խօսքերով էր, որ եպիսկոպոսը բժշկուեց. մարմնի վրայ եղած փուշերը վայր ընկան՝ «եւ էր իբրեւ զփուշ խոտոց» [Փաւ. Բուգ., Զ, 9]:

Վերջապէս մէկ ուրիշ Հատուած, որտեղ տրւում է Հարաճճի եպիսկոպոսի ողջ բնութագիրը: Կեղծաւոր էր Յոհանը, ասում է Փաւստոսը, ուստի մարդկանց երեւում էր քուրճն ուսերին, առանց ոտնամանի՝ ամառ-ձմեռ տարբեր ձեւի պարանով էր փաթաթում ոտքերը: Ագահութեամբ տարուած՝ վախ չունէր Աստծոյ առաջ: Մէկ անգամ ձիով անցնելիս մի ուրիշ ձիաւոր է Հանդիպում՝ «օտար պատանի մի աշխարհական Հեծեալ ի ձի, սուսեր ընդ մէջ, թուր զգօտւոյ, աղեղնակապարճ զմիջովն. լուացեալ զհերս իւր, օծեալ մերձեալ²¹, վարսակալ եղեալ ի զլուխ իւր, եւ օղիկ²² արկեալ զուսովք իւր»:

20 Բռնադատել բայը իսկույն կեանք է տալիս կերպարին:

21 Մերձեալ - մազերը մօտ բերուած (սաւորուած):

22 Օղիկ - ոշխարի կամ գառի մորթուց մուշտակ:

Հեծեալի ձին է, որ գրաւում է եպիսկոպոսի ուշադրութիւնը: Երբ մարդը մօտենում է նրան, Յոհաննը բռնում է ձիու երասանակից եւ ասում.

«Էջ դու վաղվաղակի ի ձիոյ այտի, զի բանք են ինձ ընդ քեզ»:

Իսկ մարդը պատասխանում է.

«Ո՛չ դու զիս գիտես, եւ ո՛չ ես զքեզ, զի՞նչ այն բանք իցեն, զոր դու ընդ իս իցես խօսելոյ»:

Այդ մարդը, ենթադրում է Փաւստոսը, հաւանաբար աւագակութիւնից էր վերադառնում, հանդիպման պահին հարբած էր եւ փորձեց ընդդիմանալ: Բայց Յոհաննը ստիպեց նրան իջնել ձիուց, ճանապարհից մի կողմ տարաւ եւ յայտարարեց, որ երէց է ձեռնադրում նրան: Մարդն առարկեց, թէ՛ «այր աւագակ, սպանող չարագործ եւ խառնագնաց լեալ ի մանկութենէ իմմէ, ես ոչ ինչ եմ արժանի այդպիսի իրաց. եւ այժմ դեռ ի նմին գործ կամ»:

Զայրացած մարդը փորձեց յամառել, տաքացաւ նաեւ եպիսկոպոսը, ծնկաչոք արեց նրան, երէց ձեռնադրեց, ապա ստիպեց, որպէսզի նա հանի վերարկուն եւ գցեց նրա ուսին իր փաւսը. հրամայեց որպէսզի գնայ իր գիւղը եւ այնտեղ երէցութիւն անի. եւ չգիտէր էլ, թէ որ գիւղից է ձեռնադրուածը: Իսկ ձին, ասաց, ինձ թող լինի վարձատրութիւն: Բռնի կերպով առաւ ձին ու մարդուն ճամփայ գցեց: «Եւ այս ամենայն իրքս վասն ձիոյն եղեն»,— եզրակացնում է Հեղինակը:

Դրանով պատմութիւնը չի վերջանում: Փիլոնը հագած նորելուկ երէցը տուն է վերադառնում, դիմում կնոջն ու ընտանիքին՝ եկէ՛ք աղօթենք: Նրանք զարմացած հարցնում են, արդեօք նա խելքը չի՞ կորցրել («Մոլիս դու, դե՞ւ ուրեմն հարաւ ի քեզ»): Մարդը պնդում է՝ եկէ՛ք աղօթենք, որովհետեւ ես երէց

եմ դարձել: Սրանք մէկ ամաչում են, մէկ ծիծաղում, վերջապէս համաձայնում, երբ կինը յանկարծ յիշում է, որ ամուսինը անգամ մկրտուած չէ: Մարդը պատասխանում է՝ այնքան ապշեցրեց, որ մոռացայ ասել նրան դրա մասին. ինձ երէց ձեռնադրեց, ձին իր սանձով ու թամբով առաւ ու գնաց: Ընտանիքը համոզում է, որպէսզի Հեթանոս մնացած երէցը գնայ եպիսկոպոսի մօտ, նա ենթարկում է տնեցիների կամքին եւ ներկայանում եպիսկոպոսին՝ ասելով. «Ես մկրտեալ չէի, զի՞ արարեք զիս երէց»: Յոհաննը իրեն չի կորցնում՝ «Սպիրոյ միով ջո՛ւր բերէք»: Զուրը լցնում է գլխին, ասում. «Ե՛րթ, մկրտեցի զքեզ» եւ անմիջապէս գլխառադ անում [Փաւ. Բուզ., Զ, 8]:

Հնում գեղեցիկ գեղարուեստական գրականութեան գաղափարը բացակայել է: Փաւստոսի երկը դիտուել է պատմութիւն, Փաւստոսը՝ պատմաբան (յիշենք, որ Ղազար Փարպեցու համար նա Հայոց Երկրորդ պատմութեան Հեղինակն է): Ամենեւին չթերագնահատելով Բուզանդի երկի որպէս պատմական սկզբնաղբիւրի արժանիքները՝ պիտի նկատել, որ նա հանդէս է գալիս նաեւ որպէս մեծ արձակագիր՝ բառիս ժամանակակից իմաստով: Պէտք է խոստովանել, որ այդ առումով գրականագիտութիւնը դեռ շատ անելիք ունի: Մաշտոցի դարաշրջանում ապրող Հայերի գեղագիտական աշխարհը ձեւաւորուել ու հարստացել է նաեւ Փաւստոս Բուզանդի «Պատմութեան» շնորհիւ:

Եթէ Հայոց պատմութեան առաջին գիրքը գրել է Ագաթանգեղոսը, երկրորդը՝ Փաւստոս Բուզանդը, ապա երրորդ պատմութեան Հեղինակը Ղազար Փարպեցին է⁵⁷:

Ղազար Փարպեցու «Պատմութիւնը» բաղկացած է առաջաբանից եւ 3 մեծ դրուագներից: Աշխատութիւնը գրել է Հայոց սպարապետ եւ մարզպան Վահան Մամիկոնեանի յանձնարարութեամբ: Հեղինակին վերաբերող կենսագրական տուեալները «Պատմութեան» մէջ աւելի քան սակաւ են, մինչդեռ Վահանին

ուղղուած Թղթում Ղազարը նկարագրում է իր ամբողջ կեանքը: Ամենայն հաւանականութեամբ՝ Թուղթը նախորդում է «Պատմութեանը» (թուարկելով իր արժանիքները՝ Ղազարն այդ աշխատութեան մասին ոչինչ չի ասում): Ղազար Փարպեցու կենսական ուղու մասին կը խօսենք ստորեւ, այժմ նշենք, որ «Պատմութեան» հեղինակը արտասահմանում ստացած է եղել լաւ պատրաստութիւն, նա յունական (հոռոմ) գիտութեան սիրահար է, ուստի եւ գրում է իր կեանքը գրքերի հետ անցկացրած մարդու ոճով: Շարագրանքն ընդհանուր առմամբ սահուն է, փաստերը նկարագրում է իրական հերթականութեամբ:

Առաջին դրուագը սկսում է 387 թ. բաժանումից, երբ Արշակ Գ թագաւորը լքեց Այրարատ գաւառը եւ անցաւ Յունաց կողմերը: Հայերի խնդրանքով պարսկական մասում նշանակուեց Խոսրով Գ Արշակունին, որը նախարարների բանսարկութեան հետեւանքով շուտով կորցրեց իր գահը: Իշխանութիւնն անցաւ նրա եղբայր Վռամշապուհին, որից յետոյ կրկին գահ բարձրացաւ Խոսրովը, իսկ վերջինիս մահից յետոյ արքայից արքայ Յազկերտ Ա Հայոց երկրի թագաւոր կարգեց իր Շապուհ որդուն: Շապուհից յետոյ իշխանութիւնն անցաւ Վռամշապուհի որդի Արտաշէսին:

Ղազարը տալիս է Արարատեան դաշտավայրի գունեղ նկարագիրը, իսկ երբ անցնում է Վռամշապուհի թագաւորութեանը, շարագրում գրքի գիւտի պատմութիւնը: Այս մասին Ղազարի սկզբնաղբիւրը նոյն Կորիւնն է, սակայն իր նախորդի համեմատութեամբ նա սակաւախօս է, շատ բան բաց է թողնում (ոչինչ չի ասում, օրինակ, Վիրքում եւ Աղուանքում, ինչպէս նաեւ Յունաց կողմերում Մաշտոցի ծաւալած գործունէութեան մասին): Եթէ Կորիւնի գլխաւոր հերոսը Մաշտոցն է (չնայած նա մի քանի անգամ խօսում է նրա ու Սահակ Պարթեւի մասին իբրեւ հաւասարների), ապա Ղազարը կենտրոնանում է կաթողիկոսի

վրայ: Հիմք չկայ կասկածելու երկուսի ճշտութեան վրայ էլ, պարզապէս նրանք այդ շրջանին մօտենում են տարբեր տեսանկիւնից, ուստի եւ տարբեր ձեւով են դնում շեշտերը:

Երբ նախարարները սկսեցին իրենց թշնամութիւնը Արտաշէս թագաւորի դէմ, Սահակը երկար յանդիմանեց նրանց, սակայն ապարդիւն. նրանց սաղրանքով թագաւորը զրկուեց իր գահից: Այդ ժամանակ Սահակն իր հերթին հրաժարուեց հովուապետութիւնից: Մէկը միւսի յետեւից Հայոց եկեղեցու գլուխ անցան մի քանի եկուոր ասորիներ: Նախարարները զղջացին, աղերսանքով խնդրեցին կաթողիկոսին վերադառնալ իր տեղը, բայց նա մերժեց եւ պատմեց նրանց իրեն երեւացած տեսիլը (այդ մասը հարկաւ ներշնչած է Ագաթանգեղոսի «Պատմութեան» Գրիգոր Լուսաւորչի տեսիլով): Տեսիլից պարզւում է, որ վաղուց ի վեր գուշակուած է եղել, որ Արշակունիները կը զրկուեն աշխարհիկ իշխանութիւնից, իսկ Գրիգոր Լուսաւորչի ժառանգները (վերջինը՝ հէնց ինքը Սահակ Պարթեւն է)՝ հովուապետութիւնից: Բայց կը գայ ժամանակ, երբ «դարձեալ յառնէ թագաւոր յազգէդ Արշակունեաց, եւ նորոգի աթոռ հայրապետութեան ի շառաւեղէ սրբոյն Գրիգորի» [Ղազ. Փարպ., էջ 34. 30-32]⁵⁸: Այնուհետեւ հեղինակը պատմում է Սահակի, ապա Մաշտոցի մահուան մասին եւ դրանով աւարտում առաջին դրուագը:

Երկրորդ դրուագը ամբողջութեամբ նուիրուած է Վարդանանց պատերազմին. Եղիշէի համեմատութեամբ տարբերութիւնները մեծ չեն (դրանց վրայ կանգ ենք առել Բ եւ Գ գլուխներում), սակայն մի հարցում Փարպեցին իր՝ պատմագէտի տեղը գիջում է պատմավէպի հեղինակին:

Սիւնիքի հզօր իշխան Վասակի դուստրը ամուսնացած էր մէկ այլ սիւնեցու՝ Վարազվաղան սեպուհի հետ: Ասում էին, որ ամուսնիններն ատում էին միմեանց: Աներն էլ իր հերթին ատում էր փեսային եւ ձգտում վրէժ լուծել նրանից: Վարազվա-

ղանը փախչում է Յազկերտ արքայի չարահնար եւ դժնամիտ Հազարապետ Միհրնբրսեհի մօտ, վերջինիս ազդեցութեան տակ ուրանում հաւատը՝ երկրպագում արեգակին եւ լուսնին: Հազարապետը մոգութիւն չընդունող երկրների մասին զգուշացնում է աստուածների կամքով նրանք կորչելու են յաւիտեան: Վարազվաղանը կարող էր հերքել Միհրնբրսեհի ասածը, յայտնում է պատմիչը, բայց նա այլ կերպ է դատում: «Եթէ հայերը ուրանան, ապա նա՝ Վարազվաղանը, կ'արժանանայ արիների կողմից մեծ պարգեւների եւ պատիւների: Բայց եթէ հրաժարուեն ու դիմադրեն՝ կը կործանուեն, իսկ նրանց հետ միասին իր վերջը կը գտնի թերեւս նաեւ Վարազվաղանի թշնամին, այսինքն՝ Վասակը: Թէպէտ դրանից ես նիւթական ոչ մի օգուտ չեմ քաղի, մտածում է Վարազվաղանը, սակայն շատ իսկ է ինչ եւ բաւական լուրն եւ տես կորստեան թշնամոյ իմոյ քան զամենայն օգուտս եւ մեծութիւնս որ են յաշխարհի»:

Իմանալով Վարազվաղանի մտքերը եւ նրան օգնական ճանաչելով՝ Միհրնբրսեհը դիմում է Յազկերտին, որպէսզի նա ստիպի հայերին ընդունելու մոգութիւնը: Վարազվաղանի օրինակին կը հետեւեն միւսները եւս: Լսելով Միհրնբրսեհի պատմութիւնը՝ Յազկերտը ուղարկում է հայերին մոգութիւն ընդունելու իր հրովարտակը, որը եւ պատճառ է դառնում Վարդանանց պատերազմին: Ահա թէ ինչպէս Վարազվաղանը «եղեւ պատճառ կորստեան բազմաց եւ կոտորածի աշխարհիս Հայոց» [Ղազ. Փարպ., ԻԱ-ԻԲ]:

Բացառուած չէ, որ Վարազվաղանի ուրացութիւնը եւ փախուստը պարսիկների մօտ համապատասխանում է իրականութեանը: Ստացում է, սակայն, որ հէնց այդ քայլը եղաւ կրօնական հալածանքների եւ դրանց յաջորդող հայերի ապստամբութեան պատճառը: Վիպական տարրը այստեղ յաղթում է պատմականութեանը: Ղազարը բախումը կապում է միայն

մարդկային յարաբերութիւնների, անձնական ողբերգութեան հետ, չնայած եւ այն բարդացնում է ուրացութեան հանգամանքներով: Վարդանանց պատերազմի պատճառները շարադրելիս Եղիշէն աւելի խորաթափանց է գտնում, քան Ղազարը (տե՛ս Եղ. Գ):

Ղազար Փարպեցու երրորդ դրուագը բովանդակում է Վահան Մամիկոնեանի ապստամբութեան պատմութիւնը: Այդ անցքերի համար դա ոչ միայն գլխաւոր, այլեւ փաստօրէն միակ սկզբնաղբիւրն է, որին հետեւելով եւ՝ սոյն գրքի Գ գլխում շարադրուած են ապստամբութեան հանգամանքները:

Ղազար Փարպեցին եղել է Ե դարի վերջին պատմիչը, նրա ստեղծագործութեամբ աւարտում է պատմագրութեան այդ հոյակապ շրջանը: Մեծ է մեր առաջին պատմիչների գրական ներդրումը: Պատկանելով ընդհանուր հոսանքին՝ նրանք դրսեւորել են միաժամանակ վառ արտայայտուած առանձնայատկութիւններ, ստեղծել շարադրանքի ուրոյն ոճ: Նրանց անհատականութիւնը աչքի է ընկնում առաջին իսկ հայեացքից: Մեծութիւններ են նրանք, որոնք հայ պատմագրութեանը ապահովեցին համբաւ եւ ճանաչում:

Սակայն վերոյիշեալ պատմիչներից եւ ոչ մէկը չէր հասել Մովսէս Խորենացու բարձունքներին: Տաղանդների կաճառում Մովսէս Խորենացին միակ իսկական հանճարն է: Եթէ միւսները գրի էին առել Հայոց պատմութեան առանձին (թէեւ խոշոր) դրուագներ, ապա Խորենացին ամբողջացրել էր պատմութիւնը բիրլիսկաւն շրջանից մինչեւ Ե դարի կէսերը: Այդ աշխատութեան շնորհիւ Պատմահայր տիտղոսը²³ ընդմիշտ ձուլուել է Մովսէս Խորենացու անուան հետ⁵⁹:

23 Չփոթեմք Քերդողահայր տիտղոսի հետ:

Մտայղացումը եղել է վիթխարի, կատարումը՝ առաւել հոյակապ: Ազգային անցեալը եւ միաժամանակ պատմութեան ընթացքը որպէս այդպիսին բացուած էին ընթերցողին իրենց ողջ բարդութեամբ եւ բազմերանգութեամբ: Եւ ինչպիսի՜ գունեղ եղանակով էր այն ներկայացուած: Ինչպիսի նոր մտքեր եւ գաղափարներ էր հաղորդում հեղինակը այդ ընթացքի կապակցութեամբ: Միւսներն, ասես, միայն պատմել են, Մովսէս խորենացին՝ նաեւ փիլիսոփայել:

Խորենացու երկը հայ պատմագրութեան ամէնից բարդ գործն է եւ անցել է գիտական վերլուծութեան առաւել բարդ ուղի: ԺԹ դարի վերջերից խորենացու աշխատութեան քննութիւնը դարձաւ հայ բանասիրութեան կարեւորագոյն հարցը: Տարբեր երկրների գիտնականները սկսեցին որոնել Մովսէս խորենացու կողմից օգտագործուած սկզբնաղբիւրները, պարզուեց, որ այդպիսիների թիւը պէտք է հաշուել տասնեակներով: Յաջողուեց պարզաբանել այդ աղբիւրների օգտագործման եղանակը: Մի շարք դէպքերում Պատմահայրը ստիպուած է եղել դիմել ոչ թէ անմիջապէս նրան հետաքրքրող երկին, այլ բաւարարուել է միւսների մօտ եղած քաղուածքներով: Եւ, վերջապէս, յաջողուեց ցոյց տալ, որ խորենացին երբեք բառացի չի արտագրում իր աղբիւրը, այլ վերափոխում է այն՝ յարմարեցնելով իր նպատակին եւ շատ անգամ հեռանում սկզբնաղբիւրի բուն բովանդակութիւնից⁶⁰:

Գիտնականները միաժամանակ ուշադրութիւն դարձրին մի կարեւոր հանգամանքի վրայ. «Հայոց պատմութեան» մէջ արձանագրուած որոշ փաստեր անյարիր են Ե դարին⁶¹, Ե դարին չեն պատկանում նաեւ մեզ հասած բնագրում օգտագործուած մի քանի գրաւոր սկզբնաղբիւրներ⁶²: Եւ եկան այն եզրակացութեան, որ Պատմահայրը ապրել է ոչ թէ Ե դարում, այլ աւելի ուշ (ժամանակը հասցնում են մինչեւ Թ դար): Եւ

եթէ հեղինակը իրեն ներկայացնում է որպէս Մաշտոցի ու Սահակի աշակերտ, ցոյց տալիս, որ եղել է նրանց կրտսեր ժամանակակիցը, ապա նա այդ անում է իր աշխատութեանը առաւել կշիռ տալու նպատակով:

Այդ տեսակէտը լայն տարածում է գտել, ընդ որում դրա կայունացմանը նպաստել է եւս մի հանգամանք: Մինչեւ այժմ յայտնի չէ որեւէ գրական սկզբնաղբիւր, որը, պատկանելով Ե-Թ դարերին, յակնէ յանուանէ յիշատակէր «Հայոց պատմութեան» հեղինակ Մովսէս խորենացուն: Ժ դարից սկսած՝ նման յիշատակութիւնների թիւն աճում է, դառնում ընդհանուր տեղի:

Այդ տեսակէտն ամուր դիմադրութեան հանդիպեց: Յայտնի է, որ դարերի ընթացքում գրական կոթողները կարող են ենթարկուել փոփոխութեան, այս կամ այն չափով խմբագրուել: Խմբագրուել է նաեւ Մովսէս խորենացու աշխատութիւնը: Շատ դէպքերում, երբ քննադատները նշում են այս կամ այն սկզբնաղբիւրը, որը, նրանց կարծիքով, օգտագործուել է խորենացու կողմից, պաշտպանները յանգում են ճիշտ հակառակ եզրակացութեան՝ այդ գրաւոր երկերն են կախուած խորենացու բնագրից: Ընդհանուր եզրակացութիւնն այս է՝ Մովսէս խորենացին ճիշտ այն անձն է, որն իր «Հայոց պատմութեան» զանազան հատուածներում խօսում է առաջին դէմքով որպէս երկի հեղինակ²⁴:

²⁴ Պէտք է խոստովանել, որ հրապարակի վրայ չկայ որեւէ աշխատութիւն, որ այդ տեսակէտը ներկայացնում լինի պատշաճ ձեւով, այսինքն՝ եղած կարծիքների հանգամանակից քննութեամբ, հաշուի առնելով բոլոր փաստերը: Միայն այդպիսի բազմակողմանի եւ անաչառ վերլուծութիւնը կարող է բերել համոզիչ վերջնական արդիւնքների: Դրա փոխարէն լինում են դէպքեր, երբ զուտ գիտական հարցը ներկայացնում է անտեղի կրքով, իսկ խորաթափանց հետազոտութիւնը փոխարինում է անհիմն յայտարարութիւններով:

Սոյն աշխատութեան բնոյթը Հնարաւորութիւն չի տալիս խորանալ Մովսէս Խորենացու հարցի մէջ: Սակայն, ինչպէս էլ որ լուծելու լինենք այդ հարցը, նրա «Հայոց պատմութիւնը» ծնունդ է նախ եւ առաջ Ե դարի մտաւոր բուռն վերելքի՝ այն պարթօնքի, որն ապրել է Հայոց մշակոյթը յատկապէս այդ շրջանում: Այն էլ աւելացնենք, որ անկախ նրա ստեղծման ժամանակից, «Հայոց պատմութիւնը» մնում է մեր հին պատմութեան կարեւորագոյն սկզբնաղբիւրներից մէկը: Գրաքննադատութեան բովով անցած՝ այն պահպանել է աղբիւրագիտական իր բոլոր արժանիքները: Ժամանակակից գիտութիւնը շարունակում է քննութեան ենթարկել Խորենացու «Պատմութիւնը»՝ յայտնաբերելով նրա ճշտութեան նորանոր փաստեր: Այդպիսի մօտեցումը սկիզբ է առնում Ն. Ադոնցից եւ Յ. Մանանդեանից (երկուսն էլ մերժում էին հեղինակի պատկանելիութիւնը Ե դարին) եւ յաջողութեամբ կիրառում յաջորդ սերնդին պատկանող՝ Գ. Սարգսեանի, Լ. Խաչիկեանի, Գ. Տիրացեանի, Պ. Մուրադեանի աշխատութիւններում (որոնք Մովսէս Խորենացուն համարում են Ե դարի պատմիչ):

Մովսէս Խորենացու աշխատութիւնը բազմաֆունկցիոնալ մի գործ է, որը հարկաւոր է գնահատել միջնադարեան ողջ մշակոյթի չափանիշերով: Մենք կը փորձենք ստորեւ ներկայացնել այդ կոթողը այնպէս, ինչպէս այն երեւացել է բուն ընթերցողին՝ այն ընթերցողին, որին հասցէագրած է եղել իր աշխատութիւնը հէնց ինքը Մովսէս Խորենացին:

«Հայոց պատմութիւնը» (նախապէս կարող էր կոչուել «Պատմութիւն [Մեծաց] Հայոց») բաղկացած է 3 գրքից կամ հատուածից. հեղինակի խօսքով՝ առաջինը նուիրուած է Մեծ Հայքի ծննդաբանութեանը: Հին Կտակարանի Ծննդոց կոչուած գրքում ասուած է. ազատուելով ջրհեղեղից՝ Նոյ նահապետը իր երեք որդիներով (նրանց անուններն են՝ Սէմ կամ Սիմ, Քամ,

Յաբեթ), իր ամբողջ գերդաստանով դուրս եկաւ ցամաք գետին: Օրհնելով Նոյին եւ նրա որդիներին՝ Աստուած ասաց. «Աճեցէ՛ք եւ բազմացարո՛ւք եւ լցէ՛ք գերկիր եւ տիրեցէ՛ք դմա»: Աստուածաշնչական առասպելի համաձայն՝ աշխարհիս ազգերը ծագել են Նոյի որդիներից եւ նրանց սերունդներից: Քրիստոնեայ Հայերի պատկերացմամբ՝ Հայ ազգը եղել է Յաբեթի շառաւիղը, ծագել նրա Ասքանազ կամ Թորգոմ թոռներից (վաղ քրիստոնէական ականդրութեան համաձայն՝ Ասքանազ եւ Թորգոմ եղբայրները եղել են Յաբեթի ծոռները): Եւ ահա Կորիւնն ասում է, որ Մաշտոցը ստեղծել է «Ասքանազեան ազգի եւ Հայաստան աշխարհի» գրքերը [Կոր., 22. 8], իսկ Ագաթանգեղոսի մօտ նման բանաձեւը նկատի ունի «մեր՝ Թորգոմ ազգը՝ Հայաստան աշխարհը» [Ագաթ., էջ 12. 21]: Փաւստոս Բուզանդի ասելով՝ նրա երկը յիշողութիւն է արթնացնում Հայաստան աշխարհի տոհմերի՝ Թորգոմի որդիների մասին [Փաւ. Բուզ., էջ 1]: Հայերի՝ Թորգոմից սերելու գաղափարը Հայաստան է թափանցել Հայրաբանական գրականութիւնից⁶³:

Ահա, ուրեմն, ընկալելով Ասքանազին կամ Թորգոմին որպէս նախահայր՝ մեր նախնիները իրենց տեղ ապահովեցին Սուրբ Գրքի տոհմաբանական ծառի վրայ: Ազգային ինքնագիտակցութիւնը ձեւաւորում էր ըստ քրիստոնեայ դարաշրջանի պահանջների: Այսպիսով, հայերը հռչակուեցին որպէս Աքաւազեան, Թորգոմեան, աւելի ընդհանրացուած եղանակով՝ Յաբեթեան ազգ: Բայց այդ բանաձեւերը սկսեցին մշակուել այն ժամանակ, երբ հայերը արդէն ունէին իրենց ծագման ընդարձակ, հարիւրամեակների կեանք ապրած պատմական ականդոյթներ: Հնից եկած առասպելները հարկաւոր էր կապել Աստուածաշնչի հետ եւ դրանով նրանց համար հաստատ տեղ ապահովել նաեւ պաշտօնական գաղափարախօսական համակարգի մէջ: Այդպիսի մի

խնդիր է դրած եղել իր առջեւ Մովսէս Խորենացին՝ դրա լուծմանը տրամադրելով «Հայոց պատմութեան» առաջին գիրքը:

Երբ մարդկային ցեղը սկսեց տարածուել երկրով մէկ, ամէն մէկը խելագարուած սուրն ընկերով կողն էր խրում, ձգտում հաստատել իր տէրութիւնը: Հանգամանքները նպաստեցին Բելին, որը բռնանալով տիրեց ամբողջ երկրին: Բայց Բելի դէմ դուրս եկաւ Հայկը՝ «գեղապատշաճ եւ անձնեայ, քաջագանգուր, խայտակն եւ հաստաբազուկ»: Հայկը դիմադրում էր նրանց, ովքեր փորձում էին ենթարկել իրենց միւս հսկաներին եւ դիւցազուններին: Բարեւոնում ծնւում է Հայկի Արամանեակ որդին, եւ ապա հսկան, իր ամբողջ գերդաստանով (մօտ 300 անդամ, որն ազգականներից բացի ընդգրկում էր զինուորներին եւ ստրուկներին), իր ամբողջ տունուտեղով քաշւում է դէպի Հիւսիսում գտնուող Արարադ երկիրը: Իրեն է հնազանդեցնում այնտեղ եղած սակաւաթիւ բնակիչներին, նուաճուած երկիրը որպէս ժառանգական կալուած թողնում Արամանեակի որդի Կադմոսին եւ շարունակում իր ուղին դէպի Հիւսիս-արեւմուտք: Բնակւում է բարձրաւանդակի վրայ գտնուող դաշտում, անուանելով այն Հարք, այսինքն՝ այստեղ բնակութիւն հաստատողները՝ Թորգոմեան ազգի հայրերն են: Շինում է նաեւ մի գիւղ՝ Հայկաշէն անունով: Դաշտի հարաւում եղած մարդիկ նոյնպէս հնազանդւում են Հայկին:

Մինչդեռ Բելը իր թագաւորական իշխանութիւնը տարածել էր բոլորի վրայ, նա որդիներից մէկին ուղարկում է Հայկի մօտ, որպէսզի Հիւսիսում մնացած այդ հսկան եւս ենթարկուի նրան: Հայկը հրաժարւում է: Այնուհետեւ Մովսէս Խորենացին պատմում է, թէ ինչպէս Բելը դուրս է գալիս Հայկի դէմ եւ մենամարտում սպանւում: Բելի դիակը գմուսում են ու թաղում, «իսկ մեր երկիրը մեր նախնի Հայկի անունով կոչւում է Հայք» [Մով. Խոր., Ա, 11-12]:

Շարունակելով առասպելը՝ Մովսէս Խորենացին պատմում է նաեւ Հայկի ժառանգների մասին: Միւս մանրամանութիւնների վրայ կանգ չառնելով, թուենք միայն անունները: Պատմահայրը բացատրում է, որ Արամանեակի Խոռ եւ Մանաւազ եղբայրներից սերում են Խոռխոռունի եւ Մանաւազեան նախարարական տոհմերը, իսկ Բզնունիները ծագում են Մանաւազի որդի Բազից: Նրանցից են սերում նաեւ Որդունիները: Արամանեակից է ստանում իր անունը Արագած լեռը, իսկ կալուածը՝ Արագածոտն (ոտն Արագածոյ):

Արամանեակի որդի Արամայիսը բնակւում է գետի ափին, մի բլուրի վրայ, որը եւ կոչւում է Արմաւիր, իսկ Երասխ գետն իր անունն ստանում է նրա Երաստ թոռից: Շիրակ գաւառը իր անուամբ պարտական է Արամայիսի որդի Շարային: Շարան իբր որկրամուլ է եղել, եւ գիւղացիները մի առած էին ասում՝ «Եթէ դու Շարայի որկորն ունես, ապա մենք չունենք Շիրակի ամբարները»: Արամայիսի որդին Ամասիան էր: Սրա Փառտիս եւ Յուլակ որդիների անունից են առաջացել Փառախոտ եւ Յուլակերտ տեղանունները: Իսկ Մասիս անունը Ամասիայից է: Պատմահայրը նման բացատրութիւններ է տալիս նաեւ միւս անուններին, առաջացնելով Գեղն ու Գեղարքունին՝ Գեղամից, Գառնին՝ Գառնիկից եւ այլն: Կարեւորն այստեղ գլխաւոր գաղափարն է. հայաստանցիների նախնին Հայկն է, որը Թորգոմին գալիս է որդի, Թիրասին թոռ, Գամբրին ծոռ, իսկ Յարեթին թոռան թոռ: Ահա թէ Մովսէս Խորենացին, հետեւելով ու լրացնելով հայերին Թորգոմի սերունդ դիտող Հիպոդիտոս Հոռմէացուն, ինչ ձեւով է շողկապում իր ժողովրդին Սուրբ Գրքի տոհմաբանական համակարգի հետ:

Ծննդոց գրքում [Ժ, 22] յիշուած է Սէմի որդի Արամը: Խորենացու Արամը՝ Հարմայի որդին է, այսինքն՝ սերում է Հայկի ազգատոհմից: Հեղինակի ասելով՝ միւս ժողովուրդները մեր երկի-

րը անուանում են Արամի անունով, յոյները՝ Արմէն, իսկ պարսիկներն ու ասորիները՝ Արմէնիկք: Այսպիսով, «Հայոց պատմութեան» մէջ երեւան են գալիս Հայերի երկու էպոնիմուններ²⁵. Հայկը, որի հետ կապ ունի հայերի ինքնանունը եւ Արամը, որի անունով են հայերին կոչում միւս ժողովուրդները: Թէ՛ Հայկի, թէ՛ Արամի առասպելները գալիս են, հաւանաբար, հեթանոսական շրջանից, բայց Խորենացին դրանք վարպետօրէն պատուաստում է Աստուածաշնչի տոհմաբանական ծառին:

Բելի եւ Հայկի յաջորդների միջեւ պայքարը շարունակւում է, Մովսէս Խորենացին պատմում է Արամի սխրանքի մասին, որը աշխատասէր եւ «Հայրենասէր մարդ էր», դերադասում էր «Հայրենիքի համար մեռնել քան տեսնել, ինչպէս օտարագգիները կոխում են հայրենիքի սահմանը, ինչպէս օտարները տիրում են իր հարազատներին» [Մով. Խոր., էջ 43. 7-11]: Այդ Արամի որդին էր Արա Գեղեցիկը: Նրան սիրահարւում է Ասորեստանի հզօր տիրուհի Շամիրամը, սակայն Արան մերժում է թագուհուն, հաւատարիմ մնալով իր Նուարդ ամուսնուն: Շամիրամը զօրքով շարժւում է դէպի Հայաստան, ճակատամարտում Արան պարտութիւն է կրում եւ սպանւում: Արայի դիակը դնում են ապարանքի վերնատանը, իսկ երբ Հայոց զօրքը, վրէժխնդիր լինելով, յարձակւում է ասորեստանցիների վրայ, Շամիրամը յայտարարում է. «Կոչ եմ արել իմ աստուածներին, որպէսզի լիզեն նրա վէրքերը, եւ նա կը կենդանանայ»⁶⁴: Այնուհետեւ հրաման է տալիս զարդարել իր սիրեկաններից մէկին, ներկայացնել նրան որպէս կենդանացած Արա: Ընդվզումը դրանով վերանում է:

²⁵ Յուն. επιωνυμος - այն՝ որը տալիս է իր անունն ինչ-որ բանի, այն՝ որի անունով ինչ-որ բան է անուանուած: Այդ արմատից ծագող գիտական տերմինները (ЭПОНИМ, éponyme եւ այլն) մտել են եւրոպական բոլոր լեզուների մէջ:

Շամիրամը շինարարական գործունէութիւն է ծաւալում Հայաստանում, շատ տեղերում արձանագրութիւններ է փորագրել տալիս, վտանգի պահին հէնց Հայոց երկիր է փախչում եւ այստեղ սպանւում՝ իր Նինուաս որդու ձեռքով:

Արա Գեղեցիկից յետոյ Մովսէս Խորենացին անունների մի երկար շարք է բերում, Արայեան Արայից մինչեւ Սկայորդի՝ 28 անուն, բայց մանրամասնութիւններ է հաղորդում միայն Արայի որդու, Անուշաւանի, Զարմայրի եւ Սկայորդու մասին: Սրանք դեռեւս լոկ Ասիւնիներ են, բայց ահա Սկայորդու որդի Պարոյրը իշխանութիւնը խլում է Սարդանապալոսի ձեռքից եւ դառնում Հայոց առաջին թագաւորը: Յատուկ գլխում հեղինակը տալիս է Մարաց, ապա Հայոց թագաւորների շարքը՝ Պարոյրից մինչեւ Տիգրան՝ 9 անուն: Մանրամասն խօսում է Տիգրան Երուանդեանի եւ մարաց Աժդահակ թագաւորի արկածներով լի յարաբերութիւնների, Տիգրանի ժառանգների մասին եւ այլն: Հեղինակը պնդում է, որ Տիգրանի երեք որդիներից մէկը հէնց Վահագնն է (նրա երգը բերուած է սոյն գլխի սկզբում): Մովսէս Խորենացին նշում է, որ ըստ Հոմերոսի՝ Հայերը մասնակցել են Տրոյական պատերազմին, այնուհետեւ, որպէս յաւելուած բերում է Բիւրասպ Աժդահակի առասպելը եւ սրանով աւարտում «Հայոց պատմութեան» առաջին գիրքը: Հին պատմութիւնը, այն է՝ Մեծ Հայքի նախնիների եւ թագաւորների ծննդաբանութիւնը պարզաբանուած է:

Այսպիսով, առաջին գրքում Մովսէս Խորենացին իւրովի շաղկապում է իր ժողովրդի պատմութիւնը Սուրբ Գրքի հետ: Նա միաժամանակ որոնում է Հայերի տեղը ոչ միայն բիբլիական, այլեւ համընդհանուր (աշխարհիկ, ինչպէս այն հասկացել են հները) պատմութեան ցանցում: Շամիրամը, Նաբուգոդոնոսորը, Աժդահակը, Կիւրոսը, որոնց հետ բարդ յարաբերութիւններ ունեն հայերը, պատկանում են ոչ միայն Սուրբ Գրքին, այլեւ

համընդհանուր պատմութեանը: Տրոյական պատերազմը առհասարակ Սուրբ Գրքի ոլորտից դուրս է: Երկրորդ եւ երրորդ գրքերում այդ միտումը լինելու է առաւել չափով ակներեւ:

Աշխատութեան սկզբում իսկ խորենացին որոշել էր իր նպատակը՝ ներկայացնել ինչպէս թագաւորների, այնպէս եւ նախարարական ազգերի եւ տոհմերի պատմութիւն՝ ով ումից է ծագել, ինչ է գործել նախարարներից իւրաքանչուրը, մէկը՝ մեր ազգից, միւսը՝ հայացած եկուոր [Մով. խոր., էջ 12. 1-4]: Արդէն առաջին գլուխներում խորենացին սկսում է իրացնել իր նպատակը՝ ոչ միայն ազգապետերի եւ թագաւորների, այլեւ առանձին նախարարների նկատմամբ: Կանգ առնենք միայն մէկ օրինակի վրայ: խորենացու պատկերացմամբ, հրեաների գերութիւնը Նաբուգոդոնոսոր արքայի կողմից (Բաբելոնեաց գերութիւնը) տեղի է ունեցել Հայոց Հրաչեայ թագաւորի օրօք: Հրեաների գերի ընկած գլխաւորներից մէկին՝ Շամբաթին, Հրաչեան մեծ պատուով բնակեցնում է Հայաստանում: Այդ Շամբաթից է սերում Բագրատունեաց ազգը, հաստատում է մեր հեղինակը, եւ ոչ թէ Հայկից, ինչպէս ասում են միւսները: Բագրատունիների մօտ տարածուած Սմբատ անունը նոյն Շամբաթն է [Մով. խոր., էջ 68-69]:

Առաջին անգամն է, որ գրիչ է վերցնում Բագրատունիների, եւ ոչ թէ, ասենք, Մամիկոնեանների ջատագովը (ինչպէս դա եղել է Փաւստոս Բուզանդի, յատկապէս Ղազար Փարպեցու դէպքում): Բագրատունեաց պատմութիւնը կարեւոր տեղ է գրաւում խորենացու շարադրանքում: Եւ այդ տոհմի ծագմանը վերաբերող զանազան առասպելներից Մովսէս խորենացին ընտրութիւն է կատարում՝ յօգուտ հրէական տարբերակի:

խորենացու երկրորդ գիրքը նուիրուած է միջակ պատմութեանը՝ Մեծ Հայքի յառաջադիմութեան շրջանին: Դա ամէնից ծաւալուն մասն է, կազմուած է 92 գլխից (առաջինն ունի 33

գլուխ եւ երկու փոքրիկ յաւելուած, երրորդը՝ 68 գլուխ): Հեղինակը սկսում է Ալեքսանդր Մակեդոնացու շրջանից, աւարտում՝ Տրդատ Մեծի մահուամբ: Մովսէս խորենացին հաւատարիմ է իր խոստումին՝ նկարագրել թագաւորների եւ նախարարական տոհմերի պատմութիւնը: «Պատմութեան» առանցքը կազմում է գահակալների հերթականութիւնը, ընդ որում հայ Արշակունիների ցանկը շողկապուած եւ համաձայնեցուած է մի կողմից՝ Պարթեւ, ապա՝ Սասանեան արքաների հետ, միւս կողմից՝ Ալեքսանդր Մակեդոնացու եւ նրա յաջորդների, ապա՝ հռոմէական տիրակալների հետ: խորենացին առաջին գրքում ներկայացրել էր Հայոց պատմութիւնը որպէս բիբլիական օրինաւոր ճիւղաւորում: Երկրորդ գրքում ազգային անցեալը հեթանոսների պատմութեան մի մասն է, ապա թռիչք է կատարում, եւ Հայոց պատմութիւնը շողկապուած է քրիստոնեայ ազգերի պատմութեան հետ:

Վերաշարադրել այդ 92 գլխի բովանդակութիւնը անհնարին է եւ անիմաստ, կանգ առնենք միայն 2-3 դրուագների վրայ, որոնք կարեւոր են խորենացու մտայղացումը ճիշտ ըմբռնելու համար:

Միջին շրջանի Հայոց բոլոր թագաւորները ծագումով Արշակունի են, սերում են պարթեւ Արշակունիներից: Ընդհանուր առմամբ՝ իր Պարթեւ ազգականից յետոյ Հայոց արքան դիտուում է որպէս երկրորդ, սակայն բացառիկ պարագաներում նա կարող է գրաւել անգամ առաջին տեղը: Հայաստանի առաջին Արշակունուն՝ Վաղարշակին գահի վրայ է հաստատել նրա եղբայր Արշակը: Վաղարշակը հանդէս է գալիս որպէս խոշոր բարենորոգիչ, նա է որոշել հասարակական այն կառուցուածքը, որը յատուկ է Արշակունեաց ողջ շրջանին: Նա է ձեւել նախարարական կարգերը: Արշակունեաց շրջանը սկսելով նրանից, խորենացին այնուհետեւ ներկայացնում է թագաւորների եւ նախարարների մի եր-

կար շարան, նրանք են գործում որպէս պատմական դէմքեր, նրանք են որոշում հայերի բախտը:

Խորենացին ճարտար գրչով ներկայացնում է արեւելեան եւ արեւմտեան հարեւանների հետ եղած բարդ եւ բազմակողմանի յարաբերութիւնները, նկարագրում պատմական կեանքի այն կողմը, որը մենք այսօր կ'անուանէինք ներքին քաղաքականութիւն, ապա տնտեսութիւն եւ այլն: Հեղինակը յատուկ հետաքրքրութիւն է ցուցաբերում քաղաքաշինութեան նկատմամբ, ընթերցողին առաջարկում, օրինակ, Երուանդաշատ քաղաքի հիմնադրման տպաւորիչ նկարագիրը: «Սրա (այսինքն՝ Երուանդ թագաւորի – Կ. Իւզ.) ժամանակ արքունիքը Արմաւիր կոչուած բլրից փոխադրուած է, որովհետեւ Երասխ գետը [նրանից] հեռացել էր, եւ ձմեռն երկարելիս, երբ հիւսիսային ցուրտ քամիներ էին փչում՝ վտակը սառչում էր բոլորովին, եւ թագաւորական կայանի խմելու ջուրը բաւական չէր: Սրանից նեղուելով, նաեւ մի աւելի լաւ տեղ փնտրելով՝ Երուանդը արքունիքը տեղափոխում է դէպի արեւմուտք, քարակտոր մի բլուրի վրայ, որի շուրջ պատում է Երասխը, իսկ դիմացից հոսում Ախուրեան գետը: Բլուրը պարսպում է, իսկ պարսպից ներս շատ տեղերում քարերը կտրել տալով իջեցնում է մինչեւ բլուրի յատակը, գետի [մակերեւոյթին] հաւասար, այնպէս որ գետից ջրերը հոսէին այդ փորուած տեղը, խմելու ջուր մատակարարելով: Միջնաբերդն ամրացնում է բարձր պարիսպներով, պարիսպների մէջ պղնձէ դռներ է դնում եւ երկաթէ սանդուղքներ՝ ներքեւից մինչեւ դուռը: Սանդուղքի վրայ, աստիճանների միջեւ, թաքնուած որդաթներ է շինում, որպէսզի եթէ մէկը, թագաւորին դաւելու ցանկութեամբ, գաղտնի բարձրանայ՝ ապա բռնուի: Սանդուղքը, ասում են, երկու տեսակ էր սարքուած, մէկը ցերեկային ճանապարհ՝ արքունի սպասաւորների եւ ընդհանրապէս ելումուտի

համար, իսկ միւսը գիշերային, դաւադիրների դէմ» [Մով. Խոր., Բ, 39]:

Պէտք է նշել, որ զանազան շինութիւններ մշտապէս գրաւել են Պատմահօր ուշադրութիւնը:

Խորենացու կերտած թագաւորական պատմութիւնը շատ անգամ վեր է ածուած դիւցազներգութեան: Դա յատկապէս աչքի է ընկնում Սանատրուկի որդի Արտաշէս թագաւորին նուիրուած գլուխներում: Արտաշէսը Խորենացու սիրած հերոսներից է, նա մանրամասն նկարագրում է թագաւորի՝ Հայաստանում եւ նրա սահմաններից դուրս ծաւալած գործունէութիւնը, ընդ որում պատմական Արտաշէսը (պատմական՝ նոյն Խորենացու չափանիշերով) իր տեղն է գիջում առասպելների Արտաշէսին: Խորենացու շնորհիւ մէկ անգամ եւս հնարաւորութիւն ենք ստանում ծանօթանալու մեր հին բանահիւսութեան (այն էլ՝ վարպետօրէն վերամշակուած) թանկարժէք նմուշներին:

Ալանների եւ հայերի՝ երկու քաջ եւ աղեղնատր ազգերի միջեւ պատերազմ է լինում: Ալանները պարտուում են, նրանց թագաւորի որդին գերի է ընկնում: Ալանները հաշտութիւն են խնդրում, խոստանում այլեւս չասպատակել Հայոց երկիրը եւ յետ են ուզում գերի վերցուած երիտասարդին: Արտաշէսը մերժում է, ալանները դիմում են վերջին միջոցին՝ ուղարկում են բանակցելու պատանու քրոջը՝ Սաթենիկին: Սաթենիկը դուրս է գալիս գետի ափը, բարձրանում բլուրը եւ թարգմանների միջոցով դիմում Արտաշէսին: Հայոց թագաւորին հասնում են վեհ պոեզիայի յուզիչ խօսքեր՝

«Քեզ ասեմ, այր քա՛ջ Արտաշէս,
որ յաղթեցեր քաջ ազգի՛ն Ալանաց.
եկ հաւանեա՛ց բանից
աչազեղոյ դստերս Ալանաց՝
տալ զպատանիդ.

զի վասն միոյ քինու
 ոչ է օրէն դիցազանց՝
 զայլոց դիցազանց զարմից
 բառնալ զկենդանութիւն,
 կամ ծառայեցուցանելով՝
 ի ստրկաց կարգի պահել,
 եւ թշնամութիւն յախտենակամ
 ի մէջ երկոցունց
 ազգաց քաջաց հաստատել»⁶⁵ [Մով. Խոր., Բ, 50]:

Տեսնելով Սաթենիկին, լսելով նրա իմաստուն խօսքերը՝ Արտաշէսը սիրահրաւում է. նրա փափագն է կին առնել Ալանների արքայադուստր օրիորդին, խաղաղութիւն հաստատել քաջ ազգերի միջեւ: Միրտը բացում է իր դայեակ Սմբատ Բագրատունուն, սա դեսպան է ուղարկում Ալանաց թագաւորի մօտ: Բայց չէ՞ որ Սաթենիկի համար գին է հարկաւոր.

«Շու ուստի՞ տացէ քաջն Արտաշէս
 հագարս ի հագարաց
 եւ բիրս ի բիրոց
 ընդ քաջազգոյ կոյս
 օրիորդիս Ալանաց»⁶⁶: _

Հարց է տալիս Սաթենիկի հայրը: Բայց մեր Արտաշէսը իսկական դիւցազն է՝

«Հեծաւ արի արքայն Արտաշէս
 ի սեան գեղեցիկ,
 եւ հանեալ զոսկէօղ շիկափոկ պարանն
 եւ անցեալ
 որպէս զարծոյի սրաթեւ
 ընդ գետն,
 եւ ձգեալ զոսկեաղ շիկափոկ պարանն՝
 ընկէց ի մէջք արիորդին Ալանաց,

եւ շատ ցաւեցոյց զմէջք փափոկ արիորդին,
 արագ հասուցանելով ի բանակն իւր»⁶⁷:

Եւ ահա, սկսւում է երջանիկ զոյգի հարսանեկան հանդէսը՝

«Տեղ ոսկի տեղայր
 ի փեսայութեանն Արտաշիսի,
 տեղայր մարգարիտ
 ի հարսնութեան Սաթիականն»⁶⁸ [Մով. Խոր., Բ, 50]:

Խորենացին այս գեղեցիկ կտորները քաղում է վիպասանների երգերից: Ժամանակակից ընթերցողը դրանք ընկալում է որպէս իրականութեան զուտ գեղարուեստական վերարտադրութիւն: Եւ իրօք, հերոսների խօսքն ու վարմունքը ժողովրդի երեւակայութեան ծնունդ է, եթէ կան պատմական գծեր, ապա արտայայտուած են աւելի քան վերացական եղանակով: Բայց մեր պատմիչը ձգտում է թափանցել դրանց բուն էութեան մէջ եւ յանգում այն եզրակացութեան, որ իր կողմից կատարուած մէջբերումները իւրովի փոխաբերութիւններ են: Եւ բացատրում է ընթերցողին՝ ոսկեօղ շիկափոկ պարանը՝ դա լայքայ՝²⁶ է եւ ոսկի, որոնք Արտաշէսը տալիս է որպէս վարձանք: Իսկ ի՞նչ են ոսկին եւ մարգարիտը, որ տեղում էին հարսանիքին: Պատմիչն ասում է. երբ փեսայ-թագաւորը հասնում է դահլիճին, ապա հռոմէացի աստիճանաւորի պէս դրամ էր շաղ տալիս. նոյնպէս էր վարում նաեւ հարսնացու-թագուհին՝ շաղ տալով մարգարիտը առագաստի սենեակում: «Այս է ճշմարտութիւն բանիցս»,— եզրակացնում է Պատմահայրը:

Խորենացու կերտած կերպարների պատկերասրահում Արտաշէսինը թերեւս ամէնից բարդն է: Շատ դժուար է այստեղ զա-

²⁶ Լայքայ - այժի եւ ոչխարի մորթուց պատրաստուող նուրբ կաշի, սեկ, սաֆեան, Խորենացու բացատրութեամբ՝ մորթ կարմիր:

նազանել պատմականը երեւակայականից: Եեշտենք, որ վերջին տասնամեակներում յաջողուեց ապացուցել, որ շատ գծեր, որոնք առաջ թուացել են որեւէ պատմականութիւնից զուրկ, իրապէս համապատասխանում են ճշմարտութեանը⁶⁹:

Միջին շրջանի թագաւորների շարանը աւարտում է Տրդատ Մեծի պատկերով: Հետեւելով Ագաթանգեղոսին եւ աւելացնելով որոշ մանրամասներ՝ պատմիչը ցոյց է տալիս, թէ ինչպէս նրա օրօք Գրիգոր Լուսաւորչի ջանքերով երկրում տարածում եւ արմատանում է քրիստոնէութիւնը: Սակայն Ագաթանգեղոսի Գրիգորը Հայոց աշխարհի առաջին լուսաւորիչն է, մինչդեռ ինքնացու մօտ նա ունեցել է նախորդներ: Աւելին՝ Հայոց առաջին քրիստոնեայ թագաւորը ոչ թէ Տրդատն է, այլ Աբգարը: Աբգարը Հաւատում է Քրիստոսին, աղաչում է Փրկչին գալ եւ բուժել իրեն: Յիսուսը պատասխան նամակում խոստանում է ուղարկել իր աշակերտներից մէկին, Աբգարին պարգեւում է իր պատկերը: Աբգարի նստատեղին Եդեսիա քաղաքն է. այստեղ է ժամանում առաքեալներից մէկը՝ Թադէոսը, բժշկում արքային, քրիստոնեայ դարձնում նրան եւ քաղաքի ողջ բնակչութեանը: Թադէոսը այնուհետեւ գալիս է Հայոց երկիրը, Աւետարան քարոզում եւ սպանում Շաւարշան գաւառում, որ այժմ կոչւում է Արտազ, ճշտում է Հեղինակը:

Հայաստան է ժամանում նաեւ Բարդուղիմէոս առաքեալը, որը նահատակում է Արեքաճոս քաղաքում: Սրանք են Գրիգոր Լուսաւորչի նախորդները, իսկ Թադէոսի եւ Գրիգորի միջեւ գոյութիւն ունի խորհրդաւոր կապ՝ չէ՞ որ Գրիգորի մայրը յղիացել է Հէնց Արտազում՝ այնտեղ, որտեղ յայտնուել են մեր մեծ եւ սուրբ առաքեալ Թադէոսի նշխարները: Հայ եկեղեցին առաքելական է, այսինքն՝ հիմնուել է Քրիստոսի աշակերտների կողմից՝ այդ է ապացուցում Պատմահայրը իր շարադրանքի մէջ մուծելով Թադէոսին եւ Բարդուղիմէոսին վերաբերող դրուագները⁷⁰:

«Պատմութեան» երրորդ գիրքը գրուած է գերազանցապէս յայտնի աղբիւրների՝ Փաւստոս Բիւզանդի, Կորիւնի եւ միւս պատմիչների հաղորդումների հիման վրայ: Մեծ մասամբ դա թագաւորական պատմութիւն է, կարելի է ասել՝ թագաւորական ողբերգութիւն: Տրդատ Մեծի ժառանգների մի շարան է անցնում ընթերցողի առջեւ: Իրեն յատուկ արտայայտիչ ոճով Մովսէս ինքնացին նկարագրում է Տիրանի կուրացումը, Արշակ Բ-ի աքսորը, Պապի սպանութիւնը: Նրանց կողքին գործում են հոգեւոր առաջնորդները՝ Վրթանէսը, Յուսիկը, յատկապէս Ներսէս Մեծ կաթողիկոսը: Աշխատութեան վերջին դրուագները նուիրուած են յոյների եւ պարսիկների միջեւ երկրի բաժնմանը, գրերի գիւտին, վերջապէս Արշակունիների հարստութեան վերացմանը: Շարադրանքը գնալով աւելի ու աւելի անձնական բնոյթ է ստանում: ԿՐ գլխում Հեղինակը նկարագրում է իր ճանապարհորդութիւնը գիտութեան խոշորագոյն օջախները: Իսկ «Հայոց պատմութեան» վերջին գլուխը կազմում է ինքնացու հոգեւոր «Ողբը», որը լրացնում է Հեղինակի կերպարը: Նրան արտասահման են ուղարկում Սահակ Պարթեւ կաթողիկոսը եւ Մեսրոպը: Մովսէս ինքնացին այդ երկուսին դիտում է որպէս իր հոգեւոր հայրեր. «Նրանք ինձ ծնեցին եւ սնուցին իրենց տուած ուտումով եւ ուրիշների մօտ ուղարկեցին կատարելագործուելու: Նրանք սպասում էին իմ դարձին, — շարունակում է Հեղինակը, — որպէսզի փառաւորուէին իմ ամենախմաստ գիտութեամբ եւ լիակատար պատրաստութեամբ»: Հեղինակը ուրախ սրտով շտապում է հայրենիք, սակայն տեղ է հասնում Սահակի եւ Մաշտոցի վախճանից յետոյ: Ո՞վ պիտի յարգի Մովսէսի գիտելիքները, ո՞վ ուրախանայ նրա առաջադիմութեամբ...

Հասարակական կեանքի երեւոյթները եւ կենսագրական պարագաները «Ողբի» մէջ ներկայացուած են միեւնոյն եղանակով, Հեղինակը, կարծես, դրանք չի գանազանում: Այդպիսի մօտեց-

ման շնորհիւ «Ողբը» ստանում է անձնական գունաւորում: Մինչդեռ «Պատմութեան» վերջին գլխի հիմնական բովանդակութիւնը կազմում է Հայաստանի, ողջ ժողովրդի թշուառ վիճակը: «Ողբում եմ քեզ, Հայոց աշխարհ, ողբում եմ քեզ, բոլոր հիւսիսային ազգերի մէջ վեհագոյնդ, որովհետեւ վերացան թագաւորդ ու քահանայդ, խորհրդականդ եւ ուսուցանողդ. վրդովուեց խաղաղութիւնը, արմատացաւ անկարգութիւնը, խախտուեց ուղղափառութիւնը, հիմնաւորուեց սոցիալութեամբ չարափառութիւնը»: Հասարակութեան բոլոր խաւերը քայքայուել են, խոր ճգնաժամ են ապրում: Կրօնաւորները կեղծաւոր են, ցուցամուլ, սնափառ, ոչ այնքան աստուածասէր, որքան պատւամուլ: Աշխարհականները՝ ամբարտաւան, ստահակ, մեծախօս, աշխատանքից խուսափող, արբեցող, վնասակար, [Բրիտանոսի⁶] ժառանգութիւնից փախչող⁷¹:

Չինուորականները՝ անարի պարծենկոտ, զէնք ատող, ծոյլ, ցանկասէր, թուլամորթ, կողոպտիչ, գինեմուլ, յելուզակ, աւազակներին համարարոյ:

Իշխանները՝ ապստամբ գողերին գողակից, կաշառակեր, կծծի, ժլատ, ագահ, յափշտակող եւ այլն:

Ճգնաժամային վիճակի պատճառն է՝ Արշակունեաց թագաւորութեան եւ Լուսաւորչի տոհմի հովուապետութեան վերացումը: Կատարուած դէպքերից յետոյ Պատմահայրը իր շուրջը չի տեսնում որեւէ լաւ բան եւ մեծ արուեստագէտի եղանակով նոյն տրամադրութիւնը ներշնչում է իր ընթերցողին: Գրքի խիստ հռետեսական աւարտն իր հերթին նպաստել է Հայոց պատմութեան ողբերգական ընկալմանը⁷²: Դարեր անընդհատ ազգային ինքնագիտակցութիւնը մեծ չափով սնուելու է նաեւ այդ գաղափարով⁷³:

Այն բնութագիրը, որը մենք փորձեցինք տալ «Հայոց պատմութեանը», ընդհանուր բնոյթ է կրում: Պարզապէս ձգտել ենք ինչ-որ չափով նախագուշակել այն տրամադրութիւնը, որը պիտի արթնանար միջնադարեան ընթերցողի մօտ: Բայց խորեմացու «Պատմութիւնը» (ինչպէս նաեւ մեր դասական գրականութեան միւս կոթողները) պահպանել է իր կենսական ուժը, շարունակում է ապրել: Ժամանակակից ըմբռնման մասին ընթերցողը կարծիք կը կազմի՝ դիմելով բնագրին:

Այն մշակոյթը, որին նուիրուած է սոյն գլուխը, Ե դարի անկրկնելի իրականութեան ծնունդ է: Հարցին մօտենալով պատմափիլիսոփայական տեսանկիւնից՝ կարող ենք ասել, որ ընդհանուր առմամբ նրա արարիչը ողջ ժողովուրդն է: Սակայն մշակութային արժանիքներ ստեղծող ժողովուրդը գործել է առանձին անհատների միջոցով: Անուններից բացի, ի՞նչ գիտենք մենք այն մարդկանց մասին, որոնք այդպիսի փայլ տուին ողջ դարաշրջանին:

Շնորհիւ Կորիւնի մեզ յայտնի են Մաշտոցի կեանքի ամէնից էական պարագաները. այդ մասին մենք խօսեցինք բաւական մանրամասն, ուստի աւելորդ է կրկին անգամ վերադառնալ նոյն հարցին: Գ. Սարգսեանի ասելով՝ յուճարէն ողբերգութիւնների, ճառերի ու պատմութիւնների հեղինակ Արտաւազդ Բ թագաւորը եղել է Հայ առաջին մեզ յայտնի մտաւորականը: Իսկ առաջին հայերէն գրող մտաւորականը եղել է Մաշտոցը՝ գիտնական, բանասէր, եկեղեցական գրող, արձակագիր եւ բանաստեղծ (նրա անունով յայտնի են հոգեւոր երգեր), միաժամանակ քաղաքական եւ եկեղեցական գործիչ: Խորապէս զգալով իրենց դասային պատկանելութիւնը, նրա հետեւորդները կազմել են մտաւորականութեան մի առանձին շերտ:

Դ դարի վերջերին, Ե դարի սկզբներին Մաշտոցի կողքին վեր է խոյանում Սահակ Պարթևե կաթողիկոսի անձնաւորութիւնը: Խօսելով Մաշտոցի մասին՝ Կորիւնը միաժամանակ փառաբանում է նաեւ կաթողիկոսին, որը խրախուսում է վարդապետին, ընդառաջում նրան, գրերը Հայաստան բերուելուց յետոյ անմիջապէս անցնում թարգմանութիւններին: Վարձագրի աչքում այդ երկուսը հաւասար են. նրանք մեր երանելի հայրերն են, աշխարհաճունդ հայրեր, եկեղեցու սիւներ, Մաշտոցը Սահակի զուգականն է [Կոր., էջ 56.7, 58.11, 90.1, 96.14]: Մասամբ կրկնելով Կորիւնին, Մաշտոցի ու Սահակի լուսաւորչական գործունէութեան մասին խօսում է նաեւ Ղազար Փարպեցին, սակայն (ինչպէս այդ մասին ասուեց վերեւում) նրա պատկերացմամբ՝ Սահակ կաթողիկոսը կատարում է, ասես, առաջին դերը: Եւ իրօք, Մաշտոցը կաթողիկոսին պատմում է իր ծրագրի մասին, իսկ Սահակը պատասխանում է. «... ուր տկարանայք ի կարգել զհեգեանայսն (այսինքն՝ դժուարութիւններ ունենաք վանկեր կազմելիս – Կ. Իւզ.)՝ բերեալ առ իս ուղղեմ զայն»: Մաշտոցը ստեղծագործական տարերքի մէջ է, իսկ կաթողիկոսը ուղղում է նրան, գրերը կարգելու դիւրին ճանապարհ ցոյց տալիս: Մաշտոցը Հայերէնի հնչիւնները յարմարեցնում է յունարէնին ըստ կաթողիկոսի ցուցումների՝ չէ՞ որ առանց Սահակի առաջնորդութեան ոչ ոք չէր կարող անսխալ կատարել այդ գործը: Մաշտոցը, թագաւորը, նախարարները դիմում են Սահակին, որպէսզի նա յունարէնից Հայերէն թարգմանի Աստուածաշունչը, միւսները անկար են, նրանք չեն հասել Սահակի գիտելիքների բարձունքին: Գիշերցերեկ աշխատելով, – ասում է Ղազար Փարպեցին, – կաթողիկոսը թարգմանեց ամբողջ Աստուածաշունչը (մինչդեռ Կորիւնից գիտենք, որ առաջինը եղել է «Վարքի» հերոս Մաշտոցը): Աստուածպաշտութիւնը, ամփոփում է հեղինակը, տարածում է

Հայոց երկրով մէկ «ի հոգեւոր վտակաց սուրբ Հայրապետին Սահակայ» [Ղազ. Փարպ., գլ. Ժ-ԺԱ]:

Հեղինակի միտումը բացայայտ է: Ընդգծելով Սահակի գիտելիքները, նրա կատարեալ հելլենաբանութիւնը, շեշտելով կաթողիկոսի ծառայութիւնն ուսման տարածման բնագաւառում՝ Փարպեցին նրան ներկայացնում է որպէս Ե դարի մշակութային վերելքի առաջնորդ: Թէ ինչով է պատճառաբանուած այդ միտումը, կը խօսենք քիչ յետոյ, այժմ նշենք, որ Սահակի դերն իրօք որ մեծ է եղել: Հովանաւորելով Մաշտոցին, ամէն ինչում նրան օգնութեան հասնելով՝ Սահակը վերջինիս նախաձեռնութեանը Հասարակական որակ է ապահովել: Իսկ ծնունդ առնող Հայ գրականութեան բնագաւառում նրա անձնական ներդրումը կասկածի ենթակայ չէ: Մեծարելով նրան՝ Ղազարն, ըստ հոլթեան, չի հեռանում ճշմարտութիւնից: Յունաց կողմերում մեծացած, հելլենագիտութեան բարձունքներին հասած, Մաշտոցի հետ մէկտեղ նա այն մարդն է եղել, որը սկզբից եւեթ կարողացել է ուղղել Հայ դպրութիւնը դարաշրջանի յունական առաջաւոր ճանապարհով: Իր ծննդեան օրուանից այդ դպրութիւնը մի մեծ բազմալեզու գրականութեան մաս է կազմել, եւ Սահակի պէս լայնախոհ եւ գիտուն անձնաւորութեան ներդրումը իրօք որ մեծ է եղել:

Հայաստաւ Հայոց գրականութիւնը ուժ է տուել ազգային ինքնագիտակցութեան զարգացմանը, իսկ վերջինս՝ մեծ չափով ապահովել Ե դարի ապստամբ ոգին: Խորհրդանշական է, որ Աւարայրի հերոս Վարդան Մամիկոնեանի ուսուցիչը եղել է հէնց Սահակ Պարթևը՝ նրա պապը մօր գծով [Կոր., էջ 58. 19-21, Ղազ. Փարպ., էջ 52. 32-33]:

Մաշտոցն ու Սահակը մենակ չեն գործել, ունեցել են աշակերտներ եւ հետեւորդներ: Ասուեց, որ Մաշտոցի հետ արտասահման գնացած խումբը բաժանուեց երկուսի՝ մի մասը զբաղուեց

յոյն, միևսը՝ ասորի դպրութեամբ: Սկզբնաղբիւրներից գիտենք այդ սերնդին պատկանող մի քանիսի անունները. դրանցից են մեր վարժապետ Կորիւնը, Եզնիկ Կողբացին, Յովհան Եկեղեցացին, Յովսէփ Պաղնացին, Ղեւոնդը, Արձանը: Կորիւնի մասին խօսեցինք վերեւում: «Վարժից» բացի, նա հեղինակել է նաև այլ գործեր եւ հանդէս եկել որպէս իր դարաշրջանի ամէնից խոշոր գրական դէմքերից մէկը:

Եզնիկի կեանքից յայտնի է հետեւեալը. ծագումով Այրարատ գաւառի Կողբ գիւղից է եղել, ուստի եւ կոչուել է Կողբացի: Յովսէփ Պաղնացու հետ ուղարկուել է Ասորիքի Եղեսիա քաղաքը՝ այնտեղ նրանք ասորերէնից թարգմանում էին Եկեղեցու հայրերի ստեղծագործութիւնները: Աւարտելով աշխատանքը (այսինքն՝ իւրաքանչիւրն իր բաժինը)՝ անցնում են Յունաց կողմերը, կարգւում յունարէնի թարգմանիչներ: 431 թ. տեղի է ունենում Եփեսոսի Երրորդ տիեզերական ժողովը: Եզնիկն այդ ժամանակ Կոստանդնուպոլսում էր, Մաշտոցին մի թուղթ է յղում՝ հաղորդելով ժողովի որոշումները⁷⁴: Վերադառնալով հայրենիք՝ թարգմանիչներն իրենց հետ բերում են Սուրբ Գրքի հաստատում օրինակներ, հայրաբանական (այսինքն՝ Եկեղեցու հայրերի հեղինակած) գրականութիւն, նաև Նիկիայի (325) եւ Եփեսոսի ժողովի կանոնները: Սահակի հետ միասին Եզնիկն, ըստ բերուած օրինակների, ուղղումներ է մտցնում Սուրբ Գրքի արդէն կատարուած թարգմանութեան մէջ, թարգմանում Աստուածաշնչի մեկնութիւններ:

Վարդանանց ապստամբութեանը նախորդող դէպքերից մէկն է Արտաշատի ժողովը: Ժողովականները պատասխան են կազմում Պարսից հազարապետ Միհրնբրսեհի նամակին՝ պաշտպանելով իրենց հաւատը: Ստորագրողների թւում է նաև Բագրեւանդի եպիսկոպոս Եզնիկը (արդեօ՞ք Եզնիկ Կողբացին է):

Գրականութեան պատմութեան մէջ Եզնիկը մտել է որպէս «Եղծ աղանդոց», այսինքն՝ «Աղանդների հերքում», աշխատութեան հեղինակ⁷⁵: Աղանդ ասելով՝ հասկացուել են բոլոր այն ուսմունքները, որոնք հակառակ են ճանաչում ստացած քրիստոնեայ դաւանանքին: Հեղինակը դուրս է գալիս յունական փիլիսոփայութեան, զրադաշտութեան, քրիստոնեայ մի շարք հերձուածների դէմ, միաժամանակ շարադրում քրիստոնէական վարդապետութիւնը: Նրա դրոյթները յաճախ ներդաշնակ են «Յաճախապատումին»:

Այդ երկը զարմանք է պատճառում շարադրութեան իր եղանակով: Հայոց դպրութեան արշալոյսին ստեղծուած Եզնիկի աշխատութիւնը գրուած է ընտիր հայերէնով: Պարզում է, որ մեր լեզուն արդէն այն ժամանակ ի վիճակի է եղել արտայայտել կրօնա-փիլիսոփայական բոլոր նրբութիւնները, հարազատ մնալով իր ոգուն, հաւատարիմ՝ կայունացած քերականական օրէնքներին: Եզնիկի աշխատութիւնը՝ դասական գրաբարի ամէնից ընտիր օրինակներից է: Ինչ վերաբերում է բովանդակութեանը, ապա Եզնիկը եղել է իր դարաշրջանի հարազատ որդին եւ շարադրել է առարկայի վերաբերեալ Եկեղեցու ընդհանուր տեսակէտը: Ընդ որում դրսեւորել է թէ՛ ճկուն միտք, թէ՛ լայն գիտելիքներ:

Ի միջի այլոց, «Եղծ աղանդոց»-ը վկայում է, որ Եզնիկն իրօք որ եղել է քաջ հելլենագէտ: Աշխատութեան մի մասը թարգմանութիւն է յունարէնից, կատարուած ամենայն ճշգրտութեամբ, այն էլ առանց ընդհանուր ոճից կատարուող շեղումների⁷⁶:

Ղեւոնդի մասին Կորիւնն ասում է, որ Փոքր Հայքի Մելիտինէ քաղաքում եղած ժամանակ Մաշտոցը այնտեղ է թողնում աշակերտների մի խումբ հէնց նրա՝ հաւատարիմ եւ ճշմարտապաշտ մարդու ղեկավարութեամբ: Միառժամանակ յետոյ Կորիւ-

նի հետ միասին նա ուղեւորուում է Կոստանդնուպոլիս եւ այնտեղ միանում Եզնիկ Կողբացուն: Այսպիսով, Ղեւոնդի գրական գործունէութեան մասին կարող ենք կազմել միայն ընդհանուր պատկերացում:

450 թ. ամռանը Հայոց աշխարհի Անգղ գիւղն է մտնում մոգերի մի մեծ խումբ, որը մոգպետի գլխաւորութեամբ փորձում է քանդել եկեղեցու դռները, սակայն տեղի երէց Ղեւոնդը հաւաքելով ժողովրդին, ջարդում, դուրս է շարտում նրանց: Ղեւոնդը մասնակցել է Վարդանանց պատերազմին, բանտարկուել, ապա 454 թ. նահատակուել Պարսկաստանի Ապար աշխարհում: Ղեւոնդ երէցը նոյնպէս Մաշտոցի աշակերտն է⁷⁷: Ուշագրաւ է, որ լինելով, ըստ երեւոյթին, գրական խոշոր դէմք՝ Մաշտոցի աշակերտը միւսներին նման վարդապետ չէ, այլ գիւղի սովորական երէց:

Միւս աշակերտների գործունէութեան մասին հաւաստի տեղեկութիւններ չունենք:

Մաշտոցի, Սահակի եւ նրանց աշակերտների ջանքերով Հայոց նշանագրերը վեր են ածուել Հայոց դպրութեան: Ի՞նչ պատրաստութիւն են ունեցել նրանք՝ դիմելով այդ վեհ գործին: Նրանք բոլորը սովորել կամ կատարելագործուել են արտասահմանում, կրթութիւն ստացել՝ ընտելանալով ասորի կամ յունական դպրութեանը, յաճախ թէ՛ մէկին, թէ՛ միւսին: Ի՞նչ դպրոց են աւարտել արտասահմանում, ո՞ւմ են ունկնդրել, ո՞ւմ ղեկավարութեամբ են բազմապատկել գիտելիքները: Այդ հարցերի վերաբերեալ սկզբնաղբիւրները պահում են կատարեալ լռութիւն: Մովսէս Խորենացու «Պատմութեան» վերջին գլուխներից մէկը կրում է հետեւեալ վերնագիրը՝ «Խորհրդածութիւն վարդապետների, իր անձնաւորութեան եւ ուսման՝ երկնային զարդին

նմանուող ճանապարհորդութեան մասին» [Մով. Խոր., Գ. 62]²⁷: Նախորդ գլխից պարզուում է, որ ստանալով Սուրբ Գրքի նոր օրինակներ՝ Մաշտոցն ու Սահակը նորոգեցին նախկին՝ յապճեպ կերպով կատարուած թարգմանութիւնը: Բայց նրանք, ասում է հեղինակը, անծանօթ էին մեր արուեստին, ուստի թարգմանութիւնը շատ տեղերում ստացուեց թերի: Այդ իսկ պատճառով, շարունակում է Մովսէսը, Մեծն Սահակը եւ Մեսրոպը ուղարկեցին մեզ Աղեքսանդրիա քաղաքը, որպէսզի ճեմարանում ընտելանաք պանծալի եւ ստոյգ (յունարէն) լեզուին [Մով. Խոր., էջ 343. 6-11]: Մովսէսը նախ ուղեւորում է Եդեսիա, մի թեթեւ ծանօթանում տեղի դիւանին, ապա՝ պատրաստութիւնը շարունակելու համար անցնում Պաղեստին: Պաղեստինից նա քայլերն ուղղում է դէպի Աղեքսանդրիա: Այնտեղի իր ուսուցչին նա հռչակում է որպէս նոր Պլատոն, սակայն անունը չի տալիս:

Խորենացին որոշում է այցելել Հելլադա: Տարաբախտաբար, քամին նաւը քշում է դէպի Իտալիա, եւ մեր ճանապարհորդը միառժամանակ մնում է Հռոմում: Հռոմից, այնուամենայնիւ, անցնում է Աթէնք, իսկ ձմռան վերջին Կոստանդնուպոլսի վրայով վերադառնում է Հայրենիք:

Անկախ նրանից, իրական դէպքերի նկարագրութիւն է այս գլուխը, թէ առաջացել է գուտ գրական հողի վրայ՝ այստեղ ճիշտ են արձանագրուած այն երթուղիները, որոնցով ընթանում էին գիտելիքների մասին երազող Հայաստանցի ուսանողները: Եւ իրօք, Եդեսիան, Երուսաղէմը, Գազան, Աղեքսանդրիան, Ան-

²⁷ Ըստ Նորայր Բիզանցացու՝ նախորդ գլխի վերջին բառը պատկանում է 62 գլխի վերնագրին, ուստի եւ ճիշտ ընթերցումն է՝ «Վերաբանութիւն ի վարդապետսն, յիճքն եւ ի ճանապարհորդութիւն ուսմանն, օրինակաւ երկնային գարդու»: Վերնագիրը թարգմանելիս հետեւել ենք հեճց այդ ընթերցանութեանը: Ուղղումը ընդունել են Ռ. Թոմսոնը (անգլ. թարգմ.) եւ Գ. Սարգսեանը (ռուս. թարգմ.), բայց մերժել է Ժ. Պ. Մահեն (ֆրանս. թարգմ.):

տիրոջը, Կոստանդնուպոլիսը, Աթէնքը, Հռոմը, ինչպէս նաեւ Բեյրութը, Կեսարիան, Մծբինը՝ որպէս կրթական օջախներ այդ շրջանում վայելել են մեծ հռչակ: Հեթանոս եւ եկեղեցական կրթութեան մրցակցութիւնը դեռեւս չէր աւարտուած: Գոյութիւն ունէին բազմաթիւ մասնաւոր դպրոցներ, ուր ուսուցումն ընթանում էր ըստ հին, անտիկ շրջանից եկող աւանդոյթի: Բանասիրական գիտութիւններն ամփոփում էին մի քանի ճիւղ՝ քերականութիւն, տրամախօսութիւն²⁸, ճարտասանութիւն: Այդ բաժանումը գալիս էր դեռեւս Պլատոնից, Արեւմտաքում այն յայտնի դարձաւ *trivium* (տրուի) անուամբ: Նշելով մեր արուեստը՝ Մովսէս խորենացին նկատի է ունեցել ճարտասանութիւնը, նրան յատուկ բանաւոր կամ գրաւոր շարադրութեան եղանակները: Ընդհանուր առմամբ լայն իմաստով նոյնն է, ինչ որ քերթողական արուեստը:

Մաթեմատիկական գիտութիւնները չորսն են եղել՝ թուաբանութիւն, երաժշտութիւն, երկրաչափութիւն, աստղագիտութիւն (*quadrivium*-քադրուի): Առարկաների ցանկից դժուար է կռահել, որ այդ դպրոցներում տիրում էր հեթանոս ոգին: Այնուամենայնիւ, բազմաթիւ եկեղեցական գործիչներ հէնց այդպիսի կրթութիւն ստացածներից էին: Թէոդորոս Մոպսուեստացին, Եկեղեցու ամէնից խոշոր հայրերից մէկը՝ Յովհան Ոսկեբերանը, դասեր են առել Անտիոքի հռչակաւոր ճարտասան հեթանոս Լիբանիոսից:

Կոստանդնուպոլսում, Աթէնքում, Աղեքսանդրիայում դասաւանդուել են տոուլոմ եւ քառուլոմ համապատասխանող գիտութիւններ, դրանց հետ մէկտեղ նաեւ փիլիսոփայութիւն եւ բժշկութիւն: Համալսարաններն ունեցել են իրենց թեքումը: Բեյ-

րութիւն, օրինակ, յայտնի է եղել որպէս իրաւաբանութեան օջախ: Համալսարանի դասախօսները եղել են մեծ մասամբ հեթանոսներ:

Հոգեւոր գիտութիւնների կենտրոնները գտնուել են պատրիարքարաններին կից, յայտնի են եղել եւ մեծ հռչակ վայելել Հռոմը, Կարթագէնը, Անտիոքը, Աղեքսանդրիան, Եդեսիան: Այստեղ էին մշակուում աստուածաբանութեան հիմնական դրոյթները, այստեղ էր յղկուում քրիստոնէական ջատագովութիւնը:

Ահա այդպիսի հեռանկարներ են բացուած եղել թէ՛ Սահակի ու Մաշտոցի, թէ՛ նրանց աշակերտների ու հետեւողների առջեւ: Նրանք հասել էին իրենց ժամանակակից գիտութեան կատարներին, ճիշտ է, այն սահմաններում, որոնք թելադրում էր նրանց պատկանելութիւնը Հոգեւոր դասին:

Գրասէր մտաւորականութեան յաջորդ սերունդը ձեւաւորուեց արդէն դարսկէսի ազատագրական պայքարի մթնոլորտում: Այդ սերնդից աչքի են ընկնում յատկապէս երկուսը՝ Աբրահամ Խոստովանողը եւ Եղիշէն: Աբրահամը Տայքի Զենաքս գիւղից էր, Վարդանանց պատերազմի ժամանակ եղել է երէց: Միւս քահանաների հետ տարուել է Պարսկաստանի Նիւշապուհ քաղաքը, ենթարկուել կտտանքի, ապա աքսորուել Ասորեստան եւ, 12 տարի մնալով օտարութեան մէջ, վերադարձել Հայաստան: Դիմանալով փորձութիւնների եւ մնալով քրիստոնէայ՝ արժանացել է Խոստովանող պատուական մականուանը: Աբրահամը ասորերէնից թարգմանել է արեւելեան վկաներին նուիրուած մի ժողովածոյ, որտեղ նկարագրուած են Շապուհ Բ (310-379) օրօք նրանց կրած տանջանքները: Թարգմանութիւնը կատարուած է ընտիր լեզուով, դա Ե դարի գրական լաւագոյն կոթողներից մէկն է⁷⁸:

²⁸ Տրամախօսութիւն - վիճաբանութեան մէջ տրամաբանական փաստարկներ կիրառելու հմտութիւն, դիալեկտիկա՝ բառի անխնայական իմաստով (հայերէն տերմինը դրա պատճէնում է):

Այդ ժողովածոյից լայնօրէն օգտուել է Եղիշէն, որը եւ Հանդիսանում է մաքառման շրջանի խոշորագոյն գրողը: Մի հին աւանդութիւն է պահպանուել, որի համաձայն Եղիշէն եղել է Վարդան Մամիկոնեանի զինուորը եւ դպրապետը՝ ականատես «ամենայն անցիցն, որ անցին ընդ զօրսն Հայոց ի Յագկերտէ Պարսից արքայէ»: Պատերազմից յետոյ դարձել է կրօնաւոր, մենակեաց Մոկաց աշխարհում, այնտեղ է գրել «Պատմութիւնը»: Ըստ այդ աւանդութեան՝ վախճանուել է Ռշտունիք գաւառում, գերեզմանը դարձել է ուխտատեղի:

«Վարքը» հետեւում է այդ գրատեսակի պարզ կանոններին եւ, անգամ վաւերական լինելով, քիչ բան է աւելացնում մեր գիտցածին: Մինչդեռ նրա պատմական երկից տեղեկանում ենք, որ Ե դարի 40-ական թուականներին նա եղել է Պարսից Ապար աշխարհում, վերադարձել է Հայաստան, ականատես եղել ապստամբութեան անցքերին, հետագայում շփուել պատերազմը վերապարձներից շատերի հետ: Վարքագրական եւ այլ բնոյթի երկերի հեղինակներն իրենց յաճախ են ներկայացնում որպէս նկարագրուած դէպքերի ականատես, մասնակից եւ այլն: Առանձին վերցուած, այդ նշումները կարող են չհամապատասխանել իրականութեանը: Ընդունելով, սակայն, որ Եղիշէն իր «Բան վասն Հայոց պատերազմին» աշխատութիւնը գրել է Ե դարում՝ Ագաթանգեղոսից առաջ, յամենայն դէպս Գրիգոր Լուսաւորչի պաշտամունքի հաստատումից առաջ՝ հիմք չունենք կասկածի ենթարկել այդ երկում եղած կենսագրական տուեալները:

Դժբախտաբար, թէ՛ Աբրահամ Խոստովանողի, թէ՛ Եղիշէի մասին եղած կցկտուր տուեալները հնարաւորութիւն չեն տալիս պատկերացում կազմել նրանց գրական ուղու վերաբերեալ, չնայած մեզ ծանօթ են այդ ուղին անցած հեղինակների բուն աշխատութիւնները:

Բայց երբ մենք դիմում ենք Ե դարի գրասէր մտաւորակաւորութեան երրորդ սերնդին, դրութիւնն անսպասելի փոխւում է: Նկատի ունենք Ղազար Փարպեցուն, որի կենաց ուղին մեզ յայտնի է բազմաթիւ մանրամասներով: Ընդ որում, մենք կարող ենք պատկերացում կազմել ոչ միայն արտաքին հանգամանքների, այլ գրողի ներքին յոյզերի, նրա հասարակական տեսակէտների վերաբերեալ: Այդ առումով գրականութեան պատմութեան, յամենայն դէպս, վաղ շրջանի համար Ղազարին առնչուող կենսագրական տուեալները բացառութիւն են կազմում: Եւ այդ բոլոր տեղեկութիւնները բխում են փաստօրէն մէկ վաւերագրից՝ Վահան Մամիկոնեանին ուղղուած Ղազար Փարպեցու թղթից [Ղազ. Փարպ., էջ 187-204]:

Նամակագրութիւնը հնում առանձին գրական տեսակ էր. այդպիսի նմուշներ կան նաեւ Հայոց գրականութեան մէջ (օրինակ՝ «Գիրք թղթոց»): Պատմիչները յաճախակի իրենց երկերի մէջ էին մտցնում նամակներ՝ վերագրելով դրանք պատմական այս կամ այն դէմքին: ԺԱ դարից մեզ է հասել Գրիգոր Մագիստրոս Պահլաւունու նամականին, որը անսպառ աղբիւր էր թէ՛ քաղաքական, թէ՛ մշակութային կեանքն ուսումնասիրելու համար: Հնում նամակը յաճախակի վերածուած էր գրական երկի, որը լայն շրջանառութեան մէջ էր մտնում: Նամակը գրուած էր հետեւելով որոշ կանոնների, հեղինակը հանդէս է գալիս ոչ միայն որպէս կենդանի անձնաւորութիւն, այլեւ իբրեւ գրական կերպար: Երբեմն անձնականը իսպառ բացակայում է: Ղազար Փարպեցու թուղթը, գրական բարձր արժանիքներից բացի, միաժամանակ շատ մարդկային է. գրական շղարշի տակից պարզ երևում են մեր պատմիչի դիմագծերը, նրա ապրումները յուզում են նաեւ մեզ, մենք սրտատրոփ հետեւում ենք՝ ինչպէ՞ս է ընթանում նրա տառապանքներով լի կեանքը, ի՞նչ ճանապարհով է մօտենում նա իր անմահ փառքին:

«Պատմութեան» մէջ Հեղինակն իրեն անուանում է Ղազար Փարպեցի, ասել է՝ Արագածոտն գաւառի Փարպի գիւղից է: Պէտք է ենթադրել, որ նա Հասարակ ընտանիքի գաւակ է եղել, հակառակ դէպքում կը պահպանէր տոհմանունը, ինչպէս մի շարք ազնուական ծագում ունեցող պատմիչներ՝ Յովհան Մամիկոնեան, Թովմայ Արծրունի, Ստեփանոս Օրբէլեան:

Ենթադրում են, որ Ղազարը ծնուել է 443 թ., գուցէ մէկ կամ երկու տարի առաջ, յամենայն դէպս Վարդանանց ապստամբութեան ժամանակ (450-451) նա դեռեւս մանուկ էր: Դժուար է ասել՝ որքան խորն է ապրել ապագայ պատմիչը բուն դէպքերը, ինչ յիշողութիւն պահպանել դրանց մասին, սակայն ապստամբութեան վախճանից մի քանի տարի յետոյ նա գտնւում էր մի մթնոլորտում, ուր Վարդանանց պատերազմը, նրա ընթացքը, նրա հետեւանքները որոշել էին մարդկանց ճակատագիրը, խառնել նրանց կեանքը, ուստի եւ դիտւում էին անձնական տեսանկիւնից: Ինչպէ՞ս է դա եղել:

Վարդանանց պատերազմի նահատակներից մէկը Հմայեակն էր, Վարդան Մամիկոնեանի եղբայրը: Նրա երեք որդիները՝ Վահանը, Վասակը եւ Արտաշէսը ընկել էին Վասակ Սիւնու ձեռքը, այնուհետեւ իբրեւ պատանդ տարուել էին Տիգրան՝ Պարսից արքունիք: Տղաներից աւագը՝ Վահանը, մեզ յայտնի 482-484 թթ. ապստամբութեան ապագայ հերոսն է, Ղազար Փարպեցու Թղթի հասցէատէրը: 455 թ. Գուգարքի բռնելիս Աշուշային յաջողւում է ազատել երեխաներին եւ բերել իր մօտ, այստեղ նրանք ապաստան են գտնում իրենց մօր՝ Հմայեակի այրի Զուլիկի հետ միասին: Ինքը Աշուշան այն մարդկանցից էր, որոնք ապստամբութիւնից առաջ կանչուել էին Պարսից արքայի մօտ: Նախարաները թոյլտուութիւն ստացան վերադառնալ Հայրենիք, իսկ Աշուշան մնաց որպէս պատանդ եւ, ըստ երեւոյթին, տարիներ յետոյ ազատուեց: Զուլիկը ծագումով Արծրունի էր, Վասակ

Արծրունու դուստրը: Արծրունիներից շատերը եւս նահատակուեցին պատերազմում: Դժուար չէ կռահել, ինչպիսի տրամադրութիւն էր իշխում Աշուշայի տանը, ինչի շուրջ պիտի պտտուէր խօսակցութիւնը, եւ ահա այդ գերդաստանի անդամ է դառնում նաեւ Ղազարը: Թղթում նա իրեն անուանում է Վահան Մամիկոնեանի սննդակից ու խաղակից, Վահանի հետ միասին ստանում է նաեւ նախնական կրթութիւնը: Ասես մանուկ հասակից նա պատրաստ էր շարագրել Վարդանանց ապստամբութեան անցքերը: Եւ իրօք, հետագայում Փարպեցին իր «Պատմութեան» երկրորդ դրուագը ամբողջութեամբ նուիրեց Վարդանանց պատերազմին:

Որոշ ժամանակ անց Ղազարը թողնում է Աշուշայի տունը, սկսում է դասեր առնել Զուլիկի եղբայր Աղան Արծրունուց, նրա ձեռքով էլ դառնում կրօնաւոր⁷⁹:

Փարպեցու կեանքում մի նոր շրջան է սկսւում, երբ հնարաւորութիւն է առաջանում մի քանի տարով գնալ ԲողոմԱտրի մօտ, այսինքն՝ Բիւզանդական կայսրութիւն: Այստեղ նա սովորում է յունարէն, ընթերցում հայրաբանական գրականութիւն, որը կազմում էր ժամանակի աստուածաբանութեան հիմքը, միաժամանակ պարունակում հանրագիտական, փիլիսոփայական, բարոյագիտական, գեղագիտական, տնտեսագիտական գաղափարներ: Բայց յունարէնը ճանապարհ էր պարզում ոչ միայն դէպի քրիստոնէական գիտելիքները. կամայ-ակամայ Ղազարը պիտի հաղորդակից դառնար նաեւ անտիկ, հեթանոս մշակոյթին, որի աւանդոյթները դեռեւս ողջ ու շօշափելի էին Հռոմների երկրում: Հին աշխարհի մնացորդները զգացնել էին տալիս իւրաքանչիւր քայլափոխում, էլ չենք ասում, որ քրիստոնէական մշակոյթը բառիս լայն իմաստով շատ բան էր ժառանգել ու իւրացրել անտիկ մշակոյթից, հեթանոս գաղափարներից:

Ղազար Փարպեցին տոգորուած է յունական գիտութեամբ: Նա երբեք առիթը չի կորցնում ընդգծել այս կամ այն անձնաւորութեան հմտութիւնը յունաբանութեան ասպարէզում. խօսում է Գիւտի կաթողիկոսութեան մասին, ի միջի այլոց նկատում, որ՝ «... էր նա այր լի գիտութեամբ հայովս եւ առաւելեալ յունիւն»: Երիտասարդ տարիներին Մաշտոցը սովորել էր յունարէն, պնդում է նա, հետեւելով Մաշտոցի կենսագիր Կորիւնին, նշանագրերը ստեղծողը լաւ գիտէր յունարէն, սակայն երբ պէտք էր թարգմանել Սուրբ Գիրքը, Մաշտոցն ու իր շրջապատը դժուարութիւնների հանդիպեցին եւ դիմեցին Սահակ Պարթեւին: Որքան էլ Ղազարը պաշտի Մաշտոցին, մեր հեղինակի ուշադրութեան կենտրոնում է Սահակը՝ ամէն ինչում կատարեալ, յատկապէս՝ յունագիտութեան մէջ:

Իր մասին պատմիչը համեստ է արտայայտում՝ հնարաւորութիւնների սահմաններում սովորել է յունարէն, տկարամտութիւնը յաղթահարելու համար կարդացել գրքեր, բայց արդէն գրքերի պատկառելի ցանկը, որը նա բերում է իր թղթում, ցոյց է տալիս, որ նա վարժ յունագէտ է եղել: Ի դէպ, ինչպէս ճիշտ նկատել է Մանուկ Աբեղեանը, Ղազար Փարպեցին առաջին հեղինակներից է, որոնք սկսում էին յունարէնի նմանութեամբ հայերէն նոր բառեր ձեւել, հարստացնելով մեր լեզուի բառապաշարը, հնարաւոր դարձնելով ամենաբարդ, ամէնից նուրբ հասկացութիւնների թարգմանութիւնը:

Նոր գիտելիքներով զինուած՝ Ղազարը վերադառնում է Հայաստան: Կամսարական եղբայրների կողքին լինելով, մասնակցում է նաեւ Սասանեան իշխանութեան դէմ մղուած 482-484 թթ. պատերազմին, այնուհետ որոշում նուիրուել ճգնութեան (հոգեւորականի համար դա սովորական քայլ էր): Քաշուում է Սիւնիք, այնտեղ մնում 2 տարի, ձմեռն անց է կացնում քարայրում, Մովսէս կրօնաւորի մօտ, իսկ ամառը Ղազարին իր

մօտ է տանում Սիւնիքի եպիսկոպոս Մուշէն: Այստեղ էլ նրան գտնում է մարզպան դարձած Վահան Մամիկոնեանը, տեղափոխում Վաղարշապատ եւ նշանակում Կաթողիկէ եկեղեցու վանահայր:

Այն ժամանակուայ Կաթողիկէ եկեղեցին վատ վիճակում էր գտնուում. 484 թ. Վահան Մամիկոնեանը նորոգում է «իր նախնիների հնացեալ կառուցուածքը», սակայն անհաստատ շինուածքը Ղազարի օրօք եւս մի քանի անգամ վնասում է (ըստ յետին տեղեկութեան⁸⁰, Փարպեցու թշնամիները շէնքը կրակի են տուել): Այնուամենայնիւ, նա ջանք չի խնայում Կաթողիկէ եկեղեցին ու վանքը բարուք վիճակում պահելու համար, եւ առատ նուիրաբերութիւնների շնորհիւ վանքը պայծառանում է: Շատերի կողմից Ղազարը սէր ու յարգանք է վայելում, նրա գիտելիքները ճանաչում են գտնում, բայց միաժամանակ աճում է նաեւ թշնամիների նախանձը: Բարգէն կաթողիկոսը, որին դիմում է նա, այդ հարցում ձեռնպահ է մնում: Մամիկոնեանների հովանաւորութիւնը չի փրկում նրան, յուսահատ լքում է հայրենիքը եւ տեղափոխուում Միջագետքի Ամիդ քաղաքը (այժմեան Դիարբեքիր): Փարպեցին Ամիդից Վահան Մամիկոնեանին է ուղղում իր թուղթը. մարզպանը կրկին կանչում է նրան իր մօտ ու յանձնարարում գրել Հայոց պատմութիւնը:

Չարիքների պատճառը Ղազարը համարում է ստախօս արեղանների նախանձը: Պէտք է ընդգծել, որ թղթում, ինչպէս նաեւ մի շարք այլ բնագրերում, Ասխաւան բառը չի նշանակում սոսկ տխրութիւն, սրտնեղութիւն, չար զգացմունք, որ մարդ ունենում է տեսնելով միւսի բարուք վիճակը, որից ինքը զուրկ է (այդ հասկացութիւնը նման կերպ մեկնաբանել է դեռեւս Արիստոտելը): Նախանձն այստեղ ոչ միայն սրտնեղութիւն է, այլեւ

չարութիւն, յիսակալութիւն, որը դրդում է նախանձողին դիմել ստոր քայլերի:

Մանուկ Աբեղեանը մանրամասն վերլուծել է Թուղթը, ցոյց է տուել, որ արեղաների նախանձը առաջացել է ոչ թէ անձնական, այլ հասարակական հողի վրայ, նա իրաւացիօրէն մերժում է այն տեսակէտը, որ, իբր, Ղազար Փարպեցու հակառակորդները պատկանել են ասորական հոսանքին: Իրօք, այդ շրջանում ասորական ուղղափառ, ոչ նեստորական եկեղեցին Հայաստանում արդէն զրկուել էր իր դիրքերից: Մ. Աբեղեանն առաջ է քաշում իր տեսակէտը՝ բախում էր տեղի ունենում երկու կողմնորոշումների՝ պարսկականի եւ ազգայինի՝ Հայկականի միջեւ (այս տեսակէտի սկզբնաւորողը, փաստօրէն, Ն. Մառն է): Յունասէրների եւ նրանց հակառակորդների ընդհարումը, որը սկիզբ է առնում Մաշտոցի եւ Սահակի օրօք, Ե դարի երկրորդ կեսին վերածում է «յունական գիտութեան սիրող ազգայինների ու պարսկասէրների» կռուի: Որ Ղազարի կողմից յիշատակուած յունասէրները իրօք ազգային են եղել, դա փաստ է, հակառակ դէպքում պիտի ենթադրենք, որ Փարպեցու պէս հայրենասէր գրողը կարող է դրուատել նրանց լոկ գիտելիքների համար: Միւս կողմից իր հակառակորդների մասին խօսելիս Թղթի հեղինակը երբեք չի մեղադրում նրանց կարծեցեալ պարսկասիրութեան մէջ: Հայրենասէր կարող է լինել նաեւ տգէտը. ուրիշ բան է, թէ ինչ օգուտ է բերում տգէտ հայերնասիրութիւնը:

Ե դարում հայ մշակոյթն ապրում է աննախընթաց վերելք, գլուխ է բարձրացնում նորածնունդ ազգային մտաւորականութիւնը, որը ոչ միայն խօսում, այլեւ գրում ու կարդում էր հայերէն: Միաժամանակ նա հաղորդակից է եղել նաեւ յունական գիտութեան, դրա շնորհիւ անսահման լայնացրել մտահորիզոնը: Այդպիսին էր Մաշտոցի ու Սահակի շրջապատը, այդպիսին էր ինքը՝ Ղազար Փարպեցին: Կարելի է կռահել, որ այդպիսին են

եղել նրա կողմից յիշատակուած Մովսէս փիլիսոփաւը, Խոսրովիկ Թարգմանիչը եւ միւսները (որոնք եւս Ասխաճի զոհ գնացին): Հոգեւորականութեան մէջ մտաւոր հողի վրայ շերտաւորում էր առաջացել: Դժուար չէ պատկերացնել, թէ այդ տգէտ կոչուող արեղաները ինչպէս պիտի տրամադրուած լինէին Ղազար Փարպեցու պէս գիտուն մարդու նկատմամբ: Էլ չենք ասում, որ Կաթողիկէ եկեղեցու առաջնորդի պաշտօնը շատ բարձր է դասուել, կապուած է եղել բազմաթիւ արտօնութիւնների եւ եկամտի հետ, եւ այն հանգամանքը, որ Ղազարն է գրաւում այդ պաշտօնը, ինքնին պիտի նախանձ արթնացնէր: Բացի այդ, նրա հասակն էլ չէր համապատասխանում այդ պաշտօնին. դա էլ էր զայրոյթի առիթ դառնում. «մանուկ մի հոգաբարձ տեղւոյն չկարէ առնել», բողոքում էին նրանք: Ղազարին տապալելու համար ի՛նչ մեղք ասես չէին փաթաթում նրա վզին. աղանդաւոր է՝ պոռնկութիւնը մեղք չի համարում, վանքում հովանաւորում է պիղծ ու չարագործ մարդկանց, իւրացնում է վանքի եկամուտն ու նուիրաբերութիւնները: Առաջ, ասում էին, նա իրօք գիտնաբար էր խօսում, այժմ՝ անգիտաբար, եկեղեցում Սուրբ Գրքի հատուածները անսայթաք է արտասանում, բայց գրին չի հետեւում: Անգերազանց ճարտասան Ղազարը վարպետօրէն ջրում է այդ ամբաստանութիւնները, ընթերցողի աչքում մերկացնելով իր հակառակորդներին: Հայածուած լինելով՝ նա բարոյական մեծ յաղթանակ է տանում համախմբուած տգէտների դէմ, բայց դա չէ ամէնից կարեւորը:

Ընդհանուր, ինչպէս նաեւ Հայոց պատմութիւնից գիտենք բազմաթիւ դէպքեր, երբ լուսաւոր անձինք հալածանքի են ենթարկուում իրենց գիտելիքների համար: Փարպեցու կեանքն այդ տխուր օրինաչափութեան նմուշներից մէկն է: Առաւել կարեւորն այստեղ այն է, որ նա ոչ միայն յաղթանակ է տանում իր հակառակորդների նկատմամբ, այլեւ պաշտպանում մարդկային ար-

ժանապատուութեան գաղափարը: Քրիստոնէական բարոյագիտութեան մէջ մեծ տեղ է գրաւում այն դրոյթը, որ մարդ պիտի խոնարհուի Աստծոյ առջեւ ու անընդհատ նուաստացնի իրեն: Իր դարաշրջանի հաւատարիմ գաւակ, քրիստոնէական գաղափարի ջատագով ու պաշտպան Ղազարն, անշուշտ, ենթարկւում է այդ կտրուկ պահանջին: Տարիներ յետոյ ձեռնամուխ լինելով «Հայոց պատմութեանը» նա առաջաբանում նշել է, որ յանձն առաւ այդ գործը՝ գիշերով Վահան Մամիկոնեանին: Վերջինս բռնադատեց հեղինակի տկարութիւնը, ստիպեց նրան անցնել մի գործի, որը նրա գիտութիւնից վեր է: Մեր մատենագիտութեան մէջ պահպանուել է նուաստացուցիչ մակդիրների մի ամբողջ շարան: Հետեւելով դարաշրջանի բարոյական թելադրանքին՝ մատենագիրները, ձեռագիր մատենանների գրիչներն ու ծաղկողներն իրենց անուանում են տրուպ, ստոր, անպիտան, չնչին եւ այլն, մինչդեռ իրականում այդ «անպիտաններն» ու «անարհեստները» կարող են լինել ակնաւոր գրողներ ու նկարիչներ²⁹: Ենթարկուելով ժամանակի թելադրանքին, հետեւելով յատուկ գրական վարուելակերպի՝ Ղազար Փարպեցին այս հարցում ոչնչով չի դրսեւորում իր խառնուածքի իւրայատկութիւնը: Բայց իր «ոչնչութեան» մասին խօսում է ի միջի այլոց եւ միաժամանակ առաջին իսկ էջերից բարձրաձայն յայտարարութիւն է անում իր արժանիքների մասին: Յիշեցնում է, որ այդպիսի վարմունքը մեղք չէ. անգամ Պօղոս առաքեալը, կարծես խախտելով Քրիստոսի կանոնները, թուարկում է իր բարի յատկութիւնները եւ արարքները, եւ դա չի խանգարել նրան շարունակել իր առաքելական ծառայութիւնը: Եթէ Ղազարը, ինչպէս ինքն է ա-

²⁹ Երբեմն ասում են, որ Գման ածականներն իբր վկայում են մարդկանց համեստութեան մասին: Դա Գշաճակում է բոլորովին չըմբռնել քրիստոնէայ միջնադարի ոգին:

սում, «անզգամ» է, ապա նա հետեւում է Պօղոսի օրինակին, եւ թող Վահանը ընդունի նրան որպէս «անզգամի»:

Թղթի հեղինակը այնուհետեւ համառօտ նկարագրում է իր կեանքը՝ սկսած մանկութիւնից, շարունակ ընդգծելով, որ նա այսպէս թէ այնպէս հաւասար է Հայոց մարզպան Վահան Մամիկոնեանին: Մարզպանին է դիմում այն Ղազարը, որին ե՛ւ հասցէատէրը, ե՛ւ միւսները իր գիտելիքների շնորհիւ համարել են անփոխարինելի՝ «որում ոչ գոյ փոխանակ»: Այժմ, երբ նախանձի հետեւանքով ինքը հալածանքի է ենթարկւում, շատերը կը ցանկանային նրա տեղը գրաւել, բայց արդեօք ի վիճակի՞ են:

«Դու գտար ինձ Սիւնիքում ու բերիր քո տունը, — յիշեցնում է նա մարզպանին, — ոչ իբրեւ աղքատ, ոչ էլ իբրեւ որեւէ մէկի ծառայ: Մենք կրօնաւորներս ազատ ենք Քրիստոսի անունով: Ես կրօնաւոր եմ դարձել՝ ձեռնադրութիւն ընդունելով քո քեռի տէր Աղանից, ուրեմն, — եզրակացնում է Ղազարը, — այս առումով եւս հաւասար եմ քեզ»: Այնուհետեւ նա յիշեցնում է իր ու Վահանի մանկութեան տարիները: Ծիշտ է, Վահանի սննդակիցն ու խաղակիցը լինելով՝ խաղի ժամանակ կրել է ապագայ մարզպանի հագուստը³¹, բայց չէ որ Ձուիկը եւ նրա քոյրը՝ Անուշ-Վռամը, Ղազարին սնուցել են Վահանի հետ հաւասար. ուրեմն այստեղ եւս Փարպեցին իրեն հաւասարեցնում է Վահան Մամիկոնեանին: Եւ նա արժանի է այդպիսի հաւասարութեան. չէ՞ որ նա առաւել շնորհների տէր է:

Այդ շնորհները նրա գիտելիքներն են: Երբ պատուաւոր մէկը ցաւում է, որ Ղազարին վանել են, որ անիրաւացի է եղել այդ քայլը, Ղազարը եկեղեցու դարդն է, ապա նրան պատասխան են տալիս՝ առաջներում նա իրօք մեծ գիտութեան տէր էր, սակայն հիմա այլեւս համեղ ու զօրաւոր խօսքեր չի արտասանում, վատ է խօսում: Հակառակորդները, կարծես, պայմանաւոր-

րուել էին՝ պնդելով, թէ Ղազարի արժանիքները չքացել են: Թէ որքան անարդարացի են եղել այդ խօսքերը, կարելի է դատել՝ ելնելով թէկուզ Փարպեցու «Պատմութիւնից», որը գրուել է Թղթից յետոյ: Լինելով մեծ մտքի տէր՝ պատմիչը զգացել է իր մեծութիւնը, գիտակցել, թէ որքան բարձր է ինքը շարքային հոգեւորականներից: Նրան ստիպում են լքել վանքը՝ թողնելով այնտեղ իր ամբողջ ունեցուածքը՝ «անգամ հոռոմ (այսինքն՝ յունարէն) գրքերը ինձ չտուին, այժմ այնտեղ վայր են ընկած, դառնալով ցեցի կերակուր»: Այս դիտողութիւնը կենսագրական փաստ է. մատենագիրը պարզ կերպով ցոյց է տալիս, որ նրա ձեռքին գրքերը երբեք ցեցի կերակուր չէին դառնայ, ամենաշատը՝ անընդհատ կարդալուց կը մաշուէին:

Արդէն ասացինք, որ Ղազար Փարպեցու Թուղթը բացառիկ տեղ է գրաւում հայ գրականութեան պատմութեան մէջ: Նա մեզ ծանօթացնում է Ե դարի մտաւորականի հոգեկան աշխարհին, ցոյց տալիս, թէ որքան բարդ ու հարուստ է եղել այդ աշխարհը եւ ինչպիսի ուժով է արտայայտուել գրական երկում:

Պատահական չէ, որ Ղազար Փարպեցու Թուղթը գրուել է Միքայէլ Նալբանդեանի առանձնակի ուշադրութիւնը: 1862 թ. Պետերբուրգի Պետրոպաւլովեան բերդի խոնաւ մի խցում նա, ասես փարատելով իր ցաւերը, աշխարհաբար է թարգմանել ու ծանօթագրել այդ Թուղթը⁸²:

ՎԵՐՏԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Առաջարկում իսկ արդէն նշուել է, թէ ինչպիսի մեծ տեղ է գրաւում Ե դարը Հայոց պատմութեան եւ քաղաքակրթութեան զարգացման մէջ: Յուսով եմ, որ ասարտելով գիրքը՝ ընթերցողը կրկին անգամ կը համոզուի դրանում:

ՅԱՊԱԻՈՒՄՆԵՐ

Ագաթ. - Ագաթանգեղայ Պատմություն Հայոց, աշխատութեամբ՝ Գ. Տէր-Մկրտչեանի եւ Ստ. Կանայեանցի, Տփղիս, 1909

Բեշ - Բանբեր Երեւանի համալսարանի

ԲՄ - Բանբեր Մատենադարանի, Երեւան

ԳԹ - Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901

Եղ. - Եղիշէի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, ի լոյս ածեալ բաղ-դատութեամբ ձեռագրաց, աշխատութեամբ Ե. Տէր-Մինասեանի, Երեւան, 1957

Կան. - Կանոնագիրք Հայոց, աշխատասիրութեամբ Վազգէն Յակոբեանի, Ա-Բ Երեւան, 1964-1971

Կոր. - Կորիւն, Վարք Մաշտոցի, բնագիրը՝ ձեռագրական այլ ընթերցուածնե-րով, թարգմանութեամբ, առաջաբանով եւ ծանօթագրութիւններով ի ձեռն պրոֆ. զոկտ. Մանուկ Աբեղեանի, Երեւան, 1941

ՀԱ - Հանդէս ամսօրեայ, Վիեննա

Ղազ. Փարպ. - Ղազար Փարպեցոյ Պատմություն Հայոց եւ Թուրք առ Վահան Մամիկոնեան, աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեանի եւ Ստ. Մալխասեանի, Տփղիս, 1904

ՄՀ - Մատենագիրք Հայոց, Ա-Բ, Անթիլիաս-Լիբանան, 2003

Մով. Դասիս. - Մովսէս Կաղանկատուացի, Պատմություն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը եւ ներածութիւնը՝ Վ. Առաքելեանի, Երեւան, 1983

Մով. Խոր. - Մովսէս Խորենացի, Պատմություն Հայոց, քննական բնագիրը եւ ներածութիւնը՝ Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, նմանահանութիւնը եւ լրացումները Ա. Բ. Սարգսեանի, Երեւան, 1991

ՊԲՀ - Պատմա-բանասիրական հանդէս, Երեւան, 1958

Սամ. Ան. - Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքունք ի գրոց պատմագրաց յաղագս գիտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արա-րեալ՝ յառաջաբանով, համեմատութեամբ, յաւելուածներով եւ ծանօթութիւն-ներով Արշակ Տէր-Միքէլեանի, Վաղարշապատ, 1893

Սեբ. - Պատմություն Սեբէոսի, աշխատասիրութեամբ՝ Գ. Վ. Աբգարեանի, Երե-ւան, 1979

Փաւ. Բուգ. - Փաւստոսի Բիզանդացոյ Պատմություն Հայոց ի չորս դպրու-թիւնս, Վենետիկ-Ս. Ղազար, 1933

KB - Кавказ и Византия, Ереван

REA - Revue des Etudes Arméniennes, nouvelle série, Paris

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Գլուխ Ա

- 1 Ս. Տ. Երեմեան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի», Երեւան, 1963, էջ 66: Վերջերս շրջանառութեան մէջ է մտել յուշարձանի մի նոր յաջողուած հրա-տարակութիւն՝ The Geography of Ananias of Sirak (Աշխարհացոյց). The Long and the Short Recensions. Introduction, Translation and Commentary by Robert H. Hewsen, Wiesbaden 1992 (Beihefte zum Tübinger Atlas der vorderen Orients; Reihe B, Nr. 77): Ի տարբերութիւն Երեւանի հրատարակութեան, որտեղ Աշխարհացոյցի երկու խմբագրութիւնները արհեստական եղանա-կով ենթարկուել են ձուլման, այստեղ նրանք, համաձայն գրատր աւանդոյ-թի, ներկայացուած են առանձին տարբերակներով:
- 2 Բ. Ուլուբաբեան, Հիւսիսարեւելեան Հայաստանի նախամարզպանական շրջանի վարչա-քաղաքական վիճակի հարցի շուրջը, Բեշ, 1975, թիւ 2. Բ. Յարութիւնեան, Մեծ Հայքի թագաւորութեան հիւսիսարեւելեան մարզերի վարչա-քաղաքական կացութիւնը 387-451 թթ., Բեշ, 1976, թիւ 2:
- 3 Տրդատի մասին խօսում են մի շարք յոյն եւ լատին պատմիչներ, նրանց թուով՝ Տակիտոսը, Յովսէպոս Փլաիտոսը, Դիոն Կասիոսը, Հայաստանին առնչող հատուածները թարգմանուած են հայերէն. տե՛ս մասնաւորապէս՝ Տակիտոս, քաղեց եւ լատիններէնից թարգմանեց Պ. Ստոնիկեան, Երեւան, 1941. Յովսէպոս Փլաիտոս, Դիոն Կասիոս, թարգմանութիւն բնագրից, ա-ռաջաբան եւ ծանօթագրութիւններ Ս. Մ. Կրկեաշարեանի, Երեւան, 1976 (Օտար աղբիւրները Հայաստանի եւ հայերի մասին.- Հին յունական աղ-բիւրներ, հտ. Ա):
- 4 Մծրիւնի պայմանագիրը ստորագրուած է եղել ոչ թէ 298 թ., ինչպէս նշում էր մինչեւ վերջին ժամանակներս, այլ յաջորդ՝ 299 թ.: Հէնց այս թուականից էլ պիտի հաշուենք Տրդատ Մեծի գահակալութիւնը: Գրականութեան մէջ նա յայտնի է որպէս Տրդատ Երրորդ: Սակայն հիմք կայ ենթադրելու, որ գուցէ նա եղել է Զորորդը, եւ նրանից առաջ Հայաստանում իշխել է ոչ թէ նրա Խոսրով Բ հայրը, այլ Տրդատ Գ հորեղբայրը: Կ. Թումանովի կարծի-քով, հէնց նա է յիշատակուած Պալկուլիում գտնուած պարսկերէն յայտնի արձանագրութեան մէջ. միւսների հետ միասին Տրդատը ողջունում է շա-հանշահ Ներսէսի՝ Պարսից զաֆ բարձրամայր (տե՛ս С. Toumanoff, The third-century Arsacids, REA, t. VI, 1969, էջ 257):
- 5 Ըստ Գ. Մուրադեանի՝ այդ բառը կարող էր փորագրուած լինել Գառնիի յու-նարէն արձանագրութեան վնասուած մասում. տե՛ս Գ. Մուրադեան, Գառ-նիում յայտնաբերուած յունարէն արձանագրութիւնը, ՊԲՀ, 1981, թիւ 3, էջ 89:

- 6 Կարծիք կայ, սակայն, որ վաւերագրի մէջ սխալներ են սպրդել. իրապէս Միւնեցիները ունեցել են միայն 9.400 զօրական, Կարմեացիները՝ 3.200: Ուղղումը թւում է տեղին, տարբերութիւնը միւս թուական տուեալներից շատ է աչքի ընկնում:
- 7 *Հմմտ.* The Book of a Bousand Judgements (a Sasanian Law-Book), ed. by A. Perikhanian, transl. from Russian by N. Garsoian, Mazda Publishers, 1997, էջ 342, *āzāt pwaht* տակ:
- 8 Յովսէփ Օրբէլու կարծիքով, արարողութեան ժամանակ այդպիսի մեծ դեր կատարող բարձերն են դրոշմուած սասանեան շրջանի այն ոսկէ սկուտեղի վրայ, որն այժմ պահուում է Պետերբուրգի Էրմիտաժ թանգարանում: Իսկ երբ 1911-1912 թթ. գիտնականը այցելել էր պատմական Մոկս անահանգը, ապա նման առարկաներ նա տեսել էր տեղացի Մորթոյլա քուրդ բէկի տանը. այստեղ էս բարձը եղել է պատուի խորհրդանշան՝ մի մնացուկ, որը պահպանուել էր հնագոյն ժամանակներից: **И. А. Орбели, Фольклор и быт Мокса**, Москва, 1981, стр. 33-34: *Избранные труды*, т. II, сост. и ред. П. М. Мурадян, Ереван, 2002, стр. 15.
- 9 Օգտուում ենք Երուանդ Տէր-Միհնատեանի աշխարհաբար թարգմանութիւնից. տե՛ս *Եղիշէի Վարդանանց պատմութիւնը*, թարգմանութիւնը եւ ծանօթագրութիւնները՝ պրոֆ. Ե. Տէր-Միհնատեանի, Երեւան, 1958:
- 10 Բերուած տեղեկութիւնները քաղում ենք Օահայիվանի եկեղեցական ժողովի կանոններից: Ժողովը գումարուել է Ե դարի 40-ական թուականների կէսերին, ուստի նրա որոշումները արտացոլում են այն իրադրութիւնը, որը ստեղծուել էր Վարդանանքի նախօրէին:
- 11 Գրականութեան տեսութիւնը եւ հարցի լուսաբանումը տե՛ս **Գ. Սարգսեան, Հին Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման ուղիների մասին**, Երեւան, 1962:
- 12 Այս օրինակը վերցուած է Անանիա Օիրակացու *Յաղագս հարցման եւ լուծման* թուարբանութեան դասագրքից: Ներսէն Կամսարականը 482-484 թթ. ապստամբութեան մասնակիցներից է. սոյն աշխատութեան Գ գլխում նրա մասին կը խօսենք հանգամանօրէն:
- 13 Աւելացնենք նաեւ, որ *մարքսիստ-լենինեան* գիտութեան կարգում ստրկատիրական հասարակութեան ճանաչումը, որպէս այդպիսին, պարտադիր պահանջներից մէկն էր, եւ այդ պայմանը չէին կարող անտեսել ուսմունքի սահմաններում գործող գիտնականները:
- 14 **Ս. Տ. Երեմեան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի**, էջ 91-99
- 15 **Б. Аракелян, Гарни I (Ք. Առաքելեան, Գառնի I)**, Երեւան, 1951, էջ 25-26
- 16 Մանրամասն տե՛ս **Հ. Պ. Տէրբատեան, Հայաստան, թե՛ Հրէաստան**, ՀՍ, 1910, սիւն. 321-324. տե՛ս նաեւ՝ **Bruce M. Metzger, A Textual Commentary on Greek New Testament, Second Edition. A Companion Volume to the United**

- Bible Societies' Greek New Testament (Fourth Revised Edition), Deutsche Bibelgesellschaft, United Bible Societies, 1975, էջ 253-254:
- 17 Նախալուսատրչական շրջանի մասին տե՛ս մասնատրպաւէս՝ **Հ. Պ. Անանեան, Քրիստոնէութեան հետքերը Հայաստանի մէջ** և *Գրիգոր Լուսատրչի քարոզութենէն առաջ (պատմական ուսումնասիրութիւն)*, Վենետիկ-Ս. Ղազար, 1979:
- 18 **Երուանդ վրդ. Տէր-Միհնատեանց, Հայոց եկեղեցու յարաբերութիւնները Ասորոց եկեղեցիների հետ**, Վաղարշապատ-Ս. Էջմիածին, 1908, էջ 32-34 (տպաքանակը մասամբ բազմացուել է 1990-ական թթ.): Հրապարակուած լինելով Ի դարի սկզբին՝ այդ գիրքը, ինչպէս նաեւ նրա գերմաներէն տարբերակը (*Die armenische Kirche in ihren Beziehungen zu den syrischen Kirchen*, Leipzig, 1904) մինչեւ օրս պահպանել են իրենց գիտական արժէքը:
- 19 *Կաթողիկոս* (յունարէ՛ն՝ *ընդհանուր*) անուանումը վերաբերել էր եկեղեցու ստաշին դէմքին:
- 20 Ժամանակին ականատր բանատր Գալուստ Տէր-Մկրտչեանը (Միաբանը) կարծիք էր յայտնել, թէ Տիմոթէոս Կուզի ասորերէն գրուած յոյժ հակաքաղկեդոնական աշխատութիւնը, որը կոչում է *Հակամատութիւն*, հայերէն է թարգմանուել 480 թ. փետրուարի 29-ից 484 թ. փետրուարի 28-ի արանքում («Արարատ» ամսագիր, 1908, էջ 564-589. տե՛ս նաեւ՝ **Գալուստ Տէր-Մկրտչեան, Հայագիտական ուսումնասիրութիւններ**, գիրք Ա, Երեւան, 1979, էջ 388 եւ յաջորդք): Եթէ այդ երկի ժամանակը ճիշտ լինէր որոշուած, ապա ստիպուած կը լինէինք թուագրել Հայ եկեղեցու բացայայտ հակաքաղկեդոնականութիւնը հենց այդ շրջանով: Սակայն Երուանդ Տէր-Միհնատեանը համոզիչ կերպով առարկեց այդ կարծիքի դէմ՝ վերադարձնելով Տիմոթէոս Կուզի հայերէն տարբերակը իր իսկական տեղը, այն է՝ Զ դարի կէսերը: Ե. Տէր-Միհնատեանի պատասխանը տե՛ս նրա «Պատմա-բանասիրական հետազոտութիւններ» ժողովածոյում (Երեւան, 1971, էջ 394-410):

Գլուխ Բ

- 1 Տանտիկիւնների մասին *Կանոնագրքում* ասուած է. «Եպիսկոպոս ոք կամ երէց կամ սարկաւագ կամ ով եւ իցէ ի պաշտունէից կամ յովստէ, տանտիկիւն կին գոք մի՛ իշխեսցէ ունել, որպէս եւ սովորութիւն է մձոնէից...» [Կան., հտ. Ա, էջ 450. 6-8]: Կանոնական իրաւունքին համաձայն՝ կուսակրօն հոգեւորականի տանը կարող էին մնալ միայն տատը, մայրը եւ քոյրերը. Կան., հտ. Բ, էջ 62.8, 73.6:
- 2 Այդ աղանդի մասին տե՛ս **Ե. Տէր-Միհնատեան, Միջնադարեան աղանդների ծագման եւ զարգացման պատմութիւնից**, Երեւան, 1968, էջ 73-85:
- 3 Է դարում ապրած ոմն Եգնակ երէց գոյացած վիճակը մէկ բառով կ'անուանի *օտարակալութիւն* [Սամ. Ան., էջ 267]: Օտարակալութիւնը շարունակուելու է մինչեւ 886 թ., երբ զան կը բարձրանայ Բագրատունի

- առաջին թագաւորը՝ Աշոտ Ա, իսկ նրա պետութեան պաշտօնական անունը կը լինի նոյնը, ինչ որ եւ Արշակունիներինը՝ *Մեծ Հայք*:
- 4 Այսինքն՝ Պարսից արքունիքի Տիգրան մայրաքաղաքում:
 - 5 Հմմտ. Հ. Աճառեան, *Հայոց անձնանունների բառարան*, հտ. Գ, էջ 336:
 - 6 *Մարզպան* եզրի մասին տե՛ս **Ա. Կ. Колесников**, *О термине «марзбан» в Сасанидском Иране*, «Палестинский сборник», в. 27(90), 1981.
 - 7 Հայոց ինքնավարութեան խնդրի շուրջ արտայայտուել են մի շարք ուսումնասիրողներ: Այժմ տե՛ս **К. Н. Юзбашян**, *Армянские государства эпохи Багратидов и Византия. IX-XI вв.*, Москва, «Наука», 1988, гл. I: *Самоуправление армян в условиях персидского, византийского и арабского владычества*.
 - 8 363 թ. պարսկա-հռոմէական պատերազմից յետոյ Մծբինը գտնուում էր Պարսից պետութեան կազմի մէջ, մինչդեռ Եղիշէն գրում է, որ Յազկերտը «հարուածեց մինչեւ Մծբին քաղաքը»: Այդ հարցը դեռեւս բաւարար կերպով չի բացատրուած: Ե. Տէր-Մինասեանը ենթադրում է, որ այդ հատուածը յետին ընդմիջարկութիւն է, բայց ինչպէ՞ս պատճառաբանել այդ յաւելումը: Հնարատր չէ՞, արդեօք, ենթադրել, որ սկզբնապէս բնագրում մի այլ տեղանուն է եղել, որն աղճատուելով դարձել է *Մծբին* (հմմտ. նաեւ Մով. Խոր., Գ, 67):
 - 9 Այդ տուրքերի մասին տե՛ս **Թ. Աւդալբեգեան**, *Հայագիտական հետազոտութիւններ*, Երեւան, 1969, էջ 362-413:
 - 10 Տաճարը արձանագրութեան հետ միասին այլեւս գոյութիւն չունի:
 - 11 Այսպիսով, ամէն մի ընտանիք, ի նշան իր բարեպաշտութեան, պարտաւոր էր *կապիճով* (յատուկ չափ է) մոխիր ներկայացնել:
 - 12 Հրովարտակը նկատի ունի այն տարին, որը հայերի մօտ սկսուել է 450 թ. օգոստոսի 5-ին. պարսից նոյն տարին սկսուել ու աւարտուել է 5 օր առաջ:
 - 13 Հայերի մօտ վեցերորդ ամիսը կոչուել է *Արաց*, իսկ պարսիկների մօտ՝ *Շահրեւար*:
 - 14 **Ս. Երեմեան**, *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի*, քարտէզ, Գ 5
 - 15 Խօսքը Աղուանքում Պարսից զօրքի դէմ Վարդան Մամիկոնեանի տարած յաղթանակի մասին է. տե՛ս ստորեւ:
 - 16 Ժամանակագրական հարցերի վրայ յատուկ կանգ է առնում Մաղաքիա Օրմանեանը: Գիտնականի կարծիքով, կրօնական տոմարը Պարսկաստանում, ի տարբերութիւն քաղաքականի, պարբերաբար ուղղուել է: 411 թ. նահանջ ամիս է անելացուել, պարսից տարեմուտը համընկել է մարտի 21-ի գարնանային գիշերահաւասարին: Որպէս հետեւեանք՝ 450 թ. տարին սկսուել է մարտի 12-ին, չորրորդ ամիսը՝ յունիսի 10-ին, վեցերորդը՝ օգոստոսի 9-ին: Ընդհանուր առմամբ, այդ թուերը շատ լաւ են համընկնում Վարդանանքի ողջ ժամանակագրութեանը, սակայն Մ. Օրմանեանի ելակէտը խախտու է. աղբիւրներում եղած տուեակներով չի կարելի ապա-

- ցուցել, որ հէնց 411 թ. կրօնականը ենթարկուել է ուղղման: Բացի այդ, մեր գիտելիքները կրօնական տարբերակի մասին շատ անորոշ են եւ, վերջապէս, եթէ այն իրօք գործել է այդ կերպ, ինչո՞ւ պիտի քաղաքական քայլը թուագրուէր այդ տոմարով, եթէ վերջինս կիրառուել է միայն ծիսակատարութիւնների ժամանակները որոշելու համար (տե՛ս Մ. Օրմանեան, *Ազգասպասում*, Կոստանդնուպոլիս, 1912, սիւն. 357-359):
- 17 Եղիշէն մի ընդարձակ ճառ է յօրինում, որը մոգպետն իբր ուղղած է եղել Վասակին: Վերջին տեղեկութիւնը քաղում ենք այդ ճառից [Եղ., էջ 59-63]:
 - 18 *Փշտիպանները* կամ *փուշտիպանները* կազմել են թիկնապահների մի առանձին զօրամաս. նրանց ներկայութիւնը Հայոց երկրում ցոյց է տալիս, որ մոգերի գործունէութիւնը պիտի յատուկ ապահովուած լինէր:
 - 19 Ղազար Փարպեցին գրում է, որ Վարդանն իր հետ վերցրեց նաեւ մարդպետական այրուձիի կազմի մէջ մտնող ջոկատներ. ստացում է, որ Արշակունեաց շրջանում ստեղծուած մարդպետական գունդը իր գոյութիւնը պահպանել էր նաեւ մարզպանների օրօք [Ղազ. Փարպ., էջ 64. 9]:
 - 20 Վաւերագիրն իսկագրի տպատրութիւն է թողնում. Եղիշէն հաւանաբար վերաշարադրել է այն՝ պահպանելով էութիւնը:
 - 21 Մինչեւ Ոսիքի՝ Աղուանից թագաւորութեանն անցնելը այդ քաղաքը եղել է Հայոց թագաւորների ձմեռոցը [Ազգաբ., գլ. 28]:
 - 22 Տե՛ս Եղ., էջ 93-94:
 Ղազար Փարպեցու համաձայն՝ Վասակը նամակներ է գրել կայսրին, Աղձնիքի բղէշխին, Անգղե տան, Ծոփսաց, Հաշտեհից, Եկեղեաց եւ այլ գաւառների իշխաններին (նշում հասցէները կայսրութեան սահմաններում են եղել): Եղիշէի ցուցակը այլ է, բայց այդ չէ էական տարբերութիւնը: Ըստ Եղիշէի՝ Վասակը այդ նամակագրութիւնը ձեռնարկեց այն շրջանում, երբ պառակտումը դարձել էր իրականութիւն: Իսկ ըստ Ղազար Փարպեցու՝ Վասակը գործում է բոլորովին այլ պարագաներում: Մարզպանն ու սպարապետը դեռեւս գաղափարակիցներ են. Վարդանը յիշեցնում է, որ հարկաւոր է դեսպաններ ուղարկել կայսեր մօտ, եւ Վասակը պատրաստութեամբ նամակներ է կազմում: Դեսպանների ցուցակի մէջ են Վարդանի իսկական մերձաւորները՝ Վահան Ամատունի, Հմայեակ Մամիկոնեանը, Մեհրուժան Արծրունի եւ միւսները [Ղազ. Փարպ., գլ. ԼԳ, ԽԱ]:
 Պատմիչները նկատի ունեն նամակների նոյն շարքը: Եւ ընդհանուր առմամբ ճիշտը, ըստ երեւոյթին, Եղիշէն է, բայց մի հարցում Ղազարը դժուար թէ սխալուէր: Սպարապետի եղբայր Հմայեակ Մամիկոնեանը անշուշտ զնացած է եղել կայսեր մօտ, Հայաստան է վերադարձել Աւարայրից յետոյ եւ նահատակուել Տալքում: Մամիկոնեանների առաւելութիւններից, պարզապէս՝ յուշերից: Բայց Հմայեակը գնացած պիտի լինէր այն ժամանակ, երբ նրա եղբօր եւ մարզպանի միջեւ դեռեւս թշնամութիւն չի եղել: Արդեօ՞ք նա

մասնակցել է (Վարդանին մօտ կանգնած միւս նախարարների հետ միասին) Ատոմ Գնունու դեսպանութեանը: Միջադէպը համեմակային է:

23 Յուցակում անշուշտ գրանցուած են գլխաւոր նախարարները, Վասակի կողմնակիցները անելի շատ պիտի լինէին: Ինչ վերաբերում է ցուցակին, ապա Աշանակայից է, որ 5 հոգի (ինքը Վասակը, ապա՝ Արտակ Ռշտունին, Գաղիշո Խորխոռունին, Մանէ Ապահունին, Գիւս Վահեունին) պատկանել են այն խմբին, որի անդամները 450 թ. Տիգրանում ստիպուած եղան ուրանալ իրենց բուն հաւատը: Դժուար թէ դա պատահականութիւն լինի: Ամենայն հաւանականութեամբ, այդ քայլը առաջացրեց հոգեկան բարոյալքում, եւ ընտրութեան պահին նրանք անցան այն կուսակցութեան շարքերը, որը փաստօրէն դաշնակցեց Պարսից իշխանութեան հետ:

24 Թշնամու կորստի մասին խօսելիս Եղիշէն (ըստ քննական բնագրի) գրում է. «Իսկ ի կողմանէ ուրացելոցն անկանէր յայնմ ատր երեք հազար հինգ հարիւր քառասուն եւ չորք այր» (էջ 120. 11-12), ընդ որում այդ ընթերցումը պահել են բոլոր յայտնի ձեռագրերը: Միայն «Անտոնեան օրինակն» է, որ ունի *ուրացելոցն եւ հեթանոսաց*: «Անտոնեան օրինակը» ձեռագրի փեճակով չի պահպանուել, նրա ծագումն առեղծուածային է, այնուամենայնիւ այդ ընթերցումը ստիպուած ենք դիտել որպէս նախընտրելի: Հակառակ դէպքում պիտի համարենք, որ 3544 թիւը վերաբերում է միայն Վասակի կողմնակիցներին՝ ուրացողներին: Մինչդէռ վշտանալով, որ իր զօրքի ստացած հարուածները երեք անգամ անելի մեծ էին, քան հայերինը՝ Մուշկան Նիւսալաւորտը նկատի է ունեցել իրեն ենթակալ ամբողջ բանակը:

25 Յուն. πεντεκοστή բառացի Աշանակում է 50-րդ օր. *պենտեկոստէ* անելով՝ հասկացել են նաեւ Չատկից մինչեւ Հոգեգալուստ 50 օրուայ միջոցը, որի բուն հայերէն անուանումն է՝ *Յինունք*:

26 Մ. Չամչեան, *Պատմութիւն Հայոց*, Բ, Վենետիկ-Ս. Ղազար, 1785, էջ 464-465

27 Մ. Օրմանեան, *Ազգայաւտում*, Անթիլիաս, 2001, հտ. Ա, սիւն. 372-373

28 Н. Адонц, *Марзбан Васак перед судом историков*. Записки Восточного отделения Императорского Русского археологического общества, 1904.

Գլուխ Գ

- 1 Հ. Աճառեան, *Հայոց անձնանունների բառարան*, հտ. Գ, էջ 197-198
- 2 Մ. Օրմանեան, *Ազգայաւտում*, սիւն. 411-412
- 3 Վաչէի ազգակցական կամ խնամփական կապը Սասանեանների հետ դժուար է որոշում: Եղիշէն ասում է, որ Աղուանից թագաւորը եղել է Ռոմիզի եւ Պերոզի քեռորդին, Պերոզը պահանջում է յետ ուղարկել նրա մօտ գտնուող իր քրոջն ու քեռորդուն, ի վերջոյ Վաչէն ենթարկում է արքայից արքայի կամքին: Նոյն բառերը գտնում ենք նաեւ Մովսէս Դասխուրանցու մօտ (ի տարբերութիւն Եղիշէի, նա տալիս է նաեւ Աղուանից արքայի անու-

նը): Մեզ թում է, որ Վաչէն եղել է Յազկերտի թոռան՝ նրա դստեր աղջկալ ամուսինը եւ յետ է ուղարկել իր կնոջը եւ նրա մօրը (որոնք ի բձէ մոգ էին): Ինչ վերաբերում է Եղիշէի ասածին, որ Վաչէն եղել է Յազկերտի որդիների քեռորդին, ապա գուցէ պետք է ենթադրել (եթէ դա գրչի սայթաքում չէ), որ հին հայերէնում *քեռորդի* բառը կարող էր Աշանակել նաեւ քրոջ աղջկալ ամուսնուն՝ փեսային: Տե՛ս Եղ. էջ 197. 13, 198. 21, 24. Մով. Դասխ., էջ 15. 13, 17. 6-10 (տե՛ս նաեւ Ա. Յակոբեան, «Վաչազանի վէպը» եւ *Արշակունեաց թագաւորութեան խնդիրը Դ-Ջ դարերի Աղուանքում*, ՀԱ, ԸԺԷ տարի, 2003, սիւն. 93-95):

4 Պէտք է խոստովանել, որ այդ ապստամբութեանը նախորդող շրջանի մասին խօսելիս Ղազար Փարպեցին Վահանին սպարապետ չի անուանում: Մի տեղ միայն նա ասում է, որ հայերը եւ Հայոց գօրավար (=սպարապետ) Վահանը Սահակ Բագրատունուն մարզպան կարգեցին, հաստատեցին Սահակի մարզպանութիւնը եւ Վահանի՝ Մամիկոնեան տէրութիւնը եւ Հայոց սպարապետութիւնը [էջ 121. 30-33]: Բայց այդ, նախադասութիւնը վերաբերում է այն պահին, երբ ապստամբութեան որոշումն արդէն ընդունուած էր, հայերը երկրի ներսում հալածում էին պարսիկներին եւ նրանց կողմնակիցներին: Այնուամենայնիւ, քանի որ պարսիկների համար Վահանն է եղել Հայաստանի առաջին դէմքը, պիտի եզրակացնել, որ հէնց նա է ճանաչուել որպէս սպարապետ եւ այդ պաշտօնով ներկայացել Պերոզ արքային (տե՛ս ստորեւ):

5 Այդ մասին տե՛ս Բ. Յարութիւնեան, *Մեծ Հայքի Գուգարք աշխարհը ըստ «Աշխարհացոյց»-ի*, ԲԵՀ, 1977, թիւ 2, էջ 185-195:

6 Պ. Մ. Մուրադեան, *Սուրբ Ծուշանիկի վկայաբանութիւնը. Բնագրեր եւ հետազօտութիւն*, Երևան, 1996

7 К. Н. Юзбашян, *Хронология армяно-грузинского восстания против Сасанидов в конце V в.*, "Палестинский сборник", вып. 28 (91), 1986.

8 Ուտանը՝ Հայոց երկրի կենտրոնական մասն էր, Արշակունիների երբեմնի տիրոջը, ուր գտնում էին ինչպէս Դուիներ, այնպէս եւ Արտաշատը: Ուտան էր կոչուում միաժամանակ նաեւ մայրաքաղաքը, այսինքն՝ Դուինը:

9 Ղազար Փարպեցի, էջ 123. 26: *Քերթաքաղ*՝ հին եւ մին քուրջիներ, ցնցոտիներ հաւաքող. *իշաւարեան*՝ իշաւար գոյականի յոգնակին. տե՛ս Ստ. Մալխասեանց, *Հայերէն բացատրական բառարան*, հտ. Դ, էջ 570:

10 Պուշտիպանան սաղար՝ թիկնապահների (փուշտիպանան) պետ, ինչպէս ասացինք Ա գլխում, Արշակունեաց Հայաստանում նրան իր պաշտօնով համապատասխանել է *մադխազը*:

11 Ինչպէս Սասանեան պետութիւնը, այնպէս եւ զօրքը եղել է բազմազգ: Տուեալ հատուածում ամէնից հետաքրքիրը Սիւնեաց գնդի իշատակութիւնն է: Խօսքն, անշուշտ, սիւնեցի *ուրացողների* մասին է, որոնք վճռական պահին զէնքով դուրս եկան քրիստոնէայ մնացած հայրենակիցներին դէմ:

- 12 Այդ միջադեպը անեղծուածային է. բանն այն է, որ Վասակ Մամիկոնեանի եւ Սահակ Բագրատունու սպանութեան պարագաների մասին Ղազար Փարպեցին չի հաղորդում: «Պատմութեան» մայր ձեռագիրը, որից բխում են միւս գրչագրերը, ըստ երեւոյթին, այդ մասում մի բաց ունի: Եթէ երբեւիցէ գտնուի անթերի գրչագիր, հաւանաբար կը պարզուի, թէ ինչ հողի վրայ է առաջացել Վասակի եւ Սահակի կենդանի մնալու առասպելը:
- 13 Սասանեան պետութեան արեւելեան հարեւաններին հայ հեղինակներն անուանում են *քուշաններ*, ապա *հեփթաղներ*, ընդ որում քուշաններին նույնացնում են *հոններին* (Թաղկերտը «խաղաց գնաց միանգամայն ի վերայ տերութեան Հոնաց աշխարհին, գօր Բուշանս անուանեն» Եղ., էջ 11. 22-23): Բուն քուշանները արդէն վերացել էին պատմական թատերաբեմից, Թաղկերտի եւ Պերոզի հակառակորդները *հեփթաղներն* են եղել: Պէտք է ասել, որ վերջիններս ծագումը եւ անգամ լեզուն դեռուս բաւարար կերպով չեն յուսարանուած (տե՛ս *К. В. Тревер, Кушаны, хиониты и эфталиты по армянским источникам IV-VII вв. (К истории народов Средней Азии).* - "Советская археология", 1954, էջ 131-147). հմմտ. *Б. Г. Гафуров, Таджики, Москва, 1972, էջ 193-211*:
- 14 Տեկորի սուրբ Սարգսի վկայարանը կառուցել է Սահակ Կամսարակյանը. նա յիշատակուած է նաեւ «Թուղթ» Հայոց ի Պարսս առ ուղղափառու» յայտնի վաւերագրում (ԳԹ, էջ 48, ՊԲՀ, 1962, թիւ 2, էջ 51. *Հ. Աճառեան, Հայոց անձնանունների բառարան*, հտ. Դ, էջ 353-354, թիւ 18):
- 15 *Հ. Աճառեան*, նշ. աշխ., հտ. Ե, էջ 69-70: Նախորդ ծանօթագրութեան մէջ յիշատակուած թղթում Վարդը հանդէս է գալիս որպէս Մամիկոնեանից տէր եւ Հայոց մարզպան (տե՛ս ԳԹ, էջ 48):
- 16 Ինչպէս ասացինք վերեւում, Վազգէնի սպանութիւնը, որից եւ սկսուել է նպատամբութիւնը, տեղի է ունեցել Պերոզ արքայի 25-րդ տարում: Այդ տարին ասարտուել է 482 թ. յուլիսի 13-ին՝ ըստ պարսկական տոմարի, կամ յուլիսի 18-ին՝ ըստ հայկականի:

Գլուխ Դ

- 1 Մտրաբոն, քաղեց եւ թարգմանեց *Հ. Աճառեան*, Երեւան, 1940, էջ 67 (ընդ-գծումները թարգմանչին են):
- 2 Այդ երզը պահպանուել է Մովսէս Խորենացու «Հայոց պատմութեան» կազմում: Խորենացու բնագրի աշխարհաբար թարգմանութիւնները վերցուած են հետեւեալ հրատարակութիւնից՝ Մովսէս Խորենացի, *Հայոց պատմութիւն*, ներածութիւնը եւ ծանօթագրութիւնները Ստ. Մալխասեանցի, Երեւան, 1940:
- 3 *Р. Якобсон, Древнеармянский ВАХАГН в свете сравнительной мифологии*, ՊԲՀ, 1982, թիւ 4. *В. В. Иванов, Выделение разных хронологических слоев в*

- древнеармянском и проблема первоначальной структуры текста гимна Ва(х)агн*, ՊԲՀ, 1983, թիւ 4:
- 4 Շրջանառութեան մէջ մտած հիմնական հրատարակութիւնը Մանուկ Աբեղեանիին է (տե՛ս յապատմների ցանկը՝ Կոր.): Վերահրատարակուած է՝ Կորիւն, *Վարք Մաշտոցի*, Երեւանի համալսարանի հրատարակութիւն, Երեւան, 1981 [առանց անուանացանկի]: Այլ հրատարակութիւններ՝ Կորիւն, *Վարք Մեսրոպ Մաշտոցի*, աշխ. Արտաշէս Մաթեոսեանի, Երեւան, «Հայաստան», 1994. Կորիւն, *Վարք Մաշտոցի*, Յառաջաբան, բնագրի վերակազմութիւն եւ ծանօթագրութիւններ աշխ. Պօղոս վրդ. Աճառեանի, Վենետիկ-Ս. Ղազար, 1998 (այժմ անշուշտ՝ ՄՀ, հտ. Ա, էջ 225-272): Ռուսերէն թարգմանութիւն՝ ծանօթագրութիւններով, Կորիւն՝ 1981 թ. հրատարակութիւն, էջ 197-221, 332-356: Սոյն հրատարակութիւնը պարունակում է նաեւ Bedros Norehad-ի անգլերէն թարգմանութիւնը՝ համստօտ *Biographie des Mesrop Maštoc. Überlieferung und Kommentar. Roma, 1994 (Orientalia Christiana Analecta, t. 245)*:
- 5 *L. Bréhier, La civilisation byzantine*, Éditions Albin Michel, 1970, էջ 306
- 6 Հրատարակութիւնը տե՛ս ԿԵ, ԵԿՊ, 2, 1980, էջ 160-217:
- 7 Այդ տաճարը չի պահպանուել: Մաշտոցի գերեզմանի վրայ եղած այժմեան եկեղեցին կառուցուել է ԺԺ դարում:
- 8 *Ն. Ադոնց, Մաշտոց եւ նրա աշակերտները ըստ օտար աղբիւրների*. տե՛ս *Մեսրոպ Մաշտոց. յօդուածներ ժողովածու*, Երեւան, 1962, էջ 203: Հետագօտողը գտնում է, որ *Մաշտոց* անունը առաջացել է պարսկ. *մազդ* արմագօտողը գտնում է, որ *Մաշտոց* անունը առաջացել է պարսկ. *մազդ* արմագօտից՝ անցնելով փոփոխութիւնների հետեւեալ ուղին՝ Մազդոց→Մածդոց→Մաշդոց→Մաշթոց: Սոյն գրքի *Մաշտոց* գրութիւնը տուրք է ընդունուած ուղղագրութեանը:
- 9 Օգտում ենք Ն. Ադոնցի յունարէնից հայերէն (գրաբար եւ աշխարհաբար) կատարուած թարգմանութիւնից, աննշան փոփոխութիւններով:
- 10 *Ն. Ադոնց*, նշ. աշխ., էջ 201-202
- 11 Այսինքն՝ ժողովի մասնակիցները. անլի մանրամասն տե՛ս Կոր., էջ 120, ծնթ. 147, 148:
- 12 Կորիւնի երկից քաղուած աշխարհաբար թարգմանութիւնները պատկանում են Մանուկ Աբեղեանին:
- 13 *Ն. Ակիսեան*, ՀՍ, 1949, սիւն. 506
- 14 *Յ. Մանանդեան, Հայ գրերի գիտի տարեթոյի հարցի շուրջ*, «Մեսրոպ Մաշտոց» յօդուածների ժողովածու, Երեւան, 1962, էջ 107
- 15 *Photius, Bibliothèque, texte établi et traduit par René Henry, t. I, Paris, 1959, էջ 187 (Collection Byzantine, publiée sous le patronage de l'Association Guillaume Budé).*

- 16 G. Winkler, Koriwns Biographie des Mesrop Maštoz, էջ 202. նաե՛ Ե. Տեր-Մինասեան, Հայոց գրերի գիտի թուականի եւ այլ յարակից խնդիրների մասին, ԲՄ, 7, 1962
- 17 Լ. Բարթիկեան, Թեոդորոս Մոպսուեստացու MASTOUBIOS-ի եւ քիզանդական Մաշտոցեան տոհմի մասին (X դար), «Լրաբեր հասարակական գիտությունների», 1984, թիւ 7, էջ 74-75. Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ. Ե-ԺԲ դդ., աշխատասիրութեամբ՝ Ա. Ս. Մաթեոսեանի, Երեւան, 1988, էջ 1, ծնթ. 1
- 18 Սէմական լեզուների այդ առանձնապատկան մասին տե՛ս, օրինակ, Դ. Дирингер, Алфавит, Москва, 1963, էջ 260-263, մասնատրապէս՝ խմբագրի տողատակի դիտողությունները:
- 19 Կորիւն, Պատմութիւն վարուց և Մաշտոցի, հրատ. Բ. Ն. Ակինեանը, Վիեննա, 1952
- 20 Ուղղումները հաշուի են առնուած Վարքի՝ Պ. Անանեանի նոր հրատարակութեան մէջ:
- 21 Էդ. Աղայեան, Արդի հայերէնի բացատրական բառարան, հտ. Ա, Երեւան, 1975, էջ 882
- 22 А. Периханиян, К вопросу о происхождении армянской письменности. Переднеазиатский сборник, II, Москва, 1966.
- 23 Ի դէպ, եթէ դա այդպէս է, ապա արդէն Մաշտոցի օրօք պիտի առաջանային ոչ միայն երկաթագրի, այլև բոլորագրի սաղմերը. չէ՞ որ երկաթագրի վիւնը ունի Ի ձեւ, իսկ ռ-ն բխում է բոլորգրից:
- 24 Տե՛ս մասնատրապէս՝ Ե. Տեր-Մինասեան, Հայոց գրերի գիտի թուականի եւ այլ յարակից խնդիրների մասին, ԲՄ, թիւ 7, 1964, էջ 25-48: Անուանի գիտնականը ինչ-որ չափով ամփոփում է կատարուած աշխատանքը՝ պարզութիւն մտցնելով Կորիւնի բնագրում եղած մի քանի անունների վերաբերեալ:
- 25 Տե՛ս Zaza Alexidze, New collection of Mount Sinai and its importance for the history of Christian Caucasus.— Հայաստանը եւ քրիստոնէայ Արեւելքը, Երեւան, 2000, էջ 179-180: Վերծանությունների ամփոփումը տե՛ս նոյն հեղինակի «Կովկասեան Աղուանքի գրչութիւնը, լեզուն եւ դպրութիւնը» գրքում (Թբիլիսի, 2003, վրացերէն):
- 26 Կոր. Ժ, էջ 111, ծնթ. 88
- 27 Եկեղեցու հայրեր են կոչուում քրիստոնէութեան տարածման ու հաստատման առաջին դարերի գործիչները, որոնք նաեւ խոշոր գրողներ են եղել: Նրանց երկերում մշակուած են դասանաբանական հիմնական հարցեր: Հայրեր անուանումը տարածում է միայն նրանց վրայ, որոնք երբեք չեն մեղադրուել ներծուածողութեան մէջ եւ ճանաչուել են համընդհանուր եկեղեցու կողմից:

- 28 Լ. Տեր-Պետրոսեան, Հայ հին թարգմանական գրականութիւն, Երեւան, 1984, էջ 6
- 29 Ահա խնդրոյ առարկայ նախադասութեան բնագիրը՝ «Եւ արդ առեալ նախաբանեացուք, եթէ իցէ՞ համարձակութիւն գրով նշանակել զվարս արանցն կատարելոց, ոչ ի մէնջ արուեստախօսեալ մերոյն կարծեօք վիճաբանելով, այլ յօրինակացն տունելոց զընդդիմակացն բարձրացուցանել» [Կոր., էջ 24. 6-9]: Մ. Աբեղեանի թարգմանութեամբ՝ «Բայց արդ՝ նախ մի առաջաբան անենք, թէ թոյլատրելի՞ է արդեօք կատարեալ մարդկանց վարքի մասին գրել: Ոչ թէ մեր կողմից, մեր կարծիքով վիճաբանելով կը ճարտարախօսենք, այլ տրուած օրինակներով պարզ կերպով կապացուցենք հակառակը»: Ծանօթագրութիւն՝ «Այսինքն՝ հակառակ այն մարդկանց կարծիքի, որոնք ասում են, թէ թոյլատրելի չէ»: Մօտատրապէս նոյնն է նաեւ Կ. Մելիք-Օհանջանեանի եւ Շ. Սմբատեանի ուսերէն թարգմանութիւնը:

Ընթերցողը նկատած կը լինի, որ մենք այլ կերպ ենք հասկանում այդ կնճոտ նախադասութիւնը: Պէտք է աւելացնենք, որ մի կէտում թարգմանութիւնը բաւարար չէ նաեւ քերականութեան տեսակէտից: Բանն այն է, որ մերոյն ձեւը մենք ստացական դերանուն անական հոլովն է՝ որոշիչ յօղով, մինչդեռ կարծեօք բառի հետ համաձայնելու համար այն եւս պիտի լինի գործիական հոլովով: Սպասելի էր ուրեմն մերովք կարծեօք, մինչդեռ բնագրում մերոյն կարծեօք է: Խօսքն, անշուշտ, սեփական կարծիքի մասին է, բայց ինչպէս բացատրել խնդրատութեան այդ խախտումը՝ բնագրի աղճատմամբ: Մ. Աբեղեանը առանց վերապահութեան թարգմանում է մեր կարծիքով:

- 30 Հիմնական հրատարակութիւնը Ե. Տեր-Մինասեանինն է (յապաւումների ցանկ, Եդ.): Թարգմանութիւն՝ Եդիշէի Վարդանանց պատմութիւնը, թարգմանութեամբ եւ ծանօթագրութիւններով պրոֆ. Ե. Տեր-Մինասեանի, Երեւան, 1958, նաեւ վերահրատարակութիւններ. առաջին հրատարակութիւնը (1946) պահպանել է իր նշանակութիւնը գերազանցապէս ծանօթագրութիւնների մասում: Անգլերէն՝ Elishe, History of Vardan and the Armenian War. Translation and the Commentary by Robert W. Thomson. Harvard University Press, Cambridge, Massachusetts, London, England, 1982. Ռուսերէն՝ սկադ. Յ. Օրբելու թարգմանութեամբ. Կ. Իւզբաշեանի նոր խմբագրութեամբ՝ Армянская эпопея V века, Москва, 2001.
- 31 Հմմտ. Սեբէոսի մօտ՝ «Զայս լուաք յարանց գերելոց ի Խուժաստան Տաճկաստանէ, որոց ինքեանք իսկ սկանատես եղեալ պատմեցին մեզ զայս բան» [Սեբ., էջ 139. 21-22]: Նախորդ հատուածում խօսում է արաբական արշաւանքի մասին, ընդհանուր գծերով ներկայացւում է այդ մեծ եղելութեան պատմութիւնը: Մէկ ուրիշ օրինակ. Մովսէս Խորենացին ողջունում է իր մեկենասին «ի սկզբան յայսմ բանիցս» [Մով. Խոր., էջ 5. 5]: Թում է, որ

- տունայ դեպքում եւս, բառը հանդէս է գալիս որպէս պատմութեան հոմանիշ:
- 32 Գրիգոր Լուսաւորչի պաշտամունքի մասին տե՛ս մասնաւորապէս՝ **Ս. Մ. Мурадян, Кавказский культурный мир и культ Григория Просветителя**, КВ, Կր. 3, 1981:
- 33 Կան., հտ. Ա, էջ 425.11, հմմտ. էջ 629:
- 34 Վարք *Մաշտոցի*, էջ 78, 124:
- 35 **С. С. Аревшатын, Формирование философской науки в древней Армении (V-VI вв.)**, изд. АН Армянской ССР, Ереван, 1973, էջ 141-190.
- Յունաբանութիւնը կազմում է հայ բանասիրութեան կարեւոր հարցերից մէկը. երեւոյթին ծանօթանալու համար նոր գրականութիւնից տե՛ս մասնաւորապէս՝ **A. Terian, The Hellenising School. Its Time. Place and Scope Reconsidered, - East of Byzantium: Syria and Armenia in the Formative Period**. N. G. Garsoïan, Th. F. Mathews, R. W. Thomson editors, Washington, 1982, էջ 175-186. *Գիրք պիտոյից*, աշխատասիրութեամբ՝ Գ. Մուրադեանի, Երեւան, 1993. *Книга хрий*, пер. с древнеармянского, предисловие и комментарии Гоар Мурадян, Ереван, 2000: Ժամանակի վերաբերեալ Գ. Մուրադեանը նոյն տեսակէտին է, ինչ եւ Ս. Արեւշատեանը:
- 36 **Ե. Տէր-Մինասեան, Տիմոթէոս Կուզի «Հակաճառութիւն առ սահմանեալսն ի ժողովոյն Բաղկէդոնի» երկի թարգմանութեան ժամանակը**, ԲՄ, թի 5, 1960
- 37 Սեբ., էջ 64-65
- 38 Եղիշէի ժամանակի վերաբերեալ դիտողութիւններս առաջին անգամ ներկայացրել էի Աղվերանում կայացած գիտաժողովի նիստերից մէկում (1980-ական թուականներին) եւ համառօտ եղանակով արձանագրել սոյն գրքի անդրանիկ հրատարակութեան մէջ (էջ 87-88): 1992 թ. լոյս տեսաւ Լեւոն Խաչիկեանի թեկնածուական թեզը, որն ականաւոր գիտնականը պաշտպանել էր դեռեւս 1945 թ.: Տպագրութեան է պատրաստել Լեւոն Տէր-Պետրոսեանը: Լ. Խաչիկեանը եւս անդրադարձել էր Գրիգոր Լուսաւորչի պաշտամունքի թուագրութեան հարցին եւ եկել նոյն եզրակացութեանը, ինչ որ եւ տողերիս հեղինակը: Նա մասնաւորապէս մշտել էր, որ Վարդանանքի մասնակիցները, որպէս սուրբ, հանդէս են գալիս միայն Ղազար Փարպեցուց սկսեալ. Եղիշէի մօտ այդպիսի որակաւորում չենք գտնում: Տե՛ս Լեւոն Խաչիկեան, *Եղիշէի «Արարածոց մեկնութիւնը»*, խմբագրութեամբ՝ Լեւոն Տէր-Պետրոսեանի, «Ջուարթոնց», Երեւան, 1992, էջ 153-155 եւ խմբագրի առաջաբան, էջ 13-14: Այժմ նաեւ՝ *Армянская эпопея V в.*, էջ 156-160:
- 39 Ագաթանգեղոսը հրատարակուած է ի դարակզբին՝ այն ժամանակ բոլոր յայտնի ձեռագրերի համեմատութեամբ եւ պատշաճ գիտական սարուածքով՝ «Պատմագիրք Հայոց» մատենաշարով, որի խմբագիրն էր Ստ.

- Մալխասեանցը [Ագաթ.]: Այդ երկի պատմական մասը վերահրատարակուել է աշխարհաբար թարգմանութեամբ (տե՛ս Ագաթանգեղոս, *Հայոց պատմութիւն, քննական քննագիրք Գ Տէր-Մկրտչեանի եւ Ս. Կանայեանի*, աշխարհաբար թարգմանութիւնը եւ ծանօթագրութիւնները Ա. Ն. Տէր-Ղեւոնդեանի, Երեւան, 1983): Հրատարակուած է նաեւ անգլերէն թարգմանութիւնը երկու գրքով՝ *The Teaching of Saint Gregory. An Early Armenian Catechism. Translation and Commentary by Robert W. Thomson*. Harward University Press. Cambridge Mass. 1970. *Agathangelos, History of the Armenians. Translation and Commentary by R. W. Thomson*. Albany, State University of New York Press, 1976.
- 40 Տե՛ս **Պ. Մ. Մուրադեան, Ագաթանգեղոսի հին վրացերէն խմբագրութիւնները**, Երեւան, 1982. տարալեզու խմբագրութիւնների եւ պատումների տրամաձառ, առաջաբան. տե՛ս էջ 10:
- 41 Ըստ հին աւանդութեան՝ ներկայիս Էջմիածնի Մայր տաճարը կառուցուած է հէնց այնտեղ, որտեղ երեւաց այդ սիւնը:
- 42 Գլխաւոր եպիսկոպոս, որը Ե դարում Հայաստանում (ինչպէս նաեւ հարեւան մի շարք երկրներում) սկսեց կոչուել կաթողիկոս:
- 43 Քերթողական արուեստը (յուն.՝ τέχνη ποιητική) այն ոճն է, որը հետեւել է հին յունական գրականութեան կանոններին եւ այդու հակադրուել գեղջուկ խօսքով ստեղծուած երկերին. տե՛ս Ա. Սարգսեան, *Յովհաննէս Դրասխանակերտցու «Քերթողական արուեստի» շուրջ*, ՊԲՀ, 1981, թի 2, էջ 164-165, 176:
- 44 Ծիշտ գրութիւնը *Փաւստոս* է. այդ ձեւը գտնում ենք ստորեւ՝ էջ 4. 29, 34:
- 45 Փաւստոսի տպագիր եւ ձեռագիր ամփոփ մատենագիտութիւնը տե՛ս **Գ. Տէր-Վարդանեան, Փաւստոս Բուզանդի հրատարակութիւններն ու ձեռագրերը**, Հայկազեան հայագիտական հանդէս, Պէյրութ, 1999, էջ 9-63:
- 46 Փաւստոս Բուզանդ, *Հայոց պատմութիւն*, թարգմանութիւնը, ներածութիւնը եւ ծանօթագրութիւնները՝ ակադ. Ստ. Մալխասեանի, Երեւան, 1947, էջ 310, ձմթ. 1
- 47 Հայկական Սովետական հանրագիտարան, հտ. 12, 1986, էջ 314:
- 48 **Anahit Périkhanian, Sur arménien buzand**, Armenian Studies - Études arméniennes, In memoriam Haïg Berbérian, Dickran Kouymjian Editor, Calouste Gulbenkian Foundation, 1986, pp. 653-657. Գիտաժողովի նիւթերը հրատարակուած են 1986 թ., Ա. Փերիխանեանի ամփոփումը հայերէն՝ էջ 229-230, ռուսերէն՝ էջ 154-155 (առանց Ստ. Մալխասեանի անուան յիշատակումի):
- 49 **Ս. Մ. Мурадян, Армянская эпиграфика Грузии, Картли и Кахети**, Ереван, 1985, էջ 19-21.
- 50 Երախտապարտ եմ տիկին Անահիտ Ծաննեանին, որը յատուկ քաղեց եւ ինձ տրամադրեց մէջբերուած օրինակները. տե՛ս նաեւ նրա յօդուածը՝ *Գրա-*

բարի ոչ եւ իւ երկբարբառների պատմական-հնչիւնաբանութեան շուրջ, «Հայոց լեզուի պատմութեան հարցեր» ժողովածոյ, պր. Բ, 1985, էջ 37-58:

51 Փաստոսի դպրութիւնները, կազմելով գրչագրի երրորդ, չորրորդ, հինգերորդ եւ վեցերորդ մասերը, առիթ տուեցին որոշ բանասերների կարծելու, թէ առաջին եւ երկրորդ դպրութիւնները չեն պահպանուել: Մինչդեռ, ելնելով Ղազար Փարպեցու խօսքերից, որոնք վերաբերում են Փաստոսի երկի բովանդակութեանը, կարելի է վստահ ստել, որ այն մեզ է հասել ամբողջութեամբ: Բուզանդարանի հեղինակի վերաբերեալ աւելի մանրամասն՝ Karen Yuzbachiyan, *Sur les droits d'auteur de P'awstos Buzand*, ՀԱ, ԸԺԴ տարի, 2000, էջ 99-118:

52 Բնագրի վերջին հրատարակութիւնն է՝ *Փաստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց*, ի չորս դպրութիւնս, չորրորդ տպագրութիւն, Վենետիկ-Ս. Ղազար, 1933: Պահպանել է իր նշանակութիւնը աշխարհաբար թարգմանութիւնը՝ Փաստոս Բուզանդ, *Հայոց պատմութիւն*, թարգմանութիւն, ներածութիւնը եւ ծանօթագրութիւնները՝ ակադ. Ստ. Մալխասեանցի, Երեւան, 1947: Ռուսերէն թարգմանութիւնը (*История Армении Фавстоса Бузанда*, пер. с древнеарм. и комм. М. А. Геворгияна, Ереван, 1953) ժամանակին Յ. Անասեանի խիստ քննադատութեան առարկայ է դարձել: Երջանատութեան մէջ է Նինա Գարսոյեանի թարգմանութիւնը ճոխ սարուածրով՝ *The Epic Histories Attributed to P'awstos Buzand (Buzandaran Patmut'iwnc')*. Translation and Commentary by Nina G. Garsoian, Cambridge Massachusetts, 1989. Վերջերս լոյս է տեսել նաեւ իտալերէն թարգմանութիւն՝ P'awstos Buzand. *Storia degli Armeni*, introduzione a cura Gabriella Uluhogian, traduzione di Marco Bais e Loris Dina Nocetti, note di Marco Bais, *Armeniaca Italica 2*, Mimesis 1997.

53 **Մանուկ Աբեղեան**, Երկեր, Գ, Երեւան, 1968, էջ 215-261

54 Արտաւանը պարթեւ Արշակունիների վերջին թագաւորն է, որին զահագորկ արին Սասանեանները (նրա մասին յիշեցիք վերեւում): Հայ Արշակունիները վրիժառու են իրենց պարթեւ ազգակիցների համար: Որպէս քաղաքական գաղափար՝ այդ միտքը յարատեւել էր առնուազն մինչեւ Արշակ Բ-ի ժամանակները:

55 Փաստոսից քաղուած հատուածները թողնում ենք մեծ մասամբ գրաբար: Ոչ մի թարգմանութիւն ի վիճակի չէ պահպանել հեղինակի էպիկական ոճի առանձնայատկութիւնները: Բերուած օրինակների գեղարուեստականութիւնը գալիս է նախ եւ առաջ շարադրութեան եղանակից, լեզուից:

56 *Փոշ եւ տատասկ բուցի* դարձուածքը մէջբերում է Աստուածաշնչից (հմմտ. Ծն. Գ 18): Սոյն զուգահեռի վրայ ուշադրութիւնս հրաիրեց իմ աշակերտ Ա. Խոսրոբեք: Այդ օրինակը եւս մի զգուշացում է, որպէսզի վիպական գրոյցի եւ գրող Բիւզանդի լեզուները, ոճը չնոյնացուեն:

57 Ղազար Փարպեցու երկերի հրատարակութիւնը տե՛ս յապաւումների ցանկում [Ղազ. Փարպ.]: Աշխարհաբար՝ Ղազար Փարպեցի, *Հայոց պատմու-*

թիւն. Թուրք Վահան Մամիկոնեանին, աշխարհաբար թարգմանութիւնը եւ ծանօթագրութիւնները Բագրատ Ուլուբաբեանի, Երեւան, 1982. անգլերէն՝ *The History of Łazar P'arpezi*, transl. by Robert W. Thomson, Scholars Press, Atlanta, Georgia, 1991.

58 *Տեսիլը* յայտնի է նաեւ յունարէն եւ հին վրացերէն տարբերակներով. յունարէն փոխադրութիւնը շատ մօտ է հայերէն բնագրին, այլ հանգամանքներից բացի, այն հետաքրքիր է որպէս հայերէնից յունարէն (եւ ոչ հակառակը) կատարուած թարգմանութիւն: Տե՛ս G. Garitte, *La Version de S. Sahak en grec*, "Le Muséon", LXXI, 1958, 3-4. հմմտ. Ն. Ակիմեան, *Քննութիւն տեսլեանս Սահակայ*, ՀԱ, 1936, թիւ 10-12, էջ 465-479: Տեսիլի գուշակութիւնները, անշուշտ, վերաբերում են Հայոց աշխարհին եւ Հայոց եկեղեցուն: Թ դարում *տեսիլը* կ'օգտագործեն որպէս Բարսեղ Մակեդոնացի կայսեր (867-886) զան բարձրանալու գուշակութիւն: Հայ լինելով՝ Բարսեղը սերում է անյայտ ընտանիքից, մինչդեռ *տեսիլի* շնորհիւ նա ներկայացուել է որպէս հայ Արշակունիների շատախղ: Կայսեր ծագման այդ առասպելը Բիւզանդիայում ընդունուել է որպէս քաղաքական գաղափար:

59 «Հայոց պատմութեան» 1913 թ. հրապարակուած գիտական բնագիրը վերահրատարակուել է 1991 թ. տե՛ս յապաւումների ցանկում [Մով. Խոր.]: Անգլերէն՝ *Movses Khorenats'i, History of the Armenians*. Translation and Commentary of the Literary Sources by Robert W. Thomson. Harvard University Press, Cambridge, Mass., London, England, 1978. Ռուսերէն շատ յաջողուած թարգմանութիւն, ցաօք, չափազանց համառօտ ծանօթագրութիւններով՝ *Мовсес Хоренаци, История Армении*. Пер. с древнеарм. языка, введение и примечания Гаяга Саркисяна, Ереван, 1990. ֆրանսերէն՝ *Moïse de Khorène, Histoire de l'Arménie*. Nouvelle traduction de l'arménien classique par Annie et Jean-Pierre Mahé (d'après Victor Langlois) avec une introduction et des notes. Éditions Gallimard, 1993.

60 Խոյիենացու օգտագործած աղբիւրների տեսութիւնը տե՛ս Ռ. Թումանի անգլերէն թարգմանութիւնում: Առաջաբանում հեղինակը նշում է բոլոր աղբիւրները, որոնցից օգտուել է Խորենացին՝ մեկնելով նրանց առնչութիւնը բնագրի հետ: Առ այսօր դա ամէնից ընդարձակ տեսութիւնն է. հեղինակը աղբիւրագիտական հարցերին շարունակ անդրադառնում է տողատակի ծանօթագրութիւններում: Հմմտ. Լ. Տէր-Պետրոսեանի գրախօսականը (*ՊԲՀ*, 1980, թիւ 1): Խիստ քննադատելով հեղինակի առանձին դրոյթներ՝ գրախօսողը ընդհանուր առմամբ բարձր է արտայայտում այդ իրօք որ օրինակելի հրատարակութեան մասին: «Հայոց պատմութեան» աղբիւրագիտութեանը վերաբերող վերջին ուսումնասիրութիւններից են՝ *Արամ Թոփչեան, Մովսէս Խորենացու յունական աղբիւրների խնդիրը*, Երեւան, 2000. *Պարոյր Մուրադեան, Բնագրական դիտարկումներ Խորենացու «Պատմութեան» հեղինակային ինքնագիրը վերականգնելու առնչութեամբ*, «Հայկազեան հայագիտ. հանդէս», 2001, թիւ ԻԱ, էջ 78-88. նաեւ՝

- Պարոյր Մուրադեան, *Մովսէս Խորենացու Պատմութեան Ներսէս Լամբրոնացու օրհնակը*, «Հայկազեան հայագիտ. հանդէս», ԻԳ, 2003, էջ 149-161:
- 61 «Հայոց պատմութեան» մէջ յիշատակուած են, օրհնակ, չորս *Հայաստաններ*: Գիտնականները ճնշող մեծամասնութեամբ հաստատում են, որ այդ տեղեկութիւնն արձագանք է Ջ դարի 30-ական թուականներին Բիզանդական Հայաստանում տեղի ունեցած վարչական փոփոխութիւնների. Յուտիմիանոս կայսեր քաղաքականութեան հետեւանքով Հայոց երկրի արեւմտեան հատուածը բաժանուեց Առաջին, Երկրորդ, Երրորդ եւ Չորրորդ *Հայաստանների*: Բայց եթէ *քննադատների* կարծիքով դա մի փաստ է, որը բացառում է Խորենացու պատկանելութիւնը Ե դարին, ապա *պաշտպանները* դիտում են այդ *Հայաստանների* յիշատակութիւնը որպէս լոկ հետագայ գրիչների ընդմիջարկութիւն: Տե՛ս է. Լ. Դանիէլեան, *Հայկական աղբիւրները Արեւմտեան Հայաստանի վաղ բիզանդական ռազմավարչական բաժանումների մասին*, ՊԲՀ, 1985, թիւ 1, էջ 112:
- 62 Այդ ուղղութեամբ քննական վերջին աշխատութիւնն է՝ **C. Toumanoff**, *On the date of the Pseudo-Moses of Chorene*, ՀԱ, 1961, սիւն. 467-476. Այն հեղինակի՝ *Studies in Christian Caucasian History*, էջ 330-334: Կ. Թումանովը ի մի է բերել այն աղբիւրները, որոնք, իր կարծիքով, բացառում են Խորենացու պատկանելութիւնը Ե դարին: Դրոյթը երկրորդն է Ռ. Թոմսոնը:
- 63 **Hippolytus Werke, B. 4. Die Chronik**. Hergestellt von A. Bauer, Berlin. 1955, էջ 10: Աստուածաշնչում մի քանի անգամ յիշատակուած է ասորա-քաբէլական աղբիւրների Ուրարտու երկիրը՝ երբ. արձատ. յուն. 'Αραράτ անույ: Հայերը լաւ են գիտակցել, որ այդ պետութիւնը գրաւում էր նրանց հայրենի հողի տարածքը: Սպանելով ասորեստանցի թագաւոր Սենքերիմին՝ նրա Ադրամելիք եւ Սանասար որդիները փախչում են «յերկիրն Արարադայ», ասուած է Աստուածաշնչի գրքերից մէկում [Դ Թագ. ԺԹ 37]: Նոյն այդ միջադէպի մասին հաղորդում է նաեւ Տովթիթի գիրքը, բայց այստեղ յուն. εἰς τὰ ὄρε 'Αραράτ (դէպի Արարատի լեռները) տեղում հայ թարգմանիչը դնում է «փախեան նոքա ի լերինս Հայոց» [Տովթ. Ա 24]: Այդ դէպքի մասին պատմում է նաեւ Եսայի մարգարէն. եբրայերէնն այստեղ ունի 'RRT (Արարատ), բայց յունարէնը εἰς 'Αρμενίαν, հայերէնում, բնականաբար, «ինքեանք զնացին փախստական ի Հայս» [Ես. Լէ 38]: Ըստ հայկական աւանդոյթի՝ Արծրունի տոհմը ծագել է հէնց այդ եղբայրներից: Նոյի տապանը նստեց «ի լերինս Արարատայ», ասուած է Մճնոց գրքում [Ը 4]՝ նկատի ունենալով դարձեալ երկիրը, այլ ոչ թէ Մասիսը. Մասիսը նոյնացրին Արարատ լեռան հետ ոչ շուտ քան ԺԲ դարում: Յատուկ հետաքրքրութիւն է ներկայացնում Երեմիա մարգարէի մի դարձուածքը. «Հրամայեցէ՛ք իմ անունից,- ասում է Աստուած,- Այրարատեան թագաւորութեանցն եւ Աքքանազեան զնդին», որպէսզի դուրս գան Բաբելոնի դէմ [Երեմ. ՄԱ 27]: Եբրայերէն-յունարէն «Արարատի» դիմաց այստեղ հանդէս է գալիս Հայաստանի կենտրոնական աշխարհ Այրարատի անունը: Թագաւորութեան բնակիչները կազմում են

- Աքքանազեան գունդը՝* սրա հիման վրայ է առաջացել հայերի՝ Աքքանազից սերելու տեսութիւնը:
- 64 Միւս աղբիւրներից գիտենք, որ այդ աստուածութիւնները եղել են աստուածացուած կենդանիներ՝ *արալէզներ*:
- 65 Քեզ եմ ասում, քա՛ջ տղամարդ Արտաշէս, Որ յաղթեցիր Ալանների քաջ ազգին. Եկ լսի՛ր Ալանների գեղաչեայ դստեր խօսքերին Եւ տո՛ւր պատանին: Որովհետեւ օրէնք չէ, որ քէնի համար դիցազները Ուրիշ դիցազն զարմերի կենդանութիւնը ջնջեն Կամ, իբրեւ ծառայ, ստրուկների կարգում պահեն. Եւ երկու քաջ ազգերի մէջ Մշտնջենաւոր թշնամութիւն հաստատեն (թարգմ. Ստ. Մալխասեանցի):
- 66 Եւ որտեղի՞ց քաջ Արտաշէսը պիտի տայ Հազար հազարներ եւ բիր բիրեր՝ Քաջերի սերունդ այս կոյսի՝ Ալանների արքայազն օրիորդի համար (թարգմ. Ստ. Մալխասեանցի):
- 67 Հեծաւ արի Արտաշէս արքան իր գեղեցիկ սեւ ձիւն Եւ, հանելով ոսկեօղ շիկափոկ պարանը, Եւ անցնելով գետն իբրեւ սրաթեւ արծիւ, Եւ նետելով ոսկեօղ շիկափոկ պարանը՝ Զգեց մէջքը Ալանաց օրիորդի. Եւ շատ ցաւեցրեց փափուկ օրիորդի մէջքը՝ Արագօրէն իր բանակը հասցնելով (թարգմ. Ստ. Մալխասեանցի):
- 68 Ոսկի տեղ էր տեղում Արտաշէսի փեսայութեան ժամանակ. Մարգարիտ էր տեղում Սաթենիկի հարսնութեան ժամանակ (թարգմ. Ստ. Մալխասեանցի):
- 69 Տե՛ս յատկապէ՛ս՝ **Գ. Խ. Սարգսեան, Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը եւ Մովսէս Խորենացին**, Երեւան, 1966:
- 70 Աքգար-Թաղէտսին նուիրուած վերջին մեծ ուսումնասիրութիւնն է՝ **Е. Н. Мещерская, Легенда об Авгаре-раннесирийский литературный памятник**, Москва, 1984:
- 71 «Փախչողք ի ժառանգութենէ» [Մով. Խոր., էջ 364. 11]: Փակագծերում առաջարկածս լրացման համար հիմք է ծառայում Ազաթանգեղոսի հետեւեալ նախադասութիւնը՝ «մտցեն ամենայն աշխարհ ի ժառանգութիւն Քրիստոսի» [Ազաթ., էջ 358. 13] եւ նման արտայայտութիւններ:
- 72 Կարիք կա՞յ արդեօք ընդօժել, որ *Ողբը* ոչ մի կերպ չի կարելի դիտել որպէս 40-ական թուականների պատմական իրականութեան հարազատ վերար-

տաղրութիւն. հմմտ. Գ. Սարգսեան, *Մովսէս Խորենացու Ողբը նոր մեկնաբանութեամբ*, ՊԲՀ, 1997, թիւ 1:

- 73 Վերելում ասացինք, որ նման տրամադրութիւն առկայ է արդէն Եղիշէի մօտ:
- 74 Մովսէս Խորենացին ասում է, որ Յովսէփն ու Եզնիկը գնացած են եղել Կոստանդնուպոլիս, առանց Սահակի ու Մաշտոցի թղլտութեան. նրանք իբր նպատակ են ունեցել ուրիշներին ուղարկել մայրաքաղաք:
- 75 Վերնագիրը պատկանում է միիթարեան հրատարակիչներին, հարազատ վերտառութիւնը յայտնի չէ, ֆրանսիացի գիտնական Լուի Մարիէտը երկը անուանում է «Աստծոյ մասին»:
- 76 Հրատարակութիւններ՝ L. Mariès, Ch. Mercier, *Eznik de Kolb եղծ աղանդոց. De Deo. - Patrologia Orientalis*, թիւ 28, պր. 3-4, 1959. Եզնիկ Կողբացի, *Ժառք ընդդէմ աղանդոց*, քննական բնագիրը՝ Մ. Մինասեանի, Ժնև, 1992
- 77 Ղազար Փարպեցին ասում է, որ Ղեւոնդի վարդապետը, այսինքն՝ ուսուցիչը եղել է Մաշտոցը [Ղազ. Փարպ., էջ 70. 17]:
- 78 Խնդրի մանրամասն վերլուծութիւնը՝ Լ. Տէր-Պետրոսեան, *Արքայազան Խոստովանողի «Վկայք Արեւելիցը»* (բնագրագիտական հետազոտութիւն), Երևան, 1976:
- 79 Ի դէպ, Աղանը եւս անմիջապէս մասնակցել էր նախորդ պատերազմին. 449 թ. միւս հոգեւորականների հետ միասին նա ստորագրել էր Միհրանեսեհ հազարապետին ուղղուած այն գրութիւնը, որտեղ հայերը պաշտպանում էին իրենց ազգային կրօնը դարձած քրիստոնէութիւնը ու հրաժարում զրադաշտութիւն ընդունել:
- 80 Տե՛ս Թղթի յետին նախաբանը՝ «Յառաջաբան թղթոյս առաքեալ յԱմիր քաղաքէ» [Ղազ. Փարպ., էջ 186. 6-7]:
- 81 «Կրելով ի խաղու զարկանելիս ձեր զկնի ձեր» [էջ 188, 11-12]: *Արկանելի բառը* նշանակել է նաեւ գորգ. գուցէ ճիշտ է Յ. Քիրտեանը, թէ տունեալ դէպքում եւս խօսքը խաղի գորգի մասին է (տե՛ս Յ. Քիրտեան, *Գորգը Հայոց մէջ*, Վենետիկ-Ս. Ղազար, 1947, էջ 12-14):
- 82 Ղազար Փարպեցու գրած Թուղթը. Մեղադրութիւն ստախօս արեղաներին, թարգմանութիւն եւ բացատրութիւնք Մ. Նալբանդեանց, Ս. Պետերբուրգ, 1868=ԻՅԺԷ:

ՑԱՆԿԵՐ

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ, ՏՈՐՄԱՆՈՒՆՆԵՐ, ԲԵՂԻՆԱԿՆԵՐ, ԴԵՏԱԶՕՏՈՂՆԵՐ

Աբգար արքայ	39, 40, 262, 303	Ահուրամզդա	164
Աբգար Ը	40	Ահրիման	163, 164, 298, 299
Աբեղեան Մ.	տե՛ս Մանուկ Աբեղեան	Աղայեան Է.	տե՛ս Էդուարդ Աղայեան
Աբեղեաններ	20	Աղան Արծրունի	277, 283, 304
Աբել	20	Աղբիանոս	120
Աբրահամ Խոստովանող	113, 114, 273, 274, 304	Աճառեան Հ.	տե՛ս Հրաչեայ Աճառեան
Աբրահամ Տէրեան	298	Ամանոր	165
Ագաթանգեղոս	11, 20, 21, 164-166, 207, 212, 213, 221, 222, 226-231, 235, 243, 245, 251, 262, 274, 291, 303	Ամասիա	253
Ադոնց Ն.	տե՛ս Նիկողայոս Ադոնց	Ամիանոս Մարկելինոս	13
Ադրամելէք	302	Անակ	212, 223
Աթենաս	168	Անահիտ	164, 168, 223
Աժդահակ	255	Անահիտ Յաննեան	299
Ալեքսան Թակոբեան	293	Անահիտ Փերիխանեան	194, 233, 288, 299
Ալեքսանդր Խոսրոն	300	Անանեան Պ.	տե՛ս Պօղոս Անանեան
Ալեքսանդր Մակեդոնացի	16, 167, 257	Անանիա Օիրակացի	287, 288
Ալի Կոլեսնիկով	290	Անատոլիոս	58, 89, 90, 98-100
Ակակիոս	199	Անդեկան	158
Ակէացիներ	101	Անթել	238
Ակիանեան Ն.	տե՛ս Ներսէս Ակիանեան	Անուշ-Վոսմ	283
		Անուշաւան	255
		Անրի	տե՛ս Ռեճէ Անրի
		Աշոտ Ա	8, 290

- Աշոտ Սարգսեան 299
 Աշուշայ 68, 69, 75, 118, 190, 232, 276, 277
 Ապոլոն 168
 Առանձար Ամատուցի 104
 Առաստամ Գնուցի 137, 138
 Առուան հազարապետ 23, 178
 Առաքել Իզրաբէանց 3
 Առաքելեան Բ. տե՛ս Բաքլէն Առաքելեան
 Ասողիկ 119, 234
 Աստղիկ 168
 Ասքանազ 251, 302, 303
 Ատոմ Գնուցի 88-90, 137, 292
 Ատտիկոս 200
 Ատրներսեմ 139, 140
 Ատրորսիզդ Արշական 112, 113, 116, 119
 Ատրվշնասայ Յոզմանդեան 119, 133, 136-138
 Ատրվշնասայ Տապեան 140
 Արամ մախնի 253-255
 Արամ Թոփչեան 301
 Արամ Տէր-Ղեւոնդեան 222, 229
 Արամազդ 164, 165, 168
 Արամայիս 253
 Արամանեակ 252, 253
 Արայ Գեղեցիկ 254, 255
 Արայեան Արայ 255
 Արեւշատեան Ս. տե՛ս Սեն Արեւշատեան
- Արիմթէոս 15
 Արիստակէս 42, 225
 Արիստոտել 279
 Արծրունիներ 19, 28, 40, 108, 113, 157, 276, 277, 302
 Արծան 268
 Արշակ արքայ Պարթեւաց 17, 257
 Արշակ Բ 13-15, 23, 54, 236-240, 263, 300
 Արշակ Գ 8, 9, 47, 54, 244
 Արշական (Արշակունի) 112, 116
 Արշակունիներ 7, 8, 11, 12, 16-18, 25, 28, 30, 45, 47, 52-57, 116, 120, 121, 170, 178, 222, 239, 244, 257, 263, 264, 290, 291, 293, 300, 301
 Արշաիր Արշարունի 105
 Արշէն 113
 Արսէն Հնծայիմ 108
 Արսուաղ 201, 228
 Արտակ Պալունի 101, 108
 Արտակ Ռշտունի 100, 292
 Արտաշէս Ա 18, 31, 38, 132, 169, 259-261, 303
 Արտաշէս Ե 9, 48, 49, 54, 56, 200, 201, 244, 245
 Արտաշէս, հայր Մանուէլ Մամիկոնեանի 23
 Արտաշէս Մաթեոսեան 185, 186, 188, 295, 296
 Արտաշէս, որդի Հմայեակ Մամիկոնեանի 129, 276

- Արտաշէս, որդի Մանուէլ Մամիկոնեանի 23
 Արտաշիսեաններ 11
 Արտաշիր զինուոր 104, 107
 Արտաշիր Պապական 165, 222, 223
 Արտաւազդ արքայ 168, 265
 Արտաւազդ Մամիկոնեան 23
 Արտաւան 11, 222, 238, 300
 Արտեմիս 168
 Արտեան տե՛ս Արտաւան
 Արտէն Գաբէղեան 100
 Աղայբէզեան Թ. տե՛ս Թաղեոս Աղայբէզեան
 Ափրողիտէ 168
 Աքեմենեաններ 37, 169
- Բաբգէն կաթողիկոս 279
 Բաբգէն Կիլիսերեան 211
 Բաբգէն Սիւնի 101, 138
 Բաքիկ 136
 Բաքլէն Առաքելեան 288
 Բաքլէն Յարութիւնեան 5, 287, 293
 Բազարատ 18
 Բազարատ Ուլուքաբեան 287, 301
 Բազարատունիներ 8, 18, 28, 30, 57, 256, 289
 Բազ 253
 Բազէ 153
 Բակ իշխան 110
 Բակուր 196, 197
 Բակուր Սիւնի 101
 Բաուեր Ա. 302
- Բասիլիոս Կեսարացի 176
 Բարդուղիմէոս 39, 40, 262
 Բարթիկեան Հ. տե՛ս Հրայշ Բարթիկեան
 Բարշամիմ 168
 Բարշղ Վահեմունի 140
 Բարսեղ Մակեդոնացի 301
 Բել 167, 252, 254
 Բենիամիմ 201
 Բզնունիներ 22, 253
 Բիրասայ Ածդաբակ 255
 Բրեֆիէ Լ. 295
 Բրիս Մեցգեր 288
 Բրքիշոյ 49, 120
- Գաբաղ 19
 Գաբէղեաններ 19
 Գաբրիէլ Վիկելեր 184, 295, 296
 Գաբրիէլա Ռիլոնոնեան 300
 Գազիկ Սարգսեան 5, 34, 250, 265, 271, 288, 301, 303, 304
 Գաղ 120, 121 (տե՛ս Գիտ կաթողիկոս)
 Գաղիշոյ Խորխոռունի 68, 100, 128, 129, 136, 292
 Գազարուն Կամսարական 8
 Գալերիոս 12
 Գալուստ Կիլիպէնկեան 299
 Գալուստ Տէր-Մկրտչեան 289, 299
 Գամեր 253
 Գայիանէ 224
 Գառնիկ 19, 253
 Գարեգիմ 62, 108

Գարիտ Ժ. տե՛ս Ժերար Գարիտ
 Գարշոյլ խորխոռունի 137, 138, 162
 Գարսոյեան Ն. տե՛ս Նիմա Գարսոյեան
 Գաֆուրով Բ. 294
 Գեղամ 19, 253
 Գետրգ Տէր-Վարդանեան 299
 Գետրգ Տիրացեան 250
 Գետրգեան Մ. 300
 Գեորգ Հախվերդեան 28
 Գիյոմ Բուդէ 295
 Գիստ կաթողիկոս 120, 121, 128, 129, 137, 278
 Գիստ Վահնունի 100, 101, 292
 Գնթունիներ 18
 Գնունիներ 19, 23, 137, 138
 Գոհար Մուրադեան 287, 298
 Գույումջեան Տ. տե՛ս Տիգրան Գույումջեան
 Գրիգոր Լուսաւորիչ 21, 41-43, 49, 124, 212-214, 221-230, 245, 262, 264, 274, 289, 298
 Գրիգոր Մագիստրոս 275
 Գրիգոր Մամիկոնեան 156
 Գրիգոր Նազիանզացի 176
 Գրիգորիս 230 (տե՛ս Գրիգոր Լուսաւորիչ)
 Դանայ 200
 Դանիէլ եպիսկոպոս 25, 186-188
 Դանիէլեան Է. տե՛ս Էդուարդ Դանիէլեան
 Դատ 19
 Դաւիթ թագաւոր 189
 Դաւիթ Մամիկոնեան 207
 Դեմշապուհ 64-66
 Դիոկղէտիանոս 7, 224
 Դիոն Կասիոս 287
 Դիոս 168
 Դիրիմգեր Դ. 296
 Դրաստամատ 239, 240
 Եզնակ 289
 Եզնիկ Կողբացի 120, 205, 221, 268-270, 304
 Ելենա Մեշչերսկայա 303
 Եղիշէ 23, 33, 34, 54-56, 58, 60, 62, 63-74, 76-92, 95, 96, 98, 100-102, 104-114, 116, 118, 122, 127, 177, 207, 210-221, 226, 245, 247, 273, 274, 288, 290-293, 297, 298, 304
 Եղիսարիոս 89 (տե՛ս Փլորենտինոս)
 Եսայի մարգարէ 302
 Երաստ 253
 Երեմեան Ա. տե՛ս Սուրէն Երեմեան
 Երեմիա եպիսկոպոս 201, 202, 228
 Երեմիա մարգարէ 302
 Երուանդ Տէր-Մինասեան 55, 185, 215, 288-290, 296-298
 Երուանդունիներ 11
 Զագա Ալեքսիճէ 203, 296
 Զարեմ 156
 Զարմայր 255
 Զարմիհր Հազարաւոյստ 124, 133, 145, 146, 149

Զաքարեայ 234
 Զեւս 168
 Զէնոն 44
 Էդուարդ Աղայեան 296
 Էդուարդ Դանիէլեան 302
 Ընծայիմ տոհմ 22
 Ընջուղ 100
 Թադէոս Աղայրեզեան 290
 Թադէոս 39, 40, 262, 303
 Թէոդոս 7, 58, 59, 81, 88-91, 199, 212
 Թէոդորոս Մոպսուեստացի 183-185, 272
 Թիրաս 253
 Թոմսոն Ռ. տե՛ս Ռոբերտ Թոմսոն
 Թովմայ Արծրունի 234, 276
 Թորգոմ 251, 253
 Ժան Պիեռ Մահէ 233, 271, 301
 Ժերար Գարիտ 222, 301
 Իմդրա 165
 Իւանով Վ. տե՛ս Վեաչեսլավ Իւանով
 Իւզբաշեան Կ. տե՛ս Կարէն Իւզբաշեան
 Լանգլուս Վ. տե՛ս Վիկտոր Լանգլուս
 Լեւոն Ա կայսր 128
 Լեւոն Աղոյեան 233
 Լեւոն Խաչիկեան 250, 298
 Լեւոն Տէր-Պետրոսեան 297, 298, 301, 304
 Լիբանիոս 184, 185, 272
 Լիկիանոս 223
 Լուի Մարիէս 304
 Խաչիկեան Լ. տե՛ս Լեւոն Խաչիկեան
 Խոռ 253
 Խոսրով Ա 11, 12, 165, 166, 212, 222, 223, 287
 Խոսրով Բ 145, 235
 Խոսրով Գ 47, 54, 244
 Խոսրով Դ 9, 47
 Խոսրովիդուխտ 224
 Խոսրովիկ 281
 Խորեն խորխոռունի 101, 108
 Խորեն Որկովեցի 114
 Խորխոռունիներ 18, 56, 120, 253
 Կադմէացիներ 22, 288
 Կադմոս 252
 Կամիլա Տրեւեր 294
 Կամարականներ 99, 137, 138, 140, 142, 157, 278
 Կասպեցիք 22
 Կարապետ Մելիք-Օհանջանեան 176, 297
 Կարէն Իւզբաշեան 290, 293, 297, 300
 Կարտիր 51

- Կիս Մուրադեան 5, 176
 Կիրակոս Գանձակեցի 234
 Կիրիլ Թումանով 20, 287, 302
 Կիրեղ-Կոստանդին 193
 Կիրոս 255
 Կոլեսնիկով Ա. տե՛ս Ալիյ Կոլեսնի-
 կով
 Կոստանդինոս Ա 13, 21, 225
 Կոստանդինոս Բ 13
 Կոստաս 13
 Կորիւն 54, 93, 174-181, 185, 186,
 189, 191, 194, 195, 197, 199-
 205, 207-209, 213, 218, 221,
 228-230, 244, 251, 263, 265-
 270, 278, 295-297
 Կրկեաշարեան Ա. տե՛ս Սիմոն
 Կրկեաշարեան
 Հազարատոխտ 146-148 (տե՛ս -
 Զարմիր Հազարատոխտ)
 Համազասպ Մամիկոնեան 23, 105
 Հայկ Բերբերեան 299
 Հայկ նահապետ 167, 252-254, 256
 Հայկազեաններ 30
 Հայր-մարդպետ 20
 Հարմայ 253
 Հերակլէս 168, 238
 Հերոդոտոս 164
 Հեփեսոս 168
 Հիպոդիտոս Հոմէլացի 253, 302
 Հմայեակ Դիմաքսեան 108
 Հմայեակ Մամիկոնեան 89, 110,
 118, 129, 132, 143, 276, 291
 Հյուզըն Ռ. տե՛ս Ռոբերտ Հյուզըն
 Հոմերոս 255
 Հոնիսիմէ 224
 Հոռիանոս 189, 192, 193
 Հրահատ Կամսարական 35, 137,
 144
 Հրաչ Բարթիկեան 185, 296
 Հրաչեայ 256
 Հրաչեայ Աճառեան 4, 119, 290,
 292, 294
 Զեռէս 18
 Զուիկ 130, 276, 277, 283
 Ղազար Փարպեցի 10, 18, 48, 49,
 52-54, 56, 61, 67-69, 71, 74-78,
 80, 82-84, 87, 89-91, 97, 99,
 104-109, 111-113, 118, 121-
 124, 129, 130, 134-137, 139,
 141, 143, 145-150, 154, 156,
 158-162, 170, 177, 180, 181,
 195, 197, 207, 211, 213, 215,
 217, 227, 230, 231, 233, 234,
 243-247, 256, 266, 267, 275-
 284, 291, 293, 294, 298, 300,
 301, 304
 Ղեւոնդ Ալիշան 28
 Ղեւոնդ երէց 76, 81, 106, 110, 113,
 200, 205, 268-270, 304
 Մաթեւոսեան Ա. տե՛ս Արտաշէս
 Մաթեւոսեան
 Մալխասեանց Ս. տե՛ս Ստեփանոս
 Մալխասեանց
 Մահէ Ժ. Պ. տե՛ս Ժան Պիեռ Մահէ

- Մաղաքիա Օրմանեան 109, 120,
 290-292
 Մամիկոնեաններ 23, 56, 75, 76, 99,
 130, 135, 142, 143, 157, 158,
 178, 216, 256, 279, 291, 294
 Մանան 66, 120
 Մանաւազ 253
 Մանաւազեաններ 253
 Մանգնոս Մամիկոնեան 119
 Մանէն Ապահունի 100, 292
 Մանէն Ամատունի 100
 Մանուէլ Մամիկոնեան 23
 Մանուկ Արեղեան 174, 235, 278,
 280, 295, 297, 300
 Մաշոց 178 (տե՛ս Մաշտոց)
 Մաշթոց 174, 178, 295 (տե՛ս Մաշ-
 տոց)
 Մաշտոց 23, 50, 54, 121, 170, 172,
 174, 176-202, 204, 206-209,
 213, 214, 218, 228-230, 243-
 245, 249, 251, 263-271, 273,
 278, 280, 281, 295, 296, 304
 Մառ Ն. տե՛ս Նիկողայոս Մառ
 Մաստուրիոս 182-185 (տե՛ս Մաշ-
 տոց)
 Մասրովպ, Մասրուպ, Մաստ-
 րովք 185 (տե՛ս Մաշտոց)
 Մարկիանոս 89, 90, 98
 Մարկո Բաիս 300
 Մարտիրոս Միմասեան 304
 Մաքսիմիանոս Դայա 40
 Մեթոդիոս 193
 Մելիտէ 120
 Մեհրուման Արծրունի 15
 Մեհրուման եպիսկոպոս 40
 Մեհրուման իշխան 291
 Մեշչերսկայա Ե. տե՛ս Ելենա Մեշ-
 չերսկայա
 Մեսրոպ, Մեսրովպ, Մեսրոբ, Մես-
 րովք, 177, 178, 181, 214, 263
 (տե՛ս Մաշտոց)
 Մերսիե Շ. տե՛ս Շառլ Մերսիե
 Միհր 165, 168
 Միհրան 123, 141-144, 146, 153
 Միհրան տոմ 119, 146
 Միհրանբեմ 10, 66, 67, 87, 95, 97,
 103, 104, 106, 120, 121, 246,
 268, 304
 Միհրշապուհ 56 (տե՛ս Ներշապուհ
 Արծրունի)
 Միհրվշնասպ Շուարշացի 150
 Միմասեան Մ. տե՛ս Մարտիրոս
 Միմասեան
 Միշել Վան-Էսթրոկ 222
 Միքայէլ Նալբանդեան 284, 304
 Միքայէլ Չամչեան 3, 109, 292
 Մկրտիչ Էմին 28
 Մկրտիչ Իւզբաշեան 3
 Մովսէս Դասխուրանցի 32, 292,
 293
 Մովսէս եպիսկոպոս 196
 Մովսէս Խորենացի 8, 17-20, 24,
 38, 45-48, 166, 167, 170, 177,
 179, 181, 208, 236, 247-250,
 252-265, 270-272, 290, 294,
 297, 301-304
 Մովսէս կրօնաւոր 283
 Մովսէս Մանազկերտցի 120

Մովսէս փիլոսոփոս (Խորենացի*) 281
 Մովսէս-բէկ Եղոտեանց 3
 Մուշէ եպիսկոպոս 279
 Մուշէ երէց 113
 Մուշէղ սպարապետ 23
 Մուշէղ Մամիկոնեան 145, 146
 Մուշկան Նիսալատուրտ 103-105, 107, 110, 111, 292
 Մուրադեան Գ. տե՛ս Գոհար Մուրադեան
 Մուրադեան Կ. տե՛ս Կիմ Մուրադեան
 Մուրադեան Պ. տե՛ս Պարոյր Մուրադեան

 Յաքեթ 251, 253
 Յաքէլ 186
 Յագդ Սիւնի 144
 Յազկերտ Ա 47, 48, 52, 79, 244
 Յազկերտ Բ 10, 50, 55, 58-65, 67-69, 76, 78, 81, 87, 95-98, 115, 118, 119, 122, 126, 127, 211, 216, 246, 274, 290, 293, 294
 Յազկերտ աղուան 159
 Յակոբ Անասեան 300
 Յակոբ Մամանդեան 34, 184, 215, 250, 295
 Յակոբ Քիրտեան 304
 Յակոբեան Ա. տե՛ս Ալեքսան Թակոբեան
 Յակոբսոն Ռ. 294
 Յարութիւնեան Բ. տե՛ս Բաբկէն Յարութիւնեան

Յիսուս Քրիստոս 39, 40, 43, 44, 74, 80, 88, 201, 212, 213, 217, 262, 264, 282, 283, 303
 Յոհան 240-242
 Յովիանոս 14
 Յովհան Եկեղեցացի 189, 268
 Յովհան Մամիկոնեան 276
 Յովհան Մամիկոնի 137, 139, 157
 Յովհան Ոսկեբերան 272
 Յովհաննէս Աւետարանիչ 204
 Յովհաննէս Դրասխանակերտցի 299
 Յովհաննէս Թումանեան 30, 232
 Յովնաթան 202
 Յովսէպոս Փլավիոս 287
 Յովսէփ Հողոցմեցի 50, 67, 88, 110, 113, 120, 176, 207
 Յովսէփ Պաղանցի 189, 268, 304
 Յովսէփ Օրբէլի 288, 297
 Յովիանոս 13, 14
 Յուսիկ 263
 Յուստիմիանոս 302

 Նաբուգոդոնոսոր 255, 256
 Նանէ 165, 168
 Նար-Դոս 234
 Նեստոր 183
 Ներշապուր Ռմբոսեան 88
 Ներոն 10
 Ներսէն արքայից արքայ 12
 Ներսէն Կամսարական 35, 137, 140, 143, 288

Ներսէն Ուրծայ իշխան 100
 Ներսէն Քաջբերունի 108
 Ներսէս Ակիմեան 184, 188, 211, 214, 295, 296, 301
 Ներսէս Լամբրոնացի 302
 Ներսէս կաթողիկոս 17, 43, 49, 182, 263
 Ներսշապուր 153
 Նիխոր 4, 149, 150, 152-156, 161
 Նիկողայոս Աղոնց 178, 182-185, 215, 250, 292, 295
 Նիկողայոս Մառ 280
 Նիհա Գարսոյեան 233, 288, 298, 300
 Նիհուսա 254
 Նոյ 302
 Նորայր Բիզանդացի 271

 Օաքիթ 179
 Օամբաթ 256
 Օամիրամ 254, 255
 Օապուր Բ 14, 236-239, 273
 Օապուր Գ 55, 195
 Օապուր դպիր 150
 Օապուր Հայոց թագաւոր 47, 52, 244
 Օապուր Միհրանեան 146-149
 Օառլ Մերսիե 304
 Օառլ Ռիմու 233
 Օարայ 253
 Օարաշ Սմբատեան 297
 Օմուէլ 49, 120
 Օուշանիկ 52, 132

Ողոմասի 13
 Ռրմիգդ 118, 119, 127, 292
 Ուլուքաբեան Բ. տե՛ս Բագրատ Ուլուքաբեան

 Պահլաւունիներ 30
 Պապ 15, 17, 20, 263
 Պարթև տոհմ 223
 Պարոյր Մուրադեան 5, 222, 234, 250, 288, 293, 298, 299, 301, 302
 Պարոյր Սկայորդի 255
 Պետրոս Նորեհադ 295
 Պերոզ 51, 64, 118, 119, 127-130, 133, 144, 147, 148, 154-157, 292-294
 Պլատոն 271, 272
 Պօղոս Անանեան 289, 295, 296
 Պօղոս առաքեալ 72, 204, 282, 283

 Ջաղայ 197, 198
 Ջիւանի 232

 Ռահամ 119
 Ռեմէ Անրի 295
 Ռշտունիներ 101
 Ռոբերտ Թոմսոն 211, 222, 233, 271, 297-299, 300-302
 Ռոբերտ Հյուզըն 287

 Սաթենիկ 259-261, 303

- Սահակ Բագրատունի 135, 136, 140, 142, 144, 207, 293, 294
- Սահակ Կամարական 35, 143, 157, 294
- Սահակ Պարթև 48-50, 121, 132, 176, 185-187, 196, 200, 204-206, 209, 213, 214, 244, 245, 249, 263, 266-268, 270, 271, 273, 278, 280, 301, 304
- Սահակ Ռշտունեաց եպիսկոպոս 113
- Սամուել Անեցի 234, 289
- Սամուել եկեղեցական 113
- Սայեաթ-Նովա 28, 232
- Սանասար 302
- Սանատրուկ 258
- Սանեսան 13
- Սասան 54, 222
- Սասանեաններ 10-12, 14, 15, 18, 28, 37, 38, 43, 47, 50, 51, 57, 59-61, 79, 86, 101, 121, 131, 132, 135, 155, 165, 170-174, 210, 226, 257, 278, 292-294, 300
- Սարգիս վեստ 30
- Սարգսեան Ա. տե՛ս Աշոտ Սարգսեան
- Սարգսեան Գ. տե՛ս Գագիկ Սարգսեան
- Սարդանապալոս 255
- Սեբեոս 216, 297, 298
- Սեբուխտ Նիխորական 91, 95
- Սեն Արեւշատեան 215, 298
- Սենեքերիմ 302
- Սէմ, Սիմ 250, 253
- Սէլադ 232
- Սիմոն Կրկեաշարեան 287
- Սիսական տոհմ 177
- Սկայորդի 255
- Սմբատ Բագրատունի 260
- Սմբատ նախահայր 256
- Սմբատեան Ծ. տե՛ս Ծաւարշ Սմբատեան
- Սողոմոն թագաւոր 189, 204
- Սոտնիկեան Պ. 287
- Սուրէն Երեմեան 34, 77, 287, 288, 290
- Սուրէն տոհմ 18
- Սուրմակ 48, 49, 120
- Ստեփան Կանայեանց 299
- Ստեփանոս Մալխասեանց 232, 233, 293, 294, 299, 300, 303
- Ստեփանոս Օրբէլեան 276
- Ստրաբոն 7, 164, 294
- Վագգէն 52, 132, 133, 294
- Վախթանգ Գորգասալ 121, 131-134, 139, 141, 146, 147
- Վահագն 165, 166, 168, 255
- Վահան Ամատունի 23, 50, 56, 65, 67, 89, 101, 120, 176, 177, 231
- Վահան աղուան 91, 92
- Վահան Գնունի 108
- Վահան Մամիկոնեան (Դ դար) 15
- Վահան Մամիկոնեան մարգպան 4, 23, 120, 122-125, 129-131, 133-136, 139, 140, 142-162, 207, 243, 247, 275-277, 279, 282, 283, 293, 301

- Վահրամ Ե Գոռ 48 (տե՛ս Վոսմ)
- Վահրիմ 186
- Վաղարշ Ա Պարթև 10
- Վաղարշ Բ Արշակունի 11
- Վաղարշ Սասանեան 148-150, 156-158
- Վաղարշակ Անձիտի իշխան 23
- Վաղարշակ արքայ 17-19, 24, 38, 257
- Վաղէս 15
- Վանատուր 165
- Վաչագան Բարեպաշտ 159, 293
- Վաչէ Աղուանից թագաւոր 127, 159, 292, 293
- Վաչէ Մամիկոնեան 23
- Վասակ Արծրունի 276, 277
- Վասակ Մամիկոնեան զօրավար 76, 98
- Վասակ Մամիկոնեան սպարապետ 23
- Վասակ, որդի Հմայեակ Մամիկոնեանի 129, 137, 138, 142, 145, 156, 276, 294
- Վասակ Սիւնի 50, 57, 63, 67, 69, 75, 77, 83-86, 88-90, 92-98, 100, 101, 103, 104, 106, 110, 112-116, 118, 119, 128, 177, 218-220, 245, 246, 276, 291, 292
- Վարազշապուհ Պալուանի 100
- Վարազվաղան 245, 246
- Վարդ Մամիկոնեան 129, 134, 140, 159, 294
- Վարդան, հայր Մաշտոցի 177, 178
- Վարդան Մամիկոնեան 4, 23, 52, 63, 64, 67, 69, 75-78, 81-84, 86-95, 97, 99, 101-103, 105, 107, 108, 114-117, 119, 120, 122, 129, 132, 213, 216, 218, 219, 267, 274, 276, 290-292
- Վարդան Մամիկոնեան (Կարմիր) 211, 216
- Վարսկէն 132 (տե՛ս Վագգէն)
- Վեաչեալավ Իւանով 294
- Վեհմիհրշապուհ 48
- Վեհվեհնամ 133, 136, 153
- Վըրըթրագնա 165
- Վիկտոր Լանգլուա 301
- Վիմլիեր Գ. տե՛ս Գարրիէլ Վիմլիեր
- Վշնասպարտ տե՛ս Նիխոր
- Վուլֆիլա 193
- Վոսմ 48-50, 181
- Վոսմշապուհ արքայ 9, 47-49, 54, 181, 186, 189, 194, 195, 244
- Վրէն Վանանդացի 139, 140, 156
- Վրթանէս 263
- Վրիւ սարի 130, 131
- Վրիւ Խորխոռունի 50
- Տակիտոս 287
- Տանատ Գնթունի 108
- Տերտուղիանոս 40
- Տէր-Ղեւոնդեան Ա. տե՛ս Արամ Տէր-Ղեւոնդեան
- Տէր-Միմասեան Ե. տե՛ս Երուանդ Տէր-Միմասեան

Տէր-Մկրտչեան Գ. տե՛ս Գալուստ Տէր-Մկրտչեան	Ցոլակ 253
Տէր-Պետրոսեան Լ. տե՛ս Լեւոն Տէր-Պետրոսեան	Փառեն 240 Փառոխ 253
Տէր-Վարդանեան Գ. տե՛ս Գեորգ Տէր-Վարդանեան	Փաւստոս Բուզանդ (Բիւզանդա- ցի) 9, 14, 23, 25, 31, 32, 53, 54, 178-182, 230-243, 251, 256, 263, 299, 300
Տէրեան Ա. տե՛ս Արքաճամ Տէ- րեան	Փերիխանեան Ա. տե՛ս Անահիտ Փերիխանեան
Տիգրան Բ 16, 31, 38	Փիլոն Աղեքսանդրացի 211, 214, 215
Տիգրան Գոյումջեան 299	Փլորենտինոս 89, 90
Տիգրան Երուանդեան 255	Փոստոս տե՛ս Փաւստոս Բուզանդ
Տիմոթէոս Կուզ 215, 289	Փոտ 183, 185, 295
Տիր (Տիր) 165, 168	Քամ 250
Տիրան արքայ 13, 23, 32, 54, 179, 263	Քանանացիք 18
Տիրացեան Գ. տե՛ս Գեորգ Տիրա- ցեան	Քաջաջ 113
Տիրոց Բագրատունի 100	Քսենոփոն Աթենացի 30, 37
Տովբիթ 302	
Տրդատ (Տրդատ Մեծի հորեղ- բայր*) 287	Օլիմպիա 13
Տրդատ Ա 10, 11, 18, 172, 287	Օրբէլի Յ. տե՛ս Յովսէփ Օրբէլի
Տրդատ Գ Մեծ (Տրդատիոս) 12, 21, 88, 212, 213, 221-226, 228, 235, 257, 262, 263, 287	Օրմանեան Մ. տե՛ս Մաղաքիա Օր- մանեան
Տրեւեր Կ. տե՛ս Կամիլա Տրեւեր	Ճեհրատեան Հ. 288
Րաֆֆի 14	

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ, ՅԵՂԱՆՈՒՆՆԵՐ*

Աթէնք 271, 272	Անի 8, 39, 84, 136
ալաններ 259, 260, 303	Անի-Կամախ 164
Ախալցխա 3	Անձիտ 23, 147
Ախուրեան 258	Անյուշ բերդ 14, 238, 239
Ակէ 100	Անտիոք 89, 98, 183, 184, 271-273
Ակոռի 137, 138, 160, 162	Աշնակ 99
Աղեքսանդրիա 40, 271-273	Աշտիշատ 165
Աղձնիք 22, 69, 291	Ապար աշխարհ 59, 270, 274
աղուաններ 60, 86, 91, 92, 169, 173, 174, 201, 227	ապարհացիներ 105
Աղուանք 9, 10, 37, 63, 69, 73, 80- 82, 85, 87-93, 95, 98, 99, 127, 128, 132, 133, 141, 142, 145, 149, 159, 179, 182, 197, 201-204, 228, 244, 290-293	Ապրակունիս 179
Աղվերան 298	Առաջաւոր Ասիա 169
Ամիդ 189, 279, 304	Առաջին Հայաստան 302
Այսրկովկաս 127, 148, 155, 173, 203	Առաջին Հայք 7
Այրարատ 67, 90, 141, 144, 160, 244, 268, 303	Ատրեստան 21, 114, 254, 273
Այրարատեան թագաւորու- թիւնք 302	ատրեստանցիներ 163, 302
Անգեղ տուն 22, 239, 291	ատրիներ 40, 49, 51, 144, 170, 186, 193
Անգղ 75-77, 81-85, 93, 94, 106, 219, 270	Ատրիք 40, 42, 189, 194, 268
	Ասքանազեան ազգ 251
	Ատրպատական 13, 88, 92, 103, 136, 139, 149, 153
	Արագած 253
	Արագածոտն 99, 253, 276
	Արաման 75

* Ցանկում բաց են թողնուած Հայաստան, Բայեր, Հայոց, Հայք, պարսիկներ, Պարսից, Պարսկաստան անունները, որոնք հանդիպում են գրեթէ բոլոր է-
ջերում:

Արարադ (Արարատ) երկիր 252, 302, 303
 Արարատեան դաշտավայր 244
 Արարատի լեռներ 302
 Արաքս գետ 194
 Արեւաց աշխարհ 73, 87, 105, 111, 127, 130, 137, 150-155, 157
 Արեքանոս 262
 Արեւելեան Հայաստան 8
 Արեւելեան Վրաստան 146, 196
 Արեւմտեան Հայաստան 8, 164, 200, 202, 302
 Արեւմտեան Վրաստան 147
 արիներ 149
 Արմազի 170
 Արմաիր 99, 253, 258
 Արմենիա 7, 302
 Արմէն երկիր 254
 Արմէնիկք 254
 Արուստան 21
 Արուճ 99
 Արտագերս 84
 Արտազ 103-105, 139, 153, 262
 Արտաշատ 9, 39, 67, 83, 84, 99, 101, 103, 136, 165, 224, 268, 293
 Արցախ 3, 9, 98, 110
 Աքեմենեան պետութիւն 16
 բաբելացիներ 163, 167
 Բաբելոն 252, 256, 302
 Բագրեւանդ 75, 268
 բահլուճներ 35
 Բաղասական 201
 Բելյուրթ 272
 Բիսիմելե 15
 Բիզանդական կայսրութիւն 8, 9, 47, 58, 60, 91, 199, 235
 Բիզանդական Հայաստան 89, 98, 146, 147, 159, 160, 200, 302
 քիզանդացիներ 8, 60, 91, 231, 232, 234, 235
 Բիզանդիա 42, 49, 76, 90, 91, 128, 131, 185, 199, 277, 291, 301
 Բիզանդիոն 231
 Բիթանիա 234
 Բողբերդ 130
 Բութանիա 234
 Գազա 271
 Գառնի 37, 84, 99, 168, 172, 253, 287, 288
 Գեղ 253
 Գեղաքունի 253
 գեղեր 105
 գորթեր 173
 Գողթն 36, 166, 179, 181, 185
 Գուգարք 21, 22, 52, 68, 88, 118, 130, 132, 141, 276
 Դասն 69
 Դերբենդ 60
 Դիարբեքիր 279
 Դիդի Սոմխեթի 7
 Դու 143, 146, 148, 162

Դուին 44, 136, 138, 139, 144-146, 156-158, 161, 293
 Դրասխանակերտ 99
 Եգեր աշխարհ 147
 Եգիպտոս 169
 Եդեսիա 39-41, 170, 189, 190, 262, 268, 271, 273
 Եկեղիք 164, 165, 291
 Եղիմո 153
 Երազամոյն 165
 Երամոնք 99
 Երասխ գետ 136, 137, 194, 253, 258
 Երեւան 3, 6, 287
 Երզնկայ 165
 Երէզ աւան 165, 223
 Երկրորդ Հայաստան 302
 Երկրորդ Հայք 7, 199
 Երուանդաշատ 258
 Երուսաղէմ 271
 Երրորդ Հայաստան 302
 Եփեսոս 183, 268
 Եփրատ գետ 7, 40
 Զարեհաւան 77, 82, 85, 94, 219
 Զարեւանդ 103, 105, 149
 Զենաքս 273
 Էգրիսի 147
 Էջմիածին 299
 Էրզրում 8
 Թբիլիսի (Թիֆլիս) 3, 28, 131
 Թորգոմեան ազգ 251, 252
 Իզմիկ 42
 Իսրայէլ 189
 Իտալիա 271
 Իրան 60, 132, 148
 լիդիացիներ 164
 Լփիմք 69
 Խաղխաղ 91
 Խաղտիք 98, 110, 146
 Խալլանդուրներ 60, 127
 Խորասան 59
 Խուժաստան 297
 Մաղկոտն (Մաղկոտն) 75, 77, 141
 Մաղէք 69
 Մոփք 40, 147, 291
 Կանգարք 141
 Կապադովկիա 7, 40, 41, 43, 223
 Կապոյտ լեռ 110
 Կասպից ծով 60, 105
 Կատիշներ 105, 138
 Կարթագէն 273
 Կարին 8, 160
 Կարմիր Բլուր 35, 36

- Կեսարիա 13, 41-43, 223, 225, 272
 Կիլիկիա 27, 183
 Կողբ 268
 Կոստանդնուպոլիս 42, 43, 90, 110, 200, 231, 235, 268, 270-272, 304
 Կովկասեան լեռներ 91
 Կորդոբ 69, 98
 Կուաշ աւան 99
 Կոր գետ 91, 132, 142
 Կոուակք 137
- Հայաստան ազգ 186
 Հայկական լեռնաշխարհ 7
 Հայկաշէն 252
 Հայոց լեռներ 141, 302
 Հաշտեանք 147, 291
 Հացեաց 178
 Հացեկաց 177
 Հելլադա 271
 Հեր 103, 105, 149, 153
 Բեփթաղներ 147, 154, 294
 Բնդիկներ 165
 Հնդկաստան 39, 169
 Հոնաց Պահակ 91
 Բոներ 60, 68, 92, 110, 113, 127, 139, 141, 294
 Հոռոմ տուն 146
 Հոռոմ 7, 10-12, 34, 88, 165, 212, 213, 222, 224, 225, 271-273
 Հոռմէական կայսրութիւն 8, 10, 13, 40, 41, 51, 55, 147, 172
- Բոռմէացիներ (բոռոմներ) 10, 12-14, 59, 96, 98, 129, 134, 143, 199, 277
 Բրէւաներ 39, 256
 Զողակերտ 99
 Ըարմանայնի դաշտ 141, 143, 145, 160
 Ըորայ Պահակ 60, 68, 91
- Մալաթիա 40
 Մամեստիա (Մոպսուեստիա) 183
 Մասիս 137, 253, 302
 Մասքթաց կողմեր 21
 մասքուրթներ 13
 Մարաստան 37
 Մարդպետական գաւառ 20
 Մարք 255
 Մելիտիմէ 7, 40, 199
 Մեծ Հայք 7-9, 15, 21, 22, 30, 42, 132, 177, 185, 199, 222, 250, 255, 256, 290
 Միջագետք 12, 194, 279
 Միջնաշխարհ 110
 Մծբին 12, 272, 287, 290
 Մկնառիմք 143
 Մոկք, Մոկս 274, 288
 Մոսկուա 28
- Յաբեթեան ազգ 251

- Յոյնք, յոյներ 8, 16, 32, 42, 43, 53, 53, 59, 73, 75, 76, 88-90, 93, 105, 134, 164, 199, 212, 223, 244, 254, 263, 267, 268
 Յունահայաստան 8
 Յունաստան 34
- Նախիջեւան 179
 Նախնաւան 137
 Ներսեհապատ 139, 140, 160, 161
 Նիկիա 42, 225, 268
 Նիւշապուր 273
 Նոր Ծիրական 21
 Նոր քաղաք 194, 200 (տե՛ս Վաղարշապատ)
 Նուարակ 4, 5, 125, 149, 150, 153, 155
- Օաֆապիվան 24, 50, 120, 214, 218, 288
 Օաղագոմք 146, 160
 Օաւարշան 262
 Օիրակ 253
 Օիրակի դաշտ 133
 Օուշի 3
- Ոստան 293
 Ուռնայ 170
 Ուտիք 9, 291
 Ուրարտու 15, 36, 37, 302
 Ուրծ 100
- Ուրմիա լիճ 37
 Ուրֆա 40
- Չորրորդ Հայաստան 302
- Պահ դուռ 61
 Պաղեստին 271
 Պայկուլի 287
 պարթեւներ 10, 12, 257, 300
 Պարթեւստան 10-12, 18
 Պետերբուրգ 284 (տե՛ս Սանկտ Պետերբուրգ)
 Պետրոպաւոյովեան բերդ 284
 Պոնտոս 40
- Ռահ գետ 194
 Ռշտունիք 274
 Ռուսաստան 3
- Սամոսատ 189
 Սանկտ Պետերբուրգ 6, 284, 288, 304
 Սեբաստիա 7
 Սիմայ թերակղզի 203
 Սիւնիք 22, 28, 85, 86, 88, 92, 99, 101, 107, 113, 136, 139, 196, 219, 245, 278, 279, 283, 293
 սլաւոններ 173
 Սուրբ Կաթարիմէ վանք 203

Վաղարշապատ 35, 148, 157, 194, 200, 224, 225, 279	126, 129, 132, 218, 219, 276, 290, 292
Վանայ լիճ 36, 178	Տղմուտ գետ 105, 115
Վանանդ 121	Տմորիք 98, 110
Վարազկերտ 137	Տրոյա 255, 256
Վարայրվար 146	Տփղիս 131
Վարդանաշատ 99	
Վարշակի ջերմուկ 141	Ցուլակերտ 253
Վեճեսիկ 234	
Վիեճնա 211	Փայտակարան 95, 103
Վիրք 9, 10, 12, 21, 69, 73, 87, 88, 98, 118, 121, 124, 131-134, 139, 141, 142, 144-149, 159, 170, 179, 196-198, 202, 244	Փառախոտ 99, 253
Վրացիներ 7, 60, 68, 86, 132, 134, 141, 147, 160-162, 169, 172, 174, 198, 202, 227	Փառանգիոն 130
	Փարպի 276
	Փոքր Ասիա 42, 43, 167-169
	Փոքր Հայք 7, 199
Տաղական 59	Քաղկեդոն 43, 44
Տաճկաստան 297	Քարթլի 131, 196
Տայք 89, 110, 129, 130, 136, 143, 160, 273, 291	քուշաններ 59, 60, 68, 239, 294
Տարօն 25, 165, 177, 178	օճոգուրներ 60
Տեկոր 66, 294	Օշական 99
Տիգրանակերտ 39, 172	Օսրոյենէ 40
Տիգրոն 48, 59, 63, 68, 69, 75, 79, 86, 93, 94, 110, 112-114, 118, 122,	Օրդուբադ 179
	ֆրանսիացիներ 304

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....	4
ԳԼՈՒԽ Ա	
«Ջի ԹէՊԷՏ ԵՒ ԵՄՔ ԱՆՈՒ ՓՈՔՐ».....	8
Թագաւորական իշխանութիւն.....	17
Զօրք	22
Տնտեսութիւն, ֆինանսներ.....	24
Արդարադատութիւն.....	25
Հասարակութիւնը	26
Հայոց եկեղեցին.....	40
ԳԼՈՒԽ Բ	
«ՄԱՀ ԻՄԱՑԵԱԼ՝ ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆ Է...».....	48
ԳԼՈՒԽ Գ	
«ՊԱՐՍԿԻ ԱՌՆ ԵՐԿԻՐ Ո՛Ղ ՊԱԳՑՈՒՔ»	119
ԳԼՈՒԽ Դ	
«ԾԱՆԱԶԵԼ ԶԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԶԽՐԱՏ...»	164
ՎԵՐԶԱԲԱՆԻ ՓՈՒՆԱՐԷՆ.....	277
ՀԱՊԱԻՈՒՄՆԵՐ	278
ԾԱՆՕԹԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ	279
ՑԱՆԿԵՐ	307

ԿԱՐԷՆ ԻԶՔԱՇԵԱՆ

ԱՄԱՐԱՅՐԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻՑ ԴԵՊԻ ՆՈՒԱՐՍԱԿԻ ՊԱՅՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Գիրքը տպագրութեան է պատրաստուել Հայաստանի ամերիկեան համալսարանի «Ալիս Օհաննասեան» Հայ դասական մատենագրութեան թուային գրադարանում (www.digilib.am):

Համակարգչային ձեւաորումը՝

Ստանուել Յարութիւնեանի (www.digilib.am)

Սրբագրումը՝

Անուշ Սիմոնեանի (www.digilib.am)

Ստորագրված է տպագրության 01.07.05 թ.:
Չափսը՝ 60x84 1/16: Թուղթը՝ օֆսեթ: Հրատ. 17.0 մամուլ,
տպագր. 20.5 մամուլ=19.1 պայմ. մամուլի:
Պատվեր՝ 62:

Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1

Երևանի համալսարանի տպարան, Երևան, Արծյան 52

Գալուստ Գյուլբենկյան հիմնարկության հովանավորությամբ Երևանի համալսարանի հրատարակչությունը լույս է ընծայել հետևյալ գրքերը

1. Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Քախչյան, Հ. Բարսեղյան - Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատոր 3, 1998:
2. Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Քախչյան, Հ. Բարսեղյան - Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատոր 4, 1998:
3. Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Քախչյան, Հ. Բարսեղյան - Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատոր 5, 2001: (Բառարանը 2002 թ. արժանացել է ՀՀ նախագահի մրցանակին «Մարդկային զարգացման և հումանիտական արժեքների, այդ թվում՝ հումանիտար գիտությունների զարգացման բնագավառում ձեռքբերված նվաճումների համար»):
4. Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ - Տիեզերական պատմություն (աշխարհաբարի վերածեց Վ. Վարդանյանը), 2000 թ.:
5. Հրաչյա Գարրիբեյան - Հայկական լեռնաշխարհը, 2000 թ.:
6. Ալեքսանդր Մարգարյան - Հայերենի հոլովները, 2000 թ.:
7. Նահապետ Քուչակի բանաստեղծական աշխարհը, աշխատասիրությամբ ակադեմիկոս Հրանտ Թամրազյանի, Եր., 2001 թ.:
8. Շարական (Ժողովածու) - Աշխարհաբարի վերածեցին Ա. Մադոյանը և Գ. Մադոյանը, 2001 թ.:
9. Հրաչյա Միրզոյան - Հովհաննես Մրջուզ Ջուղայեցի, 2001 թ.:
10. Ռուբեն Ղազարյան - Միջին գրական հայերենի բառապաշարը, 2001 թ.:
11. Բաբկեն Հարությունյան - Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյցի», 2001 թ.:
12. Վարդան Արևելցի - Տիեզերական պատմություն, (աշխարհաբարի վերածեց Գ. Թոսունյանը), 2001 թ.:
13. Գևորգ Մադոյան - Գրիգոր Անավարզեցին շարականագիր, 2001 թ.:
14. Գևորգ Արզարյան - Հայ տպագրության նախապատմություն, 2001 թ.:
15. Փայլակ Անթապյան - Հովհաննես սարկավազ Իմաստասեր, 2001 թ.:
16. Յոզեֆ Կարստ - Կիլիկյան հայերենի պատմական քերականություն, 2001 թ.:
17. Ռաֆայել Մաթևոսյան - Կուրան ասպագայի որոնումներում. իրադարձություններ և դասեր, 2001 թ.:
18. Խաչիկ Բաղիկյան - Ուսումնական դարձվածաբանական բառարան, 2002 թ.:
19. Հրաչյա Գարրիբեյան - Հայոց բնաշխարհը (դասագիրք), 2002 թ.:
20. Էդուարդ Աղայան - Լեզվաբանական հետազոտություններ, 2003 թ.:
21. Արտակ Մովսիսյան - Նախամաշտոցյան Հայաստանի գրավոր մշակույթը, 2003 թ.:

22. Հրաչյա Աճառյան - Քննություն Կիլիկիայի բարբառի, 2003 թ.:
23. Պիոն Հակոբյան - Գիտական ուսումնասիրություններ, 2003 թ.:
24. Աշոտ Սուքիասյան - Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան (2004 թ. արժանացել է ՀՀ նախագահի մրցանակին՝ «Մարդկային զարգացման և հումանիտական արժեքների, այդ թվում՝ հումանիտար գիտությունների զարգացման բնագավառում ձեռք բերված նվաճումների համար»), 2003 թ.:
25. Երջանիկ Գևորգյան - Հայոց շարժումային լեզվի բացատրական բառարան (Շարժութարան), 2003 թ.:
26. Հայնրիխ Հյուբշման - Հայերենի քերականություն, առաջին մաս, Հայերենի ստուգաբանություն, 2003 թ.:
27. Հայնրիխ Հյուբշման - Հայագիտական ուսումնասիրություններ, 2004 թ.:
28. Ալեքսանդր Մարգարյան - Հայոց լեզվի քերականություն (Ձևաբանություն) 2004 թ.:
29. Ռամազ Գորգաձե - Հայերեն-վրացերեն զրուցարան, 2004 թ.:
30. «Ժուռնալ Ազիատիկ» հանդեսի հայագիտական նյութերի ծանոթագրված մատենագիտություն, 2004 թ. (ռուսերեն):
31. Հրաչյա Աճառյան - Հայոց պատմություն, հյուսված ընդհանուր պատմության հետ, 2004 թ.:
32. Յովհաննես Սարկալազ Իմաստասէր - Լուծմունք «Սահմանաց գրոց», 2004 թ.:
33. Սանդրո Սարդարյան - Հայաստանը քաղաքակրթության օրրան, 2004 թ.:
34. Կարեն Իզրաշեան - Աւարայրի ճակատամարտից դէպի Նուարակի պայմանադրութիւնը, 2005 թ.:
35. Հարություն Դելլայան - Ժողովածու, 2005 թ.:
36. Բախտիար Հովակիմյան - Հայոց ծածկանունների բառարան, 2005 թ.:
37. Գառնիկ Անանյան - Ակնարկներ հայոց հին և միջնադարյան հրապարակախոսության, 2005 թ.:
38. Վահան Տեր-Առնոյան - Կիլիկյան Հայաստանը և Մերձավոր Արևելքի արաբական երկրները (1145-1226 թթ.), 2005 թ. (ֆրանսերեն):